5161
հայերեն

225
Ա-76

218-ԱՀ

# ՆՈՐ
# ԿՏԱԿԱՐԱՆ
## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

1825 ՌՄՀԴ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

12004

5161-ան
2262-75

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ.

Աւետարանն որ ըստ Մատթէոսի գրեալ է. զի յետ համբառնալոյ [illegible] ութ գրեաց զաւետարանն զայս։ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]. [illegible] և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] և [illegible]։ Ունի ըստ կարգի և [illegible] [illegible], և 'ի [illegible] 'ի [illegible] [illegible], և նշանս և [illegible] [illegible] 'ի երկնից եղեալ, և [illegible] աշակերտացն, և [illegible] խորհրդոյ [illegible]. և [illegible], զի [illegible] [illegible], և [illegible] [illegible], և [illegible] [illegible] 'ի գերեզմանի, և [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] և [illegible] [illegible] յարութիւն, և [illegible] աշակերտացն՝ աշակերտել զամ հեթանոսս և մկրտել զնոսա. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի կատարած աշխարհի.

Մատթէոս գրեաց զաւետարանն իւր [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], 'ի [illegible] [illegible] [illegible].

Մատթէոս [illegible]՝ [illegible] [illegible].

---

## ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին որ ըստ Մատթէոսի.


| | Գլ. | Հմր. |
|---|---|---|
| Վասն ծննդեանն. | Ա. | 1. |
| Վասն [illegible]. | Բ. | 16. |


Վասն

| | | |
|---|---|---|
| Վասն յառաջընթաց փորձութեան յաղթութեան Տէրունին . | Դ. | 1. |
| Վասն Հրաշագործութեան բերելին . | Դ. | 23. |
| Վասն երանութեանց . | Ե. | 2. |
| Վասն բորոտին . | Ը. | 1. |
| Վասն հարիւրապետին . | Ը. | 5. |
| Վասն զոքանչին պետրոսի . | Ը. | 14. |
| Վասն բժշկութեան ամ ցաւոց . | Ը. | 16. |
| Վասն՝ որ ոչ էր հրաման երթալ ընդ նմա . | Ը. | 19. |
| Վասն սաստելոյն ՚ի վերայ ծովուն . | Ը. | 23. |
| Վասն դիւահարացն . | Ը. | 28. |
| Վասն անդամալուծին . | Թ. | 1. |
| Վասն մաքսէի . | Թ. | 9. |
| Վասն դստեր ժողովրդապետին . | Թ. | 18. |
| Վասն արիւնահոսին . | Թ. | 20. |
| Վասն երկուց կուրացն . | Թ. | 27. |
| Վասն խլոյն և համր դիւահարին . | Թ. | 32. |
| Վասն առաքելոցն ընտրութեան . | Ժ. | 1. |
| Վասն առաքելոցն յովհաննու աշակերտացն . | ԺԱ. | 2. |
| Վասն որոյ ձեռն չորացեալ էր . | ԺԲ. | 10. |
| Վասն կուրի և համր դիւահարին . | ԺԲ. | 22. |
| Վասն՝ որ խնդրէին նշան . | ԺԲ. | 38. |
| Վասն առակացն . | ԺԳ. | 1. |
| Վասն յովհաննու, և հերովդի . | ԺԴ. | 1. |
| Վասն հինգ հացիցն . | ԺԴ. | 15. |
| Վասն երթալոյն ՚ի վերայ ծովուն . | ԺԴ. | 22. |
| Վասն անցանելոյն զպատուիրանաւն այ . | ԺԵ. | 1. |
| Վասն կնոջն քանանացւոյն . | ԺԵ. | 21. |
| Վասն բժշկելոյ ժողովրդոցն . | ԺԵ. | 29. |
| Վասն եօթն հացիցն . | ԺԵ. | 32. |
| Վասն խմորոյ փարիսեցւոցն . | ԺԶ. | 6. |
| Վասն որ ՚ի կեսարիա հարցմանն . | ԺԶ. | 13. |


Վասն

Վասն այլակերպութեան Տն . ժէ . 1 .
Վասն լուսնահարին . ժէ . 14 .
Վասն խնդրելոյն երկդրամեանն . ժէ . 23 .
Վասն հարցանելոյն՝ թէ ով է ՚ի մէնջ մեծ . ժը . 1 .
Վասն առակի հարիւր ոչխարին . ժը . 12 .
Վասն թողլոյ բիւր տաղանդին . ժը . 23 .
Վասն հարցմանն արձակելոյ առն զկինն . ժթ . 1 .
Վասն հարցանելոյ մեծատանն զՔս . ժթ . 16 .
Վասն վարձկանութեան մշակացն . ի . 1 .
Վասն որդւոցն Զեբեդեայ . ի . 20 .
Վասն երկուց կուրացն . ի . 29 .
Վասն իշոյն, եւ յաւանակին . իա . 1 .
Վասն կուրացն, եւ կաղացն . իա . 14 .
Վասն չորանալոյ թզենւոյն . իա . 18 .
Վասն հարցանելոյ զՔս քահանայապետիցն,
եւ ծերոց . իա . 23 .
Վասն երկուց որդւոցն առակաց . իա . 28 .
Վասն այգւոյն առակին . իա . 33 .
Վասն հրաւիրելոցն ՚ի հարսանիսն . իբ . 1 .
Վասն դահեկանին, որով փորձեցին զՔս . իբ . 15 .
Վասն սադուկեցւոցն . իբ . 23 .
Վասն օրինականացն . իբ . 34 .
Վասն Քի հարցանելոյն զփարիսեցիսն . իբ . 41 .
Վասն վայ տալոյ դպրացն, եւ փարիսեց-
ւոցն . իգ . 13 .
Վասն կատարածի . իդ . 3 .
Վասն աւուրն եւ ժամուն . իդ . 36 .
Վասն տասն կուսանացն . իե . 1 .
Վասն պանդխտական տեառն . իե . 14 .
Վասն գալստեանն Քի . իե . 31 .
Վասն օծելոյն զՔս իւղով . իզ . 1 .
Վասն պատրաստելոյ զպասեքն . իզ . 17 .

Վասն օրինաւոր խորհրդոյն . Իզ. 26.
Վասն համեստութեան ջն . Իզ. 41.
Վասն առաքելութեանն պետրոսի . Իզ. 69.
Վասն յուդայի շշնջմանն . Իէ. 3.
Վասն խնդրելոյ պղերսանաց հարցմնն . Իէ. 57.
Վասն խաչաբեր կանանցն . Իը. 1.



ՍԲ. ՄԱՏԹԷՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ.

### ԳԼ. Ա.

1 ԳԻՐՔ ԾՆՆԴԵԱՆ
յիսուսի քրիստոսի որդւոյ դաւթի որդ-
2 ւոյ աբրահամու ։ || * Աբրա- ||Ծն.
համ ծնաւ զիսահակ . || Իսա- 21. 3.
հակ ծնաւ զյակոբ . || Յակոբ ծնաւ զյու- ||25. 26. ||29. 35.
3 դա , և զեղբարս նորա ։ || * Յուդա ծնաւ զփա- ||38. 29.
րէս և զզարա ՚ի Թամարայ . || Փարէս ||1. Մն.
ծնաւ զեզրոմ . Եզրոմ ծնաւ զարամ ։ 2. 4.
4 || * Արամ ծնաւ զամինադաբ . Ամինադաբ || 2. 10.
ծնաւ զնաասոն . || Նաասոն ծնաւ զսաղ- || Հռ.
5 մոն ։ * Սաղմոն ծնաւ զբոոս ՚ի Ռախա- 4. 20.
բայ . Բոոս ծնաւ զովբեդ ՚ի Հռութայ .
Ովբեդ ծնաւ զյեսսէ . Յեսսէ ծնաւ զդա-
6 ւիթ արքայ ։ || * Դաւիթ արքայ ծնաւ զսո- ||2 Թագ. 12. 24.
ղո-

‖3 Թագ. զսողոմոն ՚ի կնոջէն ուրիայ ։ ‖ * Սողոմոն ծը- 7
11. 43. նաւ զռոբովամ. ‖ Ռոբովամ ծնաւ զաբիա.
‖14. 31. ‖15. 8. ‖ Աբիա ծնաւ զասափ ։ ‖ * Ասափ ծնաւ 8
‖2 Մն. զյովսափատ. ‖ Յովսափատ ծնաւ զյովրամ.
17. 1. ‖21. 1. Յովրամ ծնաւ զոզիա ։ ‖ * Ոզիա ծնաւ զյո- 9
‖26. 23. վաթամ. ‖ Յովաթամ ծնաւ զաքազ. ‖ Ա-
27. 9. քազ ծնաւ զեզեկիա ։ * Եզեկիա ծնաւ ըզ- 10
‖4 Թագ. 18. 2. մանասէ. ‖ Մանասէ ծնաւ զամոն. Ամոն
‖20. 21. ծնաւ զյովսիա ։ ‖ * Յովսիա ծնաւ զյեքո- 11
‖21. 18. նիա, և զեղբարս նորա առ գերութեամբն բաբե-
‖2 Մն. 36. 1. և լացւոց ։ * Յետ գերութեանն բաբելացւոց ծը- 12
4. և 9. նաւ յեքոնիա զսաղաթիէլ. ‖ Սաղաթիէլ
‖2 Եզր. 3. 2. ծնաւ զզօրաբաբէլ ։ * Զօրաբաբէլ ծնաւ 13
զաբիուդ. Աբիուդ ծնաւ զեղիակիմ. Ե-
ղիակիմ ծնաւ զազովր ։ * Ազովր ծնաւ զսա- 14
դովկ. Սադովկ ծնաւ զաքիմ. Աքիմ ծնաւ
զեղիուդ ։ * Եղիուդ ծնաւ զեղիազար. Ե- 15
ղիազար ծնաւ զմատթան. Մատթան ծը-
նաւ զյակովբ ։ * Յակովբ ծնաւ զյովսէփ 16
զայրն մարիամայ՝ որում խօսեցեալ զմարիամ
կոյս. յորմէ ծնաւ Յս, որ անուանեցաւ
Քս ։ * Արդ՝ ամենայն ազգք յաբրահամէ 17
մինչև ՚ի դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և
՚ի դաւթէ մինչև ՚ի գերութիւնն՝ բաբելաց-
ւոց՝ ազգք չորեքտասանք. և ՚ի գերութենէն
բաբելացւոց մինչև ՚ի քս՝ ազգք չորեքտա-
սանք ։

‖ Ղուկ. ‖ * Յսի քսի ծնունդն էր այսպէս ։ Խօ- 18
1. 27. սեցեալ զմայր նր մարիամ յովսեփու, մինչ-
չև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ՚ի
հոգւոյն սրբոյ ։ * Այլ յովսէփ այր նր, քանզի 19
արդար էր՝ և ոչ կամէր առակել զնա, խոր-

հէր-

20 մեցաւ լռելեայն արձակել զնա ։ * Եւ մինչ
դեռ նա զայս ածէր զմտաւ , ահա հրեշտակ
տն ՚ի տեսլեան երեւեցաւ նմա՝ եւ ասէ . յով-
սէփ որդի դաւթի՝ մի երկնչիր առնուլ առ
քեզ զմարիամ կին քո . քանզի որ ՚ի նմայն
21 ծնեալ է՝ ՚ի հոգւոյն սրբոյ է ։ * ‖ Ծնցի որ- ‖ Ղուկ.
դի , եւ կոչեսցես զանուն նորա յս . զի նա 1. 31.
փրկեսցէ զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւր- Գործ. 4. 12.
22 եանց ։ * Այս ամ եղեւ , զի լցցի որ ա-
սացաւն ՚ի տնէ ՚ի ձեռն եսայեայ մարգա-
23 րէի ։ * ‖ Ահա կոյս յղասցի՝ եւ ծնցի որդի , ‖ Եսայ.
եւ կոչեսցեն զանուն նորա էմմանուէլ . որ 7. 14.
24 թարգմանի՝ ընդ մեզ ած ։ * Եւ զարթու-
ցեալ յովսէփ ՚ի քնոյ անտի , արար ոպ հրա-
մայեաց նմա հրեշտակն տն , եւ առ յինքն
25 զկին իւր ։ * Եւ ոչ գիտէր զնա , մինչեւ ‖ ‖ Ղուկ.
ծնաւ զորդին իւր զանդրանիկ . եւ կոչեաց 2. 7
զանուն նորա յս ։

## ԳԼ. Բ.

1 Եւ ՚ի ծնանելն յի ՚ի բեթղեհէմ հրեաս-
տանի յաւուրս հերովդի արքայի , ահա
2 մոգք յարեւելից եկին յերուսաղէմ , * եւ ա-
սեն . ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից . զի տե-
սաք զաստղն նր յարեւելս , եւ եկաք երկիր պա-
3 գանել նմ ։ * Եւ իբրեւ լուաւ արքայն հերով-
դէս՝ խռովեցաւ , եւ ամ երուսաղէմ ընդ նմա ։
4 * Եւ ժողովեալ զամ զքահանայապետս եւ
զդպիրս ժողովրդեանն , հարցանէր ՚ի նոցա-
5 նէ՝ թէ ո՞ւր ծնանելոց իցէ քս ։ * Եւ նոքա ասեն
ցնա . ՚ի բեթղեհէմ հրէաստանի . զի այս- ‖ Միք.
6 պէս գրեալ է ՚ի ձեռն մարգարէին ։ * ‖ Եւ 5. 2.
դու Յովհ. 7. 42.

դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ ոչինչ կրտ-
սեր ես յիշխանս Յուդայ. ՚ի քէն ելցէ ինձ
իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զիս-
րայէլ: * Յայնժամ Հերովդէս գաղտ կո- 7
չեաց զմոգսն, եւ ստուգեաց ՚ի նոցանէ ըզ-
ժամանակ աստեղն երեւելոյ: * Եւ արձա- 8
կեալ զնոսա ՚ի Բեթղեհէմ, ասէ. գնացէք
ստուգեցէք վասն մանկանն, եւ յորժամ գտա-
նիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ
երկիր պագից նմա: * Եւ նոքա իբրեւ լուան ՚ի 9
թագաւորէն՝ գնացին. եւ ահա աստղն զոր
տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ
եկեալ եկաց ՚ի վերայ՝ ուր էր մանուկն: * Իբ- 10
րեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրա-
խութիւն մեծ: * Եւ իբրեւ մտին ՚ի տունն, տե- 11
սին զմանուկն հանդերձ Մարիամաւ մարբն
իւրով, եւ անկեալ երկիր պագանէին նմա.
‖ Սաղ. 71. 10. ‖ Եւ բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա
պատարագս՝ ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս:
* Եւ հրաման առեալ ՚ի տեսլեան չդառ- 12
նալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանա-
պարհ գնացին յաշխարհն իւրեանց: * Եւ 13
իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ
Տեառն երեւէր ՚ի տեսլեան Յովսեփու, եւ ասէր.
արի առ զմանուկդ եւ զմայր իւր՝ եւ փախիր
յեգիպտոս, եւ անդ լինիջիր՝ յորժամ ասա-
ցից քեզ. քանզի ՚ի խնդիր է Հերովդէս կո-
րուսանել զմանուկդ: * Եւ նա յարուցեալ 14
առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի՝ եւ գը-
նաց յեգիպտոս, եւ անդ էր մինչեւ ցվախ-
ճան Հերովդի: * Զի լցցի ասացեալն ՚ի 15
‖ Ովսէ. 11. 1. Տեառնէ ՚ի ձեռն մարգարէին որ ասէ. ‖ Յեգիպ-

տո-

16 տուն կոչեցի զորդի իմ։ * Յայնժամ իբ-
րեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մո-
գուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց
կոտորեաց զամ մանկունս որ էին 'ի Բեթ-
ղեհէմ եւ յամ սահմանս նր՝ յերկեմենից եւ
'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց
17 'ի մոգուց։ * Յայնժամ կատարեցաւ ա-
սացեալն 'ի ձեռն երեմիայ մարգարէի՝ որ
18 ասէ. * || Ձայն գուժեաց 'ի Հռամայ, ող- || Երեմ.
բումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Հռա- 31. 15.
քէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթա-
19 րել՝ զի ոչ էին։ * Եւ 'ի վախճանել հերով-
դի, ահա հրեշտակ տն 'ի տեսլեան երեւէր
20 յովսեփայ յեգիպտոս, * ասէր. արի առ
զմանուկդ եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն
իսրայելի. զի մեռան որ խնդրէին զանձն
21 մանկանդ։ * Եւ նա յարուցեալ առ զմա-
նուկն եւ զմայր նր, եւ եկն յերկիրն իսրլի։
22 * Եւ իբրեւ լուաւ եթէ արքեղայոս թագա-
ւորեաց հրէաստանի փոխանակ հերովդի
հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. եւ հրա-
ման առեալ 'ի տեսլեան, գնաց 'ի կողմանս
23 գալիլեացւոց։ * Եւ եկեալ բնակեցաւ 'ի
քաղաքին՝ որ կոչէր նազարեթ. զի լցցի բան
մարգարէիցն, թէ նազովրեցի կոչեսցի։

## ԳԼ. Գ.

1 Յաւուրսն յայնոսիկ գայ յովհաննէս մկր-
տիչ քարոզել յանապատին հրէաստա-
2 նի, * || եւ ասել. ապաշխարեցէք՝ զի մերձեալ || Մրկ.
3 է արքայութիւն երկնից։ * Սա է՝ վն որոյ 1. 4.
ասացաւ 'ի ձեռն եսայեայ մարգարէի, որ Ղկ. 3. 3.
ասէ.

Եսայ. 40. 3. ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատ-
րաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ
արարէք զշաւիղս նորա։ Եւ ինքն Յովհան- 4
նէս ունէր հանդերձ 'ի ստեւոյ ուղտու, և
գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր
նորա էր մարախ և մեղր վայրենի։ Յայն- 5
ժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղեմացիք՝
և ամենայն Հրէաստան՝ և ամենայն կողմն Յորդանանու,
և մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդանան, և 6
խոստովան լինէին զմեղս իւրեանց։ Իբրև 7
տեսանէր զբազումս 'ի Սադուկեցւոցն և 'ի
Փարիսեցւոց եկեալս 'ի մկրտութիւն, ասէ
ցնոսա. Ծնունդք իժից՝ ո՞ ցուցց ձեզ փախչել
'ի բարկութենէ որ գալոց է։ Արարէք այ- 8
սուհետև պտուղ արժանի ապաշխարութեան։
Եւ մի համարիցիք ասել յանձինս՝ թէ 9
Յովհ. 8. 39. ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ,
զի կարող է Աստուած 'ի քարանցս յայսցանէ յա-
րուցանել որդիս Աբրահամու։ Ահա և տա- 10
պար առ արմին ծառոց դնի. ամե-
նայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հա-
Մարկ. 1. 8. տանի և 'ի հուր արկանի։ Ես մկրտեմ 11
Ղուկ. 3. 16. զձեզ ջրով յապաշխարութիւն. բայց որ զկնի
իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ
Յովհ. 1. 26. բաւական բառնալ զկօշիկս նորա. նա մկրտես-
Գործ. 1. 5. ցէ զձեզ 'ի Հոգին Սուրբ՝ և 'ի հուր։ Որոյ 12
հեծանոցն 'ի ձեռին իւրում. և սրբեսցէ
զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն 'ի շտե-
մարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ
Մարկ. 1. 9. հրով։ Յայնժամ գայ Յիսուս 'ի Գալիլեէ 'ի 13
Ղուկ. 3. 21. Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմա-
նէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա՝ և ա- 14
սէ.

ոչ. Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել՝ և դու առ
15 Իս գաս։ *Պատասխանի ետ Յս՝ և ասէ ցնա.
Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ
լնուլ զամ արդարութի. և ապա Թոյլ ետ
16 նմա։ *Եւ իբրև մկրտեցաւ Յս, ել վաղ-
վաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա
երկինք. և ետես զհոգին այ՝ զի իջանէր
17 իբրև զաղաւնի, և գայր 'ի վե նա։ *Եւ
ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի
իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։

## ԳԼ. Դ.

1 Յայնժամ || վարեցաւ Յս յանապատ 'ի հոգ- || Մրկ.
2 ւոյն փորձել 'ի սատանայէ։ *Եւ պա- 1. 12.
հեաց զքառասուն տիւ և զքառասուն գի- Ղկ. 4. 1.
3 շեր՝ ապա քաղցեաւ։ *Եւ մատուցեալ փոր-
ձիչն՝ ասէ ցնա. եԹէ որդի ես այ՝ ասա զի
4 քարինքս այսոքիկ հաց լինիցին։ *Նա պա-
տասխանի ետ և ասէ. գրեալ է՝ Թէ || ոչ || 2. Օրէ.
հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամ բանիւ 8. 3.
5 որ ելանէ 'ի բերանոյ այ։ *Յայնժամ ա-
ռեալ ածէ զնա սատանայ 'ի քաղաքն սբ,
և կացուցանէ զնա 'ի վե աշտարակի տաճա-
6 րին, *և ասէ ցնա. եԹէ որդի ես այ՝ արկ
զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է || Թէ հրեշ- || Սղմ.
տակաց իւրոց պատուիրեալ է վն քո, և 'ի 90. 11.
վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի երբեք
7 հարցես զքարի զոտն քո։ *Ասէ ցնա դար-
ձեալ Յս. գրեալ է՝ Թէ || ոչ փորձեսցես զՏէ- || 2. Օրէ.
8 ր ած քո։ *Դարձեալ առնու ածէ զնա 6. 16.
սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցու-
ցանէ նմա զամ Թագաւորութիս աշխարհի. և

զփ-

զփառս նոցա. * Եւ ասէ ցնա. զայս ամենայն քեզ 9
տաց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ.
* Յայնժամ ասէ ցնա յս. Երթ յետս իմ 10
Բ Օրէ. 6. 13. սատանայ. զի գրեալ է, Տն Այ քում եր-
կիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես.
* Ապա եթող զնա սատանայ. եւ ահա հրեշ- 11
տակք մատեան՝ եւ պաշտէին զնա.
ԻԴ * Իսկ իբրեւ լուաւ յս եթէ յովհաննէս մատ- 12
Մր. 1. 14. նեցաւ, մեկնեցաւ գնաց 'ի գալիլեա. * Եւ 13
Ղկ. 4. 14. թողեալ զնազարեթ, եկն բնակեցաւ 'ի կա-
փառնաում 'ի ծովեզերին, 'ի սահմանս զա-
բուղոնի եւ նեփթաղիմայ. * զի լցցի բանն՝ 14
որ ասացաւ 'ի ձեռն եսայեայ մարգարէի.
Եսայ. 9. 1. * Երկիր զաբուղոնի եւ երկիր նեփթաղի- 15
մայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս յորդանա-
նու, գալիլեա հեթանոսաց. * Ժողովուրդ 16
որ նստէր 'ի խաւարի՝ ետես լոյս մեծ. եւ
որոց նստէին յաշխարհին եւ 'ի ստուերս մա-
հու լոյս ծագեաց նոցա. * Յայնմ հետէ սը- 17
կսաւ քարոզել յս եւ ասել. ապաշխարեցէք
զի մերձեալ է արքայութիւն երկնից. * Մինչ 18
դեռ գնայր յս ըզ եզր ծովուն գալիլեաց-
Մր. 1. 16. ւոց, ետես երկուս եղբարս զսիմոն զկոչե-
Ղկ. 5. 2. ցեալն պետրոս, եւ զանդրէաս եղբայր նր՝
արկեալ ուռկանս 'ի ծով. քանզի ձկնորսք էին.
* Եւ ասէ ցնս. եկայք զկնի իմ, եւ արարից 19
զձեզ որսորդս մարդկան. * Եւ նք թողեալ 20
վաղվաղակի զգործիսն՝ գնացին զհետ նր.
* Եւ մատուցեալ անտի յառաջ ետես այլ 21
երկուս եղբարս, զյակոբոս զեբեդեայ եւ
զյովհաննէս զեղբայր նորա 'ի նաւի՝ զեբե-
դեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչ կազ-
մէին

մէին զուռկանս իւրեանց · և կոչեաց զնս ·
22 * Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն և զհա-
23 հայրն իւրեանց, գնացին զհետ նր ։ * Եւ
շրջէր յս ը ամ կողմն գալիլեացւոց · ուսու-
ցանէր 'ի ժողովուրդս նց և քարոզէր զաւե-
տարանն արքայութն, և բժշկէր զամ հի-
ւանդութն՝ և զամ ախտս 'ի ժողովրդեանն ։
24 * Եւ ել լուր նր ը ամ երկիրն ասորւոց, և
մատուցին առ նա զամ հիւանդս՝ որ նեղեալ
էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս, և զդ-
դիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս ·
25 և բժշկեաց զնոսա ։ * Եւ երթային զհ- Մրկ. 3. 7.
հետ նորա ժողովուրդք բազումք 'ի գալի- Ղուկ. 6. 17.
լեէ և 'ի դեկապօլեայ և յէմէ և 'ի հրէաս-
տանէ, և յայնկոյս յորդանանու, և բժշ-
կեաց զնս ·

## ԳԼ. Ե.

ԸԳ.

1 Եւ տեսեալ զժողովուրդն ել 'ի լեառն ·
և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա
2 աշակերտքն նորա · * և բացեալ զբերան իւր
3 ուսուցանէր զնս, և ասէր ։ * Երանի աղ- Ղուկ. 6. 20.
քատաց հոգւով, զի նց է արքայութն երկ-
4 նից ։ * Երանի սգաւորաց, զի նոքա մխի- Եսայ. 61. 3.
5 թարեսցին ։ * Երանի հեզոց, զի նոքա ժա- Սաղ. 36. 11.
6 ռանգեսցեն զերկիր ։ * Երանի որ քաղցեալ
և ծարաւի իցեն արդարութե, զի նք յագես-
7 ցին ։ * Երանի ողորմածաց, զի նք ողորմու-
8 թն գտցեն ։ * Երանի այնոցիկ՝ որ ռբ են Սաղ. 23. 4.
9 սրտիւք, զի նոքա զած տեսցեն ։ * Երանի
խաղաղարարաց, զի նոքա որդիք ած կոչես-
10 ցին ։ * Երանի որ հալածեալ իցեն վն ար- Ա.Պետ. 3. 14.
դա- 4. 14.

2262-71

դարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից ։ * Երա- 11
նանի է ձեզ՝ յորժամ նախատեսցեն զձեզ եւ
հալածեսցեն, եւ ասիցեն զամենայն բան չար ըզ-
ձէնջ սուտ վասն իմ ։ * Ցնծացէք եւ ուրախ 12
լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.
զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յա-
ռաջ քան զձեզ էին ։ * Դուք էք աղ երկրի. 13
Մրկ. Ապա թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի. ոչ ի-
9. 49. միք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկե-
Ղուկ. 14. 34. նուլ արտաքս՝ եւ կոխան լինել ի մարդկա-
նէ ։ * Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ 14
քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ ։
Մրկ. * Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ գը- 15
4. 21. րուանաւ, այլ ի վերայ աշտանակի. եւ լոյս տայ
Ղուկ. 8. 16. ամենեցուն՝ որ ի տանն իցեն ։ * Այնպէս 16
11. 33. լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան,
Ա. Պետ. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փա-
2. 12. ռաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է ։
Բ. Դ. * Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս 17
կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լը-
Ղուկ. նուլ ։ * Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն 18
16. 17. երկինք եւ երկիր յովտ մի, որ նշանախեց մի
է, ոչ անցցէ յօրինացն եւ ի մարգարէից՝ մին-
Յակ. չեւ ամենայն եղիցի ։ * Եւ որ լուծցէ մի ինչ ի 19
2. 10. պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, եւ
ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի
յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ՝ եւ ու-
սուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկ-
նից ։ * Ասեմ ձեզ. զի եթէ ոչ առա- 20
ւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպը-
րացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յար-
քայութիւն երկնից ։ * Լուարուք զի ասացա- 21

ւ-

առաջնոցն, թէ ‖ մի՛ սպանանիցես. զի որ սպա- ‖ Ելից. 20. 13.
նանիցէ՝ պարտական լիցի դատաստանի: 2.Օրէն.
22 * Այլ ես ասեմ ձեզ. եթէ ամ որ բարկա- 5. 18.
նայ եղբօր իւրում տարապարտուց, պար-
տաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղ-
բայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի.
և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր
23 լիցի 'ի գեհեն հրոյն: * Եթէ մատուցանի-
ցես զպատարագ քո 'ի վր սեղանոյ, և անդ
յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ
24 զքէն, * Թող զպատարագն քո առաջի սե-
ղանոյն. երթ նախ հաշտեաց ընդ եղբօր
քում, և ապա եկեալ մատուսջիր զպատա-
25 րագն քո: * ‖ Եր իրաւախոհ ընդ ոսոխի քում ‖ Ղուկ.
վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանա- 12. 58.
պարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դա-
տաւորի, և դատաւորն դահճի. և արկանի-
26 ցիս 'ի բանտ: * Ամէն ասեմ քեզ. մի՛ ելա-
նիցես անտի, մինչև հատուցանիցես զյե-
27 տին նաքարակիտն: * Լուարուք զի ասա-
28 ցաւ, ‖ մի՛ շնար: * Այլ ես ասեմ ձեզ. եթէ ‖ Ելից.
ամ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ 20. 14.
նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւ-
29 րում: * ‖ Եթէ ակն քո աջ գայթագղեցու- ‖ Վեր.
ցանէ զքեզ, խլեա զնա՝ և ընկեա 'ի քէն. 18. 9.
զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորի- Մարկ.
ցէ, և մի ամ մարմինդ քո անկանիցի 'ի գե- 9. 46.
30 հեն: * Եւ եթէ աջ ձեռն քո գայթագղե- ‖ 2.Օրէն.
ցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա 'ի քէն. 24. 1.
զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորի- Վեր.
ցէ, և մի ամ մարմինդ քո արկանիցի 'ի գե- 19. 7.
31 հեն: * Դարձեալ ասացաւ, եթէ ‖ որ ար- Մարկ. 10. 4.
ձա- Ղուկ. 16. 18.

ձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն ։
* Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամ՛ որ արձա- 32
կէ զկին իւր առանց բանի պոռնկութե՛ նա
տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ՝
շնայ։ * Դարձեալ լուարուք զի ասացաւ ա- 33
|| Ղեւտ. ռաջնոցն. || մի երդնուցուս սուտ, բայց հա-
19. 12. տուսցես տն զերդմունս քո։ * Բայց ես ա- 34
սեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ, մի յերկինս՝
զի աթոռ է այ, * և մի յերկիր՝ զի պատ- 35
ուանդան է ոտից նորա, և մի յԵրմ՝ զի քա-
ղաք է մեծի արքայի. * և մի ՚ի գլուխ քո 36
երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ
|| Յակ. առնել՝ կամ թուխ։ * || Բայց եղիցի ձեր բան, 37
5. 12. այո՝ այո, և ոչ՝ ոչ. զի աւելին քան զայն
|| Ելից. ՚ի չարէն է։ * Լուարուք զի ասացաւ. || ակն 38
21. 24. ընդ ական, և ատամն ընդ ատաման։ * Բայց 39
ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարին.
|| Ղուկ. || այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝
6. 29. դարձո նմա և զմիւսն։ * Եւ որ կամիցի ոք 40
դատել և առնուլ զշապիկս քո, թող ՚ի նա
և զբաճկոն քո։ * Եւ որ տարապարհակ վա- 41
|| Օրին. րիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս։
15. 7. * || Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր. և որ կամի 42
փոխ առնուլ ՚ի քէն՝ մի դարձուցանէր զե-
րեսս։ * Լուարուք ապաքէն զի ասացաւ. 43
|| Ղեւտ. || սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնա-
19. 18. մին քո։ * Բայց ես ասեմ ձեզ. || սիրեցէք 44
|| Ղուկ. 6. 27. զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր.
Հռովմ. 12. 20. բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս
արարէք ՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ
և հալածեն. * զի եղիջիք որդիք Հօր ձերոյ 45
որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ՚ի

վե

վերայ չարաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ 'ի վերայ
46 արդարոց եւ մեղաւորաց ։ * Զի եթէ սիրե-
ցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զինչ վարձ
իցէ , ոչ ապաքէն եւ մաքսաւորք զնոյն գոր-
47 ծեն ։ * Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բա-
րեկամաց ձերոց՝ զինչ աւելի առնէք , ոչ ա-
պաքէն մաքսաւորք եւ մեղաւորք զնոյն գոր-
48 ծեն ։ * Արդ՝ եղերուք դուք կատարեալք.
որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է ։

## ԳԼ. Զ.

1 Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի առ- ԲԼ
նել առաջի մարդկան , որպէս թէ 'ի ցոյց
ինչ նոցա . գուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք 'ի
2 հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է ։ * Այլ յոր-
ժամ առնիցես ողորմութիւն , մի հարկաներ
փող առաջի քո , որպէս կեղծաւորքն առնեն 'ի
ժողովուրդս եւ 'ի հրապարակս, որպէս զի փա-
ռաւորեսցին 'ի մարդկանէ . ամէն ասեմ
3 ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա ։ * Այլ դու յոր-
ժամ ողորմութիւն առնիցես , մի գիտասցէ ձախ
4 քո զինչ գործէ աջ քո. * որպէս զի եղիցի ողոր-
մութիւն քո 'ի ծածուկ . եւ Հայրն քո որ տե-
սանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնա-
5 պէս ։ * Եւ յորժամ յաղօթս կայցես , մի լի-
նիցիս որպէս կեղծաւորքն . զի սիրեն 'ի ժողո-
վուրդս եւ յանկիւնս հրապարակաց կալ յա-
ղօթս , որպէս զի երեւեսցին մարդկան . ամէն
6 ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա ։ * Այլ
դու յորժամ կայցես յաղօթս , մուտ 'ի սե-
նեակ քո՝ եւ փակեա զդուրս քո , եւ կաց յա-
ղօթս առ Հայր քո 'ի ծածուկ . եւ Հայրն քո
որ

որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտ-
նապէս ։ * Եւ յորժամ կայցէք յաղօթս , 7
մի շատախօսք լինիք իբրեւ զհեթանոսսն . զի
համարին եթէ ՚ի բազում խօսից իւրեանց
լսելի լինիցին ։ * Արդ՝ մի նմանիցէք նոցա . 8
զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ , մինչ-
չեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ ։ * Եւ 9
||Ղուկ. 11. 2. արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս . || Հայր
մեր որ յերկինս , սուրբ եղիցի անուն քո ։ * Ե- 10
կեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս
յերկինս եւ յերկրի ։ * Զհաց մեր հանապա- 11
զորդ տուր մեզ այսօր ։ * Եւ թող մեզ զպ- 12
պարտիս մեր , որպէս եւ մեք թողումք մերոց
պարտապանաց ։ * Եւ մի տանիր զմեզ ՚ի 13
փորձութիւն , այլ փրկեա զմեզ ՚ի չարէ . զի քո
է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս
||Մարկ. 11. 25. ամէն ։ * || Զի եթէ թողուցուք մարդկան 14
զյանցանս նոցա , թողցէ եւ ձեզ Հայրն ձեր երկ-
Սիր. 28. 2. նաւոր ։ * Ապա թէ ոչ թողուցուք մարդկան 15
զյանցանս նոցա , եւ ոչ Հայրն ձեր թողցէ
ձեզ զյանցանս ձեր ։ * Եւ յորժամ պահի- 16
ցէք՝ մի լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտ-
մալք . որ ապականեն զերեսս իւրեանց ,
որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահե-
ցեն . ամէն ասեմ ձեզ , այն իսկ են վարձք
նոցա ։ * Այլ դու յորժամ պահիցես , օծ զգ- 17
գլուխ քո՝ եւ լուա զերեսս քո , * զի մի ե- 18
րեւեսցիս մարդկան իբրեւ զպահօղ . այլ Հօրն
քում ՚ի ծածուկ . եւ Հայրն քո որ տեսանէ
՚ի ծածուկ , հատուսցէ քեզ յայտնապէս ։
* Մի գանձէք ձեզ գանձս յերկրի . ուր ցեց 19
եւ ուտիճ ապականեն , եւ ուր գողք ական

հա-

20 հատանեն և գողանան ։ *|| Այլ գանձեցէք ||Ղուկ.
ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ 12. 33.
ապականեն, և ոչ գողք ական հատանեն և 1. Տիմ. 6. 19.
21 գողանան ։ * Զի ուր գանձք ձեր են՝ անդ
և սիրտք ձեր եղիցին ։

ԻԶ

22 *|| Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո ա-
23 ռատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի ։ * Ա- ||Ղուկ.
պա եթէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւա- 11. 34.
րին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ 'ի քեզ
24 է՝ խաւար է, խաւարն որչափ ևս ։ *|| Ոչ ոք ||Ղուկ. 16. 13.
կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին
ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծա-
րիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք
25 Աստուծոյ ծառայել և մամոնայի ։ *|| Վասն այդո- ||Ղուկ.
րիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ 12. 22.
զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. և մի՛ 1. Պետ. 5. 7.
վասն մարմնոյ ձերոյ՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ Սաղմ.
ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և 54. 23.
26 մարմին քան զհանդերձ ։ * Հայեցարուք 'ի
թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն
և ոչ ժողովեն 'ի շտեմարանս, և հայրն ձեր
երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն դուք
27 առաւել էք քան զնոսա ։ * Իսկ արդ՝ ո՞ 'ի ձէնջ
առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի հա-
28 սակ իւր կանգուն մի ։ * Եւ վասն հանդերձի
զի՞ հոգայք. հայեցարուք 'ի շուշանն վայրե-
29 նի՝ որպէս աճէ. ոչ ջանայ, և ոչ նիւթէ ։ * Ա-
սեմ ձեզ՝ զի և ոչ Սողոմոն յամենայն 'ի փառս իւ-
30 րում զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ ։ * Իսկ
եթէ զխոտն 'ի վայրի որ այսօր է՝ և վաղիւն
'ի հնոց արկանի, այսպէս զգեցուցանէ.
որչափ ևս առաւել զձեզ թերահաւատք ։

* Մի

* Մի՛ այսուհետեւ հոգայցէք՝ եւ ասիցէք. 31
զի՞նչ կերիցուք՝ կամ զի՞նչ արբցուք՝ կամ
զի՞նչ զգեցցուք։ * Զի զայդ ամ̃ հեթանոսք 32
խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնա-
ւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամ̃։ * Խնդրե- 33
ցէք նախ զարքայութիւն այ̃ եւ զարդարութիւն
նր̃. եւ այդ ամ̃ յաւելցի ձեզ։ * Մի՛ այսու- 34
հետեւ հոգայցէք վասն վաղուին՝ զի վաղին վն̃
իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր։

## ԳԼ. Է։

ՌԼ. Մի՛ ‖ դատիք՝ զի մի՛ դատիցիք։ * Զի ո- 1
րով դատաստանաւ դատիք՝ դատեսջիք 2
‖ Ղուկ. 6. 37. էք. եւ ‖ որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։
Հռով. 2. 1. * Զի՞ տեսանես զշիւղ յականի եղբօր քո, 3
‖ Մրկ. 4. 24. եւ 'ի քում ականդ զգերանդ ոչ տեսանես։
* Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թո՛ղ 4
հանից զշիւղդ յականէ քումմէ. եւ ահաւա-
սիկ 'ի քում ականդ գերան կայ։ * Կեղծա- 5
ւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ,
եւ ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ
եղբօր քո։ * Մի՛ տայք զսրբութիւն շանց. եւ 6
մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խո-
զաց, զի մի՛ առ ոտն կոխեսցեն զնոսա, եւ դար-
‖ Մտթ. 21. 22. ձեալ երգիծուցանիցեն զձեզ։ * ‖ Խնդրե- 7
ցէք՝ եւ տացի ձեզ, հայցեցէք՝ եւ գտջիք, բա-
Ղուկ. 11. 9. խեցէք՝ եւ բացցի ձեզ։ * Զի ամ̃ որ խնդրէ՝ 8
Յովհ. 14. 13. առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝
Յակ. 1. 6. բացցի նմա։ * Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ զոր խնդ- 9
րիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ
նմա. * եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ 10
տայցէ նմա։ * Արդ՝ եթէ դուք որ չարդ էք՝ 11
գի-

գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց,
որչափ եւս առաւել Հայրն ձեր որ յերկինս է
տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։
12 *‖ Զամ որ միանգամ կամիջիք՝ թէ արա_ ‖ Ղուկ. 6. 31.
ցեն ձեզ մարդիկ՝ այնպէս եւ դուք արարէք Տոբ. 4. 16.
նոցա. զի այն իսկ են օրէնքն եւ մարգարէք։
13 *‖ Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ ‖ Ղուկ. 13. 24.
է դուռնն՝ եւ համարձակ ճանապարհն՝ որ
տանի ՚ի կորուստ, եւ բազումք են որ մտա_
14 նեն ընդ նա։ * Քանզի անձուկ է դուռնն՝
եւ նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս, եւ
15 սակաւք են որ գտանեն զնա։ * Զգոյշ լե_
րուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ
հանդերձիւք ոչխարաց, եւ ՚ի ներքոյ են
16 գայլք յափշտակողք։ *‖ Ի պտղոյ նոցա ծա_ ‖ Ղուկ. 6. 44.
նիջիք զնա. միթէ քաղիցեն ՚ի փշոց խաղող՝
17 կամ ՚ի տատասկէ թուզ։ * Այսպէս ամ
ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝
18 պտուղ չար առնէ։ * Ոչ կարէ ծառ բարի
պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար՝ պտուղ
19 բարի առնել։ *‖ Ամենայն ծառ՝ որ ոչ առ_ ‖ Վեր. 3. 10.
նէ պտուղ բարի, հատանի եւ ՚ի հուր արկա_
20 նի։ * Արդ ՚ի պտղոյ նոցա ծանիջիք զնա։
21 *‖ Ոչ ամ որ ասէ ցիս՝ տէր տէր, մտցէ յար_ ‖ Վար. 25. 11.
քայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր Ղուկ. 6. 46.
22 իմոյ որ յերկինսն է։ * Բազումք ասիցեն
ցիս յաւուրն յայնմիկ. տէր տէր՝ ոչ ‖ յանուն ‖ Գործ. 19. 13.
քո մարգարէացաք, եւ յանուն քո դեւս հա_
նաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս արա_
23 րաք։ * Եւ յայնժամ ասացից ցնա՝ ‖ եթէ ‖ Սաղ. 6. 9.
ոչ երբէք գիտէի զձեզ. ՚ի բաց կացէք յինէն Ղուկ. 13. 27.
ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնութիւն։

* Ա_

Ղուկ. 6. 48. * Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ 24
առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝ որ
շինեաց զտուն իւր ՚ի վ՛ր վիմի ։ * Իջին անձ- 25
րեւք՝ եւ խաղացին գետք, շնչեցին հողմք՝ եւ
բախեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ. քանզի
զի ՚ի վ՛ր վիմի հաստատեալ էր ։ * Եւ ամ՛ 26
որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ զսո-
սոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց
զտուն իւր ՚ի վ՛ր աւազոյ ։ * Իջին անձրեւք՝ 27
յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտու-
տունն, եւ անկաւ. եւ էր կործանումն նորա
մեծ յոյժ ։ * Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յս 28
զամ՛ զբանս զայսոսիկ, զարմանային ժողո-
Մրկ. 1. 22. Ղուկ. 4. 32. վուրդքն ընդ վարդապետութիւնն ։ * Զի 29
իբրեւ իշխանութբ՛ ուսուցանէր՝ եւ ոչ որպէս
դպիրքն ։

## ԳԼ. Ը.

Մրկ. 1. 40. Ղուկ. 5. 12. Եւ իբրեւ էջ ՚ի լեռնէ անտի, գնացին զհե- 1
տ նորա ժողովուրդք բազումք ։ * Եւ 2
ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագա-
նէր նմ՛, եւ ասէր. տէր՝ եթէ կամիս՝ կարող
ես զիս սրբել ։ * Ձգեաց զձեռն իւր եւ հա- 3
սոյց ՚ի նա Յս՝ եւ ասէ. կամիմ՝ սրբեաց. եւ
վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն ։
* Եւ ասէ ցնա Յս, զգոյշ լեր՝ մի ումեք ա- 4
Ղևտ. 14. 2. սիցես. այլ Երթ ցոյց զանձն քո քահա-
նային. եւ մատո զպատարագն, զոր հրամայ-
Ղուկ. 7. 1. եաց մովսէս, ՚ի վկայութիւն նց ։ * Եւ մը- 5
տեալ ՚ի կափառնաում մատեաւ առ նա հա-
րիւրապետ մի, աղաչէր զնա, * եւ ասէր. 6
տէր՝ մանուկ իմ անկեալ կայ ՚ի տան անդա-
մա-

7 մալրյծ՝ չարաչար տանջեալ։ * Ասէ ցնա Յս.
8 սուս եկից՝ և բժշկեցից զնա ։ * Պատասխանի
ետ հարիւրապետն՝ և ասէ . ‖ տէ՛ր չեմ բա֊ ‖ Ղուկ. 7. 6.
ւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես . այլ
ասա՛ բանիւ , և բժշկեսցի մանուկն իմ ։
9 * Զի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ ,
ունիմ ընդ ձեռամբ զինուորս . ասեմ սմա երթ՝ և
երթայ , և այլում թէ եկ՝ և գայ , և ծա֊
10 ռայի իմում թէ արա՛ զայս՝ և առնէ ։ * Իբ֊
րև լուաւ Յս՝ զարմացաւ , և ասէ ցայնոսիկ՝
որ զհետն երթային . ամէն ասեմ ձեզ՝ և ոչ
յիսրայէլի այսպիսի հաւատս գտի երբեք ։
11 * Բայց ասեմ ձեզ , զի բազումք ‖ յարևելից ‖ Մաղ. 1. 11.
և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբ֊
րահամու՝ և ընդ Իսահակայ՝ և ընդ Յակոբու
12 յարքայութեան երկնից ։ * Իսկ որդիքն արքայ֊
ութեան ելցեն ՚ի խաւարն արտաքին . անդ ե֊
13 ղիցի լալ և կրճել ատամանց ։ * Եւ ասէ Յս
ցհարիւրապետն . երթ՝ և որպէս հաւատացեր՝
եղիցի քեզ . և ողջացաւ մանուկն նորա ՚ի ժամու
14 յայնմիկ ։ * Եւ եկեալ Յս ՚ի տուն Պետրո֊
սի , ետես ‖ զի զոքանչ նորա անկեալ դնէր ‖ Մար. 1. 30.
15 տապացեալ . * կալաւ զձեռանէ նորա՝ և ե֊
թող զնա ջերմն . յառն եկաց՝ և պաշտէր
16 զնա ։ * Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա
դիւահարս բազումս , և եհան զայսն բա֊
17 նիւ . և զամ հիւանդսն բժշկեաց ։ * Զի
լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն ‖ Եսայեայ ‖ Եսայ. 53. 4.
մարգարէի . նա զհիւանդութիւնս մեր վերա֊
ցոյց , և զցաւս մեր եբարձ ։
18 * Տեսեալ Յս ժողովուրդս բազումս զիւ֊ Գ. Կ
19 րև , հրամայեաց երթալ յայնկոյս ։ * Եւ մա֊
տու֊

մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝ ե-
կից եւ ես զհետ քո յոր վայր եւ երթիցես։
‖Ղուկ. * Ասէ ցնա Յս. աղուեսուց որջք գոն՝ եւ 20
9. 58. թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ
ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։ * Եւ մի այլ 21
յաշակերտացն նորա ասէ ցնա. տէ՛ր՝ տուր ինձ
հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր
իմ։ * Ասէ ցնա Յս. եկ զհետ իմ, եւ թող 22
տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց։
‖Մարկ. * ‖Եւ իբրեւ եմուտ ՚ի նաւն, գնացին ընդ- 23
4. 36. հետ նորա աշակերտքն նորա։ * Եւ ահա շար- 24
Ղուկ. ժումն մեծ եղեւ ՚ի ծովուն՝ մինչ նաւուն ծած-
8. 22. կել յալեաց անտի, եւ ինքն ննջէր։ * Եւ 25
մատուցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ա-
սեն. տէ՛ր՝ փրկեա զմեզ՝ զի կորնչիմք։ * Եւ 26
ասէ ցնո. ընդէ՞ր վատասիրտք էք թերահաւա-
տք. յայնժամ յարուցեալ սաստեաց
հողմոցն եւ ծովուն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ։
* Եւ մարդիկն զարմացան՝ եւ ասէին. ո՞- 27
րպիսի ոք իցէ սա՝ զի եւ հողմք եւ ծով հնազան-
‖Մարկ. դին սմա։ * ‖Եւ իբրեւ անց յայնկոյս յեր- 28
5. 1. կիրն գերգեսացւոց, պատահեցին նմա դի-
Ղուկ. ւահարք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն,
8. 26. չարաչարք յոյժ. մինչ զի չէր հնար անցանել
ումեք ընդ այն ճանապարհ։ * Եւ ահա ա- 29
ղաղակեցին եւ ասեն. զի՞ կայ մեր եւ քո Յս
որդի Այ, եկիր տարաժամ տանջել զմեզ։
* Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի 30
խոզից արօտական։ * Եւ դեւքն աղաչէին 31
զնա եւ ասէին. եթէ հանես զմեզ աստի, հրա-
ման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։
* Եւ ասէ ցնո. երթայք։ եւ նոքա ելեալ գնա- 32
ցին

ցին յերամակն խոզից . և դիմեաց ամ՟ երա-
մակն 'ի դարէ անտի 'ի ծով, և մեռան 'ի
33 ջուրսն : *Եւ խոզարածքն փախեան, և եր-
թեալ 'ի քաղաքն պատմեցին զամ՟, և զիրս
34 դիւահարացն : *Եւ ահա ամ՟ քաղաքն ել
ը՟ առաջ յի՟ . իբրև տեսին զնա՝ աղաչեցին
զի գնասցէ 'ի սահմանաց նց՟ :

## ԳԼ. Թ.

1 Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս, և եկն 'ի
2 քաղաքն իւր : ||*Եւ ահա մատուցին առ- ||Մրկ.
նա անդամալոյծ մի, որ դնէր 'ի մահիճս . 2. 3.
և տեսեալ յի՟ զհաւատս նց՟՝ ասէ ցանդա- Ղկ. 5. 18.
մալոյծն . Թողեալ լիցին քեզ մեղք քո :
3 *Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ը՟ միտս .
4 հայհոյէ դա : *Եւ ծանուցեալ յի՟ զխոր-
հուրդս նց՟՝ ասէ ցնս . ընդէ՞ր խորհիք դուք
5 չարիս 'ի սիրտս ձեր : *Օ՞ր դիւրին է .
ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել
6 արի և շրջեաց : *Այլ զի գիտասջիք՝ եթէ իշ-
խանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ
զմեղս . յայնժամ ասէ ցանդամալոյծն . ա-
րի՛ առ զմահիճս քո՛ և երթ 'ի տուն քո :
7 *Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր : *Իբ-
8 րև տեսին ժողովուրդքն, զարմացան . և փա-
ռաւոր առնէին զած՟ զտուողն այնպիսի իշ-
խանութեան մարդկան :

9 ||*Եւ անցեալ ընդ այն յի՟՝ ետես զայր մի, ԳԻ.
զի նստէր 'ի մաքսաւորութեան մատթէոս ա- ||Մրկ.
նուն . և ասէ ցնա՝ եկ զկնի իմ : և յարուցեալ 2. 14.
10 գնաց զկնի նր՟ : *Եւ եղև իբրև բազմեալ Ղկ.
էր նա 'ի տան, և ահա բզմ՟ մաքսաւորք և 5. 27.

մե-

մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ յսի՝
և ընդ աշակերտս նր ։ * Եւ տեսեալ փարի- 11
սեցւոցն՝ ասեն ցաշակերտս նր . ընդէր ընդ
մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդա-
պետն ձեր ։ * Իսկ յս իբրև լուաւ՝ ասէ ցնո- 12
սա. ոչ է պիտոյ բժշկի հողջոց՝ այլ հիւանդաց։
Ովսէէ. 6. 6. * Երթայք՝ ուսարուք զինչ է . Ողորմու- 13
Վեր. 12. 7. թիւն կամիմ, և ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զար-
Ա. Տիմ. 1. 15. դարս՝ այլ զմեղաւորս ։ * Յայնժամ մա- 14
Մարկ. 2. 18. տեան առ նա աշակերտքն յովհաննու՝ և ա-
Ղուկ. 5. 33. սեն . Ընդէր մեք և փարիսեցիքն պահեմք
յաճախ, և քո աշակերտքդ ոչ պահեն ։ * Ա- 15
սէ ցնոսա յս . միթէ մարթ ինչ իցէ մանկանց
առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ
նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձ-
ցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն ։
* Եւ ոչ արկանէ կարկատ անթափ ի վերայ 16
հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրումն
նր ի հանդերձէն, և ևս չար պատառումն
լինի ։ * Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս 17
հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին՝ և
գինին հեղու, և տիկքն կորնչին . այլ արկա-
նեն զգինի նոր ի տիկս նորս, և երկոքին
պահին ։

ԳԻ * Մինչ դեռ նա զայս խօսէր ընդ նս, ահա 18
իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա՝
Մարկ. 5. 22. և ասէր. դուստր իմ արդ ևս վախճանեցաւ.
Ղուկ. 8. 41. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վր նր՝ և կեց-
ցէ ։ * Յարեաւ յս՝ և գնաց զհետ նր աշա- 19
Մարկ. 5. 25. կերտօքն հանդերձ ։ * Եւ ահա կին մի ա- 20
Ղուկ. 8. 43. ռատեաց երկոտասանամեայ՝ մատուցեալ յե-
տոյ մերձեցաւ ի գրօշակ հանդերձի նորա ։

* Քան-

21 * Զի ասէր 'ի մտի իւրում․ թէ միայն
22 մերձեցայց 'ի հանդերձս նորա՝ փրկեցայց ։ * Իսկ
յս իբրեւ դարձաւ եւ ետես զնա՝ ասէ․ քաջա-
լերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին
զքեզ․ եւ փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմա-
23 նէ ։ * Իբրեւ եկն յս 'ի տուն իշխանին, եւ
ետես զփողահարսն եւ զամբոխ յոյժ, ասէ ցնոսա․
24 'ի բաց գնացէք․ * զի ոչ եթէ մեռեալ է
25 աղջիկն՝ այլ ննջէ ։ * Եւ ծաղր առնէին
զնա․ եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց, եմուտ՝
կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ աղջիկն ։
26 * Եւ ել համբաւս այս ընդ ամ երկիրն ընդ այն ։ Գ․Գ․
27 * Եւ մինչ գնայր անտի յս, զհետ
եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ եւ ա-
28 սէին․ ողորմեաց մեզ որդի դաւթի ։ * Եւ
իբրեւ եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն․
եւ ասէ ցնոսա յս․ հաւատայք՝ եթէ կարող եմ
առնել զայդ․ ասեն ցնա՝ այո տէր ։
29 * Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ եւ ասէ․
30 ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ ։ * Եւ բա-
ցան աչք նոցա․ եւ սաստեաց նոցա յս եւ ասէ․
31 զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ ։ * Եւ նոքա
ելեալ համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ընդ
32 այն ։ * || Եւ յելանելն նոցա արտաքս, ահա || Վերը․
մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար ։ 12․ 22․ Ղուկ․
33 * Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն․ եւ 11․ 14․
զարմացան ժողովուրդքն՝ եւ ասեն․ թէ եւ
34 ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յիղի ։ * Իսկ
փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց
հանէ զդա զդեւս ։
35 * || Եւ շրջէր յս ընդ ամ քաղաքս եւ ընդ Գ․Ն․
գիւղս․ ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, եւ || Մարկ․
քար- 6․ 7․

քարոզէր զաւետարանն արքայութե՟ն . և բժշ-
կէր զամ՟ ցաւս և զամ՟ հիւանդութի՟ս՝ 'ի ժո-
ղովրդեանն ։ * Եւ տեսեալ զժողովուրդսն՝ 36
գթացաւ 'ի նոսա . զի էին աշխատեալք և
ցրուեալք իբրև զոչխարս , որոց ոչ իցէ հո-
վիւ ։ * Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր . 37
‖ Ղուկ. 10. 2. ‖ հունձք բազում են՝ և մշակք սակաւ ։ * Արդ՝ 38
աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի
հունձս իւր ։

## ԳԼ. Ժ.

‖ Մրկ. 3. 13. Ղուկ. 6. 13. 9. 1. Եւ ‖ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին 1
աշակերտսն իւր , ետ նոցա իշխանութիւն այ-
սոց պղծոց հանել զնոսա , և բժշկել զամ՟ ցաւս
և զամ՟ հիւանդութիւնս ։ * Եւ առաքելոցն 2
երկոտասանից էին անուանք այսոքիկ . ա-
ռաջին սիմովն՝ անուանեալն պետրոս և անդ-
րէաս եղբայր նորա ։ * Յակոբոս զեբեթեայ , 3
և յովհաննէս եղբայր նորա . փիլիպպոս , և
բարթուղիմէոս . թովմաս , և մատթէոս
մաքսաւոր . յակոբոս ալփեայ , և ղեբէոս՝
որ անուանեցաւ թադէոս * Սիմովն կանա- 4
նացի . և յուդայ իսկարիովտացի՝ որ և մատ-
նեաց զնա ։ * Զնոսա երկոտասանեսին առա- 5
քեաց յս՟ , պատուիրեաց նց՟ և ասէ , 'ի ճ՟նպհ
հեթանոսաց մի երթայցէք , և 'ի քաղաք սա-
մարացւոց մի մտանիցէք ։ * Այլ երթայք ա- 6
‖ Մտթ. 15. 24. ռաւել առ ‖ ոչխարսն կորուսեալս տանն իլի՟ ։
* Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասա- 7
ցէք , թէ մերձեալ է արքայութիւն երկնից ։
* Զհիւանդս բժշկեցէք , զբորոտս սրբեցէք , 8
զդևս հանէք , ձրի առէք՝ և ձրի տուք ։
* Մի

9 *‖Մի՛ ստանայք ոսկի՝ եւ մի՛ արծաթ՝ եւ մի՛ ‖Մրկ. 6. 8.
10 պղինձ ՚ի գօտիս ձեր: *Մի՛ պարկ ՚ի ճանա_ Ղուկ. 9. 3.
պարհ, եւ մի՛ երկուս հանդերձս, մի՛ կօշիկս, 10. 4.
մի՛ գաւազ. զի արժանի է մշակն կերակրոյ իւ_
11 րոյ: *Յոր քաղաք մտանիցէք կամ ՚ի գեօղ,
հարցանիցէք՝ թէ ո՞ է ՚ի նմա արժանի. եւ
12 անդ լինիջիք՝ մինչեւ ելանիցէք անտի: *Եւ
իբրեւ մտանիցէք ՚ի տունն, ողջոյն տայջիք
նմա՝ եւ ասասջիք. ողջոյն տանս այսմիկ:
13 *Եւ թէ իցէ տունն արժանի, եկեսցէ ող_
ջոյն ձեր ՚ի վ՛ր ն՛ր. ապա թէ ոչ իցէ արժա_
14 նի, ողջոյն ձեր առ ձեզ դարձցի: *Եւ որ
ոչ ընդունիցի զձեզ՝ եւ ոչ լուիցէ բանից ձերոց,
իբրեւ ելանիցէք ՚ի տանէն՝ կամ ՚ի քաղաքէն
յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից
15 ձերոց: *Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի
երկրին սոդոմացւոց եւ գոմորացւոց յաւուրն
դատաստանի, քան քաղաքին այնմիկ:
16 *‖Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչ_ Գ. Օ.
խարս ՚ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ ‖Ղուկ.
խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զա_ 10. 3.
17 ղաւնիս: *Զգոյշ լինիջիք ՚ի մարդկանէ.
զի մատնեսցեն զձեզ յատեանս. եւ ՚ի ժողո_
18 վուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ: *Եւ ա_
ռաջի դատաւորաց եւ թագաւորաց տանի_
ցեն զձեզ վ՛ն իմ ՚ի վկայութիւն, եւ հեթա_
19 նոսաց: *‖Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, ‖Մրկ.
մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպ կ՛մ զի՛նչ խօսիցիք. զի 13. 11.
տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ զինչ խօսի_ Ղուկ. 12. 11.
20 ցիք: *Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն,
այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի ՚ի ձեզ:
21 *Մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ, եւ

հայր զորդի. և յարիցեն որդիք 'ի վ՟ր հարց՝
և սպանանիցեն զնս. * Եւ եղիջիք ատեցեալք 22
յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ
համբերեսցէ իսպառ, նա կեցցէ. * Եւ յոր- 23
ժամ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքիս յայս-
միկ՝ փախիջիք յայլ. և եթէ յայնմանէ հա-
լածիցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւս. ամէն ա-
սեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս Իս՟ի՝ մին-
Ղուկ. չև եկեսցէ որդի մարդոյ. * ‖ Չէ աշակերտ 24
6. 40. առաւել քան զվարդապետ, ‖ և ոչ ծառայ
Յովհ. քան զտէր իւր. * Շատ իցէ աշակերտին՝ 25
13. 16. եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծա-
ռային՝ իբրև զտէր իւր. եթէ զտանուտէրն
Բէեղզեբուղ կոչեցին, ո՜րչափ ևս առաւել
զընտանիս նր. * Մի այսուհետև երկնչիցիք 26
Մարկ. 'ի նոցանէ. ‖ զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ
4. 22. յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի.
Ղուկ. * Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասասջիք 'ի 27
8. 17. լոյս. և զոր լսէք յականջս՝ քարոզեցէք 'ի
12. 2. վ՟ր տանեաց. * Եւ մի երկնչիք յայնցանէ՝ 28
որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն
սպանանել. այլ երկերուք դուք առաւել
յայնմանէ՝ որ կարօղ է զոգի և զմարմին կո-
րուսանել 'ի գեհենի. * Ո՞չ ապաքէն երկու 29
ճնճղուկք դանկի միոջ վաճառին, և մի 'ի
նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ.
* Բայց ձեր և մազ իսկ հեր գլխոյ թուեալ 30
Մարկ. է. * Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ էք քան 31
8. 38. զբզմ ճնճղուկս. * ‖ Ամենայն որ խոստո- 32
Ղուկ. վանեսցի յիս առաջի մարդկան, խոստովա-
9. 26. նեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յեր-
12. 8. կինս է. * Եւ որ ուրասցի զիս առաջի մարդ- 33
2. Տիմ.
2. 12.
կան

կանս, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ՝
34 որ յերկինս է։ * Մի՛ համարիք եթէ եկի
արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի ար-
35 կանել խաղաղութիւն, այլ սուր։ * Վասնզի
եկի քակել ‖ զայր 'ի հօրէ իւրմէ, և զդուստր ‖ Ղուկ.
'ի մօրէ իւրմէ, և զհարսն 'ի սկեսրէ իւրմէ։ 12. 51.
36 *‖ Եւ թշնամիք առն ընտանիք իւր։ *‖ Որ ‖ Միք.
37 սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ 7. 6.
է ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ ըզ- ‖ Ղուկ.
դուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։ 14. 26.
38 *‖ Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զհետ ‖ Մարկ.
39 իմ, չէ ինձ արժանի։ * Որ գտանէ զանձն 8. 34.
իւր, կորուսցէ զնա՝ և որ կորուսանէ զանձն իւր Վեր. 16. 24.
40 վն իմ, գտցէ զնա։ *‖ Որ ընդունի զձեզ՝ Ղուկ.
զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի 9. 24.
41 զառաքիչն իմ։ * Որ ընդունի զմարգարէ յա- 14. 27. 17. 33.
նուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առ- ‖ Յովհ.
ցէ. և որ ընդունի զարդար յանուն արդա- 13. 20.
42 րոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ *‖ Եւ որ ար- ‖ Մարկ.
բուսցէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ բա- 9. 40.
ժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշա-
կերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ ըզ-
վարձս իւր։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղև իբրև կատարեաց յս զպատուէր Գ. Ի.
երկոտասանից աշակերտացն իւրոց, գը-
նաց անտի քարոզել և ուսուցանել 'ի քաղաքս
2 նց։ *‖ Իսկ յովհաննէս իբրև լուաւ 'ի բան- ‖ Ղուկ.
տին զգործսն քի, առաքեաց 'ի ձեռն աշա- 7. 18.
3 կերտացն իւրոց, * և ասէ ցնա. դո՞ւ ես՝ որ
4 գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք։ * Պա-

տաս

տասխանի ետ յս՛ և ասէ ցնս. գնացէք պատ-
մեցէք յովհաննու, զոր լուայք և տեսէք ։
Եսայ. 35. 5. * Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սըր- 5
բին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և
աղքատք աւետարանին ։ * Եւ երանի է՝ 6
Ղուկ. 7. 24. որ ոչ գայթակղեսցի յիս ։ * Եւ իբրև նոքա 7
գնացին, սկսաւ յս ասել ժողովրդեանն ըզ-
յովհաննէ. զի՞նչ ելէք տեսանել յանապա-
տին, եղէ՞գն շարժուն ՚ի հողմոյ ։ * Այլ 8
զի՞նչ ելէք տեսանել, մա՞րդ ՚ի հանդերձս
փափկութեան զարդարեալ. ահաւասիկ որ ըզ-
փափուկսն զգեցեալ են՝ ՚ի տունս թագաւո-
րաց են ։ * Այլ զի՞նչ ելէք տեսանել. մար- 9
գարէ՞. այո՛ ասեմ ձեզ, և առաւել ևս քան
զմարգարէ ։ * Զի նա է վն որոյ գրեալն 10
Մաղ. 3. 1. է. Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առա-
Մարկ. 1. 2. ջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանա-
պարհս քո առաջի քո ։ * Ամէն ասեմ ձեզ՝ 11
չէ յարուցեալ ՚ի ծնունդս կանանց մեծ քան
զյովհաննէս մկրտիչ. բայց փոքրիկն յար-
քայութեան երկնից մեծ է քան զնա ։ * Իսկ 12
յաւուրցն յովհաննու մկրտչի մինչև ցայժմ՝
արքայութիւն երկնից բռնադատի, և բռունք
յափշտակեն զնա ։ * Քանզի ամ՛ օրէնք և 13
մարգարէք մինչև ցյովհաննէս մարգարէա-
Մաղ. 4. 5. ցան. * և թէ կամիք ընդունել՝ Նա է եղիա՝ 14
որ գալոցն է ։ * Որ ունիցի ականջս լսելոյ 15
լուիցէ ։ * Զ՞ում նմանեցուցից զազգս զայս. 16
նման է մանկտւոյ՝ որ նստիցին ՚ի հրապա-
րակս, կարդայցեն զընկերս իւրեանց, * և 17
ասիցեն. փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքա-
ւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք ։

* Եկն

18 *Եկն յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր.
19 և ասեն՝ դև գոյ 'ի նմա։ *Եկն որդի մար-
դոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր կե-
րօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց և
մեղաւորաց. և արդարացաւ իմաստութի՛ն
20 յորդւոց իւրոց։ *Յայնժամ սկսաւ նախա-
տել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւ-
21 նք, և ոչ ապաշխարեցին։ *‖ Վա՜յ քեզ քո- ‖ Ղուկ.
րազին, վա՜յ քեզ բեթսայիդա. զի եթէ 'ի 10. 13.
տիւրոս և 'ի սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ
'ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և
22 մոխրով ապաշխարեալ էր։ *Բայց ասեմ ձեզ.
դիւրագոյն լիցի երկրին տիւրոսի և սիդոնի
23 յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։ *Եւ դու
կափառնաում, մի մինչև յերկինս բարձրա-
ցիս. այլ մինչև 'ի դժոխս իջցես. զի եթէ
'ի սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ 'ի քեզ
եղեն, ապաքէն կային ևս մինչև ցայսօր։
24 *Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին սոդոմաց-
ւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի՝
քան քեզ։

25 *Յայնմ ժամանակի պատասխանի ետ յս՝ Դ·Կ
և ասէ. գոհանամ զքէն հայր՝ տէր երկնի և
երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի
26 գիտնոց, և յայտնեցեր տղայոց։ *Այո՛
հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։
27 *Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի հօրէ իմմէ.
‖ և ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր, և ‖ Յովհ.
ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ում 8. 19.
28 որդին կամիցի յայտնել։ *Եկայք առ իս ա- 10. 15.
մենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես
29 հանգուցից զձեզ։ *‖ Առէք զլուծ իմ 'ի ‖ Երեմ.
ձեզ, 6. 16.

ձեզ, եւ ուսարուք յինէն զի հեզ եմ եւ խո-
նարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց
||Ա Յհ. 5. 3. ձերոց: * || Զի լուծ իմ քաղցր է. եւ բեռն 30
իմ փոքրոգի:

## ԳԼ. ԺԲ.

ԳԲ. Յայնժամ || գնաց Յս ընդ արտորայսն նց 1
||Մրկ. 2. 23. 'ի շաբաթու. եւ աշակերտքն նորա քաղ-
ցեան, եւ սկսան հասկ կորզել եւ ուտել:
Ղուկ. 6. 1. * Փարիսեցիքն իբրեւ տեսին՝ ասեն ցնա. ա- 2
հաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ
է արժան գործել 'ի շաբաթու: * Եւ նա 3
||Ա Թգ. 12. 4. ասէ ցնս. ոչ իցէ ընթերցեալ ձեր՝ || զոր ա-
րար Դաւիթ, յորժամ քաղցեաւ. եւ որ ընդ
նմայն էին: * Զիարդ եմուտ 'ի տունն այ՝ 4
եւ եկեր զհացն առաջաւորութեան. զոր ոչ
էր օրէն նմա ուտել, եւ ոչ՝ որոց ընդ նմայն
||Ղեւտ. 14. 9. էին, || բայց միայն քահանայից: * Կամ թէ 5
ոչիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ || զի 'ի շաբաթս
||Թւոց 28. 9. քահանայքն 'ի տաճարին պղծեն զշաբաթն,
եւ անմեղք են: * Բայց ասեմ ձեզ՝ զի մեծ 6
քան զտաճարն է աստ: * Եւ եթէ գիտէիք 7
||Ովսէ. 6. 6. զինչ է || զողորմութիւն կամիմ՝ եւ ոչ զզոհ. ա-
պա ոչ դատապարտէիք դուք զանպարտս:
* Զի տէր է շաբաթու՝ որդին մարդոյ: 8
* Եւ գնացեալ անտի Յս եկն 'ի ժողովուրդն 9
||Մրկ. 3. 1. նց: * || Եւ ահա էր այր մի՝ որոյ ձեռն իւր 10
Ղուկ. 6. 6. գօսացեալ էր. հարցին զնա՝ եւ ասեն, եթէ
պա՞րտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի չարա-
||Բ Օրէն. 22. 4. խօսեսցեն զնմանէ: * Եւ նա ասէ ցնս. || ո՞վ 11
է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, եւ ան-
կանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու. մի-

թէ

12 թէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա ։ * Իսկ
որչ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչ-
խար. ապա ուրեմն պարտ է 'ի շաբաթու
13 բարիս գործել ։ * Յայնժամ ասէ ցայրն.
ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ
14 իբրև զմիւսն ։ * Իսկ փարիսեցիքն ելեալ
արտաքս խորհուրդ առնին զնմանէ՝ թէ որպ
15 կորուսցեն զնա ։ * Եւ յս իբրև գիտաց,
մեկնեցաւ անտի. և գնացին զհետ նր ժո-
ղովուրդք բազումք, և բժշկեաց զամենե-
16 սեան ։ * Եւ սաստեաց նց՝ զի մի յայտնես-
17 ցեն զնմանէ ումեք ։ * Զի լցցի, որ ասա-
18 ցաւն 'ի ձեռն եսայեայ մարգարէի ։ * ‖ Ահա ‖ Եսայ. 42. 1.
մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ
ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ 'ի
վր նր, և իրաւունս հեթանոսաց պատմես-
19 ցէ ։ * Ոչ հակառակեսցի՝ և ոչ աղաղակես-
ցէ, և ոչ ոք լուիցէ 'ի հրապարակս զբարբառ
20 նր ։ * Զեղեգն ջախջախեալ ոչ փշրեսցէ,
և զպատրոյգն առ կայծեալ ոչ շիջուսցէ. մին-
21 չև հանցէ 'ի յաղթութի զդատաստան ։ * Եւ
յանուն նորա հեթանոսք յուսասցին ։
22 * Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար Ի. Գ.
մի կոյր և համր, և բժշկեաց զնա. մինչ զի
23 համրն և կոյրն խօսէր և տեսանէր ։ * Զար-
մացան ամ ժողովուրդքն՝ և ասէին. միթէ
24 սա՞ իցէ քան որդի դաւթի ։ * ‖ Բայց փա- ‖ Մրկ. 3. 22.
րիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հա- Ղուկ. 11. 15.
նէ դա զդևս՝ եթէ ոչ բէեղզեբուղաւ իշ-
25 խանաւ դիւաց ։ * Իբրև գիտաց յս զխոր- Վեր. 9. 34.
հուրդս նց՝ ասէ ցնս. ‖ ամ թագաւորութի ‖ Ղուկ. 11. 17.
բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամ քա

ղաք

զոր կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ
կացցէ ։ * Նաեւ եթէ սատանայ զսատանայ հա- 26
նէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիարդ
կացցէ թագաւորութիւն նորա ։ * Նաեւ եթէ ես 27
բեեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր
իւ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր
դատաւորք ։ * Ապա թէ հոգւով այ հա- 28
նեմ ես զդեւս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր
արքայութիւն այ ։ * Կամ զիարդ կարէ ոք մտա- 29
նել 'ի տուն հզօրի՝ եւ զգործիմանս յափշտա-
կել. եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, եւ ապա
զտունն նորա յափշտակիցէ ։ * Որ ոչ ընդ իս է, 30
հակառակ իմ է. եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցր-
Մրկ. 3. 28. ուէ ։ * Վասն այսորիկ ասեմ ձեզ. ամ մեղք 31
եւ հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց
Ղուկ. 12. 10. զհոգւոյն հայհոյութիւն մի թողցի ։ * Եւ որ 32
որ ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա.
բայց որ զհոգւոյն սրբոյ ասիցէ մի թողցի
նմա, մի յայսմ աշխարհի՝ եւ մի 'ի հանդեր-
ձելումն ։ * Կամ արարէք զծառն բարի՝ եւ 33
զպտուղ նորա բարի, կամ արարէք զծառն
Ղուկ. 6. 44. չար՝ եւ զպտուղ նորա չար. քանզի 'ի պտղոյ
անտի ծառն ճանաչի ։ * Ծնունդք իժից, 34
զիարդ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք.
քանզի 'ի յաւելուածոյ սրտի խօսի բերան ։
* Այրդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի իւ- 35
րոյ հանէ զբարիս. եւ մարդ չար՝ 'ի չար գան-
ձուց սրտի իւրոյ հանէ զչարիս ։ * Բայց ա- 36
սեմ ձեզ, թէ ընդ ամ դատարկ բանի զոր
խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն
դատաստանի ։ * Զի 'ի բանից քոց արդա- 37
րասցիս. եւ 'ի բանից քոց պարտաւորեսցիս ։

* Յայնժ

38 * Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք
'ի դպրացն և 'ի փարիսեցւոց՝ և ասեն. վար-
դապետ՝ կամիմք նշան ինչ տեսանել 'ի քէն։
39 * Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնա. || ազգ || Վեր.
չար և շնացող նշան խնդրէ. և նշան մի տա- 16. 4.
ցի նմ, բայց նշանն յովնանու մարգարէի։ Ղուկ.
40 * Զի որպէս էր || յովնան 'ի փոր կիտին զերիս 11. 29. ||Յով.
տիւս և զերիս գիշերս, նոյնպէս եղիցի և որ- 2. 1.
դի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւս և զե-
41 րիս գիշերս։ * || Արք նինուէացիք յարիցեն ||Յով.
'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դա- 3. 5.
տապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին 'ի քարո-
զութեն յովնանու. և ահա աւասիկ մեծ քան
42 զյովնան է աստ։ * Դշխոյն հարաւոյ յա-
րիցէ 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝
և դատապարտեսցէ զսա. || զի եկն 'ի ծա- ||3 Թագ.
գաց երկրի՝ լսել զիմաստութիւն սողոմոնի. 10. 1.
43 և ահա մեծ քան զսողոմոն է աստ։ * || Այլ || Ղուկ.
յորժամ այս պիղծ ելանէ 'ի մարդոյ՝ շըր- 11. 24.
ջի ընդ անջրդին տեղիս. խնդրէ հանգիստ՝ և
44 ոչ գտանէ։ * Յայնժամ ասէ. դարձայց 'ի
տուն իմ՝ ուստի ելի. և եկեալ գտանէ զնա
45 պարապորդ, մաքրեալ և յարդարեալ։ * Յայն-
ժամ երթայ՝ և առնու ընդ իւր եօթն այլ
այս չարագոյնս քան զինքն, և մտեալ բը-
նակէ անդ. և || լինի յետինն մարդոյն այ- ||2 Պետ.
նորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի 2. 20.
46 և ազգիս այսմիկ չարի։ * || Մինչդեռ նա ||Մարկ.
ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա և 3. 31.
եղբարք նորա կային արտաքոյ՝ և խնդրէին Ղուկ.
47 խօսել ընդ նմա։ * Ասէ ոմն ցնա. ահա 8. 19.
մայր քո՝ և եղբարք քո կան արտաքոյ, և

խընդ-

խնդրեն խօսել ընդ քեզ։ * Նա պատասխա- 48
նի ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ. ո՞վ
է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք։ * Եւ 49
ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ. ահա
մայր իմ և եղբարք իմ։ * Զի որ առնիցէ 50
զկամս հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ
եղբայր՝ և քոյր՝ և մայր։

## ԳԼ. ԺԳ.

ԳԼ Յաւուր յայնմիկ ելեալ Յս ՚ի տանէն՝ նըս- 1
|| Մարկ. տէր առ ծովեզերբն։ * || Եւ ժողովեցան 2
4. 1. առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել
Ղուկ. նմա ՚ի նաւն՝ և նստել. և ամ ժողովուրդն
8. 4. կայր առ ծովեզերբն, * և խօսէր ընդ նոսա 3
բազում առակօք՝ և ասէր։ * Ահա ել սեր- 4
մանահան սերմանել. և ՚ի սերմանելն իւ-
րում էր որ անկաւ առ ճանապարհաւ, և
եկն թռչունն երկնից՝ և եկեր զնա։ * Եւ 5
այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող
բազում. և վաղվաղակի բուսաւ՝ առ ՚ի չգոյէ
հիւթոյ երկրին. * ՚ի ծագել արեւու տապա- 6
ցաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։ * Եւ 7
այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ելին փուշքն և
հեղձուցին զնա։ * Եւ այլն անկաւ յերկիր 8
բարի, և տայր պտուղ. էր որ հարիւրաւոր,
և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր։
* Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։ * Եւ 9
մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. ընդէ՞ր 10
առակօք խօսիս ընդ նս։ * Նա պատասխա- 11
նի ետ՝ և ասէ ցնս. քանզի ձեզ տուեալ է
գիտել զխորհուրդս արքայութեան երկնից,
|| Վար. և նց չէ տուեալ։ * || Զի որ ունիցի՝ տացի 12
25. 29.

նմա

նմա և յաւելցի. և որ ոչն գուցէ, և զոր
13 ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։ * Վասն այնորիկ
առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ և ոչ
տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն, և ոչ առնուն
14 'ի միտ։ * Եւ կատարի առ նոսա մարգարէու-
թիւն Եսայեայ՝ որ ասէ. ‖ Լսելով լուիջիք՝ և ‖ Եսայ.
մի իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի 6. 9.
15 տեսջիք։ * Զի թանձրացաւ սիրտ ժողո- Մրկ. 4. 12.
վրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց Ղուկ.
ծանունս լուան. և զաչս իւրեանց կափու- 8. 10.
ցին՝ զի մի երբեք տեսցեն աչօք՝ և ականջօք
լուիցեն՝ և սրտիւք իմասցին, և դարձցին
16 և բժշկեցից զնոսա։ * Բայց ձեր ‖ երանի է ա- ‖ Ղուկ.
չացդ՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց՝ զի 10. 23.
17 լսեն։ * Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգա-
րէք և արդարք ցանկացան տեսանել զոր տե-
սանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և
18 ոչ լուան։ * Եւ արդ՝ լուարուք դուք զա-
19 ռակ սերմանացանին։ * Յամենայնէ՝ որ լսէ
զբանն արքայութեան՝ և ոչ առնու 'ի միտ, գայ
չարն՝ և յափշտակէ զսերմանեալն 'ի սիրտ
նր. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանե-
20 ցաւ։ * Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝
այն է, որ իբրև լսէ զբանն, և վաղվաղա-
21 կի խնդութեամբ ընդունի զնա։ * Բայց քան-
զի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժա-
մանակ մի է. 'ի լինել նեղութեան և հալածա-
նաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի։
22 * Եւ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այն է,
որ իբրև լսէ զբանն, և հոգք աշխարհիս և
պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն,
23 և լինին անպտուղ։ * Եւ որ յերկիրն բարի
սեր-

սերմանեցաւ՝ այն է, որ երբեւ լսէ զբանն՝ եւ
'ի միտ առնու, եւ տայ զպտուղ, է որ հար-
իւր, եւ է որ վաթսուն, եւ է որ երեսուն ։
Գ.Օ. * Այլ առակ արկ առ նս՝ եւ ասէ. Նմանե- 24
ցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանե-
ցէ սերմն բարի յագարակի իւրում ։* Եւ 'ի 25
քուն լինել մարդկան, եկն թշնամին նորա
եւ ցանեաց 'ի վ՟ր որոմն 'ի մէջ ցորենոյն՝ եւ
գնաց ։ * Եւ երբեւ բուսաւ խոտն՝ եւ արար 26
պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմնն ։* Մա- 27
տուցեալ ծառայք տանուտեառն ասեն ցնա.
Տէր՝ ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարա-
կին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմնն ։
* Եւ նա ասէ ցնս. այր թշնամի արար զայս. 28
ասեն ցնա ծառայքն. կամիս՝ զի երթիցուք
քաղեսցուք զայն 'ի բաց ։* Եւ նա ասէ ցնս. 29
մի, գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցո-
րեանն ընդ նմին 'ի բաց խլիցէք ։ * Թո՛յլ 30
տուք երկոցունց աճել 'ի միասին մինչեւ 'ի
հունձս, եւ 'ի ժամանակի հնձոյն ասացից
զհնձօղսն. քաղեցէք նախ զորոմնդ եւ կապե-
ցէք զայդ խրձունս առ 'ի յայրել, եւ զցո-
Մատ. 4. 30. րեանն ժողովեցէք 'ի շտեմարանս իմ ։* Այլ 31
Ղուկ. 13. 18. առակ արկ առ նս՝ եւ ասէ. Նման է արքա-
յութիւն երկնից հատոյ մանանխոյ. զոր ա-
ռեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի ի-
րում ։* Որ փոքր է քան զամ սերմանիս. եւ 32
յորժամ աճիցէ, մեծ է քան զամ բանջարս.
եւ լինի ծառ՝ մինչեւ գալ թռչնոց երկնից եւ
Ղուկ. 13. 20. հանգչել յոստս նր ։ * Այլ առակ խօսե- 33
ցաւ ընդ նս՝ եւ ասէ. Նման է արքայութի՟ն
երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թաքոյց
'ի

'ի գրիւս երիս ալեր՝ մինչեւ ամենայն խմորեցաւ·
34 * Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողո-
վուրդսն · || եւ առանց առակի ոչինչ խօսէր || Մրկ. 4. 34.
35 ընդ նոսա · * Զի լցցի ասացեալն 'ի մարգա-
րէէն · || բացից առակօք զբերան իմ, բղխե- || Սղմ. 77. 2.
ցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի ·
56 * Յայնժամ թողեալ յիսուսի զժողովուրդսն՝ Գ. Ի. (?)
եկն 'ի տուն · մատեան առ նա աշակերտքն
իւր՝ եւ ասեն · մեկնեա մեզ զառակ որոմանցն
57 ագարակին · * Նա պատասխանի ետ՝ եւ ասէ
ցնոսա · որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի
38 մարդոյ · * Եւ ագարակն աշխարհս է ·
սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան
39 են · եւ որոմն որդիքն չարին են · * Եւ թշը-
նամին որ վարեաց զայն՝ սատանայ է · || եւ || Յայտ. 14. 15.
հունձքն կատարած աշխարհիս է · եւ հնձօղքն
40 հրեշտակք են · * Որպէս ժողովի որոմն՝ եւ
'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի կատարա-
41 ծի աշխարհիս · * Առաքեսցէ որդի մարդոյ
զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայու-
թենէ նորա զամենայն գայթակղութիւնս, եւ զայնոսիկ
42 որ գործեն զանօրէնութիւն · * Եւ արկցեն
զնոսա 'ի հնոց հրոյ · || անդ եղիցի լալ՝ եւ կրճ- || Վր. (?) 24. 51.
43 տել ատամանց · * || Յայնժամ արդարքն ծա-
գեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկ- (?) || Իմաստ. 3. 7.
նից · որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ · Դան.
44 * Դարձեալ՝ նման է արքայութեան երկնից 12. 3.
գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ
մարդոյ՝ թաքոյց · եւ 'ի խնդութենէ անտի եր-
թայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ գնէ
45 զագարակն զայն · * Դարձեալ՝ նման է ար-
քայութիւն երկնից առն վաճառականի՝ որ
խնդրէ

խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս ։ * Եւ 46
գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ
վաճառեաց զամ զոր ինչ ունէր՝ եւ գնեաց
զայն մարգարիտ ։ * Դարձեալ՝ նման է ար- 47
քայութիւն երկնից ուռկանի արկելոյ 'ի ծով
եւ յամենայն ազգաց ժողովելոյ ։ * Զոր՝ իբ- 48
րեւ լցաւ, հանեալ 'ի ցամաք՝ եւ նստեալ
ժողովեցին զբարի բարին յամանս, եւ զխո-
տանն 'ի բաց ընկեցին ։ * Այնպէս եղիցի 'ի 49
կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝
եւ մեկնեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց, * եւ 50
արկցեն զնոսա 'ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ
եւ կրճել ատամանց ։ * Ասէ ցնոսա յս. իմացա- 51
րուք զայս ամ ։ ասեն ցնա. այո՛ տր ։ * Եւ 52
նա ասէ ցնոսա. վն այսորիկ ամ դպիր աշա-
կերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն
տանուտեառն, որ հանէ 'ի գանձէ իւրմէ
զնոր եւ զհին ։

ԽԿ * Եւ եղեւ իբրեւ կատարեաց յս զառակս զայ- 53
սոսիկ՝ փոխեցաւ անտի ։ * Եւ եկեալ 'ի գա- 54
ւառ իւր՝ ուսուցանէր զնոսա 'ի ժողովրդեանն
նց, մինչեւ զարմանալ նց եւ ասել. ուստի
Մրկ. իցէ այսր իմաստութիւն եւ զօրութիւնք ։ * Ո՞չ սա 55
6. 3. է հիւսանն որդի. ո՞չ մայր սր կոչի մարիամ.
Ղկ. 4. 16. եւ եղբարք սորա յակոբոս՝ եւ յովսէս՝ եւ սի-
մոն՝ եւ յուդա ։ * Եւ քորք սորա ամենե- 56
քեան առ մեզ են. արդ ուստի՞ է սմա այս
ամ ։ * Եւ գայթակղէին 'ի նա ։ եւ յս ասէ 57
ցնս. չիք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում
գաւառի եւ յիւրում տան ։ * Եւ ոչ արար 58
անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատու-
թեան նոցա ։

## ԳԼ. ԺԴ.

Ն Բ

1 Յայնմ ժամանակի || լուաւ Հերովդէս չոր-
2 րորդապետ զլուր Յիսուսի : * Եւ ասէ ցծա- || Մր. 6. 14.
ռայս իւր. Նա է Յովհաննէս մկրտիչ, նա յա- Ղկ.
րեաւ ՚ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք 9. 7.
3 լինին նովաւ : * || Քանզի Հերովդէս կալաւ || Ղկ.
զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ ՚ի բանտի՝ 3. 19.
վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր իւրոյ :
4 * Զի ասէր ցնա Յովհաննէս. Չէ՛ արժան
5 քեզ ունել զդա : * Եւ կամէր զնա սպանա-
նել, բայց երկնչէր ՚ի ժողովրդենէ անտի.
6 || քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա : * Եւ || Գլ.
իբրեւ եղեն ծնունդք Հերովդի՝ կաքաւեաց 21. 26.
դուստրն Հերովդիայ ՚ի մէջ բազմականին.
7 եւ հաճոյ թուեցաւ Հերովդի : * Ուստի եւ
երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ խնդ-
8 րեսցէ : * Եւ նա յառաջագոյն խրատեալ
՚ի մօրէ իւրմէ, տուր ինձ ասէ այսր ՚ի վերայ
9 սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի : * Եւ
տրտմեցաւ թագաւորն. բայց վասն երդ-
մանցն եւ բարձակցացն՝ հրամայեաց տալ
10 նմա : * Եւ առաքեաց գլխատեաց զՅովհան-
11 նէս ՚ի բանտի : * Եւ բերաւ գլուխ նորա
սկտեղբ՝ եւ տուաւ աղջկանն, եւ տարաւ առ
12 մայր իւր : * Եւ մատուցեալ աշակերտքն
նորա՝ բարձին զմարմինն եւ թաղեցին, եւ ե-
կեալ պատմեցին Յիսուսի :

Ն Գ

13 * || Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի նաւու
յանապատ տեղի առանձինն : Իբրեւ լուան || Մր.
ժողովուրդքն, գնացին զհետ նորա հետի ՚ի 6. 5. Ղկ.
14 քաղաքաց անտի : * Եւ իբրեւ ել՝ ետես ժո- 9. 10.

ղո

Յ—Հ 6. 3. ժողովուրդ բազում, գթացաւ 'ի նա, և բժշկեաց
զհիւանդս նոցա: * Իբրև ընդ երեկս եղև, 15
մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն. տե-
ղիս անապատ է՝ և օրս տարաժամեալ, ար-
ձակեա զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ
'ի շէնսն՝ գնեսցեն իւրեանց կերակուրս:
* Եւ ասէ Յս՟. ոչինչ պիտոյ է դոցա երթալ. 16
տուք դուք դոցա ուտել: * Եւ նոքա ասեն 17
ցնա. ոչինչ ունիմք աստ, բայց հինգ նկա-
նակ և երկուս ձկունս: * Եւ ասէ ցնս՟. բե- 18
րէք այսր զայն: * Եւ հրամայեաց բազմե- 19
ցուցանել զժողովուրդսն 'ի վ՟ր խոտոյ. և
առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձը-
կունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց և ե-
բեկ՝ և ետ ցաշակերտսն զնկանակսն, և ա-
շակերտքն ժողովրդեանն: * Կերան ամենե- 20
քեան՝ և յագեցան, և բարձին զնշխարս կո-
տորոցն երկոտասան սակառի լի: * Եւ որք 21
կերանն՝ էին արք իբրև հինգ հազար. թող
ՄՐ—ԿՍ 6. 45. զկանայս և զմանկտի: ‖ * Եւ ստիպեաց 22
վաղվաղակի զաշակերտսն մտանել 'ի նաւ՝
և յառաջել յայնկոյս, մինչ նա զժողո-
վուրդսն արձակեսցէ:

ԻԳ * Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ‖ ել 23
‖ Յ—Հ 6. 15. 'ի լեառն առանձինն կալ յաղօթս. և իբրև
ընդ երեկս եղև, անդ էր միայն: * Եւ նաւն 24
մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարիսօք ծը-
փեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն:
* Եւ 'ի չորրորդում պահու գիշերոյն եկն 25
առ նա Յս՟ գնալով 'ի վ՟ր ծովուն: * Իբրև տե- 26
սին զնա աշակերտքն զի գնայր 'ի վ՟ր ծովուն,
խռովեցան, և ասեն թէ առաչք իմն իցէ. և
յա

27 առ աշխն աշակերտացն : * Իսկ վաղվաղակի
խօսեցաւ ընդ նոսա և ասէ . քաջալերեցարուք
28 ես եմ, մի երկնչիք : * Պատասխանի ետ նմա
Պետրոս՝ և ասէ . Տէ՛ր՝ եթէ դու ես, հրա-
29 մայեա ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոցս : * Իսկ
նա ասէ, եկ : և իջեալ 'ի նաւէն Պետրոս՝
30 գնայր 'ի վերայ ջրոցն, և եկն առ Յիսուս : * Իսկ
տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ . և իբրև
սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեաց՝ և ասէ . Տէր
31 փրկեա զիս : * Իսկ վաղվաղակի Յիսուս ձգեաց
զձեռն իւր՝ կալաւ զնա և ասէ . թերահա-
32 ւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր : * Իսկ իբրև ելին
33 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն : * Իսկ որ 'ի
նաւին էին՝ մատեան երկիր պագին նմա՝ և
34 ասեն . արդարև Որդի Աստուծոյ ես դու : * ‖ Իսկ ան- ‖ Մարկ. 6. 53.
35 ցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննեսարեթ : * Իսկ
իբրև ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ,
առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ և ածին առ նա
36 զամենայն հիւանդս : * Իսկ աղաչէին զնա, զի
զանէ միայն 'ի քղանցս հանդերձի նորա մեր-
ձեսցին . և որ միանգամ մերձեցան՝ փրկեցան :

## ԳԼ. ԺԵ.

1 Յայնժամ մատեան առ Յիսուս որ յԵրուսաղէմէ փա- ԻԻ
2 րիսեցիքն և դպիրքն՝ և ասեն : * ‖ Ընդէ՞ր ‖ Մարկ.
աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծե- 7. 5.
րոցն . զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց
3 ուտեն : * Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա.
Իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն ‖ Ելից.
4 Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն : * Զի Աստուած ա- 20. 12. Օրին.
5 սաց . ‖ պատուեա զհայր քո և զմայր : * ‖ Իսկ 5. 16.
որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախ- ‖ Ելից. 21. 17.

Ղեւտ. ճանեսցի. * Այլ դուք ասէք. որ ասիցէ ցհայր 6
20. 9. իւր կամ ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր
Առակ. յինէն օգտեսցիս, եւ ոչ պատուիցէ զհայր իւր
20. 20. եւ զմայր իւր. եւ խոտեցէք զբանն Այ վս ձերոյ
աւանդութեանն. * Կեղծաւորք՝ բարւոք մար- 7
գարէացաւ ՚ի վերայ ձեր Եսայի՝ եւ ասէ.
Եսայ. 29. 13. * Ժողովուրդս այս շրթամբք պատուէ 8
զիս, եւ սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի
է յինէն. * Զուր պաշտեն զիս. ուսուցա- 9
նեն վարդապետութիւն՝ զմարդկան պատուի-
րանս. * Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդ- 10
սն՝ ասէ ցնա. լուարուք՝ եւ ՚ի միտ առէք.
Մարկ. 7. 15. * Ոչ որ ինչ մտանէ ընդ բերանն՝ պղծէ ըզ- 11
մարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն
պղծէ զմարդ. * Յայնժամ մատուցեալ ա- 12
շակերտացն նորա՝ ասեն ցնա. գիտե՞ս՝ զի փա-
րիսեցիքն իբրեւ լուան զբանն՝ գայթակղե-
ցին. * Նա պատասխանի ետ նոցա՝ եւ ասէ. 13
Յովհ. 15. 2. Ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնա-
ւոր, խլեսցի. * Թոյլ տուք զնոսա. կոյրք 14
Ղուկ. 6. 39. են՝ կուրաց առաջնորդք. կոյր կուրի յորժամ
առաջնորդէ՝ սխալէ, եւ երկոքին ՚ի խորխա-
Մարկ. 7. 17. տատ անկանին. * Պատասխանի ետ նմա 15
Պետրոս եւ ասէ. մեկնեա մեզ զառակս զայս.
* Նա ասէ Յս. տակաւին եւ դուք անմիտք էք. 16
* Եւ ոչ իմանայք, եթէ ամ որ մտանէ ՚ի 17
բերանն, յորովայն երթայ՝ եւ արտաքս ելա-
նէ. * Իսկ որ ելանէ ՚ի բերանոյ՝ ՚ի սրտէ 18
անտի գայ. եւ այն պղծէ զմարդն. * Զի 19
՚ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանու-
թիւք շնութիւք պոռնկութիւք գողութիւք սուտ
վկայութիւք հայհոյութիւք. * Այս ամ է՝ որ 20

պղծէ

պղծէ զմարդն , այլ անլուալ ձեռօք ուտել՝
ոչ պղծէ զմարդ ։
21 * ‖ Եւ ելեալ անտի յս գնաց 'ի կողմանս Ե. Օ.
22 տիւրոսի և սիդոնի ։ * Եւ ահա կին մի քա- ‖ Մրկ ·
նանացի 'ի սահմանաց անտի նց ելեալ , ա- 7 · 25 ·
ղաղակէր և ասէր . ողորմեաց ինձ տր որդի
դաւթի , դուստր իմ չարաչար այսահարի ։
23 * Եւ նա ոչ ետ նմա պատասխանի . և մա-
տուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և
ասէին . արձակեա զնա զի աղաղակէ զհետ
24 մեր ։ * Նա պատասխանի ետ և ասէ . ոչ
ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ ‖ առ ոչխարս կո- ‖ Վեր ·
25 րուսեալս տանն իէլի ։ * Եւ նա մատուցեալ 10 · 6 ·
երկիր պագանէր նմա և ասէր . տր՝ օգնեա
26 ինձ ։ * Պատասխանի ետ նմա և ասէ . ոչ
է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկա-
27 նել շանց ։ * Եւ նա ասէ . այո՞ տր , քանզի
և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի
28 սեղանոյ տն իւրեանց ։ * Յայնժամ պա-
տասխանի ետ նմա յս և ասէ . ով կին դու՝
մեծ են հաւատք քո , եղիցի քեզ որպէս և կա-
միս ։ և բժշկեցաւ դուստր նր 'ի նմին ժամու ։
29 * Եւ գնացեալ անտի յս , եկն 'ի ծովեզրն Ե. Ե.
գալիլեացւոց , և ելեալ 'ի լեառն նստէր ‖ Եսայ ·
30 անդ ։ * ‖ Մատեան առ նա ժողովուրդք 35 · 5 ·
բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս կոյրս
համերս միակողմանիս, և այլս բազումս . և
ընկեցին զնս առ ոտս նր՝ և բժշկեաց զնս ։
31 * Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսա-
նէին, զի համերքն խօսէին՝ կաղք գնային՝
միակողմանիք բժշկէին՝ կոյրք տեսանէին ,
32 և փառաւոր առնէին զած իէլի ։ * ‖ Եւ կո- ‖ Մրկ · 8 · 1 ·

չե-

չեցեալ առ ինքն յիւր զաշակերտսն՝ ասէ. Գը-
թամ 'ի ժողովուրդս, զի արդ երեք աւուրք
են զի կան առ իս, եւ ոչ ունին զինչ ուտի-
ցեն. եւ արձակել զդոսա նօթիս՝ ոչ կամիմ,
գուցէ նկթիցին զճանապարհաւն ։ * Ասեն 33
ցնա աշակերտքն. իսկ արդ՝ մեզ յանապա-
տի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչեւ յա-
գեցուցանել զայսչափ ժողովուրդ ։ * Եւ ա- 34
սէ ցնոսա Յս, քանի՞ նկանակ ունիք. եւ նք
ասեն. եօթն, եւ սակաւ ձկունս ։ * Եւ հրա- 35
մայեաց ժողովրդեանն բազմել 'ի վր̃ գետ-
նոյ ։ * Եւ առեալ զեօթն նկանակսն եւ ըզ- 36
ձկունսն՝ գոհացաւ եւ եբեկ եւ ետ ցաշակերտ-
սըն, եւ նոքա ժողովրդեանն ։ * Կերան ամե- 37
նեքեան եւ յագեցան. եւ բարձին զնշխարս
կոտորոցն՝ եօթն զամբիւղ լի ։ * Եւ որք կե- 38
րանն՝ էին արք իբրեւ չորք հազարք. թող
զկանայս եւ զմանկտի ։ * Իբրեւ արձակեաց 39
զժողովուրդսն, ել 'ի նաւ՝ եւ եկն 'ի սահ-
մանս Մագդաղենայ ։

## ԳԼ. ԺԶ.

|| Մրկ. 8. 11. Եւ || մատուցեալ փարիսեցիքն եւ սադուկե- 1
ցիք փորձելով խնդրէին 'ի նմանէ՝ նշան
յերկնից ցուցանել նց̃ ։ * Նա պատասխանի 2
|| Ղկ. 12. 54. ետ՝ եւ ասէ ցնս. || յորժամ երեկոյ լինի՝ ա-
սէք, պարզ լինիցի՝ զի կարմրացեալ է եր-
կին ։ * Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շա- 3
ռագունի տրտմութ̃ երկին ։ արդ՝ զերեսս
երկնից կարէք ընտրել, իսկ զնշանս ժամանա-
|| Վէր. 12. 39. կիս ոչ կարէք գիտել ։ * || Ազգ չար եւ շնա- 4
ցող՝ նշան խնդրէ, եւ նշան մի տացի նմա,

բայց

|| բայց նշանն Յովնանու մարգարէի. և ե- || Յովն. 2. 1.
5 թող զնա և գնաց։ * Գնացին և աշակերտքն
6 յայնկոյս, և մոռացան առնուլ հաց։ * Ա-
սէ ցնս Յս. || տեսէք և զգոյշ լերուք 'ի խմո- || Մարկ. 8. 14.
7 րոյ սադուկեցւոցն և փարիսեցւոցն։ * Եւ նո- Ղուկ. 12. 1.
քա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին թէ հաց
8 ոչ բարձաք։ * Գիտաց Յս և ասէ. զի՞ խոր-
հիք 'ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ հաց
9 ոչ ունիք։ * Տակաւին չիմանայք՝ և ոչ յի-
շէք || զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և || Վեր. 14. 17.
10 քանի սակառի բարձէք։ * Եւ ոչ || զեօթն || Վեր. 15. 34.
նկանակն 'ի չորս հազարսն, և քանի զամ-
11 բիւղս բարձէք։ * Արդ՝ զիա՞րդ ոչ իմանայք՝
եթէ ոչ վս հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել 'ի
խմորոյ սադուկեցւոց և փարիսեցւոցն։
12 * Յայնժամ 'ի միտ առին, թէ ոչ ասաց ըզ-
գուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդոյ փարի-
սեցւոցն և սադուկեցւոց։

ՕԿ

13 * || Եւ եկեալ Յս 'ի կողմանս Փիլիպպեայ
Կեսարիայն, հարցանէր ցաշակերտսն՝ և ա- || Մարկ. 8. 27.
սէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկ՝ թէ իցէ Ղուկ. 9. 18.
14 որդի մարդոյ։ * Եւ նք ասեն. ոմն զՅով-
հաննէս մկրտիչ, և այլք զԵղիա, և կէսք
15 զԵրեմիա, կամ զմի ոք 'ի մարգարէից։ * Ա-
սէ ցնոսա. իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ ի-
16 ցեմ։ * Պատասխանի ետ Սիմոն Պետրոս՝ և
ասէ. || դու ես Քս որդի այ կենդանւոյ։ || Յովհ. 6. 70.
17 * Պատասխանի ետ Յս և ասէ ցնա. երանի
քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին և
արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ հայր իմ որ
18 յերկինս է։ * || Եւ ես քեզ ասեմ. զի դու || Յովհ. 1. 42.
ես վէմ, և 'ի վր այդր վիմի շինեցից զեկե-
ղե-

զեկցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղ-
թահարեսցեն։ *Եւ տաց քեզ փականս ար- 19
|| Գլ. ժը. 18. 18. քայութեան երկնից. || և զոր միանգամ կա-
Յով. պեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս.
20. 23. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձա-
կեալ յերկինս։ *Յայնժամ սաստեաց ա- 20
շակերտացն, զի մի ումեք ասիցեն՝ թէ նա
է քսն։ *Յայնմ հետէ սկսաւ յս ցուցանել 21
աշակերտացն իւրոց՝ թէ պարտ է նմա եր-
թալ յէմ. և թէ բազում չարչարանս չարչա-
րել 'ի քահանայապետից և 'ի դպրաց և 'ի
ծերոց ժողովրդեանն՝ և սպանանել, և յե-
րիր աւուր յառնել։ *Եւ առեալ զնա մե- 22
կուսի պետրոսի, սկսաւ կագել ընդ նմա և
ասել. քաւ լիցի քեզ տր, մի եղիցի քեզ այդ։
|| Մրկ. 8. 33. *Եւ նա դարձեալ 'ի պետրոս՝ ասէ. || երթ 23
յետս իմ սատանայ, գայթակղութիւն իմ ես.
զի ոչ խորհիս դու զԱյն, այլ զմարդկան։
|| Վեր. 10. 38. *Յայնժամ յս ասէ ցաշակերտսն իւր. || և- 24
Ղուկ. թէ որ կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն,
9. 23. և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ։ *Զի 25
|| Յովհ. 12. 25. որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուս-
ցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վն իմ՝
գտցէ զնա։ *Զինչ օգտիցի մարդ՝ թէ զաշ- 26
խարհս ամ շահեսցի, և զանձն իւր տուժես-
ցէ։ կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ը ան-
ձին իւրոյ։ *Զի գալոց է որդի մարդոյ 27
փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւ-
|| Գործ. րովք. || և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր
17. 31. ըստ գործս իւր։ *Ամէն ասեմ ձեզ. || զի ե- 28
|| Մրկ. 8. 39. ցեն ոմանք 'ի աստանէ՝ որք աստ կան, որք
ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զորդի
մարդ

մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով:

## ԳԼ. ԺԷ.

1 Եւ ‖ յետ վեց աւուր առնու Յս զՊետ- ‖ Մրկ.
րոս եւ զյակոբոս եւ զյովհաննէս զեղ- 9. 1.
բայր նր, եւ հանէ զնս ՚ի լեառն մի բարձր Ղուկ. 9. 28.
2 առանձինն: * Եւ այլակերպեցաւ առաջի
նց. եւ լուսաւորեցան երեսք նր իբրեւ զարե-
գակն, եւ հանդերձք նր եղեն սպիտակ իբրեւ
3 զլոյս: * Եւ ահա երեւեցան նց Մովսէս եւ Ե-
4 ղիա՝ որ խօսէին ընդ նմ: * Պատասխանի ետ
Պետրոս եւ ասէ ցՅս. Տէր՝ բարւոք է մեզ
աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երիս
տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսէսի եւ մի
5 Եղիայի: * Եւ մինչ դեռ նա խօսէր, ահա
ամպ լուսաւոր հովանի եղեւ ՚ի վր նց. ‖ ձայն ‖ 2. Պետ.
եղեւ յամպոյն՝ եւ ասէ. դա է որդի իմ սիրե- 1. 17.
6 լի՝ ընդ որ հաճեցայ, դմա լուարուք: * Իբրեւ Վեր. 3. 17.
լուան աշակերտքն, անկան ՚ի վերայ երե-
7 սաց իւրեանց՝ եւ երկեան յոյժ: * Եւ մա-
տուցեալ Յս բուռն եհար զնոցանէ՝ եւ ասէ.
8 յոտն կացէք՝ եւ մի երկնչիք: * Ամբարձին
զաչս իւրեանց՝ եւ ոչ զոք տեսին՝ բայց միայն
9 զՅս: * Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ ան-
տի, պատուիրեաց նց Յս՝ եւ ասէ. մի ումեք
ասիցէք զտեսիլդ՝ մինչեւ որդի մարդոյ ՚ի մե-
10 ռելոց յարիցէ: * Հարցին ցնա աշակերտքն
եւ ասեն. ‖ զիա՞րդ դպիրքն ասեն, եթէ Ե- ‖ Մրկ.
11 ղիայի նախ պարտ է գալ: * Պատասխանի 9. 11.
ետ Յս եւ ասէ ցնս. Եղիա գայ՝ եւ հաստա- Մղ.
12 տեսցէ զամն: * Բայց ասեմ ձեզ՝ ‖ զի Եղիա 4. 5. ‖ Վեր.
եկեալ իսկ է. եւ ոչ ծանեան զնա, այլ ա- 11. 14.

րա-

Վեր. րարին ‖ ընդ նմա՝ զոր ինչ կամեցան. նոյնպէս և
14. 10. որդի մարդոյ չարչարելոց է ՚ի նոցանէ ։
* Յայնժամ ՚ի միտ առին աշակերտքն՝ թէ 13
վասն յովհաննու մկրտչի ասաց ցնոսա ։

ՕԲ.

*‖ Եւ իբրեւ եկին ՚ի ժողովուրդն, մատեաւ 14
‖Մր-կ. այր մի՝ ՚ի ծունր իջանէր և ասէր. տէ՞ր ո-
9. 16. ղորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՝ և չա-
Ղու-կ. րաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի
9. 38. ՚ի հուր՝ և երբեմն ՚ի ջուր ։ * Եւ մատուցի 15
զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշ-
կել ։ * Պատասխանի ետ յիսուս և ասէ. ո՞վ ազգ 16
անհաւատ և թիւր, մինչեւ ցե՞րբ իցեմ ընդ
ձեզ՝ մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա
առ իս ։ * Եւ սաստեաց ՚ի նա յիսուս և ել ՚ի 17
նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն ՚ի ժա-
մէն յայնմանէ ։ * Յայնժամ մատեան աշա- 18
կերտքն առանձինն՝ և ասեն ցյիսուս. մեք ըն-
դէ՞ր ոչ կարացաք հանել զնա ։ * Եւ նա ասէ 19
‖Ղու-կ. ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ ։ ‖ ամէն
17. 6. ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան ըզ-
հատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝
փոխեաց աստի անդր, և փոխեսցի. և ոչ
ինչ անհնարին լինիցի ձեզ ։ * Բայց այս ազգ 20
ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք ։

ՕԳ.

* Եւ մինչ դեռ շրջէին նք ՚ի գալիլեայ՝ ասէ 21
‖Մր-կ. ցնոսա յս. ‖ մատնելոց է որդի մարդոյ ՚ի ձեռս
9. 30. մարդկան, * և սպանցեն զնա, և յերիր ա- 22
Ղու-կ. ւուր յարիցէ. և տրտմեցան յոյժ ։ * Իբրեւ 23
9. 44. եկին նոքա ՚ի կափառնաում, մատեան՝ որք
Վեր. զերկդրամեանն պահանջէին՝ առ պետրոս,
20. 18. և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրա-
մեանն, և ասէ՝ այո՞ ։ * Եւ իբրեւ եմուտ ՚ի 24

տուն՝

տուն՝ յառաջեաց քան զնա Յս եւ ասէ. զի՞նչ
թուի քեզ Սիմովն. Թագաւորք ազգաց յում-
մէ՞ առնուն զհարկս կամ զհաս, յորդւո՞ց
25 իւրեանց՝ թէ յօտարաց։ * Եւ իբրեւ ասաց՝
թէ յօտարաց, ասէ ցնա Յս՝ ապա ուրեմն ա-
26 զատ են որդիքն։ * Բայց զի մի գայթակ-
ղեցուսցուք զնոսա, երթ ՚ի ծով եւ ընկեա
կարթ, եւ զառաջին ձուկն որ ելանիցէ՝ առ.
եւ բաց զբերան նորա, եւ գտանիցես սատեր.
եւ զայն առեալ տացես նոցա ընդ իմ եւ ընդ քո։

## ԳԼ. ԺԸ.

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յս
եւ ասեն. Ո՞վ իցէ ՚ի մէնջ մեծ յարքայութեան
2 երկնից։ * Եւ կոչեաց առ ինքն Յս մանուկ Մրկ.
3 մի, կացոյց զնա ՚ի մէջ նոցա, * եւ ասէ. Ամէն 9. 33.
ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք, եւ եղիջիք Ղուկ. 9. 46.
իբրեւ զմանկունս, ոչ մտանիցէք յարքայու- Վրկ.
4 թիւն երկնից։ * Որ ոք խոնարհեցուցա- 19. 14.
նէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա է մեծ Ա. Կոր. 14. 20.
5 յարքայութեան երկնից։ * Եւ որ ոք ընկալցի
մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս ընդու-
6 նի։ * Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ՚ի Մրկ.
փոքրկանցս յայսցանէ, որ հաւատացեալ են, 9. 41.
լաւ է նմա եթէ կախիցէ երկան իշոյ ընդ պա- Ղուկ. 17. 2.
րանոց նորա՝ եւ ընկղմեսցի ՚ի խորս ծովու։
7 * Վա՜յ աշխարհի ՚ի գայթակղութեանց. հարկ
է գալ գայթակղութեանց. բայց վա՜յ մար-
դոյն այնմիկ՝ յորոյ ձեռն գայցէ գայթակ-
8 ղութիւն։ * Եթէ ձեռն քո կամ ոտն գայ- Վեր.
թակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ եւ ընկեա 5. 30. Մրկ.
՚ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մը- 9. 42.

տա-

տանել 'ի կեանս. քան թէ երկուս ձեռս և
երկուս ոտս ունել, և անկանել 'ի հուրն յա-
ւիտենական: * Եւ եթէ ակն քո գայթակ- 9
ղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ 'ի
քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել 'ի
կեանս, քան երկուս աչս ունել՝ և անկանել
'ի գեհենն հրոյն:
ԶԴ. * Զգո՛յշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի 'ի 10
փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշ-
տակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զե-
‖ Ղուկ. 19. 10. րեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է: * ‖ Զի եկն 11
Որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն:
‖ Ղուկ. 15. 4. * ‖ Զինչ թուի ձեզ. եթէ լինիցի մար- 12
դոյ հարիւր ոչխար՝ և մոլորիցի մի 'ի նոցա-
նէ, ո՞չ թողուցու զիննսունն և զինն ոչխարն
'ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն:
* Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէն ա- 13
սեմ ձեզ. զի ուրախ լինի 'ի վերայ նորա առաւել՝
քան 'ի վերայ իննսուն և իննոցն, որ չիցեն
մոլորեալ: * Նոյնպէս ո՛չ են կամք առաջի 14
Հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի 'ի
‖ Ղեւ. 19. 17. փոքրկանցս յայսցանէ: * ‖ Եթէ մեղիցէ 15
քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա՛ զնա՝
Ղուկ. 17. 3. յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուի-
ցէ քեզ, շահեցար զեղբայր քո: * Ապա թէ 16
ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի ևս՝ կամ եր-
Բ. Օրէ. 19. 15. կուս. ‖ զի 'ի բերանոյ երկուց և երից վկայից
Յովհ. 8. 17. հաստատեսցի ամենայն բան: * Ապա եթէ նոցա 17
ո՛չ լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ. ապա թէ
‖ Ա. Կոր. 5. 9. և եկեղեցւոյն ո՛չ լուիցէ, ‖ եղիցի քեզ իբրև
զհեթանոս և զմաքսաւոր: * ‖ Ամէն ասեմ 18
‖ Վեր. 18. 19. ձեզ. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ

յեր.

յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի
19 արձակեալ յերկինս։ * Դարձեալ ասեմ ձեզ
եթէ երկու 'ի ձէնջ միաբանիցեն յերկրի վա
սն ամ՟ իրաց, զինչ եւ խնդրեսցեն՝ եղիցի նց՟ 'ի
20 հօրէ իմմէ որ յերկինս է։ * Զի ուր իցեն
երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ
21 եմ ես 'ի մէջ նց՟։ * Յայնժամ մատուցեալ առ
նա Պետրոս՝ եւ ասէ. ‖ Տէր՝ քանիցս անգամ ‖ Ղուկ.
եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, եւ թողից նմ՟. 17. 4.
22 մինչեւ ցեօթն անգամ։ * Ասէ ցնա Յս՟. Ոչ
ասեմ քեզ՝ թէ մինչեւ ցեօթն անգամ, այլ
23 մինչեւ յեօթանասնեկին եօթն։ * Վասն այ
սորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն
թագաւորի, որ կամեցաւ համար առնուլ
24 'ի մէջ ծառայից իւրոց։ * Եւ իբրեւ սկսաւ
առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի
25 բիւր քանքարոյ։ * Եւ իբրեւ ոչ ունէր հատու
ցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն
նր՟, եւ զկին նր՟՝ եւ զորդիս՝ եւ զամ՟ որ զինչ
26 եւ ունիցի՝ եւ հատուցանել։ * Եւ անկեալ
ծառայն երկիր պագանէր նմ՟՝ եւ ասէր. Եր
կայնամիտ լեր առ իս՝ եւ զամ՟ հատուցից քեզ։
27 * Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ ար
28 ձակեաց զնա, եւ զփոխն եթող նմա։ * Եւ
ելեալ ծառայն այն եգիտ զմի 'ի ծառայակ
ցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դա
հեկան. եւ կալեալ զնա խեղդէր՝ եւ ասէր.
29 հատո ինձ զոր պարտիսդ։ * Անկեալ
ծառայակիցն առ ոտս նր՟, աղաչէր զնա եւ
ասէր. Երկայնամիտ լեր առ իս՝ եւ հատու
30 ցից քեզ։ * Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ
արկ զնա 'ի բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտ
սն։

սն ։ * Իբրեւ տեսին ծառայակիցքն որ ինչ 31
եղեն՝ տրտմեցան յոյժ , եւ եկեալ ցուցին տն
իւրեանց զամ որ ինչ եղեն ։ * Յայնժամ 32
կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ . ծառայ չար՝
զամ զպարտսն թողի քեզ՝ վն զի աղաչեցեր
զիս ։ * Իսկ արդ՝ ոչ էր պարտ եւ քեզ ողոր- 33
մել ծառայակցին քում, ոպ եւ ես քեզ ողոր-
մեցայ ։ * Եւ բարկացեալ տէրն նր՝ մատ- 34
նեաց զնա դահճաց , մինչեւ հատուսցէ զամ
զպարտսն ։ * Այնպէս եւ հայր իմ որ յեր- 35
կինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք
իւրաքանչիւր եղբօր իւրում՚ի սրտից ձերոց
զյանցանս նց ։

## ԳԼ. ԺԹ.

ԶԹ. Եւ եղեւ՝ իբրեւ կատարեաց յս զբանս զայ- 1
‖Մրկ. սոսիկ , փոխեցաւ՚ի Գալիլեէ՝ ‖ եւ եկն՚ի սահ-
10. 1. մանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու ։
* Եւ գնացին զհետ նր ժողովուրդք բա- 2
զումք , եւ բժշկեաց զնս անդ ։ * Եւ մատու- 3
ցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա եւ
ասէին , եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել
զկին իւր ըստ ամ վնասու ։ * Պատասխանի 4
ետ նոցա եւ ասէ , չիցէ ընթերցեալ ձեր՝ թէ
‖Ծննդ. ‖ որ հաստատեացն՚ի սկզբանէ՝ արու եւ էգ
1. 27. արար զնս , եւ ասէ ։ * ‖ Վն այսորիկ թողցէ 5
‖Ծնն. այր զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ կնոջ
2. 24. իւրոյ , եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի ։
Եփես. 5. 31. * Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին 6
արդ՝ զոր ած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ ։
‖Բ.Օրէ. * Ասեն ցնա . ‖ իսկ մովսէս ընդէ՞ր պատուի- 7
24. 1. րեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ եւ արձա-
կել ։

8 կել։ * Ասէ ցնա. Մովսէս վասն խստասրտութեան
ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս
ձեր. այլ 'ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս։
9 * ‖ Բայց ասեմ ձեզ, զի ամ որ արձակեսցէ ‖ Վէր. 5. 32.
զկին իւր՝ եւ ոչ վասն պոռնկութեան, եւ առնիցէ Մրկ. 10. 11.
այլ՝ շնայ, եւ որ զարձակեալն առնիցէ՝ շնայ։ Ղուկ. 16. 18.
10 * Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդպէս 1.Կոր. 7. 10.
ինչ վնաս իցէ ընդ այր եւ ընդ կին, լաւ է չա-
11 մուսնանալ։ * Եւ նա ասէ ցնա. ոչ ամենե-
քեան բաւական են այդմ բանի, այլ որոց
12 տուեալ է։ * Զի են ներքինիք՝ որ յորովայ-
նէ մօր իւրեանց ծնան այնպէս. եւ են ներ-
քինիք՝ որ 'ի մարդկանէ եղեն ներքինիք. եւ
են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին
ներքինիս վասն արքայութեան երկնից. որ կա-
13 րող է առնել՝ արասցէ։ * ‖ Յայնժամ մա- ‖ Մրկ. 10. 13.
տուցան առ նա մանկտի, զի ձեռն դիցէ 'ի Ղուկ. 18. 15.
վերայ նոցա եւ աղօթս արասցէ. եւ աշակերտքն
14 նոցա սաստէին նոցա։ * Ասէ Յս, թոյլ տուք
մանկտւոյդ՝ եւ մի արգելուք զդոսա գալ առ
իս, ‖ զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ ‖ Վէր. 18. 2.
15 * Եւ եդեալ ձեռն 'ի վերայ նոցա գնաց անտի։
16 * ‖ Եւ ահա մատուցեալ ոմն առ նա՝ ա-
սէ. վարդապետ բարի՝ զի՞նչ բարի գործե- ‖ Մրկ. 10. 17.
ցից՝ զի ընդունիցիմ զկեանսն յաւիտենա- Ղուկ. 18. 18.
17 կանս։ * Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես
զիս զբարւոյ, մի է բարի. եթէ կամիս 'ի
կեանսն յաւիտենականս մտանել՝ պահեա
18 զպատուիրանսն։ * Ասէ ցնա. զորս։ ասէ
ցնա Յս. ‖ զմի սպանաներն՝ եւ մի շնար՝ եւ մի ‖ Ելից. 20. 13.
գողանար եւ մի սուտ վկայեր, * պատուեա
19 զհայր քո եւ զմայր, եւ սիրեսցես զընկեր քո
իբրեւ

իբրև զանձն քո։ * Ասէ ցնա պատանին. 20
զայդ ամ պահեցի 'ի մանկութենէ իմմէ. արդ՝
ի՞ւ ևս պակաս իցեմ։ * Ասէ ցնա Յս. Ե- 21
թէ կամիս կատարեալ լինել, երթ՝ վաճա-
ռեա զինչս քո՝ և տուր աղքատաց, և ունի-
ցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։ * Իբ- 22
րև լուաւ պատանին զբանն, գնաց տրտ-
մեալ, զի ունէր ստացուածս բազումս։ * Ա- 23
սէ Յս ցաշակերտսն. ամէն ասեմ ձեզ. զի
դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն
երկնից։ * Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին 24
է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան
մեծատան յարքայութիւն այ մտանել։ * Իբրև 25
լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ՝ և ա-
սեն. իսկ ո՞ կարիցէ ապրել։ * Հայեցաւ 'ի 26
նա Յս՝ և ասէ. առ 'ի մարդկանէ այդ ան-
կար է, այլ առ այ ամենայն ինչ զօրաւոր։
* Յայնժամ պատասխանի ետ պետրոս և ա- 27
‖ Վեր. սէ ցնա. աւասիկ մեք թողաք զամ. ‖ և ե-
10. 38. կաք զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ։ * Ա- 28
սէ ցնս Յս. ամէն ասեմ ձեզ. զի դուք որ ե-
կիք զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեանն՝
յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փա-
ռաց իւրոց, նստջիք և դուք յերկոտասան ա-
թոռ՝ դատել զերկոտասան ազգն իսրայելի։
* Եւ ամ որ որ եթող զտուն՝ կամ զեղբարս 29
կամ զքորս կամ զհայր կամ զմայր՝ կամ զկին
կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան
իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն
‖ Վար. յաւիտենականս ժառանգեսցէ։ * ‖ Բա- 30
20. 16. զումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք
առաջինք։

ԳԼ.

## ԳԼ. Ի·

1 Նման է արքայութիւն երկնից առն
տանուտեառն, որ ել ընդ առաւօտս 'ի վար-
2 ձու ունել մշակս յայգի իւր։ * Եւ արկ
վարձս մշակացն աւուրն դահեկան, և ա-
3 ռաքեաց զնա յայգի իւր։ * Եւ ելեալ զեր-
րորդ ժամու՝ ետես այլս զի կային դատարկ
4 'ի հրապարակս. * ասէ և ցնա. երթայք և
դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց
5 ձեզ. * գնացին և նոքա։ և դարձեալ ելեալ
զվեց ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս։
6 * Եւ զմետասաներորդ ժամու ելեալ եգիտ
այլս՝ զի կային դատարկ, ասէ և ցնա. ընդէ՞ր
7 կայք աստ զօրս ցերեկ դատարկ։ * Ասեն
ցնա. զի ոչ ոք կալաւ զմեզ 'ի վարձու։ ասէ
ցնա. երթայք և դուք յայգին, և որ ինչ ար-
8 ժան է՝ առնուցուք։ * Եւ իբրև երեկոյ ե-
ղև՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր.
կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս՝ սկսեալ
9 'ի յետնոցն մինչև ցառաջինսն։ * Եկեալ ե-
կին որք զմետասաներորդ ժամուն, առին մին
10 մի դահեկան։ * Եկեալ և առաջինքն՝ հա-
մարէին թէ աւելի առնուցուն, և առին մին
11 մի դահեկան և նոքա։ * Իբրև առին, տրտն-
12 ջէին զտանուտեառնէն՝ և ասէին. * թէ դո-
քա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւա-
սարս արարեր զդոսա մեզ, որ զծանրու-
13 թիւն աւուրն բարձաք և զտօթ։ * Նա պա-
տասխանի ետ միում 'ի նոցանէ՝ և ասէ. ըն-
կեր՝ չզրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ
14 արկեր ընդ իս։ * Առ զքոյդ՝ և երթ, ե-

թէ

թէ կամիմ յիմնոցս առնել՝ ինչ և քեզ։ * Ե- 15
‖ Ղկ. թէ չիցէ՞ ինձ իշխանութի՜ յիմս առնել զինչ
19. 30. Մրկ. և կամիմ. կամ թէ ակն քո չար է, զի ես ա-
10. 31. ռատ եմ։ * ‖ Նոյնպէս եղիցին յետինքն ա- 16
Ղկ. ռաջինք՝ և առաջինք յետինք. զի բազումք
13. 30. են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։
Օ Լ. * ‖ Իբրև ելանէր Յս յԵրմ, առ զերկոտա- 17
‖ Մրկ. սանսն առանձինն, և ՚ի ճանապարհին ասէ
10. 32. ցնա։ * Ահաւասիկ ելանեմք յԵրմ. և որդի 18
Ղկ. մարդոյ մատնեսցի քահանայապետից՝ և դպր-
18. 31. րաց. և դատապարտեսցեն զնա ՚ի մահ. * և 19
մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և
հարկանել և ՚ի խաչ հանել, և յերիր աւուր
‖ Մրկ. յարիցէ։ * ‖ Յայնժամ մատեաւ առ նա 20
10. 35. մայր որդւոցն զեբեդեայ որդւովքն իւրովք
հանդերձ. երկիր պագանէր՝ և խնդրէր ինչ
՚ի նմանէ։ * Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս։ 21
ասէ ցնա. ասա զի նստցին սոքա երկու որ-
դիքս իմ, մի ը̃ աջմէ քումմէ՝ և մի ը̃ ահե-
կէ յարքայութե̃ն քում։ * Պատասխանի ետ 22
Յս և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք
ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կա՞մ
զմկրտութի̃ն զոր ես մկրտելոց եմ մկրտիլ.
ասեն ցնա. կարող եմք։ * Ասէ ցնա Յս. ըզ- 23
բաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութի̃ն զոր
ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք, բայց նստու-
ցանել ը̃ աջմէ և ը̃ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ
տալ, այլ որոց տուեալ է ՚ի Հօրէ իմմէ։ * Եւ 24
լուեալ տասանցն, բարկացան ՚ի վերայ եր-
‖ Ղկ. կուցն եղբարց։ * ‖ Յս կոչեաց զնս առ ինքն՝ 25
22. 25. և ասէ. գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն
նց, և մեծամեծքն իշխեն նց։ * Ոչ այնպէս 26

իցէ

լիցի և 'ի ձերում միջի . այլ որ կամիցի 'ի
ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ ։
27 * Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ ե- ‖Փիլիպ. 2. 7.
ղիցի ձեր ծառայ ։ * ‖Որպէս որդի մարդոյ ո՛չ
28 եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել . և տալ
զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց ։
29 * ‖Եւ յելանելն նց յԵրիքովէ , գնացին զհե- Լ.Ա
30 տ նորա ժողովուրդք բազումք ։ * Եւ ահա ‖Մարկ.
կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն . 10. 46.
իբրև լուան թէ յս անցանէ՝ աղաղակեցին Ղուկ.
և ասեն . ողորմեա՛ց մեզ յս որդի Դաւթի ։ 18. 35.
31 * Եւ ամբոխն սաստէաց նց՝ զի լռեսցեն . և
նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին ,
32 տէ՛ր՝ ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի ։ * Ետ տե-
ղի առ յս , կոչեաց զնոսա և ասէ . զի՞նչ կա-
33 միք՝ զի արարից ձեզ ։ * Նոքա ասեն . տէ՛ր՝ զի
34 բացցին աչք մեր ։ * Եւ գթացեալ յս մեր-
ձեցաւ յաչսն նց , և վաղվաղակի տեսին . և
գնացին զհետ նր ։

## ԳԼ. ԻԱ.

1 Իբրև ‖ մօտ եղեն յԵմ , և եկին 'ի բեթ- ‖Մարկ.
փագէ մերձ 'ի լեառն ձիթենեաց . յայնժամ 11. 1.
յս արձակեաց երկուս յաշակերտացն իւ- Ղուկ.
2 րոց ։ * Եւ ասէ ցնս . երթա՛յք 'ի գեօղդ՝ որ 19. 29.
առաջի ձեր է , և անդէն գտանէք էշ կա-
պեալ՝ և յաւանակ ընդ նմին , լուծէք ածէք
3 ինձ ։ * Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ , ասա-
ջի՛ք , եթէ տն պիտոյ են . և վաղ-
4 վաղակի առաքեսցէ զնս ։ * Բայց այս ամե-
նայն եղև՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ ։ ‖Զաքար.
5 * ‖Ասացէք դստեր սիովնի . ահա թագա- 9. 9.

Եսայ. ւոր քո գայ քեզ հեզ, եւ հեծեալ յէշ եւ յա-
62. 11. ւանակի իշոյ ։ * Գնացին աշակերտքն, եւ 6
Յովհ. արարին որպ հրամայեաց նց յս ։ * Եւ ածին 7
12. 14. զէշն եւ զյաւանակն, եւ արկին զնոքօք զհանդերձս
իւրեանց . եւ նստաւ ՚ի վերայ նոցա ։ * Եւ 8
բզմ ժողովուրդք տարածեցին զհանդերձս
իւրեանց ՚ի ճանապարհին, եւ այլք հատա-
նէին ոստս ՚ի ծառոց՝ եւ տարածանէին ՚ի ճա-
նապարհին ։ * Եւ ժողովուրդքն՝ որ առա- 9
ջին եւ զհետ երթային՝ աղաղակէին եւ ա-
Սաղմ. սէին . օրհնութիւն որդւոյ Դաւթի . օրհնեալ
117. 26. որ գայ յանուն տն . օրհնութիւն ՚ի բարձունս
* Եւ ՚ի մտանելն նր յէմ՝ դղրդեցաւ քա- 10
Մարկ. ղաքն ամ, եւ ասէ՝ ո՞վ իցէ սա ։ * Եւ ժողո- 11
11. 15. վուրդքն ասէին . սա է մարգարէն յս՝ որ ՚ի
Ղուկ. նազարեթէ գալիլեացւոց ։ * Եւ եմուտ յս 12
19. 45.
Յովհ. ՚ի տաճարն՝ եւ եհան արտաքս զամենեսին,
2. 14. որ վաճառէին եւ գնէին ՚ի տաճարի անդ .
եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց՝
Եսայ. եւ զաթոռս աղաւնեվաճառացն ։ * Եւ ասէ 13
56. 7. Երեմ. ցնս . գրեալ է . տուն իմ տուն աղօթից կո-
7. 11. չեսցի . եւ դուք արարէք զդա այրս աւազա-
կաց ։ * Եւ մատեան առ նա կոյրք եւ կաղք 14
՚ի տաճարին, եւ բժշկեաց զնս ։ * Իբրեւ տե- 15
սին քահանայապետքն եւ դպիրք զսքանչե-
լիսն զոր արար, եւ զմանկունսն որ աղաղակէին
՚ի տաճարին եւ ասէին, օրհնութիւն որդւոյ
Դաւթի, բարկացան . * եւ ասեն ցնա . լսե՞ս՝ 16
զինչ ասեն դոքա ։ ասէ ցնս յս . այո՛ չիցէ՞
Սաղմ. ընթերցեալ ձեր՝ թէ ՚ի բերանոյ տղայոց
8. 3. եւ ստնդիեաց կատարեցեր զօրհնութի ։ * Եւ 17
թողեալ զնս ել արտաքոյ քաղաքին ՚ի բե-

թա-

թանիա, և անդ ագաւ:
18 * Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն 'ի ԻԲ
19 քաղաքն՝ քաղցեաւ: * || Եւ տեսեալ թզե- || Մր. 
նի մի 'ի վերայ ճանապարհին՝ եկն 'ի նա, և 11. 13.
ոչինչ եգիտ 'ի նմա՝ բայց միայն տերև. և ա-
սէ ցնա. մի այսուհետև 'ի քէն պտուղ եղի-
ցի յաւիտեան. և առժամայն չորացաւ թզե-
20 նին: * || Եւ տեսեալ աշակերտացն՝ զար- || Մր.
մացան և ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի 11. 20.
21 ցամաքեցաւ թզենին: * Պատասխանի ետ
Յս՝ և ասէ ցնս. ամէն ասեմ ձեզ, եթէ ու-
նիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն
թզենւոյդ առնիցէք, այլ թէ լերինդ
ասիցէք. բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի:
22 * || Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս || Վեր.
23 հաւատովք՝ առնուցուք: * Եւ իբրև եկն 'ի 7. 7.
տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսու- 1 Յհ. 3. 22.
ցանէր, քահանայապետքն և ծերք ժողո-
վրդեանն՝ և ասեն. || որով իշխանութեամբ առ- || Մր.
նես զայդ. և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ: 11. 28.
24 * Պատասխանի ետ Յս և ասէ ցնս. հարցից և Ղկ. 20. 2.
ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և
ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ
25 զայս: * Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր՝
յերկնի՞ց, թէ 'ի մարդկանէ: և նոքա խոր-
26 հէին ընդ միտս՝ և ասէին: * Եթէ ասեմք
յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւա-
տացէք նմա. և եթէ ասեմք 'ի մարդկանէ,
երկնչիմք 'ի ժողովրդենէն. || զի ամենեքին || Վեր.
27 զՅովհաննէս իբրև զմարգարէ ունէին: * Պա- 14. 5.
տասխանի ետուն Յսի և ասեն. ոչ գիտեմք:
ասէ ցնս և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշ-

խա

խանութեամբ առնեմ զայս ։ * Բայց զի՞արդ 28
թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, եւ
մատուցեալ առ առաջինն ասէ. որդեակ՝
երթ այսօր գործեա՛ յայգւոջ ։ * Նա պա- 29
տասխանի ետ եւ ասէ. երթամ տէր՝ եւ ոչ
չոգաւ ։ * Մատուցեալ առ միւսն, եւ ասէ 30
նոյնպէս. նա պատասխանի ետ եւ ասէ. ոչ
կամիմ. բայց յետոյ զղջացաւ՝ եւ չոգաւ յայ-
գին ։ * Ո՞վ՝ ո՞ յերկոցունց արար զկամս 31
հօրն ։ ասեն՝ յետինն ։ ասէ ցնս Յս. ամէն ա-
սեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք յառա-
ջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից ։ * Զի 32
եկն յովհաննէս ճանապարհաւ արդարութե՝
եւ ոչ հաւատացէք նմ. եւ մաքսաւորք եւ պոռ-
նիկք հաւատացին նմա, եւ դուք տեսէք՝ եւ
ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա ։
Ի. Գ. * Այլ առակ լուարուք. այր մի էր տանու- 33
Մ-րկ. տէր, որ տնկեաց այգի, եւ ցանգով պա-
12. 1. տեաց զնա, եւ փորեաց ՚ի նմա հնձան, եւ շի-
Ղ--կ. նեաց աշտարակ. եւ ետ զնա մշակս, եւ գն-
20. 9. նաց ՚ի տար աշխարհ ։ * Իբրեւ մերձեցաւ 34
Ե--յ, 5. 1. ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր
Երեմ. առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա ։ * Եւ 35
2. 21. կալեալ մշակացն զծառայս նր, զոմն տան-
ջեցին՝ զոմն սպանին՝ զոմն քարկոծեցին ։
* Դարձեալ առաքեաց այլ ծառայս բզմ 36
քան զառաջինսն, եւ արարին նց նոյնպէս ։
* Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր՝ եւ 37
ասէ. թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմ-
մէ ։ * Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, 38
Յ-վ. ասեն ընդ միմեանս. Սա է ժառանգն, եկայք
11. 47. սպանցուք զդա, եւ կալցուք զժառանգութի-

ւն

39 տարաւ ։ * Եւ առեալ հանին զնա արտաքոյ
40 քան զայգին՝ եւ սպանին ։ * Արդ՝ յորժամ
եկեսցէ տէր այգւոյն, զինչ արասցէ մշա-
41 կացն այնոցիկ ։ * Ասեն ցնա. զչարսն չարա-
չար կորուսցէ. եւ զայգին տացէ այլոց մշակաց,
որք տացեն նմա զպտուղ ի ժամու իւրեանց ։
42 * Ասէ ցնոսա Յիսուս. չիցէ՞ երբեք ընթերցեալ ձեր
ի գիրս. ‖ Զվէմն՝ զոր անարգեցին շինողքն, ‖ Սաղ.
նա եղեւ գլուխ անկեան. ի Տեառնէ եղեւ այս, 117. 22.
43 եւ է սքանչելի յաչս մեր ։ * Վասն այսորիկ ա- Գործ. 4. 11.
սեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ արքայութիւն 1. Պետ.
Աստուծոյ, եւ տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս նորա ։ 2. 7.
44 * Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրես-
45 ցի, եւ յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա ։ * Եւ լու-
եալ քահանայապետքն եւ դպիրք եւ փա-
րիսեցիք զառակս նորա, գիտացին թէ վասն նոցա
46 ասաց ։ * Եւ խնդրէին զնա ունել, բայց եր-
կեան ի ժողովրդոցն. քանզի իբրեւ զմար-
գարէ ունէին զնա ։

## ԳԼ. ԻԲ.

1 Դարձեալ պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա Ն. Գ.
2 առակօք ։ * ‖ Նմանեցաւ արքայութիւն երկ- ‖ Ղուկ.
նից առն թագաւորի՝ որ արար հարսանիս 14. 16.
3 որդւոյ իւրում ։ * Եւ առաքեաց զծառայս Յայտ.
իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս. եւ 19. 9.
4 ոչ կամէին գալ ։ * Դարձեալ առաքեաց
այլ ծառայս՝ եւ ասէ. ասացէք հրաւիրելոցն.
ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուա-
րակք իմ եւ պարարակք զենեալ են, եւ ամենայն
5 ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիսն ։ * Եւ
նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր,
եւ

և մին 'ի վաճառ իւր ։ * և այլք կալեալ ըզ- 6
ծառայս նորա, թշնամանեցին, և սպանին ։
* Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, 7
և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպա-
նողսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց ։
* Յայնժամ ասէ ցծառայս իւր. հարսա- 8
նիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին
արժանի ։ * Արդ՝ երթա՛յք յանցս ճանա- 9
պարհաց, և զորս միանգամ գտանիցէք՝ կո-
չեցէք 'ի հարսանիս ։ * Եւ ելեալ ծառայքն 10
'ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան
զորս և գտին՝ զչարս և զբարիս. և լցան հար-
սանիքն բազմականօք ։ * Եւ մտեալ թագա- 11
ւորն հայել զբազմականօքն, ետես անդ այր
մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց ։
* Եւ ասէ ցնա. ընկեր՝ զիա՞րդ մտեր այսր, 12
զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա
պապանձեցաւ ։ * Յայնժամ ասէ թագա- 13
‖ Ղուկ․ ւորն սպասաւորացն. ‖ կապեցէք զդորա զոտս
8․ 12․ և զձեռս՝ և հանէք զդա 'ի խաւարն արտա-
13․ 42․ քին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց ։
Վ=ը ․ 25․ 30․ * Զի բազումք են կոչեցեալք և սակաւք 14
են ընտրեալք ։

Ի․ Ն * ‖ Յայնժամ գնացեալ փարիսեցիքն. առին 15
‖ Մ=րկ․ խորհուրդ զնմանէ՝ թէ որպ դնիցեն նմա որո-
12․ 13 ․ գայթ բանիւք ։ * Եւ առաքեն առ նա զա- 16
Ղուկ ․ շակերտսն իւրեանց հերովդիանոսօքն հան-
20․ 20․ դերձ՝ և ասեն, վարդապետ՝ գիտեմք զի ճըշ-
մարիտ ես, և զճանապարհն այ ճշմարտու-
թբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զումե-
քէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ ։ * Արդ՝ 17
ասա՛ մեզ, զիա՞րդ թուի քեզ. պա՞րտ է հարկս

տալ

18 տալ կայսեր՝ թէ ոչ։ * Գիտաց Յս զչարու-
թիւն նոցա, եւ ասէ. զի՞ փորձէք զիս կեղ-
19 ծաւորք. * ցուցէք ինձ զդահեկան հարկին։
20 Եւ նոքա մատուցին նմա դահեկան մի։ Եւ ա-
21 սէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս՝ կամ գիր։ * Ա-
սեն՝ կայսեր։ Յայնժամ ասէ ցնոսա. ‖ Եր- ‖ Հռով.
թայք՝ տուք զկայսերն՝ կայսեր, եւ զԱյն՝ Այ։ 13. 7.
22 * Իբրեւ լուան՝ զարմացան. եւ թողին զնա
23 եւ գնացին։ * Յայնմ աւուր մատեան առ
նա սադուկեցիքն. որ ասէին՝ թէ ‖ չիք յա- ‖ Գործ.
24 րութիւն. հարցին զնա, * եւ ասեն. վարդապետ՝ 23. 6.
Մովսէս ասաց. ‖ եթէ ոք մեռցի անորդի՝ ա- ‖ Օրէն.
ռասցէ զկին նորա եղբայր իւր, եւ յարուսցէ 25. 5.
25 զաւակ եղբօր իւրում։ * Էին առ մեզ եղ- Մարկ. 12. 19.
բարք եօթն. առաջինն առեալ կին՝ եւ մեռաւ. Ղուկ.
եւ զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղ- 20. 28.
26 բօր իւրում։ * Նոյնպէս եւ երկրորդն՝ եւ եր-
27 րորդն, մինչեւ ցեօթներորդն։ * Յետ ամե-
28 նեցուն մեռաւ եւ կինն։ * Արդ ՚ի յարու-
թեան՝ ո՞յր յեօթանցն եղիցի նա կին. զի ամե-
29 նեքին կալան զնա կին։ * Պատասխանի ետ
նոցա Յս եւ ասէ. մոլորեալ էք՝ ոչ գիտէք զգիրս
30 եւ ոչ զզօրութիւն Այ։ * Զի ՚ի յարութեանն ոչ կա-
նայս առնեն՝ եւ ոչ արանց լինին, այլ են իբ-
31 րեւ զհրեշտակս յերկինս։ * Այլ վասն յա-
րութեան մեռելոց ոչ ընթերցեալ ձեր զա-
32 սացեալն ձեզ յԱյ։ * ‖ Ես եմ Այ Աբրա- ‖ Ել.
համու, եւ Այ Իսահակայ, եւ Այ Յակոբայ։ Եւ 3. 6.
33 չէ Այ՝ Այ մեռելոց՝ այլ կենդանեաց։ * Իբ-
րեւ լուան ժողովուրդքն՝ զարմանային ընդ
34 վարդապետութիւն նորա։ * Իսկ փարիսեցիքն
իբրեւ լուան՝ եթէ պապանձեցոյց զսադու-

կե-

Մրկ. կեցիսն, ժողովեցան 'ի միասին. * Եւ ե- 35
12. 28. հարց մի ոմն 'ի նոցանէ՝ զնա փորձելով, եւ ա-
Ղուկ. սէ. * Վարդապետ՝ ո՞ր պատուիրան է մեծ յօ- 36
10. 25. րէնս. * Եւ Յս ասէ ցնա. Սիրեսցես զՏր ած 37
Օրէ. քո յամ սրտէ քումմէ՝ եւ յամ անձնէ քում-
6. 5. մէ՝ եւ յամ մտաց քոց. * Այս է մեծ եւ ա- 38
ռաջին պատուիրան. * Երկրորդն նման սը- 39
Ղուկ. մին. Սիրեսցես զընկեր քո՝ իբրեւ զանձն քո
19. 18. * Յայս երկուս պատուիրանս ամ օրէնք եւ 40
Մրկ. մարգարէք կախեալ կան. * Եւ 'ի ժողո- 41
12. 31. վել փարիսեցւոցն՝ եհարց ցնս Յս՝ եւ ասէ.
* Զի՞նչ թուի ձեզ վն քսի, ո՞յր որդի է. 42
Ղուկ. ասեն ցնա. դաւթի. * Ասէ ցնոսա Յս. Իսկ 43
20. 41. զիա՞րդ դաւիթ հոգւովն կոչէ զնա Տր՝ եւ ա-
Սաղ. սէ. * Ասաց Տր ցՏր իմ. նիստ ընդ աջմէ 44
109. 1. իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
դան ոտից քոց. * Իսկ եթէ դաւիթ զնա Տր 45
կոչէ՝ զիա՞րդ որդի նր իցէ. * Եւ ոչ ոք կա- 46
րէր տալ նմ պատասխանի բան մի, եւ ոչ իշխէր
ոք յայնմ օրէ հարցանել զնա եւս ինչ.

## ԳԼ. ԻԳ.

Ի. Օ. Յայնժամ խօսեցաւ Յս ընդ ժողովուրդսն՝ 1
Բ. Եզր. եւ ընդ աշակերտսն իւր, եւ ասէ. * Յա- 2
8. 4. թոռն Մովսիսի նստան դպիրքն եւ փարի-
սեցիք. * Զամ ինչ զոր ասիցեն ձեզ արա- 3
րէք եւ պահեցէք. բայց ըստ գործոց նց մի
Ղուկ. առնէք, զի ասեն եւ ոչ առնեն. * Կապեն 4
11. 46. բեռինս ծանունս եւ դժուարակիրս, եւ դնեն
Գործ. 'ի վերայ ուսոց մարդկան. եւ մատամբ իւ-
15. 10. րեանց ոչ կամին շարժել զնոսա. * Եւ զամ 5
զգործս իւրեանց առնեն 'ի ցոյց մարդկան.

լայ-

Լայնեն զգրապանակս իւրեանց, եւ երկայ- Բ. Օրէն.
6 նեն զքղանցս հանդերձից իւրեանց։ * Սի- 6. 8.
րեն զյառաջագահս յընթրիս, եւ զնախա- 22. 12.
թոռս 'ի ժողովուրդս՝ եւ զողջոյնս 'ի հրապա- Թուոց. 15. 38.
7 րակս։ * Եւ կոչել 'ի մարդկանէ՝ ռաբբի Մար. 12. 38.
8 ռաբբի։ * Այլ դուք մի՛ զոք կոչէք վարդա- Յակ.
պետ, զի մի է ձեր ուսուցիչ. եւ ամենեքին 3. 1.
9 դուք եղբարք էք։ * Եւ հայր մի՛ կոչէք ձեզ Մաղ.
յերկրի, զի ձեր մի է հայր՝ որ յերկինսն է։ 1. 6.
10 * Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ
11 ձեր քն է։ * Եւ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր
12 սպասաւոր։ * Որ բարձրացուսցէ զանձն Ղուկ.
խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուսցէ զանձն՝ 14. 11.
13 բարձրասցի։ * Վա՜յ ձեզ դպրաց եւ փարի- 18. 14.
սեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայու-
թիւն երկնից առաջի մարդկան. դուք ո՛չ մտա-
նէք, եւ որոց մտանենն՝ չտայք թոյլ մտանել։
14 * Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծա-
ւորաց. զի ուտէք զտունս այրեաց. պատ- Մար. 12.
ճառանօք երկարէք զաղօթս, վա՛ն զի աւելի 12. 40.
15 դատաստան ընդունիցիք։ * Վա՜յ ձեզ դպ- Ղուկ.
րաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի յա- 20. 47.
ծէք զծով եւ զցամաք առնել եկամուտ
մի. եւ յորժամ լինիցի, առնէք զնա որդի
16 գեհենի կրկին եւս քան զձեզ։ * Վա՜յ ձեզ
առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու 'ի
տաճարն՝ չէ՛ ինչ, բայց որ երդնու յոսկին
17 որ 'ի տաճարին է՝ արժան է։ * Մո՛րոսք եւ
կոյրք՝ զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն՝
18 որ սրբէ զոսկին։ * Եւ որ երդնու 'ի սե-
ղանն՝ չէ՛ ինչ, բայց որ երդնու 'ի պատա-
19 րագն որ 'ի վ՟ նր է՝ արժան է։ * Յիմարք

եւ

և կոյրք՝ զի՞նչ մեծ է. պատարագն, եթէ
սեղանն՝ որ սրբէ զպատարագն։ * Իսկ արդ՝ 20
որ երդնու ՚ի սեղանն, երդնու ՚ի նա՝ և
յամ որ ՚ի վն նր է. * Եւ որ երդնու ՚ի տա- 21
ճարն, երդնու ՚ի նա՝ և ՚ի բնակիչն նր. * Եւ 22
որ երդնու յերկինս, երդնու յաթոռն այ՝
Ղուկ. 11. 42. և յայն որ նստին ՚ի վն նորա * Վայ ձեզ 23
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի
տասանորդէք զանանուխ և զսամիթ և զչա-
ման, և թողէք զծանր ծանր օրինացն՝ զդ-
դատաստան և զողորմութիւն և զհաւատս.
զայս արժան էր առնել՝ և զայն չթողուլ։
* Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք՝ 24
և զուղտս կլանէք։ * Վայ ձեզ դպրաց և 25
փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զար-
տաքին զբաժակին և զսկաւառակին, և ՚ի
ներքոյ լի են յափշտակութբ և անիրաւու-
թբ։ * Փարիսեցի կոյր՝ սրբեա նախ զներ- 26
քին բաժակին և զսկաւառակին, զի լինի-
ցի և արտաքինն նր սուրբ։ * Վայ ձեզ դը- 27
պրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի նը-
ման էք գերեզմանաց բռելոց. որ արտաքոյ
երեւին գեղեցիկք՝ և ՚ի ներքոյ լի են ոսկե-
րօք մեռելոց և ամ պղծութբ։ * Այնպէս 28
և դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք,
և ՚ի ներքոյ լի էք կեղծաւորութբ և անօ-
րէնութբ։ * Վայ ձեզ դպրաց և փարիսեց- 29
ւոց կեղծաւորաց. զի շինէք զշիրիմս մար-
գարէից՝ և զարդարէք զգերեզմանս արդա-
րոց։ * Եւ ասէք. եթէ էաք յաւուրս հարցն 30
մերոց, ոչ հաղորդ էաք արեան մարգարէիցն։
* Ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որ- 31
դիք

դիք էք այնոցիկ որ կոտորէին զմարգա-
32 րէսն ։ * Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց
33 * ‖ Օձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնու- ‖ Ղուկ. 3. 7.
34 ցուք ՚ի դատաստանէ գեհենին ։ * Վասն
այսորիկ աստանօր ես առաքեմ առ ձեզ
մարգարէս և իմաստունս և դպիրս, և ՚ի նո-
ցանէ սպանանիցէք և ՚ի խաչ հանիցէք, և
՚ի նոցանէ տանջիցէք ՚ի ժողովուրդս ձեր,
35 և հալածիցէք ՚ի քաղաքէ ՚ի քաղաք ։ * Որ-
պէս զի եկեսցէ ՚ի վ՟ր ձեր ա՟մ արիւն արդար
հեղեալ յերկրի . ‖ յարենէն Աբելի արդա- ‖ Ծնն. 4. 8.
րոյ մինչև ցարիւնն ‖ Զաքարիայ որդւոյ Բա- Եբր. 11. 4.
րաքեայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին և
36 սեղանոյ ։ * Ամէն ասեմ ձեզ . եկեսցէ այս ‖ 2 Մն. 24. 22.
37 ա՟մ ՚ի վերայ ազգիս այսորիկ ։ * ‖ Եր՟մ, ‖ Ղուկ. 13. 34.
Եր՟մ . որ կոտորէիր զմարգարէսն՝ և քարկոծ
առնէիր զառաքեալսն առ քեզ . քանիցս ան-
գամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր
օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ը՟ն թևովք,
38 և ոչ կամեցարուք ։ * Ահա թողեալ լիցի
39 ձեզ տունդ ձեր աւերակ ։ * Բայց ասեմ
ձեզ՝ թէ ոչ ևս տեսանիցէք զիս յայսմ հե-
տէ , մինչև ասիցէք , օրհնեալ եկեալ յա-
նուն տ՟ն ։

## ԳԼ . ԻԴ .

1 Եւ ելեալ արտաքս յՅ՟ս ՚ի տաճարէն գնայր . Ի.Դ.
‖ և մատեան աշակերտքն ցուցանել նմա ‖ Մարկ. 13. 2.
2 զշինուածս տաճարին ։ * Եւ նա պատաս-
խանի ետ և ասէ ցնոսա . տեսանէք զայդ Ղուկ. 21. 6.
ա՟մ , ամէն ասեմ ձեզ . ոչ մնասցէ այդր քար
3 ՚ի քարի վ՟ր՝ որ ոչ քակտեսցի ։ * Եւ մինչ
դեռ

դեռ նստէր 'ի լերինն Ձիթենեաց , մատեան
առ նա աշակերտքն առանձինն եւ ասեն . Ա-
սա մեզ՝ երբ լինիցի այդ , եւ կամ զի՞նչ նշան
իցէ քոյոյ գալստեանն , եւ վախճանի Աշխ՟ի
‖ Եփես . * Պատասխանի ետ Յս՝ եւ ասէ ցնոս . ‖ Զգոյշ 4
5 . 6 . լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ ։ * Զի 5
Կողոս . բազումք գայցեն յանուն իմ , եւ ասիցեն՝ թէ ես
2 . 18 . եմ Քն . եւ զբազումս մոլորեցուցանիցեն ։
* Լսելոց էք պատերազմունս՝ եւ համբաւս 6
պատերազմաց . զգոյշ լերուք՝ մի խռովի-
ջիք , զի պարտ է լինել այսմ ամ՟ի , այլ չեւ է
կատարած ։ * Յարիցէ ազգ յազգի վ՟ր , եւ 7
թագաւորութ՟ի 'ի թագաւորութ՟ե վ՟ր . եւ
եղիցին սովք եւ սրածութ՟իք եւ սասանութ՟իք
'ի տեղիս տեղիս ։ * Սակայն եւ այն ամե- 8
‖ Վեր . նայն սկիզբն է երկանց ։ * ‖ Յայնժամ մատ- 9
10 . 17 . նեսցեն զձեզ 'ի նեղութիս , եւ սպանանիցեն
Ղուկ . 21 . 12 . զձեզ . եւ եղիջիք ատեցեալք յամ՟ ազգաց վ՟ս
Յովհ . անուան իմոյ ։ * Եւ յայնժամ գայթակ- 10
15 . 20 .
16 . 2 . ղեսցին բազումք , եւ զմիմեանս մատնեսցեն՝ եւ
ատեսցեն զմիմեանս ։ * Եւ բազում սուտ մար- 11
գարէք յարիցեն , եւ զբազումս մոլորեցու-
ցեն ։ * Եւ վ՟ս բազմանալոյ անօրէնութ՟ե , 12
ցամաքեսցի սէր բազմաց ։ * Բայց որ համ- 13
բերեսցէ իսպառ , նա կեցցէ ։ * Եւ քարո- 14
զեսցի աւետարանս արքայութ՟ես ամ՟ տիե-
զերս՝ 'ի վկայութ՟ի ամ՟ հեթանոսաց , եւ ա-
‖ Դան . պա եկեսցէ կատարած ։ * Արդ՝ յորժամ 15
9 . 27 . տեսանիցէք զպղծութ՟ի աւերածոյն , ‖ որ ա-
Մրկ . ասացեալն է 'ի ձեռն Դանիէլի մարգարէի .
13 . 14 . զի կայցէ 'ի տեղւոջն սրբութ՟ե . որ ընթեռ-
Ղուկ . 21 . 20 . նուն 'ի միտ առցէ ։ * Յայնժամ որ 'ի 16

Հրէաս-

17 հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս . * Եւ
որ 'ի տանիս կայցէ, մի իջցէ առնուլ ինչ 'ի
18 տանէ իւրմէ . * Եւ որ յանդի իցէ, մի դարձ-
19 ցի յետս առնուլ զհանդերձ իւր ։ * Բայց վայ ի-
ցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն յայնոսիկ ։
20 * Յաղօթս կացէք՝ զի մի լինիցի փախուստն
21 ձեր ձմերայնի, եւ մի 'ի շաբաթու ։ * Զի ե-
ղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ
եղեւ 'ի սկզբանէ արարածոց աշխարհի մին-
22 չեւ ցայժմ, եւ ոչ այլ լիցի ։ * Եւ եթէ ոչ
կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամ
մարմին . բայց վասն ընտրելոցն կարճեսցին ա-
23 ւուրքն այնոքիկ ։ || * Յայնժամ եթէ որ ասի- ||Մարկ.
ցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոս, կամ անդ, մի 13. 21. Ղուկ.
24 հաւատայցէք ։ * Զի յարիցեն սուտ քրիս- 17. 23.
տոսք եւ սուտ մարգարէք . եւ տացեն նշանս
մեծամեծս եւ արուեստս, մինչեւ մոլորեցու-
ցանել՝ թէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն ։
25 * Ահա յառաջագոյն ասացի ձեզ ։ * Արդ
26 եթէ ասիցեն ձեզ . ահաւասիկ յանապատի
է, մի ելանիցէք, եւ եթէ ահա յշտեմարանս
27 է, մի հաւատայցէք ։ * Զի որպէս փայլակն՝
որ ելանէ յարեւելից՝ եւ երեւի մինչեւ յարեւ-
մուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մար-
28 դոյ ։ ||* Զի ուր գէշն իցէ, անդ ժողովես- || Ղուկ.
29 ցին արծուիք ։ * || Վաղվաղակի յետ նեղու- 17. 36. || Եսայ.
թեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարես- 13. 10.
ցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք Եզեկ.
անկցին յերկնից, եւ զօրութիւնք երկնից շար- 32. 7. Յովել.
30 ժեսցին ։ * Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ 2. 10.
մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ա- 3. 15.
մենայն ազգք . | եւ տեսցեն զորդի մարդոյ ||Յայտ. 1. 7.

Եւ

եկեալ ՚ի վ՟ր ամպոց երկնից զօրութեամբ եւ փա-
Ա. Կոր. ռօք բազմօք ։ * Եւ առաքեսցէ զհրեշտակս 31
15. 52. իւր փողով մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս
Ա. Թես. 4. 15. նո՟ր ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մին-
չեւ ՚ի ծագս նոցա ։ * Ի թզենւոյ անտի ուսա- 32
րուք զառակն. զի յորժամ նո՟ր ոստքն կակ-
ղասցին եւ տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ
է ամառն ։ * Այնպէս եւ դուք յորժամ տե- 33
սանիցէք զայս ա՟մ, գիտասջիք թէ մերձ է
՚ի դուրս ։ * Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անց- 34
ցէ ազգս այս՝ մինչեւ այս ա՟մ եղիցի ։ * Եր- 35
կինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի անց-
ցեն ։ * Բայց վ՟ս աւուրն այնորիկ եւ ժամու, 36
ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ եւ ոչ որդի՝
Ծն. բայց միայն հայր ։ * Որպէս աւուրքն նոյի, 37
7. 7. Ղուկ. այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ ։
17. 26. * Զի որ՟պ էին յաւուրսն որ յառաջ քան զջր- 38
հեղեղն, ուտէին եւ ըմպէին՝ կանայս առ-
նէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն՝ յորում
եմուտ նոյ ՚ի տապանն. * եւ ոչ գիտացին՝ 39
մինչեւ եկն ջրհեղեղն եւ եբարձ զամենեսին,
այնպէս եղիցի եւ գալուստն որդւոյ մարդոյ ։
* Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, 40
մին առցի՝ եւ միւսն թողցի ։ * Եւ եթէ եր- 41
կու աղայցեն ՚ի մի երկանս, մին առցի՝ եւ
միւսն թողցի ։ * Արթուն կացէք՝ զի ոչ գի- 42
տէք յորում ժամու տ՟րն ձեր գայ ։ * Զայն 43
Մրկ. գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յո-
13. 33. Ղուկ. րում պահու գող գայ, սկէր՝ եւ ոչ տայր ա-
12. 39. կան հատանել զտան իւրոյ ։ * Վ՟ս այսորիկ 44
եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժա-
մու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ։* Իսկ 45
ով

ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն ,
զոր կացոյց տէր իւր ՚ի վ՞ր ծառայից իւրոց՝
46 տալ ն՞ց կերակուր ՚ի ժամու ։ * ‖ Երանի՜ է ‖Յայտ. 16. 15.
ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանի-
47 ցէ արարեալ այնպէս ։ * Ամէն ասեմ ձեզ,
զի ՚ի վերայ ամ՞ ընչից իւրոց կացուսցէ զնա ։
48 * Ապա թէ ասիցէ ծառայն չար ՚ի սրտի իւ-
49 րում, տէր իմ յամէ՝ գալ . * եւ սկսանիցի
հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ եւ ըմ-
50 պիցէ ը՞ արբեցողս ։ * Գայցէ տէր ծառային
այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի, եւ ՚ի
51 ժամու յորում ոչ գիտիցէ . * եւ կորեսցէ զը-
նա ընդ մէջ, եւ զբաժին ն՞ր ընդ կեղծաւորս
դիցէ ։ ‖ անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց ։ ‖Վեր. 25. 30.

## ԳԼ. ԻԵ.

1 Յայնժամ նմանեսցի արքայութի՞ երկնից
տասն կուսանաց , որոց առեալ զլապտերս
իւրեանց ելին ը՞ առաջ փեսայի եւ հարսին ։
2 * Հինգն ՚ի նոցանէ յիմարք էին՝ եւ հինգն ի-
3 մաստունք ։ * Յիմարքն առին զլապտերսն ,
4 եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին ։ * Իսկ ի-
մաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապ-
5 տերս իւրեանց ։ * Եւ ՚ի յամել փեսային ,
6 ննջեցին ամենեքեան եւ ՚ի քուն մտին։ * Եւ
՚ի մէջ գիշերի եղեւ բարբառ , ահա փեսայ
7 գայ՝ արիք ընդ առաջ ն՞ր ։ * Յայնժամ յա-
րեան ամ՞ կուսանքն՝ եւ կազմեցին զլապտերս
8 իւրեանց ։ * Ասեն յիմարքն ցիմաստունսն ,
տուք մեզ յիւղոյդ ձերմէ , զի ահա շիջանին
9 լապտերքս մեր ։ * Պատասխանի ետուն ի-
մաստունքն՝ եւ ասեն . գուցէ ոչ իցէ մեզ եւ
ձեզ

ձեզ բաւական, այլ երթայք 'ի վաճառա-
կանս՝ և գնեցէք ձեզ։ * Եւ մինչ նոքա գնացին 10
գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ
նմա 'ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռն։
* Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն. 11
տէր տէր՝ բաց մեզ։ * Եւ պատասխանի ետ և 12
ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։
Մարկ. 13. 33. * Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն և ոչ 13
Ղուկ. զժամն։ * Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, 14
19. 12. կոչեաց զծառայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր։
* Ումեմն ետ հինգ քանքար՝ և ումեմն եր- 15
կուս՝ ումեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում
կարի, և գնաց։ * Վաղվաղակի որ 16
առ զհինգն՝ գործեաց նոքօք, և շահեցաւ
այլ ևս հինգ։ * Նոյնպէս և որ զերկուսն, 17
շահեցաւ այլ ևս երկուս։ * Իսկ որ զմին առ՝ 18
գնաց փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ
տն իւրոյ։ * Յետ բազում ժամանակի գայ տէր 19
ծառայիցն այնոցիկ՝ և առնէ համարս 'ի մէջ
նոցա։ * Իսկ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն 20
առ, մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ.
տէր՝ հինգ քանքար ետուր ցիս, արդ՝ աւա-
սիկ հինգ այլ ևս քանքար 'ի վերայ շահեցայ։
* Ասէ ցնա տէրն իւր. ազնիւ ծառայ՝ բա- 21
րի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ
հաւատարիմ ես, 'ի վր բազմաց կացուցից
զքեզ. մուտ յուրախութիւն տն քո։ Մատու- 22
ցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր՝
և ասէ. տէր՝ երկուս քանքարս ետուր ցիս,
աւասիկ երկուս ևս այլ քանքարս զոր 'ի
վր շահեցայ։ * Ասէ ցնա տէրն իւր. ազնիւ 23
ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի

սա-

սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վ՛ր բազմաց
կացուցից զքեզ. մուտ յուրախութի՛ տ՛ն քո։
24 *Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ
էր. և ասէ. տէր՝ գիտէի, զի այր մի խիստ
ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝
25 ուստի ոչ սփռեցեր. *երկեայ՝ գնացի և թա-
ղուցի զքանքարն քո յերկրի. արդ՝ ահաւասիկ
26 քոյդ քեզ։ *Պատասխանի ետ տէրն՝ և ա-
սէ ցնա. ծառայ չար և վատ՝ գիտէիր եթէ
հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ՝
27 ուստի ոչ սփռեցի. *պարտ էր քեզ արկա-
նել զարծաթ իմ 'ի սեղանաւորս, և եկեալ
28 ես տոկոսեօք պահանջէի զիմն։ *Արդ՝ ա-
ռէք 'ի դմանէ զքանքարդ՝ և տուք այնմ որ
29 ունիցի զտասն քանքարն։ *‖ Զի ամ՛ի որ ‖ Վէր.
ունիցի՝ տացի և յաւելցի. և որ ոչն ունիցի՝ 13. 12.
30 և զոր ունիցին, բարձցի 'ի նմանէ։ *Եւ Մրկ. 4. 25.
զծառայդ անպիտան հանէք 'ի խաւարն ար- Ղուկ.
տաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ 8. 18.
31 *Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք 19. 26.
իւրովք՝ և ամ՛ հրեշտակք ը՛ նմա, յայնժամ
32 նստցի յաթոռ փառաց իւրոց։ *Եւ ժողո-
վեսցին առաջի նր՛ ամ՛ ազգք, և մեկնեսցէ
զն՛ս 'ի միմեանց, ոպ՛ հովիւ զի մեկնեսցէ զո-
33 չխս յայծեաց։ *Եւ կացուսցէ զոչխսն ընդ
34 աջմէ իւրմէ՝ և զայծիսն 'ի ձախմէ։ *Յայն-
ժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ
աջմէն իցեն. եկայք օրհնեալք հօր իմոյ ժա-
ռանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայու-
35 թի՛ն 'ի սկզբանէ աշխարհի։ *‖ Զի քաղ- ‖ Եսայ.
ցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և 58. 7.
արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս. Եզեկ. 18. 16.

* մերկ՝ եւ զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ եւ 36
տեսէք զիս. ՚ի բանտի էի՝ եւ եկիք առ իս։
* Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն 37
եւ ասասցեն. Տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղ-
ցեալ՝ եւ կերակրեցաք, կամ ծարաւի՝ եւ ար-
բուցաք։ * Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ եւ ժո- 38
ղովեցաք, կամ մերկ՝ եւ զգեցուցաք։ * Ե՞րբ 39
տեսաք զքեզ հիւանդ՝ կամ ՚ի բանտի, եւ ե-
կաք առ քեզ։ * Պատասխանի տացէ թա- 40
գաւորն՝ եւ ասասցէ ցնա. ամէն ասեմ ձեզ,
որովհետեւ արարէք միում յեղբարցս այսո-
ցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։ * Յայնժամ 41
ասասցէ եւ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն.
‖ Սղմ. ‖ Երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւի-
6. 9. տենական, որ պատրաստեալ է սատանայի
Վեր 7. 25. եւ հրեշտակաց նր։ * Զի քաղցեայ՝ եւ ոչ 42
Ղուկ. ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ եւ ոչ արբու-
13. 27. ցէք զիս. * օտար էի՝ եւ ոչ ժողովեցէք զիս, 43
մերկ էի՝ եւ ոչ զգեցուցէք զիս, հիւանդ՝ եւ
՚ի բանտի՝ եւ ոչ տեսէք զիս * Յայնժամ պա- 44
տասխանի տացեն եւ նք՝ եւ ասասցեն. տէր՝
ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ
օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ՚ի բանտի, եւ
ոչ պաշտեցաք զքեզ։ * Յայնժամ պատաս- 45
խանի տացէ նոցա՝ եւ ասասցէ. ամէն ասեմ
ձեզ, որովհետեւ ոչ արարէք միում ՚ի փոքր-
‖ Յհ. կանցս յայսցանէ՝ եւ ոչ ինձ արարէք։ * ‖ Եւ 46
5. 29. երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենա-
կանս, եւ արդարքն ՚ի կեանս յաւիտենա-
կանս։

ԳԼ.

## ԳԼ. ԻԶ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց յս զամ զբանս
2 զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր. * Գիտէ-
տէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի.
և որդի մարդոյ մատնի 'ի խաչ ելանել. ՎԵՐՋ
3 * Յայնժամ ժողովեցան || քահանայապետ- || Մար. 14. 1.
քըն և դպիրքն և ծերք ժողովրդեանն 'ի Ղուկ.
սրահ քահանայապետին՝ որում անուն էր 22. 1.
4 Կայիափա. * և արարին խորհուրդ՝ զի նենգ-
5 գութեամբ կալցին զյս և սպանցեն. * Բայց ա-
սէին, թէ մի 'ի տօնի աստ՝ զի մի խռովութի
6 լինիցի 'ի ժողովրդեանն. * || Իբրեւ եղեն յս 'ի || Մար. 14. 3.
7 բեթանիա 'ի տուն սիմոնի բորոտի, * մա-
տեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ
ծանրագնի, || և թափեաց 'ի գլուխ նորա 'ի || Յով. 12. 3.
8 բազմականին. * Իբրեւ տեսին աշակերտքն՝
բարկացան՝ և ասեն. ընդէ՞ր է կորուստ այդ
9 իւղոյդ. * Զի մարթ էր վաճառել զդա մե-
10 ծագնի՝ և տալ աղքատաց. * Գիտացեալ յս և
ասէ ցնս. զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ
11 մի բարի գործեաց դա յիս. * Զամ ժամ
զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հա-
12 նապազ ընդ ձեզ ունիք. * Արկանել դորա
զիւղդ 'ի մարմին իմ, առ 'ի թաղելոյ զիս
13 նշանակեաց. * Բայց ամէն ասեմ ձեզ, զի
ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամ
աշխարհ՝ խօսեսցի և զոր արար դա՝ 'ի յիշա-
14 տակ դորա. * || Յայնժամ գնաց մի 'ի երկո- || Մար. 14. 10.
տասանիցն անուանեալ յուդա սկարիովտաց- Ղուկ.
15 ցի առ քահանայապետս, և ասէ. * Զի՞նչ 22. 4.
կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ.

և

եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի։ * Եւ 16
յայնմ հետէ խնդրէր պարապ՝ զի մատնես-
ցէ զնա նոցա։
‖Մրկ. 14. 12. * ‖ Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն 17
Ղուկ. մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն. Ո՞ւր
22. 7. կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զզա-
տիկն։ * Եւ նա ասէ ցնոսա. Երթա՛յք ի 18
քաղաքն առ այս ոմն, եւ ասացէք ցնա.
Վարդապետն ասէ՝ ժամանակ իմ մերձեալ է,
առ քեզ առնեմ զզատիկ աշակերտօքս հան-
դերձ։ * Եւ արարին աշակերտքն որպէս հրա- 19
մայեաց նոցա Յիսուս, եւ պատրաստեցին զզատիկն։
‖Մրկ. 14. 17. * ‖ Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ կայր բազմեալ ընդ 20
երկոտասան աշակերտսն։ * Եւ մինչ դեռ 21
Ղուկ. 22. 14. ուտէին նոքա, ասէ. Ամէն ասեմ ձեզ, ‖ զի
‖Յովհ. 13. 21. մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս * Եւ տրտ- 22
մեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր
ոք ի նոցանէ. Միթէ ես իցեմ Տէր։ * Նա 23
պատասխանի ետ եւ ասէ. որ մխեաց ընդ իս
զձեռն իւր ի սկաւառակս՝ նա մատնելոց է
‖Սղ. 40. 10. զիս։ * Որդի մարդոյ երթայ՝ ‖ որպէս եւ գրեալ 24
Գործ. 1. 16. է վասն նորա. բայց վա՜յ մարդոյն այնմիկ՝ յորոյ
ձեռն Որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝
թէ չէր ծնեալ մարդն այն։ * Պատասխանի 25
ետ Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝ եւ ասէ.
Միթէ ես իցեմ Վարդապետ. ասէ ցնա՝ Դու
‖1 Կոր. 11. 24. ասացեր։ * ‖ Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ առ 26
Յիսուս հաց՝ օրհնեաց եւ եբեկ, եւ ետ աշակեր-
տացն՝ եւ ասէ. Առէք կերայք՝ այս է մարմին
իմ։ * Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա 27
եւ ասէ. Արբէք ի դմանէ ամենեքին։ * Զի 28
այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ
բազ-

29 բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց ։ * Բայց
ասեմ ձեզ. ոչ ևս արբից յայսմ հետէ 'ի բե-
րոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից
30 զդա ընդ ձեզ նոր յարքայութեան հօր իմոյ ։ * Եւ
օրհնեցին, և ելին 'ի լեառն Ձիթենեաց ։
31 * Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. || Ամենեքին դուք || Մարկ.
գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի, զի 14. 27.
գրեալ է՝ թէ հարից զհովիւն և ցրուեսցին Զաքար.
32 ոչխարքն հօտին։ * Եւ յետ յառնելոյն իմոյ, 13. 7.
33 || յառաջեցից քան զձեզ 'ի Գալիլեա ։ * Պա- || Մարկ.
տասխանի ետ պետրոս՝ և ասէ ցնա. թէպէտ 16. 7.
և ամենեքեան գայթագղեսցին 'ի քէն, սա-
34 կայն ես ոչ գայթագղեցայց ։ * Ասէ ցնա Յիսուս.
ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի || մինչև || Յովհ.
հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս ։ 13. 38.
35 * Ասէ ցնա պետրոս. || թէ և մեռանել հա- || Մարկ.
սանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց ։ Նոյն- 14. 31.
36 պէս և ամենայն աշակերտքն ասէին ։ * Յայնժամ Ղուկ.
գայ Յիսուս ընդ նոսա 'ի գիւղ մի՝ որում անուն էր 22. 33.
գեթսեմանի, և ասէ ցնոսա. նստարուք այդր,
37 մինչև երթայց կացից յաղօթս ։ * Եւ ա-
ռեալ ընդ իւր զպետրոս՝ և զերկուս որդիսն
զեբեդեայ, սկսաւ տրտմել և հոգալ ։
38 * Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է ոգի իմ
մինչև 'ի մահ, կացէք աստ՝ և տքնեցէք ընդ իս
39 * Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ ան-
կաւ 'ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղօթս՝ և
ասէ. հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բա-
ժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ
40 որպէս դու ։ * Գայ առ աշակերտսն, և գտա-
նէ զնոսա 'ի քուն, և ասէ ցպետրոս. այդպէս
ոչ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս ։
* Եւ-

* Արթուն կացէք և աղօթս արարէք՝ զի մի 41
անկանիցիք 'ի փորձութիւն . Հոգիս յօժար է՝
բայց մարմինս տկար ։ * Դարձեալ երկրորդ 42
անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս յս՛ և ասէ .
Հայր իմ՝ եթէ հնար իցէ անցանել յինէն
բաժակիս այսմիկ, առանց թէ ոչ՝ արբից զսա,
եղիցին կամք քո ։ * Եւ եկեալ միւսանգամ 43
եգիտ զնոսա 'ի քուն, զի էին աչք նոցունց
ծանրացեալք ։ * Եթող զնս՛ և գնաց, եկաց 44
յաղօթս երրորդ անգամ, և դարձեալ ըզ-
նոյն բան ասաց ։ * Յայնժամ գայ առ աշա- 45
կերտսն՝ և ասէ ցնս . Ննջեցէք այսուհետև՝
և հանգերուք . զի ահա հասեալ է ժամ, և
որդի մարդոյ մատնի 'ի ձեռս մեղաւորաց ։
* Արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ ե- 46
‖ Մարկ. հաս՝ որ մատնելոցն է զիս ։ * ‖ Եւ մինչդեռ 47
14. 43. նա զայն խօսէր, ահա յուդա մի յերկոտա-
Ղուկ. սանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և
22. 47. բրօք՝ 'ի քահանայապետիցն՝ և 'ի ծերոց ժո-
Յովհ. 18. 3. ղովրդեանն ։ * Եւ որ մատնելոցն էր զնա, 48
ետ նշան նոցա՝ և ասէ . Զոր ես համբու-
րեցից՝ նա է, զնա ունիցիք ։ * Եւ վաղվա- 49
ղակի մատուցեալ առ յս՛ ասէ . ողջ լեր վար-
դապետ . և համբուրեաց զնա ։ * Եւ յս՛ 50
ասէ ցնա . Ընկեր՝ վ՛ս որոյ եկիր . յայնժամ
մատուցեալ արկին ձեռս 'ի յս՛, և կալան ըզ-
նա ։ * Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ էին ընդ 51
յս՛, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝ և
եհար զծառայ քահանայապետին, և 'ի բաց
եհան զունկն նր ։ * Յայնժամ ասէ ցնա յս՛ . 52
‖ Ծննդ. Դարձո զսուր քո 'ի տեղի իւր . ‖ զի ամենե-
9. 6. քեան՝ որ սուր առնուն՝ սրով անկանի-
ցին ։

53 ցեն ։ * Եթէ համարիցիս՝ թէ ոչ կարեմ ա-
ղաչել զՀայր իմ․ և հասուցանիցէ ինձ այժմ
այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշ-
54 տակաց ։ * Իսկ զիա՞րդ լնուցուն գիրք՝ թէ || Եսայ․
55 այսպէս պարտ է լինել ։ * Յայնժամ ասաց 53․ 10․
յս ցամբոխն․ իբրև ՚ի վր աւազակի ելէք
սրովք և բրովք՝ ունել զիս․ հանապազ առ
ձեզ ՚ի տաճարին նստէի և ուսուցանէի, և
56 ոչ կալարուք զիս ։ * Այլ այս ամենայն եղև՝
զի || լցցին գիրք մարգարէիցն ։ Յայնժամ ա- || Ողբ․
շակերտքն ամենեքին թողին զնա և փա- 4․ 20․
57 խեան ։ * Իսկ նոցա կալեալ զյս՝ || ածին առ || Ղուկ․
կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն և 22․ 54․ Յովհ․
58 ծերք ժողովեալ էին ։ * Իսկ պետրոս զհետ 18․ 24․
նր երթայր բացագոյն մինչև ՚ի սրահ քա-
հանայապետին․ և մտեալ ՚ի ներքս նստէր
ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն ։
59 * Իսկ քահանայապետքն և ամ ատեանն
խնդրէին սուտ վկայութի զյսէ․ զի սպանա-
60 ցեն զնա, * և ոչ գտանէին ՚ի բազմաց սուտ
վկայիցն մատուցելոց․ յետոյ մատուցեալ եր-
61 կու սուտ վկայք, * ասէին՝ թէ սա ասէր՝
|| կարող եմ քակել զտաճարն այ, և զերիս || Յովհ․
62 աւուրս շինել ։ * Իւ յարուցեալ քահանա- 2․ 19․
յապետն ասէ ցնա․ չտաս ինչ պատասխա-
63 նի, զինչ դոքա ամբաստանեն զքէն ։ * Իսկ
յս լուռ կայր ։ պատասխանի ետ քահանայա-
պետն և ասէ ցնա․ երդմնեցուցանեմ զքեզ
յած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դու || Վեր․
64 ես քս որդի այ ։ * Ասէ ցնա յս․ դու ասա- 16․ 27․
ցեր․ բայց ասեմ ձեզ, || յայսմ հետէ տեսա- Հռով․
նիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօ- 14․ 10․ Ա․ Թես․
րու 4․ 15․

րութեն և եկեալ ՚ի ամպս երկնից։ * Յայն- 65
ժամ քահանայապետն պատառեաց զհան-
դերձս իւր, և ասէ. հայհոյեաց, զի՞ ևս պի-
տոյ են մեզ վկայք, ահա արդ լուայք զհայ-
հոյութիւնն։ * զի՞նչ համարիք. նոքա 66
պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է։
Եսայ. 50. 6. * Յայնժամ ‖ թքին ընդ երեսս նր, և կռ- 67
Մարկ. 14. 65. փեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ա-
սեն։ * Մարգարէաց մեզ քս, ո՞վ է որ ե- 68
Ղուկ. 22. 55. հարն զքեզ։ * ‖ Իսկ պետրոս նստէր արտա- 69
Յովհ. 18. 17. քոյ ՚ի գաւթին. մատեաւ առ նա աղախին
մի, և ասէ. և դու ընդ յսի գալիլեացւոյ էիր։
* Նա ուրացաւ առաջի ամենեցուն՝ և ասէ, 70
թէ ոչ գիտեմ զի՞նչ խօսիս։ * Եւ իբրև ել 71
նա արտաքս քան զդրունսն՝ ետես զնա այլ
կին մի, և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային.
և սա ընդ յսի նազովրեցւոյ էր։ * Եւ դար- 72
ձեալ ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ
զայրն։ * Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ 73
որք կային անդ, ասեն ցպետրոս. արդա-
րև և դու ՚ի նոցանէ ես, քանզի և խօսք քո
յայտ առնեն զքեզ։ * Յայնժամ սկսաւ 74
նզովել և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն.
և իսկոյն հաւ խօսեցաւ։ * Եւ յիշեաց պետ- 75
Վեր. 26. 34. րոս զբանն յսի զոր ասաց, ‖ թէ մինչև հա-
ւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս. և ե-
լեալ արտաքս՝ ելաց դառնապէս։

## ԻԷ.

Իբրև այգ եղև, խորհուրդ արարին ամ 1
քահանայապետքն և ծերք ժողովրդեանն
Մարկ. 15. 1. վն յսի սպանանել զնա։ * ‖ Կապեցին ըզ- 2
նա,

նա, և տարան զնա. և ետուն 'ի ձեռս Ղուկ. 23. 1.
3 պոնտացւոյ պիղատոսի դատաւորի: * Յայն- Յովհ. 18. 28.
ժամ տեսեալ յուդայի՝ որ մատնեաց զնա,
թէ դատապարտեցաւ, զղջացաւ՝ և դարձոյց
զարծաթն առ քահանայապետսն և ծերս
4 ժողովրդեանն, * և ասէ. մեղայ, զի մատ-
նեցի զարիւն արդար. և նոքա ասեն. մեզ չէ
5 փոյթ, դու գիտես: * Եւ ընկէց զարծաթն
'ի տաճարին՝ ‖ և գնաց, և խեղդե- ‖Գործ. 1. 18.
6 ցաւ: * Եւ քահանայապետիցն առեալ զար-
ծաթն՝ ասեն. ոչ է արժան ընդունել զայդ
7 'ի կորբանն, քանզի գինք արեան են: * Խոր-
հուրդ առեալ, գնեցին նովաւ զագարակն
8 բրուտի 'ի գերեզման օտարաց: * ‖ Վասն այ- ‖Գործ. 1. 19.
նորիկ կոչեցաւ ագարակն այն, ագարակ ա-
9 րեան՝ մինչև ցայսօր: * Յայնժամ լցաւ՝ որ
ասացաւն 'ի ձեռն երեմիայ մարգարէի. ‖ և ‖Զաք. 11. 13.
առին զերեսուն արծաթին զգինս վաճառե-
10 լոյն, զոր արկին յորդւոցն Ի՟ղի: * Եւ ետուն
զնա յագարակն բրուտի. ո՟պ հրամայեաց ինձ
11 Տ՟ր: * Եւ յոտնկաց առաջի դատաւորին. ‖ և ‖Մարկ. 15. 2.
հարց զնա դատաւորն՝ և ասէ. դ՟ու ես թա-
12 գաւորն հրէից: և Յ՟ս ասէ. դու ասես: * Եւ Ղուկ. 23. 2.
'ի չարախօսելն ն՟ր 'ի քահանայապետիցն և Յովհ.
13 'ի ծերոց, ոչ ինչ ետ պատասխանի: * Յայն- 18. 33.
ժամ ասէ զնա պիղատոս. ո՟չ լսես՝ որչափ
14 դորա հակառակ քո վկայեն: * Եւ ոչ ետ
նմ պատասխանի՝ և ոչ բան մի, մինչև զարմա-
15 նալ դատաւորին յոյժ: * Ըստ տօնի
սովոր էր դատաւորն արձակել ժողովր-
16 դեանն կապեալ մի՝ զոր կամէին: * Ունէին
յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում ա-
նուն

նուն էր յեսու բարաբբա ։ * Իբրեւ ժողո- 17
վեցան, ասէ ցնոսա պիղատոս. զո՞ կամիք յեր-
կուց աստի՝ զի արձակեցից ձեզ, զյեսու բա-
րաբբա՞ եթէ զյս զանուանեալն քս ։ * Քան
զի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին 18
զնա ։ * Եւ մինչ նստէր յատենին, առա- 19
քեաց առ նա կինն իւր՝ եւ ասէ. չկայ ինչ
քո եւ արդարոյն այնորիկ, զի բազում անցս ան-
‖Մր-կ. ցի ընդ իս այսօր յանուրջս վն նր ։ * ‖ Իսկ 20
15. 11. քահանայապետքն եւ ծերք հաւանեցուցին
Ղուկ. զժողովուրդսն, զի խնդրեսցեն զբարաբ-
23. 18. բայն՝ եւ զյս կորուսցեն ։ * Պատասխանի ետ 21
Յով. դատաւորն՝ եւ ասէ ցնս. զո՞ կամիք զի արձա-
18. 40. Գործ. 3. 14. կեցից ձեզ յերկուց այտի ։ Եւ նք ասեն. զբա-
րաբբայ ։ * Ասէ ցնոսա պիղատոս. իսկ 22
զի՞ արարից զյս զանուանեալն քս ։ * Ասեն 23
ամենեքեան՝ խաչեսցի. Եւ նա ասէ, զի՞նչ
չար արար. Եւ նք առաւել եւս աղաղակէին
եւ ասէին, խաչեսցի ։ * Եւ տեսեալ պիղա- 24
տոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել խռովու-
թիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առա-
ջի ժողովրդեանն՝ եւ ասէ. քաւեալ եմ ես
յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գիտաս-
ջիք ։ * Պատասխանի ետ ամ ժողովուրդն՝ եւ 25
ասէ. արիւն դորա ՚ի վր մեր եւ ՚ի վր որդ-
ւոց մերոց ։ * Յայնժամ արձակեաց նց ըզ- 26
բարաբբայն, եւ զյս գան հարեալ՝ ետ ՚ի ձեռս՝
զի խաչեսցի ։ * Յայնժամ զինուորք դատա- 27
‖Մր-կոս ւորին առին զյս յապարանս. ‖ Եւ ժողովեցին
21. 17. ՚ի վերայ նորա զամ զգունդն. * Մերկացին 28
‖ Յով. զնա, եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր ։
19. 2. * ‖ Եւ բոլորեալ պսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի գլ- 29

լուխ

լուխ նր̃, եւ եղեգն յաջոյ ձեռին նորա. ՚ի
ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին եւ ա-
30 սէին. ողջ եր թագաւոր Հրէից: * Եւ թը-
քեալ ՚ի նա՝ առնուին զեղեգնն եւ ծեծէին
31 զգլուխ նր̃: * Եւ յորժամ ծաղր արարին զնա,
մերկացուցին ՚ի նմանէ զքղամիդն՝ եւ զգեցու-
ցին նմա զիւր հանդերձն, եւ տարան զնա ՚ի
32 խաչ հանել: * || Եւ ելեալ արտաքս՝ գտին || Մր̃կ. 15. 21.
այր մի Կիւրենացի՝ անուն Սիմոն, զնա կա- Ղկ̃ս. 23. 26.
33 լան պահակ՝ զի բարձցէ զխաչն նր̃: * || Եւ || Մր̃կ. 15. 22.
եկեալ ՚ի տեղին անուանեալ Գողգոթա, որ Ղկ̃ս. 23. 33.
34 է տեղի կառափելոյ: * Ետուն նմա ըմպել Յվ̃հ. 19. 17.
զինի ընդ լեղի խառնեալ. եւ իբրեւ ճաշա-
35 կեաց, ոչ կամէր ըմպել: * Եւ հանեալ ըզ-
նա ՚ի խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա
վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի մար-
գարէէն. || Բաժանեցին զհանդերձս իմ յիւ- || Սղ̃մ. 21. 19.
րեանս. եւ ՚ի վր̃ պատմուճանի իմոյ վիճակս
36 արկանէին: * Եւ նստեալ պահէին զնա:
37 * Եւ եդին ՚ի վր̃ գլխոյ նորա՝ գրեալ զվնաս
38 նր̃. Թէ՝ այս է յս̃ թագաւորն Հրէից: * Յայն-
ժամ || հանին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւա- || Մր̃կ. 15. 27.
39 զակս, մի յաջմէ նր̃՝ եւ մի յահեկէ: * Եւ որ Ղկ̃ս. 23. 34.
անցանէինն՝ հայհոյէին զնա, շարժէին ըզ-
գլուխս իւրեանց, * եւ ասէին. || Վա՜հ որ քա- || Յվ̃հ. 2. 19.
40 կէիր զտաճարն, եւ զերիս աւուրս շինէիր ըզ-
նա. ապրեցո զքեզ, թէ որդի ես ա̃յ՝ էջ ՚ի
41 խաչէդ: * Նոյնպէս եւ քահանայապետքն
ծաղր առնէին հանդերձ դպրօքն եւ ծերովք՝ եւ ա-
42 սէին: * Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ
ապրեցուցանել. || եթէ թագաւոր է Իղի՝ || Իմ̃ստ. 2. 18.
իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ եւ հաւատասցուք ըզ-
նա:

Սաղ. նա. * Եթէ յուսացաւ յԱծ, փրկեսցէ այժմ 43
21. 9. զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց՝ եթէ Այ
որդի եմ. * Նոյն և աւազակքն՝ որ խա_ 44
չեալ էին ը̄ նմ̄, նախատէին զնա. * Եւ 'ի 45
վեց ժամէ աւուրն՝ խաւար եղև 'ի վր̄ ամ̄
երկրի մինչև ցինն ժամ. * Եւ զինն ժա_ 46
Սաղ. մաւն գոչեաց յս̄ 'ի ձայն մեծ և ասէ. Էլի՝
21. 2. Էլի՝ լամա սաբաքթանի. այս ինքն է. Ած
Մարկ. իմ Ած իմ՝ ընդէ՞ր թողեր զիս. * Ոմանք 47
15. 34. յայնցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ա_
սէին. զեղիայ կարդայ դա. * Եւ վաղվա_ 48
ղակի ընթացաւ մի ոմն 'ի նոցանէ՝ առ սպունգ
լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել
նմ. * Եւ կէսքն ասէին. թո՛ղ տեսցուք ե_ 49
թէ գա՞յ եղիա փրկել զդա. * Եւ յս̄ դար_ 50
ձեալ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և արձա_
2 Մն. կեաց զոգին. * Եւ ահա վարագոյր տա_ 51
3. 14. ճարին ցելաւ յերկուս՝ 'ի վերուստ մինչև 'ի
վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատա_
ռեցան. * Եւ գերեզմանք բացան, և բզմ 52
մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. * Եւ 53
ելեալ 'ի գերեզմանաց յետ յարութեն նորա,
մտին 'ի քաղաքն սուրբ, և երևեցան բազ_
մաց. * Իսկ հարիւրապետն՝ և որ ընդ նմա 54
պահէին զյս̄, իբրև տեսին զշարժումն և
զեղեալսն, երկեան յոյժ՝ և ասեն. արդա_
րև Այ որդի էր սա. * Էին անդ կանայք 55
բազումք, կային 'ի հեռաստանէ՝ և հայէին,
որք եկին զհետ յսի 'ի գալիլեէ պաշտել զ_
նա. * յորս էր մարիամ մագդաղենացի՝ և 56
մարիամ յակոբայ՝ և յովսեայ մայր, և մայր
որդւոցն զեբեդեայ.

* Եւ

57 * Ա Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մե- Մարկ.
ծատուն յԱրիմաթեայ՝ որում անուն էր Յով- 15. 42.
58 սէփ. որ եւ աշակերտեցաւ իսկ Յիսուսի. * Սա Ղուկ.
մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմար- 23. 50.
մինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց Յովհ.
59 տալ զմարմինն. * Եւ առեալ զմարմինն Յով- 19. 38.
60 սէփ՝ պատեաց սուրբ կտաւով, * եւ եդ
՚ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ՚ի վէմ. եւ
թաւալեցուցեալ կաճառիչ դրան գերեզմա-
61 նին վէմ մի մեծ՝ գնաց. * Անդ էր Մարիամ
Մագդաղենացի՝ եւ միւս Մարիամն, նստէին
62 հանդէպ գերեզմանին. * Եւ ՚ի վաղիւ-
անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան
քահանայապետքն եւ փարիսեցիքն առ Պի-
63 ղատոս, * եւ ասեն. տէր, յիշեցաք զի մոլո-
րեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր.
64 թէ յետ երից աւուրց յառնեմ. * Արդ՝ հրա-
մայեա զգուշանալ գերեզմանին մինչեւ ցե-
րիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գի-
շերի՝ գողանայցեն զնա, եւ ասիցեն ժողո-
վրդեանն, թէ յարեաւ ՚ի մեռելոց. եւ լինի-
ցի յետին մոլորութիւն չար քան զառաջինն.
65 * Ասէ ցնա Պիղատոս. ունիք զզօրականս,
66 երթայք զգուշացարուք որպէս եւ գիտէք. * Եւ
նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, եւ
կնքեցին զվէմն հանդերձ զօրականօք.

## ԳԼ. ԻԸ.

1 Եւ Ա յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսա- Մարկ.
նայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդա- 16. 1.
ղենացի, եւ միւս Մարիամն՝ տեսանել ըզ- Ղուկ.
24. 1.
2 գերեզմանն. * Եւ ահա շարժումն մեծ ե- Յովհ.
ղեւ. 20. 1.

զն. զի հրեշտակ Տ՟ն իջեալ յերկնից՝ մա-
տուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրաց
անտի, և նստէր ՚ի վ՛ր՛ նր. * Եւ էր տեսիլ 3
նր իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպի-
տակ իբրև զձիւն։ * Եւ յահէ անտի նորա 4
խռովեցան պահապանքն, և եղեն իբրև ըզ-
մեռեալս։ * Պատասխանի ետ հրեշտակն՝ և 5
ասէ ցկանայսն. մի երկնչիք դուք, գիտեմ
զի զյս զխաչեալն խնդրէք. * չէ աստ, 6
քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք տե-
սէք զտեղին ուր կայր։ * Եւ վաղվաղակի 7
երթայք ասացէք աշակերտացն նր՝ թէ յա-
|| Վեր. 26. 32. րեաւ. և || ահա յառաջանայ քան զձեզ ՚ի
գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ա-
սացի ձեզ։ * Եւ ելեալ վաղվաղակի ՚ի գե- 8
րեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝
ընթանային պատմել աշակերտացն։ * Եւ 9
ահա պատահեաց նց յս՝ և ասէ. ողջ էք։ և
նք մատուցեալ կալան զոտս նր՝ և երկիր պա-
գին նմա։ * Յայնժամ ասէ ցնս յս. մի եր- 10
կնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի
երթիցեն ՚ի գալիլեա, և անդ տեսցեն զիս։
* Իբրև նոքա գնացին, ահա ոմանք ՚ի զօ- 11
րականացն եկին ՚ի քաղաքն՝ և պատմեցին
քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեն։
* Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն 12
խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն զօ-
րականացն, * և ասեն. ասասջիք՝ եթէ ա- 13
շակերտքն նր եկեալ գիշերի գողացան զնա՝
մինչ մեք ՚ի քուն էաք։ * Եւ եթէ լուր լի- 14
ցի այդ առ դատաւորն, մեք հաւանեցուք
զնա՝ և զձեզ անհոգս արասցուք։ * Եւ նո- 15
ցա

ցա առեալ զարծաթն, արարին ըստ ուսմանն.
եւ ել համբաւս այս ՚ի Հրէից մինչեւ ցայսօր։
16 * Իսկ մետասան աշակերտքն գնացին ՚ի Գա-
լիլեայ ՚ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա
17 Յս։ * Եւ իբրեւ տեսին զնա, երկիր պագին նմա.
18 եւ ոմանք յերկուանային։ * Եւ մատուցեալ
Յս խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ. Տուաւ ինձ
ամ իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս
առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ։
19 * ‖ Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք ‖ Մրկ.
զամ հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն 16. 15.
20 Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն սրբոյ։ * Ու-
սուցէք նմա պահել զամենայն՝ որ ինչ պատու-
իրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ
զամենայն աւուրս, մինչեւ ՚ի կատարած աշ-
խարհի։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ․

Աւետարանն որ ըստ Մարկոսի գրեալ է․ այն
Մարկոս աշակերտ Պետրոսի, և ընթացակից Պօ-
ղոսի գրեաց զաւետարանս զայս․ Եւ դնէ սկիզբն և
առնէ․ Սկիզբն աւետարանին, ՚ի յովհաննու քարոզութենէ․
և զմկրտութիւնն յովհաննու․ և առնու վկայութիւն եսա-
եայ մարգարէէ․ Նշանակէ և զփորձութիւնն ՚ի լերին, և
որ առնէ զփորձիչն․ պատմէ և զԺԲ ընտրութեան աշակեր-
տացն, և նշանս և զարմանալիս ըստ այլոց․ և զխորհրդոց
մարմնաւորութեանն, և զչարչարանսն․ որ և մատնեցաւ պիղա-
տոսի, և խաչեցաւ մարմնով․ և զի զինուորքն բամբասե-
ցին զհանդերձս նորա․ և զի մարմինն եդաւ ՚ի գերեզմա-
նի, և յարեաւ երեքօրեայ․ և զերևել հրեշտակին, և
երևել կանանցն, և զնոյն պատմել աշակերտացն․
Մարկոսն հրամանաւ Պետրոսի Հռովմ գրեաց զաւետարա-
նըս յաղէքսանդր քաղաքի ՚ի լեզու եգիպտացի․ յետ ԺԲ
ամի համբառնալոյ Քրիստոսի․
Մարկոս՝ բարձր պատուոյ, կամ՝ ՚ի վերայ պատնէշի․

---

## ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

*Աւետարանին որ ըստ մարկոսի․*


| | Գլ։ | Եր։ |
|---|---|---|
| Վասն դիւահարին․ | Ա․ | 23. |
| Վասն Պետրոսի զոքանչին․ | Բ․ | 29 |
| Վասն բժշկութեան պէսպէս հիւանդաց․ | Գ․ | 32. |
| Վասն բորոտին․ | Դ․ | 40. |


Վասն

| | | |
|---|---|---|
| Վասն անդամալուծին . | բ. | 3. |
| Վասն ղեւեայ մաքսաւորին . | բ. | 14. |
| Վասն գօսացեալ ձեռանն . | գ. | 1. |
| Վասն առաքելոցն ընտրութեան . | գ. | 13. |
| Վասն սերմանողին առակի . | դ. | 2. |
| Վասն սաստելոյ ծովուն . | դ. | 35. |
| Վասն լեգէոնին . | ե. | 1. |
| Վասն դստեր ժողովրդապետին . | ե. | 21. |
| Վասն [illegible] . | ե. | 25. |
| Վասն համարոյ առաքելոցն . | զ. | 7. |
| Վասն յովհաննու, և հերովդի . | զ. | 14. |
| Վասն հինգ հացիցն՝ և երկուց ձկանցն . | զ. | 35. |
| Վասն ՚ի վերայ ծովուն գնալոյ . | զ. | 47. |
| Վասն անլուանալոյն [illegible] . | է. | 5. |
| Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ . | է. | 24. |
| Վասն համրին և խլին . | է. | 31. |
| Վասն եօթն հացիցն . | ը. | 1. |
| Վասն խմորոյ փարիսեցւոցն . | ը. | 16. |
| Վասն կուրին . | ը. | 22. |
| Վասն հարցանելոյն ՚ի կեսարիա . | ը. | 27. |
| Վասն այլակերպութեան նր . | թ. | 1. |
| Վասն լուսնոտին . | թ. | 16. |
| Վասն խորհելոյն՝ թէ ով իցէ մեծ . | թ. | 32. |
| Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին . | ժ. | 1. |
| Վասն հարցանելոյ մեծատանն զյս . | ժ. | 17. |
| Վասն որդւոցն զեբեդեայ . | ժ. | 35. |
| Վասն բարտիմէոսի . | ժ. | 46. |
| Վասն յաւանակին . | ժա. | 1. |
| Վասն չորանալոյ թզենւոյն . | ժա. | 12. |
| Վասն անյիշաչարութեան . | ժա. | 25. |
| Վասն հարցանելոյ քահանայապետացն զյս . | ժա. | 27. |




Վասն

Վասն [illegible] . [illegible] . 1.
Վասն [illegible] . [illegible] . 13.
Վասն [illegible] . [illegible] . 18.
Վասն [illegible] . [illegible] . 28.
Վասն [illegible] . [illegible] . 35.
Վասն [illegible] . [illegible] . 41.
Վասն [illegible] . [illegible] . 3.
Վասն [illegible] , և [illegible] . [illegible] . 32.
Վասն [illegible] . [illegible] . 3.
Վասն [illegible] . [illegible] . 12.
Վասն [illegible] . [illegible] . 18.
Վասն [illegible] . [illegible] . 66.
Վասն [illegible] . [illegible] . 42.
Վասն [illegible] . [illegible] . 1.



ՍԲ. ՄԱՐԿՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

### ԳԼ. Ա.

1 ՍԿԻԶԲՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ
2 Յ̅ի Ք̅ի որդւոյ Ա̅յ. * Որպէս եւ
գրեալ է ՚ի մարգարէս. ‖ Ահա- ‖ Մաղ.
ւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, 3. 1.
որ հանդերձեսցէ զճանապարհ քո առաջի
3 քո. * ‖ Ձայն բարբառոյ յանապատի, պատ- ‖ Եսայ.
րաստ արարէք զճանապարհ Տ̅ն, եւ ու- 40. 3. Ղուկ.
4 ղիղ արարէք զշաւիղս ն̅ր. * Եւ եղեւ՝ զի 3. 4.
Յովհաննէս մկրտէր յանապատի, եւ քարո-
զէր մկրտութիւն ապաշխարութեան ՚ի թողու-
5 թիւն մեղաց. * ‖ Եւ ելանէին առ նա ա̅մ ‖ Մատ.
աշխարհն Հրէաստանի, եւ Երուսաղեմացիք ամենե- 3. 5.
քեան. եւ մկրտէին ՚ի նմանէ ՚ի Յորդանան
6 գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց. * Եւ
էր Յովհաննէս զգեցեալ ստեւ ուղտու, եւ գօ- ‖ Ղեւտ. 11. 12.
տի մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր ‖ Ղուկ.
7 ն̅ր ‖ մարախ՝ եւ մեղր վայրենի. * Քարոզէր 3. 16. Յովհ.
եւ ասէր. ‖ Գայ զօրաւորագոյն քան զիս զկնի 1. 27.
իմ,

իմ, որում չեմ բաւական խոնարհել լուծա-
‖Գործ. նել զխրացս կօշկաց նորա. * ‖ Ես մկրտեցի 8
1. 5. զձեզ ջրով, եւ նա մկրտեսցէ զձեզ հոգւովն
19. 4. սրբով. * Եւ եղեւ՝ յաւուրսն յայնոսիկ եկն 9
յս 'ի նազարեթէ գալիլեացւոց, եւ մկրտե-
ցաւ 'ի յովհաննէ 'ի յորդանան. * Եւ նոյն- 10
ժամայն ընդ ելանել 'ի ջրոյն, ետես ցելեալ
զերկինս, եւ զհոգին այ իբրեւ զաղաւնի՝ զի
իջանէր 'ի վր նր. * Ձայն եղեւ յերկնից՝ եւ 11
ասէ. դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հա-
‖Մատթ. ճեցայ. * ‖ Եւ նոյնժամայն հոգին հանէ 12
4. 1. զնա յանապատ. * Եւ էր նա անդ զաւուրս 13
Ղուկ. քառասուն փորձեալ 'ի սատանայէ, եւ էր ընդ
4. 1. գազանս. եւ հրեշտակք պաշտէին զնա.
Բ Բ * ‖ Եւ յետ մատնելոյն յովհաննու, եկն յս 14
‖Մատթ. 'ի գալիլեա. քարոզէր զաւետարանն այ՝ եւ
4. 12. ասէր. * Թէ կատարեալ է ժամանակ, եւ հա- 15
Ղուկ. սեալ է արքայութիւն այ. ապաշխարեցէք՝ եւ
4. 14. հաւատացէք յաւետարանն. * ‖ Իբրեւ ան- 16
Յովհ. ցանէր առ ծովեզերբն գալիլեացւոց, ետես
4. 43. զսիմովն եւ զանդրէաս զեղբայր սիմովնի, զի
‖Մատթ. արկեալ էր նոցա ուռկանս 'ի ծով. քանզի
4. 18. ձկնորսք էին. * Եւ ասէ ցնս յս. եկայք զկնի 17
Ղուկ. իմ, եւ արարից զձեզ լինել որսորդս մարդ-
5. 2. կան. * Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն, 18
գնացին զհետ նր. * Եւ մատուցեալ անտի 19
սակաւիկ մի, ետես զյակոբոս զզե-
բեդեայ՝ եւ զյովհաննէս զեղբայր նորա. եւ
զնոսա 'ի նաւին մինչ կազմէին ուռկանս, եւ
կոչեաց զնս. * Եւ վաղվաղակի թողեալ 20
զհայրն իւրեանց զզեբեդեայ 'ի նաւին վարձ-
կանօքն հանդերձ, գնացին զհետ նր.

* Եւ

21 * Եւ մտանեն 'ի Կափառնաում, և իսկ և Ի. Գ.
իսկ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն, ‖ Մատթ.
22 ուսուցանէր զնոսա ։ * ‖ Եւ զարմանային ընդ 7. 28.
վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա Ղուկ.
23 իբրև իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն ։ * ‖ Եւ 4. 31. ‖ Ղուկ.
էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս 4. 33.
պիղծ գոյր 'ի նմա. որ աղաղակեաց՝ և ա-
24 սէ ։ * Թո՛ղ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս
Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք
25 զքեզ՝ ով ես սուրբդ Աստուծոյ ։ * Սաստեաց 'ի նա Յիսուս
26 և ասէ. կարկեաց՝ և ել 'ի դմանէ ։ * Եւ
զարկոյց զնա այսն պիղծ. և աղաղակեաց 'ի
27 ձայն մեծ, և ել 'ի նմանէ ։ * Եւ զարմացան
ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս՝ և ա-
սել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն, զի
իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնա-
28 զանդին նմա ։ * Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն ‖ Մատթ.
29 Գալիլեացւոց ։ * ‖ Եւ վաղվաղակի ելեալ 'ի 8. 14.
ժողովրդենէն, եկին 'ի տուն Սիմոնի և Ան- Ղուկ. 4. 38.
դրեայ՝ Յակոբաւ և Յովհաննու հանդերձ ։
30 * Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, և
31 վաղվաղակի ասեն ցնա վասն նորա ։ * Եւ մա-
տուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա.
32 և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա ։ * Եւ
իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգականն,
բերէին առ նա զամենայն հիւանդս և զդի-
33 ւահարս ։ * և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ
34 դրունսն ։ * Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի
պէսպէս ախտից, ‖ և դևս բազումս եհան. ‖ Ղուկ.
և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա 4. 41.
թէ Քրիստոսն է ։
35 * Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ Ի. Դ.
ել

ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր
յաղօթս. * Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ և 36
որ ընդ նմայն էին. * Եւ իբրև գտին զնա ա- 37
սեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ.
* Եւ ասէ ցնոսա. եկայք երթիցուք և յայլ մօ- 38
տաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզե-
ցից. զի յայս իսկ եկեալ եմ. * Եւ քարոզէր 39
'ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն գալիլեայս, և
‖Մատ. զդևս հանէր. * ‖ Գայ առ նա բորոտ մի, ա- 40
8. 2. ղաչէր՝ 'ի ծունր իջանէր՝ և ասէր. Տէր՝ ե-
Ղուկ. թէ կամիս, կարող ես զիս սրբել. * Իսկ յս 41
5. 12. գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցոյց 'ի նա՝
և ասէ ցնա, կամիմ սրբեաց. * Եւ իբրև 42
ասաց զնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ
բորոտութիւնն՝ և սրբեցաւ. * Եւ սաստեալ 43
նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ա-
սէ. * Զգոյշ լեր՝ մի ումեք ինչ ասիցես. 44
այլ երթ ցոյց զքեզ քահանային. և մատո
‖Ղևտ. վասն սրբութեան քո պատարագ՝ ‖ զոր հրամայ-
14. 2. եաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա. * Եւ նա 45
ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հար-
կանել զբանն, մինչ ոչ ևս կարող լինել նմա
յայտնապէս 'ի քաղաք մտանել, այլ արտա-
քոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա
յամենայն կողմանց.

## ԳԼ. Բ.

Բ. Ա. Եւ ‖ մտեալ դարձեալ 'ի կափառնաում 1
‖Մատ. յետ աւուրց. * լուր եղև եթէ 'ի տան է. 2
9. 1. և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ
‖Ղուկ. լինել՝ և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն.
5. 18. * ‖ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ 3
մի

4 մի բարձեալ 'ի չորից։ * Եւ իբրև ոչ կա-
րէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քա-
կեցին զյարկն՝ ուր էր նա, և բացեալ զա-
ռաստաղն իջուցին զմահիճսն յորում կայր
5 անդամալոյծն։ * Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս
նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ՝ թողեալ
6 լիցին քեզ մեղք քո։ * Եւ էին ոմանք 'ի դպրա-
պաց անտի՝ որ անդ նստէին. և խորհէին 'ի
7 սիրտս իւրեանց. * զի՞նչ է այս՝ որ խօսի սա
զհայհոյութիւնս. ‖ ո՞վ կարէ թողուլ ըզ- ‖ Եսայ.
8 մեղս, եթէ ոչ՝ մի Աստուած։ * Եւ գիտաց Յի- 43. 25.
սուս 'ի հոգի իւր՝ թէ այնպէս խորհին 'ի սիրտս իւ-
րեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս
9 ձեր։ * Ո՞րն դիւրին է, ասել ցանդամա-
լոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ
ասել՝ արի առ զմահիճս քո և երթ 'ի տուն
10 քո։ * Բայց զի գիտասջիք եթէ իշխանութիւն
ունի որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ ըզ-
11 մեղս, ասէ ցանդամալոյծն։ * Քեզ ասեմ,
արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։
12 * Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճ-
սն, ել առաջի ամենեցուն. մինչև զարմա-
նալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զԱծ՝ և
ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։
13 * Եւ ել դարձեալ 'ի ծովեզրն, և ամ ժո- Ի. Զ.
ղովուրդն գայր առ նա. և ուսուցանէր ըզ-
14 նա։ * ‖ Եւ մինչ գնայր անցանէր, ետես ըզ- ‖ Մատ.
Ղեւի Ալփեայ՝ զի նստէր 'ի մաքսաւորութեան. 9. 9.
և ասէ ցնա, եկ զկնի իմ։ և յարուցեալ գը- Ղուկ.
15 նաց զկնի նր։ * Եւ եղև 'ի բազմելն նորա 5. 27.
'ի տան նր, և բզմ մաքսաւորք բազմեալ էին
ընդ Յի՝ և ընդ աշակերտս նր. քանզի էին
բա-

բազումք՝ որ երթային զհետ նորա ։ * Եւ 16
դպիրքն եւ փարիսեցիք իբրեւ տեսին՝ թէ ու-
տէ ընդ մաքսաւորս՝ եւ ընդ մեղաւորս, ասէին
ցաշակերտսն նր. զի՞ է՝ զի ընդ մեղաւորս՝ եւ
ընդ մաքսաւորս ուտէք եւ ըմպէք ։ * Իբրեւ 17
լուաւ Յս՝ ասէ ցնս. ոչ ինչ է պիտոյ բժշկի
ողջոց՝ այլ հիւանդաց, եւ ոչ եկի կոչել զար-
|| Յովհ. դարս՝ || այլ զմեղաւորս ։ * Եւ էին աշակերտ- 18
1. 15. քն Յովհաննու՝ եւ փարիսեցիքն ՚ի պահս,
գան եւ ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յով-
հաննու՝ եւ փարիսեցիքն պահեն, եւ քո աշա-
կերտքդ ոչ պահեն ։ * Եւ ասէ ցնս Յս. մի- 19
թէ մարթ ի՞նչ իցէ որդւոց առագաստի մինչ
ընդ նս իցէ փեսայն՝ պահել. ցորքան ընդ ի-
րեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պա-
|| Մտթ. հել ։ * || Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վե- 20
9. 15. րասցի ՚ի նոցանէ փեսայն, եւ ապա պահես-
Ղուկ.
5. 33. ցեն յաւուրն յայնմիկ ։ * Եւ ոչ ոք կարկատ նոր 21
անթափ արկանէ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. ա-
պա թէ ոչ՝ առնու լրումն իւրովի նորն ՚ի
հնոյ անտի, եւ չար եւս պատառումն լինի ։
* Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս. 22
ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկսն,
գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ գինի
նոր ՚ի տիկս նորս արկանելի է ։

ԻԼ. * || Եւ եղեւ նմա ՚ի շաբաթու անցանել ընդ 23
|| Մտթ. արտորայս. եւ աշակերտքն ՚ի գնալն իւ-
12. 1. րեանց՝ սկսան հասկ կորզել եւ ուտել ։ * Եւ 24
Ղուկ. փարիսեցիքն ասեն ցնա. տես՝ զի՞նչ գործեն
6. 1. աշակերտքդ քո ՚ի շաբաթու՝ զոր չէ արժան ։
|| Թագ. * Եւ ասէ ցնս Յս. || ոչ երբեք իցէ ընթեր- 25
21. 6. ցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պի-
տոյն

տոյն եղեւ՝ եւ քաղցեաւ նա եւ որ ընդ նմայն
26 էին ։ * Զիա՞րդ եմուտ ՚ի տունն այ առ Ա-
բիաթարաւ քահանայապետաւ, եւ զհացսն
առաջաւորութեան եկեր՝ եւ ետ այնոցիկ որ ը̃
նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, ‖ բայց ‖ Ղեւտ. 24. 9.
27 միայն քահանայիցն ։ * Եւ ասէ ցնս. Շա-
բաթ վս մարդոյ եղեւ, եւ ոչ եթէ մարդ վս
28 շաբաթու ։ * Ապա ուրեմն՝ տէր է որդի
մարդոյ՝ եւ շաբաթու ։

## ԳԼ. Գ.

1 Եւ ‖ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն, ‖ Մատ. 12. 9.
եւ էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ Ղուկ. 6. 6.
2 էր ։ * Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա
՚ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ ։
3 * Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր.
4 արի՛ անց ՚ի մէջ ։ * Եւ ասէ ցնոսա. զի՞նչ
արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝
եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանել՞
5 եթէ կորուսանել. եւ նոքա լռեցին ։ * Եւ
հայեցեալ յետ զնոքօք լի ցասմամբ, տրտ-
մեալ վս կուրութեան սրտից նց՝ ասէ ցայրն.
ձգեա՛ զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ ողջացաւ
ձեռն նորա ։
6 * ‖ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսե- Գ. Կ
ցեցն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ ‖ Մատ.
առնէին վս նր՝ թէ զիա՛րդ կորուսցեն զնա ։ 12. 14.
7 * Եւ յս աշակերտօքն իւրովք գնաց ՚ի ծո-
վեզրն. եւ բազում ժողովուրդ ՚ի գալիլեացւոց
8 երթային զհետ նր. եւ ՚ի հրէաստանէ, * եւ
յէրուսղմ, եւ յայնկոյս յորդանանու, եւ որք ՚ի
տիւրոսէ եւ ՚ի սիդոնէ. բազում ժողովուրդ
իբ-

եթէ լսեն՝ որչափ ինչ առնէր, գային առ
նա։ * Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ 9
մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝
զի մի նեղեսցեն զնա։ * Քանզի զբազումս 10
բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մեր-
ձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ։
* Եւ այսք պղծոց յորժամ տեսանէին զնա, 11
անկանէին առաջի նորա, աղաղակէին եւ ա-
սէին. * Թէ դու ես որդին Այ. եւ նա յոյժ 12
սաստէր նոցա, զի մի յայտնի առնիցեն զնա։
Գ. Ի. * ‖ Ելանէ ՚ի լեառն՝ եւ կոչէ առ ինքն զորս 13
‖ Մատթ. ինքն կամեցաւ, եւ չոգան առ նա։ * Եւ ա- 14
10. 1. րար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, եւ զի
Ղուկ. առաքեսցէ զնոսա քարոզել. * եւ ունել իշխա- 15
6. 13. նութիւն բժշկելոյ զցաւս՝ եւ հանելոյ զդեւս։
* Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս. * եւ յա- 16
կոբու Զեբեդեայ՝ եւ յովհաննու եղբօրն յա- 17
կոբայ, եդ նոցա անուանս բանէրգէս, որ
է՝ որդիք որոտման, * եւ զԱնդրէաս, եւ զՓի- 18
լիպպոս, եւ զԲարթուղիմէոս, եւ զՄատ-
թէոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զյակով-
բոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմոն Կա-
նանացի. * եւ զյուդա Իսկարիովտացի, որ 19
Գ. Գ. եւ մատնեացն զնա։
* Գան ՚ի տուն, եւ գայ միւսանգամ ընդ 20
նմա ժողովուրդն. մինչ զի եւ հաց եւս ոչ ժա-
մանել ուտել նոցա։ * Եւ իբրեւ լուան որ 21
իւրքն էին՝ ելին ունել զնա, զի համարէին
թէ մոլեգնեալ իցէ։ * Եւ դպիրքն՝ որ յԵրուսաղեմէ 22
‖ Մատթ. իջեալ էին, ասէին ‖ թէ Բեեղզեբուղ գոյ
9. 34. ՚ի դմա, եւ իշխանաւ դիւացն հանէ զդե-
ւս։ * Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն. առա- 23
կօք

կօք խօսէր ընդ նոսա. զիա՞րդ կարէ սատանայ
24 զսատանայ հանել: * Եւ արդ՝ եթէ թա-
գաւորութիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ
25 կալ թագաւորութիւնն այն: * Եւ եթէ տուն
յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն:
26 * Եւ եթէ սատանայ ՚ի վերայ անձին իւրոյ
յարեաւ և բաժանեցաւ է, ոչ կարէ կալ, այլ
27 վախճանեալ է: * Այլ ոչ ոք կարէ զկարա-
սի հզօրի մտեալ ՚ի տուն նորա՝ աւար հարկա-
նել, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա
28 զտուն նորա աւար հարկանիցէ: * ‖ Ամէն ա- ‖Մատթ.
սեմ ձեզ. զի ամ թողցի որդւոց մարդկան 12. 31.
մեղք և հայհոյութիւնք՝ որչափ և հայհոյի- Ղուկ.
29 ցեն. * բայց որ հայհոյեսցէ զհոգին սբ, ոչ 12. 10.
ունիցի թողութիւն յաւիտեան. այլ պարտա- 1 Յովհ.
30 պան լիցի յաւիտենիցն մեղաց: * Զի ա- 5. 16.
սէին՝ թէ այս պիղծ գոյ ՚ի նմա:
31 * ‖ Գան եղբարքն և մայր նորա, և արտաքոյ Գ. Գ.
32 կացեալ՝ յղեցին և կոչէին զնա: * Եւ անդ ‖Մատթ.
ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբրև 12. 46.
ասացին զնա, ահաւասիկ մայր քո և եղբարք Ղուկ.
33 քո՝ կան արտաքոյ, և խնդրեն զքեզ: * Պա- 8. 19.
տասխանի ետ նոցա և ասէ. ո՞վ է իմ մայր,
34 կամ եղբարք: * Հայեցաւ շուրջ զիւրև յա-
շակերտսն զի նստէին, և ասէ. ահաւասիկ
35 մայր իմ, և եղբարք իմ: * Զի որ առնիցէ
զկամս այ, նա է իմ եղբայր և քոյր և մայր:

## ԳԼ. Դ.

1 Դարձեալ ‖ սկսաւ ուսուցանել առ ծո- Դ. Ե.
վեզերբն. և խռնեցան զնովաւ ժողովուրդք ‖Մատթ.
բազումք, մինչև ՚ի նաւ մտանել նմա, 13. 1.
և

Ղուկ. · եւ նստել ի ծովուն. եւ ամենայն ժողովուրդն ընդ
5. 4. ծովեզերբն ցցամաքն կային։ * Եւ ուսու- 2
ցանէր զնոսա առակօք բազում բանս. եւ ասէր նոցա ի
վարդապետութեան իւրում։ * Լուարուք. ահա 3
ել սերմանող սերմանել։ * Եւ եղեւ ի սեր- 4
մանելն, այն անկաւ առ ճանապարհաւ, եւ
եկին թռչունք եւ կերան զնա։ * Եւ այլն ան- 5
կաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. եւ
վաղվաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ
երկրին. * Եւ յորժամ ծագեաց արեւ՝ ջե- 6
ռաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ։
* Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն 7
եւ հեղձուցին զնա. եւ պտուղ ոչ ետ։ * Եւ 8
այլն անկաւ յերկիր բարւոք. եւ ելեալ աճե-
ցեալ տայր պտուղ, եւ բերէր ընդ միոյ երե-
սուն՝ եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ միոյ հա-
րիւր։ * Եւ ասէր. որ ունիցի ականջս լսե- 9
լոյ՝ լուիցէ։
Գ. Զ. * Եւ իբրեւ եղեւ առանձինն՝ հարցին զնա, 10
որ զնովաւն էին աշակերտօքն հանդերձ զա-
ռակսն։ * Եւ ասէ ցնոսա. ձեզ տուեալ է գի- 11
տել զխորհուրդս արքայութեան այ, բայց նոցա
որ արտաքինքն են՝ ամենայն բանք առակօք լինին։
Եսայ. * Զի տեսանելով տեսցեն՝ եւ մի տեսցեն, 12
6. 9. Մատթ. եւ լսելով լուիցեն՝ եւ մի իմասցին. զի մի եր-
13. 14. բեք դարձցին՝ եւ թողցի նոցա։ * Եւ ասէ 13
Յովհ. ցնոսա. ոչ գիտէք զառակս զայս, եւ զիարդ
12. 40. Գործ. զամենայն առակսն գիտիցէք։ * Որ սերմանէն՝ 14
28. 26. զբանն սերմանէ։ * Եւ նոքա են որ առ ճա- 15
նապարհաւն, ուր բանն սերմանի. եւ յոր-
ժամ լսեն զնա, գայ սատանայ՝ եւ հանէ ըզ-
բանն սերմանեալ ի սիրտս նոցա։ * Եւ նոքա 16
են

են որ յապառաժին սերմանեցան. որք յոր-
ժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ
17 ընդունին. * Եւ զի ոչ ունին արմատս յան-
ձինս, այլ առ ժամանակ մի են. ապա 'ի
հասանել նեղութեան կամ հալածման վասն բա-
18 նին, վաղվաղակի գայթագղին. * Իսկ որ 'ի
մէջ փշոցն սերմանեցան՝ նոքա են, որ լսեն
19 զբանն լսեն, * ‖ Եւ հոգք աշխարհիս եւ պատ- ‖1. Տիմ.
րանք մեծութեան մտանեն եւ հեղձուցանեն 6. 17.
20 զբանն՝ եւ անպտուղ լինի. * Իսկ նոքա են որ
յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն
զբանն՝ եւ ընդունին, եւ տան պտուղ՝ ընդ
միոյ երեսուն՝ եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ
միոյ հարիւր.

Գ. Ե

21 * Եւ ասէ ցնոսա. ‖ միթէ գա՞յ ճրագ, զի ընդ
գրուանաւ դնիցի կամ ընդ մահճօք. ո՞չ ապա- ‖Մատ.
22 քէն 'ի վերայ աշտանակի դնիցի. * ‖ Ոչ ինչ է 5. 15.
ինչ 'ի ծածուկ՝ որ թէ ոչ յայտնեսցի. Եւ ոչ Ղուկ.
եղեւ ինչ գաղտնի, եթէ ոչ 'ի յայտ գայցէ. 8. 16.
23 * Եթէ որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ. ‖Մատ. 10. 26.
24 * Եւ ասէ ցնոսա. տեսէք զինչ լսէք, եւ յա- Ղուկ.
ւելցի ձեզ որոց լսէքդ. Որով չափով չափէք՝ 8. 17.
25 նովին չափեսցի ձեզ. * ‖ Որ ոք ունիցի՝ տա- ‖Մատ.
ցի նմա. եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ 13. 12.
բարձցի 'ի նմանէ.

Գ. Կ

26 * Եւ ասէր. այսպէս է արքայութիւն այ. որպ
27 զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, * եւ
ննջիցէ եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ, եւ սեր-
մանիքն բուսանիցեն եւ աճիցեն. եւ նա ոչ
28 գիտէ՝ * թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ.
նախ զխոտն՝ եւ ապա զհասկն, ապա զցոր-
29 եանն ատոք 'ի հասկին. * Եւ յորժամ
տայ-

տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ ման-
գաղ. զի հասեալ են հունձք: * Եւ ասէր. 30
Ո՞ւմ նմանեցուցուք զարքայութիւն այ, կամ
‖Մտթ. 13. 31. որո՞վ առակաւ առակեսցուք զնա: * ‖Որ- 31
Ղուկ. 13. 19. պէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմա-
նիցի յերկրի, փոքրագոյն է քան զամ սեր-
մանիս՝ որ են յերկրի. * Եւ յորժամ սերմա- 32
նիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամ բան-
ջար, եւ արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ
բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց
երկնից բնակել. * Եւ այնպիսի առակօք 33
խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին
լսել. * Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ 34
նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց
մեկնէր զամենայն:

ԳԸ

* Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝ իբրեւ ընդ 35
երեկս լինէր. Եկայք անցցուք յայն կողմն:
‖Մտթ. 8. 23. * ‖Թողուն զժողովուրդն, եւ առնուն զնա 36
Ղուկ. 8. 12. նաւաւն հանդերձ, եւ զայլ եւս նաւսն որ էին
ընդ նմա. * Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, եւ 37
զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի խաղ
լինել: * Եւ ինքն նստէր 'ի խելս նաւին 'ի 38
վ՛ր բարձի. զարթուցանէին զնա եւ ասէին.
վարդապետ՝ ոչինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք
աստի: * Եւ զարթուցեալ սաստեաց հող- 39
մոյն եւ ծովուն, ասէ. դադարեա կարկեաց,
եւ դադարեաց հողմն, եւ եղեւ խաղաղութիւն
մեծ: * Եւ ասէ ցնս. ընդէ՞ր այդպէս վա- 40
տասիրտք էք, չեւ եւս ունիք հաւատս: Եւ եր-
կեան երկիւղ մեծ, եւ ասէին ցմիմեանս. ո՞
ոք արդեօք իցէ սա, զի եւ հողմ եւ ծով հնա-
զանդին սմա:

ԳԼ.

## ԳԼ. Ե.

1 Եւ եկն ‖ յայնկոյս ծովուն յաշխարհն Գերա- ‖Մատթ.
2 գեսացւոց ։ * Եւ ըն ելանելն նորա 'ի նաւէ 8. 28.
անտի, պատահեաց նմա այր մի 'ի գերեզմա- Ղուկ.
3 նացն՝ զոր ունէր այս պիղծ ։ * որոյ և բնա- 8. 26.
կութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր ։ և ոչ
4 շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա ։ * վն
բզմ անգամ ոտնակապօք և շղթայիւք կա-
պեալ, և խզեալ 'ի նմանէ զշղթայսն, և
զոտնակապսն խորտակեալ ։ և ոչ ոք կարէր
5 պարտել զնա ։ * քանզի հանապազ զցայգ և
զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղա-
6 կէր, և կոծէր զանձն իւր քարամբք ։ * Իբ-
րև ետես զյս 'ի հեռաստանէ, ընթացաւ և
7 երկիր եպագ նմա ։ * Աղաղակեաց 'ի ձայն
մեծ՝ և ասէ, զի՞ կայ իմ և քո՝ յս որդի այ
բարձրելոյ ։ երդմնեցուցանեմ զքեզ յած,
8 մի տանջեր զիս ։ * Քանզի ասէր ցնա ։ ել
9 այսդ պիղծ 'ի մարդոյ այտի ։ * Եւ հարցա-
նէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո ։ և ասէ ցնա ։
լեգէովն անուն է իմ, քանզի բազումք եմք ։
10 * Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի տարաքսե-
11 ցէ զնս արտաքս քան զաշխարհն ։ * Եւ անդ
էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտա-
12 կան մեծ ։ * Աղաչեցին զնա ամ դեւքն և ա-
սեն, արձակեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք
13 'ի նս ։ * Եւ հրամայեաց նց ։ և իբրև ելին
այսքն պիղծքն՝ մտին 'ի խոզսն, և դիմեաց ե-
րամակն 'ի դարէ անտի 'ի ծովն ։ էին իբրև
երկու հազարք, և հեղձնուին 'ի ծովուն ։
14 * Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին


'ի

ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել
զինչ էր՝ որ գործեցաւ։ * Գան առ Յս, 15
և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ
և զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն, և
զարհուրեցան։ * Եւ պատմեցին նոցա՝ որոց 16
տեսեալ էր, թէ զինչ եղև դիւահարին, և
զինչ վասն խոզիցն։ * Եւ սկսան աղաչել զնա 17
գնալ ի սահմանաց նոցա։ * Եւ մինչդեռ ելանէր 18
նա ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ
նմա իցէ. * և Յս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ 19
ցնա. Երթ ի տուն քո առ ընտանիս քո, և
պատմեա նոցա, որ ինչ միանգամ Տր արար
քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ * Եւ չոգաւ՝ և սկը- 20
սաւ քարոզել ի Դեկապօլին, զոր ինչ արար
նմա Յս, և ամենեքին զարմանային։

Գ. Գ. * Եւ մինչև անց Յս միւսանգամ յայնկոյս՝ 21
ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր
Մատթ. առ ծովեզերբն։ * Եւ գայ մի ի ժողո- 22
Թ. 18. վրդապետացն գայր, որում անուն էր Յայ-
Ղուկ. րոս. և իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս
Ը. 41. նորա. * աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ 23
դուստր իմ մերձ է ի մահ, զի եկեալ դնի-
ցես նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ։
* Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ 24
բազում զհետ նորա, և նեղէին զնա։ * Եւ կին 25
մի էր ի տեռատեսութեան արեան զերկոտա-
սան ամ. * և յոյժ վշտացեալ ի բազում 26
բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամ՝ և չէր
ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։
* Իբրև լուաւ զՅսէ՝ եկն ի մէջ ամբոխին 27
յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա.
* քանզի խորհէր ի միտս, թէ միայն մերձե- 28
ցայց

29 ցայց 'ի հանդերձս նորա, փրկեցայց։ * Եւ
վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան
նր̃. եւ գիտաց 'ի մարմնին իւր թէ բժշկեցաւ
30 'ի տանջանացն։ * Եւ անդէն վաղվաղակի
գիտաց Յս̃ յանձն իւր զզօրութիւնն որ ել 'ի նմա-
նէ, դարձաւ յամբոխն եւ ասէ. Ո՞վ մերձե-
31 ցաւ 'ի հանդերձս իմ։ * Եւ ասեն ցնա ա-
շակերտքն. Տեսանե՞ս՝ զի ամբոխդ նեղէ ըզ-
քեզ, եւ ասես՝ թէ ո՞վ մերձեցաւ 'ի հան-
32 դերձս իմ։ * Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ
33 ո՞վ զայն արար։ * Եւ կինն զարհուրեալ եւ
դողացեալ վա՛ս որոյ գաղտն արար. քանզի
գիտէր զինչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի
34 նր̃, եւ ասաց զա՛մ իրսն ստուգութեամբ։ * Եւ
Յս̃ ասէ ցնա. Դուստր՝ հաւատք քո կեցու- || Ղուկ.
ցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն, եւ եղիջիր 7. 50.
ողջ 'ի տանջանաց քոց։ 8. 48.
35 * Մինչ դեռ նա զայն խօսէր, գան ոմանք ԻԳ
'ի տանէ ժողովրդապետին, եւ ասեն՝ թէ
դուստրն քո մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես
36 զվարդապետդ։ * Իսկ Յս̃ իբրեւ լուաւ ըզ-
բանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. Մի՛
37 երկնչիր, բայց միայն հաւատա՛։ * Եւ ոչ
զո՛ք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետ-
րոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս զեղբայրն
38 Յակոբայ։ * Գայ 'ի տուն ժողովրդապե-
տին, եւ տեսանէ ամբոխ յոյժ եւ լալականս,
39 եւ աղաղակ յոյժ։ * Եւ մտեալ 'ի ներքս՝
ասէ ցնս̃. Զի՞ խռովեալ էք եւ լայք, մանուկն
40 ոչ է մեռեալ, այլ ննջէ։ * Եւ ծաղր առ-
նէին զնա. եւ նա հանեալ արտաքս զամենե-
սեան, առնու ընդ իւր զհայր մանկանն եւ ըզ-
մայր,

մայր, և զնոսա որ ընդ նմայն էին, և մտանէ
ուր դնէր մանուկն ։ * Եւ կալեալ զձեռա- 41
նէ մանկանն, ասէ ցնա. տալիթա կումի, որ
թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ՝ արի։
* Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գը- 42
նայր, քանզի էր ամաց երկոտասանից.
և զարմացան մեծաւ զարմանալեօք ։ * Եւ 43
պատուէր տայր նոցա յոյժ, զի մի ոք գիտասցէ
զայն. և ասաց տալ նմա ուտել ։

## ԳԼ. Զ.

Գ. Ա. Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր. և եր- 1
Մտթ. թային զհետ նորա աշակերտքն իւր ։ * Եւ 2
13. 54. եղև 'ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել 'ի ժո-
Ղուկ. ղովրդեանն. և բազումք իբրև լսէին՝ զարմա-
4. 16. նային ընդ վարդապետութիւն նորա, և ասէին.
ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւն
որ տուեալ է սմա. զի զօրութիւնք այսպիսիք
Յովհ. 'ի ձեռաց սորա լինին ։ * Ո՞չ սա է մանուկ 3
6. 42. հիւսանն, և որդին Մարեմայ, եղբայր Յա-
կոբայ և Յովսեայ և Յուդայի և Սիմոնի, և
ոչ են քորք դորա աստ առ մեզ. և գայ-
Մտթ. թագղէին 'ի նա ։ * Եւ ասէ ցնոսա. Ոչ է 4
13. 57. մարգարէ անարգ, բայց եթէ 'ի գաւառի
Ղուկ. իւրում և յազգատոհմի և 'ի տան իւրում ։
4. 24. Յովհ. * Եւ ոչ կարէր անդ և ոչ մի ինչ զօրութիւն առ- 5
4. 44. նել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ՝
բժշկէր զնոսա ։ * Եւ զարմանայր վասն անհա- 6
Գ. Բ. ւատութեան նոցա ։
Մտթ. Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, և ուսուցա-
10. 1. նէր ։ * Եւ կոչեաց առ ինքն զերկոտասան- 7
Ղուկ. սն, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս.
9. 1.

և

և տայր նոցա իշխանութիւն ՚ի վերայ այսոց պղծոց։
8 * Եւ պատուիրեաց նոցա զի մի ինչ բարձցեն
՚ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի
9 պարկ, մի հաց, մի պղինձ ՚ի գօտիս։ * || այլ || Գործ. 12. 8.
ագանել հողաթափս, և մի զգենուցուք՝ ա-
10 սէ երկուս պարեգօտս։ * Եւ ասէր ցնոսա.
յոր տուն մտանիցէք, անդէն օթևանս կալ-
11 ջիք՝ մինչև ելանիցէք անտի։ * Եւ որ ոչ
ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ, || յոր- || Մատթ. 10. 14.
ժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփո- Ղուկ. 9. 5.
12 շի ոտից ձերոց ՚ի վկայութիւն նոցա։ * Եւ ե-
13 լեալ քարոզէին զի ապաշխարեսցեն։ * Եւ
դևս բազումս հանէին. || և օծանէին իւղով || Յակոբ. 5. 14
զբազում հիւանդս՝ և բժշկէին զնոսա։

Գ. Ե.

14 * || Եւ լուաւ արքայ Հերովդէս. քանզի յայտ-
նի եղև անուն նորա. և ասէր, թէ յովհան- || Մատթ. 14. 1.
նէս մկրտիչ յարեաւ ՚ի մեռելոց, և վասն այ- Ղուկ. 9. 7.
15 նորիկ զօրութիւնք լինին նովաւ։ * Այլք ասէին
թէ Եղիա է, իսկ այլքն՝ թէ մարգարէ է.
16 կամ թէ իբրև զմի ՚ի մարգարէից։ * Իբրև
լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես զգլուխն
հատի զյովհաննու, սա է նա, յարեաւ ՚ի
17 մեռելոց։ * Զի || ինքն Հերովդէս առաքեաց || Ղուկ. 3. 19.
կալաւ զյովհաննէս, և կապեաց զնա և եդ
՚ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպ-
պոսի եղբօր նորա, զի նա կին արար զնա։
18 * Քանզի ասէր յովհաննէս ցՀերովդէս՝
|| թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո։ || Ղևտ.
19 * Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա, և կա- 18. 16.
20 մէր սպանանել զնա, և ոչ կարէր։ * Զի
Հերովդէս երկնչէր ՚ի յովհաննէ. քանզի գի-
տէր զնա այր արդար և սուրբ. և պահէր զնա,
և

և լուեալ 'ի նմանէ՝ բազում ինչ առնէր, և
քաղցրութեամբ լսէր նմա ։ * Եղեւ օր մի լինէր 21
պարապոյ, յորժամ ընթրիս առնէր Հերովդէս
յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց
և հազարապետաց և մեծամեծաց գալիլեաց-
ւոց ։ * և 'ի մտանել դստերն Հերովդիայ՝ 22
և 'ի կաքաւել, հաճոյ եղեւ Հերովդի և բազ-
մականացն ։ * Ասէ թագաւորն ցաղջիկն ։
խնդրեա յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ ։
* Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր 23
ինչ և խնդրեսցես դու յինէն, տաց քեզ,
մինչև ցկէս թագաւորութեան իմոյ ։ * Նա ե- 24
լեալ ասէ ցմայր իւր ։ զի՞նչ խնդրեցից ։ և
նա ասէ, զգլուխն յովհաննու մկրտչի ։ * Եւ 25
մտեալ անդրէն փութանակի առ թագա-
ւորն՝ ասէ ։ կամիմ զի այժմ տացես ինձ վաղ-
վաղակի 'ի վ՛ր սկտեղ զգլուխն յովհաննու
մկրտչի ։ * Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն ։ 26
այլ վ՛ն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կա-
մեցաւ անարգել զնա ։ * և առաքեաց վաղ- 27
վաղակի թագաւորն դահճի, և հրամայեաց
բերել զգլուխն նորա ։ և չոգաւ գլխատեաց
զնա 'ի բանտին ։ * և եբեր զգլուխն նորա 28
սկտեղբ՝ և ետ ցաղջիկն ։ և աղջիկն տա-
րաւ ետ մօր իւրում ։ * Եւ լուեալ աշա- 29
կերտացն նր՛, եկին բարձին զմարմինն՝ և ե-
դին 'ի գերեզմանի ։

Ի Կ * Ժողովեցան առաքեալքն առ յս, և պատ- 30
Մ—ՃԴ · մեցին նմա զամ՛ ինչ զոր արարին և զոր ու-
14 · 13 · սուցին ։ * Եւ ասէ ցնս յս ։ եկայք դուք ա- 31
Ղ—Կ · ռանձինն յանապատ տեղի, և հանգիջիք
9 · 10 · սակաւ մի ։ զի էին բազումք որ երթային և
Յ—Ե ·
6 · 1 · գային,

գային, և հաց անգամ չժամանէին ուտել։
32 * Եւ գնացին նաւու յանապատ տեղի ա-
33 ռանձինն։ * Եւ տեսին զնա զի երթային,
և գիտացին բազումք․ և հետի յամենայն քաղաքաց
խուռն ընթանային անդր, և մերձենային
34 առ նա։ * Եւ ելեալ ետես ամբոխ բազում, Մատթ.
և գթացաւ ՚ի նոսա, զի էին իբրև ոչխարք՝ 9. 36.
որոց ոչ իցէ հովիւ․ և սկսաւ ուսուցանել
35 զնոսա յոյժ։ * Եւ իբրև բազում ժամ եղև,
մատուցեալ աշակերտքն ասէին․ տեղիս ա-
36 նապատ է, մինչ դեռ աւուր կայ, * արձա-
կեա՛ զժողովուրդդ, զի երթեալ շուրջ յա- Ղուկ.
գարակս և ՚ի գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ 9. 12.
37 ուտիցեն, զի աստ ուտել ինչ ոչ ունին։ * Եւ նա
պատասխանի ետ և ասէ ցնոսա․ դուք տուք
դոցա ուտել․ ասեն ցնա՝ երթիցուք գնես-
ցուք երկերիւր դահեկանի հաց, և տացուք
38 դոցա ուտել։ * Եւ ասէ ցնոսա․ քանի՞ նկանակ
ունիք՝ երթայք տեսէք, իբրև գիտացին,
39 ասեն ցնա՝ հինգ՝ և երկուս ձկունս։ * Եւ Յովհ.
հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս 6. 10.
40 ՚ի վերայ դալար խոտոյ։ * Եւ բազմեցան դասք
41 դասք՝ առ հարիւր և առ յիսուն։ * Եւ ա-
ռեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն,
հայեցաւ յերկինս, օրհնեաց՝ մանրեաց զն-
կանակն՝ և ետ աշակերտացն զի արկցեն նոցա,
և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն։
42 * Եւ կերան և յագեցան, * և բարձին զնշ-
43 խարսն երկոտասան սակառի լի, և ՚ի ձկանց
44 անտի։ * Եւ էին որ կերանն՝ իբրև արք
հինգ հազար։
45 * Եւ նոյն ժամայն ստիպեաց զաշակերտսն ԿԲ

մտա-

մտանել 'ի նաւ, և յառաջագոյն քան զնա
երթալ յայնկոյս 'ի Բեթսայիդա, մինչ ինքն
զժողովուրդսն արձակիցէ։ * Եւ հրաժա- 46
րեալ 'ի նոցանէ՝ ել 'ի լեառն կալ յաղօթս։
* Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն 'ի մէջ ծո- 47
Մատթ. վուն, և ինքն 'ի ցամաքի։ * || Եւ տեսանէր զ- 48
14. 25. նոսա հողմակոծեալս 'ի վարելն, զի էր հողմն
ընդդէմ նոցա. և զչորրորդ պահու գիշերոյն
գայ առ նոսա գնալով 'ի վերայ ծովուն. և կամէր
զանց առնել առ նոքօք։ * Նոքա իբրև տե- 49
սին զի գնայր 'ի վերայ ծովուն, համարեցան
թէ առաչօք ինչ լինիցի, և զաղաղակ բար-
ձին։ * Քանզի ամենեքեան տեսին զնա՝ և 50
խռովեցան. և նա անդէն վաղվաղակի խօ-
սեցաւ ընդ նոսա և ասէ. քաջալերեցարուք,
ես եմ՝ մի երկնչիք։ * Եւ ել 'ի նաւն առ 51
նոսա, և դադարեաց հողմն։ Եւ առաւել
ևս յիմարեալ էին 'ի միտս իւրեանց, և զար-
մանային յոյժ։ * քանզի և 'ի վերայ հացին ոչ 52
իմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ։ * Եւ 53
Մատթ. || իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն գե-
14. 34. նեսարեթ։ * Եւ իբրև ելին 'ի նաւէն՝ անդէն 54
իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնո-
րիկ. * և ընթացեալ ընդ ամենայն գա- 55
ւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս,
ուր լսէին՝ թէ անդ իցէ։ * Եւ ուր և մտա- 56
նէր 'ի գեօղս կամ 'ի քաղաքս կամ յագարակս,
'ի հրապարակս դնէին զախտաժէտս, և ա-
ղաչէին զնա՝ զի գոնէ 'ի քղանցս հանդերձից
նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձե-
ցան՝ փրկեցան։

## ԳԼ. Է.

1 Եւ ‖ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ և ո Ի Գ.
մանք ՚ի դպրացն՝ որ եկեալ էին յԵրուսա- ‖Մատ.
2 ղեմէ։ * Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն 15. 2.
նորա, զի խառնակ ձեռօք, այսինքն է՝
3 անլուայ ուտէին հաց, բամբասեցին։ * Զի
փարիսեցիքն և ամ հրէայք՝ եթէ ոչ բռնց-
լիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի
4 ունին զաւանդութիւն ծերոցն. * և ՚ի հրա-
պարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին,
ոչ ուտեն. և այլ ինչ բազում է՝ զոր ընկա-
լան ունել, մկրտութիւնս բաժակաց և ստա-
5 մանաց և պղնձեաց և մահճաց։ * Ապա
հարցանէին զնա փարիսեցիքն և դպիրք՝ թէ
ընդէր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութե
ծերոցն. այլ խառնակ ձեռօք հաց ուտեն։
6 * Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա՝ թէ
բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղ-
ծաւորաց, որպէս ասաց. ‖ Ժողովուրդս այս ‖Եսայ.
շրթամբք մեծարէ զիս, և սիրտ նոցա հեռա- 29. 13.
7 ցեալ ՚ի բացեայ է յինէն։ * Զուր պաշ-
տեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս
8 զմարդկան պատուիրանս։ * Թողեալ զպա-
տուիրանն այ, ունիք զմարդկան աւան-
դութիւն. մկրտութիւնս ստամանաց և բաժա-
կաց, և այլոց նմանեաց սոցին առնէք բա-
9 զումս։ * Եւ ասէ ցնս. բարւոք խոտէք զպա-
տուիրանն այ, զի զձեր աւանդութիւնն հաս-
10 տատիցէք։ * Զի Մովսէս ասէ. ‖ պատուեա ‖Ելից.
զհայր քո, և զմայր, ‖ և որ չարախօսեսցէ 20. 12.
զհօրէ, կամ զմօրէ, մահու վախճանեսցի։ ‖Ելից. 21. 17.
* Եւ

Ղևտ. * Այլ դուք ասէք. եթէ ասիցէ ոք ցհայր կամ 11
20. 9. Ելից. ցմայր՝ կորբան, որ է պատարագ, զոր յինէն
20. 20. օգտեսցիս. * Եւ ոչ ևս տայք թոյլ նմա առնել 12
ինչ հօրն, կամ մօր. * Այլ անարգէք զբանն 13
այ ձերով աւանդութեամբն, զոր աւանդեցիք.
և բազում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք.
Մատթ. * Եւ կոչեալ առ ինքն զամ ժողովուրդն, 14
15. 10. ասէ ցնա. լուարուք ինձ ամենեքեան՝ և ի
միտ առէք. * Ոչինչ արտաքուստ ի մարդ 15
մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ե-
լանէ ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն.
* Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ. 16
ՆԴ * Եւ իբրև եմուտ ի տուն յամբոխէ անտի, 17
հարցանէին զնա աշակերտքն վն առակին.
* Եւ ասէ ցնոսա. այդպէս և դուք անմիտ 18
էք, ոչ իմանայք՝ եթէ ամ որ արտաքուստ ի
ներքս մտանէ ի մարդ, ոչ կարէ զնա պղ-
ծել. * զի ոչ եթէ ի սիրտ նր մտանէ, այլ 19
յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ զամ
կերակուրս. * Եւ ասէր, թէ որ ինչ ի 20
Ծննդ. մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. * Զի 21
6. 5. 8. 21. ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք
Մատթ. չարութե ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք,
15. 19. * գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, 22
չարութիւնք, նենգութիւնք, գիջութիւնք, չա-
րակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանու-
թիւն, անզգամութիւն. * Այս ամ չարիք ի ներ- 23
քուստ ելանեն, և պղծեն զմարդ.
ՆԵ * Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս 24
Մատթ. Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ ի տուն՝ ոչ
16. 21. ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծած-
կել. * Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր 25
իւր

իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ
26 առաջի նր. * Եւ կինն էր հեթանոս՝ փիւ-
նիկ ասորի յազգէ. եւ աղաչէր զնա՝ զի զդեւն
27 հանցէ 'ի դստերէ նր. * Եւ յս ասէ ցնա.
Թող տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի
չէ բարւոք առնուլ զհաց մանկանց եւ ար-
28 կանել շանց. * Նա պատասխանի ետ եւ ա-
սէ. այո՝ եւ շունք 'ի փշրանաց սեղանոյ մանու-
29 կանցն կերակրին. * Եւ ասէ ցնա. վն այդր
բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ։
30 * Գնաց 'ի տուն իւր, եւ եգիտ ելեալ ըզ-
դեւն. եւ զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մա-
31 հիճս. * Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմա-
նացն տիւրոսի եւ սիդոնի, եկն 'ի ծովեզ-
րն գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի դե-
32 կապոլիս. ‖ * Եւ բերին առաջի նր խուլ մի ‖ Մտթ.
եւ համր. եւ աղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վե- 9. 32.
33 րայ նր. * Եւ առեալ զնա մեկուսի յամբո-
խէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս
նր՝ եւ եթուք անդր. եւ կալաւ զլեզուէ նր.
34 * Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ եւ ասէ.
35 եփփաթայ՝ որ է բացիր. * Եւ նոյնժամայն
բացան լսելիք նր, եւ լուծան կապանք լեզ-
36 ուի նորա. եւ խօսէր ուղիղ. * Եւ պատուի-
րեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն. եւ որչափ
նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել
37 քարոզէին. * Եւ եւս քան զեւս զարմանային
եւ ասէին. ‖ զամենայն ինչ բարւոք գործեաց ‖ Ծննդ.
սա, զի խլից լսել տայ՝ եւ համրոց խօսել։ 1. 31.

## ԳԼ. Ը.

Ի. Օ. Յաւուրսն ‖ յայնոսիկ դարձեալ ժողովուրդ 1
Մտթ. բազում էր. եւ ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց
15. 32. զաշակերտսն իւր՝ եւ ասէ ցնոսա։ * Գթամ 2
ես 'ի վերայ ժողովրդեանդ. զի արդ երեք
աւուրք են՝ մինչ առ իս են, եւ ոչ ունին զինչ
ուտիցեն։ * Եւ եթէ արձակեմ զդոսա նօ- 3
թիս 'ի տունս իւրեանց՝ նքթիցին 'ի ճանա-
պարհի. զի ոմանք 'ի դոցանէ 'ի հեռաստա-
նէ եկեալ են։ * Պատասխանի ետուն նմա 4
աշակերտքն նր. ուստի՞ կարէ ոք յագեցուցա-
նել զդոսա հացիւ յանապատի աստ։ * Եւ 5
հարցանէր զնս. քանի՞ նկանակ հաց ունիք։
Եւ նք ասեն՝ եօթն։ * Եւ հրամայեաց ժո- 6
ղովրդեանն բազմել 'ի վր երկրի. եւ առեալ
զեօթն նկանակսն՝ գոհացաւ՝ եբեկ, եւ տայր
ցաշակերտսն զի արկցեն. եւ արկին առաջի
ժողովրդեանն։ * Եւ ձկունս սակաւ ու- 7
նէին. եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց
արկանել։ * Կերան եւ յագեցան, եւ բարձին 8
զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ։ * Եւ 9
էին որ կերանն՝ իբրեւ չորք հազարք. եւ ար-
ձակեաց զնոսա։

Ի. Լ. * Եւ նոյն ժամայն մտեալ 'ի նաւ հանդերձ 10
աշակերտօքն՝ եկն 'ի կողմանս Դաղմանու-
Մտթ. նեայ։ * ‖ Ելին փարիսեցիքն՝ եւ սկսան վի- 11
16. 1. ճել ընդ նմ, եւ խնդրէին 'ի նմանէ նշան յերկ-
Ղուկ. 12. 54. նից՝ փորձելով զնա։ * Եւ հառաչեաց յոգի 12
իւր՝ եւ ասէ. զի՞ է՝ զի ազգս այս նշան խնդ-
րէ. ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազ-
գիս այսմիկ։ * Եթող զնա. դարձեալ ե- 13
մուտ

14 եմուտ 'ի նաւ՝ և գնաց յայնկոյս: * ‖Եւ մո- ‖Մատթ.
ռացան հաց բառնալ. բայց միայն մի նկա- 16. 5.
15 նակ ունէին ընդ իւրեանս 'ի նաւին: * Եւ
պատուիրէր նոցա և ասէր. զգո՛յշ լերուք 'ի
խմորոյ անտի փարիսեցւոց՝ և 'ի խմորոյ Հե-
16 րովդիանոսաց: * Եւ խորհէին ընդ միմեանս
17 և ասէին, թէ զի հացս ոչ ունիմք: * Գիտա-
ցեալ յս՛ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք 'ի միտս
ձեր թերահաւատք՝ թէ հաց ոչ ունիք. տա-
կաւին ո՞չ իմանայք և ո՞չ յիշէք. ապշութի
18 ունի զսիրտս ձեր. * աչք զձեզ՝ և ոչ տեսա-
նէք, ականջք են՝ և ոչ լսէք, և ոչ իմանայք
19 տակաւին, ‖ և ոչ յիշէք: * Յորժամ զհինգ ‖Ղուկ.
նկանակն 'ի հինգ հազարսն, և քանի՞ սա- 6. 41.
կաւ լի բարձէք զկոտորոցն: և ասեն, երկո- Յովհ.
20 տասան: * Եւ յորժամ զեւթն նկանակն 6. 11.
'ի չորս հազարսն, քանի՞ զամբիղ լի բարձէք
21 զկոտորոցն: և նոքա ասեն, եւթն: * Եւ
22 ասէ ցնոսա. խոկ զիարդ ոչ իմանայք: * Գան
'ի բեթսայիդա. և ածեն առաջի նորա կոյր
մի, և աղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա:
23 * Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան ար-
տաքոյ շինին, եթուք յաչս նորա, և ձեռն եդ
'ի վերայ նորա. և հարցանէր զնա՝ թէ տեսանի-
24 ցէ ինչ: * Հայեցաւ՝ և ասէր. տեսանեմ զմար-
25 դիկս՝ զի շրջին իբրև զծառս: * Դար-
ձեալ եդ ձեռս 'ի վերայ աչաց նորա՝ եբաց, և
տեսանէր. ողջացաւ՝ և տեսանէր համար-
26 ձակ զամ՛: * Արձակեաց զնա 'ի տուն իւր՝
և ասէ. 'ի շէնդ մի մտանիցես, այլ երթ 'ի
տուն քո. և յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի
ումեք ասիցես 'ի շինին:

* Եւ

ՕԿ * Եւ ել յս աշակերտօքն հանդերձ 'ի շէնս 27
Մատթ. Կեսարեայ փիլիպպեայ. եւ 'ի ճանապարհին
16. 13. հարցանէր զաշակերտսն եւ ասէր. զո՞ ու-
Ղուկ. տեք ասեն զինէն մարդիկ՝ թէ իցեմ։ * Նո- 28
9. 18. քա ետուն պատասխանի՝ եւ ասեն. զյովհան-
նէս մկրտիչ, եւ այլք՝ զեղիա, եւ այլք՝ զմի
ոք 'ի մարգարէից անտի։ * Նա ասէ ցնոսա. իսկ 29
դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ։ պա-
տասխանի ետ պետրոս, եւ ասէ ցնա. դու
ես Քսն։ * Եւ սաստեաց 'ի նոսա՝ զի մի ու- 30
Ղուկ. մեք ասիցեն զնմանէ։ * Եւ սկսաւ ուսու- 31
9. 30. ցանել զնոսա, թէ պարտ է որդւոյ մարդոյ
բազում չարչարանս ընդունել, եւ անարգել
յերիցանց եւ 'ի քահանայապետից եւ 'ի դպր-
աց, եւ մեռանել. եւ յերիր աւուր յառ-
նել։ * Եւ համարձակ զբանն խօսէր։ եւ 32
առեալ զնա մեկուսի պետրոսի՝ սկսաւ սաս-
տել նմա։ * Եւ նա դարձաւ ետես զաշա- 33
կերտսն, սաստեաց պետրոսի եւ ասէ. երթ
յետս իմ սատանայ. զի ոչ խորհիս դու զա-
տուծոյն՝ այլ զմարդկան։ * Եւ կոչեցեալ 34
առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հան-
Մատթ. դերձ՝ ասէ ցնա. եթէ ոք կամի գալ զկնի
16. 24. Ղուկ. իմ՝ ուրասցի զանձն իւր, եւ բարձցէ զխաչ
9. 23. իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ։ * Զի որ կամի- 35
Ղուկ. ցի ապրեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զն-
17. 33. Յովհ. նա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն աւետա-
12. 25. րանին, ապրեցուսցէ զնա։ * Զի՞նչ օգուտ 36
է մարդոյ՝ եթէ զաշխարհս ամ շահեսցի, եւ
Մատթ. զանձն իւր տուժեսցէ։ * Կամ զի՞նչ տա- 37
10. 33. ցէ մարդ՝ փոխանակ անձին իւրոյ։ * Զի 38
Ղուկ. որ ոք ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ 'ի
9. 26.
12. 9.

յազ

շնացող և 'ի մեղաւոր ազգիս այսմիկ, և որ-
դի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ ե-
կեսցէ փառօք Հօր իւրոյ և հրեշտակաց սըր-
39 բոց. * Եւ ասէ ցնոսա. ‖ ամէն ասեմ ձեզ. ‖Մտթ. 16. 28.
զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ կան, որք Ղուկ.
մի ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զար- 9. 27.
քայութիւն այ եկեալ զօրութեամբ.

## Գլ. Թ.

1 Եւ ‖ յետ վեց աւուր առնու Յս ընդ իւր զՊե- ‖Մտթ.
տրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և 17. 1.
հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. Ղուկ.
2 և յայլակերպս եղև առաջի նոցա. * Եւ ձորձք 9. 28.
նր եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թա-
փիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակա-
3 ցուցանել. * Եւ երևեցաւ նոցա Եղիա Մովսէ-
4 սիւ հանդերձ, և խօսէին ընդ Յսի. * Պա-
տասխանի ետ Պետրոս՝ և ասէ ցՅս. ռաբբի՝
բարւոք է մեզ աստ լինել. և արասցուք ե-
րիս տաղաւարս՝ մի քեզ և մի Մովսէսի և մի
5 Եղիայի. * Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր,
6 զի զարհուրեալ էին. * Եւ եղև ամպ մի հո-
վանի 'ի վր նոցա. ձայն եղև յամպոյ անտի՝ և
ասէ. դա է որդի իմ սիրելի, դմա լուա-
7 րուք. * Եւ յանկարծակի հայեցեալ այսր
անդր՝ ոչ ևս զոք տեսին, բայց միայն
8 զՅս ընդ իւրեանս. * ‖ Եւ մինչդեռ իջանէին 'ի ‖Մտթ.
լեռնէ անտի, պատուիրեաց նց զի մի ու- 17. 9.
մեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ
9 որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ. * Եւ նո-
քա զբանն 'ի միտ առնէին, և խնդրէին ընդ
միմեանս՝ թէ զինչ իցէ 'ի մեռելոցն յառ-
նել.

Մաղ. նէին: * Հարցին զնա եւ ասեն. զի՞նչ է այն 10
4. 5. զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պարտ
է գալ: * Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ. 11
Եսայ. Եղիա նախ եկեալ յօրինեսցէ զամենայն: Եւ
53. 3. զիարդ գրեալ է զորդւոյ մարդոյ, զի բազում
Մատթ. ինչ չարչարեսցի եւ անարգանեսցի: * Այլ 12
17. 12. ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, եւ արարին
ընդ նմա զինչ եւ կամեցան. որպէս եւ գրեալ է
վասն նորա:

ՕԲ * Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամ- 13
բոխ շուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝ զի վիճէին
ընդ նոսա: * Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն 14
իբրեւ տեսին զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ
ընթացեալ ողջոյն տային նմա: * Եւ եհարց 15
Ղուկ. զնոսա՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա: * Պատաս- 16
9. 38. խանի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն եւ ասէ.
վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր
ունի այս համր: * Եւ ուր հասանէ՝ զարկա- 17
նէ զնա. եւ փրփրէ՝ եւ կրճտէ զատամուն-
սն իւր եւ ցամաքի. եւ ասացի ցաշակերտսն քո
զի հանցեն, եւ ոչ կարացին հանել զնա:
* Պատասխանի ետ նոցա եւ ասէ. ո՜վ ազգ ան- 18
հաւատ՝ մինչեւ յե՞րբ իցեմ առ ձեզ. մինչեւ
ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս:
* Եւ ածին զնա առ նա. իբրեւ ետես զնա 19
այսն, վաղվաղակի շարժեաց զնա, եւ ան-
կեալ յերկիր թաւալէր եւ փրփրէր: * Եւ 20
հարց ցհայր նորա եւ ասէ. քանի՞ ժամանակք
են՝ յորմէհետէ այդ եղեւ դմա: Եւ նա ասէ.
՚ի մանկութենէ: * Բազում անգամ ՚ի հուր 21
արկանէ զդա եւ ՚ի ջուր՝ զի կորուսցէ. արդ՝
եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ տէր՝ գթա-
ցեալ

22 ցեալ 'ի վերայ մեր։ * Եւ յս՟ ասէ ցնա. ասա-
ցեր՝ թէ կարող ես. ամենայն ինչ հնարա-
23 ւոր է այնմ, որ հաւատայն։ * Եւ վաղվա-
ղակի աղաղակեաց հայր մանկանն՝ եւ ասէ.
հաւատամ, օգնեա՛ անհաւատութեան իմում։
24 * Եւ իբրեւ ետես յս՟ եթէ կուտի ժողովուրդն
'ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ եւ ասէ.
համր եւ խուլ այս՝ ես տամ քեզ հրաման,
ել 'ի դմանէ, եւ այլ եւս մի մտանիցես 'ի դա։
25 * Եւ աղաղակեաց՝ եւ յոյժ ըլկեաց զնա, եւ
ել. եւ եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ,
26 մինչեւ բազմաց խել ասել թէ մեռաւ։ * Եւ
յս՟ կալեալ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, եւ
27 կանգնեցաւ։ * Եւ իբրեւ եմուտ նա 'ի տուն,
աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք
28 ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ * Եւ ասէ
ցնս. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պա-
հովք եւ աղօթիւք։

ՕԴ.

29 * Եւ անտի ելեալ անցանէին ընդ գալի-
լեացւովք. եւ ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։ ‖ Մատ.
30 * ‖ Վասն զի ուսուցանէր զաշակերտսն իւր՝ 17. 21. Ղուկ.
եւ ասէր ցնս, թէ որդի մարդոյ մատնելոց է 9. 22.
'ի ձեռս մարդկան, եւ սպանցեն զնա. եւ իբ-
31 րեւ սպանցի՝ յետ երից աւուր յարիցէ։ * Եւ նո-
քա ոչ գիտէին զբանն, եւ երկնչէին հարցա-
32 նել ցնա։ * Եկն 'ի կափառնաում. եւ իբ-
րեւ եմուտ 'ի տուն, հարցանէր ցնս. զի՞նչ
33 վիճէիք զճանապարհայն ը՟ միմեանս։ * Եւ
նոքա լուռ լինէին. քանզի ընդ միմեանս վի-
ճէին 'ի ճանապարհին ‖ թէ ո՞վ մեծ իցէ։ ‖ Մատ.
34 * Եւ իբրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն 18. 1. Ղուկ.
եւ ասէ ցնս. եթէ որ կամի առաջին լինել՝ ե- 9. 46.

ղիցի ամենեցուն կրտսեր՝ և ամենեցուն պաշ-
տօնեայ։ * Եւ առեալ մանուկ մի կացոյց 'ի 35
մէջ նոցա. և ընկալեալ զնա 'ի գիրկս իւր, ա-
սէ ցնոսա։ * Որ միանգամ յայսպիսի ման- 36
կտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի. և
որ զիս ընդունիցի, ոչ զիս ընդունի՝ այլ զայն
Ղուկ. 9. 49. որ առաքեացն զիս։ * Պատասխանի ետ 37
Յովհաննէս և ասէ. վարդապետ՝ տեսաք
զոմն, զի յանուն քո դևս հանէր՝ և զմեր հետ
ոչ շրջէր, և արգելաք զնա։ * Եւ նա ասէ. 38
Ա. Կոր. 12. 3. մի՛ արգելուք զնա. Զի ոչ՛ք է՝ որ արասցէ զօ-
րութիս յանուն իմ, և կարիցէ հայհոյել զիս։
* Որ որ ոչն է ընդ մեզ հակառակ, 'ի մեր 39
Մատթ. 10. 42. կոյս է։ * Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր 40
բաժակաւ յանուանս յայս, թէ դուք քի եք,
ամէն ասեմ ձեզ՝ մի կորուսցէ զվարձս իւր։
Մատթ. 18. 6. * Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի 'ի փո- 41
Ղուկ. 17. 1. քրկանցս՝ որ հաւատան յիս, լաւ էր նմա-
ռաւել՝ եթէ արկեալ էր զ պարանոց նորա
Մատթ. 5. 30. 18. 8. երկան իշոյ, և ընկեցեալ 'ի ծով։ * Եւ ե- 42
թէ գայթագղեցուսցէ զքեզ ձեռն քո, հատ՝
ընկեա 'ի քէն. զի լաւ իցէ քեզ խեղ մտա-
նել 'ի կեանս յաւիտենից, քան երկուս
ձեռս ունել՝ և երթալ 'ի գեհենն 'ի հուրն 43
Եսայ. 66. 24. անշէջ։ * Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և 44
հուրն ոչ շիջանի։ * Եւ եթէ ոտն քո գայ-
թագղեցուսցէ զքեզ, հատ՝ ընկեա զնա 'ի
քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել 'ի կեանս
յաւիտենից, քան երկուս ոտս ունել՝ և
անկանել 'ի գեհենն 'ի հուրն անշէջ։ * Ուր 45
որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի։
* Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ ըզ- 46
քեզ,

քեզ, հան զնա 'ի բաց. լաւ իցէ քեզ միով
ականբ մտանել յարքայութիւն այ̃, քան եր-
47 կուս աչս ունել՝ և անկանել 'ի գեհեն. * Ուր
որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի.
48 * ‖ Զի ամ̃ ինչ հրով յաղեսցի, և ամ̃ ող- ‖ Ղեւտ.
49 ջակէզ աղիւ յաղեսցի. * ‖ Բարւոք է աղ. 2. 13.
և եթէ աղն անհամեսցի, իւ՞ համեմեսցի. ‖ Մատթ. 5. 13.
արդ՝ դուք կալարուք յանձինս ձեր զաղն, և Ղուկ.
խաղաղութիւն արարէք ընդ միմեանս. 14. 34.

## ԳԼ. Ժ.

1 Եւ ‖ անտի յարուցեալ գայ 'ի սահմանս ՕԳ.
Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և եր- ‖ Մատթ.
թայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ- 19. 1.
նա, և որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցա-
2 նէր զնա. * Եւ փարիսեցիքն մատուցեալ
փորձելով հարցանէին զնա՝ և ասէին, եթէ
3 արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել. * Նա
պատասխանի ետ նոցա և ասէ. զի՞նչ պատուի-
4 րեաց ձեզ մովսէս. * Նոքա ասեն. ‖ մով- ‖ 2Օրին.
սէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել, և ար- 24. 1.
5 ձակել. * Պատասխանի ետ յս՝ և ասէ ցնս.
վ̃ խստասրտութե̃ ձերոյ գրեաց ձեզ զպատ-
6 ուիրանն զայն. * Այլ 'ի սկզբանէ արարա-
ծոց, ‖ արու և էգ արար զնս ած, և ասէ. ‖ Ծննդ.
7 * ‖ Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և 1. 27.
8 զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. * Եւ ‖ Ծնն.
եղիցին երկոքեան 'ի մարմին մի. և այսուհե- 2. 24. Մատթ.
9 տև ոչ են երկու՝ այլ մարմին մի. * Արդ՝ զոր 19. 5.
10 ած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ. * Եւ 1. Կորն.
'ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին 7. 10.
11 զնա. * Եւ ասէ ցնս. եթէ այր արձակես-

ցէ

ցէ զկին իւր՝ և առցէ այլ, շնայ ։ * Եւ 12
կին եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն
այլում, շնայ ։
ՕԼ * Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի 13
ձեռն դիցէ նց. իսկ աշակերտքն սաստէին
այնոցիկ՝ որ մատուցանէինն ։ * Իբրև ետես 14
Յս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ.
Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի
արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է ար-
քայութիւն այ ։ * Ամէն ասեմ ձեզ. որ ոչ 15
ընկալցի զարքայութի այ իբրև զմանուկ՝ ոչ
մտցէ ՚ի նա ։ * Եւ առեալ զնոսա ՚ի գիրկս 16
ձեռն եդ ՚ի վր՝ և օրհնեաց զնս ։ * Եւ ՚ի 17
ելանելն նորա անտի ՚ի ճանապարհ, ահաւա-
սիկ ոմն մեծատուն ընթացեալ ՚ի ծունր ի-
Մտթ. ջանէր, հարցանէր զնա՝ և ասէր. ‖ Վարդա-
19. 16. պետ բարի՝ զի՞նչ արարից՝ զի զկեանսն յա-
Ղուկ. 18. 18. ւիտենականս ժառանգեցից ։ * Եւ յս ասէ 18
ցնա. զի՞ ասես զիս բարի. չիք որ բարի՝ բայց
Ելից. մի այ ։ ‖ * Զպատուիրանս գիտես. մի 19
20. 13. շնար, մի սպանաներ, մի գողանար, մի սուտ
վկայեր. պատուեա՛ զհայր քո և զմայր ։
* Եւ պատասխանի ետ և ասէ ցնա. վար- 20
դապետ՝ զայդ ամ արարի ՚ի մանկութէ իմ-
մէ, արդ՝ զի՞նչ ևս պակաս իցեմ ։ * Եւ յս 21
հայեցեալ ՚ի նա սիրեաց զնա, և ասէ ցնա.
մի ինչ պակաս է ՚ի քէն. եթէ կամիս կա-
տարեալ լինել, երթ զոր ինչ ունիս վաճա-
ռեա՛ և տուր աղքատաց, և ունիցիս գանձս
յերկինս, և ա՛ռ զխաչդ՝ և եկ զկնի իմ ։ * Եւ 22
նա խոժոռեալ ՚ի բանն՝ գնաց տրտում. զի
ունէր ինչս բազումս ։ * Եւ հայեցեալ յայս 23

կոյս

կոյս յայնկոյս իւր, ասէ ցաշակերտսն. զիա՞րդ
դժուարին է՝ որ զինչս ունին, մտանել
24 յարքայութիւն այ․ * Եւ աշակերտքն զարմա-
ցեալ էին ՚ի վերայ բանիցն նր․ իսկ յս դար-
ձեալ պատասխանի ետ նց եւ ասէ․ որդեակք
ո՞րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝ մտա-
25 նել յարքայութիւն այ․ * Դիւրին է մալխոյ
ընդ ծակ ասղան անցանել՝ քան մեծատան
26 յարքայութիւն այ մտանել․ * Եւ նք առաւել
եւս զարմանային՝ եւ ասէին ընդ միմեանս․ իսկ
27 ո՞ կարասցէ ապրել․ * Հայեցեալ ընդ նս յս՝
ասէ․ առ ՚ի մարդկանէ այդ անհնարին է,
այլ ոչ առ ՚ի այ․
28 * ‖ Սկսաւ ասել նմա պետրոս, ահաւասիկ Օ Օ.
29 մեք թողաք զամ, եւ եկաք զհետ քո․ * Պա- ‖Մատ.
տասխանի ետ յս եւ ասէ․ ամէն ասեմ ձեզ՝ 19. 27.
ոչ ոք է որ եթող զտուն կամ զեղբարս կամ Ղուկ.
զքորս՝ կմ զհայր կմ զմայր կմ զորդիս՝ կամ 18. 28.
զագարակս վս իմ կամ վս աւետարանին․
30 * եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ
յայսմ ժամանակի տունս եւ եղբարս եւ քորս
եւ մարս եւ որդիս՝ եւ ագարակս հալածանօք
հանդերձ, եւ յաշխարհին որ գալոց է ըզ-
31 կեանսն յաւիտենականս․ * ‖ Օ ի բազումք ‖Մատ.
եղիցին առաջինք յետինք՝ եւ յետինք առա- 19. 30.
32 ջինք․ * Եւ էին ՚ի ճանապարհի մինչ դեռ Ղուկ.
ելանէին յէմ․ եւ երթայր յս առաջի քան 13. 30.
զնոսա, եւ զարմացեալ էին որ զհետն եր-
թային եւ երկնչէին․
‖ Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն Օ Լ.
առանձինն, սկսաւ ասել նց զինչ անցք ան- ‖Մատ.
33 ցանելոց էին ընդ նա․ * Թէ ահաւասիկ 20. 17.

ելա-

Ղուկ. 18. 31. ելանեմք յեր̃ղմ. եւ որդի մարդոյ մատնեսցի
քահանայապետիցն եւ դպրաց. եւ դատա-
ցեն զնա 'ի մահ, եւ մատնեսցեն զնա հեթա-
նոսաց. * եւ կատակեսցեն զնովաւ. եւ հար- 34
կանիցեն զնա, եւ թքանիցեն 'ի նա, եւ սպան-
‖ Մատ. 20. 20. ցեն. եւ յերիր աւուր յարիցէ։ * ‖ Եւ եր- 35
թային առ նովաւ յակովբոս եւ յովհաննէս՝
որդիքն զեբեդեայ. եւ ասեն ցնա. վարդա-
պետ կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք 'ի քէն՝
արասցես մեզ։ * Եւ նա ասէ ցնոսա. զինչ 36
կամիք լինել՝ զի արարից ձեզ։ * Եւ նոքա 37
ասեն ցնա. տուր մեզ՝ զի նստցուք մի յաջ-
մէ քումմէ եւ մի յահեկէ՝ 'ի փառսն քում։
* Պատասխանի ետ յս եւ ասէ ցնոսա. ոչ գի- 38
տէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝
զոր ես ըմպելոց եմ, կա՞մ զմկրտութիւն մկրտել՝
զոր ես մկրտելոցն եմ։ * Եւ նոքա ասեն 39
ցնա, կարեմք։ եւ յս ասէ ցնոսա. զբաժակն
զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, եւ զմկրտու-
թիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք.
* այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ եւ ընդ ա- 40
հեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ
իցէ։ * Եւ լուեալ զայն տասանցն, սկսան 41
բարկանալ յակովբայ եւ յովհաննու։ * Եւ 42
յս կոչեաց զնոսա առ ինքն, եւ ասէ ցնոսա.
‖ Ղուկ. 22. 25. ‖ գիտէք՝ զի որ յանուանն իշխանքն են հե-
թանոսաց, տիրեն նց. եւ մեծամեծք նոցա,
իշխեն նց։ * Ոչ նոյնպէս իցէ եւ 'ի ձերում 43
միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ ե-
ղիցի ձեր պաշտօնեայ. * եւ որ կամիցի 'ի 44
ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծա-
ռայ։ * Քանզի եւ որդի մարդոյ ոչ եկն առ- 45

նուլ

նուլ պաշտօն՝ այլ պաշտել, եւ տալ զանձն
իւր փրկանս փոխանակ բազմաց։ Լ. Կ
46 * Եւ գան յԵրիքով. եւ ի ելանելն նորա յԵ-
րիքովէ աշակերտօքն՝ եւ բազում ժողովր- Մատ.
դով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր 20. 29.
47 մուրացիկ յանցս ճանապարհի։ * Իբրեւ լը- Ղուկ.
ուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղա- 18. 35.
կել եւ ասել. որդի՛ Դաւթի Յիսուս՝ ողորմեաց
48 ինձ։ * Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռես-
ցէ. եւ նա առաւել եւս աղաղակէր. որդի՛
49 Դաւթի ողորմեաց ինձ։ * Ոտեղի առ Յիսուս՝
եւ հրամայեաց կոչել զնա։ Կոչեն զկոյրն՝ եւ
ասեն ցնա. քաջալերեաց արի՛ կոչէ զքեզ։
50 * Եւ նա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ եւ
51 եկն առ Յիսուս։ * Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ա-
սէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ։ ասէ ցնա
52 կոյրն. ռաբբունի՝ զի բացայց։ * Եւ Յիսուս ա-
սէ ցնա, երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ.
եւ վաղվաղակի բացաւ, եւ երթայր զհետ նորա
ի ճանապարհին։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ի Բեթփա- Մատ.
գէ եւ ի Բեթանիա մօտ ի լեառն Ձիթե- 21. 1. Ղուկ.
նեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի։ 19. 29.
2 * եւ ասէ ցնոսա. երթայք դուք ի գեօղդ՝ որ
ընդդէմ ձեր կայ. եւ նոյն ժամայն իբրեւ
մտանիցէք ի նա, գտանիցէք յաւանակ մի կա-
3 պեալ. յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նըս-
տաւ, լուծէք զնա՝ եւ ածէք։ * Եւ եթէ
ոք ասասցէ ձեզ՝ եթէ զի՞ լուծանէք զյաւա-
նակդ, ասասջիք՝ եթէ Տեառն իւրում պիտոյ է.
եւ

եւ վաղվաղակի առաքեսցէ զնա այսր ։ * Չո- 4
գան , եւ գտին զյաւանակն կապեալ առ
դուրս արտաքոյ 'ի փողոցի անդ , եւ լուծին
զնա ։ * Եւ ոմանք յորոց անդն կային , ա- 5
սէին ցնոսա . զի՞ գործէք , զի՞ լուծանէք զը-
յաւանակդ ։ * Եւ նոքա ասեն ցնոսա ինչ ա- 6
‖ Յով. սացն յս . եւ թոյլ ետուն նց ։ * ‖ Ածին զը- 7
12. 14. յաւանակն առ յս . եւ արկանեն 'ի վր նորա
հանդերձս , եւ նստաւ 'ի վր նր ։ * Եւ բա- 8
զումք զհանդերձս իւրեանց տարածանէին
'ի վերայ ճանապարհին , եւ այլք ոստս 'ի ծա-
ռոց հատանէին՝ եւ արկանէին զճանապար-
հաւն ։ * Եւ որ առաջին եւ զկնի երթային , 9
աղաղակէին , եւ ասէին . ովսաննայ բարձ-
‖ Սղ. րելոյն ։ * ‖ Օրհնեալ որ գայդ յանուն տն . 10
117. 26. օրհնեալ թագաւորութիւն եկեալ հօր մերոյ
Մտթ. 21. 9. դաւթի . խաղաղութիւն յերկինս՝ եւ փառք 'ի
Ղուկ. բարձունս ։ * Եւ եմուտ յս յեմ 'ի տա- 11
19. 38. ճարն , եւ հայեցաւ շուրջ զամենեքումբք .
եւ զի էր երեկոյացեալ ժամն , ել 'ի բեթա-
նիա երկոտասանիւքն հանդերձ ։

Լ. Ր. * Եւ 'ի վաղիւ անդր մինչ դեռ ելանէին 'ի 12
‖ Մտթ. բեթանիա , քաղցեաւ ։ * ‖ Եւ ետես թը- 13
21. 19. զենի մի 'ի բացուստ տերեւալից . եւ եկն՝ թէ
գտանիցէ ինչ 'ի նմ . եւ իբրեւ եկն 'ի նա՝ ո-
չինչ եգիտ , բայց միայն տերեւ . զի ոչ իսկ էր
ժամանակ թզոյ ։ * Պատասխանի ետ եւ ա- 14
սէ ցնա . մի եւս որ յաւիտեան 'ի քէն պտուղ
կերիցէ . եւ լսէին աշակերտքն նր ։ * Գան 15
‖ Մտթ. յեմ . ‖ եւ մտեալ 'ի տաճարն՝ սկսաւ հանել
21. 12. զվաճառականս եւ զգնօղս՝ որ էին 'ի տա-
ճարին . եւ զսեղանս հատավաճառացն ցրը-
ուեաց ,

ուեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառացն կոր֊
16 ծանեաց. * Եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ
17 ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։ * Եւ ուսու֊
ցանէր եւ ասէր ցնոսա. գրեալ է. ‖ տուն իմ ‖ Եսայ. 56. 7.
տուն աղօթից կոչեսցի ամ֊ հեթանոսաց, եւ Երեմ. 7. 11.
18 դուք արարէք զդա այրս աւազակաց։ * Լու֊
ան քահանայապետքն եւ դպիրք. եւ խնդ֊
րէին՝ թէ որպէս կորուսցեն զնա, բայց
երկնչէին ՚ի նմանէ. զի ամ֊ ժողովուրդն
19 զարմացեալ էր ՚ի վ֊ ուսումն նր։ * Եւ իբրեւ
երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելա֊
20 նէին։ * Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ֊
անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յար֊
21 մատոց։ * Յիշեաց Պետրոս՝ եւ ասէ ցնա.
Ռաբբի՝ ահաւասիկ թզենին զոր անիծեր,
22 ցամաքեցաւ։ * Պատասխանի ետ Յս եւ ասէ
23 ցնոսա. ‖ եթէ ունիցիք զհաւատսն այ, * ա֊ ‖ Մատ. 21. 21.
մէն ասեմ ձեզ. որոք ասիցէ լերինս այսմիկ՝
բարձիր եւ անկիր ՚ի ծով, եւ ոչ երկմտիցէ ՚ի
սրտի իւրում, այլ հաւատասցէ՝ թէ զոր ա֊
24 սէն լինի, եղիցի նմա զոր ինչ եւ ասիցէ։ * Վն
այսորիկ ասեմ ձեզ. զամ֊ ինչ վասն որոյ ա֊
ղօթս արարեալ խնդրիցէք, եւ հաւատայցէք
25 թէ առնուցուք, եղիցի ձեզ։ * ‖ Եւ յոր֊ ‖ Մատ.
ժամ յաղօթս կայցէք, թողուցուք, եթէ 6. 14. 18. 35.
ունիցիք ինչ զումեքէ. զի եւ հայրն ձեր՝ որ
յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր։
26 * Ոի եթէ դուք ոչ թողուցուք, եւ ոչ հայրն
ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս
ձեր։

27 * ‖ Գան միւսանգամ յԵրմ. եւ մինչ գնա ՚ի ԻԳ.
տաճարին անդ զգնայր, գան առ նա քահա֊ ‖ Ղուկ. 20. 1.
նայ

նայապետքն եւ դպիրք եւ ծերք, * եւ ասեն 28
ցնա. որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ
ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։ * Պատասխա- 29
նի ետ նա եւ ասէ ցնոսա. Հարցից եւ ես ըն-
դէմ բան մի, տուք ինձ պատասխանի. եւ ես ա-
սացից ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։
* Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ ե- 30
թէ ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի։
* Խորհէին ընդ միմեանս՝ եւ ասէին. եթէ ա- 31
սեմք՝ եթէ յերկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէ՞ր
ոչ հաւատացէք նմա։ * Այլ եթէ ասեմք՝ ի 32
մարդկանէ, երկնչէին ի ժողովրդենէն. զի
ամենեքին զՅովհաննէս՝ թէ մար-
գարէ էր։ * Պատասխանի ետուն եւ ասեն 33
ցՅս. չգիտեմք։ Եւ Յս ետ նոցա պատասխանի
եւ ասէ. եւ ոչ ես ասեմ ձեզ, որով իշխա-
նութեամբ առնեմ զայս։

## ԳԼ. ԺԲ.

Մտ. Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ եւ 1
21. 33. ասել. Այր մի տնկեաց այգի, եւ ած շուրջ
Ղկ. զնովաւ ցանկ, եւ գուբ հնձանի փորեաց, եւ
20. 9. շինեաց աշտարակ. եւ ետ զնա մշակս, եւ
Եսայ. 5. 1. գնաց ի տար աշխարհ։ * Եւ առաքեաց առ 2
Երեմ. մշակսն ի ժամանակին ծառայ մի, զի ի մշա-
2. 21. կաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն։ * Եւ 3
նոքա կալեալ զնա հարին զնա, եւ արձակե-
ցին ունայն։ * Դարձեալ առաքեաց առ 4
նոսա այլ ծառայ, եւ զնա կառափնատեցին՝
եւ արձակեցին անարգեալ։ * Եւ դարձեալ 5
այլ առաքեաց, եւ զնա սպանին. եւ զբա-
զումս այլս՝ զոմանս հարկանէին եւ զոմանս

սպա-

6 սպանանէին. *Ապա որդի մի էր իւր սիրե-
լի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ.
թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ.
7 *Իսկ մշակքն իբրև տեսին զնա թէ գայ՝
ասեն ցմիմեանս. սա է ժառանգն, եկայք
սպանցուք զսա, և մեր լիցի ժառանգու-
8 թիւնն. *Եւ կալեալ զնա սպանին, և հա-
9 նին արտաքոյ այգւոյն. *Արդ՝ զի՞նչ ա-
րասցէ տէր այգւոյն. եկեսցէ և կորուսցէ
զմշակսն, և տացէ զայգին 'ի ձեռս այլոց.
10 *Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր,
թէ ‖ Զվէմն զոր անարգեցին շինողքն, նա ե- ‖ Սաղ.
11 ղև գլուխ անկեան. *Ի տեառնէ եղև այս, և 117. 22.
12 է սքանչելի յաչս մեր. *Եւ խնդրէին զնա Եսայ. 28. 16.
ունել, և երկեան 'ի ժողովրդենէ անտի,
զի գիտացին թէ առ նոսա ասաց զառակն.
13 և թողին զնա և գնացին. *‖ Եւ առաքեն ‖ Մատթ.
առ նա զոմանս 'ի փարիսեցւոց անտի՝ և 'ի 22. 15.
հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ. Ղուկ. 20. 20.
14 *Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նեն-
գութեամբ՝ և ասէին. վարդապետ՝ գիտեմք զի
ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումե-
քէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ
ճշմարտութեամբ զճանապարհն Այ ուսուցանես.
արդ՝ ասա մեզ, արժա՞ն է հարկս տալ կայ-
15 սեր՝ թէ ոչ. տացո՞ւք՝ եթէ ոչ տացուք. *Եւ
նա գիտաց զկեղծաւորութիւն նց, ասէ ցնո-
սա. զի՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք
16 ինձ դահեկան մի՝ զի տեսից. *Եւ նոքա բե-
րին. և ասէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս՝
17 կամ գիր. և նոքա ասեն ցնա. կայսեր. *Պա-
տասխանի ետ յս, և ասէ ցնոսա. ‖ Երթայք ‖ Հռովմ.
13. 7.
տուք

Լ. Դ. տուք զկայսերն՝ կայսեր, և զԱյն՝ Այ. և
զարմացան ընդ նա.
Մատթ. 22. 23. * Գան առ նա Սադուկեցիքն որ ասեն՝ թէ 18
չիք յարութիւն. հարցանէին զնա և ասէին.
Ղուկ. 20. 27. * Վարդապետ Մովսէս գրեաց մեզ. թէ 19
Բ. Օրին. 25. 5. ումեք եղբայր մեռանիցի և թողուցու կին՝
և որդի ոչ թողուցու. զի առցէ եղբայր նո-
րա զկին նր, և յարուսցէ զաւակ եղբօր իւ-
րում. * Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. 20
առաջինն առ կին՝ և մեռաւ, և ոչ եթող
զաւակ. * Եւ երկրորդն առ զնոյն՝ և մե- 21
ռաւ, և ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և
երրորդն առ զնոյն. * Եւ եօթնեքեան իսկ. 22
և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մե-
ռաւ և կինն. * Արդ՝ ի յարութեանն յորժամ 23
յառնիցեն, ո՞յր ի նոցանէ լինիցի կինն. զի
եօթնեքեան կալան զնա կին. * Պատաս- 24
խանի ետ յս և ասէ ցնոսա. ո՞չ վասն այդո-
րիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս՝
և ոչ զզօրութիւն Այ. * Զի յորժամ ի մե- 25
ռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, և
ոչ կանայք արանց լինին. այլ իբրև զհրեշ-
տակս իցեն՝ որ յերկինս են. * Այլ վասն 26
յարութեն մեռելոց զի յառնեն, ո՞չ իցէ ըն-
թերցեալ ձեր ի գիրսն Մովսէսի ի մորեն-
Ելից. 3. 6. ւոջն. ո՞րպ ասաց ցնա Այ. Ես եմ ասէ՝ Այ
Աբրահամու, Այ Իսահակայ, և Այ Յակով-
բայ. * Եւ ոչ է Այ մեռելոց՝ այլ կենդանե- 27
Մատթ. 22. 35. աց. և արդ՝ դուք յոյժ մոլորեալ էք. * Եւ 28
մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսէր նց միմեանց
վիճելն. իբրև ետես եթէ բարւոք ետ նց
պատասխանին, եհարց ցնա և ասէ. որ
պա

29 պատուիրան է առաջին. *Եւ Յս ասէ ցնա.
առաջին քան զամ՝ ‖ Լուր Իսրլ՝ Տր Ած մեր՝ ‖ Բ. Օր.
30 Տր մի է. *Եւ սիրեսցես զՏր Ած քո յամ 6. 4.
սրտէ քումմէ, եւ յամ անձնէ քումմէ, եւ
յամ մտաց քոց, եւ յամ զօրութենէ քումմէ.
31 այս է առաջին պատուիրան. *‖ Եւ երկ- ‖ Ղեւ.
րորդն նման սմին. սիրեսցես զընկեր քո՝ 19. 18.
իբրեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատ- Հռվ. 13. 9.
32 ուիրան ոչ գոյ. *Եւ ասէ ցնա դպիրն. բար- Գաղ.
ւոք է վարդապետ. ճշմարտութբ ասացեր՝ 5. 14.
թէ մի է Ած, եւ ոչ գոյ այլ բաց 'ի նմանէ. Յակ. 2. 8.
33 *Եւ սիրելն զնա յամ սրտէ եւ յամ զօրութ
եւ յամ մտաց, եւ սիրելն զընկերն իբրեւ զան-
ձն, առաւել է քան զողջակէզս եւ զզոհս.
34 *Եւ տեսեալ Յի թէ իմաստութբ ետ ըզ-
պատասխանին՝ ասէ ցնա. չես հեռի յար-
քայութենէ Այ. եւ ոչ եւս ոք իշխէր ինչ հար-
ցանել ցնա.
35 *Պատասխանի ետ Յս եւ ասէ, մինչ ուսու- Լ. Ն.
ցանէր 'ի տաճարին. ‖ զիա՞րդ ասեն դպիրքն, ‖ Մատ.
36 եթէ Քս որդի Դաւթի է. *Եւ ինքն Դա- 22. 42.
ւիթ հոգւովն սրբով ասէ. ‖ ասաց Տր ցՏր Ղուկ.
իմ, նստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշ- 20. 41.
37 նամիս քո պատուանդան ոտից քոց. *Արդ ‖ Սաղ. 109. 1.
եթէ ինքն Դաւիթ զնա Տր կոչէ՝ զիա՞րդ
իցէ որդի նր. եւ բազում ժողովուրդ լսէր
38 նմա քաղցրութբ. *Եւ ասէր ուսուցանելով
'ի վարդապետութեան իւրում. ‖ զգոյշ լերուք ‖ Մատ.
'ի դպրաց անտի, որ կամին 'ի հանդերձս 23. 5.
երեւելիս շրջել, ողջոյնս խնդրել 'ի Ղուկ. 20. 46.
39 հրապարակս, *եւ զնախաթոռս 'ի ժողո-
40 վուրդս, եւ զգահոյսն յընթրիս. *‖ Որ ‖ Մատ.
ու- 23. 14.

ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յեր-
կարեալ զաղօթս, զի առցեն եւս դատաստանս
‖ Ղուկ. ընդարձակագոյնս: * ‖ Կայր յս ընդդէմ գանձանա- 41
21. 1. կին, տեսանէր թէ զիարդ ժողովուրդն ար-
կանէր պղինձ ՚ի գանձանակն. և բազում
մեծատունք արկին բազում ինչ: * Եկն այրի 42
մի՝ և արկ երկուս լումայս, որ է նաքարա-
կիտ մի: * և կոչեցեալ առ ինքն զաշակերտա- 43
սն, ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ՝ զի այ-
րին այն տնանկեալ շատ արկ քան զամե-
նեսեան՝ որ արկին ՚ի գանձանակն: * Քան- 44
զի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին.
այլ նա ՚ի չքաւորութենէ իւրմէ՝ զամ ինչ զոր
ունէր արկ զայն չափ զկեանս իւր:

## ԳԼ. ԺԳ.

ԵՒ ‖ յելանելն նր ՚ի տաճարէ անտի, ասէ 1
‖ Մատթ. ցնա մի յաշակերտացն նորա. վարդապետ,
24. 1. տես որպիսի՞ են քարինքս, և որպիսի՞ շին-
ուածք: * Պատասխանի ետ նմա յս և աս- 2
տեսանես զայդ ամ շինուածս, ամէն ասեմ
‖ Ղուկ. ձեզ՝ ‖ եթէ ոչ թողցի այդր քար ՚ի քարի վե-
19. 44.
21. 6. րայ՝ որ ոչ քակտեսցի: * Եւ մինչ նստէր նա 3
՚ի լերինն ձիթենեաց յանդիման տաճարին,
հարցանէին ցնա առանձինն՝ պետրոս և յա-
կոբոս և յովհաննէս և անդրէաս: * Ասա 4
մեզ՝ երբ լինիցի այդ. և զի՞նչ նշան է՝ յոր-
ժամ կատարելոց իցէ այդ ամ: * Պատաս- 5
‖ Եփես. խանի ետ յս, և ասէ ցնոսա. ‖ զգոյշ կացէք,
5. 6.
2. Թեսաղ. մի ոք զձեզ խաբեսցէ: * Զի բազումք ե- 6
2. 3. կեսցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ
քն. և զբազումս մոլորեցուսցեն: * Այլ 7

յոր-

յորժամ լուիցէք պատերազմունս եւ համ-
բաւս պատերազմաց՝ մի խռովիցիք, զի պարտ
8 է լինել. բայց չեւ է կատարածն ։ * Զի յա-
րիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ՚ի
թագաւորութեան վ՜ր. եւ եղիցին շարժմունք
՚ի տեղիս տեղիս, սովք եւ սրածութիւնք եւ խռ-
ովութիւնք. այլ այն ա՜մ սկիզբն է երկանց ։
9 * Այլ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, եւ
՚ի ժողովուրդս տանջիցիք, եւ առաջի դա-
տաւորաց եւ թագաւորաց կայցէք վ՜ն իմ ՚ի
10 վկայութիւն նոցա, * եւ ամենայն հեթանոսաց ։
բայց նախ պարտ է աւետարանին քարոզել ։
11 * Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, Մատ.
մի յառաջագոյն հոգայցէք, եւ մի զմտաւ ա- 10. 19.
ծիցէք՝ թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ տացի Ղուկ.
ձեզ ՚ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի 12. 11.
ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ հոգին ՚սբ ։ 21. 14.
12 * Մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ՝ եւ
հայր զորդի. եւ յարիցեն որդիք ՚ի վ՜ր հարց,
13 եւ սպանանիցեն զնոսա ։ * Եւ եղիջիք ա-
տեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ.
այլ որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ ։
14 * Այլ յորժամ տեսանիցէք զպղծութիւն ա- Դան.
ւերածին, զի կայցէ ՚ի տեղւոջ ուր չիցէ ար- 9. 27.
ժան. որ ընթեռնուն ՚ի միտ առցէ ։ Յայն- Մատ.
ժամ որ ՚ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի 24. 15.
15 լերինս. * Եւ որ ՚ի վ՜ր տանեացն իցէ՝ մի իջ- Ղուկ.
ցէ ՚ի տուն, եւ մի մտցէ բառնալ ինչ ՚ի տա- 21. 20.
16 նէ իւրմէ. * Եւ որ յագարակին իցէ՝ մի դարձ-
ցի յետս առնուլ զհանդերձ իւր ։ * Բայց վայ
17 իցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն յայնո-
18 սիկ ։ * Աղօթս կացէք՝ զի մի ձմերայնի լի-
նիցի

նիցի այն ։ * Եղիցին աւուրքն այնոքիկ նե- 19
ղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբեք այնպիսիք
՚ի սկզբանէ արարածոց մինչեւ ցայժմ, եւ մի
այլ լիցի ։ * Եւ եթէ ոչ էր կարճեալ Տ՟ր զա- 20
ւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ
ապրէր ամ՟ մարմին. այլ վասն ընտրելոցն
զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնո-
Մատթ. սիկ ։ * Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ, ե- 21
24. 23. թէ ահաւասիկ է Ք՟ս՝ կամ աւանիկ, մի հա-
Ղուկ. ւատայցէք ։ * Զի յարիցեն սուտ քրիստոսք 22
17. 23. եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս եւ ա-
րուեստս՝ առ ՚ի մոլորեցուցանելոյ եթէ հնար
ինչ իցէ եւ զընտրեալսն ։ * Բայց դուք զգու- 23
շ լերուք՝ ահաւասիկ յառաջագոյն աս-
Եսայ. ցի ձեզ զամենայն ։ * Այլ յաւուրսն յայ- 24
13. 10. նոսիկ յետ նեղութեան այնորիկ արեգակն խա-
Եզեկ. 32. 7. ւարեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր ։ * Եւ 25
Յովել. աստեղք յերկնից թօթափեսցին, եւ զօրու-
2. 10. թիւք յերկինս շարժեսցին ։ * Եւ յայնժամ 26
տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօ-
Մատթ. րու՟ք եւ փառօք բազմօք ։ * Եւ յայնժամ 27
24. 31. առաքեսցէ զհրեշտակս իւր եւ ժողովեսցէ,
զընտրեալս իւր ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց
երկրի մինչեւ ՚ի ծագս երկնից ։ * Բայց դուք 28
՚ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յոր-
ժամ ոստքն նր՟ կակղանայցեն եւ տե-
րեւ արձակիցի ՚ի նմա, գիտէք թէ մերձ է ա-
մառն. * Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսա- 29
նիցէք զայս ամ՟ եղեալ, գիտասջիք թէ մերձ
է առ դրունս ։ * Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ 30
անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամ՟ եղիցի ։ * Եր- 31
կինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ ան-

ցա-

32 ցանիցեն ։ * Յաղագս աւուրն այնորիկ և ժա-
մու՝ ոչ որ գիտէ՝ ո՛չ հրեշտակք յերկինս՝ և ո՛չ
33 որդի, բայց հայր միայն ։ *|| Զգո՛յշ լե- || Մատթ.
րուք . հսկեցէք և կացէք յաղօթս . զի ո՛չ գի- 24. 42.
34 տէք երբ ժամանակն իցէ ։ * Որպէս այր մի
գնացեալ 'ի տար աշխարհ՝ թողուցու զտուն
իւր . և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն,
և իւրաքանչիւր զգործս իւր . և դռնապա-
նին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի ։
35 * Արդ՝ արթո՛ւն կացէք, զի ո՛չ գիտէք երբ
տէր տանն գայցէ՝ յերեկորեայ՝ եթէ 'ի մէջ
գիշերի՝ եթէ 'ի հաւախօսի՝ եթէ ընդ առա-
36 ւօտս ։ * Գուցէ եկեալ յանկարծակի՝ գը-
37 տանիցէ զձեզ 'ի քուն ։ * Բայց զոր ձեզդ ա-
սեմ, ամենեցուն ասեմ՝ արթո՛ւն կացէք ։

## ԳԼ. ԺԴ.

1 Եւ || էր զատիկն և բաղարջակերք յետ եր- Լ. Լ.
կուց աւուրց . խնդրէին քահանայապետքն || Մատթ.
և դպիրք՝ եթէ զիա՛րդ զնա նենգաւ կալեալ 26. 2.
2 սպանանիցեն ։ * Բայց ասէին՝ թէ մի 'ի տօ- Ղուկ.
նի աստ, զի մի խռովութիւն լինիցի 'ի ժո- 22. 1.
3 ղովրդեանն ։ *|| Եւ մինչ էր 'ի բեթանիա՝ || Մատթ.
'ի տան սիմովնի բորոտի բազմեալ, եկն կին 26. 6.
մի՝ որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի Յովհ.
մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ 'ի վերայ 12. 1.
4 գլխոյ նորա ։ * Եւ աշակերտքն զայրէին և
ասէին . ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այդո-
5 րիկ ։ * Մարթ էր զայդ իւղ վաճառել
աւելի քան երեք հարիւր դահեկանի, և
տալ աղքատաց . և զայրանային նմա յոյժ ։
6 * Եւ Յս ասէ ցնս . թո՛յլ տուք դմա՝ զի աշ-

խատ առնէք, զի գործ մի բարի գործեաց
զա յիս. *Զի յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ու- 7
նիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա
բարիս. այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք.
*Զոր ունէրդ՝ արար. յառաջագոյն 8
խնկեաց զմարմին իմ ի նշան պատանաց.
*Ամէն ասեմ ձեզ. ուր և քարոզեսցի աւե- 9
տարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր արար
Մատթ. 26. 14. զա՝ խօսեսցի ի յիշատակի դորին. *Եւ 10
Յուդա Իսկարիովտացի մի յերկոտասանիցան-
տի, գնաց առ քահանայապետսն զի մատ-
նեսցէ զնա նոցա. *Նոքա իբրև լուան՝ խնդա- 11
ցին, և խոստացան տալ նմա արծաթ.
և խնդրէր՝ թէ զիարդ պարապով մատնես-
ցէ զնա.
Մատթ. 26. 17. Ղուկ. 22. 7. *Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ 12
յորժամ զզատիկն զենուին, ասեն ցնա ա-
շակերտքն. ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաս-
տեսցուք՝ զի կերիցես զզատիկն. *Եւ ա- 13
ռաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ
ցնոսա. երթայք ի քաղաք, և իբրև մտանի-
ցէք ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի որ
սափոր ջրոյ յուսով բերիցէ, երթայք զհետ նո-
րա. *Եւ ուր մտանիցէ, ասասջիք 14
ցտանուտէրն. վարդապետն ասէ՝ ո՞ւր են ի-
ջավանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ զզա-
տիկն. *Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի 15
մեծ զարդարեալ. անդ պատրաստեսջիք
մեզ. *Եւ գնացին պատրաստել աշակերտ- 16
քն նորա, եկին ի քաղաքն՝ և գտին որպէս ա-
սաց նոցա. և պատրաստեցին զզատիկն.
Մատթ. 26. 20. *Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ երկոտասա- 17

նիւքն

18 նիւքն հանդերձ։ * Եւ իբրեւ բազմեցան եւ Ղուկ. 22. 14.
գէին ուտէին, ասէ Յս. ամէն ասեմ ձեզ՝ ‖ զի ‖ Յովհ.
մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ ընդ 13. 21.
19 իս։ * Եւ նոքա սկսան տրտմել՝ եւ ասել
մի ըստ միոջէ. միթէ ես իցեմ, եւ միւսն՝ մի֊
20 թէ ես իցեմ։ * Նա պատասխանի ետ եւ ա֊
սէ ցնա. մի յերկոտասանից այտի, որ մխ֊
21 եաց ընդ իս ՚ի սկաւառակդ։ * Այլ որդի
մարդոյ երթայ՝ ‖ որպէս եւ գրեալ է վն նր. ‖ Սաղմ.
բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռս որ֊ 40. 10.
դի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր Գործ. 1. 16.
22 իսկ ծնեալ մարդն այն։ *‖ Եւ մինչդեռ ու֊ ‖ Ա.Կոր.
տէին, առեալ Յս հաց՝ օրհնեաց եւ եբեկ 11. 24.
ետ նոցա, եւ ասէ. առէք՝ այդ է մարմին իմ։
23 * Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ եւ ետ նց,
24 եւ արբին ՚ի նմանէ ամենեքեան։ * Եւ ա֊
սէ ցնս. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ
25 փոխանակ բազմաց հեղանի։ * Ամէն ասեմ
ձեզ, թէ ոչ եւս յաւելից ըմպել ՚ի բերոյ որ֊
թոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա
26 նոր յարքայութեն այ։ * Եւ գոհացեալ՝ ելին
՚ի լեառն ձիթենեաց։ Վերջ
27 * Եւ ասէ ցնոսա Յս. ‖ ամենեքին գայթագ֊ ‖ Յովհ.
ղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ 16. 32.
է, թէ ‖ հարից զհովիւն՝ եւ ոչխարքն ցրուես֊ ‖ Զաքար.
28 ցին։ * Այլ յետ յարութեն իմոյ՝ յառաջա֊ 13. 7.
29 գոյն երթայց քան զձեզ ՚ի Գալիլեա։ * Պա֊
տասխանի ետ պետրոս եւ ասէ ցնա. թէպէտ
եւ ամենեքին գայթագղեսցին, այլ ես ոչ։
30 * Եւ ասէ ցնա Յս. ամէն ասեմ քեզ. թէ
դու իսկ յայսմ գիշերի մինչեւ հաւու խօ֊
31 սեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս։ * Իսկ պետ֊

րոս

րոս առաւել եւս պնդէր եւ ասէր. եթէ մե-
ռանել եւս հասանիցէ ինձ ընդ քեզ, զքեզ ոչ ու-
րացայց. Նոյնպէս եւ ամենեքեան ասէին։
* Մտ. * Գան 'ի գեօղն՝ որում անուն էր Գեթ- 32
26. 36. սեմանի. եւ ասէ ցաշակերտսն. Նստարո՛ւք
Ղկ. աստ՝ մինչեւ ես յաղօթս կացից։ * Եւ ա- 33
22. 40. նու ընդ իւր զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅ-
ովհաննէս, եւ սկսաւ տխրել եւ հոգալ։
* Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է անձն իմ 34
մինչեւ 'ի մահ, մնացէք աստ՝ եւ արթուն կա-
ցէք։ * Եւ մատուցեալ սակաւիկ մի յա- 35
ռաջ, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յեր-
կիր. եւ կայր յաղօթս, զի եթէ հնար իցէ՝
անցցէ 'ի նմանէ ժամն։ * Եւ ասէ. աբբա՛ 36
հայր՝ ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցո՛ ըզ-
բաժակս զայս յինէն. բայց ոչ որպէս ես կա-
միմ՝ այլ որպէս դու կամիս։ * Եւ գայ՝ գը- 37
տանէ զնոսա զի ննջէին, եւ ասէ ցՊետրոս.
Սիմոն ննջես. ոչ կարացեր ժամ մի արթուն
կալ։ * Արթո՛ւն կացէք եւ յաղօ՛թս կացէք, 38
զի մի մտջիք 'ի փորձութիւն. ոգի յօժար է՝
բայց մարմինս տկար։ * Եւ դարձեալ չո- 39
գաւ եկաց յաղօթս, եւ զնոյն բանս ասաց։
* Դարձաւ միւսանգամ անդրէն, եւ եգիտ 40
զնոսա 'ի քուն. քանզի էին աչք նոցա ծանրա-
ցեալ, եւ ոչ գիտէին թէ զինչ պատասխանի
տայցեն նմա։ * Գայ երրորդ անգամ, եւ 41
ասէ ցնոսա. ննջեցէք այսուհետեւ եւ հան-
գերո՛ւք, զի հասեալ է վախճան, եկն ժամ՝
եւ ահա մատնի որդի մարդոյ 'ի ձեռս մեղա-
ւորաց։ * Ո՛ն արիք գնասցուք. զի ահա- 42
ւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոցն է զիս։

* Եւ

43 * Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա
աշակերտացն մի յերկոտասանիցն անտի, ‖ և ‖Մատթ. 26. 47.
ընդ նմա ամբոխ սուսերօք և բրօք՝ ՚ի քահա- Ղուկ.
44 նայապետիցն և ՚ի դպրաց և ՚ի ծերոց։ * Տո- 22. 47.
ւեալ էր նշան մատնչին՝ և ասէր. ընդ որում Յովհ.
ես համբուրեցից՝ նա է. կալջիք զնա՝ և 18. 3.
45 տարջիք զգուշութ̃։ * Եւ մատուցեալ վաղ-
վաղակի՝ ասէ ցնա. ռաբբի ռաբբի. և համ-
46 բուրեաց զնա։ * Եւ նոքա արկին ՚ի նա
47 ձեռս՝ և կալան զնա։ * Եւ մի ոմն յայնցա-
նէ՝ որ զնովաւն կային՝ ձգեաց սուր, և ե-
հար զծառայ քահանայապետին, և ՚ի բաց
48 եհան զունկն նը̃։ * Պատասխանի ետ Յս̃ և
ասէ ցնոսա. իբրև ՚ի վերայ աւազակի ելիք
49 սուսերօք և բրօք ունել զիս։ * Հանապազ
առ ձեզ էի՝ և ուսուցանէի ՚ի տաճարին, և
ոչ կալայք զիս. այլ զի լցցին գիրք մարգա-
50 րէիցն։ * ‖ Յայնժամ թողին զնա աշակերտ- ‖Մատթ.
51 քըն ամենեքին՝ և փախեան։ * Եւ ոմն ե- 26. 56.
րիտասարդ զհետ երթայր նը̃՝ արկեալ զիւ-
րև կտաւ մի ՚ի մերկոյ. ունէին զնա երի-
52 տասարդքն։ * Եւ նորա թողեալ զկտաւն՝
53 փախեաւ մերկ ՚ի նոցանէ։ * ‖ Եւ տարան ‖Մատթ.
զՅս̃ առ քահանայապետն կայիափա. և գայ- 26. 57.
ին ընդ նմա ամ̃ քահանայապետքն՝ և դը- Ղուկ. 22. 54.
54 պիրք և ծերք։ * Եւ պետրոս երթայր ՚ի Յովհ.
հեռաստանէ զհետ նը̃ մինչև ՚ի ներքս իսկ 18. 13.
՚ի գաւիթ քահանայապետին, և նստէր ընդ
սպասաւորսն՝ և ջեռնոյր առ լուսոյն։
55 * ‖ Իսկ քահանայապետքն՝ և ամենայն ա- ‖Մատթ.
տեանն խնդրէին հակառակ ՚ի Յս̃ վկայութի- 26. 59.
ւն, զի սպանանիցեն զնա. և ոչ գտանէին։

* Զի

* Զի բազումք սուտ վկայութիւն վկայէին 56
զնմանէ, եւ նման միմեանց ոչ էին վկայու-
թիւնքն։ * Այլք յարուցեալ վկայէին սուտ 57
զնմանէ, եւ ասէին։ * Թէ մեք լուաք ՚ի 58
‖ Յհ. դմանէ՝ զի ասէր. ‖ Ես քակեցից զտաճարդ
2. 19. զայդ ձեռագործ, եւ զերիս աւուրս շինեցից
այլ՝ անձեռագործ։ * Սակայն եւ այն- 59
պէս չէր նման վկայութիւնն նոցա։ * Ապա յա- 60
րուցեալ քահանայապետն ՚ի մէջ՝ հարցանէր
զՅս, եւ ասէր. ոչ ինչ տաս պատասխանի,
զինչ դոքա զքէն վկայեն։ * Եւ նա լուռ եւ 61
եթ կայր՝ եւ ոչ այլ ինչ պատասխանէր։ Դար-
ձեալ քահանայապետն հարցանէր զնա կըր-
կին անգամ եւ ասէր. դու ես քս որդի այ
օրհնելոյն։ * Պատասխանի ետ յս եւ ասէ 62
‖ Մտթ. ցնա. դու ասացեր՝ թէ ես եմ. ‖ Բայց տե-
24. 30. սանիցէք զորդի մարդոյ նստեալ ը̅ն աջմէ զօ-
26. 64. րութեան, եւ եկեալ ը̅ն ամպս երկնից։ * Եւ 63
քահանայապետն պատառեաց վաղվաղակի
զպատմուճանս իւր՝ եւ ասէ. զի՞նչ եւս պի-
տոյ են մեզ վկայք։ * Ահա լուայք ամենե- 64
քին զհայհոյութիւն ՚ի բերանոյ դորա, զի՞նչ
թուի ձեզ։ եւ ամենեքեան դատապարտե-
ցին զնա՝ թէ մահապարտ է։ * Եւ ոմանք 65
սկսան թքանել ընդ երեսս նորա. ձորձ ըն-
դէմ արկանել՝ կռփել եւ ասել, մարգա-
րեա՛ց մեզ քս՝ ո՞վ է այն որ եհարն զքեզ.
‖ Մտթ. եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա։ * ‖ Եւ 66
26. 69. պետրոս մինչդեռ էր ՚ի խոնարհ ՚ի գաւթին,
Ղուկ. 22. 56. գայ աղախին մի քահանայապետին, * եւ 67
Յհն. 18. 17. տեսանէ զնա՝ զի ջեռնոյր. հայեցաւ ը̅ն նա՝
եւ ասէ. եւ դու ընդ յսի նազովրեցւոյ էիր։

* Նա

68 *Եւ նա ուրացաւ եւ ասէ. ոչ ճանաչեմ եւ ոչ
գիտեմ զինչ դուդ ասես՝ եւ ելեալ ել յար-
69 տաքին գաւիթն, եւ հաւ խօսեցաւ։ *Դար-
ձեալ ետես զնա աղախինն, եւ սկսաւ ասել
ցայնոսիկ որ շուրջն կային, թէ եւ սա 'ի նո-
70 ցանէ է։ *Եւ նա դարձեալ ուրացաւ։ Եւ
յետ սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային,
ասեն ցՊետրոս. արդարեւ եւ դու 'ի նոցանէ
ես քանզի Գալիլեացի ես՝ եւ խօսքդ քո
71 նման են։ *Եւ նա սկսաւ նզովել՝ երդնուլ
եւ ասել, թէ ոչ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ
72 ասէք։ *Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսե-
ցաւ. ‖ Եւ յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ‖ Վեր. 14. 30.
ցնա Յս, թէ չեւ՛ իցէ հաւու երկիցս խօսեալ՝ Յովհ.
զի դու երիցս ուրասցիս զիս. եւ սկսաւ լալ։ 13. 38.

## ԳԼ. ԺԵ.

1 Եւ ‖ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ ‖ Մտթ.
արարեալ քահանայապետիցն հանդերձ ծե- 27. 1.
րովքն եւ դպրօք՝ եւ ամ ատենն, կապեցին Ղուկ.
2 զՅս՝ եւ տարան մատնեցին Պիղատոսի։ *Եւ 23. 1. Յովհ.
հարց զնա Պիղատոս եւ ասէ. դո՞ւ ես թա- 18. 28.
գաւորն հրէից։ Նա պատասխանի ետ նմա
3 եւ ասէ՝ դու ասես։ *‖ Եւ չարախօսէին ‖ Մտթ.
զնմանէ յոյժ քահանայապետքն, եւ նա ոչ- 27. 12.
4 ինչ տայր պատասխանի։ *Իսկ Պիղատոս
դարձեալ հարցանէր զնա. ոչի՞նչ տաս պա-
տասխանի, տե՛ս՝ քանի՛ ամբաստանեն ըզ-
5 քէն։ *Եւ Յս այնուհետեւ ոչինչ ետ պա-
տասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղա-
6 տոսի։ *Բայց ընդ տօնի արձակէր նց զմի որ
7 զկապեալն, զոր ինքեանք խնդրէին։ *Եւ

Էր

էր որում անուն էր բարաբբաս՝ կապեալ
ընդ խռովիչսն, որոց 'ի խռովելն՝ այր մի սպա-
նեալ էր: * 'Ի ձայն բարձր սկսաւ աղաղա- 8
կել ամբոխն եւ խնդրել՝ որպէս սովոր էր, զի
արձակեսցէ նոցա զբարաբբայն: * Պատաս- 9
խանի ետ պիղատոս եւ ասէ ցնոսա. կամի՞ք՝ զի
արձակեցից ձեզ զարքայն հրէից: * Քան- 10
զի գիտէր թէ առ նախանձու մատնեցին ըզ-
նա քահանայապետքն: * Որք եւ զամբոխն 11
հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նմ զբարաբ-
Մատթ. բայն: * Դարձեալ պատասխանի ետ պիղա- 12
27. 22. տոս եւ ասէ ցնոսա. իսկ զի՞նչ կամիք թէ ա-
Ղուկ. 23. 14. րարից զարքայն հրէից: * Եւ նոքա դար- 13
Յովհ. ձեալ աղաղակեցին՝ յուզեալք 'ի քահանայա-
18. 40. պետացն, 'ի խաչ հան զդա: * Եւ ասէ ցնոսա 14
պիղատոս. զի՞նչ ինչ չար արարեալ իցէ դա-
րա: եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ա-
սէին, 'ի խաչ հան զդա: * Իսկ պիղատոս 15
իբրեւ զկամս կամեցաւ հաճել զամբոխին,
արձակեաց նոցա զբարաբբայն. եւ զյս գան
հարեալ ետ 'ի ձեռս, զի 'ի խաչ ելանիցէ:
Մատթ. * Եւ զինուորքն տարան զնա 'ի ներքս 'ի 16
27. 27. գաւիթն՝ որ հրապարակն էր. եւ կոչեն
Յովհ. 19. 2. միանգամայն զամ զգունդն, * եւ զգեցու- 17
ցանեն նմա քղամիդ կարմիր եւ ծիրանիս, եւ
եդին 'ի գլուխ նր պսակ արարեալ 'ի փշոց:
* Եւ սկսան ողջոյն տալ նմա՝ եւ ասել. ողջ 18
էր արքայդ հրէից: * Եւ ծեծէին զգլուխն 19
եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ 'ի
ծունր իջեալ երկիր պագանէին նմա: * Եւ 20
իբրեւ կատակեցին զնա՝ մերկացուցին ըզ-
քղամիդն եւ զծիրանիսն, եւ զգեցուցին նմա

զիւր

զիւր հանդերձսն, եւ ածին արտաքս զի 'ի
21 խաչ հանիցեն զնա։ *Եւ ածէին պահակ Մտթ. 27. 32.
զոմն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ ե- Ղկ. 23. 26.
կեալ յագարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ
Ռուփայ. զի բարձցէ զխաչափայտն նորա։
22 *Եւ ածեն զնա 'ի Գողգոթա՝ տեղի մի, որ
23 թարգմանի՝ տեղի կառափելոյ։ *Եւ տային
նմա գինի զմռսեալ, եւ նա ոչ առ. եւ հա-
24 նին զնա 'ի խաչ։ *Եւ բաժանեցին ըզ- Մտթ.
հանդերձս նր՟, արկեալ վիճակս 'ի վր՟ թէ 27. 35.
25 ո՛ զինչ առնուցու։ *Էր ժամ երրորդ՝ եւ Ղկ. 23. 34.
26 հանին զնա 'ի խաչ։ *Եւ էր գիր վնասու Յհ.
27 նր՟ գրեալ՝ թէ Թագաւոր է հրէից։ *Եւ 19. 23.
ը՟ նմա հանին 'ի խաչ երկուս աւազակս. մի
28 ընդ աջմէ, եւ մի ը՟ ահեկէ նր՟։ *Եւ լցաւ Եսայ.
գիրն որ ասէ, թէ ը՟ անօրէնս համարեցաւ։ 53. 12.
29 *Եւ որք անցանէինն՝ հայհոյէին զնա շար-
ժեալ զգլուխս իւրեանց եւ ասէին. Վա՜հ Յհ.
որ քակէիր զտաճարն՝ եւ զերիս աւուրս շի- 2. 19.
30 նէիր. *ապրեցո՛ զանձն քո եւ էջ 'ի խաչէդ։
31 *Նոյնպէս եւ քահանայապետքն այպն ա-
րարեալ ը՟ միմեանս հանդերձ դպրօքն՝ ա-
սէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապ-
32 րեցուցանել։ *Քս՟ արքայն Իէլի, իջցէ
այժմ 'ի խաչէ այտի, զի տեսցուք եւ հաւա-
տասցուք զմա. եւ որ ը՟ նմա 'ի խաչն ելեալ
33 էին՝ նախատէին զնա։ *Եւ իբրեւ վեց
ժամ եղեւ՝ խաւար կալաւ զամ երկիր մին-
34 չեւ ցինն ժամ։ *Եւ յիններորդ ժամուն ա-
ղաղակեաց Յս 'ի ձայն մեծ, եւ ասէ. Էլի՝ Սղ.
էլի՝ լամա սաբաքթանի. որ թարգմանի. 21. 2.
35 Ա՟ծ իմ Ա՟ծ իմ՝ ընդէ՞ր թողեր զիս։ *Եւ Մտթ. 27. 46.
ոմանք

ոմանք ՚ի նոցանէ որ շուրջն կային զնովաւ՝
իբրեւ լուան, ասէին թէ զԵղիա կարդայ։
*Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի 36
քացախով, եւ հարեալ յեղեգան՝ տայր ըմ-
պել նմա, եւ ասէ. Թո՛յլ տուք տեսցուք՝ գայ
Եղիա իջուցանել զդա։ *Եւ Յս արձակեաց 37
ձայն մեծ՝ եւ եհան զոգի։ *Եւ վարագոյր 38
տաճարին պատառեցաւ յերկուս՝ ՚ի վերուստ
մինչեւ ՚ի խոնարհ։ *Եւ տեսեալ հարիւրա- 39
պետին որ կայր անդ՝ եթէ աղաղակեաց եւ
եհան զոգի, ասէ. արդարեւ այրս այս որդի
‖Մատթ. այ էր։ *‖Էին եւ կանայք՝ որ հայէին ՚ի հե- 40
27. 55. ռաստանէ. յորս էր Մարիամ Մագդաղենա-
ցի, եւ Մարիամ Յակովբու փոքրկան, եւ Յով-
սեայ մայրն, եւ Սաղոմէ. * որք յորժամ 41
‖Ղուկ. 8. 2. էրն ՚ի Գալիլեա՝ ‖զհետ շրջէին նմա եւ պաշ-
տէին զնա. եւ այլ բազում կանայք որ ընդ նմա
իսկ ելեալ էին յԵմ.
‖Մատթ. *‖Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ 42
27. 57. էր որ ՚ի շաբաթն մտանէր, *‖Եկեալ Յով- 43
Ղուկ. 23. 50. սէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պարկեշտ նա-
‖Յովհ. խարար, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայու-
19. 38. թեան այ. համարձակեցաւ՝ եմուտ առ Պի-
ղատոս, եւ խնդրեաց զմարմինն Յի։ *Եւ 44
Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մե-
ռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն,
եհարց զնա եւ ասէ՝ թէ արդարեւ այնչափ
վա՞ղ մեռաւ։ *Եւ իբրեւ ստուգեաց ՚ի հա- 45
րիւրապետէն անտի, շնորհեաց զմարմինն
Յովսեփայ։ *Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ եւ 46
իջուցեալ զնա պատեաց կտաւովն, եւ եդ ՚ի
գերեզմանի, զոր էր փորեալ ՚ի վիմէ. եւ

թա-

թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն գերեզմանին ։
47 * Իսկ մարիամ մագդաղենացի՝ եւ մարիամ
յակովբեայ՝ եւ յովսեայ, տեսին զտեղին ուր
եդաւ ։

## ԳԼ. ԺԶ.

1 Եւ ‖ իբրեւ անց շաբաթն, մարիամ մագդա- ‖ Մտ.
ղենացի՝ եւ մարիամ յակովբեայ եւ սաղոմէ՝ 28. 1.
զորան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն Ղուկ.
2 օծցեն զնա ։ * Եւ ընդ առաւօտս միաշա- 24. 1.
բաթուն գան 'ի գերեզմանն ընդ արեւա- Յովհ.
3 գալն, * եւ ասէին ցմիմեանս, ո՞վ թաւալե- 20. 1.
ցուսցէ մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին ։
4 * Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցու-
ցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն. քանզի էր
5 մեծ յոյժ ։ * Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզ-
մանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ
աջմէ կողմանէ զգեցեալ պատմուճան սպի-
6 տակ, եւ զարհուրեցան ։ * Եւ նա ասէ ցնոսա.
մի՛ երկնչիք, զՅիսուս խնդրէք զնազովրեցի զխա-
չեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւասիկ
7 տեղին՝ ուր եդին զնա ։ * Այլ երթայք ա-
սացէք ցաշակերտսն նորա՝ եւ ցպետրոս, եթէ
ահա յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի գա-
լիլեա, անդ տեսանիցէք զնա՝ ‖ որպէս ա- ‖ Վեր.
8 սացն ձեզ ։ * Եւ իբրեւ լուան՝ ելին եւ փա- 14. 28.
խեան 'ի գերեզմանէն, քանզի զահի հա-
րեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի
երկնչէին ։
9 * Յարուցեալ յա՛ռաւօտուն առաջնոյն միա-
շաբաթուն՝ ‖ երեւեցաւ մարիամու մագդա- ‖ Ղուկ.
ղենացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն դեւն ։ 8. 2.
* Եւ Յովհ.
20. 16.

*Նա երթեալ պատմեաց այնոցիկ՝ որ ընդ 10
նմայն էին, մինչ դեռ սգային և լային։ *Եւ նո- 11
քա իբրև լուան թէ կենդանի է՝ և երևե-
Ղուկ. ցաւ նմա, ոչ հաւատացին։ *Յետոյ երևե- 12
24. 13. ցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յան-
դաստան։ *Եւ նոքա չոգան պատմեցին այ- 13
լոց, և ոչ նոցա հաւատացին։ *Յետոյ մինչ 14
դեռ բազմեալ էին մետասանքն երևեցաւ
նոցա, և թշնամանեաց զանհաւատութիւն նոցա,
և զխստասրտութիւն. զի որ երևեցաւ նոցա
յարուցեալ ՚ի մեռելոց՝ և նոցա ոչ հաւատա-
ցին։ *Եւ ասէ ցնոսա, երթայք յաշխարհ 15
ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն
արարածոց։ *Որ հաւատայ և մկրտեսցի՝ 16
կեցցէ, և որ ոչն հաւատայ դատապարտես-
ցի։ *Նշանք այսոքիկ՝ որ հաւատոցն, եր- 17
Գործ. թիցեն զհետ այնոցիկ. յանուն իմ դևս
16. 18. հանցեն, լեզուս խօսեսցին, *՚ի ձեռս բե- 18
2. 4. 10. 46. րեսցեն օձս բարձցեն, և եթէ մահացու
28. 5. ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ. ՚ի
28. 8. վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ և բժշկեսցին։
Ղուկ. *Եւ Տէրն Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա համ- 19
24. 51. բարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։
Գործ. 1. 9. *Եւ նոքա ելեալ քարոզեցին ընդ ամենայն երկիր՝ 20
Տեառն գործակցութեամբ. և զբանն հաստատէր
նշանօքն՝ որ երթային զհետ նոցա։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ·

Աւետարանս որ ըստ Ղուկասու գրեցաւ։ [illegible] Ղուկաս աշակերտ էր Պետրոսի, և [illegible] ընթացակից Պաւղոսի, և վկայեցաւ ՚ի նմանէ [illegible] գրեաց զաւետարանս զայս։ [illegible] ՚ի [illegible], և [illegible]։ [illegible] բժիշկն. [illegible] և [illegible] ՚ի [illegible] ՚ի [illegible], և ՚ի [illegible]։ [illegible] և [illegible]. և [illegible] ՚ի [illegible]. և [illegible], և [illegible]. [illegible] և [illegible]. և [illegible], և [illegible]՝ որ [illegible], և [illegible]. [illegible]. և [illegible]՝ [illegible]։ [illegible] ՚ի [illegible], և [illegible]. և [illegible]

[illegible]։

[illegible]. [illegible]. և [illegible] ՚ի [illegible]։ [illegible]. [illegible]՝ [illegible]։ [illegible] ՚ի [illegible]՝ [illegible]։ [illegible]՝ [illegible]։

# ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

## Աւետարանին որ ըստ Ղուկայ։


| | Գլ. | Հ. |
|---|---|---|
| Վասն աշխարհագրին. | Բ. | 1. |
| Վասն բացօթեայ հովուացն. | Բ. | 8. |
| Վասն Սիմէոնի. | Բ. | 25. |
| Վասն մարգարէին Աննայի. | Բ. | 36. |
| Վասն լինելոյ բանին Այ առ Յովհաննէս. | Գ. | 2. |
| Վասն՝ որոց հարցանէին զՅովհաննէս. | Գ. | 10. |
| Վասն փորձութեանց Փրկչին. | Դ. | 2. |
| Վասն՝ որ ունէր ոգի դիւական. | Դ. | 33. |
| Վասն զոքանչին Պետրոսի. | Դ. | 38. |
| Վասն՝ որոց բժշկէին ՚ի պէսպէս հիւանդութեանց. | Դ. | 40. |
| Վասն որսոյ ձկանցն. | Ե. | 4. |
| Վասն բորոտին. | Ե. | 12. |
| Վասն անդամալուծին. | Ե. | 15. |
| Վասն Ղեւեայ մաքսաւորին. | Ե. | 27. |
| Վասն գօսացելոյ ձեռանն. | Զ. | 6. |
| Վասն առաքելոցն համարոյ. | Զ. | 13. |
| Վասն երանութեանցն. | Զ. | 20. |
| Վասն հարիւրապետին. | Է. | 2. |
| Վասն որդւոյ այրւոյն. | Է. | 12. |
| Վասն որոց առաքեցանն ՚ի Յովհաննէ. | Է. | 19. |
| Վասն օծանելոյ զՏէրն միւռոնաւն. | Է. | 38. |
| Վասն առակին սերմանացանին. | Ը. | 5. |
| Վասն սաստելոյ ծովուն. | Ը. | 24. |
| Վասն՝ որ ունէր լեգէոնն. | Ը. | 27. |
| Վասն դստեր ժողովրդապետին. | Ը. | 41. |


Վասն

| | | |
|---|---|---|
| Վասն տեռատեսի կնոջն. | Ը. | 43. |
| Վասն առաքելոյ զերկոտասանսն. | Թ. | 2. |
| Վասն հինգ հացիցն, և երկուս ձկանցն. | Թ. | 13. |
| Վասն զաշակերտսն հարցանելոյ. | Թ. | 18. |
| Վասն այլակերպութեանն Տեառն. | Թ. | 29. |
| Վասն լուսնահարին. | Թ. | 39. |
| Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ մեծ իցէ. | Թ. | 46. |
| Վասն յօժարելոյն հետեւել զնի երթալ. | Թ. | 57. |
| Վասն երեւեցուցանելոյ զեօթանասունսն. | Ժ. | 1. |
| Վասն հարցանելոյ օրինականին. | Ժ. | 25. |
| Վասն անկելոյն 'ի ձեռս աւազակաց. | Ժ. | 30. |
| Վասն Մարթայի և Մարիամայ. | Ժ. | 38. |
| Վասն յաղօթս կալոյն. | Ժա. | 1. |
| Վասն խուլ դիւին. | Ժա. | 14. |
| Վասն՝ որ երանեաց կին 'ի ժողովրդեանն. | Ժա. | 27. |
| Վասն նշան խնդրելոյն. | Ժա. | 29. |
| Վասն՝ որ փարիսեցին խնդրեաց ճաշել. | Ժա. | 37. |
| Վասն վայ տալոյ օրինականացն. | Ժա. | 46. |
| Վասն խմորոյ փարիսեցւոցն. | Ժբ. | 1. |
| Վասն բաժանելոյ ժառանգն ընդ եղբօրն. | Ժբ. | 13. |
| Վասն զարգացելոյ անդոյ մեծատանն. | Ժբ. | 16. |
| Վասն Գալիլեացւոցն և որոց 'ի Սիլովամ. և վասն թզենւոյն. | Ժգ. | 1. |
| Վասն կորացեալ կնոջն այսահարի. | Ժգ. | 11. |
| Վասն մանանխոյն. | Ժգ. | 19. |
| Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն. | Ժգ. | 23. |
| Վասն՝ որք ասացին զմ̅ Հերովդէէ. | Ժգ. | 31. |
| Վասն՝ որ ջրգողացեալն էր. | Ժդ. | 2. |
| Վասն՝ որք ընտրէին զնախագահս. | Ժդ. | 7. |
| Վասն կոչելոյն յընթրիսն. | Ժդ. | 12. |
| Վասն շինելոյ աշտարակին. | Ժդ. | 28. |
| Վասն հարիւր ոչխարացն. | Ժե. | 4. |

Վասն անառակ որդւոյն. ժե. 11.
Վասն անիրաւ տնտեսին. ժզ. 1.
Վասն մեծատանն, եւ ղազարու. ժզ. 19.
Վասն տասն բորոտացն. ժէ. 12.
Վասն անիրաւ դատաւորին. ժը. 2.
Վասն փարիսեցւոյն, եւ մաքսաւորին. ժը. 10.
Վասն հարցանելոյ մեծատանն զՅս. ժը. 18.
Վասն կուրին. ժը. 35.
Վասն զակքէոսի. ժթ. 2.
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն
եւ դառնալոյ. ժթ. 12.
Վասն տալոյ զտասն մնասն. ժթ. 13.
Վասն յաւանակին. ժթ. 30.
Վասն հարցանելոյ քահանայիցն զՏր. ի. 1.
Վասն առակի այգւոյն. ի. 9.
Վասն դահեկանին. ի. 23.
Վասն սադուկեցւոցն. ի. 27.
Վասն՝ թէ զիարդ է որդի դաւթի քս. ի. 41.
Վասն երկու լումայի այրւոյն. իա. 2.
Վասն հարցման կատարածին. իա. 7.
Վասն զատկին. իբ. 1.
Վասն վիճելոյն՝ թէ ով մեծ իցէ. իբ. 24.
Վասն խնդրելոյն սատանայի փորձել զաշակերտսն. իբ. 31.
Վասն նախատանաց հերովդի. իգ. 11.
Վասն կոծելոյ կանանցն. իգ. 27.
Վասն ապաշխարելոյ աւազակին. իգ. 40.
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն. իգ. 52.
Վասն իւղաբեր կանանցն. իդ. 1.
Վասն կղէովպեանցն. իդ. 13.
Վասն համբառնալոյն տն. իդ. 51.



ՍՐ․ ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

### ԳԼ. Ա.

1 ՔԱՆԶԻ ԲԱԶՈՒՄՔ
յօժարեցին վերստին կարգել
զպատմութիւն վասն իրացն
2 հաստատելոց 'ի մեզ. * որպէս աւանդե-
ցին մեզ՝ որ 'ի սկզբանէ ականատեսք և
3 սպասաւորք եղեն բանին. * Կամ եղև և
ինձ, որ 'ի սկզբանէ զհետ երթեալ էի ամե-
նայնի՝ ճշմարտութեամբ կարգաւ գրել քեզ՝
4 քաջդ Թէոփիլէ. * զի ծանիցես զբանիցն՝
որոց աշակերտեցար, զճշմարտութիւն.
5 * Եւ եղև յաւուրս Հերովդի արքայի Հրէաս-
տանի, քահանայ ոմն անուն Զաքարիաս ‖ 'ի ‖ Ա Մն. 24. 10.
դասակարգէ Աբիայ. և կին նորա 'ի դստերաց
6 Ահարոնի, և անուն նորա Եղիսաբեթ. * Եւ
էին արդարք երկոքին առաջի այ, գնային
յամ պատուիրանս և յիրաւունս տն անա-
7 րատք. * Եւ ոչ գոյր նոցա որդեակ, քանզի Ե-
ղիսաբեթ ամուլ էր. և երկոքեան անցեալ

էին

էին զաւուրբք իւրեանց ։ * Եւ եղեւ ՚ի քա- 8
հանայանալն նր ՚ի կարգի աւուրցն հասա-
նելոյ առաջի այ, * ըստ օրինի քահանայու- 9
թեանն՝ եհաս նմա խունկ արկանել մտանել ՚ի
Ելից. տաճարն տն. * Եւ ամ բազմութիւն ժողովր- 10
30. 8. դեանն կային յաղօթս արտաքոյ՝ ՚ի ժամ
Ղեւ. խնկոցն ։ * Եւ երեւեցաւ նմա հրեշտակ տն. 11
16. 17. զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն ։ * Եւ 12
խռովեցաւ զաքարիա՝ իբրեւ ետես, եւ ան-
կաւ ահ ՚ի վր նորա ։ * Ասէ ցնա հրեշտակն 13
տն. մի երկնչիր զաքարիա՝ զի լուեալ եղեն ա-
ղօթք քո, եւ կին քո եղիսաբեթ ծնցի քեզ
որդի՝ եւ կոչեսցես զանուն նր յովհաննէս ։
* Եւ եղիցի քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն. 14
եւ բազումք ՚ի ծննդեան նորա խնդասցեն.
* զի եղիցի մեծ առաջի տն. եւ գինի եւ օղի 15
մի արբցէ. եւ հոգւով սրբով լցցի անդստին
յորովայնէ մօր իւրոյ ։ * Եւ զբազումս յորդ- 16
ւոցն իլի դարձուսցէ ՚ի տր ած իւրեանց ։
* Եւ ինքն եկեսցէ առաջի նր հոգւով զօ- 17
Մաղաք. րութեամբ եղիայի, դարձուցանել զսիրտս հարց
4. 6. յորդիս, եւ զանհաւանս յիմաստութիւն արդա-
Մաթ. 11. 14. րոց. պատրաստել տն ժողովուրդ կազմեալ ։
* Եւ ասէ զաքարիա ցհրեշտակն. եւ ի՞ւ գի- 18
տացից զայդ. զի ես ծեր եմ, եւ կին իմ ան-
ցեալ զաւուրբք իւրովք ։ * Պատասխանի ետ 19
հրեշտակն եւ ասէ ցնա. ես եմ գաբրիէլ՝ որ
կամ առաջի այ, եւ առաքեցայ խօսել ընդ
քեզ՝ եւ աւետարանել քեզ զայդ ։ * Եւ ա- 20
հա եղիցիս համր, եւ մի կարասցես խօսել
մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի. փոխանակ
զի ոչ հաւատացեր բանից իմոց՝ որք լցցին ՚ի
ժա-

21 ժամանակի իւրեանց։ * Եւ ժողովուրդն
ակն ունէր զաքարիայ, և զարմանային ընդ
22 յամելն նորա 'ի տաճարին. * Եւ իբրև ել՝
ոչ կարէր խօսել ընդ նոսա. և իմացան թէ տե-
սիլ ետես 'ի տաճարին. և նա նշանացի խօ-
23 սէր ընդ նոսա, և կայր պապանձեալ։ * Եւ ե-
ղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա,
24 գնաց 'ի տուն իւր. * և յետ աւուրցն այնո-
ցիկ յղացաւ Եղիսաբեթ կին նր, և թա-
քուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր։
25 * Օ՜ինչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝
յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ
'ի մարդկանէ։
26 * Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ գաբ-
րիէլ հրեշտակ յԱյ 'ի քաղաք մի գալիլեաց-
27 ւոց, որում անուն էր նազարեթ, * առ կոյս
խօսեցեալ առն, որում անուն էր յովսէփ՝ 'ի
տանէ դաւթի. և անուն կուսին մարիամ։
28 * Եւ եկեալ առ նա՝ ասէ. ուրախ լեր բերկ-
29 րեալդ Տէր ընդ քեզ։ * Եւ նա ընդ բանն
խռովեցաւ, և խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի՞
30 իցէ ողջոյնս այս։ * Եւ ասէ ցնա հրեշ-
տակն. մի երկնչիր մարիամ, զի գտեր շնոր-
31 հս յԱյ։ * ‖ Եւ ահա յղասջիր՝ և ծնցես ‖ Եսայ.
32 որդի. ‖ և կոչեսցես զանուն նր Յս։ * Սա 7. 14.
եղիցի մեծ, և որդի բարձրելոյ կոչեսցի. և ‖ Կայ.
տացէ նմ Տէր ԱԾ զաթոռն դաւթի հօր նր. 2. 21.
‖ և թագաւորեսցէ 'ի վերայ տանն յակով- ‖ Դան.
33 բայ 'ի յաւիտեանս. * և թագաւորութե- 7. 14.
34 նր վախճան մի լիցի։ * Եւ ասէ մարիամ և 27.
ցհրեշտակն. զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի Միք.
35 զի զայր ոչ գիտեմ։ * Պատասխանի ետ հր- 4. 7.

րեշ

րեշտակն և ասէ ցնա. Հոգի ս՟բ եկեսցէ 'ի
քեզ, և զօրութի՟ւն բարձրելոյն հովանի լիցի
'ի վ՟ր քո. քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն՝
ս՟բ է, և որդի Ա՟յ կոչեսցի. * Եւ ահա Ե- 36
ղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի է 'ի ծե-
րութ՟ն իւրում. և այս վեցերորդ ամիս է ն՟ր՝
որ ամուլն կոչեցեալ էր. * զի ոչ տկարասցի 37
առ յԱ՟յ ամենայն բան. * Եւ ասէ Մարիամ. 38
ահաւասիկ կամ աղախին Տ՟ն, եղիցի ինձ
ըստ բանի քում. և գնաց 'ի նմանէ հրեշ-
տակն.
* Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, 39
գնաց 'ի լեռնակողմն փութապէս 'ի քաղաքն
Յուդայ. * Եւ եմուտ 'ի տուն Զաքարիայ, 40
և ետ ողջոյն Եղիսաբեթի. * Եւ եղև իբ- 41
րև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ,
խաղաց մանուկն յորովայնի նորա. և լցաւ
Եղիսաբեթ Հոգւով սրբով. * և 'ի ձայն 42
բարձր աղաղակեաց և ասէ. օրհնեալ ես դու
'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի
քո. * Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ 43
մայր Տ՟ն իմոյ առ իս. * Զի ահաւասիկ իբ- 44
րև եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խա-
ղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում.
* Եւ երանի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի 45
կատարումն ասացելոցս նմա 'ի Տ՟նէ. * Եւ 46
ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏ՟ր.
* և ցնծասցէ հոգի իմ յԱ՟ծ փրկիչ իմ. 47
* Զի հայեցաւ 'ի խոնարհութի՟ն աղախնոյ 48
իւրոյ. զի ահա յայսմ հետէ երանեսցեն ինձ
ամ՟ ազգք. * Զի արար ինձ մեծամեծս Հզ- 49
օրն, և ս՟բ է անուն նորա. * Եւ ողորմու- 50

թի

թի՛նդ ազգաց յազգս երկիւղածաց իւրոց ։
51 * ‖ Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց ‖ Եսայ. 51. 9.
զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց ։ Սաղմ.
52 * Քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրա- 32. 10.
53 ցոյց զխոնարհս ։ * Զքաղցեալս լցոյց բա- ‖ Ա Թագ.
րութ՛բ, և զմեծատունս արձակեաց ունայնս ։ 2. 5. Սաղմ.
54 * Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յի- 33. 11.
55 շել զողորմութիւն ։ * Որպէս խօսեցաւ առ
հարս մեր՝ ‖ Աբրահամու և զաւակի նորա ‖ Ծննդ.
56 յաւիտեան ։ * Եկաց Մարիամ առ նմ̅ իբրև 17. 9. 22. 16.
ամիսս երիս, և դարձաւ ՚ի տուն իւր ։ Սաղմ.
57 * Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանե- 131. 11.
58 լոյ, և ծնաւ որդի ։ * Եւ լուան որ շուրջ զնո- Եսայ. 41. 8.
վաւ էին՝ և ազգատոհմ նորա, զի մեծ արար
Տր̅ զողորմութիւն իւր ընդ նմա. և խնդային ընդ
59 նմա ։ * Եւ եղև յաւուրն ութերորդի՝ եկին
թլփատել զմանուկն, և կոչէին զնա յանուն
60 հօր իւրոյ Զաքարիա ։ * Պատասխանի ետ
մայր նորա և ասէ. ոչ՝ այլ կոչեսցի Յովհաննէս ։
61 * Եւ ասեն ցնա. չիք ոք է յազգի քում,
62 որոյ կոչի անուն Յովհաննէս ։ * Ակնարկէին
63 հօրն նորա՝ թէ զինչ կամիցի կոչել զնա ։ * Եւ
խնդրեաց տախտակ, գրեաց ‖ և ասէ. Յով- ‖ Վեր. 1. 13.
հաննէս է անուն դորա. և զարմացան ա-
64 մենեքին ։ * Եւ բացաւ բերան նորա վաղվա-
ղակի՝ և լեզու նորա, և խօսէր՝ և օրհնէր
65 զԱծ̅ ։ * Եւ եղև ահ ՚ի վերայ ամենեցուն որ
լսէին զայս, և որ շուրջ բնակեալ էին զնո-
քօք. և ընդ ամ̅ լեռնակողմն Հրէաստանի
66 պատմէին ամ̅ բանքս այսոքիկ ։ * Եւ եդին
ամենեքեան որ լսէինն ՚ի սիրտս իւրեանց,
և ասէին. զինչ լինիցի մանուկս այս ։ Եւ

ձեռն

ձեռն տն էր ընդ նմա ։ * Եւ զաքարիա հայր 67
նր լցաւ հոգւով սրբով, մարգարէացաւ եւ
‖ Սղմ. ասէ ։ * ‖ Օրհնեալ տր ած իէլի, զի յայց 68
73. 12. ել մեզ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւ֊
‖ Սղմ. րում ։ * ‖ Եւ յարոյց եղջիւր փրկութե մեզ 69
131. 17. 'ի տանն դաւթի ծառայի իւրոյ ։ * ‖ Որպէս 70
‖ Երեմ. 30. 10. խօսեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից
մարգարէքն նր էին . * Փրկութիւն 'ի թշնա֊ 71
մեաց մերոց, եւ 'ի ձեռաց ամ ատելեաց մե֊
րոց ։ * Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, 72
‖ Ծննդ. եւ յիշել զուխտն իւր սուրբ ։ * ‖ Զերդումն 73
22. 16. զոր երդուաւ աբրահամու հօր մերում՝ տալ
Երեմ. 31. 33. մեզ, * առանց երկիւղի, 'ի ձեռաց թշնա֊ 74
Եբրա. 6. 13. մեաց մերոց փրկեալս . Պաշտել զնա * սր֊ 75
բութեամբ եւ արդարութեամբ առաջի նորա զամ
աւուրս կենաց մերոց ։ * Եւ դու մանուկ՝ 76
մարգարէ բարձրելոյ կոչեսցիս . զի երթի֊
ցես առաջի երեսաց տն պատրաստել զճա֊
‖ Վեր. ճանապարհս նր . * ‖ Տալ գիտութիւն փրկութեան 77
1. 17. ժողովրդեան նր, 'ի թողութիւն մեղաց նց ։
* Վասն գթութեանց ողորմութեան այ մերոյ, 78
‖ Զաք. որովք այց արասցէ մեզ ‖ արեգակն 'ի բար֊
3. 8. ձանց ։ * Երեւել որոց 'ի խաւարի եւ 'ի ստո֊ 79
6. 12. ւերս մահու նստէին . ուղղել զոտս մեր 'ի
Մաղ. 4. 2. ճանապարհս խաղաղութեան . * Եւ մանուկն 80
աճէր՝ եւ զօրանայր հոգւով . եւ էր յանա֊
պատս մինչեւ յօր երեւելոյ նր իէլի ։

## ԳԼ: Բ.

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 1
հրաման յօգոստոս կայսերէ՝ աշխարհագիր
առնել ընդ ամենայն տիեզերս ։ * Այս ա֊ 2
ռա

առաջին աշխարհագիր եղև 'ի դատաւորութե̃
3 ասորւոց կիւրենեայ։ *Եւ երթային ամե-
նեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքան-
4 չիւր քաղաքի։ *Ել և յովսէփ 'ի գալիլեէ 'ի
քաղաքէ նազարեթէ՝ 'ի հրէաստան 'ի քա-
ղաք դաւթի, ‖ որ կոչի բեթղեհէմ. վասն ‖ Միք. 5. 2.
5 լինելոյ նր̃ա 'ի տանէ և յազգէ դաւթի, *մ- Մ--թ. 2. 6.
տանել յաշխարհագիր մարեմաւ հանդերձ՝
6 զոր խօսեալն էր նմա, և էր յղի։ *Եւ ե-
ղև 'ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք
7 ծնանելոյ նր̃ա։ *Եւ ծնաւ զորդին իւր զանդ-
րանիկ, և պատեաց 'ի խանձարուրս՝ և եդ
զնա 'ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յի-
ջեւանին։
8 *Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ բաց-
օթեայք, որ պահէին զպահպանութիւս գի-
9 շերոյ հօտից իւրեանց։ *Եւ հրեշտակ տ̃ն
երևեցաւ նոցա, և փառք տ̃ն ծագեցին առ
10 նս̃. և երկեան երկիւղ մեծ։ *Եւ ասէ ցն̃ս
հրեշտակն. մի՛ երկնչիք՝ զի ահաւասիկ աւե-
տարանեմ ձեզ ուրախութի̃ն մեծ, որ եղիցի
11 ամենայն ժողովրդեանն. *զի ծնաւ ձեզ
այսօր փրկիչ, որ է օծեալ տ̃ր 'ի քաղաքի
12 դաւթի։ *Եւ այս նշանակ ձեզ. գտանի-
ցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և ե-
13 դեալ 'ի մսուր։ *Եւ յանկարծակի եղև ըն̃
հրեշտակին ընդ այնմիկ բազմութի̃ն զօրաց
երկնաւորաց, որ օրհնէին զա̃ծ՝ և ասէին.
14 *Փառք 'ի բարձունս ա̃յ, և յերկիր խաղա-
15 ղութի̃, 'ի մարդիկ հաճութիւն։ *Եւ եղև
իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յեր-
կինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք եր-
թի

թիցուք մինչեւ ցԲեթղեհէմ, եւ տեսցուք
զի՞նչ է բանս այս որ եղեւ. զոր Տէր եցոյց
մեզ։ *Եւ եկին փութանակի. եւ գտին 16
զՄարիամ եւ զՅովսէփ եւ զմանուկն եդեալ
՚ի մսուր։ *Եւ ծանեան վասն բանին՝ որ ա- 17
սացաւ նոցա զմանկանէն։ *Եւ ամենեքեան 18
որ լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խօ-
սեցան ընդ նոսա հովիւքն։ *Եւ Մարիամ զամե- 19
նայն զբանս զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լի-
նէր ՚ի սրտի իւրում։ *Եւ դարձան հո- 20
վիւքն, փառաւոր առնէին եւ օրհնէին զԱստուած
վասն ամենայնի՝ զոր լուան եւ տեսին. որպէս պատ-
‖ Ծննդ. մեցաւ նոցա։ *‖ Եւ իբրեւ լցան աւուրք ութ 21
17. 12. թլփատել զնա, եւ կոչեցաւ անուն նորա ‖ Յիսուս՝
Ղեւտ. 12. 3. որ կոչեցեալն էր ՚ի հրեշտակէն, մինչչեւ յղա-
‖ Ղուկ. ցեալ էր զնա յորովայնի։
1. 31. *Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ‖ ըստ 22
‖ Ղեւտ. 12. 6. օրինացն Մովսէսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդի-
ման առնել Տեառն։ *որպէս եւ գրեալ է յօրէնս 23
‖ Ելից. Տեառն, ‖ թէ Ամենայն արու որ բանայ զարգանդ՝
13. 2. սուրբ Տեառն կոչեսցի։ *Եւ տալ պատարագ՝ 24
Թուոց. 8. 16. ըստ ասացելոյն ‖ յօրէնս Տեառն, զոյգս տատրա-
‖ Ղեւտ. կաց, կամ երկուս ձագս աղաւնեաց։ *Եւ 25
12. 8. ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սի-
մէովն. եւ էր այրն այն արդար եւ երկիւղած.
եւ ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի, եւ Հոգի
Սուրբ էր ՚ի նմա։ *Եւ էր նորա հրաման առեալ 26
՚ի Հոգւոյն Սրբոյ՝ մի տեսանել զմահ, մինչեւ
տեսցէ զՕծեալն Տեառն։ *Եւ եկն Հոգւովն ՚ի 27
տաճարն. եւ իբրեւ ածին ծնօղքն զմանուկն
Յիսուս առնել նմա ըստ սովորութեան օրինացն ՚ի վերայ
նորա. *Եւ նա առընկալաւ զնա ՚ի գիրկս իւր, 28
եւ

29 և օրհնեաց զա՟ծ, և ասէ. * Արդ՝ արձակես
զծառայս քո տ՟ր ը՟ս բանի քում ՚ի խաղաղու-
30 թեն. * զի տեսին աչք իմ զփրկութիւն քո.
31 * զոր պատրաստեցեր առաջի ամ՟ ժողովր-
32 դոց. * Լոյս ՚ի յայտնութ՟ն հեթանոսաց,
33 և փառս ժողովրդեան քում իէ՟լի. * Եւ
էին հայրն և մայրն նր՟ զարմացեալ ՚ի վերայ
34 բանիցն, որ խօսէին զնմանէ. * Եւ օրհ-
նեաց զնս՟ սիմէոն, և ասէ ցմարիամ մայր
նր՟. Ահա սա կայ ՚ի գլորումն և ՚ի կանգ- Եսայ.
նումն բազմաց ՚ի մէջ իէ՟լի, և ՚ի նշան հա- 8. 14.
35 կառակութե՟ն. * Եւ ընդ քո իսկ անձն անց- Հռովմ. 9. 33.
ցէ սուր. զի յայտնեսցին ՚ի բազմ՟ սրտից խոր- 1. Պետ.
36 հուրդք. * Եւ անդ էր աննա մարգարէ՝ 2. 7.
դուստր փանուէլի յազգէ ասերայ. սա ինքն
անցեալ էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ ը՟ն
37 առն ամս եօթն ՚ի կուսութենէ իւրմէ. * Եւ
էր այրի ամաց իբրև ութսուն և չորից. որ
ոչ մեկնէր ՚ի տաճարէն, այլ պահօք և աղօ-
38 թիւք պաշտէր զցայգ և զցերեկ. * Եւ սա
՚ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զա՟ծ,
և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ ակն ու-
39 նէին փրկութե՟ն երէ՟մի. * Եւ իբրև կատա-
րեցին զամ՟ ը՟ս օրինացն տ՟ն, դարձան անդ-
րէն ՚ի գալիլեա ՚ի քաղաքն իւրեանց նա-
40 զարէթ. * Եւ մանուկն աճէր և զօրանայր
լի իմաստութ՟բ. և շնորհք ա՟յ էին ՚ի վ՟ր նր՟.
41 * Եւ երթային ծնողք նր՟ ամի ամի յե՟մ Ելից.
42 ՚ի տօն զատկին. * Եւ իբրև եղեն նր՟ ամք 23. 15.
երկոտասան, ելանել նոցա յե՟մ ըստ սո- 34. 18.
43 վորութե՟ն տօնին, * և կատարել զաւուրսն՝ և 2. Օրի. 16. 1.
դառնալ անդրէն, մնաց յ՟ս մանուկն յե՟մ.

և

եւ ոչ գիտացին ծնողքն նորա։ *Կարծէին ընդ 44
նմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին երթե-
աւուր միոյ ճանապարհ՝ եւ խնդրէին զնա ընդ
դրացիս եւ ընդ ծանօթս։ *Եւ իբրեւ ոչ 45
գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա։
*Եւ եղեւ յետ երից աւուրց՝ գտին զնա ՚ի 46
տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն.
լսէր ՚ի նոցանէ, եւ հարցանէր զնոսա *Զար- 47
մանային ամենեքեան՝ որ լսէին ՚ի նմանէ՝ ընդ
իմաստութիւն եւ ընդ պատասխանիս նորա։ *Եւ 48
իբրեւ տեսին զնա՝ զարմացան. եւ ասէ ցնա
մայրն իւր. որդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր
դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո եւ ես տա-
ռապեալք՝ խնդրեաք զքեզ։ *Եւ ասէ ցնոսա. 49
զի՞ խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք եթէ ՚ի տան
Հօր իմոյ պարտ է ինձ լինել։ *Եւ նոքա ոչ 50
իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ նոսա։ *Եւ 51
էջ ընդ նոսա, եւ չոգաւ ՚ի Նազարեթ. եւ էր նոցա
հնազանդ. եւ մայր նորա պահէր զամենայն զբանսն
՚ի սրտի իւրում։ *Եւ Յիսուս զարգանայր իմաս- 52
տութեամբ եւ հասակաւ, եւ շնորհօք յԱստուծոյ եւ ՚ի
մարդկանէ։

## ԳԼ. Գ.

Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տի- 1
բերեայ կայսեր, ՚ի դատաւորութեան Հրէաս-
տանի Պիղատոսի Պոնտացւոյ, եւ ՚ի չորրորդա-
պետութեան Գալիլեացւոց Հերովդի, եւ ՚ի Փի-
լիպպոսի եղբօր նորա չորրորդապետութեան
Իտուրեացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին, եւ
՚ի չորրորդապետութեան Լիւսանեայ Աբիլենաց-
|| Գործ. 4. 6. ւոց, *|| Եւ ՚ի քահանայապետութեան Աննայի 2

եւ

և Կայիափայ. եղև բան Այ ի վր Յովհան-
նու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ:
3 Եւ եկն յամ կողմն Յորդանանու քարո- ‖Մատ.
զել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն 3. 1. Մրկ.
4 մեղաց. Որպէս և գրեալ է ի գիրս պատգա- 1. 4.
մաց Եսայեայ մարգարէի. Ձայն բարբա- ‖Եսայ.
ռոյ յանապատի. պատրաստ արարէք զճա- 40. 3.
նապարհ Տն, ուղիղ արարէք զշաւիղս նր: Յովհ.
5 Ամենայն ձորք լցցին, և ամ լերինք և բլ- 1. 23.
ուրք խոնարհեսցին. և եղիցին դժուարին-
քըն ի դիւրինս, և առապարքն ի հարթ
6 ճանապարհս. Եւ տեսցէ ամ մարմին զփր-
7 կութիւն Այ: Եւ ասէ ժողովրդեանն ե-
լելոց մկրտել ի նմանէ. Ծնունդք իժից, ո՞ ‖Մատ.
ցուցց ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոց 3. 7.
8 է: Արարէք այսուհետև պտուղս արժա-
նի ապաշխարութեան. և մի սկսանիցէք ասել՝
եթէ ունիմք հայր զԱբրահամ. զի ասեմ
ձեզ, եթէ կարող է Այ ի քարանցս յայս-
ցանէ յարուցանել որդիս Աբրահամու:
9 Այլ արդէն տապար առ արմին ծա-
ռոց կայ. ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտ-
ուղ բարւոք, հատանի և ի հուր արկանի:
10 Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին.
11 Իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք: Պատասխա-
նի ետ և ասէ ցնոսա. Որ ունիցի երկու հան- ‖Յակ.
դերձ՝ տացէ զմին այնմ որ ոչն գոյցէ. և 2. 15.
12 որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Ե- 1. Յովհ. 3. 17.
կին և մաքսաւորք մկրտել, և ասեն ցնա.
13 վարդապետ՝ զի՞նչ գործեսցուք: Եւ նա
ասէ ցնս. մի ինչ աւելի քան զհրամայեալն
14 ձեզ առնիցէք: Հարցանէին զնա և զին-
ուորքն

ուորքն և ասէին. և մեք զի՞նչ գործեսցուք.
ասէ ցնոսա. մի զոք խռովեցէք՝ և մի զոք զըր-
պարտիցէք, շատ լիցին ձեզ թոշակքն ձեր.
* Մինչ ակն ունէր ժողովուրդն՝ և խորհէին 15
ամենեքեան 'ի սիրտս իւրեանց վս՛ յովհան-
նու՝ միթէ նա իցէ քսն. * Պատասխանի 16
Մտթ. ետ ամենեցուն և ասէ. Ես մկրտեմ զձեզ
3. 11. Մր. ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ
1. 8. չեմ բաւական բառնալ զկօշիկս. նա մկր-
Յհն. տեսցէ զձեզ հոգւով սրբով և հրով. * Որոյ 17
1. 26. հեծանոցն 'ի ձեռին իւրում սրբել զկալ իւր՝
Գործ. 1. 5. և ժողովել զցորեանն 'ի շտեմարանս իւր, և
Մտթ. զյարդն այրեսցէ անշէջ հրով. * Նաւգուրմ 18
3. 12. և այլ ինչ մխիթարութբ աւետարանէր ժո-
Մտթ. ղովրդեանն. * Նայց հերովդէս չորրորդա- 19
14. 4. Մր. պետ յանդիմանեալ 'ի նմանէ վասն հերով-
6. 17. դիայ կնոջ եղբօր իւրոյ՝ և վս՛ ամ չարեացն
զոր գործեաց հերովդէս, * յաւել և զայն 20
ևս 'ի վ՛ ամի. և եդ 'ի բանտի զյովհան-
Մտթ. նէս. * Եւ եղև 'ի մկրտել ամ ժողովր- 21
3. 13. Մր. դեանն, և յս՛ յոյ մկրտելոյ՝ և կալ յաղօթս,
1. 9. բանալ երկնից, * և իջանել հոգւոյն 'որպ 22
Յհն. մարմնաւոր տեսլեամբ իբրև զաղաւնի 'ի վ՛
1. 32. նր. և գալ ձայն յերկնից՝ որ ասէր. դու ես
որդի իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ. * Եւ 23
ինքն յս էր ամաց իբրև երեսնից՝ սկսեալ. ո-
րոց անն կարծէր որդի յովսեփայ. Որ յակով-
բայն. որ հեղեայն. որ մատաթեայն. * Որ 24
ղևեայն. որ մեղքեայն. որ յաննեայն. որ
յովսեփայն. * Որ մատաթեայն. որ ամով-
սայն. որ նաւումայն. որ եսղեայն. որ նան-
գեայն. * Որ մահաթայն. որ մատաթեայն. 26

որ

որ սեմեայն․ որ յովսեփեայն․ որ յովդայն ։ որ
27 * Որ յովնանայն․ որ րեսայն․ որ զօրաբա-
28 բելին․ որ սաղաթիէլին․ որ ներեայն ։ * Որ
մեղքեայն․ որ ադդեայն․ որ կովսամայն․
29 որ եղմովդադայն․ որ երայն ։ * Որ յես-
ուայն․ որ եղիազարայն․ որ յովրամայն․ որ
30 մատթայն․ որ ղեւեայն ։ * Որ սիմէոնին․
որ յուդային․ որ յովսեփայն․ որ յովնանայն․
31 որ եղիակիմայն ։ * Որ մեղեայն․ որ մեն-
նայն․ որ մատաթայն․ որ նաթանայն․ որ
32 դաւթին ։ * Որ յեսսեայն․ որ ովբեդայն․
որ բոոսայն․ որ սաղմոնայն․ որ նաասով-
33 նին ։ * Որ ամինադաբայն․ որ արամայն․ որ
ադմեայն․ որ առնեայն․ որ եսրովմայն․
34 որ փարեսին․ որ յուդային ։ * Որ յակով-
բայն․ որ իսահակայն․ որ աբրահամու․
35 որ թարային․ որ նաքովրայն ։ * Որ սերու-
քայն․ որ ռագաւայն․ որ փաղեկայն․ որ
36 եբերայն․ որ սաղային ։ * Որ կայնանայն․
որ արփաքսադայն․ որ սեմայն․ որ նոյին․
37 որ ղամեքայն ։ * Որ մաթուսաղային․ որ ե-
նովքայն․ որ յարեդին․ որ մաղաղելին․
38 որ կայնանայն ։ * Որ ենովսայն․ որ սեթայն․
որ ադամայն․ որ ա͞յն ։

## ԳԼ․ Դ․

1 Եւ Յիսուս լի հոգւով սրբով դարձաւ ՚ի յոր- Մատթ.
դանանէ․ և վարէր հոգւովն յանապատ, Դ. 1.
2 * յաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատա- Մարկ.
նայէ․ և ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայ- Ա. 12.
3 նոսիկ․ և ՚ի կատարելն նոցա քաղցեաւ ։ * Եւ
ասէ ցնա սատանայ․ եթէ որդի ես ա͞յ, ա-
ասա

սա քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի։ *Պատաս- 4
Բ Օրէն. 8. 3. խանի ետ նմա յս եւ ասէ. գրեալ է, եթէ
ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամ բանիւ
այ։ *Եւ հանեալ զնա 'ի լեառն մի բարձր՝ 5
եցոյց նմա զամ թագաւորութիւնս աշխարհի
'ի վայրկեան ժամանակի։ *Եւ ասէ ցնա 6
սատանայ. քեզ տաց զայս ամ իշխանութիւն
եւ զփառս սոցա, զի ինձ տուեալ է՝ եւ ում
կամիմ՝ տամ զսա։ *Արդ՝ դու եթէ անկեալ 7
երկիրպագանիցես առաջի իմ, քեզ եղիցի
ամ։ *Պատասխանի ետ նմա յս եւ ասէ. 8
Բ Օրէ. 6. 13. գրեալ է, երկիրպագցես տն այ քում, եւ
10. 20. զնա միայն պաշտեսցես։ *Եւ ած զնա յԵմ, 9
եւ կացոյց 'ի վր աշտարակի տաճարին, եւ ա-
սէ ցնա. եթէ որդի ես այ, արկ զքեզ աս-
Սաղ. 90. 11. տի 'ի վայր։ *Զի գրեալ է՝ եթէ հրեշ- 10
տակաց իւր պատուիրեալ է վս քո՝ պա-
հել զքեզ։ *Զի 'ի վր ձեռաց բարձցեն 11
զքեզ, մի երբեք հարցես զքարի զոտն քո։
*Պատասխանի ետ նմա յս եւ ասէ. ասացեալ 12
Բ Օրէն. 6. 16. է, թէ ոչ փորձեսցես զտր այ քո։ *Եւ 13
կատարեալ զամ փորձութիւնս սատանայի, 'ի
բաց եկաց 'ի նմանէ առ ժամանակ մի։

ԻԱ *Եւ դարձաւ յս զօրութբ հոգւոյն 'ի գա- 14
Մատթ. 4. 14. լիլեա. եւ ել համբաւ զնմանէ ընդ ամ կող-
մանս գաւառին։ *Եւ նա ուսուցանէր 'ի 15
Մարկ. 1. 14. ժողովուրդս նց փառաւորեալ յամենեցունց։
*Եւ եկն 'ի Նազարէթ՝ ուր սնեալ էր. եւ 16
եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուրն շա-
բաթուց 'ի ժողովուրդն։ *Եւ ետուն նմա 17
գիրս զեսայեայ մարգարէի, եւ յարեաւ ըն-
թեռնուլ. եւ իբրեւ եբաց զգիրսն՝ եգիտ

զայն

18 զայն տեղի՝ յորում գրեալն էր ։ * ‖ Հոգի ‖ Եսայ. 61. 1.
Տեառն ՚ի վերայ իմ, վն որոյ և օծ իսկ զիս. ա-
ւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժ-
19 շկել զբեկեալս սրտիւք. * քարոզել գե-
րեաց զթողութիւն, և կուրաց տեսանել. ար-
ձակել զվիրաւորս ՚ի թողութիւն, քարոզել
20 զտարեկան Տն ընդունելի ։ * Եւ խփեալ
զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն. և նստաւ. և ա-
մենեցուն որ ՚ի ժողովրդեանն էին աչք ՚ի
21 նա հայէին ։ * Եւ սկսաւ ասել ցնա. այսօր
22 լցան գիրքս այս յականջս ձեր ։ * Եւ ամե-
նեքին վկայէին նմա, և զարմանային ընդ
բանս շնորհացն՝ որ ելանէին ՚ի բերանոյ նր.
23 և ասէին, ‖ ո՞չ սա է որդին յովսեփայ ։ * Եւ ‖ Յովհ. 6. 42.
ասէ ցնս. ապաքէն ասիցէք առ իս զառակս
զայս. բժիշկ՝ բժշկեա զանձն քո. որչափ
լուաք զոր արարեր ՚ի կափառնայում, արա
24 և աստ ՚ի քում գաւառի ։ * Եւ ասէ. ամէն
ասեմ ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդունելի ՚ի
25 քաղաքի իւրում ։ * Ճշմարիտ ասեմ ձեզ.
զի բազում այրիք էին յաւուրս եղիայի ՚ի
մէջ իէլի՝ յորժամ փակեցան երկինք զերիս
ամս և զվեց ամիս. և եղև սով մեծ ընդ ամ
26 երկիր ։ * ‖ Եւ ո՛չ առ մի ՚ի նոցանէ առա- ‖ Գ Թագ. 17. 9.
քեցաւ եղիա, բայց միայն ՚ի սարեփթայ
27 սիդոնացւոց՝ առ կին մի այրի ։ * ‖ Եւ բա- ‖ Դ Թագ. 5. 14.
զում բորոտք էին յիէլի առ եղիսէիւ մարգա-
րէիւ. և ո՛չ ոք ՚ի նոցանէ սրբեցաւ, բայց
28 միայն նէեման ասորի ։ * Եւ լցան ամենե-
քեան բարկութ՝ ՚ի ժողովրդեանն՝ իբրև լսէին
29 զայս ։ * Եւ յարուցեալ հանին զնա արտաք-
քոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտեւան

լերինն՝ յորոյ վ՟ր քաղաքն նոցա շինեալ էր՝
գահավէժ առնել զնա։ *Եւ նա անցեալ 30
ընդ մէջ նոցա՝ գնայր։
ԻԻ *Եւ էջ 'ի կափառնաում 'ի քաղաքն գա- 31
լիլեացւոց, եւ ուսուցանէր զնոսա 'ի շաբաթու։
Մրկ. *Եւ զարմանային ընդ վարդապետութի- 32
1. 21. նր՟, զի իշխանութբ՟ էր բան նր՟։ *Եւ էր 33
'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դե-
ւի պղծոյ, եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ,
*ասէ. Թո՛ղ, զի՞ կայ մեր եւ քո՝ յ՟ս նա- 34
զովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ
զքեզ՝ ո՛վ ես ս՟րբ ա՟յ։ *Սաստեաց 'ի նա յ՟ս 35
եւ ասէ. պապանձեաց եւ ել 'ի դմանէ։ Ըն-
կենեաց զնա դեւն 'ի միջի անդ՝ եւ ել 'ի նմա-
նէ, եւ ինչ ոչ վնասեաց նմա։ *Եւ եղեն 36
զարմանալիք 'ի վ՟ր ամենեցուն, խօսէին ը՟նդ
միմեանս եւ ասէին. զի՞նչ է բանս այս, զի
իշխանութբ՟ եւ զօրութբ՟ սաստէ այսոց պղ-
ծոց՝ եւ ելանեն։ *Եւ ելանէր համբաւ զնը- 37
մանէ ընդ ամ՟ տեղիս շուրջ գաւառացն։
*Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի, եւ 38
Մտթ. մտաւ 'ի տուն սիմոնի։ *Զոքանչ սիմով- 39
8. 14. նի տագնապեալ էր ջերմամբ մեծաւ, եւ աղաչե-
Մրկ. 1. 30. ցին զնա վ՟ն նր՟։ *Եկաց առ նմա՝ սաստեաց 40
ջերմանն, եւ եթող զնա. եւ վաղվաղակի յա-
րեաւ՝ եւ պաշտէր զնոսա։ *Եւ ընդ արեւն 41
մտանել՝ ամենեքեան որոց էին հիւանդք 'ի
պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա։ Եւ նա
իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս՝
Մրկ. եւ բժշկէր զնոսա։ *Ելանէին դեւք 'ի բազ- 42
1. 34. մաց, աղաղակէին եւ ասէին. եթէ դու ես
որդի ա՟յ. եւ նա սաստէր՝ եւ ոչ տայր նց՟ թոյլ

խօ-

խօսել, զի գիտէին զնա թէ քն է.
43 * Եւ իբրեւ տիւ եղեւ՝ ել գնաց յանապատ Ի. Գ.
տեղի. եւ ժողովուրդքն խնդրէին զնա. ե-
կին մինչեւ առ նա՝ եւ արգելուին զնա, զի մի
44 գնասցէ 'ի նոցանէ. * Եւ նա ասէ ցնոսա.
Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարա-
նել զարքայութիւնն այ, զի յայն իսկ առաքե-
45 ցայ. * Եւ քարոզէր 'ի ժողովուրդսն Գալի-
լեացւոց.

## ԳԼ. Ե.

1 Եւ եղեւ 'ի խռնել զնովաւ ժողովրդեանն
եւ լսել զբանն այ, եւ ինքն կայր առ ծովա-
2 կին գեննեսարեթայ. * ‖ Եւ ետես երկուս ‖Մատթ. 4. 18.
նաւս՝ զի կային առ ծովակին, եւ ձկնորսքն Մարկ.
3 ելեալ 'ի նոցանէ՝ լուանային զգործիսն. * Եւ ել 1. 16.
նա 'ի մի նաւուցն՝ որ էր Սիմոնի, եւ աղա-
չեաց զնա սակաւիկ մի տանել 'ի ներքս 'ի
ցամաքէն. նստաւ՝ եւ ուսուցանէր 'ի նաւէ
4 անտի զժողովուրդսն. * Եւ իբրեւ լռեաց 'ի
խօսիցն, ասէ ցՍիմոն. խաղացո 'ի խորն,
5 եւ արկէք զգործիս ձեր յորս. * Պատասխա-
նի ետ Սիմոն եւ ասէ ցնա. վարդապետ՝ զա-
մենայն գիշերն աշխատ եղեաք՝ եւ ոչինչ կա-
լաք, բայց վասն քո բանիդ արկցուք զգոր-
6 ծիսս. * Եւ այս իբրեւ արարին՝ փակեցին 'ի
ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչեւ պատ-
7 առէին ուռկանք նոցա. * Եւ ակնարկէին
ընկերացն 'ի միւս նաւին՝ գալ օգնել նոցա. եւ
եկին եւ լցին երկոքին նաւքն՝ մինչեւ մերձ
8 ընկղմել նոցա. * Իբրեւ ետես Սիմոն պետ-
րոս՝ անկաւ առ ծունկս յի եւ ասէ. 'ի բաց
գնա

զնա յինէն Տէր, զի այր մեղաւոր եմ ես։
* Քանզի ահ պատեաց զնա և զամենեսեան 9
որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ ձկանցն զոր
ըմբռնեցին. * Նոյնպէս և զՅակովբոս և ըզ- 10
Յովհաննէս զորդիսն Զեբեդեայ, որ էին որ-
սակիցք Սիմոնի։ Եւ ասէ ցՍիմովն Յիսուս. մի
երկնչիր յայսմհետէ զմարդիկ որսայցես ՚ի
կեանս։ * Եւ հանեալ զնաւսն ՚ի ցամաք, 11
թողին զամենայն, և գնացին զհետ նորա։
ԻԳ. * ‖ Եւ եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղա- 12
‖ Մտթ. քացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրև ե-
8. 2. տես զՅիսուս՝ անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց
Մրկ. զնա՝ և ասէ. Տէր՝ եթէ կամիս, կարող ես
1. 40. զիս սրբել։ * Ձգեաց զձեռն իւր՝ հատոյց ՚ի 13
նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղա-
կի գնաց ՚ի նմանէ բորոտութիւնն։ * Եւ նա 14
պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ
երթ ցոյց զանձն քո քահանայիցն. և մատո
‖ Ղևտ. պատարագ վասն սրբութեան քո՝ ‖ որպէս և հրամայ-
14. 4. եաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա։ * Եւ յորդէր 15
առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողո-
վուրդք բազումք լսել՝ և բժշկել ՚ի հիւան-
դութեանց իւրեանց։ * Եւ նա խոյս տայր յանա- 16
պատ տեղիս, և կայր յաղօթս։
ԻԴ. * Եւ եղև ՚ի միում աւուրց՝ և ինքն ուսու- 17
ցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդա-
պետքն նստէին. որ ժողովեալ էին յամ քա-
ղաքաց Գալիլեացւոց՝ և Հրէաստանէ և Երուսաղեմէ.
‖ Մտթ. և զօրութիւն Տեառն էր ՚ի բժշկել զնա։ * ‖ Եւ 18
9. 2. ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր
Մրկ. 2. 3. անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել
՚ի ներքս՝ և դնել առաջի նորա։ * Եւ իբրև 19

ոչ

ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի
ներքս վասն ամբոխին, ելին 'ի տանիս եւ 'ի
ցուցոյն կախեցին զնա, եւ իջուցին մահճօքն
20 հանդերձ 'ի մէջ առաջի յ՟սի. * Եւ տեսեալ
զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. այր դու՝ թողեալ
21 լիցին քեզ մեղք քո. * Սկսան խորհել դպ-
պիրքն եւ փարիսեցիքն, եւ ասեն. ո՞վ է սա՝ որ
խօսի զհայհոյութիւն, ո՞վ կարէ թողուլ ըզ-
22 մեղս՝ բայց միայն ա՟ծ. * Իբրեւ գիտաց յ՟ս
զխորհուրդս նոցա, պատասխանի ետ եւ ասէ ցնո.
23 զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր. * Ո՞ր ինչ դիւրա-
գոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո,
24 եթէ ասել՝ արի եւ գնա. * Այլ զի գիտաս-
ջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկ-
րի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն,
քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ եւ երթ 'ի
25 տուն քո. * Եւ առժամայն յարուցեալ ա-
ռաջի ամենեցուն՝ առ զիւրն յորոյ վ՟ր ան-
կեալ կայր, գնաց 'ի տուն իւր, եւ փառա-
26 ւոր առնէր զա՟ծ. * Զարմանք կալան զա-
մենեսեան, եւ փառաւոր առնէին զա՟ծ. լի
եղեն ահիւ, եւ ասեն, եթէ տեսաք այսօր
նոր նշանս.
27 * Եւ յետ այնորիկ ել անտի՝ եւ ետես մաք- Ի. Օ.
սաւոր մի՝ որում անուն էր Ղեւի, զի նստէր ‖ Մտ.
'ի մաքսաւորութեան. եւ ասէ ցնա, եկ զկնի 9. 9.
28 իմ. * Եւ թողեալ զա՟մ՝ յարեաւ գնաց ըզ- Մր.
29 կնի նորա. * Եւ արար ընդունելութիւն մեծ 2. 14.
նմա Ղեւի 'ի տան իւրում. եւ էր ժողովուրդ
բազում մաքսաւորաց եւ այլոց՝ որ էին բազմեալ
30 ընդ նմա. * ‖ Եւ տրտնջէին փարիսեցիքն եւ ‖ Մր.
դպիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա՝ եւ 2. 16.

ա-

ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մե-
ղաւորս ուտէք և ըմպէք։ *Պատասխանի ետ 31
յս և ասէ ցնս, ոչինչ են պիտոյ բժիշկք ող-
ջոց, այլ հիւանդաց։ *Ես ոչ եկի կոչել զար- 32
դարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն։ *Եւ 33
‖ Մրկ. 2. 18. նոքա ասեն ցնա. ‖ ընդէ՞ր աշակերտքն յով-
հաննու պահեն ստէպ՝ և խնդրուածս առ-
նեն, նոյնպէս և փարիսեցւոյն. և քոյդ ու-
տեն և ըմպեն։ *Եւ նա ասէ ցնոսա. միթէ 34
կարօ՞ղ էք մանկանց առագաստի, մինչ փե-
սայն ընդ նս իցէ, հրաման տալ պահել։ *Ե- 35
կեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ
փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայնո-
սիկ։ *Ասաց և առակ մի առ նս, թէ ոչ ոք 36
արկանէ ՚ի նոր հանդերձէ ՚ի մի հնացեալ
ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ,
և ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ ՚ի նո-
րոյն։ *Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս 37
հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր
զտիկսն հինս. ինքն հեղու, և տիկքն կոր-
չին։ *Այլ գինի նոր ՚ի տիկս նորս արկա- 38
նելի է, և երկոքին պահին։ *Եւ ոչ ոք ըմ- 39
պէ զհինն՝ և կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ
հինն քաղցրագոյն է։

## ԳԼ. Զ.

ԸԼ. Եւ ‖ եղև ՚ի շաբաթու յերկրորդում ա- 1
‖ Մատթ. 12. 1. ռաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն.
և աշակերտքն նր կորզէին հասկ՝ շփէին ընդ
Մրկ. 2. 23. ափ, և ուտէին։ *Եւ ոմանք ՚ի փարիսեց- 2
ւոցն ասեն ցնա. զի՞նչ գործէք՝ զոր չէ օրէն
՚ի շաբաթու։ *Պատասխանի ետ նց յս և 3
ասէ.

ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն դա-
ւիթ, յորժամ քաղցեաւն ինքն՝ և որ ը̃ն նը-
4 մայն էին։ * ‖ Զիարդ եմուտ նա ՚ի տունն ‖ 1 Թ–գ
այ̃, և զհացն զառաջաւորութեա̃ եկեր՝ և ետ 21. 6.
այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն
ուտել ուրուք, ‖ բայց միայն քահանայապե- ‖ Ելից.
5 տիցն։ * Եւ ասէ ցնս. տր̃ է որդի մարդոյ 29. 32.
6 և շաբաթու։ * Եւ եղև ՚ի միւսում շաբա- Ղևտ.
թուն մտանել նմա ՚ի ժողովուրդն՝ և ուսու- 24. 9.
ցանել. ‖ և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ ‖ Մատ.
7 գօսացեալ էր։ * Եւ սպասէին նմա դպիրքն 12. 10.
և փարիսեցիքն՝ թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ, Մրկ. 3. 1.
8 զի գտանիցեն չարախօսութի̃ զնմանէ։ * Եւ
նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝
որոյ ձեռնն գօսացեալ էր. արի անդ ՚ի մէջ։
9 և նա յարուցեալ եկաց։ * Ասէ ցնոսա յս.
հարցից ինչ զձեզ. զի՞նչ արժան է ՚ի շաբա-
թու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել,
10 ոգի մի ապրեցուցանե՞լ թէ կորուսանել։ * Եւ
հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրաքն՝
ասէ ցնա. ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց,
և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն։
11 * Նոքա լցան յիմարութեա̃, և խօսէին ընդ
միմեանս՝ թէ զի՞նչ առնիցեն յսի։
12 * Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ՚ի Գ. Ի
լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ՚ի ‖ Մատ.
13 գլուխ յաղօթսն այ̃։ * ‖ Եւ իբրև այգ ե- 10. 1.
ղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ՚ի Մրկ. 3. 13.
նոցանէ երկոտասանս. զորս և առաքեալս
14 անուանեաց։ * Զսիմովն՝ զոր և պետրոս
անուանեաց, և զանդրեաս զեղբայր նորին,
և զյակովբոս և զյովհաննէս, և զփիլիպպոս

և

եւ զԲարթողիմէոս, * եւ զՄատթէոս եւ զԹով- 15
մաս, եւ զՅակովբոս Ալփեայ, եւ զՍիմովն
զկոչեցեալն Նախանձայոյզ, * եւ զՅուդա Յա- 16
կովբայ, եւ զՅուդա Իսկարիովտացի՝ որ եղեւ
իսկ մատնիչ. * Եւ իջեալ նոքօք հանդերձ 17
՚ի տեղի մի տափարակ. եւ ժողով աշակեր-
տացն նորա՝ եւ բազմութիւն յոյժ ժողովրդեանն,
յամ Հրէաստանէ եւ յԵ՜ղմէ՝ եւ յայնմ կողմա-
նէ՝ եւ ՚ի ծովեզերէն Տիւրոսի եւ Սիդոնի.
* որ եկին լսել ՚ի նմանէ՝ եւ բժշկել ՚ի հիւան- 18
դութե իւրեանց. եւ նեղեալքն յայսոց պղծ-
ծոց բժշկէին. * Եւ ամ ժողովուրդն խնդ- 19
րէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն բազում
ելանէր ՚ի նմանէ՝ եւ բժշկէր զամենեսին.
Մատթ. 5. 2. * Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն 20
իւր՝ եւ ասէ. Երանի աղքատացդ հոգւով,
զի ձեր է արքայութիւնն այ. * Երանի՝ որ 21
քաղցեալ էք այժմ, զի յագեսջիք. Երանի՝
Մատթ. 5. 11. որ լայք այժմ, զի ծիծաղեսջիք. * Երանի 22
է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ,
եւ յորժամ որոշիցեն զձեզ եւ նախատիցեն,
եւ հանիցեն անուն չար զձէնջ վասն որդւոյ
մարդոյ. * Ուրախ լերուք յաւուր յայնմիկ եւ 23
ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են
յերկինս. ըստ նմին օրինակի առնէին մար-
գարէիցն հարք իւրեանց. * Բայց վայ ձեզ 24
մեծատանցդ՝ զի ընկալայք զմխիթարութիւն
Եսայ. 65. 13. ձեր. * Վայ ձեզ որ յագեալդ էք այժմ՝ 25
զի քաղցիջիք. վայ ձեզ որ ծիծաղիքդ այժմ,
զի սգայջիք եւ լայջիք. * Վայ ձեզ յորժամ 26
բարի ասիցեն զձէնջ ամ մարդիկ, զի այդ-
պէս առնէին սուտ մարգարէիցն հարք նոցա.

*Այլ

27 * Այլ ձեզ ասեմ որ լսէքդ . ‖ սիրեցէք զթ- ‖Մատ.
շնամիս ձեր , բարի արարէք ատելեաց ձե- 5. 44.
28 րոց . * Օրհնեցէք զանիծիչս ձեր . աղօթս
29 արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց . * ‖ Որ հար- ‖Մատ.
կանէ զծնօտ քո՝ մատո նմա և զմիւսն . և որ 5. 39.
հանէ ՚ի քէն զբաճկոն քո՝ մի արգելուր ՚ի
30 նմանէ և զշապիկս . * Ամենայնի՝ որ խնդ-
րէ ՚ի քէն՝ տուր , և զոր ինչ հանէ որ ՚ի քէն՝
31 մի պահանջեր . * ‖ Եւ որպէս կամիք թէ արաս- ‖Տոբ.
ցեն ձեզ մարդիկ , այնպէս արասջիք և դուք 4. 16.
32 նոցա . * ‖ Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր՝ Մատ. 7. 12.
զի՞նչ շնորհ է ձեր , զի և մեղաւորք սիրեն ‖Մատ.
33 զսիրելիս իւրեանց . * Եւ եթէ բարի առ- 5. 46.
նէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր ,
34 զի և մեղաւորք զնոյն գործեն . * ‖ Եւ ե- ‖2Օրէն.
թէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունիցիք 15. 8.
առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր . քանզի և մեղա- Մատ. 5. 42.
ւորք մեղաւորաց փոխ տան , զի առցեն անդ-
35 րէն զկշիռն . * Բայց սիրեցէք զթշնամիս
ձեր , և բարի արարէք ատելեաց ձերոց . և
տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ .
և եղիցին վարձք ձեր բազում , և եղիջիք որդիք
Բարձրելոյ . զի նա քաղցր է ՚ի վերայ չարաց
36 և ապաշնորհաց . * Եղերուք գթածք՝ որպէս
37 և Հայրն ձեր գթած է . * ‖ Մի դատէք՝ և ‖Մատ.
ոչ դատիցիք . մի պարտաւորէք՝ և ոչ պարտաւորիցիք , 7. 1.
38 արձակեցէք և արձակիցիք . * Տուք՝ և տա-
ցի ձեզ . չափ բարւոք՝ թաթաղուն շարժուն
զեղուն՝ տացեն ՚ի գոգս ձեր . ‖ նովին չա- ‖Մարկ.
39 փով որով չափէք՝ չափեսցի ձեզ . * Ասաց և 4. 24.
առակ մի առ նոսա . միթէ կարիցէ՞ կոյր կու-
րի առաջնորդել , ո՞չ ապաքէն երկոքին ՚ի

խոր-

Մտթ. 10. 24. խորխորատ անկանիցին ։ *Ոչ է աշակերտ 40
լաւ քան զվարդապետ իւր . այլ կատարեալն
Մտթ. 7. 3. եղիցի իբրեւ զվարդապետ իւր ։ *Զի՞ տե- 41
սանես զշիւղ յական եղբօր քո, եւ 'ի քում
ական զգերանդ ոչ նշմարես ։ *Կամ զիա՞րդ 42
կարես ասել ցեղբայր քո, եղբայր՝ թո՛ղ հա-
նից զշիւղդ յականէ քումմէ, եւ դու 'ի քում
ական զգերանդ ոչ տեսանես . կեղծաւոր՝
հան նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ա-
պա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր
Մտթ. 7. 18. 12. 33. քո ։ *Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պը- 43
տուղ չար, եւ ոչ դարձեալ ծառ չար՝ որ առ-
նէ պտուղ բարի . *զի իւրաքանչիւր ծառ 44
'ի պտղոյ իւրմէ ճանաչի ։ Զի ոչ եթէ 'ի
փշոց քաղեն թուզ, եւ ոչ 'ի մորենւոյ կթեն
խաղող ։ *Այր բարի՝ 'ի բարի գանձուց 45
սրտի իւրոյ բղխէ զբարի, եւ մարդ չար՝ 'ի
չարէն բղխէ զչար . քանզի 'ի յաւելուածոյ
սրտին խօսի բերան նորա ։ *Զի՞ կոչէք զիս՝ 46
Մտթ. 7. 21. Տէր՝ Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք ։ *Ամե- 47
Հռովմ. 2. 13. նայն որ գայ առ իս, եւ լսէ զբանս իմ՝ եւ
Յակ. 1. 22. առնէ զնոսա, ցուցից ձեզ ում նման է ։ *Նը- 48
ման է առն, որ շինիցէ տուն. որ փորեաց եւ
խորեաց, եւ եդ հիմն 'ի վերայ վիմի. 'ի յառնել
հեղեղաց՝ բաղխեաց գետ զտունն, եւ ոչ կա-
րաց շարժել զնա . զի հաստատեալ էր հիմն
'ի վերայ վիմի ։ *Իսկ որ լսէ զբանս իմ՝ եւ 49
ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն 'ի
վերայ հողոյ առանց հիման . զոր բաղխեաց
գետ, եւ վաղվաղակի անկաւ . եւ եղեւ կոր-
ծանումն տանն այնորիկ մեծ ։

Գ.Լ։

## Գլ. Է.

1 Եւ իբրեւ կատարեաց զամենայն զբանս իւր 'ի Գ. Բ.
լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառ֊ Մատ. 8. 5.
2 նաում։ * Հարիւրապետի ուրումն ծառայ
չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախ֊
3 ճանել, որ էր նմա պատուական։ * Իբրեւ
լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերս 'ի Հրէից,
աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծա֊
4 ռայն նորա։ * Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին
զնա ստէպ՝ եւ ասէին, թէ արժանի է՝ որում
5 զշնորհս զայս առնես։ * Զի սիրէ զազգս
մեր, եւ զժողովրդանոցն նա շինեաց մեզ։
6 * Եւ Յիսուս գնայր ընդ նոսա. իբրեւ ոչինչ կարի
հեռի էր 'ի տանէն, յղեաց առ նա հարիւ֊
րապետն բարեկամս, եւ ասէ ցնա. Տէր՝ մի Մատ. 8. 8.
ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ
7 ընդ յարկաւ իմով մտանիցես։ * Վասն որոյ եւ
ոչ զանձն համարեցայ արժանի՝ առ քեզ գա֊
լոյ. այլ ասա՛ բանիւ՝ եւ բժշկեսցի մանուկս
8 իմ։ * Քանզի եւ ես այր մի եմ կարգեալ ընդ
իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, եւ
ասեմ սմա՝ երթ, եւ երթայ. եւ այլում թէ
եկ, եւ գայ. եւ ծառայի իմում թէ արա
9 զայս, եւ առնէ։ * Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝
զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ եր֊
թային զհետ նորա՝ եւ ասէ, ամէն ասեմ ձեզ՝
10 թէ եւ ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի։ * Եւ
դարձան անդրէն պատգամաւորքն 'ի տուն,
եւ գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
11 * Եւ եղեւ 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, Գ. Գ.
որում անուն էր Նային, երթային ընդ նմա եւ

աշա֊

աշակերտք նորա և ժողովուրդք բազումք։ * Իբրև 12
մերձ եղև ՚ի դուռն քաղաքին, և ահա է-
լանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ,
և նա էր այրի. և ժողովուրդ բազում քաղաքին
էր ընդ նմա։ * Իբրև ետես զնա տէր՝ գթա- 13
ցաւ ՚ի նա և ասէ. մի լար։ * Եւ մատու- 14
ցեալ մերձեցաւ ՚ի դագաղն. և որք բար-
ձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ, պա-
տանեակ դու՝ քեզ ասեմ՝ արի։ * Կանգնեցաւ 15
և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ
զնա ցմայր իւր։ * Եւ ահ կալաւ զամենե- 16
սին, և փառաւոր առնէին զած՝ և ասէին,
‖Ղուկ. 24. 19. թէ ‖ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ՚ի մի-
Յովհ. 4. 19. ջի մերում, և թէ այց արար ած ժողովր-
դեան իւրում ՚ի բարութիւն։ * Եւ ել զրոյց 17
այս ընդ ամ Հրէաստան վն նր. և ընդ ամ
կողմանս աշխարհին։ * Եւ պատմեցին յով- 18
հաննու աշակերտքն իւր վն ամենայնի այ-
‖Մատթ. 11. 2. սորիկ։ * ‖ Եւ կոչեաց առ ինքն երկուս ո- 19
մանս յաշակերտացն իւրոց՝ յովհաննէս, ա-
ռաքեաց առ տէր և ասէ. դու ես որ գալոցն
ես, եթէ այլում ակն կալցուք։ * Եւ ե- 20
կեալ արքն առ նա՝ ասեն, յովհաննէս մկըր-
տիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ, դու
ես որ գալոցն ես՝ եթէ այլում ակն կալցուք։ 21
* Եւ ՚ի նմին ժամու բժշկեաց զբազումս ՚ի
հիւանդութեանց և ՚ի հարուածոց և յայսոց
չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տե-
սանել։ * Պատասխանի ետ նոցա և ասէ. եր- 22
թայք պատմեցէք յովհաննու՝ զոր տեսէք
‖Եսայ. 35. 5. և լուայք. ‖ զի կոյրք տեսանեն, և կաղք
գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մե-
ռեալք

ռեալք յառնեն, աղքատք աւետարանին.
23 * Եւ երանի իցէ՝ որ ոչ գայթագղեսցի յիս։
24 * Եւ իբրեւ գնացին հրեշտակքն յովհան-
նու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վն յով-
հաննու. զի՞ ելէք յանապատն տեսանել, ե-
25 ղէգն շարժուն ի հողմոյ։ * Այլ զի՞նչ ե-
լէք տեսանել, այր ի հանդերձս փափկութե
զգեցեալ. ահաւասիկ որք ի հանդերձս
երեւելիս եւ ի փափկութե են՝ յարքունիս են։
26 * Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞.
այո, ասեմ ձեզ՝ առաւել եւս քան զմարգա-
27 րէ։ * ‖ Սա է՝ վն որոյ գրեալ է, թէ ‖Մաղ. 3. 1.
ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո՝ որ
յարդարեսցէ զճանապարհս քո առաջի քո։
28 * Ասեմ ձեզ. մեծ ի ծնունդս կա-
նանց մարգարէ քան զյովհաննէս ոչ ոք է.
բայց փոքրիկն յարքայութեան այ մեծ է քան
29 զնա։ * Եւ ամ ժողովուրդն իբրեւ լուաւ՝ եւ
մաքսաւորքն, արդարացուցին զած. զի մկ-
30 րտեցան ի մկրտութիւն յովհաննու։ * Իսկ
փարիսեցիքն եւ օրինականք զխորհուրդն այ
անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտե-
31 ցան ի նմանէ։ * ‖ Որո՞ւմ նմանեցուցից ‖Մատ. 11. 16.
զմարդիկ ազգիս այսորիկ. եւ ո՞ւմ իցեն նը-
32 մանողք։ * Նման են մանկտւոյ՝ որ ի հրա-
պարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս եւ
ասիցեն. փողս հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւե-
33 ցիք, ողբացաք՝ եւ ոչ լացիք։ * ‖ Եկն յով- Մատ. 3. 4.
հաննէս մկրտիչ՝ ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ
34 ասէք. դեւ գոյ ի նմա։ * Եկն որդի մար- Մար. 1. 6.
դոյ՝ ուտէ եւ ըմպէ, եւ ասէք. ահա այր կե-
րող եւ արբեցող՝ բարեկամ մաքսաւորաց եւ
մեղ-

մեղաւորաց ։ * Եւ արդարացաւ իմաստու- 35
թի յորդւոց իւրոց ։

Կ.Գ. * Աղաչէր զնա ոմն ՚ի փարիսեցւոցն՝ զի կե- 36
րիցէ հաց ընդ նմա. եւ մտեալ ՚ի տուն փարի-
Մատթ. 26. 7. սեցւոյն՝ բազմեցաւ ։ * Եւ կին մի էր ՚ի 37
Մարկ. 14. 3. քաղաքին մեղաւոր. իբրեւ գիտաց թէ բազ-
Յովհ. 12. 3. մեալ է ՚ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ
մի իւղոյ անուշի. * կայր յետոյ առ ոտսն 38
նորա, լայր. եւ արտասուօքն սկսաւ թանալ
զոտս նորա, եւ հերովն գլխոյ իւրոյ ջնջէր, եւ
համբուրէր զոտս նորա, եւ օծանէր իւղովն ։
* Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն ըզ- 39
նա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ
ոք էր, ապա գիտէր թէ ով եւ որպիսի ոք
կին մերձենայ ՚ի սա. զի մեղաւոր է ։ * Պա- 40
տասխանի ետ Յս եւ ասէ ցնա, Սիմոն՝ ու-
նիմ ինչ ասել քեզ. եւ նա ասէ. ասա՛ վար-
դապետ. եւ ասէ ։ * Երկու պարտապանք 41
էին ուրուքն փոխատուի. միոյն պարտէր հինգ
հարիւր դահեկան, եւ միւսոյն յիսուն ։ * Եւ 42
իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունցն
շնորհեաց. արդ ասա՛ ո՞վ առաւել սիրեսցէ
զնա ։ * Ասէ Սիմոն. ինձ այսպէս թուի՝ 43
եթէ որում զբազումն շնորհեաց ։ եւ նա ա-
սէ ցնա. ուղիղ դատեցար ։ * Եւ դարձեալ 44
՚ի կինն կոյս, ասէ ցՍիմոն. տեսանե՞ս
զայս կին, մտի ՚ի տուն քո՝ ջուր ոտից ինձ
ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք ե-
թաց զոտս իմ, եւ հերովն իւրով ջնջեաց ։
* Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա առա- 45
ւելք յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց
՚ի համբուրելոյ զոտս իմ ։ * Իւղով զգլուխ 46
իմ

47 իմ ոչ օծեր, դա իւղով անուշիւ օծ։ * Վ՛ն
որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք
իւր բազում, զի յոյժ սիրեաց. զի որում շատ
թողուցու՝ շատ սիրէ, և որում սակաւ՝ սա-
48 կաւ։ * Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ
49 մեղք քո։ * Եւ սկսան՝ որ բազմեալն էին
ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է դա՝
50 որ զմեղս թողու։ * Եւ նա ասէ ցկինն.
հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղա-
ղութիւն։

## ԳԼ. Ը.

1 Եւ եղեւ յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ Գ. Ն
քաղաքս և ընդ գեօղս, քարոզէր և աւե-
տարանէր զարքայութիւնն Այ. և երկոտա-
2 սանքն ընդ նմա. * և կանայք ոմանք՝ որ բժ-
շկեալ էին յայսոց չարաց և 'ի հիւանդու-
թեանց. ‖ Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, ‖Մրկ.
3 յորմէ եօթն դեւ ելեալ էր. * և Յովհաննա 16. 9.
կին Քուզայ՝ հազարապետին Հերովդի, և
Շուշան՝ և այլք բազումք. որք պաշտէին զնա
4 յընչից իւրեանց։ * Եւ 'ի ժողովել բազում
ժողովրդոց, և ընդ քաղաքաց քաղաքաց եկե-
5 լոց առ նա, ասէ առակաւ։ * ‖ Ել սերմա- ‖Մտթ.
նացան սերմանել զսերմանիս իւր. և 'ի սեր- 13. 4.
մանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանա- Մրկ.
պարհաւ՝ և եղեւ կոխան, և թռչունք երկ- 4. 3.
6 նից կերան զնա։ * Եւ այլն անկաւ յապա-
ռաժի. և ընդ բուսանելն՝ չորացաւ, առ 'ի
7 չգոյէ հիւթոյ։ * Եւ այլն անկաւ 'ի մէջ
փշոց, և ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին
8 զնա։ * Եւ այլն անկաւ յերկիր բարի և պա-
րարտ,

բարւոք, և բուսեալ՝ արար պտուղ հարիւրա-
պատիկ։ զայս իբրև խօսեցաւ, ասէ. որ ու-
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ * Հարցանէին 9
զնա աշակերտքն, թէ զի՞նչ իցէ առակն։
* Եւ նա ասէ. Ձեզ տուեալ է գիտել զ- 10
խորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն ա-
Եսայ. 6. 9. ռակօք։ զի տեսցեն՝ և մի տեսցեն, և լը-
ւիցեն՝ և մի իմասցին։ * Բայց առակն այս 11
ինչ է. սերմն բանն Աստուծոյ է։ * Եւ որք առ ճա- 12
նապարհաւն, այնոքիկ են որ լսեն. և ա-
պա գայ սատանայ՝ հանէ զբանն 'ի սրտից
նոցա, զի մի հաւատասցեն՝ և ապրեսցին։
* Եւ որք յապառաժին, որք յորժամ լսի- 13
ցեն խնդութեամբ ընդունին զբանն, և արմատս
ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւա-
տան, և 'ի ժամանակի փորձութեան հեռա-
նան։ * Իսկ որ 'ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա 14
են, որ իբրև լսեն զբանն՝ և 'ի հոգս և 'ի
մեծութիւն և 'ի ցանկութիւն աշխարհիս զնա-
ցեալ հեղձնուն՝ և անպտուղ լինին։ * Իսկ 15
որ յերկիրն պարարտ, որոց բարւոք և զուար-
Մատթ. 5. 15. թագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և
Մրկ. 4. 21. տան պտուղ համբերութեամբ։ * Ոչ ոք լուցա- 16
նէ ճրագ և թաքուցանէ ընդ կարասեաւ՝
Մատթ. 10. 26. կամ դնէ ընդ մահճօք. այլ 'ի վերայ աշտանա-
Մրկ. 4. 22. կի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն։
* Զի ոչ ինչ ծածուկ է որ ոչ յայտ լիցի. և ոչ 17
Ղուկ. 12. 2. գաղտնի որ ոչ ծանիցի, և եկեսցէ 'ի յայտ։
Մատթ. 13. 12. * Տեսէք այսուհետև զիարդ լսէք. զի 18
որ ունիցի՝ տացի նմա, և որ ոչն ունիցի՝ և
Մատթ. 12. 46. զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի 'ի նմանէ։
Մրկ. 3. 32. * Եկին առ նա մայրն և եղբարքն իւր, և 19

ոչ

ոչ կարէին հասանել 'ի նա վասն բազմութեանն ։
20 * Ազդ եղեւ նմա եւ ասեն . մայր քո եւ եղ-
բարք քո կան արտաքոյ՝ եւ կամին զքեզ տե-
21 սանել ։ * Եւ նա ասէ ցնոսա . մայր իմ եւ եղբարք
իմ սոքա են, որ զբանն Այ լսեն եւ առնեն ։
22 * Եւ եղեւ 'ի միում աւուրց ինքն ել 'ի նաւ՝ Կ. Օ.
եւ աշակերտքն իւր, եւ ասէ ցնոսա . եկայք անց-
23 ցուք յայնկոյս ծովակիս . եւ գնացին ։ * Եւ Մտթ. 8. 23.
մինչ դեռ նաւէին՝ 'ի քուն եմուտ . եւ էջ Մրկ.
մրրիկ հողմոյ 'ի ծովակն՝ եւ ուռնոյր, եւ տագ- 4. 36.
24 նապէին ։ * Մատուցեալ զարթուցին զնա
եւ ասեն . վարդապետ վարդապետ՝ կորնչիմք
աւասիկ ։ եւ նա յարուցեալ սաստեաց հող-
մոյն եւ խռովութեան ջուրցն՝ եւ հանդարտեցին,
25 եւ եղեւ խաղաղութիւն ։ * Ասէ ցնոսա . ու՞ր են
հաւատք ձեր . եւ զարհուրեալ զարմացան,
եւ ասէին ցմիմեանս . ո՞վ արդեօք իցէ սա՝ զի
եւ հողմոց եւ ջրոց հրամայէ սաստ, եւ հնազան-
26 դին սմա ։ * Եւ նաւեցին իջին յաշխարհն
Գերգեսացւոց . որ է յայնկոյս հանդէպ Գա-
27 լիլեայ ։ * Եւ ընդ ելանելն իւր 'ի ցամաք,
պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին
դեւք . եւ բազում ժամանակս չէր հանդերձ
զգեցեալ՝ եւ ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գե-
28 րեզմանս ։ * Եւ տեսեալ զՅս, աղաղակեաց
եւ անկաւ առաջի նորա, եւ ասէ մեծաձայն .
զի՞ կայ իմ եւ քո Յս որդի Այ բարձրելոյ, ա-
29 ղաչեմ զքեզ մի տանջեր զիս ։ * Հրամայէր
հրամանս այսոյն պղծոյ ելանել 'ի մար-
դոյ անտի . զի բազում ժամանակս յափշ-
տակեալ էր զնա, եւ կապէր 'ի շղթայս, եւ
պահէր յերկաթս, եւ խզէր զկապանսն, եւ

վարէր 'ի դիւէն յանապատս. *Հարց ցնա 30
Յն եւ ասէ. զի՞նչ անուն է քեզ. եւ նա ասէ,
լեգէոն. զի դեւք բազումք մտեալ էին 'ի
նա. *Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրամանս տա_ 31
ցէ նոցա երթալ յանդունդս. *Եւ էր անդ 32
երամակ մի խոզից բազմաց արածական 'ի
լերինն, եւ աղաչեցին զնա զի հրամանս տա_
ցէ նց մտանել 'ի նոսա. եւ հրամայեաց նց.
*Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին 'ի խո_ 33
զեանն. եւ դիմեաց երամակն 'ի գահէ ան_
տի 'ի ծովակն՝ եւ հեղձաւ. *Իբրեւ տեսին 34
խոզարածքն զիրսն որ եղեն՝ փախեան, եւ
պատմեցին 'ի քաղաքին եւ յագարակս. *Եւ 35
իբրեւ ելին տեսանել զգործսն, եւ եկին առ
Յն, եւ գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ
էին, զգեցեալ եւ զգաստացեալ նստէր առ
ոտս Յի, եւ երկեան. *Պատմեցին նոցա 36
որոց տեսեալ էր՝ թէ զիա՞րդ փրկեցաւ դի_
ւահարն. *Եւ աղաչէր զնա ամ բազմու_ 37
թիւն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց՝ գը_
նալ 'ի սահմանաց նց, քանզի ահիւ մեծաւ
տագնապէին. եւ նա մտեալ 'ի նաւ՝ դարձաւ
անդրէն. *Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն 38
ելեալ էին շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝
եւ ասէ. *Դարձ 'ի տուն քո, եւ պատմեա՛ 39
զոր միանգամ արար քեզ Ած. գնաց 'ի քա_
ղաքն՝ եւ քարոզէր զոր ինչ արար նմա Յն.
*Եւ իբրեւ դարձաւ անդրէն Յն, ընկալաւ 40
զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն_
‖ Մտթ. 9. 18. ունէին նմա. *‖ Եւ ահա եկն այր մի՝ ո_ 41
Մրկ. 5. 22. րում անուն էր Յայրոս, եւ նա էր իշխան ժո_
ղովրդեանն. անկեալ առ ոտս Յի՝ աղա_

չէր

42 չէր զնա մտանել ՚ի տուն նորա. * զի դուստր
միամօր էր նորա՝ ամաց իբրեւ երկոտասանից,
եւ էր մերձ ՚ի մահ. եւ ընդ երթալն նորա՝ ժողո-
43 վուրդքն նեղէին զնա։ * Եւ կին մի էր ՚ի Մատթ.
տեսանութեան արեան ամաց երկոտասա- 9. 20.
նից, որ ՚ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս Մարկ. 5. 25.
իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բը-
44 ժշկիլ. * Մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի
քղանցս հանդերձի նորա. եւ նոյն ժամայն ե-
45 կաց բղխումն արեան նորա։ * Եւ ասէ Յիսուս.
Ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս։ Իբրեւ ամենեքեան
ուրանային, ասէ Պետրոս՝ եւ որ ընդ նմա էին.
Վարդապետ՝ ժողովուրդք պնդեն եւ նեղեն
46 զքեզ։ * Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս,
քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։
47 * Իբրեւ ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ՚ի
նմանէ, եկն դողալով եւ անկաւ առաջի նորա,
թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ՚ի նա՝ պատ-
մեաց առաջի ամենայն ժողովրդեանն. եւ թէ ո՞ր-
48 պէս բժշկեցաւ առժամայն. * Եւ ասէ.
քաջալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին
49 զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն։ * Եւ մինչ դեռ
նա խօսէր, գայ ոմն ՚ի տանէ ժողովրդապե-
տին՝ եւ ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի
50 ինչ աշխատ առներ զդա։ * Իսկ Յիսուս իբրեւ
լուաւ, պատասխանի ետ նմա՝ եւ ասէ. մի
51 երկնչիր, միայն հաւատա՝ եւ կեցցէ։ * Եւ
մտեալ ՚ի տունն՝ ոչ զոք եթող մտանել,
բայց միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅո-
վհաննէս, եւ զհայր մանկանն եւ զմայր նո-
52 րա։ * Լային ամենեքեան՝ եւ կոծէին զնա։
եւ նա ասէ. մի լայք՝ զի չէ մեռեալ՝ այլ
ննջէ։

ննջէ։ *Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի 53
գիտէին թէ մեռաւ։ *Եւ նա հանեալ զա- 54
մենեսին արտաքս, *կալաւ զձեռանէ նր՛ 55
բարբառեցաւ և ասէ. աղջի կաց մանուկ դու։
*Եւ դարձաւ ոգի նր, և կանգնեցաւ վաղ- 56
վաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել։
*Եւ զարմացան ծնօղքն նր։ և նա պատ- 57
ուիրեաց մի ումեք ասել՝ որ ինչ եղեն։

## ԳԼ. Թ.

ԳԼ. Ա. ԵՒ ‖ կոչեցեալ զերկոտասանսն առաքեալսն, 1
‖Մ––թ. ետ նց զօրութի և իշխանութիւն ՚ի վերայ
10. 1. ամ դիւաց, և բժշկել զհիւանդութիւն։ *Եւ 2
Մ––ր. առաքեաց զնս քարոզել զարքայութին այ,
3. 13. ‖Մ––թ. և բժշկել զախտաժէտս։ *‖Եւ ասէ ցնս. 3
10. 9. մի ինչ բառնայք ՚ի ճանապարհ. մի գաւա-
Մ––ր. զան և մի մախաղ, մի հաց և մի արծաթ,
6. 8. մի երկուս հանդերձս ունիցիք։ *Եւ յոր 4
տուն մտանիցէք՝ անդ ագջիք. և անտի գը-
նայջիք։ *Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, 5
‖Գ––ծ. յորժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ,
13. 51. զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ՚ի վկայ-
ութի նց։ *Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս 6
և ըն գեօղս՝ աւետարանէին, և բժշկէին ըն
‖Մ––թ. ամ տեղիս։ *‖Եւ լուաւ Հերովդէս չորրոր- 7
14. 1. դապետ զգործսն ամ. և զարմանայր վասն
Մ––ր. ասելոյն յոմանց, *թէ յովհաննէս յարեաւ 8
6. 14. ՚ի մեռելոց, և յոմանց՝ թէ եղիա յայտնե-
ցաւ, և յայլոց՝ թէ մարգարէ ոմն յառաջ-
նոցն յարեաւ։ *Եւ ասէ հերովդէս. զյովհան- 9
նէս ես գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ՝ զորմէ
զայսպիսի իրս լսեմ. և խնդրէր տեսանել
զնա։

10 զնա ։ *Դարձեալ առաքեալքն, եւ պատմե-
ցին նմա զինչ զոր արարին ։ Եւ առեալ զնոսա
խուսեաց առանձինն ՚ի տեղի անապատ քա-
ղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիդա ։
11 *Եւ ժողովուրդքն իբրեւ գիտացին, գնա-
ցին զհետ նորա. եւ ընկալեալ զնոսա խօսէր ընդ
նոսա վասն արքայութեանն Այ, եւ որոց պէտք էին
12 բժշկութեան՝ բժշկէր ։ *Եւ օրն սկսաւ տա-
րաժամել. մատեան երկոտասանքն եւ ասեն
ցնա. ||Արձակեա զժողովուրդդ, զի եր- ||Մտ-ժդ
թեալ շուրջ ՚ի գիւղս եւ յագարակս՝ հան- 14. 15.
գիցեն, եւ գտցեն կերակուր. զի աստ յա- Մր-զ. 6. 36.
13 նապատ տեղւոջ եմք ։ *Նա ասէ ցնոսա. Դուք
տուք դոցա ուտել ։ Եւ նոքա ասեն. ||Ոչ գոյ ||Յհ-զ.
մեր աւելի քան զհինգ նկանակ եւ զերկուս 6. 9.
ձկունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք բա-
14 ւական ժողովրդեանդ կերակուր ։ *Քանզի
զի էին արք իբրեւ հինգ հազար ։ Ասէ ցա-
շակերտսն. Բազմեցուցէք զդոսա դաս
15 դաս՝ յիսուն յիսուն ։ *Եւ արարին այն-
16 պէս, եւ բազմեցուցին զամենեսեան ։ *Եւ
առեալ զհինգ նկանակսն եւ զերկուս ձկունսն՝
հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ՝ եւ
տայր աշակերտացն արկանել ժողովրդեանն ։
17 *Կերան եւ յագեցան ամենեքեան. եւ բար-
ձին զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սա-
կառի ։
18 *||Եւ եղեւ ՚ի կալն նորա յաղօթս առանձինն, Ղ. Կ
էին ընդ նմա եւ աշակերտքն նորա. եհարց զնոսա եւ ||Մտ-ժզ
ասէ. Զո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ 16. 13.
19 իցեմ ։ *Եւ նոքա պատասխանի տուեալ ասեն. Մր-ը. 8. 27.
Զյովհաննէս մկրտիչ, եւ այլք զեղիա, իսկ

այլք թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ ։
* Ասէ ցնոսա. դուք զի՞ս ոք ասէք զինէն, թէ 20
իցեմ. պատասխանի ետ Պետրոս և ասէ.
զՔսն Այ ։ * Եւ սաստեաց ՚ի նոսա, և պատ 21
ուիրեաց մի ումեք ասել զայն. * և ասէ, 22
Մատթ. ‖ թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չար
17. 21. չարիլ և անարգիլ ՚ի քահանայապետից և ՚ի
Մարկ. 8. 31. ծերոց և ՚ի դպրաց, և սպանանիլ՝ և յերիր
աւուր յառնել ։ * Ասէր առ ամենեսին. 23
Մատթ. ‖ եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն՝
10. 38. և առցէ զխաչ իւր հանապազ՝ և եկեսցէ
Ղուկ. 14. 27. զհետ իմ ։ * ‖ Զի որ կամիցի զանձն իւր 24
‖ Ղուկ. կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուս
17. 33. ցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա ։
Յովհ. 12. 25. * Զինչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ 25
շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ տու
Մատթ. 10. 33. ժեսցի ։ * ‖ Զի որ ամօթ համարեսցի զիս և 26
զբանս իմ, զնա և որդի մարդոյ յամօթ ա
րասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք՝ և
Մատթ. 16. 28. հօր՝ և հրեշտակաց սրբոց ։ * ‖ Բայց աս 27
Մարկ. դարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք ՚ի դոցա
8. 39. նէ որ այդր կան՝ որք մի ճաշակեսցեն զմահ,
Մատթ. մինչև տեսցեն զարքայութի Այ ։ * ‖ Եւ ե 28
17. 1. Մարկ. ղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, ա
9. 1. ռեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհան
նէս՝ ել ՚ի լեառն կալ յաղօթս ։ * Եւ ՚ի կալ 29
նորա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նր այլա
կերպ. և փոփոխեաց հանդերձ նորա՝ և եղև
սպիտակ փայլուն ։ * Եւ ահա արք երկու 30
խօսէին ընդ նմա. որ էին Մովսէս և Եղիա,
* երևեալ փառօք. և ասէին զելսն նր՝ զոր 31
կատարելոց էր յԵՂմ ։ * Իսկ Պետրոս՝ և որ 32

ընդ

ընդ նմայն էին՝ ծանրացեալք ՚ի քնոյ՝ զար-
թեան, տեսին զփառս նորա՝ և զերկուս
33 արսն որ կային առ նմա։ * Եւ եղև ՚ի մեկ-
նելն նց ՚ի նմանէ, ասէ պետրոս ցՅս. Վար-
դապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, և ա-
րասցուք երիս տաղաւարս, մի քեզ և մի մով-
սեսի՝ և մի եղիայի. և ոչ գիտէր զինչ խօ-
34 սէր։ * Եւ մինչ զայս ասէր, եկն ամպ և
հովանի եղև ՚ի վ՟ր նց. և երկեան ՚ի մտա-
35 նելն նց յամպն։ * Ձայն եղև յամպոյն
և ասէ. ‖ Դա է որդի իմ ընտրեալ, դմա ‖ Բ. Պետ.
36 լուարուք։ * Եւ ՚ի լինել բարբառոյն՝ գտ- 1. 17.
աւ Յս միայն. և նոքեանք լռեցին, և ոչ
ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչ-
ինչ՝ յորոց տեսինն։
37 * Եւ եղև ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի ԿԸ
լեռնէ անտի, ը͞ն առաջ եղև նմա ժողովուրդ
38 բզմ։ * ‖ Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ ‖ Մատթ.
անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ ա- 17. 14.
ղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր Մարկ. 9. 16.
39 է ինձ։ * Եւ ահա այս հարկանէ ՚ի նմա, և
յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ զնա և թա-
ւալեցուցանէ և փրփրեցուցանէ, և հազիւ
40 մեկնի ՚ի նմանէ խորտակեալ զնա. * Եւ ա-
ղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա,
41 և ոչ կարացին։ * Պատասխանի ետ Յս և ա-
սէ. Ով ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ
եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ. մատո այսր
42 զորդին քո։ * Եւ մինչ գեռ մատչէր, զար-
43 կոյց զնա դևն՝ և շարժեաց։ * Սաստեաց
Յս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն.
44 և ետ զնա ցհայր իւր։ * Եւ զարմանային
ա-

ամենեքեան 'ի վ՟ր մեծամեծացն այ՟. և 'ի
զարմանալն ամենեցուն 'ի վ՟ր ամ՟ի զոր առ-
նէր, ասէ ցաշակերտսն իւր. դիք դուք 'ի
լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի որդի մար-
դոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան: *Եւ 45
նոքա ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ 'ի
նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն. և երկնչէին հար-
Մ՟թ. ցանել զնա վ՟ն բանին այնորիկ: *Եւ մտա 46
18. 1. խորհուրդ 'ի նս՟ թէ ո՞ արդեօք մեծ իցէ 'ի
Մ՟ր. 9. 33. նոցանէ: *Յս՟ իբրև ծանեաւ զխորհուրդս 47
սրտից նց՟, առ մանուկ մի՝ կացոյց 'ի մէջ նց՟
առ իւր, *և ասէ ցնս՟. որոք ընկալցի զմա- 48
նուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, և որ
զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի
որ փոքրիկն է յամենեսին 'ի ձեզ՝ նա եղիցի
մեծ: *Պատասխանի ետ յովհաննէս և ա- 49
սէ. վարդապետ՝ տեսաք զոմն որ յանուն քո
դևս հանէր՝ և արգելաք զնա, զի ոչ շրջի ը՟
մեզ: *Ասէ ցնս՟ յս՟. մի՛ արգելուք. զի որ 50
ոչն է ձեր թշնամի՝ 'ի ձեր կողմն է:
Դ. Պ. *Եւ եղև 'ի կատարել աւուրց վերանալոյ 51
նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ
յէմ՟: *Եւ առաքեաց հրեշտակս առաջի 52
երեսաց իւրոց. և իբրև չոգան՝ մտին 'ի
գիւղ մի սամարացւոց պատրաստել նմ՟:
*Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր 53
նորա երթալ յէմ՟: *Իբրև տեսին աշա- 54
կերտքն յակոբոս և յովհաննէս, ասեն. տէ՛ր
կամի՞ս զի ասասցուք, և իջցէ հուր յերկ-
նից՝ և սատակեսցէ զնս՟: *Դարձաւ առա- 55
Յ՟հ. ստեաց 'ի նս՟ և ասէ. ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ
3. 17. էք դուք: *Զի որդի մարդոյ ոչ եկն զա- 56

զի

զիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել։
57 և գնացին յայլ գեօղ։ *Եւ մինչ դեռ եր-
թային նոքա 'ի ճանապարհի, ասէ ոմն ցնա.
58 եկից զհետ քո՝ յոր վայր և երթիցես։ *Ասէ
ցնա Յս՟. ||աղուեսուց որջք գոն, և թռչնոց ||Մ—թ.
երկնից դադարք. և որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ 8. 20.
59 ուր դիցէ զգլուխ։ *Ասէ ցմիւս ևս. եկ
զհետ իմ։ և նա ասէ. տէր՝ հրաման տուր
60 ինձ՝ երթալ նախ թաղել զհայր իմ։ *Ասէ
ցնա Յս՟. թո՛ղ զմեռեալսն թաղել զմեռեալս
իւրեանց, և դու երթ պատմեա՛ զարքայու-
61 թե՟ն այ՟։ *Ասէ և այլ ոմն. եկից զհետ քո
տէր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժա-
62 րել 'ի տանէ իմմէ։ *Ասէ ցնա Յս՟. ոչ ոք
արկանէ ձեռն զմաճով՝ և հայիցի յետս, և-
թէ յաջողեալ իցէ արքայութե՟ն այ՟։

## ԳԼ. Ժ.

1 Յետ այսորիկ երեւեցոյց Տր՟ և այլ ևս եօ- Գ. Գ.
թանասուն և երկուս. և առաքեաց զնոսա
երկուս երկուս առաջի իւր յամ՟ քաղաքս և
2 'ի տեղիս, ուր ինքն երթալոց էր։ *Եւ ա-
սէ ցնս՟. ||հունձք բազում են՝ և մշակք սա- ||Մ—թ.
կաւ. արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց, զի հան- 9. 37.
3 ցէ մշակս 'ի հունձս իւր։ *Երթայք, ||ա- ||Մ—թ.
հա առաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ 10. 16.
4 գայլոց։ *||Մի բառնայք քսակ մի մախաղ ||Մ—րկ.
մի կօշիկս, և 'ի ճանապարհի ումեք ողջոյն 6. 8.
5 մի տայցէք։ *Յոր տուն մտանիցէք նախ
6 ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. *Եւ ե-
թէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ 'ի վ՟ր
նր՟ ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ 'ի ձեզ դարձ-
ցի։

ցի։ * Եւ 'ի նմին տան ագանիջիք, ուտի- 7
Մատթ. 10. 10. ջիք եւ ըմպիջիք 'ի նոցանէ. զի արժանի է
Ա. Տիմ. 5. 18. մշակն վարձու իւրոյ։ Մի՛ փոխիցիք տանէ 'ի
տուն։ * Յոր քաղաք մտանիցէք՝ եւ ընդու- 8
նիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն
ձեր. * եւ բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք 9
իցեն. եւ ասասջիք նոցա, մերձեալ է 'ի վերայ
ձեր արքայութիւն այ։ * Եւ յոր քաղաք մտա- 10
նիցէք՝ եւ ոչ ընդունիցին զձեզ, ելեալ ելա-
Գործ. 13. 51. նիցէք 'ի հրապարակս նր, ասասջիք։ * Եւ 11
զփոշին որ կցեալ է 'ի քաղաքէ ձերմէ յոտս
մեր՝ թօթափեսցուք 'ի ձեզ. բայց զայս գի-
տասջիք զի մերձեալ է արքայութիւն այ։ * Ա- 12
սեմ ձեզ, զի սոդոմացւոց ընդարձակագոյն
լինիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այն-
Մատթ. 11. 21. միկ։ * Վա՜յ քեզ քորազին. վա՜յ քեզ բեթ- 13
սայիդա. զի եթէ 'ի տիւրոս եւ 'ի սիդոնի
եղեալ էին զօրութիւնն՝ որ եղեն 'ի ձեզ, վա-
ղուց եւս արդեօք 'ի խորգ եւ 'ի մոխիր նս-
տեալ ապաշխարեալ էր։ * Բայց տիւրոսի 14
եւ սիդոնի ընդարձակագոյն լինիցի 'ի դատաս-
տանի՝ քան ձեզ։ * Եւ դու կափառնաում, 15
որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես, մինչեւ 'ի
Մատթ. 10. 40. դժոխս իջցես։ * Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ 16
Յովհ. 13. 20. որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս
անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. եւ որ ինձ
լսէ՝ լսէ այնմիկ որ զիս առաքեաց։ * Դար- 17
ձան եօթանասունն եւ երկուքն խնդութբ եւ
ասեն. տէր՝ եւ դեւք հնազանդին մեզ յա-
նուն քո։ * Եւ ասէ ցնա. տեսանէի զսա- 18
տանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլակն։
* Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս 19
եւ

և զկարիճս և զամ զօրութիւն թշնամւոյն, և
20 ձեզ ոչինչ մեղանչիցէ։ * Բայց ընդ այն մի
խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ
խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յեր-
21 կինս։ * Ի նմին ժամու ցնծացաւ յհոգ- Մտթ.
ւոյն սրբոյ և ասէ. գոհանամ զքէն հայր՝ 11. 25.
տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս
յիմաստնոց և 'ի գիտնոց՝ և յայտնեցեր զայս
տղայոց. այո հայր, զի այսպէս հաճոյ եղե-
22 ւառաջի քո։ * Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի
հօրէ իմմէ. և ոչ ոք գիտէ թէ ո՛վ է որդի,
եթէ ոչ՝ հայր, և ո՛ է հայր՝ եթէ ոչ՝ որդի,
23 և ում կամիցի որդին յայտնել։ * Եւ դար-
ձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. Երա- Մտթ.
նեալ աչացն՝ որ տեսանիցեն զոր տեսանէքդ։ 13. 16.
24 * Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք և թա-
գաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տե-
սանէք, և ոչ տեսին. և լսել զոր լսէքդ, և
ոչ լուան։

25 * Եւ ահա յարեաւ ոմն օրէնսգէտ՝ փորձէր ԴԺ
զնա և ասէր. վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ Մտթ.
զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից։ 22. 35.
26 * Եւ նա ասէ ցնա. յօրէնսն զի՞նչ գրեալ է, Մրկ.
27 ո՞րպէս ընթեռնուս։ * Նա պատասխանի 12. 28.
ետ և ասէ. Սիրեսցես զՏր ած քո յամ սըր- Օրէ.
տէ քումմէ, և յամ անձնէ քումմէ, և յամ 6. 5.
զօրութե քումմէ. և յամ մտաց քոց. և զըն-
28 կեր քո իբրև զանձն քո։ * Եւ ասէ ցնա.
ուղիղ ետուր զպատասխանիդ, զայդ արա՛
29 և կեցցես։ * Նա իբրև կամեցաւ զանձն
արդարացուցանել՝ ասէ ցյս. և ո՞վ է իմ ըն-
30 կեր։ * Պատասխանի ետ յս և ասէ. այր մի

իջա-

իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով, և անկաւ ՚ի ձեռս
աւազակաց, որք մերկացուցին զնա՝ և վէրս
՚ի վր եդին, թողին կիսամահ և գնացին։
* Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ 31
նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց ա-
րար։ * Նոյնպէս և ղևտացի մի եկեալ ընդ 32
նոյն տեղի՝ եւտես և զանց արար։ * Սամա- 33
րացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն
առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ։ * Եւ 34
մատուցեալ պատեաց զվէրս նր, արկեալ ՚ի
վր ձէթ և գինի. և եդեալ ՚ի վերայ գրաս-
տու իւրոյ՝ ած զնա ՚ի պանդոկի մի, և դար-
մանեաց զնա։ * Եւ ՚ի վաղիւ անդր իբրև 35
ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն
երկուս դահեկանս՝ և ասէ. դարմանն տար
դմա, և զոր ինչ ծախեսցես ՚ի դա՝ ՚ի միւ-
անգամ դառնալս իմում հատուցից քեզ։
* Արդ՝ ո՞ յերեցունց ՚ի նոցանէ թուի քեզ 36
մերձաւոր լեալ անկելոյն ՚ի ձեռս աւազա-
կաց։ * Եւ նա ասէ. որ արար զողորմութիւն 37
՚ի վերայ նր։ ասէ ցնա յս. երթ և դու արա՛
նոյնպէս։ * Եւ եղև ՚ի գնալն նց, և ինքն 38
եմուտ ՚ի գեօղ մի. և կին մի անուն Մար-
թա ընկալաւ զնա ՚ի տուն իւրում։ * Եւ նր 39
էր քոյր մի, որում անուն էր Մարիամ։ որ և
եկն նստաւ առ ոտս տն, և լսէր զբանս
նր։ * Եւ Մարթա զբաղեալ էր ՚ի բազում 40
սպասու. եկն եկաց առ նմա և ասէ. տէ՛ր
ոչինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն ե-
թող զիս ՚ի սպասու. արդ՝ ասա՛ դմա զի օգ-
նեսցէ ինձ։ * Պատասխանի ետ յս և ասէ. 41
Մարթա՛ Մարթա՝ դու հոգաս և զբաղում

իրս

42 իւիք զբաղեալ ես․ *բայց սակաւ ինչ
պիտոյ է․ մարիամ մասն բարի ընտրեաց,
որ ոչ բարձցի 'ի նմանէ։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս․ ԳԼ. Օ
եւ իբրեւ դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշա-
կերտացն իւրոց․ տէ՛ր՝ ուսո մեզ յաղօթս
կալ․ որպէս եւ յովհաննէս ուսոյց աշակեր-
2 տաց իւրոց։ *Ասէ ցնո, յորժամ կայցէք
յաղօթս, ասասջի՛ք․ ||Հայր մեր՝ սր եղի- ||Մատթ.
ցի անուն քո․ եկեսցէ արքայութիւն քո։ 6. 9.
3 *Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ զօր-
4 ըստօրէն։ *Եւ թո՛ղ մեզ զմեղս մեր, զի եւ
մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ․
5 եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութի՛։ *Եւ ա-
սէ ցնո․ ո՛վ է 'ի ձէնջ որոյ իցէ բարեկամ,
եւ երթայցէ առ նա 'ի մէջ գիշերի, եւ ասի-
ցէ ցնա․ բարեկամ՝ տո՛ւր ինձ փոխ երիս
6 նկանակս․ *զի բարեկամ իմ եկն առ իս
յուղւոյ, եւ ոչինչ ունիմ դնել առաջի նր։
7 *Եւ նա 'ի ներքուստ ասիցէ պատասխանի եւ
ասիցէ․ մի՛ աշխատ առներ զիս, զի դուռքդ
փակեալ են, եւ մանկունքս ը̃ ինեւ կան յան-
8 կողնի․ ոչ կարեմ յառնել եւ տալ քեզ։ *Ա-
սեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմ վա
բարեկամութեանն, սակայն վա ժտութեանն յա-
րուցեալ տայցէ նմա՝ զինչ եւ պիտոյ իցէ։
9 *||Եւ ես ասեմ ձեզ, խնդրեցէ՛ք՝ եւ տացի ||Մատթ.
ձեզ, հայցեցէ՛ք՝ եւ գտջի՛ք, բախեցէ՛ք՝ եւ 7. 7. Յհ.
10 բացցի ձեզ։ *Զի ամ որ խնդրէ՝ առնու, 14. 13.
եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի Յկ.
նմա։ 1. 5.

‖Մատթ. նմա. *‖Ո՞ ոք ՚ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի 11
7. 9. իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն օձ տայ-
ցէ նմա. *Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կա- 12
րի՞ճ տայցէ նմա. *Իսկ եթէ դուք որ չարքդ 13
էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձե-
րոց, ո՞րչափ եւս առաւել Հայր ձեր յերկնից
տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն ՚ի նը-
մանէ.

ԳԼ. Լ. *‖Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ յելա- 14
‖Մատթ. նել դիւին խօսեցաւ համրն, եւ զարմացան
9. 32. ամ ժողովուրդքն. *Եւ ոմանք ՚ի նոցանէ 15
12. 22. ասէին. ‖Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց
‖Մարկ. 3. 22. հանէ դա զդեւս. *Եւ այլք փորձէին՝ եւ 16
նշան յերկնից խնդրէին ՚ի նմանէ. *Իսկ նր 17
գիտացեալ զխորհուրդս նց, ասէ ցնս. ամ
թագաւորութի բաժանեալ յանձն՝ աւերի,
եւ տուն բաժանեալ յանձն՝ կործանի. *Ա- 18
պա եթէ եւ սատանայ բաժանեցաւ յանձ-
նէ, զիա՞րդ կայցէ թագաւորութի նր. զի
ասէք զինէն եթէ բէեղզեբուղաւ իշխա-
նաւն դիւաց հանէ դա զդեւս. *Եթէ ես 19
բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր
իւ՞ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին
ձեր դատաւորք. *Իսկ եթէ մատամբ այ 20
հանեմ զդեւս, ապա հասեալ է ՚ի վերայ ձեր
արքայութի այ. *Յորժամ հզօր վառեալ՝ 21
պահիցէ զտուն իւր, ՚ի խաղաղութե են ինչք
նորա. *Բայց եթէ հզօրագոյն քան զնա ՚ի 22
վր եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինու-
թիւն նորա՝ յոր յուսացեալ էր, եւ զաւարն նր
բաշխեսցէ. *Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ 23
է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ. *Յոր- 24
ժամ

ժամ ‖ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ ‖Մատ. 12. 43.
անջրդի տեղիս, խնդրէ հանգիստ. եւ իբ-
րեւ ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն 'ի
25 տուն իմ ուստի ելի։ *Եւ գայ գտանէ մաք-
26 րեալ եւ յարդարեալ։ *Յայնժամ երթայ
եւ առնու եւթն այլ այսս չարագոյնս քան զինքն
եւ մտանեն բնակեն անդ, եւ լինի յետինն մար-
27 դոյն այնորիկ չար քան զառաջինն։ *Եւ
եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն երբարձ կին
մի 'ի ժողովրդենէ անտի եւ ասէ. երանի է
որովայնին՝ որ կրեաց զքեզ, եւ ստեանցն՝
28 որ դիեցուցին զքեզ։ *Եւ նա ասէ. նա ե-
րանի այնոցիկ է, որ լսեն զբանն այ, եւ պա-
29 հեն։ *Եւ 'ի դիմել 'ի վերայ նր ժողո-
վրդոցն՝ սկսաւ ասել. ‖ ազգս այս ազգ չար ‖Մատ.
է. նշան խնդրէ, եւ նշան յերկնից ոչ տացի 12. 39.
30 նմա՝ բայց նշանն յովնանու։ *‖ Զի որպէս 1. Կոր.
եղեւ յովնան նշան նինուէացւոց, այնպէս ե- 1. 22.
ղիցի եւ որդի մարդոյ ազգիս այսմիկ։ ‖Յովն. 2. 1.
31 *‖Թագուհին հարաւոյ յարիցէ 'ի դատաստա- ‖3 Թագ.
նի ընդ արս ազգիս այսորիկ՝ եւ դատապար- 10. 1.
տեսցէ զսոսա, զի եկն 'ի ծագաց երկրի լսե-
լ զիմաստութիւն սողոմոնի. եւ ահա աստ ա-
32 ւելի քան զսողոմոն է աստ։ *Արք նինուէա-
ցիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ
այսմիկ՝ եւ դատապարտեսցեն զսա, ‖ զի ա- ‖Յովն.
պաշխարեցին 'ի քարոզութիւն յովնանու. եւ 3. 5.
ահա աւելի քան զյովնան է աստ։
33 *‖Ոչ ոք լուցեալ ճրագ՝ դնէ 'ի թաքս- ԼԿ
տեան, եւ ոչ ընդ գրուանաւ. այլ 'ի վ̄րա աշտա- ‖Մատ.
նակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն։ 5. 15.
34 *‖Ճրագ մարմնոյ ական է. յորժամ ական ‖Մատ. 6. 22.
ա-

առատ է, ամ՟ մարմինն լուսաւոր եղիցի. և
երբ ակն չար է, և մարմինն խաւարին եղի-
ցի. * Զգոյշ լեր՝ գուցէ լոյսդ որ ՚ի 35
քեզ է՝ խաւար իցէ. * Իսկ եթէ մարմինդ քո 36
ամ՟ լուսաւոր է՝ և չգուցէ մասն ինչ խաւա-
րին, եղիցի լուսաւոր ամ՟. որպէս յորժամ
ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ. * Ընդ 37
մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փա-
րիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. և նա մը-
տեալ բազմեցաւ. * Իբրև տեսեալ փարիսե- 38
ցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յա-
‖Մտթ. ռաջ քան զճաշ. * Ասէ ցնա Տէր. ‖ Այժմ 39
23. 25. դուք փարիսեցիք զարտաքին բաժակին և
զպնակին սրբէք. և ներքինն ձեր լի է յա-
փշտակութեամբ և չարութեամբ. * Անմիտք՝ ո՞չ 40
ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն
նոյն արար. * Բայց այդ է զարժանն իսկ՝ 41
տուք ողորմութիւն, և ահա ամ՟ սբ է ձեր.
‖Մտթ. * Այլ վա՜յ ձեզ փարիսեցւոց. ‖ զի տասա- 42
23. 23. նորդէք զանանուխ և զփեգենայ և զամե-
նայն բանջար, և անցանէք զիրաւամբք և
զսիրովն Այ՟. զայս արժան էր առնել՝ և զայ-
‖Մտթ. նու ոչ անցանել. * ‖ Վա՜յ ձեզ փարիսեցւոց. 43
23. 6. զի սիրէք զառաջնագահս ՚ի ժողովուրդս, և
Մրկ. զողջոյնս ՚ի հրապարակս. * Վա՜յ ձեզ՝ 44
12. 39. զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և
Ղուկ. մարդիկ գնան ՚ի վերայ՝ և ոչ գիտեն. * Պա- 45
20. 46. տասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ
ցնա. Վարդապետ՝ զայս բանս ասելով և զը-
մեզ թշնամանես. * Եւ նա ասէ. Եւ ձեզ 46
‖Մտթ. վա՜յ օրինականացդ. ‖ զի բառնայք մարդ-
23. 4. կան բեռինս դժուարակիրս, և դուք մա-

տամբ

մատամբ միով 'ի բեռինսն ոչ մերձենայք ։
47 * Վայ ձեզ՝ զի շինէք զշիրիմս մարգարէիցն
48 և հարքն ձեր սպանին զնոսա ։ * Ապա ուրեմն
վկայէք՝ եթէ կամակից էք գործոց հարցն
ձերոց . զի նոքա կոտորեցին զնոսա , և դուք
49 զգերեզմանս նոցա շինէք ։ * Վասն այնորիկ և
իմաստութիւնն այ ասաց . առաքեցից 'ի նոսա
մարգարէս և առաքեալս , և 'ի նոցանէ սպա-
50 նանիցեն և հալածիցեն ։ * Զի խնդրեսցի
արիւն ամ մարգարէից՝ հեղեալ 'ի սկզբանէ
51 աշխարհի՝ յազգէ յայսմանէ , * ‖ յարենէն ‖ Ծն.
Աբէլի մինչև յարիւնն ‖ Զաքարիայ կորուսե- 4. 8.
լոյ ը̅ սեղանն և ը̅ տաճարն . այո ասեմ ձեզ՝ ‖ 2. Մն.
52 խնդրեսցի յազգէ յայսմանէ ։ * Վայ ձեզ 24. 22.
օրէնսգիտացդ . զի թաքուցանէք զփականս
գիտութեն . դուք ոչ մտանէք , և որ մտա-
53 նելոցն են՝ արգելուք ։ * Եւ 'ի խօսելն զայս
ը̅ նոսա առաջի ամ ժողովրդեանն ,
զանգիտել հարկանէին . և սկսան դպիրքն և
փարիսեցիք զայրել՝ և զրգռել ը̅ նմա վասն
54 բզմ իրաց . * և սպասել որսալ ինչ բանս 'ի
բերանոյ նր , զի չարախօսեսցեն զնմանէ ։

## ԳԼ. ԺԲ.

1 Որում 'ի կուտել բիւրաւորաց ժողովր- ‖ Մտ.
դեանն՝ մինչև կոխել զմիմեանս , սկսաւ ա- 16. 6.
սել ցաշակերտսն իւր . ‖ Նախ՝ զգոյշ լերուք Մր.
անձանց 'ի խմորոյ փարիսեցւոցն , որ է կեղ- 8. 15.
2 ծաւորութիւն ։ * ‖ Ոչ ինչ է 'ի ծածուկ՝ ‖ Ղկ.
որ ոչ յայտնեսցի , և գաղտնի՝ որ ոչ ծանի- 8. 17.
3 ցի ։ * Վն զի զոր ինչ ասիցէք 'ի խաւարի ,
լսելի լիցի 'ի լոյս . և զոր յունկանէն խօսե-

ցարուք ՚ի շտեմարանս, քարոզեսցի ՚ի վերայ
տանեաց։ * Բայց ձեզ ասեմ սիրելեաց ի- 4
մոց. մի զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանա-
նեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ
ոչ ունիցին առնել։ * Այլ ցուցից ձեզ յում 5
մէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ
սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ՚ի
գեհեն. այո ասեմ ձեզ՝ յայնմանէ երկնչի-
ջիք։ * Ո՞չ ապաքէն հինգ ճագ երկուց դան- 6
գաց վաճառի, եւ մի ՚ի նոցանէ ոչ է մոռա-
ցեալ առաջի այ։ * Այլ ձեր եւ ամ իսկ հեր 7
գլխոյ թուեալ է. մի երկնչիք՝ զի քան զբա-
Մտթ. զում ճագս լաւ եք դուք։ * Ասեմ ձեզ. 8
10. 32. զի ամ որ խոստովանեսցի յիս առաջի մարդ-
Մրկ. կան, եւ որդի մարդոյ խոստովանեսցի զնմա-
8. 38. նէ առաջի հրեշտակաց այ։ * Եւ որ ուրաս- 9
2. Տմ. ցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի
2. 12. առաջի հրեշտակաց այ։ * Եւ ամ որ ասէ 10
Մտթ. բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ
12. 32. զհոգին սբ հայհոյիցէ, մի թողցի նմ։ * Այլ 11
Մրկ. յորժամ տանիցին զձեզ ՚ի ժողովուրդս եւ ՚ի
3. 29. պետութիւնս եւ յիշխանութիւնս, մի հոգայցէք՝
ոչ թէ զինչ պատասխանի տայցէք. կամ
զինչ ասիցէք։ * Զի հոգին սբ ուսուցէ 12
ձեզ ՚ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել։
ՆԲ * Ասէ ոմն ՚ի ժողովրդենէն ցնա. վարդա- 13
պետ՝ ասա ցեղբայր իմ բաժանել ՚ը իս ըզ-
ժառանգութիւնն։ * Եւ նա ասէ ցնա. այր
դու՝ ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանա- 14
րար ՚ի վ՚ ձեր։ * Եւ ասէ ցնս. տեսէք եւ 15
զգոյշ լերուք յամ ագահութենէ, զի ոչ եթէ
՚ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա։

Խա

16 * Խօսեցաւ առ նոսա առակ մի՝ և ասէ. առն
ուրումն մեծատան եռաւն անդք տոհմական-
17 նըս. * Եւ խորհէր 'ի միտս իւր՝ և ասէր. զի՞
գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից
18 զարդիւնս իմ։ * Այս ասէ. գիտեմ զինչ ա-
րարից. քակեցից զշտեմարանս իմ, և ես մե-
ծամեծս շինեցից. և անդր ժողովեցից ըզ-
19 ցորեան և զամ բարութիս իմ. * Եւ ասացից
ցանձն իմ. անձն՝ ունիս բազում բարութիս համ-
բարեալ ամաց բազմաց. հանգիր՝ կեր արբ՝
20 և ուրախ լեր։ * Ասէ ցնա ած. անմիտ՝
յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահան-
ջեն, իսկ զոր պատրաստեցերդ՝ ո՞ւմ լինի-
21 ցի։ * Այսպէս և որ գանձէ անձին, և ոչ
22 յած մեծանայցէ։ * Ասէ ցաշակերտսն իւր.
վն այսորիկ ասեմ ձեզ. մի հոգայք 'ի ոգ- Սղմ.
ւոյ՝ թէ զինչ ուտիցէք, և մի ընդ մարմնոյ՝ 54. 23.
23 թէ զինչ զգենուցուք։ * Ոգի առաւել Մտթ.
է քան զկերակուր՝ և մարմին քան զհան- 6. 25.
24 դերձ։ * Հայեցարո՛ւք ընդ ագռաւս, զի ոչ 1. Պետ.
սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտե- 5. 7.
մարանք՝ և ոչ համբարանոցք, և ած կերակ-
րէ զնա. ո՞րչափ ևս առաւել զձեզ՝ որ լաւ
25 էք քան զթռչունս։ * Ո՞վ 'ի ձէնջ առ հո-
գալ՝ կարիցէ յաւելուլ 'ի հասակ իւր կան-
26 գուն մի։ * Իսկ արդ՝ եթէ 'ի փոքուն չէք
27 բաւական՝ վն այլոցն զի՞ հոգայցէք։ * Հայե-
ցարո՛ւք ընդ շուշանն՝ ո՞րպէս աճէ, ոչ ջա-
նայ՝ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ՝ և ոչ Սողոմոն
յամ 'ի փառսն իւր՝ զգեցաւ իբրև զմի 'ի նո-
28 ցանէ։ * Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր 'ի դաշ-
տի է՝ և վաղիւ 'ի հնոց արկանելի, ած այն-

պէս

պէս զգեցուցանէ. որչափ եւս առաւել զձեզ
թերահաւատք։ *Եւ դուք մի խնդրէք՝ 29
զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, եւ մի ըղ-
բաղնուք. *զի զայն ամ հեթանոսք աշխար- 30
հի խնդրեն. այլ ձեր հայր գիտէ՝ զի պիտոյ
է այն ամ։ *Բայց խնդրեցէք զարքայութիւն 31
այ. եւ այն ամ յաւելցի ձեզ։
ԽԳ. *Մի երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ 32
‖Մատթ. հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ *‖Վա- 33
19. 21. ճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն.
եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ,
‖Մատթ. ‖գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մեր-
6. 20. ձենայ, եւ ոչ ցեց ապականէ։ *Զի ուր 34
գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։
*Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս՝ եւ 35
ճրագունք լուցեալք։ *Եւ դուք նմանօղք 36
մարդկան՝ որ ակն ունիցին տն իւրեանց՝ թէ
երբ դառնայցէ ՚ի հարսանեաց. զի յորժամ
գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն
նմ։ *Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս 37
եկեալ տրն գտցէ արթունս. ամէն ասեմ
ձեզ՝ զի գօտի ըն մէջ ածցէ՝ եւ բազմեցուսցէ
զնս, եւ անցեալ պաշտիցէ զնս։ *Եւ եթէ 38
յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ եւ
գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այ-
‖Մատթ. նոքիկ։ *‖Բայց զայն գիտասջիք, եթէ գի- 39
24. 43. տէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝
հսկէր, եւ չտայր թոյլ ական հատանել ՚ի
տան իւրում։ *Եւ դուք եղերուք պատ- 40
‖Յայտ. րաստք՝ ‖զի յորում ժամու ոչ կարծիցէք,
16. 15. գայ որդի մարդոյ։ *Ասէ պետրոս. տէր՝ 41
առ մեզ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ-

առ

42 ամենեսեան · * Եւ ասէ Տէր · ո՞վ իցէ հա-
ւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացուսցէ
տէր իւր 'ի վ՟ր գերդաստանի իւրոյ տալ 'ի
43 ժամու զկերակուրս · * Երանի իցէ ծառային
այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արա-
44 րեալ այնպէս · * Ճշմարիտ ասեմ ձեզ՝ զի 'ի
45 վ՟ր ամ՟ ընչից իւրոց կացուսցէ զնա · * Ա-
պա եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւ-
րում · յամէ տէր իմ 'ի գալ · և սկսանիցի
հարկանել զծառայսն և զաղախնայս, ու-
46 տել և ըմպել և արբենալ · * Եկեսցէ տէր
ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչն ա-
կնկալիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ · և
մէջ կտրեսցէ զնա, և զբաժին նորա ընդ անհա-
47 ւատս դիցէ · * Եւ ծառայ՝ որ գիտիցէ ըզ-
կամս տն՟ իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կա-
48 մաց նորա, արբցէ գան բազում · * Եւ որ ոչն
գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ,
արբցէ գան սակաւ · ամենայնի՝ որում շատ
տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ · և որում
բզմ՟ աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցե-
ցեն 'ի նմանէ ·

49 * Հուր եկի արկանել յերկիր · և զի՞նչ կա- ԻԳ·
50 միմ թէ արդէն բորբոքեալ էր · * Եւ մկըր-
տութիւն ունիմ մկրտել, և զիա՞րդ փութամ
51 մինչև կատարեսցի · * || Համարիք եթէ խա- || Մտ՟ 10 · 34·
ղաղութիւն եկի տալ յերկիր, ոչ՝ ասեմ ձեզ,
52 այլ բաժանումն · * Զի եղիցին յայսմ հետէ
հինգ 'ի տան միում բաժանեալք, երեքն
53 յերկուց, և երկուքն յերից · * Բաժանեսցի
հայր յորդւոյ՝ և որդի 'ի հօրէ, մայր 'ի
դստերէ՝ և դուստրն 'ի մօրէ, սկեսուր 'ի
հարսնէ՝

Մատթ. հարսնէ՝ և հարսն 'ի սկեսրէ իւրմէ։ *Ա- 54
16. 2. սաց և ժողովրդեանն. յորժամ տեսանիցէք
ամպ ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք՝ թէ
անձրև գայ, և լինի այնպէս. *և յորժամ 55
հարաւ շնչեալ, ասէք՝ թէ խորշակ լինի, և
լինի այնպէս։ *Կեղծաւորք՝ զերեսս երկնի 56
և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս
զայս զիա՞րդ ոչ փորձէք։ *Ընդէ՞ր և յան- 57
Մատթ. ձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։ *Յոր- 58
5. 25. ժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան,
'ի ճանապարհի տուր զջանս զերծանել 'ի
նմանէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դա-
տաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի,
և դահիճն արկանիցէ 'ի բանտ։ *Ասեմ 59
քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցա-
նիցես զյետին բնիոնն։

## ԳԼ. ԺԳ.

Եկին ոմանք 'ի նմին ժամանակի, և պատ- 1
մեցին նմա վասն գալիլեացւոցն, որոց զա-
րիւնն պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա։
*Պատասխանի ետ և ասէ ցնս. համարիք 2
եթէ այն գալիլեացիք եղեն մեղաւոր քան
զամ գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրե-
ցին։ *Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշ- 3
խարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք։
*Կամ նոքա ութուտասանքն, յորոց վերայ 4
աշտարակն անկաւ 'ի սելովամ, և սպան ըզ-
նա. համարիք եթէ նոքա պարտապանք ե-
ղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ
են յԵՐՍ. *Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ 5
ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորն-

չիք

6 կորնչիք: *Ասաց և զառակս զայս. Թզենի
մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և
եկն խնդրել պտուղ 'ի նմանէ՝ և ոչ եգիտ:
7 *Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են՝
յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզեն-
ւոջդ՝ և ոչ գտանեմ. արդ՝ կոտրեա զդա,
8 ընդէ՞ր և զերկիրդ խափանէ: *Նա պատաս-
խանի ետ և ասէ տէր՝ թող զդա յայս ամ
ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից՝ և արկից
9 աղբ. *թերևս արասցէ պտուղ. ապա թէ
ոչ՝ յամէ ևս հատցես զդա:
10 *Եւ ուսուցանէր 'ի միում 'ի ժողովրդեա- Ե Ե
11 ցն 'ի շաբաթու: *Եւ ահա կին մի՝ զոր
ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն.
և էր կարկամեալ, և ոչ կարէր ամենևին 'ի
12 վեր հայել: *Եւ տեսեալ զնա Յիս՝ կոչեաց
առ ինքն՝ և ասէ ցնա. կին դու՝ արձակեալ
13 ես 'ի հիւանդութենէ քումմէ: *Եւ եդ 'ի
վ՟ր ն՟ր ձեռն, և առժամայն ուղղեցաւ, և
14 փառաւոր առնէր զա՟ծ: *Պատասխանի ետ
ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր 'ի
շաբաթու բժշկեաց յ՟ս, և ասէ ցժողովուր-
դըն. վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս
եկայք բժշկեցարուք, և մի յաւուր շաբա-
15 թու: *Պատասխանի ետ նմա տ՟ր՝ և ասէ.
կեղծաւորք՝ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ 'ի շա-
բաթու ոչ արձակէ զեզն իւր կ՟մ զէշ 'ի մսու-
16 րոյ՝ և տանի ջուր: *Իսկ այս՝ դուստր
աբրահամու էր. զոր կապեաց սատանայ ա-
հաւասիկ ութուտասն ամ, ո՞չ էր արժան
արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու:
17 *Եւ զայս խօսել ասէր, յամօթ լինէին ա-
մե-

մենեքին որ հակառակն կային նմա. և ա՛մ
ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ա՛մ փա-
ռաւորութեանցն, որ գործէին 'ի նմանէ: * Եւ 18
ասէր. զի՞նչ նման է արքայութիւն ա՛յ, և ը-
‖Մ-թ. ընդ է՞ր նմանութեան նմանեցուցից զնա: *‖Նը- 19
13. 31. ման է հատոյ մանանխոյ, զոր առեալ մար-
Մ-րկ. դոյ՝ արկ 'ի պարտէզ իւր. աճեաց և եղև
4. 31. ծառ, և թռչունք երկնից բնակեալ էին
յոստս նորա: * Եւ դարձեալ ասէ. զի՞նչ նմա- 20
‖Մ-թ. նեցուցից զարքայութիւն ա՛յ. *‖Նման է խմո- 21
13. 33. րոյ՝ զոր առեալ կնոջ թաքոյց յալեր երից
գրուից՝ մինչև խմորեցաւ ա՛մ:
Ն. Օ. * Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ ուսու- 22
ցանէր. և ճանապարհ արարեալ յԵ՛մ. * ա- 23
սէ ոմն ցնա. տէր՝ եթէ սակաւք իցեն, որ
‖Մ-թ. ապրելոց իցեն. և նա ասէ ցնա: *‖Ջանա- 24
7. 13. ցարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ՝
զի բազումք խնդրեսցեն մտանել՝ և ոչ կա-
‖Մ-թ. րասցեն: *‖Յորմէ հետէ մտցէ տանուտէրն 25
25. 10. և փակեսցէ զդուռնն, և սկսանիցիք կալ
արտաքոյ՝ և բախել զդուռնն, և ասել. տէր
տէր՝ բաց մեզ. և պատասխանի տուեալ ասի-
ցէ ձեզ. ոչ գիտեմ զձեզ ուստի էք: * Յայն- 26
ժամ սկսանիջիք ասել. կերաք առաջի քո և
արբաք, և 'ի հրապարակս մեր ուսուցեր:
‖Մ-թ. * Եւ ասիցէ. ասեմ ձեզ, ‖ոչ գիտեմ զձեզ 27
7. 23. ուստի էք. ‖'ի բաց կացէք յինէն ա՛մ մշակ-
‖Ս-ղ. 6. 9. քդ անիրաւութեան: * Անդ եղիցի լալ և 28
Մ-թ. 25. 41. կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք զաբ-
րահամ և զիսահակ և զյակոբ՝ և զա՛մ մար-
գարէս յարքայութեան ա՛յ, և զձեզ հանեալ
արտաքս: * Եւ եկեսցեն յարևելից և յա- 29
րև-

բեւմտից եւ 'ի հիւսիսոյ եւ 'ի հարաւոյ, եւ
30 բազմեսցին յարքայութեան այ։ *||Եւ ահա ||Մտթ. 19. 30.
իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն Մրկ. 10. 31.
31 առաջինք՝ որ լինիցին յետինք։ *Ի նմին ա-
ւուր մատեան ոմանք փարիսեցիք, եւ ասեն
ցնա. Ել եւ գնա աստի, զի Հերովդէս կամի
32 սպանանել զքեզ։ *Եւ ասէ ցնա. Երթայք՝
ասացէք աղուեսուդ այդմիկ. Ահաւասիկ
հանեմ դեւս, եւ բժշկութիւնս կատարեմ այ-
սօր եւ վաղիւ. եւ յերիր աւուր կատարիմ։
33 *Բայց պարտ է այսօր եւ վաղիւ եւ 'ի միւ-
սում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգա-
34 րէի կորնչել արտաքոյ քան զեղէմ։ *||Երէմ ||Մտթ. 23. 37.
Երէմ՝ որ կոտորեիր զմարգարէս, եւ քարկոծ
առնեիր զառաքեալսն առ քեզ. քանիցս ան-
գամ կամեցայ ժողովել զորդիս քո, ոպ հաւ
զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք։
35 *Ահա թողեալ լիցի ձեզ տուն ձեր։ Բայց
ասեմ ձեզ, եթէ ոչ եւս տեսանիցէք զիս,
մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալն յանուն տն։

## ԳԼ. ԺԴ.

1 Եւ եղեւ 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն ԾԱ
իշխանաց փարիսեցւոց 'ի շաբաթու ու-
2 տել հաց, եւ նոքա սպասէին նմա։ *Եւ ա-
հա այր մի էր անդ ջրգողեալ առաջի նր։
3 *Պատասխանի ետ յս՝ եւ ասէ ցօրինականսն
եւ ցփարիսեցիս. եթէ արժա՞ն իցէ 'ի շաբա-
4 թու բժշկել։ *Եւ նոքա լուռ եղեն։ Եւ
բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, եւ
5 արձակեաց։ *Եւ ասէ ցնա. ո՞յր ուրուք 'ի
ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի 'ի ջրհոր, եւ
եւ

ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբա-
թու: * Եւ ոչ կարացին տալ նմա պատաս- 6
խանի առ այն: * Ասաց և առ կոչնականսն 7
առակ մի, հայեցեալ թէ զիարդ բարձրն-
տիր ընտրէին, ասէ ցնոսա: * Յորժամ կոչի- 8
ցես ոք զքեզ 'ի հարսանիս՝ կամ 'ի կոչունս,
մի բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատ-
ուականաւորն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ
'ի նմանէ. * և եկեալ՝ որ զքեզն և զնա կո- 9
չեաց՝ ասիցէ ցքեզ՝ տո՛ւր սմա տեղի. և ա-
պա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ու-
նել: * Այլ յորժամ կոչիցիս, երթիջի՛ր՝ 10
բազմեսջի՛ր 'ի յետին տեղւոջ. զի յորժամ
գայցէ՝ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ.
Առակ. բարեկամ 'ի վեր մատիր. յայնժամ եղի-
25. 7. ցին քեզ փառք առաջի բազմակցացն քոց:
Մատթ. * Զի ա̃մ որ բարձրացուցանէ զանձն, 11
23. 12. խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զան-
Ղուկ. ձն, բարձրասցի: * Ասէ և ցկոչնատէրն. 12
18. 14. յորժամ առնիցես Ճաշ կամ ընթրիս, մի կո-
չեր զբարեկամս քո, և մի զեղբարս քո, և
մի զազգականս քո, և մի զդրացիս քո, և
մի զմեծամեծս. զի մի և նոքա փոխարէն
կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն:
Տոբ. * Այլ յորժամ առնիցես ընդունելութի̃, 13
4. 7. կոչեա՛ զաղքատս և զխեղս և զկաղս և զ-
Առակ. կոյրս: * Եւ երանելի լինիցիս. զի ոչ ու- 14
3. 9. նին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հա-
տուսցի քեզ փոխարէն 'ի յարութե̃ արդա-
րոց: * Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմակա- 15
նացն՝ ասէ ցնա. երանի՛ որ կերիցէ Ճաշ յար-
Մատթ. քայութե̃ ա̃յ: * Եւ նա ասէ. այր ոմն գոր- 16
22. 2.

ծեաց

ծեաց ընթրիս, և հրաւիրեաց զբազումս։ Յայտ․
17 *Եւ առաքեաց զծառայ իւր 'ի ժամու ըն- 19. 9.
թրեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ եկայք,
18 զի ահաւասիկ պատրաստ է ամ̃ինչ։ *Եւ
սկսան մի ը̃ս միոջէ ամենեքեան հրաժարել։
Առաջինն ասէ. ագարակ գնեցի, և հարկ
է ելանել տեսանել զնա, աղաչեմ զքեզ՝
19 կալ զիս հրաժարեալ։ *Եւ միւսն ասէ.
լուծս հինգ եզանց գնեցի, և երթամ փոր-
ձել զնս, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժա-
20 րեալ։ *Եւ միւսն ասէ. կին առի, և վասն
21 այնորիկ ոչ կարեմ գալ։ *Եւ եկեալ ծա-
ռայն պատմեաց զայն տն̃ իւրում։ Յայն-
ժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծա-
ռայն իւր. ել վաղվաղակի 'ի հրապարակս
և 'ի փողոցս քաղաքիդ, և զաղքատս և ըզ-
22 խեղս և զկաղս և զկոյրս մուծ այսր։ *Եւ
ասէ ծառայն. տէր՝ եղև զոր հրամայեցերն,
23 և կայ և ևս տեղի։ *Եւ ասէ տր̃ն ցծառայն,
ել 'ի ճանապարհս և 'ի ցանգս, և արա́ այսր
24 մտանել, զի լցցի տունս իմ։ *Ասեմ ձեզ,
զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթ-
րեաց իմոց։

25 *Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բա- Օ Կ
26 զումք. դարձաւ և ասէ ցնոսա։ *‖Եթէ ‖Մատ.
ոք գայ առ իս՝ և ոչ ատեայ զհայր իւր և 10. 37.
զմայր և զկին և զորդիս և զեղբարս և ըզ-
քորս, նա և զանձն ևս իւր, ոչ կարէ իմ
27 աշակերտ լինել։ *‖Որ ոչ բառնայ ըզ- ‖Մատ.
խաչ իւր՝ և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշա- 16. 24.
28 կերտ լինել։ *Ո՞վ ոք 'ի ձէնջ կամիցի շի- Մար. 8. 34.
նել աշտարակ, և ոչ նախ նստեալ համարի-

ցի

ցէ զծախսն՝ եթէ ունիցի բաւական ՚ի կա-
տարումն. * Զի գուցէ իբրեւ արկանիցէ 29
հիմն՝ եւ ոչ կարիցէ կատարել, ամենեքին որ
տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել զնա,
* եւ ասել. թէ այս այր սկսաւ շինել, եւ ոչ 30
կարաց կատարել։ * Կամ ո՞ր թագաւոր եր- 31
թեալ տայցէ պատերազմ ընդ այլում թա-
գաւորի. եւ ոչ նստեալ նախ խորհիցի, ե-
թէ կարող իցէ տասն հազարաւ զդէմ ու-
նել զայնորիկ՝ որ գայցէ ՚ի վ՜ր ն՜ր քսան հա-
զարաւ. * Ապա թէ ոչ՝ մինչ դեռ հեռա- 32
գոյն իցէ, հրեշտակութի՜ առաքեալ՝ աղա-
չեսցէ ՚ի խաղաղութի՜. * Արդ՝ այսպէս ա՜մ 33
որ ՚ի ձէնջ՝ որ ոչ հրաժարեսցէ յա՜մ ընչից
‖Մ—թ. 5. 13. իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ * ‖Բար- 34
ւոք է աղ. ապա թէ աղն անհամեսցի, ի՞-
Մ—ր. 9. 49. համեմեսցի. * Ոչ յերկիր՝ եւ ոչ յաղբ է 35
պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս.
որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

## ԳԼ. ԺԵ.

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք 1
եւ մեղաւորք՝ լսել ՚ի նմանէ. * Տրտնջէին 2
փարիսեցիքն եւ դպիրք՝ եւ ասէին. ընդէ՞ր
սա զմեղաւորս ընդունի՝ եւ ուտէ ը՜ նոսա.
‖Մ—թ. 18. 12. * Ասաց առ նոսա զառակս զայս. * ‖Ո՞վ 3
որ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ո- 4
չխար, եւ կորուսանիցէ մի ՚ի նոցանէ. ո՞չ
թողուցու զիննսուն եւ զինն յանապատի, եւ
երթայցէ զհետ կորուսելոյն՝ մինչեւ գտանի-
ցէ զնա. * Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ՚ի 5
վ՜ր ուսոց իւրոց խնդալով, * եւ երթայ ՚ի 6
տուն.

տան. կոչէ զբարեկամս և զդրացիս, և ասէ
ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչ-
7 խարս իմ զկորուսեալ։ * Ասեմ ձեզ. զի
այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մե-
ղաւորի որ ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն
և իննից արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխա-
8 րութիւն։ * Կամ ո՞ր կին, որոյ իցեն
դրամք տասն. և եթէ կորուսանիցէ դրամ
մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, և ածիցէ աւել ՚ի
տան և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ։
9 * Եւ իբրև գտանէ, կոչէ զբարեկամս և
զդրացիս՝ և ասէ. ուրախ լերուք ընդ իս,
զի գտի զդրամն իմ զոր կորուսի։ * Նոյն-
10 պէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առա-
ջի հրեշտակաց Աստուծոյ ՚ի վերայ միոյ մեղաւորի՝ որ
11 ապաշխարիցէ։ * Եւ ասէ. առն միոյ էին
12 երկու որդիք. * ասէ կրտսերն ՚ի նոցանէ
ցհայրն. հայր՝ տուր ինձ բաժին, որ անկա-
նի յընչիցդ. և նա բաժանեաց նոցա զկեանսն։
13 * Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ
զամ կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հե-
ռի. և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր
14 անառակութեամբ։ * Եւ իբրև սպառեաց
զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին
15 յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորել։ * Եւ
գնացեալ յարեցաւ ՚ի մի ոմն ՚ի քաղաքացւոց
աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագա-
16 րակ իւր արածել խոզս։ * Եւ ցանկայր լը-
նուլ զորովայն իւր յեղջերացն զոր խոզքն ու-
17 տէին, և ոչ ոք տայր նմա։ * Եւ եկեալ ՚ի
միտս իւր՝ ասէ. քանի՜ վարձկանք իցեն ՚ի
տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովա-
մահ

մահ կորնչիմ։ *Յարուցեալ գնացից առ 18
հայր իմ, եւ ասացից ցնա. հայր՝ մեղայ յեր-
կինս, եւ առաջի քո, *եւ ոչ եւս եմ արժանի 19
կոչիլ որդի քո, արա զիս իբրեւ զմի 'ի վարձ-
կանաց քոց։ *Եւ յարուցեալ եկն առ հայր 20
իւր. եւ մինչ դեռ հեռագոյն էր, ետես
զնա հայրն՝ եւ գթացաւ, յարեաւ եւ ընթա-
ցաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նր̃,
եւ համբուրեաց զնա։ *Եւ ասէ ցնա որ- 21
դին. հայր՝ մեղայ յերկինս՝ եւ առաջի քո,
ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո։ *Ասէ 22
հայրն ցծառայս իւր. վաղվաղակի հանէք
զպատմուճանն առաջին, եւ ագուցէք նմա,
եւ տուք զմատանին 'ի ձեռն նորա, եւ կօշիկս
յոտս նր̃. *Եւ ածէք զեզն պարարակ՝ զե- 23
նէք, կերիցուք եւ ուրախ լիցուք, *զի այս 24
որդի իմ մեռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ
էր՝ եւ գտաւ. եւ սկսան ուրախ լինել։ *Եւ 25
էր երէց որդին նր̃ յագարակի. եւ մինչ դեռ
գայր՝ եւ մերձ եղեւ 'ի տունն, լուաւ զձայն
երգոց եւ զպարուց. *Եւ կոչեցեալ առ ինքն 26
զմի 'ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ
այն։ *Եւ նա ասէ ցնա. զի եղբայր քո ե- 27
կեալ է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ,
զի ողջամբ ընկալաւ զնա։ *Բարկացաւ՝ եւ 28
ոչ կամէր մտանել. եւ հայրն ելեալ արտաքս՝
աղաչէր զնա։ *Պատասխանի ետ եւ ասէ 29
ցհայրն. այս քանի՞ ամք են՝ զի ծառայեմ
քեզ, եւ երբեք զպատուիրանաւ քով ոչ անց-
ցի. ուլ մի երբեք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ
եղէց ընդ բարեկամս իմ։ *Յորժամ եկն 30
որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ը̃ պոռ-
նիկս,

31 նիկս, զեներ դմա զեզն պարարակ: *Նա ա-
սէ ցնա. որդեակ՝ դու հանապազ ընդ իս
32 ես, և ամ որ ինչ իմ է՝ քո է. *այլ ուրախ
լինել և խնդալ պարտ էր, զի եղբայրդ քո
այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝
և գտաւ:

## ԳԼ. ԺԶ.

1 Ասէր և առ աշակերտսն. այր մի էր մե- ՕԲ
ծատուն, որոյ էր տնտես. և եղև զնմա-
նէ ամբաստանութիւն որպէս թէ վատնիցէ
2 զինչս նր: *Կոչեաց, և ասէ ցնա. զի՞նչ է
այս զոր լսեմ զքէն, տուր զհամար տնտե-
սութեան քո. զի ոչ ես կարես լինել տնտես:
3 *Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գոր-
ծեցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս.
4 գործել ոչ կարեմ՝ մուրանալ ամաչեմ: *Գի-
տեմ զինչ արարից. զի յորժամ ի բաց լի-
նիցիմ ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ի
5 տունս իւրեանց: *Ապա կոչեցեալ առ ինքն
մի ըստ միոջէ ի պարտապանացն տն իւրոյ, ա-
սէ ցառաջինն. քանի՞ ինչ պարտիս տեառն
6 իմում: *Եւ նա ասէ. հարիւր մար ձիթոյ:
ասէ ցնա. կալ զգիր քո, և նիստ գրեա վաղ-
7 վաղակի յիսուն: *Ապա ասէ ցմիւսն.
դու քանի՞ ինչ պարտիս: և նա ասէ. հա-
րիւր քոռ ցորենոյ: և ասէ ցնա. կալ զգիր
8 քո՝ և նիստ գրեա ութսուն: *Եւ գովեաց
տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ
արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստ-
նագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւ-
9 րեանց: *Եւ ես ձեզ ասեմ. արարէք ձեզ

բա-

բարեկամս ՚ի մամոնայէ անիրաւութեան. զի
յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձեզ ՚ի
յարկսն յաւիտենականս։ *Որ ՚ի փոքուն 10
հաւատարիմ է, և ՚ի բազմին հաւատարիմ
է. և որ ՚ի փոքուն անիրաւ է, և ՚ի բազմին
անիրաւ է։ *Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մա- 11
մոնային ոչ եղէք հաւատարիմք, զճշմարիտն
ձեզ ո՞ հաւատասցէ։ *Եւ եթէ յօտարին 12
ոչ եղէք հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ։
‖Մտթ. 6. 24. *‖Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծա- 13
ռայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սի-
րիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն ար-
համարհիցէ. ոչ կարէք այ ծառայել և մա-
մոնայի։ *Լսէին զայս ամ փարիսե- 14
ցիքն՝ քանզի արծաթասէրք էին, և անգոս-
նէին զնա։ *Եւ ասէ ցնա. դուք էք որ ար- 15
դարացուցանէք զանձինս առաջի մարդկան,
սակայն ած գիտէ զսիրտս ձեր. զի որ առա-
ջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի այ։
‖Մտթ. 11. 12. *‖Օրէնքն և մարգարէք մինչև ցյովհան- 16
նէս. յայնմ հետէ արքայութիւն այ աւետա-
‖Մտթ. 5. 18. րանի, և ամ որ զնա բռնաբարէ։ *‖Դիւ- 17
րին իցէ երկնից և երկրի անցանել, քան յօ-
‖Մտթ. 5. 32. Մրկ. 10. 11. րինացն միոյ նշանախեցի անկանել։ *‖Ա- 18
մենայն որ արձակէ զկին իւր՝ և առնէ այլ,
շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ։ *Այր 19
մի էր մեծատուն, և ագանէր բեհեզս և
ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առա-
տապէս։ *Եւ աղքատ մի անուն Ղազարոս 20
անկեալ դնէր առ դրանն նորա վիրաւորեալ.
*և ցանկայր յագել ՚ի փշրանացն՝ որ անկա- 21
նէին ՚ի սեղանոյ մեծատանն. այլ և շունք

եւ

22 եւ գային , եւ լեզուին զվէրս նորա ։ * Եւ ե-
ղեւ մեռանել աղքատին . եւ տանել հրեշտա-
կաց զնա 'ի գոգն աբրահամու . մեռաւ եւ
23 մեծատունն՝ եւ թաղեցաւ ։ * Եւ 'ի դժոխ-
սն ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր .
ետես զաբրահամ 'ի հեռաստանէ , եւ զղա-
24 զարոս 'ի գոգ նորա հանգուցեալ ։ * Եւ նա
աղաղակեաց եւ ասէ . Հայր աբրահամ՝ ո-
ղորմեաց ինձ , եւ առաքեա զղազարոս , զի
թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր , եւ զո-
վացուսցէ զլեզու իմ . զի պապակիմ 'ի տա-
25 պոյ աստի ։ * Եւ ասէ ցնա աբրահամ . որ-
դեակ՝ յիշեա զի ընկալար անդրէն զբարիս
քո 'ի կեանսն քում , եւ ղազարոս նոյնպէս
զչարչարանս . արդ՝ սա աստ մխիթարի , եւ
26 դու այդր պապակիս ։ * Եւ 'ի վ՟ր այսր ամ՟ի՝
վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ . եթէ կա-
միցին աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն , եւ
27 ոչ այտի ոք առ մեզ անցանել ։ * Եւ ասէ .
արդ աղաչեմ զքեզ հայր , զի առաքեսցես
28 զդա 'ի տուն հօր իմոյ . * Են իմ անդ եղբարք
հինգ , որ՟պ զի տացէ նոցա վկայութ՟ի . զի մի եւ
29 նոքա գայցեն յայս տեղի տանջանաց ։ * Եւ
ասէ աբրահամ . ունին զմովսէս եւ զմարգա-
30 րէս , նոցա լուիցեն ։ * Եւ նա ասէ . ոչ՝ հայր
աբրահամ , բայց եթէ 'ի մեռելոց ոք երթի-
31 ցէ առ նոսա , եւ ապաշխարեսցեն ։ * Եւ ա-
սէ ցնա . եթէ մովսէսի եւ մարգարէիցն ոչ
լսեն , եւ ոչ եթէ 'ի մեռելոց ոք յառնիցէ՝ հա-
ւատասցեն ։

# ԳԼ. ԺԷ.

Զ. Գ. Ասաց և առ աշակերտսն իւր. ոչ է մարթ 1
Մատթ. չգալ գայթագղութեան. բայց վայ այնմիկ
18. 7. է՝ յորոյ ձեռն գայցէ։ * Լաւ էր նմա՝ թէ 2
Մրկ. վէմ երկանաքար կախեր զպարանոցէ նորա՝
9. 41. և ընկեցեր ՚ի ծով, քան թէ գայթագղե-
ցուցանէ զմի ոք ՚ի փոքրկանցս յայսցանէ։
Ղևտ. * Զգոյշ կայցէք անձանց։ Եթէ մեղիցէ 3
19. 17. Մատթ. եղբայր քո, սաստեա՛ նմ. և եթէ ապաշխա-
18. 15. րիցէ, թո՛ղ նմա։ * Եւ եթէ եօթն անգամ 4
Յակ. մեղիցէ քեզ, և եօթն անգամ դարձցի ՚ի
5. 19. քեզ՝ և ասիցէ, ապաշխարեմ, թողցես նմա։
* Եւ ասեն առաքեալքն ցՏէր. յաւել մեզ 5
Մատթ. հաւատս։ * Եւ ասէ Տէր. եթէ ունիցիք 6
17. 19. հաւատս քան զհատ մանանխոյ, և ասիցէք
թթենւոյս այսմիկ. խլեա՛ց և տնկեա՛ց ՚ի
ծովու, և հնազանդեսցի ձեզ։ * Իսկ ո՞վ 7
ոք ՚ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ
կամ հովիւ, որ իբրև մտանիցէ յագարակէ՝
ասիցէ ցնա վաղվաղակի. թէ անց բազմեա՛ց։
* Ապա ոչ ասիցէ ցնա. թէ պատրաստեա՛ 8
զինչ ընթրեցից իցեմ, և գօտի ածեալ պաշ-
տեա՛ զիս՝ մինչև կերայց և արբից, և ապա
կերիցես և արբցես դու։ * Միթէ շնո՞րհ 9
ինչ ունիցի ծառայն այնմիկ, զի արար զա-
մենայն հրամանսն։ * Նոյնպէս և դուք՝ 10
յորժամ առնիցէք զամ հրամայեալսն ձեզ,
ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր
պարտէաքն առնել, արարաք։ * Եւ եղև 11
մինչև երթայր նա յէմ, և ինքն անցանէր
ընդ մէջ սամարեայ և գալիլեացւոց։ * Եւ 12

մինչ

մինչեւ մտանէր ՚ի գեօղ ուրեմն, պատա-
հեցին նմա տասն այր բորոտ՝ որք կային ՚ի
13 հեռաստանէ, * բարձին զձայն՝ եւ ասեն.
14 Յիսուս վարդապետ՝ ողորմեաց մեզ: * Եւ
իբրեւ ետես զնս, ասէ ցնս. ‖ Երթայք ցու- ‖ Ղեւ.
ցէք զանձինս քահանայիցն. եւ եղեւ իբրեւ 14. 2.
15 գնային, առժամայն սրբեցան: * Մի ոմն
՚ի նոցանէ իբրեւ ետես՝ եթէ բժշկեցաւ,
դարձաւ անդրէն՝ ՚ի ձայն մեծ փառաւոր
16 առնէր զած. * անկաւ ՚ի վերայ երեսաց իւ-
րոց առ ոտս նր, եւ գոհանայր զնմանէ. եւ
17 նա էր սամարացի: * Պատասխանի ետ յս
եւ ասէ. ոչ տասն արք սրբեցան, իսկ արդ՝
18 ինն ու՞ր են: * Ոչ ոք ինչ գտան դառնալ
տալ փառս այ, բայց միայն այլազգիս այս:
19 * Եւ ասէ ցնա. արի գնա. զի հաւատք քո
կեցուցին զքեզ:
20 * Իբրեւ հարցաւ ՚ի փարիսեցւոցն՝ թէ երբ ՕԴ
գայցէ արքայութիւն այ. պատասխանի ետ նո-
ցա եւ ասէ. ոչ գայ արքայութիւն այ խորա-
21 հեք. * եւ ոչ ասիցեն, թէ ահաւասիկ աստ է՝
կամ անդ. զի ահա արքայութիւն այ ՚ի ներքս
22 ՚ի ձեզ է: * Ասաց եւ առ աշակերտսն. ե-
կեսցեն աւուրք յորժամ ցանկանայցէք մի յաւուր-
ցն որդւոյ մարդոյ տեսանել՝ եւ ոչ տեսանի-
23 ցէք: * ‖ Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ ահա- ‖ Մատթ.
ւասիկ է՝ կամ անդ, մի երթայցէք զհետ: 24. 23.
24 * Զի որպէս փայլակն փայլատակեալ ՚ի ներքոյ Մար. 13. 21.
երկնից՝ ընդ երկնիւք ծագիցէ, նոյնպէս եւ
25 որդի մարդոյ յաւուր իւրում: * Նախ նմա
պարտ է նմա բազում չարչարել՝ եւ խոտել
26 յազգէս յայսմանէ: * ‖ Եւ որպէս եղեւ յա- ‖ Ծնն.
ւուրսն 7. 7.

Մատթ. աւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի եւ յաւուրս որդ-
24. 37. ւոյ մարդոյ: * Ուտէին՝ ըմպէին՝ կանայս 27
առնէին՝ եւ արանց լինէին՝ մինչեւ յօրն՝ յո-
րում եմուտ Նոյ ՚ի տապանն, եւ եկն ջրհե-
Ծննդ. ղեղն՝ եւ կորոյս զամենեսին: * Նոյնպէս 28
19. 25. եւ որպէս յաւուրսն Ղովտայ եղեւ, ուտէին
ըմպէին գնէին վաճառէին, տնկէին շինէին.
* Եւ յորում աւուր ել Ղովտ ՚ի Սոդոմայ, տե- 29
ղաց հուր եւ ծծումբ յերկնից՝ եւ կորոյս զա-
մենեսին. ըստ նմին օրինակի եղիցի եւ յա- 30
ւուրն, յորում որդի մարդոյ յայտնելոց է:
* Յայնմ աւուր որ կայցէ ՚ի տանիս՝ եւ կա- 31
րասի իւր ՚ի տան, մի իջցէ առնուլ զայն.
եւ որ յանդի իցէ, նոյնպէս մի դարձցի յետս:
Մատթ. * Յիշեցէք զկինն Ղովտայ: * Որ խնդրիցէ 32
10. 39. զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. 33
Մարկ. 8. 35. եւ որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա: * Ա- 34
Ղուկ. սեմ ձեզ. յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու
9. 24. Մատթ. ՚ի մի մահիճս, մին առցի՝ եւ միւսն թողցի:
24. 40. * Եւ եթէ եղիցին երկու՝ աղալ ՚ի միասին, 35
մին առցի՝ եւ միւսն թողցի. եւ եթէ իցեն եր-
կու յանդի, մին առցի՝ եւ միւսն թողցի:
* Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. յո՞ Տէր: 36
* Եւ նա ասէ ցնոսա. ուր մարմին է, անդր եւ 37
արծուիք ժողովեսցին:

## ԳԼ. ԺԸ.

Ասաց եւ առակ մի նոցա առ այն, թէ պարտ 1
Սիր. է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի
18. 22. ձանձրանալ. * ասէ. դատաւոր մի էր ՚ի քա- 2
Ա. Թես. ղաքի ուրեմն, յԱյ ոչ երկնչէր՝ եւ ՚ի մարդ-
5. 17. կանէ ոչ ամաչէր: * Եւ այրի մի էր ՚ի նմին 3

քա-

քաղաքի, գայր առ նա և ասէր. դատ արա
4 ինձ յոսոխէ իմմէ։ *Եւ ոչ կամէր ՚ի բազում
ժամանակս. յետ այնորիկ ասէ ՚ի միտս իւ-
րում, եթէ և յԱյ ոչ երկնչիմ, և ՚ի մարդ-
5 կանէ ոչ ամաչեմ, *գոնէ վն աշխատ առ-
նելոյ զիս այրւոյս՝ արարից նմա դատ, զի մի
6 իսպառ եկեալ թախանձիցէ զիս։ *Եւ ա-
սէ Տր. լուարո՛ւք զինչ դատաւորն անիրա-
7 ւութեն ասէր։ *Իսկ Ած ոչ առնիցէ վրէժ-
խնդրութի ծառայից իւրոց, որ աղաղակեն
առ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի. և երկայնա-
8 միտ միայն լինիցի առ նմա։ *Այո՛ ասեմ ձեզ.
զի արասցէ վրէժխնդրութի նց վաղվաղակի։
Իսկ որդի մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդեօք
9 հաւատս յերկրի։ *Ասաց և առ ոմանս
պանծացեալս յանձինս, թէ արդարք իցեն՝
և խոտէին զբազումս, զառակս զայս։
10 *Արք երկու ելին ՚ի տաճարն կալ յաղօթս,
11 մին փարիսեցի՝ և միւսն մաքսաւոր։ *Փա-
րիսեցին կայր մեկուսի, և զայս առանձինն
աղօթս մատուցանէր. Ած իմ՝ գոհանամ
զքէն, զի ոչ եմ իբրև զայլս ՚ի մարդկանէ,
զյափշտակօղս՝ և զանիրաւս՝ և զշունս, կամ
12 իբրև զայս մաքսաւոր։ *Պահեմ եր-
կիցս ՚ի շաբաթու, և տամ տասանորդս
13 յամ ստացուածոց իմոց։ *Եւ մաքսաւորն
կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ
երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր՝
14 և ասէր. Ած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս։ *Ա-
սեմ ձեզ. էջ սա արդարացեալ ՚ի տուն իւր
քան զնա։ ‖ զի ամ որ բարձրացուցանէ զան- ‖ Մտթ. 23. 12.
ձն իւր, խոնարհեսցի. և որ խոնարհեցուս- Ղկ.
ցէ- 14. 11.

ցածնէ զանձն, բարձրասցի։
* Մատուցանէին առ նա և մանկտի՝ զի 15
Մատթ. մերձեսցէ ՚ի նո. իբրև տեսին աշակերտ-
19. 13. քըն՝ սաստէին նոցա։ * Իսկ յս կոչեցեալ ըզ- 16
Մարկ. նոսա առ ինքն՝ ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ
10. 13. գալ առ իս, և մի արգելուք զդոսա. զի այդ-
պիսեացդ է արքայութիւն այ։ * Ամէն ասեմ 17
ձեզ. որ ոչ ընդունիցի զարքայութիւն այ իբ-
Մատթ. րև զմանուկ, ոչ մտցէ ՚ի նա։ * Եւ եհարց 18
19. 16. զնա ոմն իշխան և ասէ. վարդապետ բարի՝
զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենա-
կանս ժառանգեցից։ * Ասէ ցնա յս. զի՞ ա- 19
սես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի այ։
Ելից. * Զպատուիրանս գիտես. Մի շնար, մի 20
20. 13. սպանաներ, մի գողանար, մի սուտ վկայեր,
պատուեա զհայր քո և զմայր։ * Եւ նա ա- 21
սէ. զայդ ամ պահեցի ՚ի մանկութենէ իմմէ։
* Իբրև լուաւ զայն յս՝ ասէ ցնա. միւս ևս 22
պակաս է քեզ. զամ ինչ զոր ունիս, վաճա-
ռեա և տուր աղքատաց, և ունիցիս գանձս
յերկինս. և եկ զհետ իմ։ * Նա իբրև 23
լուաւ զայս՝ տրտմեցաւ. քանզի էր մեծա-
տուն յոյժ։ * Իբրև ետես զնա յս տրտմեալ, 24
ասէ. որպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝
մտանիցեն յարքայութիւն այ։ * Դիւրագոյն 25
իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան
մեծատան յարքայութիւն այ մտանել։ * Եւ 26
որ լուանն՝ ասէին. և ո՞ կարիցէ ապրել։
* Եւ նա ասէ. անհնարինք առ ՚ի մարդկա- 27
նէ, հնարաւորք են յայ։ * Եւ ասէ պետ- 28
րոս. ահաւասիկ մեք թողաք զամ ինչ ըզ-
մեր, և եկաք զհետ քո։ * Եւ նա ասէ ցնո. 29

ա-

ամէն ասեմ ձեզ. եթէ ոչոք է՝ որ եթող ըն-
տանիս կամ զծնօղս կամ զեղբարս կամ զկին կամ
30 զորդիս՝ վասն արքայութեան այ, * եթէ ոչ առ-
նուցու բազմապատիկ 'ի ժամանակի յայս-
միկ. և յաշխարհին որ գալոցն է՝ զկեանսն
31 յաւիտենականս ժառանգեսցէ. * ‖ Առ ա- ‖ Մտթ.
ռեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. 20. 17.
ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. և կատարեսցին Մրկ.
ամ գրեալքն մարգարէիւք վասն որդւոյ մար- 10. 32.
32 դոյ. * Զի մատնեսցի հեթանոսաց և կա-
33 տակեսցի. * և հարկանիցեն և սպանանի-
34 ցեն զնա, և յերիր աւուր յարիցէ. * Եւ
նոքա ոչինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն
ծածկեալ 'ի նոցանէ, և ոչ գիտէին զասա-
ցեալսն.
35 * ‖ Եւ եղև 'ի մօտենալն նորա յԵրիքով, կոյր Զ.Ն.
մի նստէր առ ճանապարհաւն մուրացիկ. ‖ Մտթ.
36 * Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, 20. 29.
37 հարցանէր՝ թէ զինչ իցէ այն. * Եւ պատ- Մրկ.
մեցին նմա, թէ յս նազովրեցի անցանէ. 10. 46.
38 * Աղաղակեաց և ասէ. յս որդի դաւթի
39 ողորմեաց ինձ. * Եւ որ առաջին երթային՝
սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել
աղաղակէր, որդի դաւթի ողորմեաց ինձ.
40 * Զտեղի առ յս, և հրամայեաց ածել բե-
րել զնա առ ինքն. և իբրև մերձ եղև առ նա, և
41 հարց զնա և ասէ. * զինչ կամիս զի
արարից քեզ. և նա ասէ. տէր՝ զի բացցին
42 աչք իմ. և տեսից. * Եւ յս ասէ ցնա. հայ-
43 եաց, հաւատք քո կեցուցին զքեզ. * Եւ
առժամայն ետես, երթայր զհետ նր՝ և փա-
ռաւոր առնէր զած. և ամ ժողովրդեանն
տե-

տեսեալ, տայր օրհնութիւն այ։

## Գլ. ԺԹ.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ *Եւ ահա 1
այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, և նա էր 2
մաքսապետ, և ինքն մեծատուն. *Եւ խնդ- 3
րէր տեսանել՝ եթէ ո՞վ իցէ Յս, և ոչ կա-
րէր ՚ի բազմութենէն, զի կարճ էր հասա-
կաւ։ *Եւ ընթացեալ յառաջս, ել ՚ի ժան- 4
տաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ
այն խաղ անցանելոց էր։ *Եւ որպէս եկն ՚ի տե- 5
ղին հայեցաւ ՚ի վեր Յս՝ և ասէ ցնա. Զակքէ՝
փութա՛ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում
արժան է ինձ ագանել։ *Փութացաւ և էջ 6
և ընկալաւ զնա ուրախութբ։ *Եւ որպէս տե- 7
սին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ
առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ *Եւ 8
եկաց Զակքէոս՝ և ասէ ցՏր, Տէր՝ ահա զկ-
էս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ
զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ *Եւ ա- 9
սէ ցնա Յս. այսօր եղև փրկութիւն տանս այ-
սմիկ. քանզի և սա որդի Աբրահամու է։
Մատթ. 18. 11. *Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցու- 10
ցանել զկորուսեալն։ *Եւ մինչդեռ նոքա 11
զայն լսէին, յաւել առակ մի և ասէ, վասն
մերձենալոյ նր յԷմ, և համարելոյ նց եթէ
առժամայն յայտնելոց է արքայութիւն այ։
Մատթ. 25. 14. *Ասէ. Այր ոմն ազնուական գնաց յաշ- 12
խարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն,
և դառնալ։ *Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ 13
ետ նց տասն մնաս, և ասէ ցնոսա. յարգե-
ցէք զայդ՝ մինչև եկից։ *Եւ քաղաքացիքն 14
նր

նր ատէին զնա, առաքեցին հրեշտակս զհետ
նր եւ ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել
15 զդա ՛ի վ՛ր մեր: * Եւ եղեւ դառնալ նմ՛ ա-
ռեալ զթագաւորութիւն, եւ կոչեալ զծառայ-
սն՛ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտաս-
16 ցէ թէ ո՛ զինչ շահեցաւ: * Եկն առաջինն
եւ ասէ. տէր մնասն քո՛ տասն մնաս արար:
17 * Եւ ասէ ցնա. ազնիւ ծառայ եւ բարի, զի
՛ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխա-
18 նութիւն ունել ՛ի վ՛ր տասն քաղաքի: * Եկն
երկրորդն եւ ասէ. մնասն քո արար հինգ
19 մնաս: * Ասէ եւ ցնա. եւ դու լիջիր ՛ի վերայ
20 հինգ քաղաքաց: * Եկն միւսն եւ ասէ. տէ՛ր
ահա մնասն քո՛ զոր ունէի ծրարեալ ՛ի վար-
21 շամակի. * երկնչէի ՛ի քէն, զի այր ստամ-
բակ ես. բառնաս՛ զոր ոչ եդիր, եւ հնձես՛
22 զոր ոչ սերմանեցեր: * Եւ ասէ ցնա. ՛ի բե-
րանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ ան-
հաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակ
եմ, բառնամ՛ զոր ոչ եդի, եւ հնձեմ՛ զոր
23 ոչ սերմանեցի: * Եւ ընդէ՞ր ոչ ետուր զար-
ծաթն իմ ՛ի սեղանաւորս, եւ եկեալ ես տո-
24 կոսեօք պահանջէի: * Եւ ասէ ցպատրաստաւոր-
սն. առէք ՛ի դմանէ զմնասն, եւ տարայք
25 տուք այնմ՛ որ ունիցի զտասն մնասն: * Եւ
26 ասեն ցնա. տէ՛ր ունի տասն մնաս: * ‖ Ա- Մտ. 25. 29.
սեմ ձեզ, եթէ ամենայն որ ունիցի, տացի. եւ Մր. 4. 25.
յայնմանէ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՛ Ղկ.
27 բարձցի ՛ի նմանէ: * Բայց զթշնամիս իմ 8. 18.
զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել
՛ի վ՛ր նոցա, ածէք այսր եւ սպանէք առաջի
28 իմ: * Եւ իբրեւ զայս ասաց, գնաց յառա՛ջ
ելա

ելանել յերուսաղէմ։
Լ. Կ * Եւ եղեւ ‖ իբրեւ մերձեցաւ 'ի բեթփագէ 29
‖ Մտ. եւ 'ի բեթանիա մօտ 'ի լեառն՝ որ կոչի ձի-
21. 1. թենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն
Մր. իւրոց՝ եւ ասէ։ * Երթայք դուք 'ի գեօղն՝ 30
11. 1. որ հանդէպ մեր կայ, յոր իբրեւ մտանէք՝
գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոչ
'ի մարդկանէ երբէք ոք նստաւ. լուծէք ըզ-
նա եւ ածէք։ * Եւ եթէ ոք հարցանիցէ ըզ- 31
ձեզ՝ թէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս ասաս-
ջի՛ք ցնա, թէ տն̃ իւրում պիտոյ է։ * Եր- 32
թեալ չոգան որ առաքեցանն, գտին որ̃պ ասացն
ցնս, կայր յաւանակն։ * Եւ մինչդեռ լու- 33
ծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա
ցնս. զի՞ լուծանէք զյաւանակդ։ * Եւ նո- 34
‖ Յհ. քա ասեն. տն̃ իւրում պիտոյ է։ ‖ * Եւ ա- 35
12. 14. ծին զնա առ յս̃. եւ արկին զնովաւ հանդեր-
ձըս, եւ հեծուցին զյս̃։ * Եւ մինչդեռ եր- 36
թայր, զհանդերձս իւրեանց տարածանէին
զճանապարհաւն։ * Եւ իբրեւ այն ինչ մերձ 37
եղեւ 'ի զառ 'ի վայր լերինն ձիթենեաց, բա-
զում ամ̃ բազմութի̃ աշակերտացն ուրախու-
թբ̃ օրհնել զա̃ծ 'ի ձայն մեծ վս̃ ամ̃ եղե-
լոց զօրութեանցն՝ զոր տեսին. * Եւ ասէին. 38
օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն տն̃.
խաղաղութի̃ յերկինս, եւ փառք 'ի բարձունս։
* Եւ ոմանք 'ի փարիսեցւոցն յամբոխէ ան- 39
տի ասեն ցնա. վարդապետ՝ սաստեա աշա-
կերտացդ քոց։ * Պատասխանի ետ եւ ասէ. 40
ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն, քա-
րինքդ աղաղակեսցեն։ * Եւ իբրեւ մերձե- 41
ցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց 'ի վ̃ ն̃ր, եւ
ասէ.

42 ասէ. * Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս
յայսմիկ զխաղաղութիւնն քո. բայց այժմ
43 ծածկեցաւ յերեսաց քոց. * Զի եկեսցեն
աւուրք ՚ի վ՟ր քո, եւ պատեսցեն զքեւ թշ-
նամիք քո պատնէշ. եւ պաշարեսցեն զքեզ,
44 եւ նեղեսցեն զքեզ յամ՟ կողմանց. * եւ յա-
տակեսցեն զքեզ, եւ զորդիս քո ՚ի քեզ. ‖ եւ ‖ Ղուկ. 21. 6.
ոչ թողուցուն քար ՚ի քարի վ՟ր յամի ՚ի քեզ.
փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցե-
45 լու՟ քո. * ‖ Եւ մտեալ ՚ի տաճարն սկսաւ ‖ Մատ. 21. 12.
հանել զվաճառականս, եւ զգնօղս. եւ Մար.
46 զսեղանս հատավաճառացն ցրուեաց. * Եւ 11. 15.
ասէ ցնոսա. գրեալ է՝ ‖ եւ եղիցի տուն իմ ‖ Եսայ. 56. 7.
տուն աղօթից, եւ դուք արարէք զդա այր Երեմ.
47 աւազակաց. * Եւ ուսուցանէր զմին հանա- 7. 11.
պազ ՚ի տաճարին. իսկ քահանայապետքն
եւ դպիրք եւ գլխաւորք ժողովրդեանն խնդ-
48 րէին զնա կորուսանել, * եւ ոչ գտանէին
թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամ՟ կա-
խեալ կայր զնմանէ ՚ի լսել.

## ԳԼ. Ի.

1 Եւ ‖ եղեւ ՚ի միում աւուրցն յայնցանէ, Ի.Ը.
մինչ դեռ ուսուցանէր զժողովուրդն ՚ի տա- ‖ Մատ.
ճարի անդ՝ եւ աւետարանէր, հասին ՚ի վե- 21. 23.
րայ քահանայապետքն եւ դպիրք ծերովքն Մար.
2 հանդերձ, * եւ ասեն ցնա. ասա մեզ՝ որով 11. 27.
իշխանութեամբ գործես դու զայդ, կամ ով է
3 որ ետ քեզ զայդ իշխանութիւն. * Պատաս-
խանի ետ եւ ասէ ցնա. հարցից եւ ես զձեզ
4 բան մի, եւ ասացէք ինձ. * Մկրտութիւնն
Յովհաննու յերկնից էր՝ եթէ ՚ի մարդկա-
նէ.

նէ ։ * Եւ նոքա խորհեցան 'ի միտս իւրեանց 5
և ասեն ։ * Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ 6
ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք
'ի մարդկանէ, ամ՛ ժողովուրդն քարկոծ ա-
նեն զմեզ. զի հաստատեալ է 'ի միտս զյով-
հաննէ, թէ մարգարէ է ։ * Եւ պատաս- 7
խանի ետուն չգիտել թէ ուստի իցէ ։ * Եւ 8
նա ասէ ցնո. և ոչ ես ասեմ ձեզ, որով իշ-
խանութեամբ առնեմ զայս ։

Լ. Գ. * Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զառակս 9
‖ Եսայ. 5. 1. զայս. ‖ Այր մի տնկեաց այգի, և ետ զնա
Երեմ. 2. 21. մշակաց. և ինքն գնաց 'ի ճանապարհ ժա-
Մատթ. 21. 33. մանակս բազումս ։ * Եւ 'ի ժամու՝ առա- 10
Մարկ. 12. 1. քեաց առ մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այգ-
ւոյն տացեն նմա. և մշակքն զնա հարին ըզ-
նա, և արձակեցին ունայն ։ * Եւ յաւել 11
միւս ևս ծառայ յղել. նոքա և զնա ևս գան
հարին՝ անարգեցին, և առաքեցին ունայն ։
* Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա և 12
զնա վիրաւորեցին, և հանին արտաքս ։ * Ա- 13
սէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առաքեցից
զորդի իմ սիրելի, թերևս 'ի սմանէ պատ-
կառեսցեն ։ * Իբրև տեսին զնա մշակքն, 14
խորհեցան ընդ միմեանս և ասեն. սա է ժա-
ռանգն. սպանցուք զսա, զի մեր լինիցի ժա-
ռանգութիւն ։ * Եւ հանին զնա արտաքս քան 15
զայգին և սպանին. արդ՝ զի՞նչ արասցէ ը̄ն
նոսա տէր այգւոյն. * ո՞չ ապաքէն գայցէ և 16
կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, և տացէ
զայգին այլոց ։ Իբրև լուան՝ ասեն. քաւ մի՛
‖ Սաղմ. 117. 22. լիցի ։ * Եւ նա հայեցեալ ը̄ն նս՝ ասէ. իսկ 17
Եսայ. 28. 16. զի՞նչ իցէ այն՝ որ գրեալն է. թէ ‖ Զվէմն զոր

ա-

անարգեցին շինօղքն, նա եղեւ գլուխ անկ-
18 կեան ։ * Ամենայն՝ որ ընդ հարցի ընդ վէմն
ը այս՝ խորտակեսցի, եւ յորոյ վերայ անկ-
19 ցի՝ հոսեսցէ զնա ։ * Եւ խնդրէին դպիրքն
եւ քահանայապետքն արկանել ՚ի նա ձեռս ՚ի
նմին ժամու, եւ երկեան ՚ի ժողովրդենէն ․
զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն
20 զայն ։ * || Եւ ապա սպասեցին, եւ առաքե- ||Մտթ.
ցին դաւաճանս կեղծաւորելով զանձինս ար- 22. 15.
դարս ունել․ զի ըմբռնեսցեն զնա բա- Մրկ. 12. 13.
նիւք, առ ՚ի մատնել զնա պետութեան եւ իշ-
21 խանութեան դատաւորի ։ * Հարցին զնա եւ
ասեն ․ վարդապետ՝ գիտեմք եթէ ուղիղ
խօսիս եւ ուսուցանես, եւ ոչ առնուս ակն՝
այլ ճշմարտութեամբ զճանապարհն այ ուսու-
22 ցանես ։ * Արժա՞ն է մեզ կայսեր հարկս
23 տալ՝ թէ ոչ ։ * Եւ նայեցեալ ը խորամանկու-
24 թեն նոցա ասէ ցնս ․ * ցուցէք ինձ զդահե-
կանն ․ եւ նոքա ցուցին ։ եւ ասէ ․ զո՞յր պատ-
կեր եւ գիր ունի ։ պատասխանի ետուն եւ
25 ասեն՝ զկայսեր ։ * Եւ նա ասէ ցնս ․ || արդ ||Հռմ.
երթայք տուք զկայսերն կայսեր, եւ զայն 13. 7.
26 այ ։ * Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բա-
նիւք առաջի ժողովրդեանն ․ եւ զարմացեալ
ընդ պատասխանին նր՝ լռեցին ։

Լ․ Գ․

27 * || Մատուցեալ ոմանք ՚ի սադուկեցւոցն ||Մտթ.
որք հակառակէին չլինել յարութեան, հար- 22. 23.
28 ցին զնա՝ * եւ ասեն ․ վարդապետ՝ մովսէս Մրկ.
գրեաց մեզ, || եթէ ուրուք եղբայր մեռա- 12. 18.
նիցի, որոյ իցէ կին եւ անորդի իցէ, զի առ- ||2.Օրէ.
նուցու եղբայր նր զկինն, եւ յարուսցէ զա- 25. 5.
29 ւակ եղբօր իւրում ։ * Արդ՝ եօթն եղբարք
էին ․

կին. եւ առաջինն առեալ կին՝ մեռաւ ան-
որդի։ * Առ զնա եւ երկրորդն, մեռաւ եւ 30
նա անորդի։ * Առ զնա եւ երրորդն. նոյն- 31
պէս եւ եւթանեքին. եւ ոչ թողին որդիս։
* Մեռաւ եւ կինն։ * Արդ՝ ՚ի յարութեան ո՞ւմ 32
՚ի նոցանէ լինիցի կին. զի եւթանեքին կա- 33
լան զնա կին։ * Պատասխանի ետ նոցա Յի 34
եւ ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս
առնեն՝ եւ արանց լինին։ * Իսկ որ արժանի 35
լինիցին այնմ աշխարհի հասանել՝ եւ յարու-
թեանն որ ՚ի մեռելոց, ոչ կանայս առնեն, եւ
ոչ արանց լինին։ * Քանզի եւ ոչ մեռանել 36
եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ եւ
որդիք այ. քանզի յարութեան որդիք են։
* Այլ զի յառնեն մեռեալք, եւ մովսէս գու- 37
‖ Ելից. 3. 6. շակեաց ՚ի մորենւոջն, ‖ որպ ասէ զՏէր այ
Աբրահամու եւ զայ Իսահակայ եւ զայ Յակով-
բայ։ * Եւ Ած չէ մեռելոց՝ այլ կենդա- 38
նեաց, զի ամենեքին նմա կենդանի են։
* Պատասխանի ետուն ոմանք ՚ի դպրացն եւ 39
ասեն. վարդապետ՝ բարւոք ասացեր։ * Եւ 40
ոչ եւս ոք իշխէր հարցանել զնա՝ եւ ոչինչ։
Ի. Ա. * Ասէ եւ առ նոսա. զիա՞րդ ասեն զՔս՝ թէ 41
որդի է Դաւթի. * զի ինքն Դաւիթ ասէ ՚ի 42
‖ Սաղ. 109. 1. գիրս սաղմոսաց. ‖ ասաց Տր ցՏր իմ, նիստ
Մատ. ընդ աջմէ իմմէ, * մինչեւ եդից զթշնամիս քո 43
22. 44. պատուանդան ոտից քոց։ * Իսկ արդ՝ եթէ 44
Մր. 12. 36. Դաւիթ զնա Տր կոչէ, զիա՞րդ որդի նորա
‖ Մատ. իցէ։ * Եւ լսելով ամ ժողովրդեանն ասէ 45
23. 6. ցաշակերտսն. * ‖ Զգոյշ լերուք ՚ի դպր- 46
Մր. 12. 38. րացն, որ կամին պատմուճանօք շրջել, եւ սի-
Ղկ. 11. 43. րեն ողջոյնս ՚ի հրապարակս եւ զնախաթոռս

՚ի

'ի ժողովուրդս և զառաջներեկս յընթրիս։
47 * Որ ուտեն զտունս այրեաց, և պատճառա-
նօք յերկարեն զաղօթս. նոքա ընկալցին
աւելի դատաստանս։

## ԳԼ. ԻԱ.

1 Եւ ‖ հայեցեալ ետես զմեծատունսն՝ որ ‖Մրկ.
արկանէին զտուրս իւրեանց 'ի գանձանակն։ 12. 41.
2 * Տեսանէ և զկին մի այրի աղքատ, որ արկ
3 անդր երկուս լումայս։ * Եւ ասէ. արդա-
րև ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ՝ աւե-
4 լի արկ քան զամենեսին։ * Ամենեքին նոքա
'ի մթերից իւրեանց արկին յընծայսն այ̃.
բայց նա 'ի կարօտութենէ իւրմէ զա̃մ զկեանս
իւր զոր ունէր՝ արկ։
5 * Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղե- Ե. Օ.
ցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ‖Մտթ.
6 ասէ։ * Զայդ ա̃մ զոր տեսանէք, ‖ եկես- 24. 2.
ցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար 'ի Մրկ.
7 քարի վ̃ր, որ ոչ քակտեսցի։ * Հարցին զնա 13. 2.
և ասեն. վարդապետ՝ երբ լինիցի այդ, և Ղկ. 19. 44.
զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ։
8 * Եւ նա ասէ. զգոյշ կացէք, մի խաբիցիք.
զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն՝
թէ ես եմ. և մերձեցաւ ժամանակ, մի եր-
9 թայցէք զկնի նոցա։ * Եւ յորժամ լսիցէք
պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհու-
րիցիք. զի պարտ է նախ այնմ լինել. այլ
10 ոչ առժամայն կատարած։ * Յայնժամ ա-
սէ ցնոս. յարիցէ ազգ յազգի վերայ, և թա-
11 գաւորութիւն 'ի թագաւորութեան վերայ։ * Եւ
շարժմունք մեծամեծք. և 'ի տեղիս տեղիս

սովք

սովք և սրածութիւնք, եղիցին արհաւիրք և
նշանք մեծամեծք յերկնից։ * Բայց յա- 12
ռաջ քան զայս ամենայն, մերկեսցեն զձեռս
իւրեանց ՚ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնես-
ցեն ՚ի ժողովուրդս և ՚ի բանտս, և տանի-
ցին առաջի դատաւորաց և թագաւորաց վն
անուան իմոյ. * Եւ լինիցի ձեզ այն ՚ի վը- 13
կայութիւն։ * Դիք՝ դիք ՚ի սիրտս ձեր՝ մի 14
յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի։
* Զի ես տաց ձեզ բերան և իմաստութի, 15
որում ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ
պատասխանի ամ հակառակորդքն ձեր։
* Մատնեսջիք և ՚ի ծնողաց և յեղբարց և 16
յազգականաց և ՚ի բարեկամաց, և սպա-
նանիցեն ՚ի ձէնջ. * Եւ եղիջիք ատեցեալք 17
յամենեցունց վասն անուան իմոյ. * Եւ մազ 18
մի ՚ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ. * Եւ համբե- 19
Դան. րութբ ձերով ստասջիք զոգիս ձեր։ * Եւ 20
Թ. 27. յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք
զԵմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է ա-
ւեր նր։ * Յայնժամ որ ՚ի Հրէաստանի ի- 21
ցեն փախիցեն ՚ի լերինս, և որ ՚ի մէջ նր
իցեն՝ խուսեսցեն, և որ ՚ի գաւառս իցեն՝
մի մտցեն ՚ի նա. * Զի աւուրք վրէժխնդ- 22
րութեն են այնոքիկ՝ առ ՚ի կատարելոյ ամ
գրելոյ։ * Բայց վայ իցէ յղեաց և սնուց- 23
ելոց յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի աղ-
ետք մեծ ՚ի վերայ երկրի, և բարկութիւն
ժողովրդեանն այսմիկ։ * Եւ անկցին ՚ի սուր 24
սուսերի, և գերեսցին յամ հեթանոսս. և
Եմ եղիցի կոխան յազգաց՝ մինչև կատա-
րեսցին ժամանակք հեթանոսաց։ * Եւ 25

եղի-

եղիցին || նշանք յարեգական եւ 'ի լուսին եւ || Եսայ. 13. 10.
յաստեղս. եւ յերկրի տագնապ հեթանո- Եզեկ.
սաց՝ յահեղ բարբառոյ իբրեւ ծովու եւ խռո- 32. 7.
26 վութեան, * յելանելոյ ոգւոց մարդկան յեր- Յովէլ.
կիւղէ եւ 'ի կարծեաց եկելոց 'ի վ՟ր տիեզե- 3. 15.
27 րաց. զի զօրութիւնք երկնից շարժեսցին։ * Եւ
յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ՝
28 ամպովք զօրութ՟բ եւ փառօք բազմօք։ * Եւ
յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձջիք
եւ բարձրացուցջիք զգլուխս ձեր. || զի մերձ || Հռովմ.
29 է փրկութիւն ձեր։ * Եւ ասաց առակ մի նոցա. 8. 23.
30 տեսէք զթզենին եւ զամ՟ ծառս. * յորժամ
ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք՝
եւ 'ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն։
31 * Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք
զայս ամ՟ եղեալ՝ գիտասջիք թէ մերձ է ար-
32 քայութիւն այ՟։ * Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ
անցցէ ազգս այս, մինչեւ այս ամ՟ լինիցի։
33 * Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ
34 անցանիցեն։ * Զգոյշ լերուք անձանց, գու-
ցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութ՟բ
եւ արբեցութ՟բ եւ հոգովք աշխարհականօք,
եւ յանկարծակի հասանիցէ 'ի վ՟ր ձեր օրն
35 այն. * զի իբրեւ զորոգայթ հասանիցէ 'ի վ՟ր
ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամ՟ երեսս
36 երկրի։ * Արթուն կացէք այսուհետեւ,
յամ՟ ժամ աղօթս արարէք. զի արժանի
լինիջիք զերծանել յայնմ յամ՟է որ լինելոց
37 է, եւ կալ առաջի որդւոյ մարդոյ։ * Եւ 'ի
տուէ 'ի տաճարին ուսուցանէր, եւ զգիշերս
ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր Ձիթե-
38 նեաց։ * Եւ ամենայն ժողովուրդն կանխէր

ընդ առաւօտս առ նա 'ի տաճարն լսել 'ի
նմանէ ։

## ԳԼ. ԻԲ.

Ի. Ի. Մերձեցաւ || տօն բաղարջակերացն՝ որ կո- 1
|| Մտթ. 26. 2. չէր պասքա ։ * Եւ խնդրէին քահանայա- 2
պետքն և դպիրքն՝ թէ ո՞րպէս սպանանիցեն ըզ-
Մրկ. 14. 1. նա . բայց երկնչէին 'ի ժողովրդենէ անտի ։
|| Մտթ. 26. 14. * || Եմուտ սատանայ 'ի Յուդա 'ի կո- 3
չեցեալն Իսկարիովտացի , որ էր 'ի թուոյ
Մրկ. 14. 10. երկոտասանիցն ։ * Չոգաւ եդ բանս ընդ 4
քահանայապետսն՝ և ընդ դպիրսն՝ և ը̅ իշ-
խանս ժողովրդեանն , զի մատնեսցէ զնա նո-
ցա ։ * Եւ խնդացին , և խոստացան տալ նմա 5
արծաթ ։ * Եւ յանձն առ , և խնդրէր պա- 6
րապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն ։
* Եկն օր բաղարջակերացն , յորում օրէն 7
էր զենուլ զպասեքն ։ * Եւ առաքեաց ըզ- 8
պետրոս , և զՅովհաննէս՝ և ասէ . երթայք
պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի կերիցուք ։
* Եւ նոքա ասեն . ո՞ւր կամիս զի պատրաս- 9
տեսցուք ։ * Եւ ասէ ցնա . ահա իբրև մը- 10
տանիցէք 'ի քաղաքն , պատահեսցէ ձեզ այր
մի բարձեալ սափոր ջրոյ . երթիջիք զհետ
նո՛ր 'ի տունն , յոր մտանիցէ . * և ասասջիք 11
ցտանուտէր տանն . վարդապետ ասէ քեզ .
ու՞ր են վանքն իմ , յորում զպասեքն ուտի-
ցեմ աշակերտօքս հանդերձ ։ * Եւ նա ցուց- 12
ցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ , և
անդ պատրաստեսջիք ։ * Եւ գնացեալ գը- 13
|| Մտթ. 26. 20. տին որպէս և ասաց նոցա . և պատրաստեցին
Մրկ. 14. 17. զպասեքն ։ * || Եւ իբրև ժամ եղև՝ բազ- 14

մե-

միասին, և երկոտասան առաքեալքն ընդ նմա։
15 * Եւ ասէ ցնոսա. ցանկալով ցանկացայ
զայս պասեքս ուտել ընդ ձեզ՝ մինչև չար-
16 չարեալ իցեմ։ * Բայց ասեմ ձեզ, թէ ոչ
ևս կերայց 'ի սմանէ՝ մինչև լցցի յարքայու-
17 թեան այ։ * Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ
և ասէ. առէք զայդ՝ և բաժանեցէք 'ի ձեզ։
18 * Ասեմ ձեզ՝ թէ յայսմհետէ ոչ արբից 'ի
բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ արքայութի այ։
19 * || Եւ առեալ հաց գոհացաւ՝ եբեկ և ետ ||Ա.Կոր.
նց՝ և ասէ. այս է մարմին իմ, որ վս̄ բազ- 11. 24.
մաց տուեալ. զայս արասջի՛ք առ իմոյ յիշա-
20 տակի։ * Նոյնպէս և զբաժակն յետ ընթ-
րեացն առ՝ և ասէ. այս բաժակ է նոր ուխտ
21 իմով արեամբ վս̄ ձեր հեղլոյ։ * || Բայց ա- ||Յով.
ւասիկ ձեռն մատնչի իմոյ ը̄դ իս 'ի սեղանս։ 13. 18.
22 * Եւ որդի մարդոյ || ըստ սահմանելոյն եր- ||Ս-Վ.
թայ, բայց վայ մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն 40. 9.
23 մատնիցի։ * Եւ նք̄ սկսան խնդրել ընդ մի-
մեանս, թէ ո՛վ է 'ի նոցանէ՝ որ զայն գոր-
24 ծելոց իցէ։ * Եւ եղև հակառակութի 'ի
մէջ նց. թէ ո 'ի նոցանէ համարիցի մեծ։
25 * Եւ նա ասէ ցնոսա. || Թագաւորք ազգաց ||Մ-թ.
տիրեն նց, և որ իշխեն նց՝ բարերարք կո- 20. 25.
26 չին. * այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն Մ-ր.
է 'ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջ- 10. 42.
27 նորդն իբրև զպաշտաւորն։ * Ո՞վ է մեծ,
բազմականն՝ եթէ պաշտաւորն. ո՛չ ապաքէն
բազմականն. բայց ես եմ 'ի մէջ ձերում իբ-
28 րև պաշտաւոր։ * Եւ դուք էք՝ որ ցանգ
29 կայիք ընդ իս 'ի փորձութիս իմ. * և ես
ուխտեմ ձեզ՝ ոպ և հայր իմ ուխտեաց ինձ

զար-

զարքայութիւն. * զի ուտիջիք եւ ըմպիջիք ՚ի 30
սեղան իմ յարքայութեան իմում, եւ նստի-
ջիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտա-
ՎԵՐՋ սան ազգ Իսրայէլի։
* Եւ ասէ Տէր. Սիմոն Սիմոն՝ ահա սատա- 31
նայ խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ զցո-
րեան. * այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի պա- 32
կասեսցեն հաւատք քո. եւ դու երբեմն
դարձցիս՝ եւ հաստատեսցես զեղբարս քո։
* Եւ նա ասէ ցնա. Տէր՝ ընդ քեզ պատրաստ 33
‖ Մտթ. եմ եւ ՚ի բանտ եւ ՚ի մահ երթալ։ * ‖ Եւ նա 34
26. 34. ասէ ցնա. ասեմ քեզ Պետրէ, չիցէ այսօր
Մրկ. 14. 30. հաւու խօսել՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս
‖ Վեր. չգիտել։ * Եւ ասէ ցնոսա. յորժամ ‖ առաքե- 35
9. 3. ցի զձեզ առանց քսակի եւ մախաղի եւ կօշ-
կաց, միթէ կարօտացարուք ինչ։ * Եւ նո- 36
քա ասեն. եւ ոչ ինչ։ Ապա ասէ. այլ այժմ
որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մա-
խաղ. եւ որ ոչն ունիցի, վաճառեսցէ զձորձս
իւր՝ եւ գնեսցէ իւր սուսեր։ * Բայց ասեմ 37
ձեզ. զի այս եւս որ գրեալ է՝ պարտ է զի
‖ Եսայ. կատարեսցի յիս, ‖ թէ ընդ անօրէնս համա-
53. 12. րեցաւ. զի որ վասն իմ էին՝ վախճանեալ է։
* Եւ նոքա ասեն. Տէր՝ ահաւասիկ են աստ 38
երկու սուրք։ Եւ նա ասէ ցնոսա. բաւական
‖ Յհ. են։ * ‖ Եւ ելեալ գնաց ըստ սովորութեան ՚ի 39
18. 1. լեառն ձիթենեաց. գնացին զհետ նորա եւ ա-
շակերտքն։ * Իբրեւ եհաս ՚ի տեղին՝ ասէ 40
ցնոսա. յաղօթս կացէք չմտանել ՚ի փորձութիւն։
* ‖ Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրեւ 41
‖ Մտթ. քարընկեց մի, եդ ծունր՝ կայր յաղօթս,
26. 39. * եւ ասէր. Հայր՝ եթէ կամիս անցո զբա- 42
Մրկ. 14. 35.

ժակս

ժամս զայս լինելն. բայց ոչ իմ կամք՝ այլ
43 քոյդ լիցին։ * Եւ երեւեցաւ նմա հրեշտակ
յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր 'ի
տագնապի, և ժտագոյնս կայր յա-
44 ղօթս։ * Եւ հոսէին 'ի նմանէ քրտունք
իբրև զթրմբս արեան՝ ոլոռն ոլոռն, հե-
45 ղեալ յերկիր։ * Եւ յարուցեալ յաղօթիցն՝
եկն առ աշակերտսն, եգիտ զնոսա 'ի քուն
46 'ի տրտմութենէ. * Եւ ասէ ցնս. զի՞ ննջէք,
արիք կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք 'ի
47 փորձութիւն։ * ‖ Եւ մինչ դեռ խօսէր, ահա- ‖Մտ.
ւասիկ ամբոխ. և որ կոչէրն յուդա՝ մի յեր- 26. 47.
կոտասանիցն՝ առաջնորդէր նց։ Իբրև մեր- Մր.
ձեցաւ առ յս՝ համբուրեաց զնա. քանզի 14. 43.
զայն նշան տուեալ էր նց, թէ զո՛ր ես Յհ.
48 համբուրեցից, նա է՝ զնա ունիցիք։ * Եւ ասէ 18. 3.
ցնա յս. յուդա՝ համբուրելո՞վ մատնես զոր-
49 դի մարդոյ։ * Իբրև տեսին որ զնովաւն էին՝
որ ինչ եղեն, ասեն ցնա. տէր՝ հարցուք
50 զնս սրով։ * Եւ եհար մի ոմն 'ի նոցանէ ըզ-
քահանայապետին ծառայ, և 'ի բաց եհան
51 զաջոյ ունկն նորա։ * Պատասխանի ետ յս և
ասէ. թո՛յլ տուք մինչև ցայդ վայր. և մա-
52 տուցեալ յունկնն՝ բժշկեաց զնա։ * Եւ ա-
սէ ցեկեալսն 'ի վր նր՝ ցքահանայապետսն
և ցիշխանս տաճարին և ցծերս. իբրև 'ի
53 վր աւազակի ելէք սուսերօք և բրօք։ * Հա-
նապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին, և ոչ ձգե-
ցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ, և իշ- ‖Մտ.
54 խանութիւն խաւարի։ * ‖ Եւ կալեալ զնա 26. 57.
ածին և մուծին 'ի տուն քահանայապետին. Մր.
և պետրոս երթայր զհետ նորա հեռագոյն։ 14. 53. Յհ.
* Եւ- 18. 13.

* Իբրեւ լուցին հրատ ՚ի մէջ գաւթին՝ եւ 55
նստան շուրջ, նստաւ եւ Պետրոս ՚ի մէջ նո-
‖ Մատթ. ցա ։ * ‖ Տեսեալ զնա աղախին մի՝ զի նստէր 56
26. 69. առ լուսն. հայեցաւ ընդ նա եւ ասէ. եւ սա ընդ
Մարկ. նմա էր՝ որ ընդ նմանն էին ։ * Իսկ Պետրոս ու- 57
14. 66. րացաւ եւ ասէ. ոչ գիտեմ զնա կին դու ։
Յովհ. 18. 25. * Եւ յետ սակաւու միոյ այլ ոմն ետես զնա, 58
եւ ասէ. եւ դու ՚ի նոցանէ ես ։ եւ Պետրոս
ասէ. այր դու՝ չեմ ՚ի նոցանէ ։ * Եւ իբրեւ 59
ժամ մի անց ՚ի վերայ, այլ ոմն վիճէր եւ ա-
սէր. ստոյգ եւ սա ընդ նմա էր, քանզի գա-
լիլեացի է ։ * Ասէ Պետրոս. այր դու՝ չգի- 60
տեմ զինչ խօսիս ։ եւ առ ժամայն մինչ դեռ
նա զայն ասէր, խօսեցաւ հաւ ։ * Դարձաւ 61
Տէր՝ եւ հայեցաւ ՚ի Պետրոս. եւ յիշեաց Պետ-
‖ Մատթ. րոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա. ‖ մինչեւ
26. 34. հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս՝ չգի-
Մարկ. 14. 30. տել զիս ։ * Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ- 62
Յովհ. նապէս ։ * Եւ արքն, որ պահէին զնա, 63
13. 38. այպն առնէին զնովաւ, եւ հարկանէին ։
* Ծածկէին զերեսս նորա եւ ապտակէին. եւ 64
հարցանէին զնա եւ ասէին. մարգարէաց՝ ո՞վ
է որ եհարն զքեզ ։ * Եւ այլ բազում ինչ 65
հայհոյութիւնս խօսէին ՚ի նա ։
‖ Մատթ. * ‖ Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերա- 66
27. 1. կոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն եւ
Մարկ. 15. 1. դպիրք, եւ հանին ածին զնա յատեանն ի-
Յովհ. 18. 28. րեանց՝ եւ ասեն, եթէ դու ես Քրիստոսն, ասա՛
մեզ ։ * Ասէ ցնոսա. եթէ ասացից ձեզ, 67
սակայն ոչ հաւատայք. * եւ եթէ հարցից 68
ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի՝ կամ ար-
ձակիցէք ։ * Բայց յայսմ հետէ նստցի որդի 69
մարդ-

70 մարդոյ ընդ աջմէ զօրութեանն այ։ * Եւ ա-
սեն ամենեքեան. ուրեմն դու ես որդին այ։
Եւ նա ասէ ցնոսա. դուք ասէք, թէ ես եմ։
71 * Եւ նքա ասեն. զի՞նչ ևս պիտոյ է մեզ վկա-
յութիւն, զի մեզէն իսկ լուաք ՚ի բերանոյ
դորա։

## ԳԼ. ԻԳ.

1 Եւ յարուցեալ ամ բազմութիւննց, ածին
2 զնա առ պիղատոս։ * Եւ սկսան չարախօս
լինել զնմանէ և ասել. գտաք զսա՝ զի թիւ-
րէր զազգս մեր, ‖ և արգելոյր ՚ի տալոյ ‖ Ղկ. 20. 22.
հարկս կայսեր, և ասէր զանձնէ՝ եթէ քս
3 իցէ թագաւոր։ * ‖ Իսկ պիղատոս եհարց ‖ Մտ. 27. 11.
զնա և ասէ. դու՞ ես թագաւորն հրէից։ Մր. 15. 2.
Նա պատասխանի ետ նմա և ասէ. դու ասա- Յհ. 18. 33.
4 ցեր։ * Ասէ պիղատոս ցքահանայապետսն
և ցժողովուրդսն. չգտանեմ ինչ վնաս յառա-
5 նն յայսմիկ։ * Եւ նոքա սաստկէին և ասէին,
եթէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ
ամ հրէաստան՝ սկսեալ ՚ի գալիլեէ մինչև
6 ցայսր։ * Իսկ պիղատոս իբրև լուաւ զգա-
լիլեէ, եհարց եթէ գալիլեացի իցէ այրն։
7 * Եւ իբրև գիտաց թէ յիշխանութենէ հե-
րովդի է, ետ տանել զնա առ հերովդէս.
քանզի և նա յեմ էր յաւուրսն յայնոսիկ։
8 * Եւ հերովդէս իբրև ետես զյս, ուրախ
եղև յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամա-
նակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում
անգամ զնմանէ, և ակն ունէր նշան ինչ
9 լեալ՝ տեսանել ՚ի նմանէ։ * Հարցանէր ընդ-
նմա բանիւք բազմօք. և նա ոչինչ ետ նմա

պա-

պատասխանի ։ * Կային քահանայապետքն 10
և դպիրքն՝ և պնդադրին չարախօսէին զնը-
մանէ ։ * Արհամարհեաց զնա և Հերովդէս 11
հանդերձ իւրովք զօրականօքն . և այպն ա-
րարեալ, արկ զնովաւ հանդերձս սպիտակս,
և ետ տանել անդրէն առ Պիղատոս ։ * Եւ 12
եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յա-
ւուր յայնմիկ . քանզի յառաջ թշնամիք էին
միմեանց ։ * Կոչեաց Պիղատոս զքահանայա- 13
պետսն և զիշխանս և զժողովուրդն, * և 14
ասէ ցնս . ածէք մատուցէք ինձ զայրս զայս
իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն . և ա-
‖ Յհ. հաւասիկ առաջի ձեր դատեցայ, ‖ և վնաս
18. 38. ինչ ոչ գտի յառնդ յայդմիկ՝ զորոյ դուքդ չա-
19. 4. րախօսէքդ զդմանէ ։ * Այլ և ոչ Հերով- 15
դէս, քանզի ետու տանել զդա առ նա . և
արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դո-
րա . * Խրատեցից զդա, և արձակեցից ։ 16
* Օր հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նց ։ 17
* Եւ նոքա աղաղակէին ամ բազմութիւն՝ 18
և ասէին . բարձ զդա՝ և արձակեա մեզ զԲը-
րաբբա . * որ էր վն խռովութե իրիք և- 19
ղելոյ ՚ի քաղաքին և սպանութե մտեալ ՚ի
բանտ ։ * Դարձեալ Պիղատոս ձայն տու- 20
եալ . քանզի կամէր արձակել զՅս ։ * Եւ նո- 21
քա ամենքեան աղաղակէին և ասէին . ՚ի խաչ
‖ Մտթ. հան զդա ։ * Եւ նա երիցս ասէ ցնս . ‖ Զի՞նչ 22
27. 23. Մրկ. չար արար սա . ոչինչ մահու գտի ՚ի
15. 14. նմա . խրատեցից զդա և արձակեցից ։ * Եւ 23
նք տագնապէին մեծաձայն՝ և խնդրէին զնա
՚ի խաչ հանել . և զօրանային բարբառք նց
և քահանայապետացն ։ * Եւ Պիղատոս հա- 24

ւան

25 հաւանեցաւ առնել զհայցուածս ն՟ց։ * Արձա-
կեաց ն՟ց զաւազակն՝ զոր վ՟ս խռովութե՟ն և
սպանութե՟ն արկեալ էր ՚ի բանդ, զոր և խնդ-
րէին իսկ. և զի՟ս մատնեաց կամաց նոցա։
26 * ‖ Իբրև տարին գնացին զնա, ըմբռնեցին ‖ Մատթ. 27. 32.
զՍիմոն ոմն Կիւրենացի՝ որ գայր յանդէ. և- Մարկ.
27 դին ՚ի վ՟ր ն՟ր զխաչն բերել զհետ յի՟ս։ * Եւ 15. 21.
երթայր զհետ ն՟ր բազմութի՟ն ժողովրդեանն,
և կանանց՝ որ կոծէին և աշխարէին զնա։
28 * Դարձաւ յի՟ս և ասէ ցն՟ս. դստերք Եր՟մի՝
մի լայք ՚ի վ՟ր իմ, այլ լացէք ՚ի վ՟ր անձանց
29 և ՚ի վ՟ր որդւոց ձերոց։ * Զի եկեսցեն ա-
ւուրք, յորս ասիցեն՝ թէ երանի ամլոց և
որովայնից՝ որ ոչ ծնան, և ստեանց՝ որ ոչ
30 դիեցուցին։ * Յայնժամ սկսանիցին ասել
լերանց՝ ‖ թէ անկերուք ՚ի վ՟ր մեր, և բլրոց՝ ‖ Եսայ.
31 թէ ծածկեցէք զմեզ։ * Զի եթէ ը՟ն փայտ 2. 19.
դալար զայս առնեն, ը՟ն չորն զի՟նչ լինիցի։ Յայտ. 6. 16.
32 * Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանա-
33 նել ը՟ն նմա։ * ‖ Իբրև չոգան ՚ի տեղին՝ կո- ‖ Յովհ.
չեցեալ գագաթն, անդ հանին զնա ՚ի խաչ. 19. 17.
և զչարագործսն զմին ը՟ն աջմէ՝ և զմին ընդ
34 ձախմէ խաչեցին։ * Եւ յի՟ս ասէ. հայր՝ թող
դոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։ Եւ ՚ի
բաժանել զհանդերձս ն՟ր, արկին վիճակս։
35 * Եւ կայր ժողովուրդն հայեցեալ։ Անգա-
նէին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ա-
սէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և
զանձն՝ եթէ դա է ք՟ս որդի ա՟յ ընտրեալն։
36 * Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ
37 առաջի՝ մատուցանէին նմա քացախ. * և ա-
սէին. եթէ դու ես թագաւորն հրէից՝ փրր-
կեա

‖ Յով. կեա՛ զանձն քո ։ * Եւ ‖ էր գիր գրեալ ՚ի վե֊ 38
19. 20. րայ նր՝ յունարէն և դաղմատերէն և եբ֊
րայեցերէն գրով, եթէ սա է արքայն հր֊
էից ։ * Եւ մի ոմն ՚ի կախելոց չարագոր֊ 39
ծացն հայհոյէր զնա, և ասէր. ոչ դու ես
քն՝ փրկեա՛ զանձն քո և զմեզ ։ * Պատաս֊ 40
խանի եառ ընկերն սաստելով նմա և ասէ.
չերկնչիս դու յԱյ՝ զի ՚ի նմին պատժի կաս ։
* Եւ մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գոր֊ 41
ծեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա ա֊
պիրատ ինչ ոչ գործեաց ։ * Եւ ասէ ցյս. 42
յիշեա՛ զիս տէր՝ յորժամ գայցես արքայութ
քով ։ * Եւ ասէ ցնա յս. ամէն ասեմ քեզ. 43
այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին ։ * Եւ էր 44
իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև ՚ի վր
ամ երկրի մինչև ցիններորդ ժամ. խաւա֊
րեցաւ արեգակն ։ * Եւ հերձաւ վարագոյր 45
տաճարին ընդ մէջ ։ * Եւ կարդաց յս ՚ի ձայն 46
‖ Սղ. մեծ՝ և ասէ. ‖ հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ
30. 6. զհոգի իմ ։ զայս իբրև ասաց, եհան զոգի ։
* Եւ տեսեալ հարիւրապետին՝ զոր ինչ ե֊ 47
ղեն, փառաւոր արար զԱծ՝ և ասէ. արդա֊
րև այրս այս արդար էր ։ * Եւ ամ ժողո֊ 48
վուրդքն որ եկեալ էին, և տեսանէին զտե֊
սիլն զայն՝ և զգործ, բախէին զկուրծս՝ և
դառնային ։ * Կային և ամ ծանօթքն նր ՚ի 49
հեռաստանէ. և կանայք որ եկեալ էին ըդ֊
հետ նր ՚ի գալիլեէ՝ տեսանէին զայն ։
‖ Մտթ. * ‖ Եւ ահա այր մի անուն յովսէփ, որ էր 50
27. 57. նախարար՝ այր բարեգործ և արդար. * սա 51
Մրկ. չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս
15. 43. նոցա. յարիմաթեայ քաղաքէ հրէից, որ և
Յովհ.
19. 38.

ինքն

52 ինքն իսկ ակն ունէր արքայութեան այ: * Սա
մատուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց զմար-
53 մինն յսի. * Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատա-
տառակալաւ, եւ եդ 'ի կոփածոյ գերեզմա-
54 նին. ուր չէր ընաւ զոք եդեալ: * Եւ օրն
55 էր ուրբաթ, եւ շաբաթ լուսանայր: * Եւ
երթայքն զհետ նր կանայքն՝ որ եկեալ էին
ը նմա 'ի գալիլեէ. տեսին զգերեզմանն, եւ
56 որպէս եդաւ մարմինն նր: * Դարձան, եւ պատ-
րաստեցին խունկս եւ իւղս. եւ 'ի շաբաթուն
հանգարտեցին ըստ պատուիրանին:

## ԳԼ. ԻԴ.

1 Ընդ այգ || 'ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ ա- || Մտթ. 28. 1.
ռաւօտն եկին 'ի գերեզմանն. բերին ընդ- Մրկ.
խունկսն զոր պատրաստեցին. եւ այլ կա- 16. 2.
2 նայք ընդ նս. * Եւ գտին զվէմն թաւալե- Յովհ.
3 ցուցեալ 'ի գերեզմանէն անտի: * Եւ մտեալ 20. 1.
4 'ի ներքս՝ ոչ գտին զմարմինն տն յսի: * Եւ
եղեւ ընդ հիանալն նց ըստ այնորիկ, եւ ահա
արք երկու հասին առ նս 'ի հանդերձս լու-
5 սաւորս: * Եւ իբրեւ զահի հարան. եւ խո-
նարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ա-
սեն ցնս. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մե-
6 ռեալս: * Չէ աստ՝ այլ յարեաւ. յիշեցէք՝
որպէս խօսեցաւ ը ձեզ մինչ էր 'ի գալիլեայ,
7 * եւ ասէր՝ || թէ պարտ է որդւոյ մարդոյ || Վեր.
մատնել 'ի ձեռս մարդկան մեղաւորաց, եւ 'ի 9. 22.
խաչ ելանել՝ եւ յերրորդ աւուր յառնել:
8 * Եւ յիշեցին զբանսն նր: * Եւ դարձան
9 պատմեցին զայս ամ՝ մետասանիցն, եւ այ-
10 լոցն ամենեցուն: * Եւ էին մարիամ մագ-

դա-

Մագդաղենացին եւ Յովհաննա եւ Մարիամ Յակով-
բեայ, եւ այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս ա-
ռաքելոցն։ * Եւ երեւեցան առաջի նոցա շաղ- 11
փաղփանք բանքն նոցա՝ եւ ոչ հաւատային նոցա։
* Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ՚ի 12
գերեզմանն, եւ հայեցեալ տեսանէ զկտաւ-
սըն լոկ՝ զի կային. եւ գնաց՝ ընդ միտս զարմա-
ցեալ, թէ զինչ եղեւ։
‖Մրկ. 16. 12. * ‖ Եւ ահա երկուք ՚ի նոցանէ երթային ՚ի 13
նմին աւուր ՚ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ
հարիւր եւ վաթսուն ասպարիսաւ, եւ էր ա-
նուն նորա Էմմաւուս։ * Եւ նոքա խօսէին ընդ 14
միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց։ * Եւ ե- 15
ղեւ ընդ խօսելն նոցա եւ ընդ վիճելն՝ եւ Յիսուս ինքն յա-
մերձեցաւ՝ եւ երթայր ընդ նոսա. * եւ նոցա աչք կա- 16
լեալ էին առ ՚ի չճանաչելոյ զնա։ * Եւ ա- 17
սէ ցնոսա. զինչ են բանքդ՝ վասն որոց վիճիքդ
ընդ միմեանս՝ մինչ դեռ գնայքդ, եւ տրտմեալ
էք։ * Պատասխանի ետ մի ոմն ՚ի նոցանէ ա- 18
նուամբ Կղէովպաս, եւ ասէ ցնա.
դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ
գործեցաւ ՚ի նմա յաւուրսս յայսոսիկ։ * Եւ 19
ասէ ցնոսա. զինչ։ եւ նոքա ասեն. զՅիսուսէ Նա-
զովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ՝ հզօր ար-
դեամբք եւ բանիւք առաջի Աստուծոյ, եւ ամենայն ժո-
ղովրդեանն։ * Որպէս մատնեցին զնա քա- 20
հանայապետքն՝ եւ իշխանքն մեր ՚ի դատաս-
տան մահու՝ եւ հանին զնա ՚ի խաչ։ * Եւ մեք 21
ակնունէաք՝ թէ նա է որ փրկելոցն իցէ զԻս-
րայէլ. այլ եւ հանդերձ այսու ամենայնիւ,
այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այս գործե-
ցաւ։ * Այլ եւ կանայք ոմանք ՚ի մէնջ զար- 22
մա-

մնացուցին զմեզ. որք կանխեալ էին առաւօտու
23 յօգանն 'ի գերեզմանն, * և ոչ գտին զմար-
մինն նր. եկին և ասեն, թէ և տեսիլ ևս
հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ՝ թէ
24 կենդանի է։ * Եւ գնացին ոմանք 'ի մէնջ
'ի գերեզմանն, և գտին նոյնպէս ոպ և կա-
25 նայքն ասացին. բայց զնա ոչ տեսին։ * Եւ
նա ասէ ցնս. ո՜վ անմիտք և հեղգամիտք 'ի
հաւատալ յամի, զոր խօսեցան մարգարէքն։
26 * Ո՞չ զայս պարտ էր չարչարիլ քի, և մտ-
27 անել 'ի փառս իւր։ * Եւ սկսեալ 'ի մով-
սէսէ՝ և յամ մարգարէից, մեկնէր նոցա՝ որ
28 ինչ յամ գիրս գրեալ է զնմանէ։ * Եւ
մերձեցան 'ի գեօղն յոր երթային, և նա
պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ։
29 * Եւ բռնադատեցին զնա՝ և ասեն. առ
մեզ ագիր, զի ընդ երեկս է՝ և տարաժամեալ
30 է օրս, և եմուտ ագանել ընդ նս։ * Եւ
եղև 'ի բազմելն նր ընդ նս, առեալ զհացն՝
31 օրհնեաց, եբեկ և ետ նոցա։ * Եւ նոցա
բացան աչք՝ և ծանեան զնա. և նա եղև 'ի
32 նոցանէ աներևոյթ։ * Եւ ասեն ցմիմեանս.
ո՞չ իսկ և սիրտք մեր ջեռեալ 'ի մեզ՝ մինչ
խօսէրն ընդ մեզ զճանապարհայն. և ո՞րպէս
33 բանայր մեզ զգիրս։ * Եւ յարուցեալ նոյն
ժամայն՝ դարձան յերուսաղէմ, և գտին
ժողովեալ զմետասանսն՝ և զորս ընդ նոսայն
34 էին։ * Եւ ասեն՝ թէ արդարև յարեա
35 տր՝ և երևեցաւ սիմոնի։ * Եւ նոքա պատ-
մէին զայն որ զճանապարհայն, և թէ
զիարդ ետ ծանօթս նոցա 'ի բեկանել հա-
ցին։

* Մինչ

‖Մար. * ‖ Մինչ դեռ զայս խօսէին, ինքն իսկ յս 36
16. 14. եկաց 'ի մէջ նոցա՝ եւ ասէ ցնոսա. խաղա-
Յովհ. ղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի երկնչիք։ * Եւ 37
20. 19. զարհուրեալ երկնչէին. եւ համարէին ոգի
ինչ տեսանել։ * Եւ ասէ ցնոսա. զի՞ խռո- 38
վեալ էք՝ եւ ընդէ՞ր խորհուրդք ելանեն 'ի
սիրտս ձեր։ * Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի 39
ես նոյն եմ. շօշափեցէք զիս եւ տեսէք. զի
ոգի՝ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս
տեսանէք զի ունիմ։ * Եւ զայս ասացեալ՝ 40
եցոյց նոցա զձեռսն եւ զոտսն։
* Եւ մինչդեռ տակաւին չհաւատային 'ի 41
խնդութենէն՝ եւ զարմացեալ էին, ասէ ցնո-
սա. ունի՞ք ինչ կերակուր աստ։ * Եւ նոքա 42
ետուն նմա ձկան խորովելոյ մասն, եւ խո-
րիսխ մեղու։ * Եւ առ՝ եկեր առաջի նո- 43
ցա, եւ զմնացորդսն ետ նոցա։ * Եւ ասէ 44
ցնոսա. այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ,
մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամե-
նայն գրելոյն յօրէնսն մովսէսի եւ 'ի մար-
գարէս եւ 'ի սաղմոսսն վասն իմ։ * Յայն- 45
ժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս։
* Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր 46
չարչարիլ քսի, եւ յառնել 'ի մեռելոց յա-
ւուր երրորդի. * եւ քարոզել յանուն նորա 47
ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց յամե-
‖Գործ. նայն ազգս՝ սկսեալ յերուսաղեմէ։ * ‖ Եւ 48
1. 8. դուք էք վկայք այսոցիկ։ * ‖ Եւ ահա ես ա- 49
‖Յովհ. 14. 26. ռաքեմ զաւետիս հօր իմոյ 'ի ձեզ. եւ դուք
նստջիք 'ի քաղաքիդ յերուսաղեմ, մինչեւ
զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց։ * Եհան 50
զնոսա մինչեւ 'ի բեթանիա, եւ ամբարձեալ

ըզ-

51 զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա ։ * Եւ եղեւ Մրկ.
յօրհնելն նորա զնս, մեկնեցաւ ՚ի նոցանէ, 16. 19.
52 եւ վերանայր յերկինս ։ * Եւ նոքա երկիր- Գործ.
պագեալ նմա՝ դարձան յերուսաղէմ ուրա- 1. 9.
53 խութբ մեծաւ ։ * Եւ էին հանապազ ՚ի
տաճարին, գովէին եւ օրհնէին զած ։



## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆ-ՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ·

Յովհաննու Աւետարանն՝ գրեալ է յովհաննու, որ եղբայր է յակոբայ զեբեդեայ. որ անկեալ ի վերայ լանջացն նորա. նոյն սա գրեաց զաւետարանս զայս։ Սա սկիզբն առնէ յանժամանակ բանէն. և զկնի մարմնոյ ծննդեանն յիշատակէ յաւելու, և բանն մարմին եղև։ Սա յիշատակէ զմկրտութիւնն յովհաննու՝ և զընտրութիւն աշա-կերտացն. այլ և զհարսանիսն և զպարագայսն որ եղեն. և զշ-նորհաբանն, որ նիկոդեմոսի պատմեցաւ պէշտօնին, և խօսակցութիւն. յորում և զշնորհացն բաժանեցին զգանձերեւ-նք, և ի վեր պաշտամանն նոր վկայէ աւրէն. և մարմնոյ նորա եղեալ ի գերեզմանի, և յարեալ յերրորդ աւուր. երևեցաւ աշակերտացն իւրոց։

Յովհաննէս՝ որ և որդի որոտման, կենդրեան որոտալ պատուէլոյ մեզ։ Սա զնոյն ծնն առն հանճարեղաց բերէ գրեալ զաւետարանս իւր յեփեսոս քաղաքի, ՚ի խնդրոյն եպիսկոպոսին ասիոյ՝ ՚ի կենդանութեան իւրում։

Յովհաննէս՝ Աստուածաբանն։

---

## ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

*Աւետարանին որ ըստ Յովհաննու։*


| | Գլ | Եր. |
|---|---|---|
| Վասն զի ամենեցուն է բանն այս. | ա. | 1. |
| Վասն յովհաննու վկայելոյն բանին այ. | ա. | 15. |
| Վասն փառացն սա նա փառացն այ. | ա. | 29. |
| Վասն աշակերտացն սա յն աշակերտեցն. | ա. | 39. |


Վասն

Վասն գտանելոյն զՄեսիային . ա. 41.
Վասն ի Կանա հարսանեացն . բ. 1.
Վասն արտաքս հանելոյ ի տաճարէն . բ. 15.
Վասն Նիկոդիմոսի . գ. 1.
Վասն ի յԱյենովն մկրտելոյն . գ. 23.
Վասն խնդրոյ լինելոյ մէջ աշակերտացն . գ. 25.
Վասն կնոջն սամարացւոյ . դ. 7.
Վասն թագաւորազնին . դ. 46.
Վասն երեսուն և ութամեայ հիւանդին . ե. 5.
Վասն՝ զի հայր սիրէ զորդի . ե. 20.
Վասն հինգ հացին , և երկու ձկանն . զ. 9.
Վասն գնալոյն ի վերայ ծովուն . զ. 19.
Վասն մրմնջելոյն ընդ միմեանս հրէից . զ. 41.
Վասն շրջելոյն յետ ի գալիլէ , և խորանա-
հարացն . է. 1.
Վասն խնդրելոյն հրէից սպանել զՔ՟ս . է. 30.
Վասն ի ծնէ կուրին . թ. 1.
Վասն դնելոյն զանձն ի վ՟ր ոչխարացն . ժ. 15.
Վասն նաւակատեացն յեր՟ս . ժ. 22.
Վասն ղազարու յարութեանն . ժա. 1.
Վասն օծանելոյն զՏ՟րն . ժբ. 3.
Վասն՝ որ տայց յաղագս աղքատացն . ժբ. 5.
Վասն յաւանակին . ժբ. 14.
Վասն եկելոց հեթանոսացն առ Փ՟ղ . ժբ. 21.
Վասն հատին ցորենոյ . ժբ. 24.
Վասն լոյս եկելոյն յաշխարհ . ժբ. 46.
Վասն ընթրեացն . և լուանալոյ զոտս աշա-
կերտացն . ժգ. 11.
Վասն խոնարհութեան իւր , և օրինակ տալոյ աշա-
կերտացն . ժգ. 15.
Վասն պատառոյ հացին՝ և մատնելոյ աշա-
կերտին . ժգ. 26.

Վասն ձերբակալութեան Յ՟ի . ժը . 5.
Վասն ուրացութեան Պետրոսի , և հաւասարն
խօսելոյ . ժը . 25.
Վասն ածելոյն զՅ՟ս ՚ի տանէն Կայիափայ . ժը . 28.
Վասն տանելոյն զՅ՟ս ՚ի Գողգոթա . ժթ . 17.
Վասն աւանդելոյն Յ՟ի զհոգին . ժթ . 30.
Վասն խնդրելոյն զԱրիմաթացւոյն մարմինն . ժթ . 38.
Վասն բերելոյն Նիկոդեմոսի զմուռսն . ժթ . 39.
Վասն գալոյ Կանանցն ՚ի գերեզմանն . ի . 1.
Վասն դրանն փակելոյ մտանելոյն Յ՟ի առ ա-
շակերտսն . ի . 19.
Վասն շօշափմամբ հաստատելոյ Թ՟ն . ի . 27.
Վասն ասելոյն ընդ Ն՟ս , և հարցանելոյն
Պետրոսի . իա . 15.
Վասն ունելոյ աշակերտին , և գրելոյ աւ-
ետարանն . իա . 24.



Ս՟ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ.

### ԳԼ. Ա.

1 ԻՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ. ԲԱՆ
եւ բանն էր առ ա՟ծ. եւ ա՟ծ էր բանն։
2 * Նա էր ՚ի սկզբանէ առ ա՟ծ։ * Ա-
3 մենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց
4 նորա եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեւն։ * Նովաւ
կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան.
5 * Եւ լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խա-
6 ւարն նմա ոչ եղեւ հասու։ * Եղեւ այր մի ա- ‖ Մատ. 3. 1.
7 ռաքեալ յա՟յ. անուն նմ՟ Յովհաննէս։ * Սա
եկն ՚ի վկայութի՟ն զի վկայեսցէ վ՟ն լուսոյն.
8 զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ * Ոչ
էր նա լոյսն. այլ զի վկայեսցէ վ՟ն լուսոյն։
9 * Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն ‖ Ներք. 3. 19.
10 զա՟մ մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ * Յաշ-
խարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ. եւ աշ-
11 խարհ զնա ոչ ծանեաւ։ * Յիւրսն եկն, եւ
12 իւրքն զնա ոչ ընկալան։ * Բայց որք ընկա-
լան զնա, ետ նոցա իշխանութի՟ն որդիս ա՟յ լի-
նել՝

նել՝ որոց հաւատացին յանուն նորա. * Որք 13
ոչ յարենէ եւ ոչ ՚ի կամաց մարմնոյ եւ ոչ ՚ի
‖ՄԱՏԹ. կամաց առն, այլ յԱյ ծնան. * ‖ Եւ Բանն 14
1. 16. մարմին եղեւ՝ եւ բնակեաց ՚ի մեզ. եւ տե-
ՂՈՒԿ. սաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զՄիածնի ա-
2. 7. ՚ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ. * Յով- 15
հաննէս վկայէ վն նորա, աղաղակեաց եւ ա-
սէ. սա է՝ զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն
էր՝ առաջի իմ եղեւ. զի նախ քան զիս էր.
* Զի ՚ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին 16
առաք շնորհս փոխանակ շնորհաց. * Զի 17
օրէնքն ՚ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն եւ
ճշմարտութիւն ՚ի ձեռն Յի Քի եղեն.
Բ Բ * ‖ Զած ոչ ոք ետես երբեք, բայց Միա- 18
‖Ա. ՏԻՄ. ծինն Որդի որ է ՚ի ծոց Հօր, նա պատմեաց.
6. 16. * Եւ այս է վկայութիւն Յովհաննու, յորժամ 19
Ա. ՅՈՎՀ. առաքեցին առ նա Հրեայքն յԵմէ քահա-
4. 12. նայս եւ ղեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու
ո՞վ ես. * Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրա- 20
ցաւ. խոստովան եղեւ, եթէ ես ոչ եմ Քսն.
* Եւ հարցին ցնա. իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ 21
ես. եւ ասէ. ոչ եմ. Իսկ մարգարէ՞ն ես դու.
պատասխանի ետ՝ թէ ոչ. * Իսկ ասա մեզ՝ 22
դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք՝ որոց
‖ԵՍԱՅ. առաքեցինն զմեզ. զի՞ ասես վն քո. * Ա- 23
40. 3. սէ. ‖ Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ու-
ՄԱՏԹ. ղիղ արարէք զճանապարհս Տն, որպէս ասաց
3. 3. Եսայի մարգարէ. * Եւ որք առաքեցանն՝ ՚ի 24
ՄԱՐԿ. փարիսեցւոց անտի էին. * Հարցին ցնա՝ եւ 25
1. 3. ասեն. իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քսն,
ՂՈՒԿ. եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն. * Պատաս- 26
3. 4.
‖ՄԱՏԹ. խանի ետ նց Յովհաննէս՝ եւ ասէ. ‖ Ես մկր-
3. 11. տեմ

տեմ զձեզ ջրով. 'ի միջի ձերում կայ, զոր Մտթ. 3. 11.
27 դուքն ոչ գիտէք. * Որ զկնի իմ գալոցն է, Մրկ. 1. 7.
որում չեմ արժանի՝ եթէ լուծից զխրացս
28 կօշկաց նորա. * Այս 'ի Բեթաբարայ եղեւ յայն- Ղուկ. 3. 16.
կոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս՝ եւ
մկրտէր.

Ի. Դ.

29 * 'Ի վաղիւ անդր տեսանէ զՅս՝ զի գայր առ-
նա, եւ ասէ. Ահաւասիկ գառն Այ՝ որ բառ-
30 նայ զմեղս աշխարհի. * Սա է՝ վս որոյ եսն
ասէի, զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ ե-
31 ղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս. * Եւ ես
ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իս-
րայէլի, վս այնորիկ եկի ես ջրով մկրտել.
32 * Վկայեաց Յովհաննէս եւ ասէ, թէ տե- Մտթ. 3. 16.
սանէի զհոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի Մրկ. 1. 10.
33 յերկնից. եւ հանգչէր 'ի վր նր. * Եւ ես Ղուկ. 3. 22.
ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկր-
տել ջրով՝ նա ասաց ցիս. յոր վր տեսանի-
ցես զհոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի 'ի վե-
րայ նր, նա է՝ որ մկրտէ հոգւովն սրբով.
34 * Եւ ես տեսի եւ վկայեցի՝ եթէ սա է որ-
դին Այ.

Ի. Դ.

35 * 'Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, եւ յա-
36 շակերտաց նորին երկու. * Եւ նայեցեալ
ընդ Յս՝ զի գնայր, ասէ. Ահաւասիկ
37 գառն Այ. * Լուան 'ի նմանէ երկու աշա-
կերտքն՝ զի խօսէր, եւ գնացին զհետ Յսի.
38 * Իբրեւ դարձաւ Յս՝ եւ ետես զնոսա՝ զի եր-
թային զհետ նր, ասէ ցնս. զի՞նչ խնդրէք.
Նք ասեն ցնա. Ռաբբի, որ թարգմանեալ
կոչի վարդապետ, ո՞ւր ես օթեվանս քո.
39 * Ասէ ցնս. Եկայք եւ տեսէք. Եկին եւ տե-
սին՝

սին՝ ուր էին օթեւանք նր. և առ նմա ագան
այն օր, զի ժամ էր իբրև տասներորդ։
* Էր անդրէաս եղբայր սիմովնի վիմի, մի 40
յերկուց անտի, որ լուանն 'ի յովհաննէ՝ և
գնացին զկնի նր։ * Գտանէ սա նախ զեղ- 41
բայր իւր զսիմովն, և ասէ ցնա. գտաք զմ-
եսիայ՝ որ թարգմանի քս։ * Եւ ած զնա 42
առ յս. հայեցեալ ը̅ նա յս՝ ասէ. դու ես
սիմովն որդի յովնանու, դու կոչեսցիս կե-
փաս, որ թարգմանի պետրոս։

Բ. Ե

* Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել 'ի գա- 43
լիլեա. գտանէ զփիլիպպոս, և ասէ ցնա յս.
եկ զկնի իմ։ * Էր և փիլիպպոս 'ի բեթ- 44
սայիդայ, 'ի քաղաքէ անդրէայ և պետրո-
‖ Ծննդ. սի։ * Գտանէ փիլիպպոս զնաթանայէլ, 45
49. 10. և ասէ ցնա. զորմէ գրեաց ‖ մովսէս յօրէ-
2. Օրէն. նսն՝ ‖ և մարգարէքն. գտաք զյս զորդի յով-
18. 18. սեփայ 'ի նազարեթէ։ * Ասէ ցնա նաթա- 46
‖ Եսայ. 40. 10. նայէլ, թէ 'ի նազարեթէ մարթ ինչ իցէ
Եզեկ. բարւոյ ինչ լինել։ ասէ ցնա փիլիպպոս.
34. 23. եկ և տես։ * Ետես յս զնաթանայէլ 47
Դանիէ. 9 24. 25. զի գայր առ նա, ասէ վն նր. ահա արդարև
իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ։ * Ա- 48
սէ ցնա նաթանայէլ. ուստի՞ ճանաչես զիս։
պատասխանի ետ յս և ասէ ցնա. մինչև էր
փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր 'ի ներ-
քոյ թզենւոյ, տեսի զքեզ։ * Պատասխա- 49
նի ետ նմ նաթանայէլ և ասէ. ռաբբի՝ դու
ես որդի այ, դու ես թագաւորն իսրայէլի։
* Պատասխանի ետ նմա յս և ասէ. փոխա- 50
նակ զի ասացի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ թզ-
զենւոյն, հաւատաս, մեծամեծս ես քան

զայս

51 զայս տեսցես։ * Եւ ասէ ցնա. ամէն ամէն
ասեմ ձեզ. տեսանիցէք զերկինս բացեալ՝
եւ զհրեշտակս Այ՝ զի ելանիցեն եւ իջանիցեն
՚ի վերայ որդւոյ մարդոյ։

## ԳԼ. Բ.

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի Բ. Զ.
Կանա Գալիլեացւոց. եւ անդ էր մայրն յսի.
2 *Կոչեցաւ եւ յս եւ աշակերտքն նորա ՚ի հար-
3 սանիսն։ * Եւ ՚ի պակասել գինւոյն, ասէ
4 մայրն ցյս. գինի ոչ ունին։ * Եւ ասէ ցնա
յս. զի՞ կայ իմ եւ քո՝ կին դու, չե՛ւ է հա-
5 սեալ ժամանակ իմ։ * Ասէ մայրն նորա
ցպաշտօնեայսն. որ ինչ ասիցէ ձեզ՝ արաս-
6 ջիք։ * Անդ էին թաղիցք կճեայք վեց՝ ըս
սրբութեն Հրէից. տանէին մի մի ՚ի նոցանէ
7 մարս երկուս կամ երիս։ * Ասէ ցնոսա յս.
լցէք զթաղիցսդ ջրով. եւ լցին զնա մինչեւ ՚ի
8 վեր։ * Եւ ասէ ցնա. արդ՝ առէք եւ բերէք
9 ճարտարապետին. եւ նոքա բերին։ * Եւ իբ-
րեւ ճաշակեաց ճարտարապետն զջուրն գինի
եղեալ, եւ ոչ գիտէր ուստի իցէ. բայց պաշ-
տօնեայքն գիտէին՝ որք արկին զջուրն։ խօսի
10 ընդ փեսային ճարտարապետն, * եւ ասէ. ամ
մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ.
եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին.
դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ։
11 * Զայս արար սկիզբն նշանաց յս ՚ի Կանա
Գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր. եւ
հաւատացին ՚ի նա աշակերտքն նորա։
12 * Յետ այսորիկ էջ յս ՚ի Կափառնաում, Բ. Է.
ինքն եւ մայր իւր եւ եղբարքն իւր. եւ անդ կե-

նէր

նէր ոչ բզմ՟ ինչ աւուրս : * Եւ էր մերձ զա- 13
տիկն հրէից, և ել Յս՟ յԵմ՟. * Եւ եգիտ ի 14
տաճարին՝ զի վաճառէին զարջառս և զոչ-
խարս և զաղաւնիս, և զլումայափոխսն՝ որ
նստէին : * Եւ արար խարազան չուանեայ, 15
և եհան զամենեսին ի տաճարէն, զոչխար-
սն և զարջառս, և զպղինձս հատավաճա-
ռացն ցրուեաց, և զսեղանսն կործանեաց:
* Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնս՟. 16
առէք զայդ աստի, և մի առնէք զտուն Հօր
իմոյ՝ տուն վաճառի : * Յիշեցին աշա- 17
|| Սղմ. կերտքն նր՟, թէ գրեալ է. || Նախանձ տան
68. 10. քո կերիցէ զիս : * Պատասխանի ետուն 18
հրեայքն և ասեն ցնա. զի՞նչ նշան ցուցանես
դու մեզ՝ զի զայդ առնես : * Պատասխանի 19
|| Մտթ. 26. 61. ետ Յս՟ և ասէ ցնս՟. || Քակեցէք զտաճարդ
27. 40. զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա :
Մր. 14. 58. * Ասեն ցնա հրեայքն. Քառասուն և 20
15. 29. վեց ամ շինեցաւ տաճարս, և դու զերիս ա-
ւուրս կանգնես զդա : * Բայց նա ասէր վն՟ 21
տաճարի մարմնոյն իւրոյ : * Իսկ յորժամ 22
յարեաւ ի մեռելոց, յիշեցին աշակերտքն
նր՟, թէ զայս ասէր. և հաւատացին
գրոյն, և բանին՝ զոր ասաց Յս՟ :

Գ. Կ * Եւ իբրև էր յԵմ՟ ի զատկին ի տօնի, 23
բզմք՟ հաւատացին յանուն նր՟. զի տեսանէին
զնշանսն՝ զոր առնէր : * Բայց ինքն Յս՟ ոչ 24
հաւատայր զանձն նց՟. քանզի ինքն գիտէր
զամ՟. * Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայես- 25
ցէ վն՟ մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ
կայր ի մարդն :

ԳԼ.

## ԳԼ. Գ.

1 Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անտի՝ Նիկո-
2 դեմոս անուն նորա՝ իշխան Հրէից: * Սա
եկն առ նա գիշերի՝ եւ ասէ ցնա. ռաբբի՝
գիտեմք եթէ յայ եկեալ ես վարդապետ.
զի ոչ ոք կարէ զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ
3 առնես, եթէ ոչ ած իցէ ընդ նմա: * Պա-
տասխանի ետ յս եւ ասէ ցնա. ամէն ամէն
ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի 'ի վերուստ՝ ոչ
4 կարէ տեսանել զարքայութիւն այ: * Ասէ
ցնա Նիկոդեմոս. զիարդ կարէ մարդ ծնա-
նել՝ որ ծերն իցէ. միթէ մարթ ինչ իցէ
անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել՝
5 եւ ծնանել: * Պատասխանի ետ յս եւ ասէ.
ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի 'ի
ջրոյ եւ 'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայ-
6 ութիւն այ: * Զի ծնեալն 'ի մարմնոյ՝ մար-
7 մին է, եւ ծնեալն 'ի հոգւոյ՝ հոգի է: * Մի՛
մի զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է
8 ձեզ ծնանել 'ի վերուստ: * Զի հողմ ուր կա-
մի՝ շնչէ. եւ զձայն նը լսես. || այլ ոչ գիտես՝ || Սղմ. 134. 7.
ուստի գայ, կամ յո երթայ. նոյնպէս է
9 ամ ծնեալն 'ի հոգւոյն: * Պատասխանի
ետ Նիկոդեմոս եւ ասէ ցնա. զիա՞րդ մարթի
10 այդմ լինել: * Պատասխանի ետ յս եւ ասէ
ցնա. դու ես վարդապետ իէլի՝ եւ զայդ ո՞չ
11 գիտես: * Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր
ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վը-
կայեմք. եւ զվկայութիւն մեր ոչ ընդունիք:
12 * Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝
եւ ոչ հաւատայք. զիա՞րդ եթէ զերկնաւոր-
սըն

որսն ասացից՝ հաւատայցէք ։
Գ. Ը. * Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն 13
յերկնից՝ որդին մարդոյ, որ էն յերկինս ։
‖ Թուոց * ‖ Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանա- 14
21. 9. պատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդ-
ւոյ մարդոյ ։ * Զի ամ որ հաւատայ 'ի նա՝ 15
մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտե-
‖ Ա Յովհ. նականս ։ * ‖ Զի այնպէս սիրեաց ած զաշ- 16
4. 9. խարհ՝ մինչեւ զորդին իւր միածին ետ. զի
ամ որ հաւատայ 'ի նա՝ մի կորիցէ, այլ ըն-
կալցի զկեանսն յաւիտենականս ։ * Զի ոչ 17
‖ Ղուկ. առաքեաց ած զորդի իւր յաշխարհ ‖ թէ
12. 47. դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշ-
խարհ նովաւ ։ * Որ հաւատայ 'ի նա, ոչ 18
դատապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ 'ի նա՝
արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հա-
‖ Վեր. ւատաց յանուն միածնի որդւոյն այ ։ * ‖ Եւ 19
1. 9. այս իսկ է դատաստանն. զի լոյս եկն յաշ-
խարհ՝ եւ սիրեցին մարդիկ զխաւար առա-
ւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չա-
րութեան ։ * Զի ամ որ զչար գործէ՝ ատեայ 20
զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմա-
նեսցին գործք նր ։ * Իսկ որ առնէ զճշմար- 21
տութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին
Գ. Գ. գործք նր, թէ աստուծով գործեցան ։
* Յետ այսորիկ եկն յս եւ աշակերտքն նորա 22
յերկիրն Հրէաստանի. եւ անդ շրջէր նոքօք
‖ Վեր. համդերձ ‖ եւ մկրտէր ։ * Մկրտէր եւ Յով- 23
4. 1. հաննէս 'ի յԱյենովն մերձ առ Սաղիմ, զի
ջուրք բազում էին անդ. եւ գային՝ եւ մկրտէին ։
* Զի չեւ եւս էր արկեալ Յովհաննէս 'ի բանտ ։ 24
* Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհան- 25
նու

26 նա՝ ը հրէից վասն սրբութեան. * Եկին առ
Յովհաննէս եւ ասեն ցնա. Ռաբբի՝ որ էրն
ը քեզ յայնկոյս Յորդանանու, ‖ որում դուն ‖ Վեր. 1. 19.
վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ եւ ամե-
27 նեքին գան առ նա. * Պատասխանի ետ
Յովհաննէս՝ եւ ասէ. Ոչ կարէ մարդ առնուլ
յանձնէ եւ ոչինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա
28 յերկնից 'ի վերուստ. * Դուք ձեզէն վկա-
յէք ինձ, ‖ զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես ‖ Վեր. 1. 20.
Քս, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա.
29 * Որ ունի հարսն՝ նա է փեսայ. իսկ բարե-
կամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախու-
թբ ուրախ լինի վն ձայնի փեսային. արդ՝
30 այս ուրախութիւն որ իմն է, լցեալ է. * Նմա
31 պարտ է աճել, եւ ինձ մեղմանալ. * Որ 'ի
վերուստն գայ՝ 'ի վերոյ է քան զամն. որ
յերկրէ ասուի է, յերկրէ է՝ եւ յերկրէ խօ-
32 սի. * Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես եւ
զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայութիւն նորա ոչ ոք
33 ընդունի. * Որ ընդունի զվկայութիւն նորա՝
34 կնքեաց, թէ ‖ Ած ճշմարիտ է. * Զի զոր ‖ Հռ. 3. 4.
Ածն առաքեաց՝ զբանս Այ խօսի. զի ոչ եթէ
35 չափով տայ Ած զՀոգին. * Հայր սիրէ զՈր-
36 դի, եւ զամն ինչ ետ 'ի ձեռս նր. * ‖ Որ հա- ‖ Ա Յհ. 5. 10.
ւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտե-
նականս. եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ
տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Այ մնայ 'ի
վերայ նորա.

## ԳԼ. Դ.

Դ. Դ.

1 Իբրեւ գիտաց Յս՝ եթէ լուան փարիսեցիքն՝
եթէ Յս բազում աշակերտս առնէ ‖ եւ ‖ Վեր. 3. 22.
մկր-

մկրտէ քան զՅովհաննէս. * քանզի ոչ եթէ 2
Յս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա,
* Եթող զՀրէաստան երկիր. եւ եկն միւս 3
անգամ ՚ի Գալիլեա. * Եւ էր նմա անցա 4
նել ընդ Սամարիա. * Գայ նա ՚ի քաղաք 5
մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար.
‖ Ծննդ. մերձ ՚ի գեօղն ‖ զոր ետ Յակոբ որդւոյ իւ
33. 19. րում Յովսեփայ. * Եւ անդ էր աղբիւր մի 6
Յեսու. 24. 32. Յակոբայ. եւ Յս վաստակեալ ՚ի ճանապար
հէն, նստէր ՚ի վր աղբերն. եւ էր ժամ իբ
րեւ վեցերորդ. * Գայ կին մի ՚ի Սամարիայ 7
հանել ջուր. ասէ ցնա Յս. տուր ինձ ըմ
պել. * Զի աշակերտքն նր երթեալ էին ՚ի 8
քաղաք անդր՝ զի կերակուրս գնեսցեն. * Ա 9
սէ ցնա կինն Սամարացի. դու՝ որ Հրեայդ
ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ՚ի կնոջէ
Սամարացւոյ. զի ոչ երբէք խառնակին
Հրեայք ընդ Սամարացիս. * Պատասխանի 10
ետ Յս եւ ասէ. եթէ գիտէիր դու զպ
արգեւս Այ, եւ ո՞վ է՝ որ ասէդ ցքեզ՝ թէ
տուր ինձ ըմպել, դու արդեւք խնդրէիր ՚ի
նմանէ՝ եւ տայր քեզ ջուր կենդանի. * Ասէ 11
ցնա կինն. տէր՝ դու քանզի եւ դոյլ իսկ ոչ
ունիս, եւ ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞
ունիցիս զջուրն կենդանի. * Միթէ դու 12
մեծ ինչ ոք իցես՝ քան զհայրն մեր Յակոբ՝
որ զայս ջրհոր ետ մեզ. եւ ինքն աստի արբ՝
եւ որդիք նր, եւ խաշինք նր. * Պատասխա 13
նի ետ Յս եւ ասէ. ամ որ ըմպէ ՚ի ջրոյ
յայսմանէ՝ միւսանգամ ծարաւէ. բայց որ
ըմպէ ՚ի ջրոյն, զոր ես տաց նմա՝ մի ծարա
ւեսցէ յաւիտեան. * Այլ ջուրն զոր ես 14

տաց

տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ
15 'ի կեանսն յաւիտենականս: * Ասէ ցնա
կինն. տէր՝ տուր ինձ զջուրդ զայդ, զի մի
ծարաւեցայց. և մի եկից այսր՝ հանել ջուր:
16 * Ասէ ցնա Յս. Երթ կոչեա զայր քո՝ և եկ
17 այսր: * Պատասխանի ետ նմա կինն և ա-
սէ. չիք իմ այր: Ասէ ցնա Յս. բարւոք ա-
18 սացեր՝ թէ չիք իմ այր. * զի հինգ այր փո-
խեալ է քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր.
19 զայդ արդար ասացեր: * Ասէ ցնա կինն.
տէր՝ թուի ինձ, թէ մարգարէ իցես դու:
20 * Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ երկիր պա-
գին. և դուք ասէք՝ ‖ եթէ յԵմ եհեթ է ‖ 2. Օրէ.
տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել: 12. 5.
21 * Ասէ ցնա Յս. կին դու՝ հաւատա ինձ, զի
եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ 'ի լերինս
յայսմիկ և ոչ յԵմ երկիր պագանիցեն հօր:
22 * ‖ Դուք երկիր պագանէք՝ որում ոչն գի- ‖ Դ. Թ.-4.
տէք, մեք երկիր պագանեմք որում գի- 17. 41.
23 տեմքն. զի փրկութիւն 'ի հրէից է: * Այլ
եկեսցէ ժամանակ՝ և այժմ իսկ է. յորժամ
ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանի-
ցեն հօր հոգւով և ճշմարտութբ. քանզի և
հայր այնպիսի երկրպագուս խնդրէ:
24 * ‖ Հոգի է ած, և երկրպագուաց նր՝ հոգ- Պ. Ս.
ւով և ճշմարտութբ պարտ է երկիր պագա- ‖ 2. Կոր.
25 նել: * Ասէ ցնա կինն, գիտեմք զի մեսիայ 2. 17.
գայ՝ անուանեալն քս. յորժամ եկեսցէ նա,
26 պատմեսցէ մեզ զամ: * Ասէ ցնա Յս. ես
27 եմ՝ որ խօսիմս ընդ քեզ: * Եւ յայն բան
եկին աշակերտքն նր, և զարմանային՝ զի ը
կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց 'ի նոցանէ,

թէ

թէ զի՞նչ խնդրես, կամ զի՞նչ խօսիս ընդ-
դմա։ * Եթող կինն զսափորն իւր՝ եւ չո- 28
գաւ ՚ի քաղաքն, եւ ասէ ցմարդիկն։ * Ե- 29
կայք տեսէք զայր մի, որ ասաց ինձ զա՛մ՝ որ
ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ Քս։
* Ելին ՚ի քաղաքէն՝ եւ գային առ նա։ * Եւ 30
մինչչեւ եկեալ էին նոքա, աղաչէին զնա ա- 31
շակերտքն եւ ասէին. ռաբբի՝ հաց կեր։
* Նա ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ ու- 32
տել, զոր դուքն ոչ գիտէք։ * Ասէին աշա- 33
կերտքն ընդ միմեանս. միթէ եբե՞ր ինչ ոք
դմա ուտել։ * Ասէ ցնա Յս. իմ կերակուր 34
այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ առա-
քեացն զիս, եւ կատարեցից զգործն նորա։
* Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ եւս չորք ամիսք 35
են, եւ հունձք գան. ահաւասիկ ես ասեմ
ձեզ. ամբարձէք զաչս ձեր, եւ տեսէք զար-
Մատթ. 9. 37. Ղուկ. 10. 2. տորայսն, ‖ զի սպիտակացեալ են՝ եւ ՚ի
հունձս հասեալ։ * Եւ որ հնձէն՝ վարձս 36
առնու, եւ ժողովէ զպտուղ ՚ի կեանսն յա-
ւիտենականս. զի որ սերմանէն՝ եւ որ հնձէ՝
համարակ ցնծասցեն։ * Յայսմ իսկ է բանն 37
ճշմարիտ. զի այլ է որ սերմանէ, եւ այլ է
որ հնձէ։ * Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր 38
ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին,
եւ դուք ՚ի վաստակս նց մտէք։ * Եւ ՚ի քա- 39
ղաքէն յայնմանէ սամարացւոց՝ բազումք
հաւատացին ՚ի նա, վն բանի կնոջն վկայե-
լոյ՝ եթէ ասաց ինձ զա՛մ, որ ինչ իմ գործեալ
էր։ * Իսկ իբրեւ եկին առ նա սամարացիքն, 40
աղաչէին զնա լինել առ նս. եւ եկաց անդ ա-
ւուրս երկուս։ * Եւ եւս բազումք հաւա- 41

տա-

42 տացին 'ի նա վն բանին նր. * Եւ ասէին
ցկինն, թէ ոչ այսուհետեւ վն քո խօսիցդ
հաւատամք, զի մեզէն իսկ լուաք 'ի դմա֊
նէ. եւ գիտեմք եթէ դա է Ճշմարտիւ փրկ֊
իչ աշխարհի.
43 * Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց Գ. Օ.
44 'ի գալիլեա: * ‖ Զի ինքն իսկ յս վկայեաց՝ ‖ Մատթ.
եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ 13. 57.
45 ոչ ունի: * Իսկ յորժամ եկն նա 'ի գալի֊ Մարկ.
լեա, ընկալան զնա գալիլեացիքն. զի տե֊ 6. 4.
սեալ եւս էր զամ նշանսն, զոր արար յԵրմ Ղուկ.
'ի տօնին. քանզի եւ նք եկեալ էին 'ի տօնն. 4. 24.
46 * Եկն դարձեալ 'ի կանա գալիլեացւոց՝ ‖ ուր ‖ Վեր.
արար զջուրն գինի. եւ անդ էր թագաւո֊ 2. 9.
րազն մի, որոյ որդի նր հիւանդ կայր 'ի կա֊
47 փառնայում. * Նա իբրեւ լուաւ եթէ յս ե֊
կեալ է 'ի հրէաստանէ 'ի գալիլեա, եկն առ
նա՝ եւ աղաչէր, զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի
48 նորա. քանզի մերձ էր 'ի մեռանել: * Ասէ
ցնա. եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տե֊
49 սանէք՝ ոչ հաւատայք: * Ասէ ցնա թագա֊
ւորազն. տէր՝ էջ մինչեւ մեռեալ իցէ մա֊
50 նուկն իմ. * Ասէ ցնա յս, երթ՝ որդին քո
կենդանի է. եւ հաւատաց այրն բանին՝ զոր
51 ասաց նմ յս, եւ գնաց: * Եւ մինչդեռ իջա֊
նէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նր. ա֊
ւետիս տային եւ ասէին, թէ մանուկն նորա
52 կենդանի է: * Հարցանէր ցնս վն ժամուն՝
յորում առողջացաւ: եւ ասեն ցնա. երէկ
յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն:
53 * Գիտաց հայրն նր եթէ յայնմ ժամու՝ յո֊
րում ասացն ցնա յս՝ թէ որդին քո կենդա֊

 նի

նի է. եւ հաւատաց ինքն եւ ամ՟ տուն իւր։
* Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յս 54
եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա։

## ԳԼ. Ե.

Գ. Լ. Յետ ‖ այսորիկ տօն էր Հրէից. եւ ել Յս 1
‖ Ղեւ. յԵրուսաղէմ։ * Եւ էր յԵրուսաղէմ ՚ի պրոբատիկէ ա- 2
23. 5. ւազանին. որ կոչէր Եբրայեցերէն Բեթ-
2. Օրէն. հեզդա, հինգ սրահս։ * Յորս անկեալ դնէր 3
16. 1. բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց, կաղաց,
գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։
* Եւ հրեշտակ Տն իջանէր ըստ ժամանակի 4
յաւազանն՝ եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ
՚ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ ու-
նելով նշան հիւանդութեան։ * Եւ անդ էր այր 5
մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր ՚ի հիւան-
դութեան իւրում։ * Զնա իբրեւ ետես Յս զի 6
անկեալ դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամա-
նակք են այնուհետեւ, ասէ ցնա. կամիս
ողջ լինել։ * Պատասխանի ետ նմա հիւանդն. 7
Տէր՝ ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յու-
զիցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես
դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն
իջանէ։ * Ասէ ցնա Յս. արի առ զմահիճս 8
քո՝ եւ գնա։ * Եւ ողջացաւ այրն, եւ յա- 9
րեաւ՝ առ զմահիճս իւր՝ եւ շրջէր. եւ էր շա-
բաթ յաւուրն յայնմիկ։ * Ասեն Հրէայքն 10
‖ Ելից. ցբժշկեալն։ ‖ շաբաթ է՝ եւ ոչ է արժան քեզ
20. 11. առնուլ զմահիճս քո։ * Պատասխանի ետ 11
Երեմ. 17. 24. նոցա եւ ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց
ցիս. առ զմահիճս քո՝ եւ գնա։ * Հարցին 12
ցնա եւ ասեն. ո՞վ է այրն՝ որ ասաց քեզ,

առ

13 առ զմահիճս քո՝ եւ շրջեաց ։ * Իսկ բժշկեալն
ոչ գիտէր թէ ով իցէ. քանզի յս խոյս ետ
14 վասն ամբոխին ՚ի տեղւոջն անդ. * Յետ
այսորիկ գտանէ զնա յս ՚ի տաճարին, եւ ա-
սէ ցնա. ահաւասիկ ողջացար, մի եւս մե-
15 ղանչեր՝ զի մի չար եւս ինչ լինիցի քեզ ։ * Գնա-
ց այրն՝ եւ պատմեաց հրէիցն, եթէ յս էր՝
16 որ բժշկեացն զնա ։ * Եւ վս այնորիկ հալա-
ծէին զյս հրէայքն, զի զայն առնէր ՚ի շա-
17 բաթու ։ * Եւ յս պատասխանի ետ նց. հայր
իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ ։
18 * Վասն այնորիկ առաւել խնդրէին հրէայ-
քն սպանանել զնա. զի ոչ միայն լուծանէր
զշաբաթս. այլ եւ հայր իւր կոչէր զած, եւ
հաւասար առնէր զանձն այ ։
19 * Պատասխանի ետ յս եւ ասէ ցնս. ամէն ա- Դ. Կ
մէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ ա-
ռնել յանձնէ եւ ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ ըզ-
հայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն
20 եւ որդի նմին նման գործէ ։ * Զի հայր սի-
րէ զորդի, եւ զամ ինչ ցուցանէ նմա՝ զոր
ինքն առնէ. եւ մեծամեծս եւս քան զայս
ցուցանէ նմա զգործս, զի դուք զարմա-
21 նայցէք ։ * Զի որպէս հայր յարուցանէ զմե-
ռեալս եւ՝ կենդանի առնէ, նոյնպէս եւ որ-
22 դի՝ զորս կամի կենդանի առնէ ։ * Եւ ոչ ե-
թէ հայր դատի զոք՝ այլ զամ դատաստան
23 ետ որդւոյ իւրոյ. * զի ամենեքեան պատ-
ուեսցեն զորդի՝ որպ պատուեն զհայր ։ որ ոչ
պատուէ զորդին, ոչ պատուէ զհայր զառա-
24 քիչն նր ։ * Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ
զբանն իմ լսէ, եւ հաւատայ այնմ որ առա-
քեացն

քեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենա-
կանս. և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ
փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս: * Ամէն 25
ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և այ-
ժմն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի
որդւոյն այ. և որք լսիցեն՝ կեցցեն: * Զի 26
որպէս հայր ունի կեանս յանձին իւրում, նոյն-
պէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւ-
րում. * և իշխանութիւն ետ նմա դատաստան 27
առնել. և զի որդի մարդոյ է՝ * ընդ այս մի 28
զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում
ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լսի-
Մատթ. ցեն ձայնի նր, * և ելցեն արտաքս. ո- 29
25. 46. րոց բարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց.
Դան. 12. 2. և որոց զչար արարեալ՝ 'ի յարութիւն դատաս-
տանաց: * Ոչ կարեմ ես յանձնէ առնել և 30
ոչինչ. այլ ոպ լսեմ՝ դատեմ, և դատաս-
տանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս
իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս.
Դ. Ը. * Եթէ ես վկայեմ վս իմ, վկայութիւն իմ 31
Մատթ. չէ ճշմարիտ: * Այլ է՝ որ վկայէ վս իմ. 32
3. 17. և դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութիւնն
Վհ. 1. 15. զոր վկայեաց վասն իմ: * Դուք առաքեցէք 33
առ Յովհաննէս՝ և վկայեաց ճշմարտութեան:
* Այլ ես ոչ եթէ 'ի մարդկանէ առնում 34
վկայութիւն. այլ զայս ասեմ՝ զի դուք ապ-
րեսջիք: * Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր և 35
ծագէր. և դուք կամեցարուք ցնծալ առ
ժամանակ մի 'ի լոյս նր: * Այլ ես ունիմ 36
վկայութիւն մեծ քան զՅովհաննու. ըզ-
գործն՝ զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից
զնա. նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ, վկա-
յեն

կայեն վն իմ, եթէ Հայր առաքեաց զիս.
37 * Եւ որ առաքեացն զիս Հայր՝ ‖ նա վկայեաց ‖ Մատթ.
վն իմ։ Դուք՝ ոչ զձայն նորա երբէք լուա- 3. 17.
րուք. ‖ եւ ոչ զտեսիլ նր տեսէք։ * Եւ ոչ 17. 5.
38 զբան նր ունիք 'ի ձեզ բնակեալ. զի զոր նա ‖ 2. Օրին.
39 առաքեաց՝ դուք նմ ոչ հաւատայք։ * Քնն- 4. 12.
նեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ու-
նել զկեանսն յաւիտենականս. եւ նոքին իսկ
են՝ որ վկայեն վն իմ, որովք համարիք ու-
40 նել կեանս. * Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝
41 զի զկեանսն ունիցիք։ * Փառս 'ի մարդ-
42 կանէ ոչ առնում։ * Այլ գիտեմ զձեզ՝ թէ
43 զսէրն այ ոչ ունիք յանձինս։ * Ես եկի յա-
նուն Հօր իմոյ՝ եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ
որ եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք։
44 * Զիա՞րդ կարէք դուք հաւատալ. զի փառս
'ի միմեանց առնուք, ‖ եւ զփառս զառ 'ի ‖ Վայ.
45 միոյն այ ոչ խնդրէք։ * Մի համարիք՝ եթէ 12. 43.
ես չարախօս լինել իցեմ զձէնջ առ Հօր. գոյ
որ չարախօս կայ զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն
46 յուսացեալ էք։ * Զի եթէ հաւատայիք
դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք եւ ինձ.
47 ‖ զի նա վն իմ իսկ գրեաց։ * Զի եթէ նր ‖ Ծննդ.
գրոցն ոչ հաւատայք, զիա՞րդ իմոց բանիցս 49. 10.
հաւատայցէք։ 2. Օրին. 18. 15.

## ԳԼ. Զ.

1 Յետ ‖ այսորիկ գնաց յս յայնկոյս ծովուն Գ. Գ.
2 գալիլեացւոց տիբերեայ. * Եւ զհետ եր- ‖ Մատթ.
թային նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին 14. 13.
զնշանսն՝ զոր առնէր 'ի վերայ հիւանդաց։ Մարկ.
6. 32.
3 * Ել 'ի լեառն յս, եւ անդ նստէր աշակեր- Ղուկ.
տօքն 9. 10.

տօքն հանդերձ ։ * Եւ էր մերձ զատիկ տօնն 4
հրէից ։ * Ամբարձ ՚ի վեր զաչս իւր յս՝ և ե- 5
տես, զի ժողովուրդ բազում գայր առ նա.
ասէ ցփիլիպպոս. ուստի՞ գնեսցուք հաց՝ զի
կերիցեն դոքա ։ * Զայս ասէր փորձելով 6
զնա. այլ ինքն գիտէր զինչ առնելոցն էր ։
* Պատասխանի ետ նմա փիլիպպոս. երկե- 7
րիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական,
թէպէտ և իւրաքանչիւրոք սակաւ ինչ ա-
ռուցու ։ * Ասէ ցնա մի յաշակերտացն նորա 8
անդրէաս՝ եղբայր սիմովնի վիմի. * Է աստ 9
պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ գա-
րեղէն՝ և երկուս ձկունս. այլ այն զինչ է
առ այդչափ մարդիկ ։ * Ասէ յս. բազմե- 10
ցուցէք զմարդիկդ. և էր խոտ յոյժ ՚ի տեղ-
ւոջն. և բազմեցան մարդիկն թուով իբրև
հինգ հազար ։ * Եւ առ զհացն յս և գոհա- 11
ցաւ՝ և բաշխեաց բազմականացն. նոյնպէս
և ՚ի ձկանցն որչափ և կամեցան ։ * Եւ իբ- 12
րև յագեցան, ասէ ցաշակերտսն. ժողովե-
ցէք զնշխարեալ կոտորսդ՝ զի մի ինչ կորի-
ցէ ։ * Ժողովեցին, և լցին երկոտասան սա- 13
կառի զկոտորացն ՚ի հինգ գարեղէն նկանա-
կէ անտի, որ յաւելաւ ՚ի կերողացն ։ * Իսկ 14
մարդիկն իբրև տեսին զնշանն զոր արար՝
ասէին, եթէ սա է ճշմարիտ մարգարէն, որ
գալոց էր յաշխարհ ։
Կ. Գ. * Յս իբրև գիտաց եթէ գալոց են յափշտա- 15
‖ Մտ. կել զնա, զի արասցեն զնա թագաւոր, ‖ գնաց
14. 23. դարձեալ ՚ի լեառն միայն ։ * Եւ իբրև երեկոյ 16
Մր. եղև, իջին աշակերտքն նր ՚ի ծովեզրն ։ * Եւ 17
6. 46. մտեալ ՚ի նաւ՝ գային յայնկոյս ծովուն ՚ի կա-

փառ-

փառնայում. եւ երեկ նսեմացաւ, եւ չեւ եւս
18 եկեալ էր առ նոսա Յս. * Եւ ծովն 'ի սաստիկ
19 հողմոյ շնչելոյ յուզէր. * Եւ վարեալ երիւ
ասպարէզս քսան եւ հինգ' կամ երեսուն, տե-
սանէին զՅս' զի գնայր 'ի վերայ ծովուն' եւ մերձ
20 էր 'ի նաւն, զարհուրեցան յոյժ. * Նա ա-
21 սէ ցնոսա. Ես եմ' մի երկնչիք. * Եւ կա-
մէին ընդունել զնա 'ի նաւն. եւ վաղվաղա-
կի եհաս նաւն յերկիրն' ուր երթային.
22 * Ի վաղիւ անդր ժողովուրդն' որ կայր Ի. Ե
յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ
ոչ գոյր անդ բայց միայն 'ի միոյն, յոր մտին
աշակերտքն նր. եւ զի չէր մտեալ Յս ընդ աշա-
կերտսն իւր 'ի նաւն. բայց միայն աշակերտ-
23 քն նր գնացին. * Իբրեւ այլ նաւք գային
'ի տիբերիայ մօտ յայն տեղին' ուր զհացն
24 կերան. * Իսկ իբրեւ ետես ժողովուրդն ե-
թէ Յս ոչ է անդ' եւ ոչ աշակերտքն նր, մտին
նոքա զնաւսն, եւ եկին 'ի կափառնայում
25 խնդրել զՅս. * Եւ իբրեւ գտին զնա յայն-
կոյս ծովուն, ասեն ցնա. ռաբբի' երբ եկիր
26 այսր. * Պատասխանի ետ նց Յս եւ ասէ. ա-
մէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, իբր
ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք. այլ զի կերայք
27 'ի հացէ անտի' եւ յագեցարուք. * Երթայք
գործեցէք մի զկորստական կերակուրն, այլ
զկերակուրն, որ մնայ 'ի կեանսն յաւիտե-
նականս, զոր որդին մարդոյ տացէ ձեզ. ‖ Վեր.
28 ‖ քանզի զնա հայր կնքեաց այ. * Ասեն 1. 34.
ցնա. զի՞նչ առնիցեմք' զի զգործն այ գոր- Մատթ.
29 ծեսցուք. * Պատասխանի ետ Յս, եւ ասէ 3. 17.
ցնս. ‖ այս է գործն այ, զի հաւատասջիք 17. 5.
յայն' ‖ Ա Յովհ.
3. 23.

յայն՝ որ առաքեացն զնա ։ * Ասեն ցնա . 30
զի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք եւ հաւա-
Ելք. 16. 14. տասցուք, զի՞նչ գործիցես ։ * Հարքն մեր 31
կերան զմանանայն յանապատի անդ՝ որպէս
Սաղ. 77. 24. գրեալ է . Հաց յերկնից ետ նոցա ուտել ։
Իմաստ. 16. 20. * Ասէ ցնս Յս . ամէն ամէն ասեմ ձեզ . ե- 32
թէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ
Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմա-
րիտ ։ * Զի հաց այն է, որ իջանէ յերկնից՝ 33
եւ կեանս տայ աշխարհի ։ * Ասեն ցնա . տէր՝ 34
յամ ժամ տուր մեզ զհացն զայն ։ * Ասէ 35
ցնս Յս . ես եմ հացն կենաց . որ գայ առ իս՝
ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք
ծարաւեսցի * Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք 36
զիս, եւ ոչ հաւատայք ։ * Զամենայն՝ զոր 37
տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ . եւ որ գայ
առ իս, ոչ հանից արտաքս ։ * Զի իջի ես 38
յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ զկ-
կամս այնորիկ՝ որ առաքեացն զիս ։
Պ. Օ. * Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն 39
զիս . զի զամ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից
՚ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետ-
նում ։ * Այս են կամք Հօր իմոյ . զի ամ որ 40
տեսանիցէ զորդի՝ եւ հաւատայցէ ՚ի նա,
ընկալցի զկեանսն յաւիտենականս . եւ ես
յարուցից զնա յաւուրն յետնում ։ * Տրտն- 41
ջէին զնմանէ Հրեայքն, զի ասաց թէ ես
Ղուկ. 4. 16. եմ հացն իջեալ յերկնից . * Եւ ասէին, ոչ 42
սա է Յս որդին Յովսեփու, զորոյ մեք գի-
տեմք զհայրն եւ զմայր . իսկ արդ՝ զիարդ ա-
սէ՝ թէ ես յերկնից իջի ։ * Պատասխանի 43
ետ Յս, եւ ասէ ցնոսա . մի՛ քրթմնջէք ընդ մի-
մեանս .

44 ձեանս. * Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ
Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. եւ
45 ես յարուցից զնա յաւուրն յետնում* Գրեալ
է՝ ի մարգարէս, || եւ եղիցին ամենեքեան ու- || Եսայ.
սեալք յԱյ. ամ որ լուաւ ՚ի Հօրէ՝ եւ ուսանի, 54. 13.
46 գայ առ իս. * Ոչ եթէ զՀայր ուրուք
տեսեալ իցէ. || եթէ ոչ՝ որ էն յԱյ, նա ե- || Մատ.
47 տես զՀայր. * Ամէն ամէն ասեմ ձեզ. զի 11. 27.
որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւի-
48 տենականս. * Ես եմ Հացն կենաց. * || Հար- || Ելից.
49 քըն ձեր կերան զմանանայն յանապատին՝ եւ 16. 15.
50 մեռան. * Այս է հացն, որ յերկնից իջեալ
է. զի որ ուտիցէ ոք ՚ի սմանէ՝ մի մեռանի-
51 ցի. * Ես եմ հացն կենդանի, որ յերկնից
52 իջեալ. * Եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայս-
մանէ՝ կեցցէ ՚ի յաւիտեան. եւ հացն զոր ես
տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վն կենաց
53 աշխարհի. * Մարտնչէին ընդ միմեանս
Հրեայքն եւ ասէին. զիա՞րդ կարէ սա տալ
54 մեզ զմարմինն իւր յուտել. * Ասէ ցնոսա
Յս. ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերի-
ջիք զմարմին որդւոյ մարդոյ՝ եւ արբջիք զա-
55 րիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. * Որ
ուտէ զմարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն իմ, ու-
նի զկեանսն յաւիտենականս. եւ ես յարու-
56 ցից զնա յաւուրն յետնում. * || Զի մարմին || 1. Կոր.
իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճըշ- 11. 27.
57 մարիտ ըմպելի է. * Որ ուտէ զմարմին իմ
եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, եւ ես
58 ՚ի նմա. * Որպէս առաքեաց զիս կենդանին
Հայր, եւ ես կենդանի եմ վն Հօր, եւ որ ու-
59 տէ զիս, եւ նա կեցցէ վն իմ. * Այս է
հացն՝

հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան
հարքն ձեր զմանանայն՝ եւ մեռան. որ ուտէ
զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։ * Զայս ա- 60
սաց 'ի ժողովրդեանն՝ յուսուցանելն 'ի կա-
փառնայում։ * Եւ բազումք յաշակերտացն 61
իբրեւ լուան՝ ասեն. խիստ է բանդ այդ, ո՞
կարէ լսել դմա։ * Իբրեւ գիտաց յս՟ յանձն 62
իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշա-
կերտքն, ասէ ցնս՟. այդ գայթագղեցուցա-
Վէր. 3. 15. նէ զձեզ։ * Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք 63
զորդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառա-
ջինն։ * Հոգին է կենդանարար, մարմինն 64
ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ
ձեզ՝ հոգի է եւ կեանք։ * Այլ են ոմանք 'ի 65
ձէնջ որ ոչ հաւատան, քանզի գիտէր յս՟ 'ի
սկզբանէ, ո՞վ են այնորիկ՝ որ ոչն հաւա-
տան, եւ ո՞վ է այն՝ որ մատնելոցն է զնա։ Եւ
ասէր. * Վ՟ս այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ո՛ք 66
կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա
'ի Հօրէ իմմէ։ * Յայսմանէ բազումք յաշա- 67
կերտացն նորա չոգան յետս, եւ ոչ եւս շրջէին
ը՟ նմա։ * Ասէ յս՟ ցերկոտասանն աշակերտ- 68
ացն. միթէ եւ դուք կամիք երթալ։ * Պա- 69
տասխանի ետ նմա սիմոն պետրոս. տէր՝ առ
ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենակա-
Մտթ. 16. 16. նաց ունիս։ * Եւ մեք հաւատացաք՝ եւ 70
ծանեաք՝ եթէ դու ես քս՟ որդի այ՟։ * Պա- 71
Մրկ. 8. 29. տասխանի ետ նոցա յս՟. ո՞չ ես զձեզ զերկոտա-
Ղուկ. 9. 20. սանսդ ընտրեցի, եւ մի 'ի ձէնջ սատանայ
է։ * Եւ ասէր զսիմովնեան յուդայէ իսկա- 72
րիովտացւոյ. զի նա իսկ մատնելոց էր զնա.
եւ մի էր յերկոտասանիցն։

ԳԼ.

## ԳԼ. Է.

1 Եւ յետ այսորիկ շրջէր Յս ի Գալիլեա. ԳԼ. Է.
քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջել, զի
2 խնդրէին զնա Հրեայքն սպանանել։ * Եւ
էր մերձ տօնն Հրէից || տաղաւարահարաց։ || Ղեւ. 23. 34.
3 * Ասեն ցնա եղբարքն նորա. գնա՛ աստի եւ
երթ ի Հրէաստան, զի եւ աշակերտքն քո
4 տեսցեն զգործսդ քո՝ զոր գործես։ * Զի
ոչ ոք է՝ որ ի ծածուկ ինչ գործէ՝ եւ խնդրէ
ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես,
5 յայտնեա՛ զանձն քո աշխարհի։ * Քանզի
եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա։
6 * Ասէ ցնոսա Յս. ժամանակ իմ չեւ է հասեալ.
բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ
7 է։ * Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց
զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նր՝ եթէ
8 գործքն իւր չարութեան են։ * Դուք ելէ՛ք
ի տօնն յայն, ես ոչ ելանեմ ի տօնն յայն.
9 զի իմ ժամանակ չեւ է լցեալ։ * Զայս իբ-
րեւ ասաց՝ ինքն մնաց անդէն ի Գալիլեա։
10 * Իբրեւ ելին եղբարքն նր, ապա եւ ինքն
ել ի տօնն. ոչ յայտնի, այլ իբրեւ ի ծա-
11 ծուկ։ * Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօ-
12 նին անդ՝ եւ ասէին, ո՞ւր իցէ նա։ * Եւ
քրթմնջիւն էր զնմանէ ի ժողովուրդն.
կէսքն ասէին՝ թէ բարւոք է. այլքն ասէին,
13 ոչ՝ այլ մոլորեցուցանէ զժողովուրդս։ * Եւ
ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն եր-
կիւղին Հրէից։
14 * Իբրեւ տօնն ընդ մէջ եղեալ, ել Յս ի տա- Է. Ա
15 ճարն՝ եւ ուսուցանէր։ * Զարմանային

Հրեայ-

Հրէայքն եւ ասէին. զիա՞րդ գգիրս գիտէ
սա, զի ուսեալ ընաւ չէր։ * Պատասխանի 16
ետ նոցա Յս եւ ասէ. իմ վարդապետութիւնս չէ
իմ. այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս։ * Ե- 17
թէ ոք կամի զկամս նորա առնել՝ գիտասցէ
վասն վարդապետութեանս, յԱյ իցէ արդեօք՝
եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ։ * Որ 18
յանձնէ իւրմէ խօսի՝ փառս անձին իւրում
խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնորիկ որ
առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ անիրա-
‖ Ելից. ւութիւն ոչ գոյ ՚ի նմա։ * ‖ Ո՞չ Մովսէս ետ 19
24. 3. ձեզ զօրէնս, եւ ոչ ոք ՚ի ձէնջ առնէ զօ-
‖ Վեր. րէնս։ * ‖ Զի՞ խնդրէք զիս սպանանել։ 20
5. 18. Պատասխանի ետ ժողովուրդն եւ ասէ. դեւ
գոյ ՚ի քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։
* Պատասխանի ետ նոցա Յս եւ ասէ. գործ մի 21
գործեցի, եւ ամենեքին զարմացեալ էք։
‖ Ղեւտ. * ‖ Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփա- 22
12. 3. տութիւն. զի ոչ եթէ ՚ի Մովսիսէ էր, ‖ այլ
‖ Ծննդ. ՚ի հարցանէ. եւ ՚ի շաբաթու թլփատէք
17. 11. զմարդ։ * Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն ա- 23
ռնու մարդ ՚ի շաբաթու, զի մի օրէնքն Մով-
սիսի լուծցին. ընդ իս ցասուցեալ էք՝ զի
ողջոյն իսկ մարդ բժշկեցի ՚ի շաբաթու։
ԽԲ * ‖ Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դա- 24
‖ Օր. տաստան արարէք։ * Ասէին ոմանք յԵրու- 25
1. 16. սաղեմացւոց անտի. ո՞չ նա է սա՝ զոր խնդ-
րէին սպանանել. * եւ ահաւասիկ յայտնապէս 26
խօսի, եւ չասեն ինչ ՚ի դմա. գուցէ արդեօք
եւ իշխանքն գիտացին՝ թէ սա իցէ Քն։
* Այլ զսա գիտեմք ուստի է. իսկ Քն յոր- 27
ժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է։ * Աղա- 28

ղա-

ղակեաց յս 'ի տաճարին, ուսուցանէր՝ և
ասէր. Եւ զիս գիտէք, և ուստի եմ գիտէք.
և յանձնէ իմնէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմա-
րիտ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գի-
29 տէք: * Ես գիտեմ զնա, զի 'ի նմանէ իսկ
30 եմ, և նա առաքեաց զիս: * Խնդրէին զնա
ունել՝ և ել 'ի ձեռաց նց. և ոչ ոք արկ 'ի նա
31 ձեռն, զի չև էր հասեալ ժամ նորա: * Եւ
բազումք 'ի ժողովրդենէն հաւատացին 'ի
նա, և ասէին. քանզի յորժամ գայցէ՝ միթէ
աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սա ա-
32 նէ: * Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ
ժողովրդեանն զնմանէ. և առաքեցին քա-
հանայապետքն և փարիսեցիք սպասաւորս՝
33 զի կալցին զնա: * Ասէ յս. փոքր մի ևս
ժամանակ ընդ ձեզ եմ. և երթամ առ այն՝
34 որ առաքեացն զիս: * ‖ Խնդրիցէք զիս՝ և ‖ Վեր. 13. 33.
ոչ գտանիցէք. և ուր եսն երթամ, դուք
35 ոչ կարէք գալ: * Ասեն հրէայքն ընդ մի-
մեանս. իսկ յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գը-
տանիցեմք զդա. միթէ 'ի սփիւռս հեթա-
նոսաց երթայցէ՝ և ուսուցանիցէ զհեթա-
36 նոսս: * Զի՞նչ է բանն այն՝ զոր ասաց.
խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք. և ուր եսն
երթամ, դուք ոչ կարէք գալ:
37 * 'Ի վերջնում ‖ աւուր մեծի տօնին կայր ԻԳ.
յս՝ աղաղակէր և ասէր. եթէ որ ծարաւի ‖ Ղևտ.
38 իցէ՝ եկեսցէ առ իս, և արբցէ: * ‖ Որ հա- 23. 36.
ւատայ յիս՝ որպէս և ասեն գիրք, գետք յորո- ‖ Եսայ.
վայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութե: 58. 11.
39 * Զայս ասէր վասն հոգւոյն՝ զոր ընդունե- ‖ Յովէլ.
լոց էին որ հաւատային 'ի նա. ‖ զի չև էր 2. 28.
հո-

Գործ. Հոգի, քանզի Յս չև՛ էր փառաւորեալ : * Ո- 40
2. 17. մանք 'ի ժողովրդենէն իբրև լուեն զբանս
զայս, ասէին. սա է ճշմարիտ մարգարէն:
* Այլք ասէին՝ սա է Քն. իսկ կէսքն ա- 41
սէին՝ միթէ 'ի Գալիլեէ գալոց իցէ Քն:
|| Միք. * || Ո՞չ գիրք ասեն, եթէ 'ի զաւակէ դաւ- 42
5. 2. թի, և 'ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր Դաւիթն
Մատթ. էր, գալոց է Քն: * Եւ եղև հերձուած 'ի 43
2. 6. մէջ ժողովրդեանն վասն նր: * Եւ ոմանք 44
'ի նոցանէ կամէին ունել զնա. այլ ոչք
մխեաց 'ի նա ձեռս: * Եւ եկին սպասաւորքն 45
սպասաւորքն առ քահանայապետսն և փա-
րիսեցիս, և ասեն նոքա ցնոսա. ընդէ՞ր ոչ
ածէք զնա այսր: * Պատասխանի ետուն սպա- 46
սաւորքն՝ և ասեն. ոչ երբէք այնպէս խօսե-
ցաւ մարդ՝ որպէս այրն այն: * Պատասխանի 47
ետուն փարիսեցիքն՝ և ասեն. միթէ և դո՞ւք
մոլորեցարուք: * Միթէ ոք յիշխանաց 48
հաւատաց 'ի նա՝ կամ 'ի փարիսեցւոց. * այլ 49
այն խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտէ զօ-
րէնս, և նզովեալ են: * Ասէ նիկոդեմոս 50
|| Վեր. ցնոսա՝ || որ եկեալ էր առ նա գիշերի յա-
3. 2. ռաջագոյն՝ և մի էր 'ի նոցանէ: * Միթէ 51
օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ լսեն
|| Բ. Օրէ. նախ նմա 'ի նմանէ. || կամ գիտեն զինչ գոր-
17. 8. ծէ: * Պատասխանի ետուն նմա և ասեն. 52
միթէ և դու ես 'ի Գալիլեէ՞ իցես. քննեա՛
և տես. զի մարգարէ 'ի Գալիլեէ ոչ յառ-
նէ: * Եւ գնացին իւրաքանչիւրոք 'ի տու- 53
ն իւր:

## ԳԼ. Ը.

1 Իսկ Յս գնաց 'ի լեառն Ձիթենեաց. * Եւ
2 ընդ առաւօտն դարձեալ եկն 'ի տաճարն.
եւ գայր առ նա ամենայն ժողովուրդն. եւ
3 նստեալ ուսուցանէր զնոսա: * Ածեն առ
նա դպիրքն եւ քահանայապետքն եւ փարի-
սեցիք՝ կին մի ըմբռնեալ 'ի շնութեան. եւ կա-
4 ցուցեալ զնա առաջի, * ասեն ցնա. վար-
դապետ, կինս այս ըմբռնեցաւ՝ ինքն յայտ-
5 նապէս շնացեալ է: * || Եւ յօրէնս մովսէս || Ղեւ.
մեզ պատուիրեաց զայսպիսիս քարկոծել. 20. 10.
6 արդ՝ դու զի՞նչ ասես վասն դորա: * Զայս
ասէին փորձելով զնա՝ զի ունիցին ամբաս-
տանութիւն զնմանէ: Իսկ Յս 'ի խոնարհ նայե-
7 լով գրէր մատամբն յերկիր: * Իսկ իբրեւ
ստիպեցին հարցանելով զնա, հայեցեալ 'ի
վեր՝ ասէ ցնոսա. անմեղն 'ի ձէնջ՝ նախ նա
8 ընկեսցէ քար 'ի վ՛ր դորա: * Եւ դարձեալ
9 'ի խոնարհ նայելով գրէր յերկիր: * Եւ
լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յա-
ռաջնոցն մինչեւ 'ի վերջինս. եւ մնաց միայն
10 Յս, եւ կինն կայր առաջի նր: * Պատասխա-
նի ետ Յս՝ եւ ասէ ցնա. կին դու՝ ո՞ւր են,
11 ո՞չ ոք զքեզ դատապարտեաց: * Եւ ասէ.
ոչ ոք: Եւ ասէ Յս. եւ ոչ ես դատապարտեմ
զքեզ. երթ՝ յայսմ հետէ մի մեղանչեր:
12 * Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յս, եւ ասէ. ԵԳ.
|| Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ, ընդ || Յ-Ե
խաւար մի գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կե- 1. 5.
13 նաց: * Ասեն ցնա փարիսեցիքն. դու վասն
անձին քո վկայես՝ եւ վկայութիւն քո չէ ճըշ-

մա-

մարիտ : * Պատասխանի ետ յս եւ ասէ ցնո- 14
սա . Թէպէտ եւ ես վկայեմ վասն անձին ի-
մոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է՝ զի գիտեմ
ուստի եկի եւ յո երթամ . բայց դուք ոչ գի-
տէք ուստի գամ՝ կամ յո երթամ : * Դուք 15
ըստ մարմնոյ դատիք . ես ոչ դատիմ եւ ոչ
զոք . * Թէպէտ եւ դատիմ ես զոք՝ դատաս- 16
տանն իմ ճշմարիտ է . զի չեմ միայն, այլ
ես՝ եւ որ առաքեացն զիս հայր : * Եւ յօ- 17
Բ. Օրէ. րէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ ‖ երկուց մար-
17. 6. դոց վկայութիւն ճշմարիտ է : * Ես եմ որ 18
19. 15. վկայեմ վասն իմ, եւ վկայէ վասն իմ՝ որ ա-
Մատ. 18. 16. ռաքեացն զիս հայր : * Ասէին ցնա . ո՞ւր է 19
2. Կոր. հայրն քո : պատասխանի ետ յս եւ ասէ ցնոսա.
13. 1. ոչ զիս գիտէք՝ եւ ոչ զհայրն իմ . եթէ զիս
գիտէիք, եւ զհայրն իմ թերեւս գիտէիք :
* Զայս բանս խօսեցաւ ՚ի տուն գանձին՝ յոր- 20
ժամ ուսուցանէր ՚ի տաճարի անդ . եւ ոչ
կալաւ զնա, զի չեւ եւս հասեալ էր ժամն նր :
Ն Ն * Ասէ դարձեալ ցնոսա յս . ես երթամ, եւ 21
խնդրիցէք զիս . եւ ՚ի մեղս ձեր մեռանիցիք .
զի ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ :
* Ասէին հրեայքն . միթէ զիւրովի՞ն երթայ- 22
ցէ, զի ասէ՝ թէ ուր ես երթամ՝ դուք ոչ
կարէք գալ : * Եւ ասէ ցնոսա . դուք ՚ի ներ- 23
քուստ աստի էք, եւ ես ՚ի վերուստ անտի
եմ . դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ
յայսմ աշխարհէ : * Բայց ասացի ձեզ՝ թէ 24
՚ի մեղս ձեր մեռանիջիք . զի թէ ոչ հաւա-
տայցէք թէ ես եմ, մեռանիջիք ՚ի մեղս ձեր :
* Ասէին ցնա . դու ո՞վ ես : ասէ ցնոսա յս . 25
նախ զի եւ խօսիմս իսկ ընդ ձեզ : * Բազում 26

ունի

ինչ ունիմ վա՛ս ձեր խօսել և դատել. այլ որ
առաքեացն զիս՝ ‖ Ճշմարիտ է. և ես զոր ‖Հռովմ.
լուայ 'ի նմանէ, զայն խօսիմ յաշխարհի: 3. 4.
27 * Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր ցնոսա:
28 * Ասէ ցնս յս. յորժամ բարձրացուցանի-
ջիք զորդի մարդոյ՝ յայնժամ գիտասջիք՝
թէ ես եմ. և յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ,
այլ որպ ուսոյց զիս հայրն իմ, զայն խօսիմ:
29 * Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ ե-
թող զիս միայն, զի ես զհաճոյս նր առնեմ
30 հանապազ: * Իբրև զայս խօսեցաւ՝ բա-
զումք հաւատացին 'ի նա:
31 * Եւ ասէր յս առ հրէայսն հաւատացեալս. Ի.Զ.
եթէ դուք կայցէք 'ի բանի իմում, ճշմա-
32 րիտ աշակերտք իմ էք. * և ծանիջիք զճշ-
մարտութիւն, և ճշմարտութիւն ազատեսցէ
33 զձեզ: * Պատասխանի ետուն նմա և ասեն.
զաւակ աբրահամու եմք, և ոչ ումեք ե-
րեք ծառայեցաք. զիա՞րդ ասես թէ ազատք
34 լինիջիք: * Պատասխանի ետ նոցա յս. ամէն
ամէն ասեմ ձեզ. ‖ եթէ ամ որ առնէ զմե- ‖Հռովմ.
35 ղս, ծառայ է մեղաց: * Եւ ծառայն ոչ 6. 16.
յաւիտեան կայ 'ի տան, բայց որդին յաւի- 2. Պետ.
36 տեան կայ: * Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ 2. 19.
ազատեսցուցէ, ճշմարիտ ազատք լինիջիք:
37 * Գիտեմ զի զաւակ աբրահամու էք. այլ
խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չիք
38 տեղի 'ի ձեզ: * Ես՝ զոր տեսի առ հօր ի-
մում, խօսիմ. և դուք՝ զոր լուարուք 'ի հօ-
39 րէն ձերմէ՝ առնէք: * Պատասխանի ետուն
նմա և ասեն. հայր մեր աբրահամ է. ասէ
ցնս յս. եթէ որդիք աբրահամու էիք՝ ըղ-

գործն Աբրահամու գործէիք։ * Բայց այժմ 40
մեկ խնդրէք սպանանել զիս՝ զայր մի, որ
ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ՚ի
հօրէ իմմէ. զայդ Աբրահամ ոչ արար։
* Դուք առնէք զգործս հօրն ձերոյ։ Ասեն 41
ցնա. մեք ՚ի պոռնկութենէ չեմք ծնեալ. մի
է հայր մեր ած։ * Ասէ ցնա Յս. եթէ ած 42
էր հայր ձեր, սիրէիք արդեօք զիս. զի ես
յայ ելի՝ և եկի. և ոչ եթէ յանձնէ ինչ ե-
կի, այլ նա առաքեաց զիս։ * Ընդէ՞ր զխօսս 43
իմ ոչ գիտէք դուք. վասն զի՝ ոչ կարէք լսել
Ա Յհ. զբանն իմ։ * Դուք ՚ի հօրէ ՚ի սատանայէ 44
3. 8. էք. և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առ-
նել. զի նա մարդասպան էր ՚ի սկզբանէ,
և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմ-
արտութիւն ՚ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւ-
րոց անտի խօսի. զի սուտ է և հայր նորա։
* Իսկ ես զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հա- 45
ւատայք ինձ։ * Ո՞ ՚ի ձէնջ յանդիմանէ զիս 46
վասն մեղաց. եթէ զճշմարիտն ասեմ ձեզ՝
Ա Յհ. ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ։ * Որ էն յայ՝ 47
4. 5. զբանս այ լսէ. և դուք վասն այնորիկ ոչ լսէք,
զի չէք յայ։ * Պատասխանի ետուն Հրեայքն՝ 48
և ասեն ցնա. ո՞չ բարւոք ասեմք մեք՝ եթէ
Սամարացի ես դու, և դև գոյ ՚ի քեզ։ * Պա- 49
տասխանի ետ Յս և ասէ. յիս դև ոչ գոյ՝
այլ պատուեմ զհայր իմ, և դուք անարգէք
զիս։ * Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ 50
խնդրէն՝ և դատի։ * Ամէն ամէն ասեմ 51
ձեզ, եթէ որ զբանն իմ պահեսցէ՝ զմահ
մի տեսցէ ՚ի յաւիտեան։ * Ասեն ցնա Հրե- 52
այքն. արդ՝ գիտացաք թէ դև գոյ ՚ի քեզ.

աբ-

աբրահամ մեռաւ՝ և մարգարէքն . և դու
ասես՝ եթէ որ զբանն իմ պահեսցէ, մի ճա-
53 շակեսցէ զմահ 'ի յաւիտեան ։ * Միթէ դու
մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր մեր աբրահամ,
որ մեռաւ, և մարգարէքն մեռան . արդ՝
54 դու զո՞ առնես զքեզ ։ * Պատասխանի ետ
յս . եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառք
իմ ոչինչ են . է հայր՝ որ փառաւորէ զիս,
55 զորմէ դուքն ասէք՝ թէ ած մեր է . * և ոչ
ճանաչէք զնա . բայց ես գիտեմ զնա . և թէ
ասեմ, թէ ոչ գիտեմ զնա՝ ձեզ նմանն սուտ
լինիմ . այլ գիտեմ զնա, և զբանն նորա պա-
56 հեմ ։ * Աբրահամ հայր ձեր ցնծացաւ տե-
57 սանել զօր իմ, ետես՝ և ուրախ եղև ։ * Ա-
սեն ցնա հրեայքն . յիսուն ամ չև ևս է քո,
58 և զաբրահամ տեսեր ։ * Ասէ ցնս յս . ա-
մէն ամէն ասեմ ձեզ . յառաջ քան զլինելն
59 աբրահամու եմ ես ։ * Առին քարինս, զի
արկցեն 'ի վ̅ր ն̅ր . և յս թաքեաւ, և ել
գնաց 'ի տաճարէ անտի ։

## ԳԼ. Թ.

1 Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր Ի Լ
2 'ի ծնէ . * և հարցին ցնա աշակերտքն նո-
րա՝ և ասեն . ռաբբի՝ ո՞յր մեղս է, սորա՞
3 թէ հօր և մօր իւրոյ, զի կոյր ծնցի . * Պա-
տասխանի ետ յս . ոչ դորա մեղս է, և ոչ
հօր և մօր իւրոյ . այլ զի յայտնի լիցին
4 գործքն այ 'ի դմա ։ * Ինձ պարտ է գոր-
ծել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս,
մինչ տիւ կայ . գայ գիշեր՝ յորժամ ոչոք
5 կարէ գործել ։ * Մինչդեռ յաշխարհի եմ,

լոյս

լոյս եմ աշխարհի։ * Զայս իբրեւ ասաց, 6
եթուք 'ի գետին՝ եւ արար կաւ 'ի թքոյն, եւ
ծեփեաց զկաւն 'ի վ՟ր աչաց կուրին։ * Եւ 7
ասէ ցնա. Երթ՝ լուա յաւազանին Սիլովամայ.
որ թարգմանի առաքեալ. չոգաւ լուացաւ,
եկն եւ տեսանէր։ * Իսկ դրացիքն՝ եւ որոց 8
տեսեալ էր զնա յառաջագոյն՝ թէ մուրա-
ցիկ էր, ասէին. ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ
մուրանայր։ Կէսքն ասէին. նա է։ * Այլքն 9
ասէին. ո՛չ՝ այլ նման է նմա. եւ նորն ասէր՝
թէ ես եմ։ * Ասեն ցնա. իսկ զիա՞րդ բա- 10
ցան աչք քո։ * Նա ետ պատասխանի. այր մի՝ 11
որում Յիսուս ասեն, կաւ արար՝ եւ ծե-
փեաց զաչս իմ, եւ ասէ ցիս. Երթ 'ի Սիլո-
վամ, եւ լուա. չոգայ լուացայ՝ եւ տեսա-
նեմ։ * Ասեն ցնա. ո՞ւր է նա. ասէ ցնոսա. 12
ո՛չ գիտեմ։ * Ածին առ փարիսեցիսն զնա, 13
որ երբեմն կոյրն էր։ * Եւ էր շաբաթ՝ յոր- 14
ժամ զկաւն արար Յ՟ս. եւ եբաց զաչս կու-
րին։ * Դարձեալ հարցանէին զնա փարի- 15
սեցիքն, թէ զիա՞րդ տեսանես։ Եւ նա ասէ
ցն՟ս. կաւ եդ 'ի վ՟ր աչաց իմոց, եւ լուացայ՝
եւ տեսանեմ։ * Ասեն ոմանք 'ի փարիսեց- 16
ւոցն. ո՛չ է այրն այն 'ի յԱ՟յ, զի զշաբաթս ո՛չ
պահէ։ Կէսքն ասէին. իսկ զիա՞րդ կարէ
մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել։ Եւ
եղեն հերձուածք 'ի մէջ նոցա։ * Ասեն դար- 17
ձեալ ցկոյրն. դու զի՞ ասես վ՟ն ն՟ր՝ զի եբաց
զաչս քո։ Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է։ * Եւ 18
ո՛չ հաւատային հրեայքն զնմանէ՝ թէ կոյր
էր՝ եւ բացաւ. մինչեւ կոչեցին զծնողս բա-
ցելոյն. * Հարցին ցն՟ս եւ ասեն՝ սա՞ է որդին 19
ձեր,

ձեր, զորմէ դուքն ասէիք, եթէ կոյր ծնաւ.
20 արդ՝ զիա՞րդ տեսանէ։ * Պատասխանի ե-
տուն նոցա ծնօղքն նորա՝ և ասեն. գիտեմք զի
21 սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. * բայց
զիա՞րդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ
թէ՝ ո՞ երաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք.
ցդա իսկ հարցէք, ինքնին 'ի չափ հասեալ
22 է. ինքն իսկ խօսեսցի վասն իւր։ * Զայս ա-
սացին ծնօղքն նորա. զի երկնչէին 'ի հրէիցն.
քանզի ուխտ եդեալ էր հրէից, եթէ որ
խոստովանեսցի զնա Քրիստոս՝ 'ի բաց կացցէ 'ի ժո-
23 ղովրդենէն։ * Վասն այնորիկ ասացին ծնօղքն
նորա, թէ ինքնին 'ի չափ հասեալ է, ցնա իսկ
24 հարցէք։ * Դարձեալ կրկին անգամ կոչե-
ցին զայրն՝ որ կոյրն էր, և ասեն ցնա. տուր
փառս Աստուծոյ, մեք գիտեմք՝ զի այրն այն մեղա-
25 ւոր է։ * Նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝
ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր
26 էի՝ և արդ տեսանեմ։ * Դարձեալ ասեն
ցնա. զի՞նչ արար քեզ, զիա՞րդ երաց զաչս
27 քո։ * Պատասխանի ետ նոցա. այժմ աս-
ացի ձեզ՝ և ոչ լուարուք. զի՞ կամիք միւսան-
գամ լսել. միթէ և դո՞ւք կամիք աշակեր-
28 տել նմա։ * Նորա հայհոյեցին զնա՝ և ա-
սէին. դու լիջիր նորա աշակերտ. մեք Մով-
29 սէսի աշակերտք եմք։ * Մեք գիտեմք՝ զի
ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք
30 ուստի իցէ։ * Պատասխանի ետ այրն և ա-
սէ ցնոսա. այդ իսկ են զարմանալիք. զի դուք
ոչ գիտէք՝ ուստի իցէ, և զիմ զաչս երաց.
31 * Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ. բայց
եթէ Աստուածապաշտ որ իցէ՝ և զկամս նորա առնի-
ցէ,

ցէ, նմա լսէ։ *Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ 32
եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնե֊
լոյ։ *Եթէ ոչ յայ էր այրն այն՝ ոչ կարէր 33
առնել ինչ։ *Պատասխանի ետուն և ասեն 34
ցնա. ՚ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին, և
դու վարդապետե՞ս զմեզ։ և հանին զնա
արտաքս։ *Լուաւ յս՝ եթէ հանին զնա ար֊ 35
տաքս, և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. դու
հաւատա՞ս յորդի այ։ *Նա պատասխանի 36
ետ և ասէ. տէր ո՞վ է՝ զի հաւատացից ՚ի
նա։ *Ասէ ցնա յս. և տեսեր զնա, և որ 37
խօսիդ ընդ քեզ՝ նա է։ *Եւ նա ասէ. հա֊ 38
ւատամ տէր, և երկիր եպագ նմա։
ՉԿ *Եւ ասէ յս. ՚ի դատաստան եկի յաշ֊ 39
խարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տես֊
ցեն, և որք տեսանենն՝ կուրասցին։ *Լուան 40
ոմանք ՚ի փարիսեցւոցն որք ընդ նմա էին, և
ասեն ցնա. միթէ և մեք կո՞յրք իցեմք։ *Ա֊ 41
սէ ցնս յս. եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ.
բայց արդ ասէք՝ եթէ տեսանեմք, և մեղքն
ձեր ՚ի ձեզ հաստատեալ են։

## ԳԼ. Ժ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ 1
դուռն ՚ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ
ելանէ՝ նա գող է, և աւազակ։ *Իսկ որ 2
մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց։
*Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն ձայ֊ 3
նի նր լսեն. և զիւր ոչխարսն կոչէ յանուա֊
նէ, և հանէ զնոսա։ *Եւ յորժամ զիւրսն 4
զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ՝
և ոչխարքն զհետ նր երթան, զի ճանաչեն

զձայն

5 զձայն նր։ * Զօտարի զհետ ոչ երթիցեն,
այլ փախիցեն ՚ի նմանէ, զի ոչ ճանաչեն
6 զձայն օտարաց։ * Զայս առակ ասաց նոցա
Յս, եւ նոքա ոչ գիտէին թէ զինչ էր որ խօ-
7 սէրն ընդ նս։ * Դարձեալ ասէ ցնս Յս. ա-
մէն ամէն ասեմ ձեզ, զի ես եմ դուռն ոչ-
8 խարաց։ * Ամենեքեան՝ որ յառաջ քան զիս
եկին, գողք էին եւ աւազակք. այլ ոչ լուան
9 նց ոչխարքն։ * Ես եմ դուռն. ընդ իս եթէ
ոք մտանիցէ, կեցցէ՝ մտցէ եւ ելցէ, եւ ճա-
10 րակ գտցէ։ * Գող ոչ գայ՝ եթէ ոչ՝ զի գո-
ղասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի
զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին։ ՕԲ
11 * Ես եմ հովիւն քաջ. ‖ Հովիւ քաջ զանձն
12 իւր դնէ ՚ի վն ոչխարաց։ * Իսկ վարձկանն՝ ‖ Եսայ. 40. 11. Եզեկ. 34. 23. 37. 24.
որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն. իբ-
րեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխար-
սն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնս եւ
13 ցրուէ. * քանզի վարձկան է, եւ չէ փոյթ
14 նմա վն ոչխարացն։ * Ես եմ հովիւն քաջ,
եւ ճանաչեմ զիմսն՝ եւ ճանաչիմ յիմոցն։
15 * ‖ Որպէս զիս ճանաչէ Հայր, գիտեմ եւ ես ‖ Մատթ. 11. 27. Ղուկ. 10. 22.
զՀայր. եւ զանձն իմ դնեմ ՚ի վն ոչխարաց
16 * Այլ՝ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են
յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ա-
ծել այսր. եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղի-
17 ցին մի հօտ՝ եւ մի հովիւ։ * Վն այնորիկ սի-
րէ զիս Հայր իմ, ‖ զի ես դնեմ զանձն իմ. ‖ Եսայ. 53. 12.
18 զի միւսանգամ առից զնա։ * Ոչ ոք հանէ
զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ ի-
մով. իշխանութիւն ունիմ դնել զնա, եւ իշխա-
նութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս
պատու-

պատուէր առի 'ի Հօրէ իմմէ ։ * Դարձեալ 19
հերձուած լինէր 'ի մէջ հրէից վս բանիցս
այսոցիկ ։ * Ասէին բազումք 'ի նոցանէ . 20
դեւ գոյ 'ի նմա՝ եւ մոլեգնի , զի՞ լսէք
նմա ։ * Այլքն ասէին . այսպիսի բանք ոչ 21
դիւահարի են . միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի
բանալ ։

ՕՁ. * Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրմ , եւ 22
ձմեռն էր ։ * եւ շրջէր յս 'ի տաճարին՝ 'ի սրա 23
Ա։ Մ-ւ. 4. 59. հին սողոմոնի ։ * Ածին զնովաւ 24
հրեայքն եւ ասեն . մինչեւ յերբ թափես զա
նձինս մեր , եթէ դու ես քս՝ ասա մեզ հա
մարձակ ։ * Պատասխանի ետ նց յս եւ ասէ . 25
ասացի ձեզ՝ եւ ոչ հաւատայք ինձ . զգործսն
զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ նոքին վկա
յեն վս իմ ։ * Այլ դուք ոչ հաւատայք , 26
զի չէք յոչխարաց անտի իմոց ։ * Ոչխարք իմ 27
զձայնի իմում լսեն , եւ ես ճանաչեմ զնոսա , եւ
զկնի իմ գան . * եւ ես տամ նոցա զկեանսն 28
յաւիտենականս . եւ մի կորիցեն յաւիտեան .
եւ մի ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց իմոց ։
* Հայրն իմ՝ որ ետ ինձ զնոսա , մեծ է քան 29
զամ , եւ ոչ ոք կարէ յափշտակել 'ի ձեռաց
Հօր իմոյ ։ * Ես եւ Հայր իմ մի եմք ։ * Ապա 30
առին հրեայքն զի քարկոծ արասցեն զնա ։ 31
* Պատասխանի ետ նց յս . բազում գործս 32
բարիս ցուցի ձեզ 'ի Հօրէ իմմէ . վասն որոյ
գործոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք զիս ։
* Պատասխանի ետուն նմա հրեայքն . վասն 33
բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ ,
այլ վս հայհոյութե . եւ զի դու մարդ ես , եւ
զանձն քո ած առնես ։ * Պատասխանի ետ 34
նց

նոցա Յս. ոչ յօրէնս ձեր գրեալ է. ‖ Ես ասացի Սղ. 81. 6.
35 թէ աստուածք էք. * Իսկ եթէ զնոսա աստ-
ուածս ասաց, առ որս բանն այ եղև. և չէ
36 մարթ եղծանել զգիրս. * Իսկ զոր Հայր սուր-
բեաց՝ և առաքեաց յաշխարհ, դուք ասէք՝
թէ հայհոյես. զի ասացի՝ թէ որդի այ եմ.
37 * Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի
38 հաւատայք ինձ. * Ապա թէ գործեմ, թէև
և ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հա-
ւատացէք. զի գիտասջիք և ծանիջիք՝ եթէ
39 Հայր յիս և ես 'ի Հայր. * Խնդրէին կալ-
40 նուլ զնա միւսանգամ, և ել 'ի ձեռաց նոցա. * Եւ
գնաց միւսանգամ յայնկոյս յորդանանու՝
'ի տեղին, ուր էր յովհաննէս զառաջինն՝ և
41 մկրտէր. և անդ լինէր. * Եւ եկին բազումք
առ նա՝ և ասէին. զի յովհաննէս նշան ինչ
42 ոչ արար. * Բայց զամ, զոր ասաց յովհան-
նէս վս նր, ճշմարիտ էր. և բազումք հա-
ւատացին 'ի նա անդ.

## Գլ. ԺԱ.

ՕԳ
1 Եւ էր ոմն հիւանդ ղազարոս 'ի բեթա-
նիա, 'ի գեղջէ մարեմայ, և մարթայի քե- Մտ. 26. 7.
2 ռն. * Եւ այն մարիամ էր ‖ որ օծ զտէրն Յհ. 12. 3.
իւղով և ջնջեաց զոտս նորա հերով իւրով.
3 որոյ եղբայրն ղազարոս հիւանդ էր. * Առա-
քեցին առ նա քորքն նորա՝ և ասեն. տէր՝
ահաւասիկ զոր դու սիրէիր՝ հիւանդա-
4 ցեալ է. * Իբրև լուաւ Յս, ասէ. այն հի-
ւանդութիւն չէ 'ի մահ, այլ վասն փառացն
այ. զի փառաւոր լիցի որդի այ այնուիկ.
5 * Եւ սիրէր Յս զմարթա և զքոյր նր զմա-
րիամ,

րիամ, և զՂազար : *Իբրև լուաւ թէ հիւան- 6
դացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝
աւուրս երկուս : *Ապա յետ այնորիկ ասէ 7
ցնս, եկայք երթիցուք միւսանգամ ՚ի Հրէ-
աստան : *Ասեն ցնա աշակերտքն . ռաբբի՝ 8
այժմ ևս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ
առնել . և դարձեա՞լ երթաս անդրէն :
*Պատասխանի ետ յս . ո՞չ երկոտասան ժամ 9
է աւուր . եթէ ոք գնայ ՚ի տունջեան՝ ոչ
գայթագղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ
տեսանէ . *Ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայ- 10
թագղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա : *Զայս 11
իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցնս . Ղա-
զարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ
զի զարթուցից զնա : *Ասեն ցնա աշակերտ- 12
քըն . տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի : *Այլ 13
յս վասն մահուան նր ասէր . նք այսպէս թը-
ւեցաւ՝ թէ վս ննջելոյ քնոյն ասէ : *Յայն 14
ժամ ասէ ցնոսա յս յայտնապէս . Ղազարոս
մեռաւ . *և ես ուրախ եմ վս ձեր, զի դուք 15
հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ . բայց
արդ՝ եկայք երթիցուք առ նա : *Ասէ թով- 16
մաս՝ անուանեալն երկուորեակ՝ ցաշակեր-
տակիցսն . ե՛ն՝ եկայք և մեք՝ զի ը՜ նմա մե-
ռցուք : *Եկն յս եգիտ զնա չորեքօրեայ ՚ի 17
գերեզմանի : *Եւ էր բեթանիա մերձ յե- 18
րուսաղէմ . իբրև ասպարէսք հնգետասան :
*Բազումք ՚ի Հրէից անտի եկեալ էին առ 19
մարթա և մարիամ, զի մխիթարեսցեն զնս
վասն եղբօրն : *Մարթա իբրև լուաւ՝ թէ 20
յս գայ, ընդառաջ գնայ նմա . բայց մարիամ
նստէր անդէն ՚ի տան : *Ասէ մարթա ցյս . 21

տէր՝

տէր՝ եթէ աստ լեալ էիր , եղբայրն իմ չէր
22 մեռեալ ։ * Այլ և արդ գիտեմ , եթէ զոր ինչ
23 խնդրեսցես յայ՝ տացէ քեզ ած ։ * Ասէ ցնա
24 յս . յարիցէ եղբայրն քո ։ * Ասէ ցնա մար-
թա . գիտեմ զի յարիցէ || ՚ի յարութեան յա- || Վեր. 6. 40.
25 ւուրն յետնում ։ * Ասէ ցնա յս . ես իսկ եմ
յարութիւն և կեանք . որ հաւատայ յիս , թէ-
26 պէտ և մեռանիցի՝ կեցցէ . * Եւ ամ որ կենդա-
նի է՝ և հաւատայ յիս , մի մեռցի ՚ի յաւի-
27 տեան . հաւատա՞ս այդմիկ ։ * Ասէ ցնա .
այո՛ տէր՝ ես հաւատացի՝ եթէ դու ես քս
28 որդի այ , որ յաշխարհ գալոց էիր ։ * Եւ զա-
յս իբրև ասաց , գնաց և կոչեաց զմարիամ
զքոյր իւր լռելեայն՝ և ասէ . վարդապետդ ե-
29 կեալ է և կոչէ զքեզ ։ * Նա իբրև լուաւ՝
30 յարեաւ վաղվաղակի , և եկն առ նա ։ * Եւ
ևս չէր եկեալ յս ՚ի գեօղն . այլ էր անդէն
՚ի տեղւոջն՝ ուր պատահեաց նմա մարթա ։
31 * Իսկ հրէայքն՝ որ էին ընդ նմա ՚ի տանն անդ՝
և մխիթարէին զնա , իբրև տեսին զմարիամ՝
թէ յարեաւ վաղվաղակի և գնաց , գնացին
և նոքա զհետ նորա . համարէին թէ ՚ի գե-
32 րեզմանն երթայ՝ զի լացցէ անդ ։ * Իսկ մա-
րիամ իբրև եկն ուր էրն յս՝ և ետես զնա ,
անկաւ առ ոտս նորա և ասէ . տէր՝ եթէ աստ
էիր գտեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ ։
33 * Յս իբրև ետես զնա զի լայր , և որ ընդ նմա
էին հրէայքն լային , խռովեցաւ յոգի իւր
34 իբրև զայրացեալ , և ասէ . ո՞ւր եդիք զը-
35 նա . ասեն ցնա . տէր՝ եկ և տես ։ * Եւ ար-
36 տասուեաց յս ։ * Ասէին հրէայքն . տեսէք
37 որպէս սիրէր զնա ։ * Եւ ոմանք ՚ի նոցանէ ա-
սէին .

Վեր. ասէին. ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կու-
9. 6. րին, առնել՝ զի և սա մի՛ մեռցի: * Յիսուս դար- 38
ձեալ զայրացեալ ՚ի միտս իւր, գայ ՚ի գե-
րեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ
՚ի վերայ նորա: * Եւ ասէ Յս. ՚ի բաց արարէք 39
զվէմդ: ասէ ցնա մարթա՝ քոյր մեռելոյն.
տէր արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ
է: * Ասէ ցնա Յս, ո՞չ ասացի քեզ՝ եթէ հա- 40
ւատասցես, տեսցես զփառսն այ: * Եւ բար- 41
ձին ՚ի վեր առին զվէմն, Յս ամբարձ զաչս իւր
՚ի վեր, և ասէ. հա՛յր՝ գոհանամ զքէն, զի
լուար ինձ: * Եւ ես գիտէի զի յամ ժամ 42
լսես ինձ. այլ վն ժողովրդեանս որ շուրջ
կան՝ ասեմ, զի հաւատասցեն՝ թէ դու
առաքեցեր զիս: * Զայս իբրև ասաց. ՚ի 43
ձայն մեծ աղաղակեաց՝ և ասէ. ղազարէ՝
արի եկ արտաքս: * Եւ ել մեռեալն ոտիւք 44
կապելովք, և ձեռօքն երիզապատօք և երե-
սօքն վարշամակապատօք: և ասէ ցնոսա Յս.
լուծէք զդա՝ և թողէք երթալ: * Բազումք 45
՚ի հրէիցն՝ որ եկեալ էին առ մարիամ,
իբրև տեսին զոր արարն՝ հաւատացին ՚ի նա:
* Եւ ոմանք ՚ի նոցանէ գնացին առ փարի- 46
սեցիսն, պատմեցին նց՝ զոր արարն Յս:
ՕՕ * Ժողովեցին քահանայապետքն և փարի- 47
սեցիքն ատեան, և ասեն. զի՞նչ արասցուք,
զի այրն այն բազում նշանս առնէ: * Եթէ 48
թողումք զնա այսպէս, ամենեքին հաւա-
տան ՚ի նա. և գայցեն հոռոմք՝ և բառնայ-
Վար. ցեն զտեղդ մեր՝ և զազգս: * Մի ոմն ՚ի 49
18. 14. նոցանէ՝ Կայիափա, որ քահանայա-
պետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնս. դուք

ոչինչ

50 ոչինչ գիտէք, * և ոչ ընդու խորհիլ իսկ,
թէ լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի 'ի վ̃ր
ժողովրդեանս, և մի ամ̃ ազգս կորիցէ։
51 * Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. այլ զի քա-
հանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգա-
րէացաւ՝ եթէ մեռանելոց էր յս̃ 'ի վ̃ր ազ-
52 գին. * և ոչ 'ի վ̃ր ազգին միայն, այլ զի և
զորդիսն ա̃յ զցրուեալսն ժողովեսցէ 'ի մի։
53 * Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի
54 սպանցեն զնա։ * Եւ յս̃ այնուհետև ոչ ե-
թէ համարձակ շրջէր 'ի մէջ հրէիցն. այլ
գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանա-
պատ, 'ի քաղաք մի՝ որում անուն էր Եփ-
րայիմ, և անդ լինէր աշակերտօքն հան-
դերձ։
55 * Եւ էր մերձ զատիկն հրէից, և բազումք ԺԲ
ելին յերկրէ 'ի գաւառէ անտի յառաջագոյն
քան զզատիկն զի սրբեսցեն զանձինս իւր-
56 եանց։ * Խնդրէին զյս̃, և ասէին ընդ մի-
մեանս մինչ կային 'ի տաճարին. զինչ թը-
ւի ձեզ՝ եթէ ոչ գայցէ 'ի տօն այսր։ պատու-
ւէր տուեալ էր քահանայապետիցն և փա-
րիսեցւոց, զի եթէ որ գիտասցէ թէ ուր է,
ցուցանիցէ զնմանէ՝ զի կալցին զնա։

## ԳԼ. ԺԲ.

1 Իսկ յս̃ վեց աւուրբ յառաջ քան զզատիկն
եկն 'ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն,
2 զոր յարոյցն 'ի մեռելոց։ * Եւ արարին
անդ նմա ընթրիս. և 'ի պաշտօն կայր
Մարթա, և Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ
3 նմ. * ‖ Իսկ Մարիամայ առեալ լիտր մի իւղոյ ‖ Վե. 11. 2.
նար-

Մատթ. նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն յսի,
26. 7. և հերովն իւրով մաքրէր զոտսն նր. և տունն
Մարկ. լի եղև 'ի հոտոյ իւղոյն ։ * Ասէ մի ոմն յա- 4
14. 3. շակերտաց անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ
մատնելոցն էր զնա ։ * Ընդէ՞ր ոչ իւղդ այդ 5
վաճառեցաւ երեք հարիւր դենարի, և տը-
ուաւ աղքատաց ։ * Զայս ասաց՝ ոչ զի 6
զաղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զի գող
էր՝ և զարկղն ինքն ունէր. և որ ինչ անկա-
նէր՝ նա կրէր ։ * Ասէ յս. Թո՛յլ տուր դմա, 7
զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ ։
* Զաղքատս յամ ժամ ընդ ձեզ ունիք. 8
զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք ։ * Իբրև 9
գիտաց ժողովուրդ բազում 'ի հրէիցն թէ
անդ է՝ եկին, ոչ միայն վն յսի, այլ զի և
զղազար տեսցեն, զոր յարոյց 'ի մեռելոց ։
* Խորհուրդ առարին քահանայապետքն՝ զի 10
և զղազար սպանցեն. * քանզի բազումք 'ի 11
հրէից երթային՝ և հաւատային 'ի յս ։
Լ։ Կ * 'Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ 12
եկեալ էր 'ի տօնն, իբրև լուան թէ գայ
յս յէմ, * առին ոստս արմաւենեաց՝ և 13
ելին ընդառաջ նմա աղաղակէին և ասէին.
Ովսաննայ, օրհնեալ որ գայ յանուն տն
Մատթ. Թագաւորդ իսրի ։ * Եւ գտեալ յս էշ մի, 14
21. 5. նստաւ 'ի վերայ նորա. որպէս և գրեալ է ։
Մարկ. * Մի՛ երկնչիր դուստր սիովնի՝ ահաւասիկ 15
11. 7. թագաւոր քո գայ նստեալ 'ի վր յաւանակի
Ղուկ. 19. 35. իշոյ ։ * Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտ- 16
Զաք. 9. 9. քն նր զառաջինն, այլ յորժամ փառաւո-
րեցաւ յս, յայնժամ յիշեցին, եթէ այն էր՝
որ գրեալն էր վն նր, և զայն արարին նմա ։

* Եւ

17 *Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա,
թէ զղազարոս կոչեաց և եհան ՚ի գերեզմանէն,
18 և յարոյց զնա ՚ի մեռելոց ։ *Եւ վասն այնո_
րիկ ընդառաջ եղև նմա ժողովուրդն, զի
լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա ։
19 *Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս.
տեսանէ՞ք՝ զի ոչինչ օգտիք. ահաւասիկ աշ_
20 խարհս ամ զհետ նորա գնաց ։ *Էին անդ ո_
մանք և հեթանոսք յելելոցն անտի, զի եր_
21 կրպագանիցեն ՚ի տօնին ։ *Նոքա մատեան
առ փիլիպպոս՝ որ ՚ի բեթսայիդա գալիլեա_
ցւոյն էր, աղաչէին զնա և ասէին. տէ՛ր՝
22 կամիմք զյս տեսանել ։ *Գայ փիլիպպոս և
ասէ ցանդրէաս. անդրէաս և փիլիպպոս ա_
23 սեն ցյս ։ *Եւ յս պատասխանի ետ նոցա և
ասէ. եհաս ժամ զի փառաւորեսցի որդի
մարդոյ ։

24 *Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն Ի. Բ.
25 ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, *ինքն
միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում
արդիւնս առնէ ։ ‖ Որ սիրէ զանձն իւր՝ ար_ ‖ Մատթ.
ձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշ_ 10. 39.
խարհիս յայսմիկ, ՚ի կեանսն յաւիտենականս 16. 25.
26 պահեսցէ զնա ։ *Եթէ որ զիս պաշտիցէ, Մարկ. 8. 35.
զհետ իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և Ղուկ.
պաշտօնեայն իմ եղիցի. եթէ որ զիս պաշ_ 9. 24.
տիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ ։

27 *Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զինչ Ի. Գ.
ասացից, եթէ հայր՝ ապրեցո զիս ՚ի ժամէ
աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ՚ի
28 ժամս յայս ։ *Հայր՝ փառաւորեա զանուն
քո ։ Եկն բարբառ յերկնից. և փառաւոր

արա_

արարի, և դարձեալ փառաւոր արարից :
* Եւ ժողովուրդն որ կայր և լսէր՝ ասէին, 29
որոտումն լինել. կէսքն ասէին. հրեշտակ
խօսեցաւ ընդ նմա : * Պատասխանի ետ Յիսուս և 30
ասէ. ոչ վասն իմ եկն բարբառս այս, այլ
վասն ձեր : * Այժմիկ դատաստան է աշ- 31
խարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխար-
հիս այսորիկ ընկեսցի արտաքս : * Եւ ես 32
յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին
ձգեցից առ իս : * Զայս ասէր, նշանակելով՝ 33
թէ որով մահու՝ մեռանելոց իցէ : * Պա- 34
տասխանի ետ նմա ժողովուրդն. մեք լուաք
|| Սաղ. || յօրինաց՝ եթէ Քրիստոս յաւիտեան կայ, և դու
109. 4. զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ որդ-
Եզեկ. ւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ : * Ա- 35
37. 25. սէ ցնոսա Յիսուս. փոքր մի ևս ժամանակ լոյս ընդ
Դանի. ձեզ է. գնացէք մինչդեռ զլոյսն ունիք, զի
7. 14. մի խաւար զձեզ հասցէ. զի որ գնայ ՚ի խա-
ւարի, ոչ գիտէ յո երթայ : * Մինչդեռ 36
զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ՚ի լոյսն,
զի որդիք լուսոյ եղիջիք : զայս խօսեցաւ Յիսուս,
և չոգաւ՝ թաքեաւ ՚ի նոցանէ : * Եւ այն- 37
չափ նշանս արարեալ էր առաջի նոցա. և նո-
քա ոչ հաւատային ՚ի նա. * զի լցցի բանն 38
|| Եսայ. Եսայեայ մարգարէի՝ զոր ասաց. || Տէր ո՞
53. 1. հաւատաց ՚ի լուր մեր, և բազուկ Տեառն ում
Հռոմ. յայտնեցաւ : * Վասն այնորիկ ոչ կարէին հա- 39
10. 16. ւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի. * || Թէ 40
|| Եսայ. 6. 9. կուրացոյց զաչս նոցա, և ապշեցոյց զսիրտս
Գործ. 28. 26. նոցա. զի մի տեսցեն աչօք, և իմասցին սր-
տիւք, և դարձցին՝ և բժշկեցից զնոսա :
* Զայս ասաց Եսայի՝ զի ետես զփառս նորա, 41
և

42 և խօսեցաւ վասն նորա: * Բայց սակայն և յիշ-
խանաց անտի բազումք հաւատացին ՚ի նա.
այլ վասն փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի
43 ՚ի ժողովրդենէն ելանիցեն: * Քանզի սի-
րեցին զփառս մարդկան՝ առաւել քան ըզ-
փառսն այ:
44 * Եւ յս աղաղակէր՝ և ասէր. որ հաւատայ Խ. Գ.
յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առա-
45 քեացն զիս: * Եւ որ տեսանէ զիս, զայն
46 տեսանէ՝ որ առաքեացն զիս: * Ես լոյս
յաշխարհ եկի, զի ամ որ հաւատայ յիս՝ ՚ի
47 խաւարի մի մնասցէ: * Եւ եթէ ոք լուիցէ
բանից իմոց, և ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ
զնա. քանզի ոչ եկի՝ || թէ դատեցայց զաշ- || Ղուկ.
48 խարհ, այլ զի փրկեցից զաշխարհ: * Որ ա- 9. 56.
նարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ, գոյ՝ Վեր. 3. 17.
որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ, նա
49 դատի զնա յաւուրն յետնում: * Զի ես
յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առա-
քեացն զիս հայր, նա ետ ինձ պատուէր՝
50 զինչ ասացից՝ և զինչ խօսեցայց: * Եւ գի-
տեմ՝ եթէ պատուէրն այն կեանք են յաւի-
տենականք: արդ՝ զոր եսն խօսիմ, որպէս ա-
սաց ինձ հայրն՝ այնպէս խօսիմ:

## ԳԼ. ԺԳ.

1 Յառաջ || քան զտօնն զատկի, գի- Ա. Ա.
տաց յս, թէ հասեալ է ժամ նորա՝ զի փո- || Մատ.
խեսցի յաշխարհէս աստի առ հայր, սիրեաց 26. 2.
զիւրսն՝ որ յաշխարհի աստ էին. իսպառ սի-
2 րեաց զնոսա: * Եւ ՚ի լինել ընթրեացն,
սատանայի իսկ արկեալ էր ՚ի սիրտ՝ զի մատ-
նես

նեացէ զնա յուդա սիմովնի իսկարիովտաց-
ւոյ. *գիտաց յս՝ զի զամ ինչ ետ հայր 'ի 3
ձեռս նր, և թէ յայ ել՝ և առ այ երթայ,
*յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհան- 4
դերձսն, և առեալ զենջակ մի՝ ածածանէ։
*Ապա առեալ ջուր՝ արկ 'ի կոնք, և 5
սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սր-
բել զենջականն՝ զոր սփածեալ էր։ *Գայ 6
առ սիմովն պետրոս. և նա ասէ ցնա. տէր՝
դու՞ զիմ զոտս լուանաս։ *Պատասխանի 7
ետ նմա յս՝ և ասէ. զոր ինչ ես գործեմ,
դու այժմ ոչ գիտես. բայց ապա գիտասցես։
*Ասէ ցնա պետրոս. ոչ լուասցես զոտս իմ 8
յաւիտեան։ պատասխանի ետ նմ յս. եթէ
ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս մասն *Ա- 9
սէ ցնա սիմոն պետրոս. տէր՝ մի միայն զոտս
իմ, այլ և զձեռս և զգլուխս։ *Ասէ ցնա 10
յս. լուացելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտ-
սն լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է.
‖ Վեր. 15. 3. ‖ Եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին։ *Զի 11
գիտէր զայն՝ որ մատնելոցն էր զնա. վասն
այնորիկ ասաց՝ թէ ոչ ամենեքին սուրբ էք։
*Իսկ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհան- 12
դերձսն իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ա-
սէ ցնս. գիտէ՞ք զինչ արարի ձեզ։ *Դուք 13
կոչէք զիս վարդապետ և տր. և բարւոք ա-
սէք, քանզի եմ իսկ։ *Իսկ արդ՝ եթէ ես 14
լուացի զոտս ձեր՝ տէրս և վարդապետս, և
դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։
*Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես 15
ձեզ արարի, և դուք արասջիք։
ԱԶ *Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ 16

քան

‖քան զտէր իւր. և ոչ առաքեալ՝ մեծ քան ‖Մտթ.
17 զայն՝ որ առաքեացն զնա: *Եթէ զայս գի- 10. 24.
տէք, երանելի էք եթէ առնիցէք զայս: Յհ. 15. 20.
18 *Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես
գիտեմ, զորս ընտրեցի. այլ զի լցցի գիրն,
թէ ‖որ ուտէր ընդ իս հաց՝ ամբարձ ինձ խա- ‖Սղմ.
19 բէութիւն: *Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ 40. 10.
մինչչև եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւա-
20 տայջիք թէ ես եմ: *‖Ամէն ամէն ասեմ ‖Մտթ.
ձեզ. որ ընդունի զոր ոք ես առաքեցից, զիս 10. 40. Ղկս.
ընդունի. և որ զիս ընդունի, ընդունի զայն՝ 10. 16.
21 որ առաքեացն զիս: *Զայս իբրև ասաց
Յս, խռովեցաւ յոգի իւր՝ վկայեաց և ասէ.
‖Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ՚ի ձէնջ ‖Մտթ.
22 մատնելոց է զիս: *Հայէին ընդ միմեանս ա- 26. 21. Մրկ.
շակերտքն տարակուսեալք, թէ զումէ ա- 14. 18.
23 սիցէ: *‖Եւ էր մի ոմն յաշակերտացն բազ- ‖Յհ.
24 մեալ առ Յսի, զոր սիրէրն Յս: *Ակնարկէ 21. 20.
նմա սիմովն պետրոս՝ հարցանել՝ ո՞վ իցէ, վս
25 որոյ ասէն: *Եւ նա անկեալ զլանջօքն Յսի,
26 ասէ ցնա. տէ՛ր՝ ո՞վ է: *Պատասխանի ետ
Յս և ասէ. այն է՝ որում ես թացից զպա-
տառն՝ և տաց, և թացեալ զպատառն տայ
27 յուդայի սկարիովտացւոյ: *Եւ յետ պա-
տառոյն՝ ապա եմուտ ՚ի նա սատանայ, և
ասէ ցնա Յս. արդ՝ զոր ինչ առնելոց ես՝ ա-
28 րա՛ վաղվաղակի: *Եւ զայս ոչ ոք իմացաւ ՚ի
բազմականացն անտի, թէ առ ինչ ասաց ցնա:
29 *Զի ոմանք համարէին, թէ՝ զի զարկղն
ունէր յուդա, ասաց նմա Յս, գնեա՛ ինչ որ
պիտոյ իցէ մեզ ՚ի տօնիս. և կամ՝ զի աղքա-
30 տաց ինչ տացէ: *Իսկ նորա առեալ զպա-
տառն՝

տառն՝ ել արտաքս վաղվաղակի. եւ էր գի-
շեր.
ԼԱ. * Իսկ իբրեւ ել, ասէ Յս. այժմ փառաւորե- 31
ցաւ որդի մարդոյ. եւ Ած փառաւորեցաւ
'ի նմա։ * Եւ եթէ Ած փառաւորեցաւ 'ի 32
նմա, եւ Ած փառաւորեսցէ զնա յանձն իւր.
եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ * Որ- 33
դեակք իմ՝ փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ.
* Յով. 7. 34. խնդրիցէք զիս. եւ որպէս ասացի Հրէիցն,
եթէ ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ.
* Ղեւտ. 19. 18. Յով. 15. 12. եւ արդ ձեզ ասեմ։ * Պատուիրան նոր 34
տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրե-
ցի ես զձեզ, զի եւ դուք սիրեսջիք զմիմեանս։
* Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ 35
աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։
* Ասէ ցնա Սիմոն պետրոս. տէր՝ յո՞ եր- 36
թաս։ պատասխանի ետ Յս, ուր ես եր-
թամ՝ դու ոչ կարես այժմ գալ զհետ իմ,
բայց ապա եկեսցես զհետ իմ։ * Ասէ ցնա 37
պետրոս. տէր՝ ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ
այժմ զհետ քո. արդէն զանձն իմ իսկ եդից
'ի վերայ քո։ * Պատասխանի ետ Յս. զանձն 38
* Մատ. 26. 34. Մարկ. 14. 30. Ղուկ. 22. 34. քո դնես 'ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ
քեզ. չէ՛ իցէ հաւու խօսել, մինչ դու ե-
րիցս ուրասցիս զիս։

## ԳԼ. ԺԴ.

Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւա- 1
տայք յԱծ, եւ յիս հաւատացէք։ * 'Ի 2
տան հօր իմոյ օթեվանք բազում են. ապա
թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ
պատրաստել ձեզ տեղի։ * Իսկ եթէ եր- 3
թամ

թամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ
գամ, և առնում զձեզ առ իս. զի ուր եսն
4 իցեմ, և դուք անդ իցէք։ * Եւ ուր ես եր-
թամն՝ գիտիցէք, և զճանապարհն գիտի-
5 ցէք։ * Ասէ ցնա Թովմաս. Տէր՝ ոչ գի-
տեմք յո՞ երթաս, և զիա՞րդ զճանապարհն
6 կարասցուք գիտել։ * Ասէ ցնա Յս. Ես եմ
ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք
7 գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև։ * Եթէ զիս
գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գիտէիք, և այ-
8 սուհետև գիտասջիք զնա։ * Ասէ ցնա Փի-
լիպպոս. Տէր՝ ցոյց մեզ զՀայր՝ և շատ է
9 մեզ։ * Ասէ ցնա Յս. այսչափ ժամանակս
ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. որ
ետեսն զիս՝ ետես զՀայրն. և դու զիա՞րդ աս-
10 ես՝ եթէ ցոյց մեզ զՀայր։ * Ո՞չ հաւատաս՝
եթէ ես 'ի Հայր, և Հայր յիս է. զբանս զոր
ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօ-
սիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, նա գոր-
11 ծէ զգործսն։ * Հաւատայի՞ք ինձ, եթէ ես
12 'ի Հայր՝ և Հայր յիս։ * Ապա թէ ոչ՝ գոնէ
վասն գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն ամէն
ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործ-
սն զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ, և մե-
ծամեծս ևս քան զսոյն գործեսցէ. զի ես
13 առ Հայր երթամ։ * Եւ զոր ինչ խնդրի- Մ--Բ
14 ցէք յանուն իմ, արարից զայն. * զի փառա- 7. 7.
ւորեսցի Հայր յՈրդի։ Վ--ր .
16. 13.
15 * Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պա- ՎԻՐ Ջ
16 հեսջիք։ * Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ
մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակես-
17 ցէ 'ի յաւիտեան. * զՀոգին ճշմարտութեան,

զոր

զոր աշխարհս ոչ կարէ ընդունել. զի ոչ տե-
սանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք
ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ՝ և 'ի
ձեզ եղիցի։ *Ոչ թողից զձեզ որբս. գամ 18
առ ձեզ։ *Փոքր մի ևս՝ և աշխարհս ոչ 19
ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք
զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի
լինելոց էք։ *Յայնմ աւուր գիտասջիք 20
դուք, զի ես 'ի Հօր իմում՝ և դուք յիս՝ և
ես 'ի ձեզ։ *Որ ունի զպատուիրանս իմ՝ և 21
պահէ զնա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն
զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից
զնա, և երեւեցուցից նմա զիս։ *Ասէ ցնա 22
Յուդա ոչ Սկարիովտացին. Տէր՝ զի՞ եղև՝ զի
մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։
*Պատասխանի ետ Յս և ասէ ցնա. Եթէ 23
որ սիրէ զիս՝ զբանս իմ պահեսցէ, և Հայր
իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք՝ և
օթեւանս առ նմա արասցուք. *Եւ որ ոչն 24
սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. և բանն իմ
զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն
զիս։

*Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս 25
էի։ *Իսկ Մխիթարիչն Հոգին Սբ՝ զոր ա- 26
ռաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ
ձեզ զամն, և յիշեցուսցէ զամն որինչ ասա-
ցի ձեզ։ *Խաղաղութիւն թողում ձեզ, զ- 27
խաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպ աշխարհս
տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք
ձեր, և մի զանգիտեսցեն։ *Լուարուք, զի 28
ասացի ես ձեզ՝ թէ երթամ, և գամ առ ձեզ.
եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լինէր էր ձեր՝

թէ

թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ
29 է քան զիս. *Եւ այժմ ասացի ձեզ մինչ-
չեւ եղեալ. զի յորժամ լինիցի՝ հաւատաս-
30 ջիք. *Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ.
գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ եւ յիս ինչ
31 ոչ գտանէ. *Այլ զի ծանիցէ աշխարհ.
եթէ սիրեմ զՀայր. Եւ որպէս պատուիրեաց Մդ.ւէ.
ինձ Հայր՝ այնպէս առնեմ. ծն արիք՝ գնաս- 2. 23.
ցուք աստի.

## ԳԼ. ԺԵ.

1 Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ մշակ
2 է. *Ամենայն ուռ որ յիս է՝ եւ ոչ բերէ
պտուղ՝ կտրէ զնա. եւ ամ որ բերէ պտուղ՝
սրբէ զնա, զի առաւել եւս պտղաբեր լիցի.
3 *Դուք արդէն սուրբ էք վն բանին՝ Վեր.
4 զոր խօսեցայ ընդ ձեզ. *Կացէք յիս՝ եւ ես ՚ի 13. 10.
ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել
յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ
յորթն, նոյնպէս եւ դուք՝ եթէ ոչ յիս հաս-
5 տատեալ իցէք. *Ես եմ որթ՝ եւ դուք ուռ.
որ հաստատեալ է յիս՝ եւ ես ՚ի նմա, նա բե-
րէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կա-
6 րէք առնել. *Եթէ որ ոչ է հաստատեալ
յիս, ել նա արտաքս իբրեւ ուռն՝ եւ ցամա-
քեցաւ, եւ ժողովեն զնա եւ ՚ի հուր արկա-
7 նեն՝ եւ այրի. *Եթէ կայցէք յիս՝ եւ բանք
իմ ՚ի ձեզ կայցեն, որինչ կամիցիք խնդրես-
8 ջիք՝ եւ լինիցի ձեզ. *Յայսմիկ փառաւորե-
ցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. եւ
9 եղիջիք իմ աշակերտք. *Որպէս սիրեաց
զիս Հայր, եւ ես սիրեցի զձեզ. Հաստատեան

կա-

կացէք ՚ի սէր իմ. * Եթէ պահիցէք զպատ- 10
ուիրանս իմ, կացջիք ՚ի սէր իմ. որպէս ես զը-
պատուիրանս Հօր իմոյ պահեցի, եւ կամ ՚ի
սէր նորա. * Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ու- 11
րախութիւն իմ ՚ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախու-
Վեր. թիւն լցեալ եղիցի. * Այս է պատուէր 12
13. 34. իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ ես զձեզ
Եփե. 5. 2. սիրեցի. * Մեծ եւս քան զայս սէր ուրուք ու- 13
նի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկա-
մաց իւրոց. * Դուք բարեկամք էք իմ, ե- 14
թէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ.
* Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն 15
ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ
կոչեցի բարեկամս, զի զամ, զոր լուայ ՚ի
Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ. * Ոչ եթէ դուք 16
ընտրեցէք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, եւ ե-
դի զձեզ. զի դուք երթայցէք՝ եւ պտղաբերք
լինիցիք. եւ պտուղն ձեր կայցէ. եւ զոր ինչ
խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ
Ա Յով. ձեզ. * Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք 17
3. 11. զմիմեանս. * Եթէ աշխարհ զձեզ ատեայ. 18
4. 7. գիտասջիք զի նախ զիս ատեաց. * Եթէ 19
յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սի-
րէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ. այլ
ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վն այնորիկ
ատեայ զձեզ աշխարհ. * Յիշեցէք զբանն 20
Վեր. զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան
15. 16. զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա եւ
Մատ. զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահե-
10. 24. Մատ. ցին, ապա եւ զձերն պահեսցեն. * Այլ զը- 21
24. 9. նոյն արասցեն ընդ ձեզ վն անուան իմոյ. զի
ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս. * Իսկ ե- 22

թէ

թէ չէր եկեալ՝ եւ խօսեցեալ ընդ նոսա, մեղ-
ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չիք պատճառք
23 վասն մեղաց իւրեանց։ *Որ զիս ատեայ եւ
24 զհայրն իմ ատեայ։ *Եթէ զգործսն չէր
գործեալ ՚ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց,
մեղ ինչ ոչ գոյր նոցա, բայց արդ տեսին՝ եւ ա-
25 տեցին՝ եւ զիս եւ զհայր իմ։ *Այլ զի լցցի
բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, ‖ թէ ատե- ‖ Սաղ. 24. 19.
26 ցին զիս տարապարտուց։ *‖ Բայց յորժամ ‖ Ղուկ. 24. 49.
եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ
՚ի հօրէ՝ զհոգին ճշմարտութեան, որ ՚ի հօրէ ե-
27 լանէ, նա վկայեսցէ վասն իմ։ *Եւ դուք վկա-
յեսջիք՝ զի ՚ի սկզբանէ ընդ իս էք։

## ԳԼ. ԺԶ.

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթագղես-
2 ջիք։ *Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն
զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն
որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն
3 մատուցանել Աստուծոյ։ *Եւ զայն արասցեն ընդ
ձեզ. քանզի ոչ ծանեան զհայր՝ եւ ոչ զիս։
4 *Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ
եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի
5 ձեզ։ *Զայս ՚ի սկզբանէ ոչ ասացի ձեզ,
քանզի ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես
առ առաքիչն իմ. եւ ոչ ոք ՚ի ձէնջ հարցանէ
6 զիս, թէ յո՞ երթաս։ *Այլ զի զայս խօսե-
ցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր։
7 *Այլ ես զճշմարտութիւն ասեմ ձեզ. լաւ է
ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ եր-
թայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ա-
պա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։

*Եւ

* Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ 8
վասն մեղաց՝ և վասն արդարութեան և վասն
դատաստանի. * Վասն մեղաց՝ զի ոչ հա- 9
ւատան յիս. * վասն արդարութեան՝ զի առ 10
հայր իմ երթամ, և ոչ ևս տեսանէք զիս.
* վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս 11
այսորիկ դատապարտեալ է. * Եւս բազում 12
ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք հան-
դարտել այժմիկ. * Յորժամ եկեսցէ նա 13
հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ
ամ ճշմարտութիւն. զի ոչ ենթէ յանձնէ ինչ
խօսիցի, այլ զոր լուիցէ՝ խօսիցի, և զգալոցն
պատմեսցէ ձեզ. * Նա զիս փառաւորեսցէ, 14
զի յիմմէ անտի առնուցու՝ և պատմեսցէ
ձեզ. * Զամ ինչ զոր ունի հայր՝ իմ է. վն 15
այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առ-
նուցու՝ և պատմեսցէ ձեզ.
* Փոքր մի, և ոչ ևս տեսանէք զիս, և ա- 16
պա սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և ես
երթամ առ հայր. * Ասէին ամանք յաշա- 17
կերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր
ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս,
և դարձեալ սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս.
և թէ ես առ հայր երթամ. * Եւ ասէին, 18
զի՞նչ իցէ այն փոքր մի ևս ասն, չգիտեմք
զի՞նչ խօսի. * Գիտաց յս եթէ կամէին ցնա 19
հարցանել, և ասէ ցնա. վն այդորիկ խնդ-
րէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի՝ և
ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի ևս
ես, և տեսանիցէք զիս. * Ամէն ամէն ա- 20
սեմ ձեզ, զի լայցիք՝ և ողբասջիք դուք, և
աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ
տրտու

21 տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։ * Կին
յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի
հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի ըզ-
մանուկն, ոչ եւս յիշէ զնեղութիւն վասն խնդու-
22 թեանն. զի ծնաւ մարդ յաշխարհ։ * Եւ
դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ
տեսից զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք ձեր. եւ
զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ ՚ի ձէնջ։
23 * Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք։
‖ Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդ- ‖Մտ.
րիցէք ՚ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ 7. 7.
24 * Մինչեւ ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն Մր. 11. 24.
իմ. խնդրեցէք, եւ առնուցուք. զի ուրա- Ղկ.
25 խութիւն ձեր լցեալ իցէ։ * Զայս առակօք 11. 9.
խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յոր- Յհ. 14. 13.
ժամ ոչ եւս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ
26 յայտնապէս զհօրէ պատմեցից ձեզ։ * Յայնմ
աւուր խնդրեսջիք յանուն իմ. եւ ոչ ասեմ
ձեզ՝ եթէ ես աղաչեցից զհայր վասն ձեր.
27 * զի ինքն իսկ հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս
սիրեցիք, եւ հաւատացիք՝ եթէ ես յԱյ ելի։
28 * Ելի ՚ի հօրէ՝ եւ եկի յաշխարհ. դարձեալ
թողում զաշխարհ, եւ երթամ առ հայր։
29 * Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտ-
նութեամբ խօսիս. եւ առակ եւ ոչ մի ինչ ասես։
30 * Արդ գիտեմք՝ եթէ գիտես զամ. եւ
ոչինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ.
31 յայսմիկ հաւատամք՝ եթէ յԱյ ելեր։ * Պա-
տասխանի ետ նոցա Յս, եւ ասէ. այժմ հաւա-
32 տայք։ * ‖ Ահա եկեսցէ ժամ, եւ եկեալ ‖Մտ.
իսկ է, զի ցրուեսջիք իւրաքանչիւր ուրեք, 26. 31.
եւ զիս միայն թողուցուք. եւ չեմ միայն, զի Մր. 14. 27.
հայր

հայր ընդ իս է.
* Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղա- 33
ղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն
ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղ-
թեցի աշխարհի.

## ԳԼ. ԺԷ.

Զայս իբրեւ խօսեցաւ Յս, ամբարձ զաչս 1
իւր յերկինս եւ ասէ. հայր՝ հասեալ է ժամ,
փառաւորեա զորդի քո, զի եւ որդի քո փա-
Մտ. 28. 18. ռաւորեսցէ զքեզ. * Որպէս ետուր նմա 2
իշխանութիւն ամ մարմնոյ. զի ամենայնի,
զոր ետուր նմա, տացէ զկեանս յաւիտե-
նականս. * Այս են յաւիտենական կեանք, 3
զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ ած՝ եւ զոր
առաքեցեր զՅս Քս. * Ես զքեզ փառաւորե- 4
ցի յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր
ինձ՝ զի արարից. * Եւ այժմ փառաւորեա զիս 5
հայր՝ առ 'ի քեն փառօքն՝ զոր ունէի յառաջ
քան զլինելն աշխարհի առ 'ի քեն. * Յայտ- 6
նեցի զանուն քո մարդկան՝ զորս ետուր ինձ
յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր զնոսա.
եւ զբանն քո պահեցին. * Արդ գիտացին՝ 7
եթէ զամ ինչ զոր ետուր ինձ, առ 'ի քէն
են. * զի զբանն՝ զոր ետուր ինձ, ետու նո- 8
ցա. եւ նոքա ընկալան, եւ ծանեան ճշմար-
տութեամբ՝ թէ առ 'ի քէն ելի. եւ հաւատացին՝
եթէ դու առաքեցեր զիս. * Արդ ես վասն 9
նց աղաչեմ, եւ ոչ վն աշխարհի աղաչեմ.
այլ վն նոցա՝ զորս ետուրն ինձ, զի քո են.
* Եւ որ ինչ իմ է, ամ քո է. եւ որ ինչ քո 10
է, այն իմ է. եւ փառաւորեալ եմ 'ի նոսա.

* Եւ

11 *Այլ ես ոչ եւս եմ յաշխարհի, եւ նոքա յաշ-
խարհի են, եւ ես առ քեզ գամ. Հայր սո՛ւրբ՝
պահեա զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ
12 զի եղիցին մի, որպէս եւ մեք մի եմք: *Մինչ
էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն
քո ‖ որով ետուրն ինձ, եւ պահեցի. եւ ոչ ոք ‖ Վեր.
'ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, 18. 9.
‖ զի գիրն լցցի: ‖ Սաղ.
108. 8.
13 *Բայց արդ առ քեզ գամ. եւ զայս խօսիմ
յաշխարհի, զի ունիցին զուրախութիւն իմ
14 լիով յանձինս իւրեանց: *Ես ետու նոցա
զբանն քո. եւ աշխարհս ատեաց զնոսա, զի չեն
15 յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ: *Ոչ
զայս աղաչեմ, զի բարձցես զնոսա յաշխարհէ.
16 այլ զի պահեսցես զնոսա 'ի չարէ: *Յաշխարհէ
անտի չեն, որպէս եւ ես չեմ յաշխարհէ:
17 *Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո
18 բանդ ճշմարտութիւն է: *Որպէս զիս առա-
քեցեր յաշխարհ. եւ ես առաքեցի զնոսա յաշ-
19 խարհ: *Ես 'ի վ՛ր նոցա ես սուրբ առնեմ
զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սրբեալք ճըշ-
20 մարտութեամբ: *Եւ ոչ վ՛ս նց միայն աղա-
չեմ, այլ եւ վասն ամ՛ հաւատացելոց բանիւն
21 նց յիս. *զի ամենեքին մի իցեն, որպէս դու
Հայր յիս՝ եւ ես 'ի քեզ, զի եւ նոքա 'ի մեզ
իցեն. զի եւ աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու
22 առաքեցեր զիս: *Ես զփառսն զոր ետուր
ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս եւ մեք մի
23 եմք: *Ես 'ի նոսա՝ եւ դու յիս, զի եղիցին
կատարեալք 'ի մի. եւ գիտասցէ աշխարհ
եթէ դու առաքեցեր զիս. եւ սիրեցեր զնոսա
24 որպէս դու զիս սիրեցեր: *Հա՛յր՝ զորս ե-
տուրն

տուր ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, եւ նո-
քա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ,
զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ
քան զլինելն աշխարհի։ * Հայր արդար՝ եւ 25
աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ
ծանեայ, եւ նոքա ծանեան՝ եթէ դու առա-
քեցեր զիս։ * Եւ ծանուցի նոցա զանուն քո. 26
եւ ծանուցից. զի սէրն՝ զոր սիրեցեր զիս՝ ի
նոսա իցէ, եւ ես ի նոսա։

## Գլ. ԺԸ.

Զայս իբրեւ ասաց Յս, ել աշակերտօքն 1
Մատթ. հանդերձ ‖ յայնկոյս ձորոյն Կեդրոնի, ուր էր
15. 23. պարտէզ. յոր եմուտ ինքն եւ աշակերտքն
իւր։
* Գիտէր եւ Յուդա, որ զնա մատնելոց էր՝ 2
զտեղին. զի բազում անգամ ժողովեալ էր
Մատթ. անդր Յս աշակերտօքն հանդերձ։ * ‖ Եւ 3
26. 47. Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, եւ ի
Մարկ. քահանայապետիցն եւ ի փարիսեցւոց սպա-
14. 43. սաւորս, գայ անդր ջահիւք եւ լապտերօք եւ
Ղուկ. զինուք։ * Իսկ Յս իբրեւ ետես զայն ամ ե- 4
22. 47. կեալ ի վ՛ նորա, ել եւ ասէ ցնա. զո՞ խնդ-
րէք։ * Պատասխանի ետուն նմա. զՅս Նա- 5
զովրեցի։ Ասէ ցնա Յս. Ես եմ. կայր ընդ
նոսա եւ Յուդա՝ որ մատնէրն զնա։ * Իբրեւ 6
ասաց՝ թէ ես եմ, յետս յետս չոգան՝ եւ
զարկան զգետնի։ * Դարձեալ եհարց զնա. 7
զո՞ խնդրէք։ Եւ նոքա ասեն, զՅս Նազովրե-
ցի։ * Պատասխանի ետ նոցա Յս. ասացի ձեզ 8
թէ ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թոյլ
տուք դոցա երթալ։ * Զի լցցի բանն՝ զոր 9
ասաց.

ասաց. ‖ Թէ զոր ետուրն ցիս՝ ոչ կորուսի ՚ի ‖ Վեր.
10 նոցանէ՝ և ոչ զոք։ * Իսկ Սիմոն Պետրոս՝ 17. 12.
քանզի ունէր սուր, ձգեաց զնա՝ և եհար
զքահանայապետին ծառայ, և ՚ի բաց առ
զունկն նորա զաջոյ. և էր անուն ծառային
11 Մաղքոս։ * Ասէ Յս ցՊետրոս. արկ զսուրդ
անդրէն ՚ի պատեանս իւր. զբաժակն զոր
12 ետ ինձ հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա։ * Իսկ զօրա-
գրն և հազարապետն և սպասաւորք Հրէիցն
13 կալան զՅս՝ և կապեցին. * Եւ ածին զնա
նախ առ ‖ Աննա՝ որ էր աներ Կայիափայի. ‖ Ղուկ.
որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։ 3. 2.
14 * Այս այն Կայիափայ էր՝ ‖ որ խրատ ետ ‖ Վեր.
Հրէից, եթէ լաւ է առն միում մեռանել 11. 49.
15 ՚ի վերայ ժողովրդեանն։ * Եւ երթայր զհետ
Յսի Սիմոն Պետրոս՝ և միւս աշակերտն։
Եւ աշակերտն այն քանզի ծանօթ էր քա-
հանայապետին՝ եմուտ ընդ Յսի ՚ի գաւիթ
16 քահանայապետին։ * Եւ Պետրոս կայր առ
դրանն արտաքոյ։ ‖ Ել միւս աշակերտն՝ որ էր ‖ Մատթ.
ծանօթ քահանայապետին՝ և ասաց դռնա- 26. 58.
17 պանին՝ և եմոյծ ՚ի ներքս զՊետրոս։ * Ա- Մարկ. 14. 54.
սէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս. Մարկ. 22. 54.
Միթէ և դո՞ւ յաշակերտաց առնն այնորիկ
18 իցես։ Եւ նա ասէ՝ ոչ եմ։ * Կային անդ ծա-
ռայքն և սպասաւորքն խարոյկ արկեալ՝ քան-
զի ցուրտ էր՝ և ջեռնուին. կայր ընդ նոսա և
19 Պետրոս՝ և ջեռնոյր։ * Եւ քահանայապետն
եհարց զՅս վասն աշակերտացն՝ և վասն վարդա-
20 պետութեանն նր։ * Պատասխանի ետ նմա
Յս. Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի.
Ես յամ ժամ ուսուցի ՚ի ժողովրդեանն, և

՚ի

՚ի տաճարի անդ՝ ուր ամ Հրեայք ժողովեալ
էին, և ՚ի ծածուկ ոչ ինչ խօսեցայ: * Զի՞ 21
հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որ լուանն,
թէ զինչ խօսեցայ ընդ նոսա. ահաւասիկ
նոքա գիտեն զինչ ասացի ես: * Իբրև նա 22
զայն ասաց, մի ոմն ՚ի սպասաւորացն որ անդ
կայր, ած ապտակ յս՛ի և ասէ. այդպէս
պատասխանի տաս քահանայապետին: * Ասէ 23
յս՛ ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկա-
յեա՛ վն չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր
հարկանես զիս: * Ապա առաքեաց զնա Ան- 24
նա կապեալ առ Կայիափա քահանայապետ.
Մտ. իզ. * Եւ Սիմոն Պետրոս կայր անդ՝ և ջեռ- 25
26. 69. նոյր. ասեն ցնա՝ միթէ և դու յաշակեր-
Մր. ժդ. տաց նորա իցես: Նա ուրացաւ և ասէ՝
14. 67. թէ չեմ: * Ասէ մի ոմն ՚ի ծառայից քա- 26
Ղկ. իբ. հանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ
22. 56. զունկն եհատ Պետրոս. ո՞չ ես իսկ տեսի
զքեզ ՚ի պարտիզի անդ ընդ նմա: * Դար- 27
ձեալ ուրացաւ Պետրոս: և վաղվաղակի հաւ
խօսեցաւ:

Մտ. իէ. * Եւ ածեն զյս՛ ՚ի վանացն Կայիափայ յա- 28
27. 2. պարանս դատաւորին. և էր այգուց: և նո-
Մր. ժե. քա ոչ մտին յապարանսն, զի մի պղծես-
15. 1. ցին, այլ զի ուտիցեն զզատիկն: * Ել առ 29
Ղկ. իգ. նոսա Պիղատոս արտաքս՝ և ասէ. զի՞նչ չարա-
23. 1. խօսութիւն մատուցանէք զառնէն զայսմանէ:
* Պատասխանի ետուն և ասեն ցնա. եթէ 30
ոչ էր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք
զնա քեզ: * Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զնա 31
դուք, և ըստ ձերում օրինացն դատեցարուք:
Ասեն ցնա Հրեայքն. մեզ ոչ է արժան սպա-
նանել

32 նանել զոք ։ *|| Զի լցցի բանն յսի զոր ա- ||Մատթ.
սաց, նշանակեալ թէ որով մահու մեռանե- 20. 19.
33 լոց իցէ ։ *|| Մտանէր միւսանգամ յապարան- ||Մատթ. 27. 11.
սն պիղատոս, կոչեաց զյս՝ և ասէ ցնա . Մարկ.
34 դու ես թագաւորն հրէից ։ * Պատասխանի 15. 2.
ետ յս. 'ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասա- Ղուկ.
35 ցին քեզ զինէն ։ * Պատասխանի ետ պիղա- 23. 3.
տոս. միթէ և ես հրեա՞յ իցեմ. ազգն քո և
քահանայապետք մատնեցին զքեզ ինձ,
36 զի՞նչ գործ գործեալ է քո ։ * Պատասխանի
ետ յս, իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ.
եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ,
սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի
մատնեցայց հրէից. բայց արդ՝ թագաւո-
37 րութիւնն իմ չէ աստի ։ * Ասէ ցնա պիղա-
տոս. ապա թէ այդպէս իցէ, թագաւոր
ոմն ես դու ։ Պատասխանի ետ յս. դու ա-
սես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ
ծնեալ եմ, և 'ի դոյն իսկ եկեալ եմ յաշ-
խարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամ որ
'ի ճշմարտութենէ է՝ լսէ բարբառոյ իմոյ ։
38 * Ասէ ցնա պիղատոս. զի՞նչ է ճշմարտու-
թիւն ։ զայս իբրև ասաց, դարձեալ ել առ
հրեայսն և ասէ ցնս, ես՝ և ոչ մի ինչ պատ-
39 ճառս գտանեմ 'ի նմա ։ *|| Բայց է ձեր սո- ||Մատթ.
վորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ 'ի զատ- 27. 15.
կիս. արդ՝ կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ զթա- Մարկ. 15. 6.
40 գաւորն հրէից ։ * Աղաղակեցին ամե- Ղուկ.
նեքեան՝ և ասէին. մի զդա, այլ զբարաբ- 23. 17.
բա ։ և էր բարաբբայն այն աւազակ ։

## ԳԼ. ԺԹ.

Մտ. իէ. 27. 27. Մր. ժե. 15. 16.

Յայնժամ առ պիղատոս զյս՝ և գան ե- 1
հար։ * Եւ զինուորացն արարեալ պսակ ՚ի 2
փշոց՝ եդին ՚ի գլուխ նր, և զգեցուցին նմա
հանդերձ ծիրանի. * և գային առ նա, և 3
ասէին. ողջ եր արքայ հրէից. և հանէին
նմա ապտակս։ * Ել դարձեալ պիղատոս 4
արտաքս և ասէ ցնս. ահա ածեմ զնա ար-
տաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս
ինչ ՚ի նմա ոչ գտանեմ։ * Ել յս արտաքս 5
և ունէր պսակ ՚ի փշոց՝ և հանդերձ ծիրա-
նի. և ասէ ցնս. ահա այրդ ցձեզ։ * Իբրև 6
տեսին զնա քահանայապետքն և սպասա-
ւորք, աղաղակ բարձին՝ և ասեն. ՚ի խաչ
հան՝ ՚ի խաչ հան զդա։ ասէ ցնոսա պիղա-
տոս. առէք զդա ՚ի ձեզ, և ձեզէն հանէք ՚ի
խաչ. զի ես ՚ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ։
* Պատասխանի ետուն նմա հրէայքն. մեք 7
օրէնս ունիմք. և ըստ օրինաց մերոց պարտի
մեռանել. զի զանձն իւր որդի այ արար։
* Իբրև լուաւ զբանս զայս պիղատոս, ա- 8
ռաւել ես երկեաւ։ * Եմուտ դարձեալ 9
անդրէն յապարանսն, և ասէ ցյս. ուստի
ես դու. և յս ոչ ետ նմա պատասխանի։
* Ասէ ցնա պիղատոս. ընդ իս ոչ խօսիս, ո՞չ 10
գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել ըզ-
քեզ ՚ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձա-
կել զքեզ։ * Պատասխանի ետ յս. ոչ ու- 11
նէիր դու իշխանութիւն ՚ի վերայ իմ և ոչ մի,
եթէ ոչ էր տուեալ քեզ ՚ի վերուստ. վասն
այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ

մեղք

12 մեղք են ։ *Եւ յայնմանէ Պիղատոս խնդ-
րէր արձակել զնա. եւ Հրեայքն աղաղակէին
եւ ասէին. Եթէ զդա արձակես՝ չես բարե-
կամ կայսեր. ամենայն որ որ թագաւոր կա-
13 ցէ զանձն իւր, հակառակ է կայսեր ։ *Իսկ
Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ,
ած զՅ՟ս արտաքս. եւ նստաւ ՚ի վ՟ր բեմին,
՚ի տեղւոջն որ կոչէր Քարայատակ, եւ եբ-
14 րայեցերէն Կապպաթա ։ *Էր ուրբաթն
զատկի. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ, եւ ա-
սէ ցՀրեայսն. ահա թագաւորդ ձեր ցձեզ ։
15 *Եւ նոքա աղաղակէին, բարձ ՚ի միջոյ
բարձ ՚ի միջոյ՝ եւ հան զդա ՚ի խաչ ։ ասէ ցնոսա
Պիղատոս. Եւ զթագաւորդ ձեր ՚ի խաչ հա-
նիցեմ ։ պատասխանի ետուն քահանայա-
պետքն. չիք մեր թագաւոր բաց ՚ի կայսե-
16 րէ ։ *Յայնժամ ետ զնա ՚ի ձեռս նոցա, զի ՚ի
խաչ ելանիցէ ։

17 *Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ բար- Մատթ.
ձեալ էր ինքնին զխաչափայտն. եւ ելանէր 27. 33.
՚ի տեղին՝ որ անուանեալ էր Գագաթան, Մարկ.
18 եւ կոչէր եբրայեցերէն Գողգոթա ։ *ուր եւ 15. 22.
՚ի խաչին իսկ հանին զնա. եւ ը̅ն նմա երկուս Ղուկ.
եւ այլս աստի եւ անտի, եւ ՚ի միջին զՅ՟ս ։ 23. 33.
19 *Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եդ
՚ի վ՟ր խաչին. եւ էր գրեալ ։ Յ՟ս Նազովրե-
20 ցի՝ Թագաւոր Հրէից ։ *Զայն տախտակ
ընթերցան բազումք ՚ի Հրէից, զի մօտ էր
՚ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յ՟ս.
եւ էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն եւ
21 յունարէն ։ *Ասէին ցՊիղատոս քահանայա-
պետքն Հրէից. մի գրեր Թագաւոր Հրէից,

այլ

այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից ։
* Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրե- 22
ցի՝ գրեցի ։ * Իսկ զինուորքն իբրեւ հանին 23
Մտթ. 27. 35. Մրկ. 15. 24. Ղուկ. 23. 34. ՚ի խաչ զՅս, առին զհանդերձս նորա՝ և ա-
րարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուո-
րի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր ա-
ռանց կարանի՝ ՚ի վերուստ փորանկեալ ա-
մենեւին. * ասեն ցմիմեանս. մի պատա- 24
ռեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ՚ի վր
դորա՝ ում և ելցէ ։ զի լցցի գիրն՝ որ ասէ.
Սղմ. 21. 19. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս , և
՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին ։
Զինուորքն զայս ինչ գործեցին ։
* Կային առ խաչին Յի մայրն նորա , և 25
քոյր մօր նր Մարիամ Կղէովպայ , և Մարիամ
Մագդաղենացի ։ * Յս իբրեւ ետես զմայրն 26
և զաշակերտն՝ զոր սիրէր , զի կայր մօտ.
ասէ ցմայրն , կին դու՝ ահա որդի քո ։ * Ա- 27
պա ասէ ցաշակերտն. ահա մայր քո ։ և
յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ ի-
ւր ։ * Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յս , և- 28
Սղմ. 68. 22. թէ ահա ամ ինչ կատարեալ է , զի կա-
տարեսցի գիրն , ասէ. Ծարաւի եմ ։ * Ա- 29
նօթ կայր ամանն ինչ լի քացախով. և նոցա
սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին ՚ի բե-
րան նորա ։ * Իբրեւ առ Յս զքացախն հան- 30
դերձ լեղւովն ասէ. ամ ինչ կատարեալ է ։
և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց
զոգին ։ * Իսկ Հրէայքն՝ քանզի ուրբաթ էր , 31
զի մի մնասցեն ՚ի խաչին ագանեցին մարմինքն
մինչև ցշաբաթն , զի էր օր մեծ շաբաթուն

այ.

աւուրին. աղաչեցին զպիղատոս՝ զի խորտա-
32 կեսցեն զբարձս նոցա՝ եւ բարձցին: * Եկին
զինուորքն, եւ զառաջնոյն խորտակեցին զը-
բարձս, նոյնպէս եւ զմիւսոյն՝ որ ընդ նմա ՚ի
33 խաչին ելեալ էր: * Բայց իբրեւ եկին առ
Յս՝ եւ տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ
34 խորտակեցին զբարձս նորա. * այլ մի ոմն
՚ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նր.
35 եւ ել վաղվաղակի արիւն եւ ջուր: * Եւ որ
տեսանն՝ վկայեաց, եւ ճշմարիտ է վկայութի՛
նր. եւ նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի եւ
36 դուք հաւատասջիք: * Այս եղեւ՝ զի լցցի ‖ Ելից.
37 գիրն, ‖ եթէ ոսկր նորա մի փշրեսցի: * Եւ 12. 46.
դարձեալ միւս գիր ‖ ասէ, եթէ հայեսցին Սաղմ.
՚ի նա՝ յոր խոցեցինն: 33. 20.
‖ Զաքար.
38 * ‖ Յետ այսորիկ աղաչեաց զպիղատոս յով- 12. 10.
սէփ, որ յարիմաթեայ էր աշակերտ Յսի ՚ի ‖ Մատթ.
ծածուկ՝ վասն ահին հրէից, զի բարձցէ զը- 27. 57.
մարմինն Յսի: եւ հրամայեաց պիղատոս. Մարկ.
39 եկն եւ եբարձ զնա: * Եկն եւ նիկոդեմոս՝ 15. 43.
‖ որ եկեալն էր առ Յս ՚ի գիշերի զառաջինն. Ղուկ.
եւ եբեր զմուռս խառն ընդ հալուէ՝ իբրեւ 23. 50.
40 լտերս հարիւր: * Առին զմարմինն Յսի, եւ ‖ Յովհ.
պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, որ- 3. 2.
41 պէս օրէն էր հրէից պատել: * Եւ էր ՚ի
տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. եւ ՚ի
պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք
42 երբեք էր եդեալ: * Անդ վասն ուրբաթուն
հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅս:

## ԳԼ. Ի.

Մատթ. Եւ ի միաշաբաթուջն Մարիամ Մագդա- 1
28. 1. ղենացի գայ առաւօտուն ընդ արշալուսն
Մարկ. ի գերեզման անդր, եւ տեսանէ զվէմն բար-
16. 1. ձեալ ի դրաց գերեզմանին: *Ապա ընթա- 2
Ղուկ. նայ՝ եւ գայ առ Սիմովն Պետրոս եւ առ միւս
24. 1. աշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, եւ ասէ ցնոսա.
Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, եւ ոչ գի-
տեմ՝ ուր եդին զնա: *Ել Պետրոս եւ միւս 3
աշակերտն՝ եւ գային ի գերեզմանն: *Ըն- 4
թանային երկոքեան ի միասին. եւ միւս ա-
շակերտն յառաջեաց ընթացաւ փութագոյն
քան զՊետրոս՝ եւ եկն նախ ի գերեզմանն:
*Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ 5
կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ: *Եկն 6
եւ Սիմովն Պետրոս՝ որ գայր զհետ նր. եւ ե-
մուտ ի գերեզմանն, եւ տեսանէ զկտաւսն՝
զի կային անդ. *եւ փակեղանակն որ էր ի 7
գլուխ նր՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ու-
րոյն ծալեալ ի մի կողմն: *Յայնժամ ե- 8
մուտ եւ միւս աշակերտն, որ եկեալն էր յա-
ռաջագոյն ի գերեզմանն, ետես եւ հաւա-
տաց. *զի չեւ եւս գիտէին զգիրսն՝ թէ պարտ 9
է նմա ի մեռելոց յառնել: *Չոգան դար- 10
Մատթ. ձեալ առ միմեանս աշակերտքն: *Բայց 11
28. 1. Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ ե-
Մարկ. լայր. եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գե-
16. 5. րեզմանն, *եւ տեսանէ երկուս հրեշտակս 12
Ղուկ. ի սպիտակս, զի նստէին մի ի սնարից եւ մի
24. 4. յանոտից՝ ուր կայր մարմինն Յսի: *Եւ նո- 13
քա ասեն ցնա. կին դու զի՞ լաս: ասէ ցնս.

զի

զի բարձին զՏրն իմ 'ի գերեզմանէ աստի,
14 և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։ * Զայս իբ-
րև ասաց, դարձաւ 'ի յետս կոյս, և
տեսանէ զՅս զի կայր. և ոչ գիտէր թէ Յս
15 իցէ։ * Ասէ ցնա Յս. կին զու՞ լաս, զո՞
խնդրես։ Նա այնպէս համարեալ՝ թէ պար-
տիզպանն իցէ, ասէ ցնա. տէր եթէ դու
բարձեր զնա՝ ասա ինձ ուր եդիր զնա, զի
16 ես առից զնա։ * Ասէ ցնա Յս. մարիամ։
և նա դարձաւ, և ասէ ցնա եբրայեցերէն.
17 ռաբբունի, որ թարգմանի՝ վարդապետ։ * Ա-
սէ ցնա Յս. մի մերձենար յիս, զի չև ևս ե-
լեալ եմ առ հայր իմ. այլ երթ դու առ եղ-
բարսն իմ, և ասա ցնոսա. ելանեմ ես առ
հայրն իմ՝ և առ հայր ձեր, և Այն իմ՝ և
18 Այ ձեր։ * Գայ մարիամ մագդաղենացի՝
և պատմէ աշակերտացն, եթէ ետես նա
զՏր, և զայս ինչ ասաց ցնա։
19 * Իբրև էր երեկոյ 'ի միաշաբաթոջ աւուրն. Մր—կ.
և դրունք փակեալ էին՝ ուր էին աշակերտքն ժո- 16. 14.
ղովեալ վա ահին հրէից, եկն Յս և եկաց 'ի Ղ—կ.
20 մէջ նոցա, և ասէ ցնոսա. ողջոյն ը ձեզ։ * Իբ- 24. 36.
րև զայս ասաց՝ ցուցանէր նոցա զձեռսն և զկողս 1. Կոր.
իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին 15. 5.
21 զՏր։ * Ասէ ցնա դարձեալ. ողջոյն ը ձեզ,
որպէս առաքեաց զիս հայր իմ, և ես առաքեմ
22 զձեզ։ * Իբրև զայս իբրև ասաց՝ փչեաց 'ի նո-
23 սա և ասէ. առէք հոգի սբ. * Եթէ ու- Մտ—թ.
րուք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. 16. 19.
24 եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։ * Իսկ 18. 18.
թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալն
երկուորեակ, ոչ էր ընդ նոսա՝ յորժամ եկն
Յս։

յս ։ * Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ 25
տեսաք զՏր ։ Եւ նա ասէ ցնոսա. Եթէ ոչ
տեսից ՚ի ձեռս նր զնշան բեւեռացն, եւ ար-
կից զմատունս իմ ՚ի տեղիս բեւեռացն, եւ
մխեցից զձեռս իմ ՚ի կողս նորա, ոչ հաւա-
տամ ։

* Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ՚ի ներքս 26
աշակերտքն, եւ Թովմաս ըն նոսա. գայ յս
դրացն փակելովք. եւ եկաց ՚ի մէջ, եւ ասէ
ողջոյն ըն ձեզ ։ * Ապա ասէ ցԹովմաս. բեր 27
զմատունս քո եւ արկ այսր, եւ տես զձեռս
իմ, եւ բեր զձեռն քո՝ եւ մխեա ՚ի կողս իմ,
եւ մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ ։
* Պատասխանի ետ Թովմաս՝ եւ ասէ ցնա. 28
տէր իմ՝ եւ ած իմ ։ * Ասէ ցնա յս. Այդ զի 29
տեսեր զիս՝ եւ հաւատացեր, երանի որոց
[illegible] ոչ իցէ տեսեալ՝ եւ հաւատասցեն ։ * Բա- 30
ԻԱ. 25. զում եւ այլ նշանս արար յս առաջի աշակեր-
տաց իւրոց որ ոչ է գրեալ ՚ի գիրս յայսմիկ ։
* Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւա- 31
տայցէք, եթէ յս քս է որդի այ. եւ զի հա-
ւատայցէք, եւ զկեանս յաւիտենականս
ընդունիցիք յանուն նր ։

## ԳԼ : ԻԱ.

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն 1
իւր յս աշակերտացն իւրոց առ ծովե-
զերբն Տիբերեայ. եւ յայտնեաց այսպէս ։
* Էին ՚ի միասին Սիմոն Պետրոս, եւ Թով- 2
մաս անուանեալն Երկուորեակ, եւ Նաթա-
նայէլ՝ որ ՚ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն
Զեբեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի եր-
կու ։

3 կու։ *Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս. Երթամ
ձուկն որսալ։ Ասեն ցնա. Գամք և մեք ընդ
քեզ. Գնացին և մտին 'ի նաւ, և յայնմ գի-
4 շերի կալան և ոչինչ։ *Իբրև այգ եղև՝ կայր
Յս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշա-
5 կերտքն թէ Յս իցէ։ *Ասէ ցնա Յս. Ման-
կունք՝ միթէ ունիցիք ինչ ուտելոյ։ Պատաս-
6 խանի ետուն և ասեն ցնա, ոչ։ *Ասէ ցնո-
սա. Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ,
և գտանիցէք։ Արկին, և ոչ կարէին ձգել
7 'ի բազմութենէ անտի ձկանցն։ *Ասէ աշա-
կերտն այն, զոր սիրէրն Յս՝ ցՊետրոս. Տէր է
այն։ Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է,
արկաւ զիւրև զփաղաձանելին՝ քանզի մերկ
8 էր, և ընկեց զինքն 'ի ծովն։ *Այլ ա-
շակերտքն նաւաւն իսկ գային, քանզի ոչ էին
հեռի 'ի ցամաքէն, այլ իբրև երկերիւր
կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ
9 ձկամբքն։ *Իբրև ելին 'ի ցամաք, տեսա-
նեն կրակետղ կայծականց, և ձուկն մի 'ի
10 վերայ, և հաց։ *Ասէ ցնոսա Յս. Բերէք 'ի
ձկանց այտի՝ զոր դուք կալարուք այժմիկ։
11 *Ելանէ Սիմոն Պետրոս, և ձգէր զգոր-
ծին 'ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հա-
րիւր յիսուն և երիւք։ և այնչափ ինչ կայր,
12 և ոչ պատառեցաւ գործին։ *Ասէ ցնոսա
Յս. Եկայք ճաշեցէք։ և ոչ յաշակերտացն
իշխէր հարցանել՝ թէ դու ով ես, զի գի-
13 տէին թէ Տէրն է։ *Գայ Յս՝ և առնու զ-
հացն՝ և տայ նոցա, նոյնպէս և զձուկնն։
14 *Այս երիցս անգամ երևեցաւ Յս աշա-
կերտացն յարուցեալ 'ի մեռելոց։

*Իբ

* Իսկ իբրեւ ճաշեցին, ասէ ցսիմոն պետրոս 15
յս. սիմոն յովհաննու սիրես զիս առաւել քան
զսոսա։ ասէ ցնա. այո՛ տէր, եւ դու գի-
տես զի սիրեմ զքեզ։ ասէ ցնա՝ արածեա՛
զգառինս իմ։ * Դարձեալ ասէ ցնա, սի- 16
մոն յովհաննու սիրես զիս։ ասէ ցնա. այո՛
տէր եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։ ասէ
ցնա՝ արածեա՛ զոչխարս իմ։ * Ասէ ցնա ե- 17
րիցս անգամ. սիմոն յովհաննու սիրես զիս.
տրտմեցաւ պետրոս, զի ասաց ցնա երիցս՝
թէ սիրես զիս. եւ ասէ ցնա. տէր՝ դու զամ
գիտես. եւ դու ինք զամենայն ճանաչես, եւ
եթէ սիրեմ զքեզ։ ասէ ցնա յս. արածեա՛
‖ Բ. Պետ. զոչխարս իմ։ * ‖ Ամէն ամէն ասեմ քեզ. 18
Ա 14. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօ-
տի ածէիր՝ եւ երթայիր յո՛ եւ կամէիր. եւ յոր-
ժամ ծերասցիս, ձեռս ՚ի վեր կալցես. եւ
այլք ածցեն քեզ գօտի, եւ տարցին՝ ուր ոչն
կամիցիս։ * Զայս ասաց՝ նշանակեալ թէ 19
որով մահու՛ փառաւոր առնիցէ զած. եւ
զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. եկ զկնի իմ։
* Դարձաւ պետրոս՝ եւ տեսանէ զաշակեր- 20
‖ Վեր. տն՝ զոր սիրէր յս, զի երթայր զկնի, ‖ որ
13. 23. եւ անկաւ զլանջօքն նորա՝ եւ ասէ, տէր ո՛վ է՝
որ մատնելոցն է զքեզ։ * Զնա տեսեալ 21
պետրոսի, ասէ ցյս. տէր՝ իսկ սա զի՞։ * Ա- 22
սէ ցնա յս. եթէ կամիմ, զի կացցէ դա՝
մինչեւ ես գամ. քեզ զի՞ փոյթ է՝ դու եկ
զկնի իմ։ * Ել բանս այս յեղբարս՝ եւ 23
համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանի-
ցի. եւ ոչ ասաց նմա յս եթէ ոչ մեռանիցի.
այլ թէ կամիմ ես՝ թէ կացցէ դա՝ մինչեւ ես
գամ։

24 գամ ։ *Սա է աշակերտն՝ որ վկայէ վն այ-
սոցիկ ․ որ և գրեացն իսկ զայսոսիկ ․ և գի-
տեմք ․ եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա ։
25 *‖ Բայց է և այլ ինչ բազում զոր արար յս, ‖ Վէր ․
զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ 20 ․ 30․
թէ և ոչ աշխարհս բաւական էր տանել
զգիրսն՝ որ թէ գրեալ էին ։

# ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

# ՅՈՒՑԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Հանգստեան, Տաճարի, Խաչաբերից, Ընծըլկութեան, և Մենաստանի. որ ընթերցեալ լինին ՚ի կարգաւորութեան հասարակաց աղօթից՝ ըստ ձայնին.

---

## ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ·

### ՚Ի ՄԱՏԹԷՈՍ·

գլ. ժա. 25. Յայնմ ժամանակի. մ. 30. լծ քաղցր է.
գլ. ժզ. 36. Յայնժամ եկեալ. մ. 52. զինքն և զինքն.
գլ. իա. 18. Եւ այգուցն էր. մ. 32. հաւատացեալ նմա.
գլ. իե. 31. Եւ յորժամ եկեսցէ. մ. 46. յաւիտենականս.

### ՚Ի ՄԱՐԿՈՍ·

գլ. դ. 1. Պատրաստեալ առաջի. մ. 9. ըսեալ՝ ըստ նմա.
գլ. դ. 26. Եւ ասէր՝ այսպէս. մ. 34. մեկնէր զամ.
գլ. ժգ. 24. Այլ յաւուրսն յայս. մ. 31. անցանիցեն.
գլ. ժգ. 32. Այլ վասն աւուրն. մ. 37. արթուն կացէք.

### ՚Ի ՂՈՒԿԱՍ·

գլ. թ. 10. Դարձեան առաքեալքն. մ. 17. սակառս.
գլ. ժբ. 32. Մի՛ երկնչիր. մ. 48. պահանջեսցեն ՚ի նմանէ.
գլ. ժէ. 3. Զգոյշ լերուք. մ. 10. ասասջիք՝ արարաք.
գլ. իա. 27. Եւ յայնժամ տեսցեն. մ. 38. լսել ՚ի նմանէ.

'Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Գլ. Բ. 13. Եւ էր մերձ զատ. մ. 22. զոր ասաց յս.
Գլ. Ե. 19. Պատասխանի ետ. մ. 23. զառաքիչն նր.
Գլ. Ե. 24. Ամէն ամէն ասեմ. մ. 30. առաքողին զիս.
Գլ. Ժբ. 24. Ամէն ամէն ասեմ ձեզ. մ. 26. Հայրն իմ.

---

## ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ.

'Ի ՄԱՏԹԷՈՍ.

Գլ. Իէ. 1. Եւ եղեւ առաւ. մ. 51. հերձեալ պատառեցաւ.

'Ի ՄԱՐԿՈՍ.

Գլ. ԺԵ. 1. Եւ վաղվաղակի. մ. 37. արձակեաց զոգին.

'Ի ՂՈՒԿԱՍ.

Գլ. Իա. 5. Եւ յասելն ոմանց. մ. 38. լսել ի նմանէ.

'Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Գլ. Ժզ. 16. Ամէն ամէն. մ. Ժէ. 13. Հայր սուրբ.

Կամ

Գլ. Ժ. 22. Եղեն յայնժամ նաւակատիքն. մ. 42. ի նա անդ.

---

## ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՇԽԱՆԵՐԻՑ.

'Ի ՄԱՏԹԷՈՍ.

Գլ. Ժը. 1. Եւ յայնմ ժամու. մ. 20. հանդերձ ընդ նոսա.

### Ի ՄԱՐԿՈՍ.

Գլ. ԺԵ. 42. Եւ երեկոյ եղեալ. մ. ԺԶ. 8. զի երկնչէին.

### Ի ՂՈՒԿԱՍ.

Գլ. ԻԳ. 50. Եւ ահա այր մի. մ. ԻԴ. 12. զինչ եղեն.

### Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Գլ. ԺԹ. 38. Յետ այսորիկ. մ. Ի. 18. ինչ ասաց նմա.

---

## ԸՆԴՏԱՆԵԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ. [uncertain]

### Ի ՄԱՏԹԷՈՍ.

Գլ. Դ. 23. Եւ շրջէր յամ. մ. 25. և բժշկէր զամ.
Գլ. Ը. 1. Իբրեւ էջ ի լեռնէ. մ. 17. զհիւանդս մեր.
Գլ. Ը. 28. Եւ եկեալ անդր. մ. 34. սահմանացն նոցա.
Գլ. Թ. 1. Եւ մտեալ ի նաւ՝ անց. մ. 8. մարդկան.
Գլ. Թ. 18. Մինչդեռ նա. մ. 26. երկիրն ընդ այն.
Գլ. Թ. 27. Եւ գնացեալ. մ. 34. հանէ դա զդեւս.
Գլ. Թ. 35. Եւ շրջէր յամ. մ. Ժ. 1. հիւանդութեան.
Գլ. ԺԲ. 9. Եւ փոխեցեալ անտի. մ. 14. կորուսցեն զնա.
Գլ. ԺԲ. 22. Յայնժամ մատ. մ. 37. պարտաւորեսցիս.
Գլ. ԺԴ. 22. Եւ առժամայն հարկ. մ. 36. բժշկեցան.
Գլ. ԺԵ. 21. Եւ ելեալ անտի. մ. 31. զԱստուածն Իսրայէլի.
Գլ. ԺԷ. 14. Եւ եկեալ ի. մ. 20. աղօթիւք և պահօք.
Գլ. Ի. 29. Եւ ելանէին նոցա. մ. 34. զհետ նր.

### Ի ՄԱՐԿՈՍ.

Գլ. Ա. 21. Եւ մտանեն ի Կափառ. մ. 34. զնա ճանաչէին.
Գլ. Ա. 35. Եւ ընդ այգն ընդ. մ. 45. յամ կողմանց.
Գլ. Բ. 1. Եւ մտեալ դարձեալ. մ. 12. երբեք ոչ տեսաք.

գլ. Գ. 1. Եւ եմուտ դարձեալ. մ. 5. ձեռն նր.
գլ. Գ. 7. Իսկ յս աշակերտօք. մ. 12. յայտնեսցեն զնա.
գլ. Ե. 1. Եւ եկին յայնկոյս. մ. 20. զարմանային.
գլ. Ե. 21. Եւ ելեալ անդ յս. մ. 43. նմա ուտել.
գլ. Զ. 53. Եւ ելեալ անդ. մ. 56. մերձեցանն՝ փրկեցան.
գլ. Է. 24. Եւ անտի յարեաւ. մ. 30. դնէր 'ի մահիճսն.
գլ. Է. 31. Եւ դարձեալ ելեալ. մ. 37. և համրոց խօսել.
գլ. Ը. 22. Գան 'ի Բեթսայիդա. մ. 26. մտցես 'ի շէնն.
գլ. Թ. 13. Եւ եկեալ առ ա. մ. 28. և աղօթիւք.
գլ. Ժ. 46. Եւ գան յԵրիքով. մ. 52. 'ի ճանապարհին.

'Ի ՂՈՒԿԱՍ.

գլ. Դ. 31. Եւ էջ 'ի Կափառնաում. մ. 42. թէ զառն է.
գլ. Ե. 12. Եւ եղև 'ի նմա. մ. 16. կայր յաղօթս.
գլ. Ե. 17. Եւ եղև 'ի միում. մ. 26. նոր նշանս.
գլ. Զ. 1. Եւ եղև 'ի շաբ. մ. 11. առնիցեն յս.
գլ. Է. 1. Եւ իբրև կատ. մ. 10. հիւանդն բժշկեալ.
գլ. Է. 11. Եւ եղև 'ի. մ. 23. գայթագղեսցի յիս.
գլ. Ը. 22. Եւ եղև 'ի միում. մ. 39. արար նմա յս.
գլ. Ը. 40. Եւ իբրև դարձ. մ. 57. որ ինչ եղեալն.
գլ. Թ. 37. Եւ եղև 'ի վաղ. մ. 44. մեծամեծութեան այ.
գլ. ԺԱ. 14. Եւ հանէր դև մի. մ. 23. ընդ իս՝ ցրուէ.
գլ. ԺԳ. 10. Եւ ուսուցանէր. մ. 17. գործէին 'ի նմանէ.
գլ. ԺԴ. 1. Եւ եղև 'ի մտա. մ. 6. պատասխանի առ այս.
գլ. ԺԷ. 11. Եւ եղև գնալ. մ. 19. կեցուցին զքեզ.
գլ. ԺԸ. 35. Եւ եղև 'ի մօտ. մ. 43. օրհնութիւն այ.

'Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

գլ. Դ. 46. Եկն դարձեալ 'ի Կանա. մ. 54. 'ի Գալիլեա.
գլ. Ե. 1. Յետ այսորիկ. մ. 18. առնէր զանձն այ.
գլ. Թ. 1. Եւ անցանէր առ. մ. 38. երկիրպագ նմա.
գլ. ԺԱ. 1. Եւ էր ոմն հիւ. մ. 46. զոր արարն յս.

# ՉԱՐՉԱՐԱՆՔ ԱՒԵՏԱՐԱՆԻ.

## Ի ՄԱՏԹԷՈՍ.

գլ. ԻԷ. 27. Ապա զօրականք դատաւորին. մ. 35. [illegible].
գլ. ԻԷ. 35. Ապա հանեալ. մ. 50. արձակեաց զհոգին.
գլ. ԻԷ. 50. Ապա յս դարձեալ. մ. 61. գերեզմանին.

## Ի ՄԱՐԿՈՍ.

գլ. ԺԵ. 22. Ապա ածեն զնա. մ. 37. և եհան զոգի.

## Ի ՂՈՒԿԱՍ.

գլ. ԻԳ. 32. Ածին և այլ երկուս. մ. 46. եհան զոգի.

## Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

գլ. ԺԹ. 13. Ապա [illegible]. մ. 21. [illegible].
գլ. ԺԹ. 16. Յայնժամ ետ. մ. 22. գրեցի՝ գրեցի.
գլ. ԺԹ. 25. Ապա կային. մ. 30. աւանդեաց զոգին.



Գալուստ Հոգւոյն Սրբոյ:

# ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԳԼ. Ա.

1 ԶԲԱՆՆ ԱՌԱՋԻՆ
զոր արարի վասն ամենայնի
ո Թէոփիլէ. զոր սկսաւ Յս
2 առնել եւ ուսուցանել, * մինչեւ յօրն պատու-
ուիրելոյ առաքելոցն 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ.
3 զորս ընտրեացն, եւ վերացաւ: * Որոց
յանդիման կացոյց զինքն կենդանի յետ
չարչարանացն իւրոց 'ի բազում արուեստս՝
յաւուրս քառասուն երեւել նոցա՝ եւ ասել
4 վասն արքայութեանն այ: * Եւ 'ի հաղորդել
ընդ նոսա հացի, ‖ պատուէր տայր նոցա՝ ‖ Ղուկ.
յԵրուսաղէմէ մի մեկնել, ‖ այլ սպասել աւե- 24. 49.
5 տեացն Հօր՝ զոր լուարուքն յինէն: * ‖ Զի ‖ Յհ. 14. 26.
Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր. այլ դուք ‖ Մտ. 3. 11.

մկրտ-

Մրկ. Ա. 8. Ղուկ. Գ. 16. ‖ Մտթ. ԻԴ. 36. ‖ Մրկ. ԺԳ. 32. Ղուկ. ԻԴ. 48.

մկրտիցիք 'ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում ինչ
աւուրցս այսոցիկ ։ *Իսկ նոքա մատուցեալ 6
հարցանէին զնա՝ եւ ասէին. Տէր՝ եթէ 'ի
ժամանակի աստ յայսմիկ հաստատելո՞ց ի-
ցես զթագաւորութիւն Իսրայէլի ։ *Ասէ ցնոսա. ոչ 7
է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր
Հայր եդ յիւրում իշխանութեան. *Այլ առ- 8
ջիք զօրութիւն 'ի հասանել Հոգւոյն Սրբոյ 'ի վե-
րայ ձեր. եւ եղիջիք ինձ վկայք յե̃մ եւ յամ
հրէաստանի եւ 'ի Սամարիա, մինչեւ 'ի ծագս
երկրի ։ *Իսկ զայս իբրեւ ասաց՝ մինչդեռ 9
հայէին նոքա՝ վերացաւ. եւ ամպն կալաւ
զնա յաչաց նց ։ *Իսկ մինչ դեռ պշուցեալ 10
էին 'ի երկինս երթալոյ նր, եւ ահաւասիկ
արք երկու երեւեցան նց 'ի հանդերձս սպի-
տակս, *որք եւ ասացին. արք գալիլեացիք՝ 11
զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս ։ Այս Յս՝
որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, սոյնպէս ե-
կեսցէ՝ զորօրինակ տեսէք զնա երթալ յեր-
կինս ։ *Ապա դարձան յԵրուսաղէմ յան- 12
ուանեալ լեռնէն Ձիթենեաց. որ է մերձ
յե̃մ ըստ շաբաթու ճանապարհի ։ *Իսկ 13
իբրեւ մտին, ելին 'ի վերնատունն՝ ուր վանքն
իսկ էին. պետրոս եւ յակոբոս՝ յովհաննէս
եւ անդրէաս՝ փիլիպպոս եւ թովմաս՝ բար-
թողոմէոս եւ մատթէոս՝ յակոբոս ալփեան
եւ շմաւոն նախանձայոյզ՝ եւ յուդա յակով-
բեան ։ *Սոքա ամենեքեան էին հաստա- 14
տեալ միաբան յաղօթս հանդերձ կա-
նամբք, եւ մարեմաւ մօրն յի՝ եւ եղբարբք
նորա ։

Ր.Ր. *Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ պետ- 15
րոս

բաց 'ի մէջ եղբարցն՝ ասէ. և էր անդ բազ-
մութիւն անուանց իբրև հարիւր և քսանից։
16 * Արք եղբարք՝ պարտ էր կատարել գրոցն. 
‖ զոր յառաջագոյն ասաց Հոգին սր̃ 'ի բե- ‖ Սաղ. 40. 10.
րանոյ Դաւթի՝ վ̃ս Յուդայի. որ եղև առաջ- Յովհ.
17 նորդ ունելեացն Յի̃ի. * զի 'ի թիւս մեր էր՝ 13. 18.
ը̃ մեզ. և հասեալ էր նմա վիճակ պաշտօ-
18 ման այսորիկ։ * ‖ Սա ստացաւ գեօղ 'ի ‖ Մատթ.
վարձուց անիրաւութեան. և ուռուցեալ հեր- 27. 7.
19 ձաւ ընդ մէջ և հեղաւ ամ̃ փոր նր̃։ * Եւ
յայտնի եղև ամենեցուն՝ որ բնակեալ են
յե̃մ. մինչև կոչել գեղջն այնմիկ բարբա-
ռովն իւրեանց Ակեղդամա. այսինքն է՝
20 գեօղ արեան։ * Զի գրեալ է 'ի գիրս սաղ-
մոսաց. ‖ Եղիցի բնակութիւն նորա աւերակ, և ‖ Սաղ.
մի՛ որ իցէ որ բնակիցէ 'ի նմա. ‖ և զեպիսկ 68. 26.
21 նր̃ առցէ այլ։ * Արդ՝ պարտ է յարանցս ‖ Սաղ. 108. 8.
յայսցանէ՝ եկելոցս ը̃ մեզ յամ̃ ժամանա-
22 կի, յորում մուտ և ել առ մեզ Տ̃ր Յս̃. * սկը-
սեալ 'ի մկրտութենէն Յովհաննու մինչև յօրն՝
յորում վերացաւ 'ի մէնջ. վկայ յարութե-
23 նն ը̃ մեզ լինել միում 'ի սոցանէ։ * Եւ
կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում Բարսա-
բայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս.
24 և զՄատաթիա։ * Եւ կացեալ յաղօթս՝ ա-
սեն. դու Տ̃ր սրտագէտ ամ̃ց՝ յայտնեա՛ զմի
ոք՝ զոր ընտրեցեր 'ի սոցանէ յերկոցունց.
25 * առնուլ զվիճակ պաշտօնէիս այսորիկ՝ և
զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ եր-
26 թալ 'ի տեղի իւր։ * Եւ ետուն վիճակս նց̃,
և ելանէր վիճակն Մատաթեայ. և համա-
րեցաւ ը̃ մետասան առաքելոցն։ ԳԼՐԶ

ԳԼ։

## ԳԼ. Բ.

Եւ ՚ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ 1
էին ամենեքեան միաբան ՚ի միասին։ * Եւ 2
եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ
իբրեւ սաստիկ հողմոյ. եւ ելից զամենայն
տունն յորում նստէին։ * Եւ երեւեցան նոցա 3
բաժանեալ լեզուք իբրեւ ՚ի հրոյ. եւ նստաւ
‖ Յվհ. իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա։ * ‖ Եւ լցան ամե- 4
7. 39. նեքեան հոգւով սրբով, ‖ եւ սկսան խօսել
‖ Մրկ. 16. 17. յայլեայլ լեզուս՝ որպէս եւ հոգին տայր բար-
Վեր. բառել նոցա։ * Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ 5
19. 6. Հրէայք՝ արք երկիւղածք յամենայն ազգաց՝ որ ՚ի
ներքոյ երկնից։ * Եւ իբրեւ եղեւ բարբառս 6
այս՝ եկն միաբան բազմութիւնն՝ եւ խռնեցաւ.
զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա։
* Զարմանային ամենեքեան, եւ զարմա- 7
նային՝ եւ ասէին ընդ միմեանս. ո՞չ աւասիկ ա-
մենեքին սոքա որք խօսին՝ գալիլեացիք
են. * Եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր 8
բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք։ * Պար- 9
թեւք եւ մարք եւ իլամացիք՝ եւ որ բնակեալ
են ՚ի միջագետս ՚ի հրէաստանի եւ ՚ի գամիրս
՚ի պոնտոս եւ յասիայ. * ՚Ի փռիւգիայ եւ ՚ի 10
պամփիլիայ՝ յեգիպտոս եւ ՚ի կողմանս լի-
բեացւոց, որ ընդ կիւրենացիս, եւ որ եկք
հռովմայեցիք. * Հրէայք՝ եւ եկք նորոգ, 11
կրետացիք եւ արաբացիք՝ լսեմք խօսից նոցա
՚ի մեր լեզուս զմեծամեծս այ։ * Զարմա- 12
նային ամենեքեան զարմացեալք, եւ ասէին
ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել։ * Եւ 13
կէսքն ՚ի խաղ արկեալ ասէին, թէ քաղց-

ուաւ

14 ուալից իցեն ։ * Յարուցեալ պետրոս հան-
դերձ մետասանիւքն՝ ամբարձ զձայն իւր՝
եւ խօսեցաւ ընդ նոսա. Արք հրէաստանեայք՝
եւ որ բնակեալ էք յերուսաղէմ ամենեքին,
այս ձեզ յայտնի լիցի՝ եւ ունկն դիք բանից
15 իմոց ։ * Ոչ որպէս դուքդ կարծէքդ՝ թէ սո-
քա արբեալ իցեն. զի դեռ երեք ժամք
16 են աւուրս ։ * Այլ այս է՝ որ ասացաւ ՚ի
17 ձեռն մարգարէին յովելեայ ։ * Եւ եղի- Յովէլ. 2. 28.
ցի յետ այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ ած,
հեղից յոգւոյ իմմէ ՚ի վերայ ամենայն մարմ-
նոյ. եւ մարգարէասցին ուստերք ձեր, եւ
դստերք ձեր. եւ երիտասարդք ձեր տեսիլս
տեսցեն, եւ ծերք ձեր երազովք երազե-
18 սցին ։ * Եւ ՚ի վերայ ծառայից իմոց՝ եւ ՚ի
վերայ աղախնայց իմոց՝ յաւուրս յայնոսիկ
հեղից յոգւոյ իմմէ, եւ մարգարէասցին ։
19 * Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր՝ եւ նշանս
յերկիր ՚ի խոնարհ, արիւն եւ հուր եւ մրրիկ
20 ծխոյ ։ * Արեգակն դարձցի ՚ի խաւար, եւ
լուսին յարիւն՝ մինչեւ եկեալ իցէ օր տն Յովէլ. 2. 32.
21 մեծ եւ երեւելի ։ * Եւ եղիցի ամ որ կար- Հռով. 10. 13.
դասցէ զանուն տն՝ կեցցէ ։
22 * Արք իէլացիք, լուարուք զբանս զայսո- Ա. Ա.
սիկ. զյս նազովրեցի, զայր ցուցեալ յայ ՚ի
ձեզ զօրութբ եւ նշանօք եւ արուեստիւք, զոր
արար նովաւ ած ՚ի մէջ ձերում. ոպ եւ դուք
23 իսկ գիտէք ։ * Զնա նկատեալ խորհրդով
եւ կանխագիտութեամբն այ՝ մատնեալ ՚ի ձեռս
անօրինաց՝ բեւեռեալ ՚ի փայտի սպանէք.
24 * զոր ած յարոյց՝ լուծեալ զերկունս մա-
հու. քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա ՚ի
նմա-

‖ Սաղ. նմանէ . * Դաւիթ իսկ ասէ զնմանէ . ‖ Յա- 25
15. 8. ռաջագոյն տեսանէի զՏ՟ր առաջի իմ յամ՟
ժամ՟, զի ընդ աջմէ իմմէ է, զի մի սասանե-
ցայց . * Վ՟ս այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, 26
և ցնծացաւ լեզու իմ. և ևս և մարմին իմ բը-
նակեսցէ յուսով. * Զի ոչ թողցես զանձն 27
իմ 'ի դժոխս՝ և ոչ տայցես սրբոյ քում տե-
սանել զապականութի՟ . * Ծանուցեր ինձ 28
զճանապարհս կենաց . լցուցեր զիս ուրա-
խութեամբ յերեսաց քոց 'ի քաղցրութի՟ .
* Արք եղբարք՝ պարտ է համարձակութի՟ 29
‖ Գ Թագ. ասել վասն նահապետին Դաւթի . ‖ զի մե-
2. 10. ռաւ՝ և թաղեցաւ . և գերեզման նր՟ կայ 'ի
միջի ձերում մինչև ցայսօր . * Զի մարգա- 30
‖ Սաղ. րէ էր, և գիտէր՝ եթէ երդմամբ ‖ երդուաւ
131. 11. նմա Ա՟ծ 'ի պտղոյ յորովայնէ նր՟ նստուցա-
նել յաթոռ նորա . * Յառաջագոյն ծանու- 31
‖ Սաղ. ցեալ խօսեցաւ վասն յարութեան Քի՟ ‖ զի ոչ
15. 10. թողաւ ոգի նր՟ 'ի դժոխս՝ և ոչ մարմին նորա
Կոր. ետես զապականութի՟ . * Զայս զՅ՟ս յարոյց 32
15. 35. Ա՟ծ՝ որում ամենեքին մեք վկայեմք . * Ա- 33
ջովն Ա՟յ բարձրացեալ, զաւետիս հոգւոյն
ս՟բ ընկալեալ 'ի հօրէ՝ սփռեաց զայս, զոր
դուք իսկ տեսանէք՝ և լսէք . * Զի ոչ եթէ 34
‖ Սաղ. Դաւիթ ել յերկինս . ասէ իսկ ինքն՝ ‖ ասաց
109. 1. Տ՟ր ցՏ՟ր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ * մինչև 35
եդից զթշնամիս քո պատուանդան ոտից
քոց . * Արդ ճշմարտիւ գիտասցէ ամ՟ տունն 36
Իի՟ , զի և Տ՟ր զնա՝ և օծեալ Ա՟ծ արար . զայն
Յ՟ս զոր դուքն խաչեցէք . * Իբրև լուեալ զայս՝ 37
զղջացան 'ի սիրտս իւրեանց . և ասեն ցպետ-
րոս՝ և ցայլ առաքեալսն . զի՞նչ գործեսցուք

արք

38 արք եղբարք ։ *Ասէ ցնոսա պետրոս. ապա-
շխարեցէք՝ եւ մկրտեսցի իւրաքանչիւր 'ի
ձէնջ յանուն տն յսի քսի 'ի թողութիւն մե-
ղաց, եւ ընկալջիք զպարգեւս հոգւոյն սրբոյ ։
39 *Զի ձեզ են աւետիքս՝ եւ որդւոց ձերոց,
եւ ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ տր այ
40 մեր ։ *Եւ այլովք բանիւք բազմօք վկայու-
թիւն դնէր, եւ մխիթարէր զնս՝ եւ ասէր. ապ-
րեցարուք յազգէ աստի խոտորելոյ յայսմա-
41 նէ ։ *Իսկ նոցա յօժարութեամբ ընկալեալ զբանն
նր մկրտեցան. եւ յաւելան յաւուր յայնմիկ
ոգիք իբրեւ երեք հազարք ։
42 *Եւ էին հանապազորդեալք վարդապե- Ի.Գ.
տութեան առաքելոցն, եւ հաղորդութեան՝ եւ բե-
43 կանելոյ հացին, եւ աղօթից ։ *Եւ լինէր
ամ անձին՝ ահ եւ երկիւղ. բազում նշանք
եւ արուեստք 'ի ձեռս առաքելոցն գործէին ։
44 *Ամենայն հաւատացեալքն էին 'ի միա-
սին, եւ ունէին զամենայն ինչ հասարակաց ։
45 *Եւ զստացուածս եւ զինչս վաճառէին, եւ
բաշխէին զայն ամենեցուն՝ ում զինչ պի-
46 տոյ ինչ լինէր ։ *Հանապազորդ կանխեալ
միաբանութեամբ 'ի տաճարին, եւ ատանէին՝ բեկա-
նէին զհացն, եւ առնուին կերակուր ուրա-
47 խութեամբ եւ միամտութեամբ սրտիւ. *օրհնէին զած՝
եւ ունէին շնորհս առ ամ ժողովուրդն. եւ տր
յաւելոյր 'ի փրկեալսն հանապազորդ 'ի նոյն ։

## ԳԼ. Գ.

1 Պետրոս եւ յովհաննէս ելանէին 'ի տաճար
2 անդր յիններորդ ժամու աղօթիցն ։ *Եւ
էր այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր
բար-

բարձեալ դնէին հանապազ առ դրան տա-
ճարին, որ կոչէր գեղեցիկ. խնդրել ողոր-
մութի՟ն յայնցանէ՝ որ մտանէին 'ի տաճարն:
* Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս՝ զի 3
մտանէին 'ի տաճարն, աղաչէր ողորմութի՟ն
առնուլ: * Հայեցաւ 'ի նա Պետրոս Յովհան- 4
նու հանդերձ, և ասէ. հայեաց 'ի մեզ:
* Եւ նա դարձաւ 'ի նոսա, և ակն ունէր առ- 5
նուլ ինչ 'ի նոցանէ: * Եւ ասէ Պետրոս. 6
ԱՄ–Բ Արծաթ և ոսկի ոչ ունիմ. բայց զոր ու-
10· Գ· նիմ՝ զայս տամ քեզ. յանուն յի՟ի քի՟ի նա-
զովրեցւոյ արի և գնա: * Եւ կալեալ զա- 7
ջոյ ձեռանէ նր՝ յարոյց զնա. և անդէն հաս-
տատեցան բարձք նորա՝ և սրունք: * Ի վեր 8
վազեաց և սկսաւ գնալ, և եմուտ ընդ նոսա
'ի տաճարն. գնայր և վազվազէր՝ և օրհնէր
զա՟ծ: * Եւ ետես ա՟մ ժողովուրդն զնա, զի 9
գնայր՝ և օրհնէր զա՟ծ. * Եւ գիտէին զնա՝ զի 10
նա էր, որ նստէր վասն ողորմութեան առ գե-
ղեցիկ դրան տաճարին, և լցան զարմանա-
լեօք 'ի վ՟ր նշանին՝ որ եղև: * Եւ մինչ նա 11
ունէր զՊետրոս և զՅովհաննէս, ընթացաւ
ա՟մ ժողովուրդն առ նա 'ի սրահն՝ որ կոչէր
Սողոմոնի՝ զարմացեալք: * Իբրև ետես 12
Պետրոս, պատասխանի ետ ժողովրդեանն.
Արք իսրայելացիք՝ զի՞ զարմացեալ էք 'ի վերայ
այսորիկ՝ կամ ընդ մեզ՝ զի՞ էք պշուցեալ,
իբրու թէ անձին զօրութեամբ ինչ՝ կամ բարեպաշտու-
թբ արարեալ իցէ գնալդ դմա: * Ա՟ծ Աբ- 13
րահամու՝ և ա՟ծ Իսահակայ և ա՟ծ Յակոբայ,
ա՟ծ հարցն մերոց փառաւորեաց զորդի իւր
Յի՟ս զոր դուքն մատնեցէք՝ և ուրացայք ա-
ռաջի

առաջի պիղատոսի, ՚ի դատել նր̃ արձակել։
14 * ‖ Այլ դուք զսուրբն և զարդարն ուրացայք, ‖ Մտթ.
և խնդրեցէք այր մի մարդասպան շնորհել 27. 20.
15 ձեզ։ * Այլ զառաջնորդ կենացն սպանէք, Մր̃կ. 15. 11.
զոր ած̃ յարոյց ՚ի մեռելոց. որում մեք իսկ Ղկ. 23. 18.
16 վկայ եմք։ * Այլ հաւատովք անուան նորա Յովհ. 18. 40.
զսա՝ զոր տեսանէքդ և գիտէք, հաստատեաց
անուն նր̃. և հաւատքն որ նովաւ, ետուն
դմա զառողջութիւն զայս՝ յանդիման ձեր ա-
17 մենեցուն։ * Այլ արդ եղբարք՝ գիտեմ զի
անգիտութեա̃ արարէք՝ որպէս և իշխանքն ձեր։
18 * Բայց ած̃՝ որպ յառաջագոյն պատմեաց ՚ի
բերանոյ ամ̃ մարգարէից չարչարելոյ քրի
19 իւրոյ՝ նոյնպէս և կատարեաց։ * Արդ՝ ա-
պաշխարեցէք և դարձարուք ՚ի ջնջել զմեղս
20 ձեր. * որպ զի եկեսցեն ժամանակք հանգստ-
եան յերեսաց ած̃. և առաքեսցէ զյառա-
21 ջագոյն նշանակեալն ձեզ՝ զյս քս̃։ * Զոր
պարտ է երկնից ընդունել մինչև ՚ի ժամա-
նակս անմնացուն հաստատելոյ. զորոց խօ-
սեցաւ ած̃ ՚ի բերանոյ սր̃ց մարգարէից։
22 * Մովսէս ասաց ցհարսն մեր, ‖ թէ մար- Բ. Գ.
գարէ յարուսցէ ձեզ տր̃ ած̃ ձեր յեղբարց ‖ Օրէ.
ձերոց իբրև զիս, նմա լուիջիք՝ ըստ ամենայ- 18. 15.
23 նի՝ որ զինչ և խօսեսցի առ ձեզ։ * Այլ ե-
ղիցի ամ̃ անձն՝ որ ոչ լուիցէ մարգարէին այն-
24 միկ, սատակեսցի ՚ի ժողովրդենէն։ * Այլ
ամ̃ մարգարէք՝ որ ՚ի սամուելէ և այսր խօ-
սեցան, և պատմեցին զաւուրս զայսոսիկ։
25 * Դուք էք որդիք մարգարէիցն՝ և ուխտին,
զոր ուխտեաց ած̃ ընդ հարս ձեր, և ասէ
ցաբրահամ։ ‖ ՚ի զաւակի քում օրհնեսցին ‖ Ծնն. 12. 3.
ամ̃ 26. 4.

ամ՟ ազգք երկրի։ *Ձեզ նախ յարոյց Ած՟ 26
զորդի իւր, և առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ի
դառնալ ձեզ իւրաքանչիւր ՚ի չարեաց ձերոց։

## ԳԼ. Դ.

Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովուր- 1
դեանն, հասին ՚ի վերայ նոցա քահանայա-
պետքն և իշխանք տաճարին՝ և սադուկե-
ցիքն, *զայրագնեալք՝ վասն ուսուցանելոյ 2
նց զժողովուրդն՝ և պատմելոյ յիս՟ զյարու-
թիւն մեռելոց։ *Արկին ՚ի նոսա զձեռս իւ- 3
րեանց. և եդին զնոսա ՚ի բանտի՝ մինչև ՚ի
վաղիւն, զի էր ընդ երեկս։ *Իսկ բազումք 4
՚ի լսողաց բանին՝ հաւատացին. և եղև թիւ
մարդկան իբրև հազարաց հնգից։ *Եւ 5
եղև ՚ի վաղիւ անդր ժողովել նց իշխանաց
և զերիցունս և զդպիրսն յԵմ՟, *և զԱննա 6
քահանայապետ և զԿայիափա, և զՅով-
հաննէս և զԱղեքսանդրոս, և որք միան-
գամ էին յազգէ քահանայութեանն։ *Եւ 7
կացուցեալ զնս ՚ի մէջ՝ հարցանէին. որո՞վ
զօրութբ կմ՟ որո՞վ անուամբ արարէք դուք
զայդ։ *Յայնժամ պետրոս լցեալ հոգւով 8
սրբով ասէ ցնս. իշխանք ժողովրդեանն՝ և
երիցունք Իղի. *եթէ արժա՞ն ինչ իցէ դա- 9
տել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ
տկարի, որով սա բժշկեցաւ։ *Յայտնի լի- 10
ցի ամենեցուն ձեզ՝ և ամ՟ ժողովրդեանդ
Իղի. զի յանուն յիսի քի նազովրեցւոյ՝ զոր
դուքն խաչեցէք՝ զոր ած՟ յարոյց ՚ի մեռե-
լոց, նովաւ սա կայ առաջի ձեր ող-
Սղ. ՃԺԷ. 22. ջացեալ։ *Նա է վէմն անարգեալ ՚ի ձէնջ 11
շինո-

12 շինողաց, որ եղեւ գլուխ անկեան. * Եւ չիք Եսայ.
այլով իւիք փրկութիւն. զի եւ ոչ անուն այլ 28. 16.
գոյ ՚ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ՝ Մատթ.
որով արժան իցէ կեալ մեզ։ 21. 42.
13 * Հայեցեալ ՚ի համարձակութիւնն Պետրոսի Ը.Ն
եւ Յովհաննու, եւ ՚ի վերայ հասեալ՝ թէ արք
տգետք՝ եւ առանց դպրութեան են, զարմա-
նային. զի ճանաչէին զնս՝ թէ ընդ Յսի էին.
14 * Եւ զայրն եւս տեսանէին զբժշկեալն՝ զի
կայր ընդ նոսա. եւ ոչինչ կարէին տալ պա-
15 տասխանի։ * Իսկ հրամայեալ նոցա արտաքս
՚ի ատենէն ելանել, խորհէին ընդ մի-
16 միանս, * եւ ասէին. զի՞նչ արասցուք արանցս
այսոցիկ՝ զի երեւելի նշան եղեւ ՚ի ձեռն դո-
ցա. ամ՛ իսկ բնակչաց Եէմի յայտ է, եւ ոչ
17 կարեմք ուրանալ։ * Այլ զի մի առաւել
հռչակեսցի ՚ի ժողովուրդն, սպառնասցուք
նոց՝ մի եւս խօսել յանուանն յայն՝ մի ումեք ՚ի
18 մարդկանէ։ * Իսկ կոչեցեալ զնս պատուի-
րեցին ամենեւին մի խօսել՝ եւ մի ուսուցանել
19 յանուն Յսի։ * Իսկ Պետրոս եւ Յովհաննէս
պատասխանի ետուն՝ եւ ասեն ցնոսա, Եթէ ար-
ժա՞ն իցէ առաջի Այ՝ ձեզ լսել առաւել քան
20 Այ, ընտրեցէք։ * Այլ մեք ոչ կարեմք՝ զոր
21 տեսաքն եւ լուաք՝ չխօսել։ * Իսկ սպառնա-
ցեալ արձակեցին զնս, եւ ոչինչ գտեալ՝ թէ
որպէս պատուհասեսցեն զնս՝ վն ժողովրդեանն.
զի ամենեքեան փառաւոր առնէին զԱծ՝ վն
22 իրացն եղելոց։ * Զի ամաց էր այրն՝ աւե-
լի քան զքառասուն, յորոյ վերայ եղեւ նշանս
23 այս բժշկութեան։ * Իսկ նոքա արձակեալ եկին
առ իւրեանս, եւ պատմեցին՝ որչափ ինչ
ասա-

ասացին ցնա քահանայապետքն եւ երիցուն-
քն. * Եւ նոքա լուեալ միաբանեցին զձայն 24
իւրեանց առ Ած՝ եւ ասեն. Դու Տր Ած՝ որ
արարեր զերկինս եւ զերկիր՝ զծով եւ զամ
որ ի նս. * որ ի բերանոյ հօր մերոյ Դաւ- 25
թի ծառայի քո՝ ի ձեռն հոգւոյն սրբոյ ասա-
Սաղ. ցեր. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք՝ եւ ժողո-
2. 1. վուրդք խորհեցան ի սնոտիս. * յանդիման 26
եղեն թագաւորք երկրի, եւ իշխանք ժողո-
վեցան ի միասին վր Տն եւ վր օծելոյ նր.
* Ժողովեցան արդարեւ ի քաղաքիս յայս- 27
միկ ի վերայ սրբոյ որդւոյ քո Յսի՝ զոր օծերդ՝
Հերովդէս եւ Պոնտացի Պիղատոս՝ ազգօք եւ
ժողովրդովք Իէի, * առնել՝ որչափ ձեռն քո 28
եւ կամք յառաջագոյն սահմանեցին լինել.
* Եւ արդ Տր՝ հայեաց ի սպառնալիս նց, 29
Ղուկ. Եւ տուր ծառայից քոց ամ համարձակութբ
21. 15. խօսել զբանն քո. * ի ձգել զձեռն քո ի 30
բժշկութիւն, եւ նշանս եւ արուեստս՝ լինել
անուամբն սրբոյ որդւոյ քո Յսի. * Եւ մինչ 31
կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին՝ յո-
րում էին ժողովեալ, եւ լցան ամենեքին
հոգւով սրբով. եւ խօսէին զբանն Այ հա-
մարձակութբ.

Ա. Օ. * Եւ բազմութեն հաւատացելոցն էր սիրտ 32
եւ անձն մի. եւ ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից
իւրոց թէ իւր իցէ. այլ էր նց ամ ինչ հա-
սարակաց. * Եւ զօրութբ բազմաւ տային 33
վկայութի առաքեալքն զյարութենէ Տն Յսի
Քսի. եւ շնորհք մեծամեծք էին ի վր ամե-
նեցուն նց. * Եւ ոչ կարօտէր ի նս. զի 34
որ միանգամ տեարքն էին գեղջից կամ տա-

րա

տանց՝ վաճառէին եւ բերէին զգինս վաճառ-
35 ելոցն, * դնէին առ ոտս առաքելոցն. եւ
բաշխէին իւրաքանչիւր՝ որպէս ումեք պիտոյ
36 ինչ լինէր։ * Յովսէփ՝ որ կոչեցաւ Բառ-
նաբաս յառաքելոց անտի, որ թարգմանի՝
որդի մխիթարութեան. ղեւտացի՝ յազգէ կիպ-
37 րացի. * էր նորա գիւղ, վաճառեաց՝ եւ ե-
բեր զգինսն՝ եդ առ ոտս առաքելոցն։

## ԳԼ. Ե.

1 Իսկ այր ոմն Անանիա անուն, հանդերձ
կնաւ իւրով Սափիրաւ վաճառեաց ագա-
2 րակ. * եւ խորեաց 'ի գնոց անտի՝ գիտելով
եւ կնոջն. եւ եբեր մասն ինչ՝ եդ առ ոտս ա-
3 ռաքելոցն։ * Ասէ Պետրոս. Անանիա՝ ընդէ՞ր
ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ հոգ-
4 ւոյն սրբոյ, եւ խորել 'ի գնոց գեղջն. * ոչ
ապաքէն մինչ կայրն՝ քո էր, եւ 'ի վաճառելն՝
ընդ քո իշխանութեամբ էր. զի՞ է՝ զի եդիր 'ի
սրտի քում՝ զիրս զայս. ոչ ստեցեր մարդկան,
5 այլ Այ։ * Եւ լուեալ Անանիա զբանս զայ-
սոսիկ՝ անկաւ՝ եւ եհան զոգի. եւ եղեւ ահ
մեծ 'ի վերայ ամենեցուն՝ որ լուանն զայն։
6 * Յարեան կացին երիտասարդքն՝ եւ ամփոփե-
7 ցին զնա, եւ տարեալ թաղեցին։ * Եւ եղեւ
իբրեւ ժամք երեք անցին, եւ կինն նորա ոչ գի-
տէր զինչ եղեալն էր, եմուտ 'ի ներքս։
8 * Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ.
ասա ինձ՝ թէ այնչափի գնոց զգեօղն վա-
9 ճառեցէք. եւ նա ասէ. այո՛ այնչափի։ * Եւ
ասէ ցնա Պետրոս. զի՞ է՝ զի միաբանեցայք
դուք փորձել զՀոգին Տն. ահա ոտքն՝ որ
թա-

թաղեցյին զայրն քո ՚ի դրան. հանիցեն և զքե-
զ։ * Եւ անկաւ անդէն առ ոտս նր̃՝ և 10
եհան զոգի։ մտին երիտասարդքն՝ գտին
զնա մեռեալ, և հանին թաղեցին առ առն
իւրում։ * Եւ եղև երկիւղ մեծ ՚ի վ̃ր ամ̃ 11
եկեղեցւոյն, և ՚ի վերայ ամենեցուն՝ որ
լսէին զայն։

ԻԱ։

* Եւ ՚ի ձեռս առաքելոց լինէին նշանք և 12
արուեստք բազումք ՚ի ժողովրդեանն. և
էին միաբան ամենեքեան ՚ի սրահին սողո-
մոնի։ * Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մեր- 13
ձենալ առ ն̃ս. այլ յարգէր զն̃ս ժողովուր-
դըն։ * Եւ առաւել ևս յաւելուին հաւա- 14
տացեալքն ՚ի տ̃ր, բազմութի̃ արանց և կա-
նանց. * մինչև ՚ի հրապարակս հանել զհի- 15
ւանդս, և դնել պատգարակօք և մահճօք
իւրեանց. զի ը̃ անցանելն պետրոսի՝ գոնէ
հովանի նր̃ հասցէ ումեք ՚ի նոցանէ։ * Եւ 16
ժողովէր բազմութի̃ շուրջ ՚ի քաղաքաց ան-
տի յեր̃մ, բերէին զհիւանդս և զնեղեալս
յայսոց պղծոց. որք և բժշկէին ամենե-
քեան։ * Յարուցեալ քահանայապետն, 17
և ամենեքին որ ընդ նմա՝ և աղանդ սադու-
կեցւոց՝ լցան նախանձու։ * Եւ արկին զձ- 18
ձեռս յառաքեալսն, և եդին զնս հրապարա-
կաւ ՚ի բանտի։ * Բայց հրեշտակ տն̃ զգի- 19
շերի եբաց զդրունս բանտին, և հանեալ զն-
նոսա՝ ասէ. * գնացէք՝ կացէք ՚ի տաճարին, 20
և խօսեցարուք ը̃ ժողովրդեանն զամ̃ պատ-
գամս կենացս այսոցիկ։ * Եւ իբրև լուան, 21
մտին ը̃ առաւօտն ՚ի տաճարն՝ և ուսուցա-
նէին։ Եկն քահանայապետն՝ և որ ը̃ նմա՝
կոչե-

կոչեցին միաբան զատեանն՝ եւ զամ ծերա-
կոյտ որդւոցն Իսլի, եւ առաքեցին 'ի բանտն
22 ածել զնս. * Եւ իբրեւ եկին սպասաւորքն՝
ոչ գտին զնս 'ի բանտին. դարձեալ անդրէն
23 պատմեցին, * եւ ասեն. Թէ զբանտն գը-
տաք փակեալ ամ զգուշութբ, եւ զպահա-
պանսն՝ զի կային առ դրանն. բացաք՝ եւ 'ի
24 ներքս զոք ոչ գտաք. * Իբրեւ լուան զբա-
նս զայս իշխանք տաճարին՝ եւ քահանայա-
պետքն՝ հիանային վն նց, թէ զինչ արդեօք
25 լինիցի այս. * Եւ եկն ոմն պատմեաց նոցա՝
թէ ահա արքն՝ զորս եդիք 'ի բանտի՝ կան
'ի տաճարին, եւ ուսուցանեն զժողովուրդն.
26 * Յայնժամ երթեալ իշխանն սպասաւո-
րօքն հանդերձ ած զնս ոչ բռնութբ. քանզի
երկնչէին 'ի ժողովրդենէն՝ զի մի քարկո-
27 ծեսցին. * Եւ ածեալ զնս կացուցին յա-
28 տենի. եհարց զնս քահանայապետն, * եւ
ասէ. ոչ պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝
մի ուսուցանել յանուն յայդ. եւ արդ՝ ա-
հաւասիկ լցիք զԵմ ուսմամբ ձերով, եւ կա-
միք ածել 'ի վերայ մեր զարիւն զառն զայնո-
29 րիկ. * Պատասխանի ետ պետրոս եւ այլ ա-
ռաքեալքն եւ ասեն. Հնազանդել պարտ է
30 այ առաւել՝ քան մարդկան. * Ած հար-
ցըն մերոց յարոյց զյս՝ զոր դուք սպանէք
31 կախեալ զփայտէ. * Զնա ած առաջնորդ
եւ փրկիչ բարձրացոյց աջով իւրով տալ ա-
պաշխարութիւն Իլի՝ եւ թողութիւն մեղաց.
32 * Եւ ‖ մեք եմք վկայք բանիցս այսոցիկ, եւ ‖ Ղուկ.
հոգին սբ՝ զոր ետ ած հնազանդելոց իւ- 24. 48.
33 րոց. * Եւ նոքա իբրեւ լուան. առատա-

նային՝ եւ խորհէին սպանանել զնոսա ։
* Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարիսե- 34
ցի՝ որում անուն էր Գամաղիէլ. օրէնսու-
սոյց՝ պատուական ամ̃ ժողովրդեանն. հրա-
մայեաց սակաւիկ մի զարսն արտաքս տա-
նել ։ * Եւ ասէ ցնոսա. արք իսրայելացիք՝ հայե- 35
ցարուք 'ի ձեզ վասն արանցս այսոցիկ՝ զինչ
արժան իցէ գործել ։ * Զի յառաջ քան զա- 36
ւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս՝ ասել
զանձնէ, թէ իցէ ոմն. յոր անկան արք թը-
ւով իբրեւ չորեքհարիւր. որ սպանաւ՝ եւ
ամենեքեան որ միաբան էին ը̃ նմա, բաժա-
նեցան՝ եւ եղեն յոչինչ ։ * Յետ նր̃ յարեաւ 37
Յուդա Գալիլեացի՝ յաւուրս աշխարհագ-
րին. եւ ապստամբեցոյց ժողովուրդ բազում
զհետ իւր. եւ նա կորեաւ՝ եւ ամենեքեան որ
նմայն հաւանեալ էին, ցրուեցան ։ * Եւ 38
արդ ասեմ ձեզ. 'ի բաց կացէք յարանցդ
յայդցանէ՝ եւ թոյլ տուք դոցա. զի թէ 'ի
մարդկանէ իցէ խորհուրդդ այդ՝ կամ գործդ,
քակտեսցի. * ապա թէ յայ̃ է՝ ոչ կարէք 39
քակտել զդոսա. գուցէ եւ աստուածամարտք գը-
տանիցիք ։ * Հաւանեցան նմ̃. եւ կոչեցեալ 40
զառաքեալսն՝ գան հարին, եւ պատուիրե-
ցին՝ մի եւս խօսել յանուն յի̃. եւ արձակե-
Մտթ. ցին զնս̃ ։ * Եւ նոքա գնացին խնդալով 41
5. 12. յերեսաց ատենին, զի վն̃ անուանն ար-
ժանի եղեն անարգելոյ ։ * Եւ զամ̃ օր 'ի 42
տաճարին եւ ատունս ոչ դադարէին ուսու-
ցանել՝ եւ աւետարանել զյս̃ քս̃ ։

## ԳԼ. Զ.

1 Այս յաւուրս յայնոսիկ 'ի բազմանալ աշա-
կերտացն, եղեւ տրտունջ յունաց առ հեբ-
րայեցիսն. զի արհամարհեալ լինէին 'ի պաշ-
2 տամանն հանապազորդ այրիք նոցա: *Կո-
չեցին երկոտասանքն զբազմութիւն աշա-
կերտացն' եւ ասեն. ոչ է հաճոյ մեզ թո-
3 ղուլ զբանն Այ' եւ պաշտել զսեղանս: *Ընտ-
րեցէք եղբարք վկայեալս 'ի ձէնջ արս եւ-
թըն, (լի հոգւով սրբով եւ իմաստութեամբ.) Առաւե- լի ԴՅԼ.
զորս կացուսցուք 'ի վերայ պիտոյիցս այս-
4 ցիկ. *Եւ մեք աղօթից եւ պաշտաման ե
5 բանին հպատակ լիցուք: *Եւ հաճոյ թը-
ւեցաւ բանն առաջի ամ բազմութեան. եւ
ընտրեցին զստեփաննոս' այր լի հաւատովք
եւ հոգւով սրբով, եւ զփիլիպպոս եւ զպրոքո-
րոն եւ զնիկանովրա եւ զտիմոնա եւ զպար-
մենա, եւ զնիկողայոս զեկն անտիոքացի:
6 *Զորս կացուցին առաջի առաքելոցն. եւ
աղօթս արարեալ' եդին 'ի վերայ նց զձեռս:
7 *Եւ բանն Այ աճէր. եւ բազմանայր թիւ
աշակերտացն յոյժ յԵմ. եւ բազում ժողովք
'ի քահանայիցն անսային հաւատոյն:
8 *Ստեփաննոս' այր լի շնորհօք եւ զօրութեմբ, ԻԲ
առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս 'ի
9 ժողովրդեանն: *Յարեան ոմանք 'ի ժողո-
վրդենէն, որ կոչէր լիբերտացւոց' եւ կիւրե-
նացւոց' եւ աղեքսանդրացւոց' եւ որ 'ի կի-
լիկեցւոց' եւ յասիոյ, վիճէին ընդ ստեփաննո-
10 սի. *Եւ ոչ կարէին զդէմ ունել իմաստու-
11 թեանն եւ հոգւոյն, որով խօսէր: *Յայն-
ժամ

ժամ հրապուրեցին արս ոմանս ասել. թէ
լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան 'ի
Մովսէս եւ յԱ̃ծ. *Եւ խռովեցին զժողովուր- 12
դըն եւ զծերսն եւ զդպիրսն. եւ հասեալ 'ի
վ̃ր՝ յափշտակեցին զնա՝ եւ ածին յատեան.
*Եւ կացուցին վկայս սուտս՝ որ ասէին, 13
այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյու-
թեան զտեղւոյն սրբոյ՝ եւ զօրինացն. *Լուաք 14
'ի դմանէ զի ասէր՝ թէ յի̃ս Նազովրեցի՝ նա
քակեսցէ զտեղիս զայս, եւ փոխեսցէ զօ-
րէնս՝ զոր ետ մեզ Մովսէս. *Եւ հայեցեալ 15
'ի նա ամենեցուն՝ որ նստէին յատենին,
տեսին զերեսս նր̃ա իբրեւ զերեսս հրեշտակի.

## ԳԼ. Է.

Ասէ քահանայապետն՝ թէ արդարեւ այդ 1
այդպէս իցէ. *Եւ նա ասէ. Արք եղ- 2
բարք եւ հարք՝ լուարուք ինձ. Ա̃ծ փառաց
երեւեցաւ հօր մերում Աբրահամու մին-
չդեռ 'ի Միջագետս էր, մինչչեւ բնակեցու-
ցեալ էր զնա 'ի Խառան. եւ ասէ ցնա.
‖ Ծնն. *‖Ել յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ, 3
12. 1. եւ եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ. *Յայնժամ 4
ելեալ յերկրէն Քաղդեացւոց բնակեցաւ 'ի
Խառան. եւ անտի յետ մեռանելոյ հօր նո-
րա՝ փոխեաց, եւ պանդխտեցոյց զնա յերկ-
րիս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ
էք. *Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն 'ի սմա, 5
եւ ոչ քայլ մի ոտին. եւ խոստացաւ տալ նմա
զսա 'ի բնակութիւն, եւ զաւակի նր̃ա յետ նր̃ա,
մինչ ոչ գոյր նորա որդի. *Խօսեցաւ Ա̃ծ 6
‖ Ծնն. այսպէս, ‖թէ եղիցի զաւակ նր̃ա պանդուխտ
15. 13.

յօտար

յօտար երկրի. և ծառայեցուսցեն զնա՝ և
7 չարչարեսցեն ամս չորեքհարիւր: *Եւ
զազգն՝ որում ծառայեսցեն՝ դատեցայց ես,
ասէ ա̃ծ. և յետ այսորիկ ելցեն՝ և պաշտես-
8 ցեն զիս 'ի տեղւոջս յայսմիկ: *‖ Եւ ետ ‖ Ծնն·
նմա ուխտ թլփատութե. ‖ և այպս ծնաւ 17· 11·
զԻսահակ, և թլփատեաց զնա յաւուր ու- ‖ 21· 2·
թերորդի. ‖ և Իսահակ զՅակոբ. ‖ և Յա- ‖ 25· 25·
9 կոբ զերկոտասան նահապետսն: *Եւ նա- ‖ 29· 32·
հապետքն նախանձեալ ը̃ ‖ Յովսեփայ՝ վա- ‖ 37· 28·
ճառեցին յԵգիպտոս. և էր ա̃ծ ընդ նմա:
10 *Եւ փրկեաց զնա յա̃մ նեղութե̃ց ն̃ր. ‖ և ‖ 41· 41·
ետ նմա շնորհս և իմաստութի առաջի փա-
րաւոնի արքային Եգիպտացւոց. և կացոյց
զնա իշխան Եգիպտացւոցն՝ և ա̃մ տան նո-
11 րա: *Եւ եկն սով յա̃մ երկիրն Եգիպտա-
ցի, և 'ի Քանան նեղութի մեծ. և ոչ գտա-
12 նէին կերակուր հարքն մեր: *‖ Եւ լուեալ ‖ Ծնն·
Յակոբայ թէ գտանի կերակուր յԵգիպ- 42· 2·
տոս՝ առաքեաց զհարսն մեր յառաջագոյն:
13 ‖ *Եւ յերկրորդումն ետ ծանօթս Յովսէփ ‖ Ծնն·
եղբարց իւրոց. և յայտնի եղև ազգն նորա 45· 3·
14 փարաւոնի: *Առաքեաց Յովսէփ՝ և կո-
չեաց զՅակոբ զհայր իւր, և զա̃մ ազգա-
15 տոհմն՝ ոգիս եօթանասուն և հինգ: *‖ Եւ ‖ Ծնն·
էջ Յակոբ յԵգիպտոս՝ և ‖ վախճանեցաւ 46· 5·
16 ինքն և հարքն մեր: *Եւ փոխեցան 'ի Սիւ- ‖ 49· 32·
քեմ, և եդան յայրին, ‖ զոր ստացաւ ա- ‖ Ծնն·
բրահամ գնոց արծաթոյ յորդւոցն Եմովրայ՝ 23· 16·
17 'ի Սիւքեմ: *Իբրև մերձեցաւ ժամանակ 50· 13·
աւետեացն՝ զոր խոստացաւ ա̃ծ աբրահա- Յեսու·
մու, ‖ աճեաց ժողովուրդն՝ և բազմացաւ 24· 32·
յԵ- ‖ Ելից·
1· 7·

յԵգիպտոս. *մինչեւ յարեաւ այլ թագա- 18
ւոր յԵգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ։
*Սա հնարեցաւ ազգին մերում, եւ չար- 19
չարեաց զհարսն մեր առնել ընկեցիկ ըզ-
‖ Ել. մանկունս նոցա՝ զի մի ապրեսցին։ *‖Յո- 20
2. 2. րում ժամանակի ծնաւ եւ Մովսէս՝ եւ էր կայ-
Եբր. տառ առաջի Այ. որ եւ սնաւ 'ի տան հօր իւ-
11. 23. րոյ ամիսս երիս։ *Եւ յընկեցիկն առնել 21
զնա՝ եբարձ զնա դուստր փարաւոնի, եւ
սնոյց զնա իւր յորդեգիրս։ *Եւ վարժե- 22
ցաւ Մովսէս ամ՛ իմաստութ՛ եգիպտացւոցն.
եւ էր զօրաւոր բանիւք եւ գործովք իւրովք։
*Իբրեւ լցաւ նմ՛ քառասնամեայ ժամանակ, 23
անկաւ 'ի սիրտ նորա շրջել զեղբարսն իւ-
‖ Ել. րովք՝ զորդւովքն Իլի։ *‖Եւ տեսեալ զոմն 24
2. 12. զրկեալ՝ զայրեցաւ, եւ խնդրեաց զվրէժ զըր-
կելոյն՝ սպանեալ զեգիպտացին։ *Մտա- 25
ածէր թէ իմասցին եղբարք նր, զի Ած 'ի
ձեռն նր տալոց էր զփրկութի նց. եւ նոքա
‖ Ել. ոչ իմացան։ *‖Եւ 'ի վաղիւ անդր երեւե- 26
2. 13. ցաւ նց մինչդեռ մարտնչէին՝ եւ վարեաց ըզ-
նոսա 'ի խաղաղութի, ասէ. արք՝ եղբարք
էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս։ *Իսկ որ զըր- 27
կէր զընկերն, մերժեաց զնա՝ եւ ասէ. ո՞ կա-
ցոյց զքեզ իշխան եւ դատաւոր 'ի վր մեր։
*Միթէ սպանանե՞լ կամիցիս զիս՝ զորօրի- 28
նակ սպաներ երէկ զեգիպտացին։ *Եւ փա- 29
խեաւ Մովսէս 'ի բանիցս յայսցանէ, եւ եղե
պանդուխտ յերկրին մադիամու. ուր ծնաւ
երկուս որդիս։
Ի Գ. *Եւ 'ի կատարել ամացն քառասնից, ‖Ե- 30
‖ Ել. րեւեցաւ նմ՛ յանապատի լերինն սինայ հրեշ-
3. 2.
տակ

31 տակ մի 'ի բոց հրոյ մորենւոյն ։ * Եւ Մով-
սէսի տեսեալ՝ զարմանայր ընդ տեսիլն, եւ 'ի
32 մատչելն նորա նշմարել՝ եղեւ ձայն Տն ։ * Ես
եմ Ած հարց քոց, Ած Աբրահամու՝ եւ Իսա-
հակայ՝ եւ Յակոբայ ։ եւ դողձի հարեալ Մով-
33 սէս՝ ոչ իշխէր հայել ։ * Եւ ասէ ցնա Տր ։
Լոյծ զկօշիկս ոտից քոց, զի տեղիդ՝ յորում
34 դուդ կացեր՝ երկիր սր է ։ * Տեսանելով
տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵ-
գիպտոս, եւ լուայ հեծութեն նց՝ եւ իջի փր-
կել զնս. եւ արդ՝ եկ առաքեցից զքեզ յԵ-
35 գիպտոս ։ * Զայն Մովսէս՝ զոր ուրացանն
եւ ասեն. ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դատա-
ւոր 'ի վր մեր, զնա Ած իշխան եւ փրկիչ ա-
ռաքեաց 'ի ձեռն հրեշտակին, որ երեւեցաւ
36 նմա 'ի մորենւոջն ։ * ‖ Նա եհան զնս՝ ա- ‖ Ելից.
րարեալ նշանս եւ արուեստս յերկրին Եգիպ- 7. 9.
տացւոց՝ եւ 'ի կարմիր ծովուն, եւ յանապա- 10. 11.
37 տին՝ ամս քառասուն ։ * Նա է Մովսէս, որ
ասաց ցորդիսն Իլի. ‖ Մարգարէ յարուսցէ ‖ Բ. Օրէ.
ձեզ Տր Ած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս, 18. 15.
38 նմա լուիջիք ։ * ‖ Սա է՝ որ եղեւ յեկեղեց- ‖ Ելից.
ւոջն յանապատին ընդ հրեշտակին, որ խօսե- 19. 3.
ցաւ ընդ նմա 'ի լերինն սինեայ՝ եւ ընդ հարցն
մեր. որ ընկալաւ զպատգամս կենդանիս՝
39 տալ մեզ ։ * Որում ոչ կամեցան հնազանդ
լինել հարքն մեր. այլ մերժեցին՝ եւ դար-
40 ձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս ։ * Եւ ա-
սեն ցԱհարոն. ‖ Արա՛ մեզ աստուածս, որ ‖ Ելից.
երթիցեն առաջի մեր. զի Մովսէսն այն՝ որ 32. 1.
եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, ոչ գի-
41 տեմք զի՞ եղեւ նմա ։ * Եւ արարին յաւուր-
սն

ւրսն յայնոսիկ որթ, եւ մատուցին զոհս կը-
ռոց, եւ ուրախ լինէին 'ի գործս ձեռաց իւ-
րեանց։ * Դարձոյց ած՝ եւ մատնեաց զնս'ի 42
պաշտօն զօրութեան երկնից. որպէս եւ գրեալ
Ամով. 5. 25. է 'ի գիրս մարգարէից. Միթէ զոհս եւ պա-
տարագս մատուցէք ինձ զամս քառասուն
յանապատին՝ տունդ Իղի։ * Եւ առէք զխորանն 43
Մողոքայ, եւ զաստղն աստուծոյն Հռեմփայ,
զպատկերսն՝ զոր արարէք երկրպագանել
նոցա. եւ փոխեցից զձեզ յայն կողմն Բաբե-
լացւոց։ * Խորանն վկայութեան էր ընդ հարսն 44
Ելից. 25. 40. մեր յանապատին. որպէս հրամանն ետ՝ որ
խօսէրն ընդ Մովսէսի, առնել զայն ըստ օրի-
Եբր. 8. 5. նակին՝ զոր ետես։ * Զոր եւ ընկալեալ 45
Յես. 3. 14. բերին հարքն մեր հանդերձ Յեսուաւ 'ի վի-
ճակ ազգացն, զորս մերժեաց ած յերեսաց
Ա Թագ. 16. 12. հարցն մերոց. մինչեւ յաւուրսն Դաւթի, * որ 46
եգիտ շնորհս առաջի Այ, եւ խնդրեաց գը-
Սաղ. 131. 5. տանել զյարկս Այ Յակոբայ։ * Եւ Սո- 47
Գ Թագ. 6. 1. ղոմոն շինեաց նմա տուն։ * Այլ ոչ եթէ 48
բարձրեալն 'ի ձեռագործ տաճարս բնակէ.
Գործ. 17. 24. այլ որպէս մարգարէն ասէ. * Երկինք աթոռ 49
Եսայ. 66. 1. իմ են. եւ երկիր պատուանդան ոտից ի-
մոց. Ո՞րպիսի տուն շինեցէք ինձ, ասէ Տր.
կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ. * Ո՞չ 50
ձեռն իմ արար զայս ամ։ * Խստապարա- 51
նոցք եւ անթլփատք սրտիւք եւ ականջօք.
դուք հանապազ Հոգւոյն սրյ հակառակ
կայք. որպէս հարքն ձեր եւ դուք։ * Զո՞'ի 52
մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր. եւ
սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմե-
ցին վասն գալստեան արդարոյն, որոյ դուք

այժմ

53 այժմ մատնիչք և սպանողք եղէք. * որք ա-
ռէք զօրէնս 'ի հրամանս հրեշտակաց, և ոչ
54 պահեցէք։ * Եւ լուեալ զայս՝ զայրանային
'ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատամունս
55 'ի վ̃ր նորա։ * Եւ նա էր լի Հոգւով սրբով.
հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս Ա̃յ, և
զՅ̃ս՝ զի կայր ընդ աջմէ Ա̃յ. և ասէ՝ ահա
տեսանեմ զերկինս բացեալ՝ և զՈրդի մար-
56 դոյ զի կայ ընդ աջմէ Ա̃յ։ * Աղաղակեալ
'ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց, և
57 դիմեցին առ հասարակ 'ի վ̃ր նորա։ * Եւ
հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին.
և վկայքն դնէին զհանդերձս իւրեանց առ ոտս
58 երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ։ * Եւ
քարկոծ առնէին զՍտեփաննոս, որ կար-
դայր և ասէր. Տէր Յ̃ս՝ ընկալ զոգի իմ։
59 * Եդ ծունր՝ աղաղակեաց 'ի ձայն բարձր.
Տէր՝ մի համարիր դոցա զայս մեղս. և զայս
իբրև ասաց՝ ննջեաց. և Սաւղոս էր կամակից
սպանմանն նորա։

## ԳԼ. Ը.

1 Եւ եղև յաւուր յայնմիկ հալածումն մեծ
'ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ. և ամե-
նեքեան ցրուեցան 'ի գեօղս Հրէաստանի՝ և
2 'ի Սամարիա՝ բաց յառաքելոցն։ * Եւ թաղ-
ձին զՍտեփաննոս արք երկիւղածք՝ և արա-
րին կոծ մեծ 'ի վերայ նորա։
3 * Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն. Ը. Գ.
'ի տունս տունս մտանէր քարշէր զարս և
4 զկանայս՝ մատնէր 'ի բանտ։ * Եւ ցրուեալ-
5 քըն՝ շրջէին աւետարանելով զբանն։ * Իսկ
Փի-

փիլիպպոս իջեալ 'ի քաղաքն սամարացւոց՝
քարոզէր նոցա զՔս։ *Միտ դնէին ժողո_ 6
վուրդքն բանիցն փիլիպպոսի միաբան՝ 'ի
լսել նոցա և 'ի տեսանել զնշանսն, զոր առ_
նէր։ *Քանզի բազումք որ ունէին զայսս 7
պիղծս՝ աղաղակէին 'ի ձայն մեծ, և ելա_
նէին։ *Եւ բազում անդամալոյծք և կաղք 8
բժշկէին։ *Եւ եղև ուրախութիւն մեծ 'ի 9
քաղաքին յայնմիկ։ Այր ոմն անուն սիմոն՝
յառաջագոյն էր 'ի քաղաքին. մոգ էր, և
ապշեցուցանէր զազգն սամարացւոց. ասել
զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն։ *Որում հայէին 10
ամենեքին 'ի փոքուէ մինչև 'ի մեծամեծս.
և ասէին, սա է զօրութիւն այ, որ կոչի մեծ։
*Հայէին 'ի նա վն բազում ժամանակաց 11
մոգութեամբն ապշեցուցանելոյ զնս։ *Բայց 12
յորժամ հաւատացին փիլիպպոսի, որ աւե_
տարանէր վն արքայութեան այ, և անուանն
յի քի, մկրտէին ամենեքեան արք և կա_
նայք։ *Այլ և ինքն սիմոն հաւատաց, և 13
մկրտեալ կանխէր առ փիլիպպոս։ տեսեալ
զնշանսն և զմեծամեծ զօրութիւնս որք լի_
նէին, զարմանայր։ *Իբրև լուան՝ որ 14
յեէմ առաքեալքն էին, թէ և 'ի սամա_
րիա ընկալան զբանն այ, առաքեցին առ նս
զպետրոս և զյովհաննէս։ *Որք իջեալ կա_ 15
ցին յաղօթս 'ի վր նոցա, ոպ զի առցեն զհո_
գին սբ. *զի ցայնժամ չև էր և ոչ 'ի վր 16
միոյ նց հասեալ. բայց միայն մկրտեալք էին
յանուն տն յի։ *Յայնժամ եդին զձեռս 17
'ի վր նց՝ և առնուին հոգի սբ։ *Տեսեալ 18
սիմոնի՝ թէ ձեռն 'ի վր դնելով առաքելոցն՝

որ_

տուեալ լինի հոգին սր․, մատոյց նոցա ինչս՝ և
19 ասէ. * տուք և ինձ իշխանութիւս զայս,
զի յոյր վերայ դնիցեմ զձեռս՝ առցէ հոգի սր․
20 Ասէ պետրոս ցնա. * արծաթ քո ընդ քեզ
լիցի ՚ի կորուստ, զի զպարգևսն այ համա-
21 րեցար ընչիւք ստանալ։ * Ոչ գոյ քեզ մասն
և վիճակ ՚ի բանիդ յայդմիկ. քանզի սիրտ
22 քո ոչ է ուղիղ առաջի այ. * Ապաշխարեա
դու ՚ի չարեացդ քոց յայդցանէ, և աղաչեա
զտր. թերևս թողութիւն լիցի քեզ ՚ի մտացն
23 խորհրդոց սրտի քո. * Զի տեսանեմ ՚ի դառնու-
թեան մաղձի, և ՚ի կապանս անիրաւութեան տե-
24 սանեմ զքեզ. * Պատասխանի ետ սիմոն
և ասէ. աղաչեցէք դուք վասն իմ զտր, զի մի
ինչ եկեսցէ ՚ի վերայ իմ՝ յորոց դուքդ ասացիք.
25 * Եւ նոքա եղեալ վկայութիւն խօսեցան զբա-
նսն այ, և դարձան յերուսաղէմ. և ՚ի բազում
գեօղս սամարացւոցն աւետարանէին.
26 * Հրեշտակ տն խօսեցաւ ընդ փիլիպպոս՝ և ԻԱ
ասէ. արի և գնա դու ՚ի կողմն հարաւոյ՝
ի ճանապարհ որ իջանէ յերուսաղէմէ ՚ի գազա.
27 զի այս է անապատ. * Եւ յարեաւ գնաց.
Եւ ահաւասիկ այր մի եթովպացի, ներ-
քինի հզօր՝ կանդակայ տիկնոջ եթեւովպաց-
ւոց. որ էր ՚ի վերայ ամ գանձուց նորա. որ ե-
28 կեալ էր երկիր պագանել յերուսաղէմ. * և էր
անդրէն դարձեալ. և նստեալ ՚ի կառս իւ-
րում, ընթեռնոյր զմարգարէն զեսայի.
29 * Ասէ հոգին ցփիլիպպոս. մատիր՝ և յա-
30 րեաց ՚ի կառսդ յայդոսիկ. * Եւ ընթա-
ցեալ փիլիպպոս՝ լուաւ զի ընթեռնոյր զեսայի
մարգարէ, և ասէ. գիտիցես արդեօք՝ զոր
ընթ-

ընթեռնուցուդ ։ *Եւ նա ասէ՝ զիա՞րդ 31
կարիցեմ, թէ ոչ ոք առաջնորդեսցէ ինձ ։
և աղաչեաց զփիլիպպոս ելանել նստել ընդ
նմա ։ *Եւ գլուխ գրոյն՝ զոր ընթեռնոյր՝ 32
Եսայ. 53. 7. էր այս ։ Իբրև զոչխար 'ի սպանդ վարե-
ցաւ, և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ ան-
մռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր ։
*'Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բար- 33
ձաւ, և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ .
զի բառնին յերկրէ կեանք նորա ։ *Պատաս- 34
խանի ետ ներքինին փիլիպպոսի, և ասէ .
աղաչեմ զքեզ՝ վասն ո՞յր ասէ մարգարէն զայս .
վասն իւր, եթէ վասն այլոյ ուրուք ։ *Եբաց 35
փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ 'ի գրոցս
յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅս ։ *Իբ- 36
րև երթային զճանապարհայն, եկին 'ի ջուր
ինչ . և ասէ ներքինին, ահաւասիկ ջուր՝
զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ ։ *Եւ ասէ 37
ցնա . եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով
մարթ է ։ Պատասխանի ետ և ասէ . հաւա-
տամ՝ եթէ Յս Քս է որդի Այ ։ *Եւ հրա- 38
մայեաց կացուցանել զկառսն . և իջին եր-
կոքեան 'ի ջուրն՝ փիլիպպոս և ներքինին, և
մկրտեաց զնա ։ *Եւ իբրև ելին 'ի ջրոյ ան- 39
տի՝ հոգին սբ եկն 'ի վերայ ներքինւոյն . և
հրեշտակ տն յափշտակեաց զփիլիպպոս, և
ոչ ևս ետես զնա ներքինին . և գնայր զճա-
նապարհ իւր ուրախութբ ։ *Իսկ փիլիպ- 40
պոս գտաւ յազովտոս . և շրջեալ աւետա-
րանէր ամ քաղաքացն մինչև 'ի գալ նորա 'ի
կեսարիա ։

## ԳԼ. Թ.

1 Իսկ || Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք Ա. Ռ. Օ.
եւ սպանմամբ աշակերտացն Տն, մատու֊ || Գաղա.
2 ցեալ առ քահանայապետն. * խնդրեաց ՚ի 1. 13.
նմանէ թուղթս ՚ի Դամասկոս առ ժողո֊
վուրդսն. ոպ թէ զոք գտցէ զայնր Ճանա֊
պարհի՝ արս կամ կանայս, կապեալս ածցէ
3 յէմ. * || Եւ ընդ երթալ նմա՝ եղեւ մերձե֊ || Վերջ.
նալ ՚ի Դամասկոս. յանկարծակի շուրջ ըզ֊ 22. 6.
4 նովաւ փայլատակեաց լոյս յերկնից. * Եւ 1. Կորն. 15. 8.
անկեալ յերկիր, լուաւ բարբառ՝ որ ասէր 2. Կորն.
ցնա. Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս: 12. 2.
5 * Եւ ասէ՝ ո՞վ ես Տր. Եւ նա ասէ. ես եմ
Յս՝ զոր դու հալածես. խիստ է քեզ ընդ֊
6 դէմ խթանի աքացել: (* Եւ դարհուրեալ՝ Աւետա֊
եւ անշշունջ լեալ ասաց. Տր՝ զիս զի՞նչ կա֊ րանի ընթեր֊
7 միս առնել: * Եւ ասէ ցնա Տր:) Այլ յարո֊ ցուածք:
կաց՝ եւ մուտ ՚ի քաղաքդ, եւ պատմեսցի քեզ՝
զի՞նչ պարտ իցէ առնել: Իսկ արքն՝ որ ընդ
նմայն երթային, կային անշշունջ. զձայնն
8 միայն լսէին՝ բայց տեսանէին եւ ոչինչ: * Յա֊
րեաւ Սաւղոս յերկրէ անտի, եւ աչօք բացօք
ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա՝
9 մուծին ՚ի Դամասկոս: * Եւ էր անդ ա֊
ւուրս երիս՝ եւ ոչ տեսանէր, եւ ոչ եկեր եւ
10 ոչ արբ: * Եւ էր ոմն աշակերտ ՚ի Դամաս֊
կոս՝ Անանիա անուն. ասէ ցնա Տր ՚ի տես֊
լեան, Անանիա: Եւ նա ասէ, աւասիկ եմ
11 Տր: * Եւ ասէ ցնա Տր. յարո՛ւց կաց եւ գնա
ընդ փողոցն՝ որ կոչի Ուղիղ, եւ խնդրեսցես
յապարանսն Յուդայ՝ Սաւղոս անուն զՏարսա֊

նա

նացի՝ զի կայ դեռ յաղօթս։ *Եւ տեսեալ ի 12
տեսլեան այր մի Անանիա անուն՝ մտեալ եւ
եդեալ ի վերայ նր ձեռն, որպէս զի տեսցէ։
*Պատասխանի ետ Անանիա. տէր՝ լուայ 13
ի բազմաց վն առնն այնորիկ՝ որչափ արար
չարիս սրբոց քոց յեր̃մ. *Եւ աստ ունի իշ- 14
խանութիւն ի քահանայապետից կապել զա-
մենեսեան, որ կարդան զանուն քո։ *Ասէ 15
ցնա տր. երթ դու, զի անօթ ընտրութեան է
ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանո-
սաց՝ եւ թագաւորաց՝ եւ որդւոցն իսրայէլի։
*Քանզի ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ 16
իցէ նմա չարչարիլ վն անուան իմոյ։ *Եւ 17
գնաց Անանիա՝ եւ եմուտ յապարանսն. եւ
եդեալ ի վերայ նորա ձեռս, ասէ. Սաւուղ
եղբայր՝ ի վեր հայեաց, տր առաքեաց զիս,
Յս որ երեւեցաւ քեզ ի ճանապարհին՝ յո-
րում գայիրն. որպէս զի տեսցես՝ եւ լցցիս հոգ-
ւով սրբով։ *Եւ վաղվաղակի անկան յա- 18
չաց նր իբրեւ կեղեւանք. տեսեալ եւ յարեաւ
մկրտեցաւ. *Եւ առեալ կերակուր՝ զօրա- 19
ցաւ. եւ եղեւ ի դամասկոս ընդ աշակերտսն
աւուրս ինչ։ *Եւ վաղվաղակի ի ժողո- 20
վուրդսն քարոզեաց զՅս, թէ սա է որդին
ՙԳաղա. 1. 23. այ։ *Զարմացեալ էին ամենեքեան, որ 21
լսէին, եւ ասէին. ոչ սա էր՝ որ աւեր հար-
կանէր յեր̃մ զայնոսիկ, որ կարդային զա-
նունն զայն. եւ այսր նմին իրի եկեալ է, զի կա-
պեալս տարցի առ քահանայապետսն։
*Բայց Սաւուղ առաւել եւս զօրանայր՝ եւ յաղ- 22
թահարէր զհրեայսն, որ բնակեալ էին ի
դամասկոս. եւ խելամտեցուցանէր թէ սա
է

23 է Քսն ։ *Իբրեւ կատարեցան աւուրք բա-
գումք, խորհեցան հրեայքն սպանանել զնա ։
24 *Յայտնեցաւ Սաւղոսի նենգութիւն նոցա. քան-
զի ‖ պահէին զդրունսն 'ի տուէ եւ 'ի գիշե- ‖ Բ. Կորն.
25 րի՝ որպ զի սպանցեն զնա ։ *Եւ առեալ զնա 11. 32.
աշակերտացն 'ի գիշերի՝ ընդ պարիսպն կա-
26 խեալ իջուցին վանդակաւ ։ *Իբրեւ եկն
Սաւղոս յԵրուսաղէմ, ընդելանէր յարել յա-
շակերտսն. եւ ամենեքեան երկնչէին 'ի նմա-
նէ, չհաւատային թէ իցէ աշակերտ ։
27 *Բայց բառնաբաս առեալ զնա՝ ած առ ա-
ռաքեալսն. եւ պատմեաց նոց՝ որպէս 'ի Ճա-
նապարհին ետես զՏր, եւ զի խօսեցաւ ընդ
նմա. եւ զի 'ի Դամասկոս համարձակեցաւ
28 յանուն Յսի ։ *Եւ էր ընդ նոսա՝ 'ի մտանել եւ
ելանել յԵՂմ, համարձակեալ յանուն Տն ։
29 *Խօսէր՝ եւ վիճէր ը̅ յոյնս. եւ նոքա խո-
30 կային սպանանել զնա ։ *Եւ իմացեալ եղ-
բարց՝ իջուցին զնա 'ի Կեսարիա, եւ առա-
31 քեցին զնա 'ի Տարսոն ։ *Բայց եկեղեցին
ը̅ ամ՟ Հրէաստան՝ եւ 'ի Սամարիա եւ 'ի Գա-
լիլեա ունէր խաղաղութի, շինեալ եւ եր-
թեալ զհետ երկիւղի Տն. եւ մխիթարութբ
հոգւոյն սրբոյ բազմանայր ։
32 *Եւ եղեւ 'ի շրջելն Պետրոսի առ ամենե- Ի. Լ
քումբք, իջանել նմա եւ առ սուրբսն՝ որ
33 բնակեալ էին 'ի Լիւդդիա ։ *Եւ եգիտ անդ
այր մի, որում անուն էր Ենէաս, ութամեան
34 դնէր 'ի մահիճս անդամալոյծ ։ *Եւ ասէ
ցնա Պետրոս. Ենէա՝ բժշկէ զքեզ Տր Յս Քս,
արի՝ եւ քեզէն թօթափեա զանկողինս քո ։
35 Եւ փաղփաղակի յարեաւ ։ *Եւ տեսին զնա
ամե-

ամենեքեան, որ բնակեալ էին 'ի Լիւդիայ
և 'ի Սարոնայ, որք և դարձան իսկ 'ի Տէր։
* Իսկ 'ի Յոպպէ էր կին մի աշակերտեալ՝ ա- 36
նուն Տաբիթա, որ թարգմանեալ կոչի այ-
ծեմնիկ. սա էր լի գործովք բարեօք և ողոր-
մութեամբ զոր առնէր։ * Իսկ եղև յաւուրսն 37
յայնոսիկ հիւանդանալ նմա և մեռանել.
լուացին զնա՝ և եդին 'ի դստիկոնի անդ։
* Իսկ մերձ էր Լիւդիա 'ի Յոպպէ. աշակեր- 38
տացն լուեալ եթէ Պետրոս անդ է, առա-
քեցին երկուս արս առ նա՝ աղաչել, զի մի
դանդաղեսցի գալ առ նոսա։ * Իսկ յարուցեալ 39
Պետրոս՝ եկն ընդ նոսա. զոր՝ իբրև եկն՝ հանին
'ի վերնատունն. և կացին շուրջ զնովաւ այ-
րիքն ամենայն. լային և ցուցանէին զձորձս և զ-
հանդերձս, որչափ առնէր նոցա այծեմնիկն։
* Իսկ հանեալ արտաքս զամենեսեան Պետ- 40
րոսի, եդ ծունր՝ եկաց յաղօթս. և դար-
ձաւ 'ի մարմինն և ասէ. Տաբիթա՝ արի
կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի. և նա եբաց զաչս
իւր. և տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն։
* Ձեռն ետ նմա՝ և յարոյց զնա. կոչեաց 41
զսուրբսն և զայրիս, առաջի կացոյց զնա կեն-
դանի։ * Իսկ յայտնի եղև ընդ ամենայն Յոպպէ. 42
և հաւատային բազումք 'ի Տէր։ * Իսկ եղև 43
աւուրս բազումս լինել նմա 'ի Յոպպէ՝ առ
ումեմն Սիմոնի խաղախորդի։

## ԳԼ. Ժ.

Գ·Կ Այր մի էր 'ի Կեսարիա՝ անուն Կոռնե- 1
լիոս՝ հարիւրապետ, 'ի գնդէ որ կոչէր
Իտալացի. * բարեպաշտօն՝ և երկիւղած 2

յԱյ

յա՟յ ա՟մ տամբ իւրով. առնէր ողորմութիւն
բազում 'ի ժողովրդեանն. և յաղօթս կայր
3 առ ա՟ծ յա՟մ ժամ: * Ետես 'ի տեսլեան
յայտնապէս զիններորդ ժամու աւուրն ըզ-
հրեշտակ ա՟յ, զի մտանէր առ նա՝ և ասէր
4 ցնա. կոռնէլիէ: * Եւ նա հայեցեալ ընդ
նա՝ զարհուրեցաւ, և ասէ. զի՞ է տ՟ր: և
ասէ ցնա. աղօթք քո՝ և ողորմութիւնք քո ե-
5 լին յիշատակաւ առաջի ա՟յ: * Եւ արդ
յղեա արս 'ի յոպպէ՝ և կոչեա զսիմոն զայն՝
6 որ կոչի պետրոս. * Նա մտեալ է առ սիմոնի
ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ
7 'ի ծով: * Եւ իբրև գնաց հրեշտակն՝ որ
խօսէր ը՟ն նմա, կոչեաց երկուս 'ի ծառայից
իւրոց՝ և զինուոր մի բարեպաշտօն 'ի սպա-
8 սաւորացն իւրոց, * և պատմեալ ն՟ց զա՟մ՝
9 առաքեաց զնոսա 'ի յոպպէ: * Եւ 'ի վաղիւ-
անդր 'ի Ճանապարհ անկանել ն՟ց՝ և մօտ 'ի
քաղաքն լինել, ել պետրոս 'ի տանիսն կալ
10 յաղօթս զվեցերորդ ժամուն: * Քաղցեաւ՝
և կամէր Ճաշակել. և 'ի պատրաստելն ն՟ց՝
11 եղև 'ի վ՟ն ն՟ր զարմացումն: * Եւ տեսանէր
զերկինս բացեալ. և զարկեցուցեալ տանեկա-
պեալ անօթ ինչ իբրև զկտաւ մի մեծ, ի-
12 ջեալ նստեալ 'ի վ՟ր երկրի. * յորում էին
ա՟մ չորքոտանիք և սողունք երկրի՝ և թռ-
13 չունք երկնից: * Եւ եղև ձայն առ նա. ա-
14 րի պետրոս, զեն՝ և կեր: * Եւ պետրոս ա-
սէ. քաւ լիցի տ՟ր, զի ոչ երբեք կերայ խառ-
15 նակ ինչ || և անսուրբ: * Զայն եղև կրկին || Ղեւտ.
անգամ առ նա. զոր ա՟ծ սրբեաց՝ դու մի 11. 10.
16 պղծեր: * Այս եղև երիցս և վերացաւ ա- 2. Օրէ. 14. 19.

նօթն յերկինս: *Եւ մինչդեռ զարմացեալ 17
էր ընդ միտս պետրոս՝ թէ զինչ իցէ տեսիլն՝
զոր ետես. ահա արքն առաքեալք 'ի կոռ-
նելեայ՝ հարցին զապարանիցն սիմոնի, կա-
յին առ դրանն. *կոչեցին՝ եւ հարցանէին, 18
եթէ սիմոն՝ որ կոչին պետրոս՝ աստ մանեալ
իցէ. *Եւ մինչդեռ պետրոս զմտաւ ածէր 19
վն տեսլեանն, ասէ հոգին ցնա. ահաւասիկ
արք ամանք խնդրեն զքեզ. *Արի արդ էջ 20
եւ երթ ընդ նս առանց իրիք խղճելոյ, զի ես
առաքեցի զնս. *Եւ իջեալ էջ պետրոս առ 21
նոսա, ասէ. ահաւասիկ ես եմ՝ զոր խնդ-
րէքդ. զինչ իրք են՝ վն որոյ եկիքդ. *Եւ 22
նոքա ասեն, կոռնելիոս հարիւրապետ՝ այր
արդար եւ երկիւղած յայ, վկայեալ յամ
ազգէն հրէից. հրաման առ 'ի հրեշտակէ
սրբոյ՝ կոչել զքեզ 'ի տուն իւր՝ եւ լսել բանս
'ի քէն. *Կոչեաց զնս 'ի ներքս՝ եւ առ իւր 23
ագոյց. եւ 'ի վաղիւ անդր յարուցեալ պե-
տրոս՝ գնաց ընդ նս. եւ ամանք յեղբարց անտի՝
որ 'ի յոպպէ էին՝ եկին ընդ նմա. *Եւ 'ի վա- 24
ղիւ անդր մտին 'ի կեսարիա. եւ կոռնելիոս
ակն ունէր նոցա, կոչեցեալ զազգատոհմն իւր՝ եւ
զհարազատ բարեկամսն.
Պ. Լ. *Եւ եղեւ 'ի մտանելն պետրոսի՝ ընդ առաջ 25
եղեւ նմա կոռնելիոս, անկեալ առ ոտսն՝
երկիր պագանէր. *Եւ պետրոս կանգնեաց 26
զնա՝ եւ ասէ. յոտն կաց՝ եւ ես ինքն մարդ
եմ: *Եւ խօսելով ընդ նմա եմուտ 'ի ներքս. 27
եւ գտանէր անդ ժողովեալ բազումս: *Եւ 28
|| Յհ. ասէ ցնս. դուք ինքնին գիտէք՝ || որպէս ան-
18. 28. մարթ է առն հրէի հպել կամ մերձենալ

առ

առ այլազգի. և ինձ ած եցոյց մի՛ զոք խառ-
նակ կամ անսուրբ ասել 'ի մարդկանէ.
29 * Վասն այսորիկ և առանց ըն բանս ինչ ա-
ծելոյ եկի կոչեցեալ. բայց արդ հարցա-
30 նեմ, յի՞նչ պէտս կոչեցէք զիս. * Եւ կոռ-
նելիոս ասէ. յառաջ քան զչորս աւուրս մինչ
ցայս ժամ կայի յաղօթս յինն ժամն 'ի տան
իմում, և ահա այր մի եկն՝ եկաց առաջի իմ
31 'ի հանդերձս պայծառս, և ասէ. * Կոռ-
նելիէ՝ լուեալ եղեն աղօթք քո. և ողորմու-
32 թիւնք քո յիշեցան առաջի այ. * Եւ արդ՝
յղեա 'ի յոպպէ՝ և կոչեա զսիմոն, որ կո-
չեցեալն է պետրոս. սա մանեալ է 'ի տան
սիմոնի ուրումն խաղախորդի մերձ 'ի ծովն.
որ եկեալ, և խօսեսցի բանս ընդ քեզ.
33 * Եւ ես փութանակ յղեցի առ քեզ. դու բա-
րւոք արարեր՝ զի եկիր. արդ՝ ամենեքին մեք
առաջի այ կամք լսել զամ, զոր հրամայեալ
34 է քեզ 'ի տնէ. * Եբաց պետրոս զբերան
իւր՝ և ասէ. Ճշմարտութեամբ հասանեմ, ‖ զի ‖ 2 Օրէ.
35 ոչ գոյ աչառութիւն առ 'ի յայ. * այլ յամ 10. 17.
ազգս՝ որ երկնչիցի 'ի նմանէ՝ և գործէ զար- 2 Մնա.
36 դարութիւն, ընդունելի է նմա. * Զբանն 19. 7.
առաքեաց որդւոցն իէլի՝ աւետարանել զխա- Յոբ.
ղաղութիւն 'ի ձեռն յսի քսի. սա է ամենայ- 34. 19.
37 նի տր. * Դուք գիտէք զբանն, որ Իմաստ.
եղև ըն ամ հրէաստան ‖ սկսեալ 'ի գալիլեէ 6. 8.
յետ մկրտութեանն՝ զոր քարոզեաց յովհան- Հռով.
38 նէս. * Զյս որ 'ի նազարեթէ՝ զոր օծն այ 2. 11.
հոգւովն սրբով և զօրութբ. որ շրջեցաւ բա- Գաղա.
րի առնել՝ և բժշկել զամ բռնադատեալս 'ի սա- 2. 6.
39 տանայէ. զի այ էր ըն նմա. * Եւ մեք վը- ‖ Ղուկ.
4. 14.

կայ

կայ եմք ամենայնի՝ զոր արար յերկրին
Հրէաստանի եւ յԵրուսաղէմ. զոր եւ սպանեալ կա-
խեալ զփայտէ: * Զնա Աստուած յարոյց յեր- 40
րորդ աւուր. եւ ետ նմա յայտնի լինել. * ոչ 41
ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս յառա-
ջագոյն ընտրելոցս յԱստուծոյ. որ եւ կերաք՝ եւ ար-
բաք ընդ նմա՝ յետ յարութեանն ի մեռելոց:
* Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովր- 42
դեանն՝ եւ վկայութիւն դնել, թէ նա է սահ-
մանեալն յԱստուծոյ՝ դատաւոր կենդանեաց եւ մե-
ռելոց: * Նմա ամենայն մարգարէքն վկայեն, 43
թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա՝
ամենայն հաւատացելոց ի նա: * Եւ մինչդեռ 44
խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հո-
գին Սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն:
* Զարմացան՝ որք ի թլփատութենէ անտի 45
հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի.
զի եւ ի հեթանոսս պարգեւք Հոգւոյն Սրբոյ
զեղուին: * Քանզի լսէին ի նոցանէ խօ- 46
սել լեզուս՝ եւ մեծացուցանել զԱստուած: * Յայն- 47
ժամ պատասխանի ետ Պետրոս. միթէ զջուր
ոք արգելուլ կարէ՞ առ ի չմկրտելոյ զսոսա.
որք եւ զՀոգին Սուրբ ընկալան՝ որպէս եւ մեք:
* Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի 48
Քրիստոսի: յայնժամ աղաչեցին զնա լինել անդ
աւուրս ինչ:

## ԳԼ. ԺԱ.

Գ. Գ. Լուան առաքեալքն եւ եղբարքն՝ որ էին ի 1
կողմանս Հրէաստանի, զի եւ ի հեթանոսս
ընկալան զբանն Աստուծոյ: * Եւ յորժամ ել 2
Պետրոս յԵրուսաղէմ, խղճէին ի նմանէ՝ որ ի

Թլփ-

Երեմ. Լա. 34. Միք. Է. 18.

թլփատութենէ անտի հաստատեցեալքն.
3 * և ասէին, թէ եմուտ առ արս անթլփատս
4 և եկեր ընդ նոսա։ * Այլ սկսաւ պետրոս պատ-
5 մել նոցա կարգաւ՝ և ասէ. * Ես էի ՚ի քաղաքին
՚ի յոպպէ յաղօթս՝ և տեսանէի ՚ի զարմաց-
ման տեսիլ. իջանել անօթ ինչ իբրև կտաւ
մեծ չորեքծագեան կախեալ յերկնից՝
6 և եհաս մինչև առ իս։ * Յոր հայեցեալ
հայէի. և տեսի զչորքոտանիս երկրի, և
զգազանս՝ և զսողունս, և զթռչունս երկ-
7 նից։ * Այլ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս.
8 արի պետրոս՝ զեն և կեր։ * Այլ ասեմ. քաւ
լիցի տէր, զի խառնակ ինչ և անսուրբ ոչ
9 երբեք եմուտ ՚ի բերան իմ։ * Պատասխա-
նի ետ ինձ երկիցս անգամ բարբառն յերկ-
նից. զոր Աստուած սրբեաց՝ դու մի խառնակ հա-
10 մարիր։ * Այս եղև երիցս, և վերացաւ ա-
11 մենայն դարձեալ յերկինս։ * Այլ ահա ան-
դէն երեք արք եկին կացին առ ապարա-
նիցն՝ ուր եմն էի, առաքեալք ՚ի կեսարիոյ
12 առ իս։ * Այլ ասէ ցիս Հոգին՝ երթալ ընդ
նոսա՝ և մի ինչ խղճել։ եկին ընդ իս և այս
վեցեքեան եղբարքս, և մտաք ՚ի տուն առնն
13 այնորիկ։ * Այլ պատմեաց մեզ՝ որպէս ե-
տես զհրեշտակն ՚ի տան իւրում, զի կայր
և ասէր ցնա. առաքեա ՚ի յոպպէ, և կոչեա
14 զսիմոն զկոչեցեալն պետրոս. * որ խօսեսցի
բանս ընդ քեզ, որովք կեցցես դու՝ և ամե-
15 նայն տուն քո։ * Այլ իբրև սկսայ խօսել՝ ‖ Վեր.
եկն Հոգին սուրբ ՚ի վերայ նոցա. ‖ որպէս և ՚ի վերայ մեր 2. 3.
16 ՚ի սկզբանն։ * Յիշեցի զբանն Տեառն զոր ա- ‖ Վեր.
սէրն. ‖ յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր. բայց 1. 5. Վեր.
դուք 19. 4.

դուք մկրտեսջիք 'ի Հոգին սրբ ։ *Իսկ արդ՝ 17
եթէ զհաւասարակաց պարգեւն ետ ած եւ նց՝
որպէս եւ մեզ՝ 'ի հաւատալն 'ի տր յս քս.
ես զի՞նչ կարող էի արգելուլ զած ։ *Եւ 18
լուեալ զայս՝ լռեցին եւ փառաւոր առնէին
զած՝ եւ ասէին. ուրեմն եւ 'ի հեթանոսս ետ
ած զապաշխարութիւն կենաց ։
Գ. Գ. *Եւ ցրուեալքն 'ի նեղութենէն որ եղեւ 'ի 19
վերայ ստեփաննոսի՝ հասին մինչեւ 'ի փիւ-
նիկէ եւ 'ի կիպրոս եւ յանտիոքիայ. ոչ ումեք
խօսէին զբանն, բայց միայն հրէից ։ *Եւ 20
էին ոմանք 'ի նոցանէ այրք կիպրացիք եւ կիւ-
րենացիք՝ որք մտեալ յանտիոք՝ խօսէին ընդ
յոյնսն աւետարանեալ զտր յս ։ *Եւ էր 21
ձեռն տն ընդ նս. եւ բազմութիւն հաւատացե-
լոց դարձաւ 'ի տր ։ *Լուր եղեւ բանս այս յա- 22
կանջս եկեղեցւոյն, որ էր յէմ, վն նոցա.
եւ առաքեցին զբառնաբաս մինչեւ յանտիոք.
*որ իբրեւ եկն՝ եւ ետես զշնորհսն այ՝ ուրախ 23
եղեւ, եւ մխիթարէր զամենեսին՝ յօժարութ
սրտի կալ նմ 'ի տր ։ *Զի էր այր զուար- 24
թամիտ՝ եւ լի հոգւով սրբով եւ հաւատովք.
եւ յաւելաւ ժողովուրդ բազում տն ։ *Եւ 25
ել 'ի տարսոն խնդրել զսօղոս, եւ գտեալ
զնա՝ ած յանտիոք ։ *Եւ եղեւ նոցա զամ 26
ողջոյն ժողովել յեկեղեցին՝ եւ ուսուցանել
ժողովուրդ բազում, եւ անուանել նախ յան-
տիոք զաշակերտսն Քրիստոնեայս ։ *Ընդ 27
աւուրսն ընդ այնոսիկ իջին յերուսաղէմէ
մարգարէք՝ յանտիոք ։ *Յարուցեալ մի ոմն 28
'ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց հոգ-
ւովն սով մեծ լինել ընդ ամ աշխարհ՝ որ եղեւ

առ

29 առ Կղօդեաւ. * Բայց յաշակերտացն ան-
տի, ըստ զիարդ կարող ոք էր՝ իւրաքանչիւր-
ոք 'ի նոցանէ որոշեցին առաքել 'ի պէտս
եղբարցն որ բնակեալ էին 'ի Հրէաստանի.
30 * զոր և արարին իսկ՝ առաքեալ առ երի-
ցունսն 'ի ձեռն Բառնաբայ և Սօղոսի.

## ԳԼ. ԺԲ.

1 Ընդ ժամանակսն յայնոսիկ արկ Հերովդ- Գ. Ն
դէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յե-
2 կեղեցւոյն. * Եւ սպան զՅակովբոս զեղ-
3 բայրն Յովհաննու սրով. * Իբրեւ ետես հա-
ճոյ է Հրէիցն, յաւել եւս ունել զՊետրոս.
4 եւ էին աւուրքն բաղարջակերաց. * Զոր
իբրեւ կալաւ՝ եդ 'ի բանտի, եւ մատնեաց
չորից չորրորդաց զինուորաց պահել զնա. եւ
կամէր յետ զատկին ածել զնա ժողովր-
5 դեանն. * Եւ պետրոս 'ի պահեստի էր 'ի
բանտին. եւ աղօթք սաստիկ լինէին յեկեղեց-
6 ւոյն վն նր առ այ. * Իբրեւ կամեցաւ զնա
ածել Հերովդէս. 'ի գիշերին յայնմիկ էր
պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝
կապեալ կրկին շղթայիւք. եւ պահապանքն
7 առաջի դրանն պահէին զբանտն. * Եւ ա-
հա հրեշտակ տն եկն եկաց 'ի վերայ՝ եւ լոյս
ծագեաց 'ի տանն, եւ խթեաց զկողն պետ-
րոսի՝ յարոյց զնա՝ եւ ասէ. արի վաղվաղա-
8 կի. եւ անկան շղթայքն 'ի ձեռաց նր. * Եւ
ասէ հրեշտակն ցնա. ած զգօտի քո, եւ արկ
զհողաթափս յոտս քո. եւ արար այնպէս.
եւ ասէ ցնա, արկ զձորձս քո՝ եւ եկ զկնի իմ.
9 * Եւ ելեալ երթայր զհետ, եւ ոչ գիտէր՝
թէ

թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեն 'ի հրեշտա-
կէն. զի համարէր երազ տեսանել: * Եւ 10
իբրեւ անցին նք ՟ա ՟բ մի պահ եւ ըստ երկուս,
եկին մինչեւ 'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի
քաղաքն. որ ինքնին բացաւ նոցա. եւ մտեալ
անցին ՟ա փողոց մի. եւ վաղվաղակի 'ի բաց
եկաց 'ի նմանէ հրեշտակն: * Եւ պետրոս 11
իբրեւ 'ի միտս եկն, ասէ. արդ գիտեմ ճշ-
մարիտ եթէ առաքեաց տէր զհրեշտակ իւր.
եւ փրկեաց զիս 'ի ձեռաց Հերովդի, եւ յամ՟
ակնկալութենէ ժողովրդեանն հրէից: * Եւ 12
լեալ 'ի միտս՝ եկն 'ի տուն մարեմայ մօր յով-
հաննու, որ կոչեցաւն մարկոս. ուր էին
բազումք ժողովեալ՝ եւ աղօթս առնէին:
* Եւ 'ի բախել զդուրս դրանն, մատեաւ 13
աղախին մի՝ ունկն դնել, որում անուն էր
Հռովդէ: * Եւ ծանուցեալ զձայնն պետ- 14
րոսի՝ 'ի խնդութենէ ոչ եբաց զդուռն. 'ի
ներքս ընթացեալ պատմեաց, թէ պետրոս
առ դրանն կայ: * Նոքա ասեն ցնա մոլիս: 15
Եւ նա եւս պնդէր՝ թէ այդպէս է: Եւ նոքա
ասէին՝ հրեշտակ նորա իցէ: * Եւ պետրոս 16
առնէր բախելը: իբրեւ բացին, տեսին զնա՝
եւ զարմացան: * Եւ նա ձեռամբ ցուցանէր 17
նց՟ լռել. եւ պատմեաց՝ որպ՟ տէր եհան զնա 'ի
բանտէն. եւ ասէ՝ պատմեցէք յակոբայ եւ
եղբարց զայս. եւ ել գնաց յայլ տեղի: * Եւ 18
իբրեւ այգ եղեւ՝ էր խռովութիւն մեծ 'ի մէջ
զինուորացն, զի՞ արդեւք պետրոսն եղեւ:
* Իսկ Հերովդէս իբրեւ խնդրեաց զնա՝ եւ 19
ոչ եգիտ, հարցեալ զպահապանսն՝ հրամա-
յեաց սպանանել: եւ իջեալ 'ի հրէաստանէ

'ի

'ի կեսարիա՝ և անդ լինէր։ * Այլ էր հե- 20
րովդէս ցասմամբ ը տիւրացիս և ը սիդով-
նացիս. և նոքա առ հասարակ եկին առ նա.
և 'ի բանի արարեալ զբղաստոս սենեկա-
պետն արքայի, խնդրէին զխաղաղութիւն վա
21 կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ։ * Յա-
ւուր միում՝ յերեւելում՝ հերովդէս զգեցեալ
էր զհանդերձ թագաւորական՝ և նստէր յա-
տենի, և խօսէր ընդ նոսա հրապարակաւ։
22 * Այլ ամբոխն աղաղակէր՝ թէ այդ բարբառ
23 է, և ոչ մարդոյ։ * Այլ անդէն եհար զնա
հրեշտակ տն, փոխանակ զի ոչ ետ փառս
24 այ. և եղեալ որդնալից՝ սատակեցաւ։ * Այլ
բանն այ աճէր և բազմանայր։
25 * Բառնաբաս և սողոս դարձան յերուսաղէմ՝ Գ. Օ.
լցեալ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ‖ Վեր.
ընդ իւրեանս և զյովհաննէս՝ որ կոչեցեալն ԺԱ. ԻԹ.
էր մարկոս։

## ԳԼ. ԺԳ.

1 Էին ոմանք յանտիոք ը եկեղեցւոյն մար-
գարէք և վարդապետք, բառնաբաս՝ և
շմաւոն կոչեցեալն նիգեր, և ղուկիոս կիւ-
րենացի, և մանայէն դայեակորդի հերովդի
2 չորրորդապետի, և սողոս։ * Մինչդեռ 'ի
պաշտաման տն կային՝ և պահէին, ասէ
հոգին սբ. որոշեցէք ինձ զբառնաբաս և
զսողոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զնոսա։
3 * Յայնժամ պահեալ՝ և աղօթս արարեալ՝
4 եդին ձեռն 'ի վ՛ր նոցա՝ և արձակեցին։ * Այլ
նոքա առաքեալք 'ի հոգւոյն սբոյ՝ իջին 'ի սե-
5 լեւկիա, և անտի նաւեցին 'ի կիպրոս։ * Այլ
հա-

հասեալ 'ի Սաղամին՝ պատմէին զբանն Աստուծոյ
'ի ժողովուրդս Հրէիցն. ունէին և զՅովհան-
նէս պաշտօնեայ։ * Եւ շրջեալ ընդ ամենայն կղզին 6
մինչև 'ի Պափոս, գտին անդ զայր մի մոգ
սուտ մարգարէ՝ Հրեայ, որում անուն էր
Բարյեսու։ * Որ էր ընդ փոխանակի բդեշ- 7
խին Սերգեայ Պօղոսի՝ առն իմաստնոյ։ Նա
աղաչեալ զԲառնաբաս և զՍօղոս՝ խնդրէր
լսել զբանն Աստուծոյ։ * Ընդդէմ եկաց նոցա Եղի- 8
մաս մոգ. քանզի այսպէս թարգմանի ա-
նուն նորա. խնդրէր շրջել զփոխանակ բդեշ-
խին 'ի հաւատոյ։ * Իսկ Սօղոս, որ և Պօ- 9
ղոսն՝ լցեալ Հոգւով սրբով հայեցաւ 'ի նա,
* և ասէ. Ո՜վ լի ամենայն նենգութեամբ և խարդա- 10
խութեամբ՝ որդի սատանայի՝ թշնամի ամենայն
արդարութեան, ո՞չ լռես 'ի թիւրելոյ զճանա-
պարհս Տեառն զուղիղս։ * Եւ արդ՝ ահա ձեռն 11
Տեառն 'ի վերայ քո, և եղիցիս կոյր՝ չտեսանել
զարև մինչև 'ի ժամանակ մի։ Եւ անդէն ան-
կաւ 'ի վերայ նորա մէգ և խաւար, և շրջեալ
խնդրէր առաջնորդս։ * Յայնժամ տեսեալ 12
փոխանակի բդեշխին զիրսն որ եղեն՝ հաւա-
տաց, զարմացեալ ընդ վարդապետութիւն Տեառն։
Գ. Լ. * Եւ ամբարձեալ 'ի Պափեայ Պօղոսեանցն՝ 13
եկին 'ի Պերգէ Պամփիւլեայ. Յովհաննէս
մեկնեալ 'ի նոցանէ՝ դարձաւ յԵրուսաղէմ։ * Եւ 14
նոքա գնացեալ 'ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք
Պիսիդեայ. և մտեալ 'ի ժողովուրդն յա-
ւուր շաբաթուց՝ նստան։ * Եւ յետ ըն- 15
թերցուածոց օրինացն և մարգարէից, առաքե-
ցին առ նոսա ժողովրդապետքն և ասեն. Արք
եղբարք՝ եթէ իցէ 'ի ձեզ բանք մխիթա-

րու-

րութեան առ ժողովուրդդ՝ խօսեցարուք:
16 *Յոտն եկաց պօղոս՝ շարժեաց զձեռն եւ ա-
սէ. արք իսրայէլացիք՝ եւ որ երկնչիք յայ՝ լուա-
17 րուք: *Ած ժողովրդեանս այսորիկ իէլի
ընտրեաց զհարսն մեր. եւ զժողովուրդն
բարձրացոյց ի պանդխտութեան ‖ յերկրին Ե- ‖ Ելից.
գիպտացւոց. ‖ եւ ի բազուկ բարձր եհան 1. 1.
18 զնոսա անտի: *‖ Եւ իբրեւ քառասնամեայ ‖ 13. 21.
ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի: ‖ 16. 3.
19 *Եւ քակեալ ազգս եօթն յերկրին քանա-
20 նու՝ ‖ ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա *իբրեւ ‖ Յես.
ամս չորեքհարիւր եւ յիսուն: ‖ Եւ յետ այսո- 14. 2. ‖ Դատ.
րիկ ետ նոցա դատաւոր մինչեւ ի սամուէլ 3. 9.
21 մարգարէ: *Եւ անտի յառաջ ‖ խնդրեցին ‖ 1 Թագ.
թագաւոր: ‖ Եւ ետ նոցա ած զսաւուղ որդի 8. 5. ‖ 9. 16.
կիսեայ՝ այր յազգէ բենիամենի, ամս քա-
22 ռասուն: *Եւ իբրեւ փոխեաց զնա, ‖ յա- ‖ 1 Թագ.
րոյց նոցա զդաւիթ թագաւոր, որում եւ ա- 13. 14.
սաց վկայութիւն. ‖ գտի զդաւիթ որդի յես- ‖ Սաղ.
սեայ այր ըստ սրտի իմում. որ արասցէ զամ 88. 21.
23 զկամս իմ: *‖ Ի սորա զաւակէ ած ըստ ա- ‖ Եսայ.
24 ւետեացն յարոյց իղի զփրկիչն յս. *Ըստ յա- 11. 1.
ռաջագոյն ‖ քարոզելն յովհաննու. առա- ‖ Մտթ.
ջի երեսաց մտանելոյ նր մկրտութիւն ապաշխարու- 3. 1.
25 թեան՝ ամ ժողովրդեանն իղի: *Եւ իբրեւ
լնոյր յովհաննէս զընթացսն, ասէր. զո՞ ոք
կարծէք զինէն՝ թէ իցեմ. ‖ չեմ ես այն. ‖ Մտթ.
այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի 3. 11. Մրկ.
26 զխօշիկս ոտիցն լուծանել: *Արք եղբարք՝ 1. 7.
որդիք աբրահամեան տոհմին, եւ որ ի ձեզ Յովհ.
երկիւղածք իցեն յայ. ձեզ բանս այս փրր- 1. 27.
27 կութեան առաքեցաւ: *Բայց որ բնակեալ

էին

են յե̃Հմ, և իշխանք նոցա՝ անծանօթ եղեն
'ի նմանէ. և ըստ բարբառոյ մարգարէիցն,
որ զա̃մ շաբաթս ընթեռնուին՝ դատել
կատարեցին. և ոչ մի ինչ պատճառս մա- 28
|| Մատթ. հու գտեալ՝ || խնդրեցին 'ի պիղատոսէ սպա-
27. 20. Մարկ. նանել զնա։ *Եւ իբրև կատարեցին զա̃մ՝ 29
15. 13. որ վ̃ն նր̃ գրեալ էր, իջուցեալ 'ի փայտէն՝
Յովհ. եդին 'ի գերեզմանի։ *|| Այլ ա̃ծ յարոյց 30
19. 15. || Մատթ. զնա 'ի մեռելոց. որ երևեցաւ աւուրս
28. 6. բազումս այնոցիկ, *որ ելեալ էին ը̃նդ նմա 'ի 31
Մարկ. գալիլեէ յե̃Հմ. որք և արդ իսկ վկայք են
16. 6. Ղուկ. նր̃ առ ժողովուրդն։ *Եւ մեք ձեզ աւետա- 32
24. 6. րանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ
էր։ *Զի զնոյն ա̃ծ կատարեաց առ մեզ 33
որդւոց նր̃՝ յարուցեալ զյս̃. ոպ̃ և 'ի սաղմո-
|| Սաղմ. սին գրեալ է յերկրորդում. || Որդի իմ ես
2. 7. դու. և ես այսօր ծնայ զքեզ։ *Եւ զի յա- 34
րոյց զնա 'ի մեռելոց, և ոչ ևս դառնալոց է
|| Եսայ. յապականութ̃ի. այսպէս ասէ, || եթէ տաց
55. 3. ձեզ զսրբութիւն դաւթի զհաւատարիմս։
|| Սաղմ. *Վասնզի և 'ի միւսումն ասէ. || Ոչ տացես 35
15. 10. սրբոյ քում տեսանել զապականութ̃ի։ *Այլ 36
դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց. և
Գ Թագ. 'ի կամս ա̃յ || ննջեաց, և յաւելաւ առ հարս
2. 10. իւր՝ և ետես զապականութ̃ի։ *Իսկ՝ զոր 37
ա̃ծն յարոյց՝ ոչ ետես զապականութիւն։
*Յայտնի լիցի ձեզ արք եղբարք, զի սովաւ 38
ձեզ թողութ̃ի մեղաց աւետարանի։ և յա-
մենայնէ՝ յորմէ ոչ կարացիք օրինօքն մովսէ-
սի արդարանալ, *սովաւ ա̃մ որ հաւատայ՝ 39
արդարանայ։ *Զգոյշ կացէք՝ գուցէ ե- 40
կեսցէ 'ի վերայ ձեր ասացեալն 'ի մարգա-
րէս։

41 րեւ. *Տեսէք արհամարհոտք՝ եւ զարմա- Ամբ.
ցարուք եւ եղծարուք. զի գործ մի գործեմ 1. 5.
ես յաւուրս ձեր. գործ, որում ոչ հաւա-
42 տայցէք՝ եթէ ոք պատմեսցէ ձեզ. *Եւ իբ-
րեւ ելին անտի, աղաչէին ՚ի միւսում շաբա-
43 թու խօսել նց զնոյն բանս. *Եւ իբրեւ արձա-
կեցաւ ժողովուրդն, զհետ երթային բա-
զումք ՚ի հրէից անտի եւ ՚ի պաշտօնէից ե-
կամտից՝ զպօղոսի եւ զբառնաբայ. որք խօ-
սէին ընդ նոսա, եւ հաւանեցուցանէին զնոսա
կալ մնալ ՚ի շնորհսն այ.
44 *Եւ ՚ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ԴԿ
ամ քաղաքն ժողովեցաւ լսել զբանն այ.
45 *Իբրեւ տեսին հրէայքն զամբոխն՝ լցան նա-
խանձու. եւ ընդդէմ դարձեալ ասացելոցն ՚ի
46 պօղոսէ՝ հայհոյէին. *Համարձակեալ պօ-
ղոսի եւ բառնաբայ՝ ասէին. առ ձեզ նախ
պարտ էր խօսել զբանն այ. եւ քանզի դուք
մերժեցէք զնա, եւ ոչ արժանի համարիք ըզ-
ձեզ կենացն յաւիտենականաց, ահաւասիկ
47 դառնամք ՚ի հեթանոսս. *Զի այսպէս
պատուիրեաց մեզ տր. Եդի զքեզ ՚ի լոյս Եսայ.
հեթանոսաց՝ լինել քեզ ՚ի փրկութիւն մինչեւ 49. 6.
48 ՚ի ծագս երկրի. *Զայս լուեալ հեթանո-
սացն՝ ուրախ լինէին, եւ փառաւոր առնէին
զբանն տն. եւ հաւատացին՝ որք էին կար-
49 գեալ ՚ի կեանսն յաւիտենականս. *Եւ շըր-
50 ջէր բանն այ ընդ ամ գաւառն. *Բայց հր-
էայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս ըզ-
գաստս՝ եւ զգլխաւորս քաղաքին, եւ յարու-
ցին հալածանս ՚ի վերայ պօղոսի եւ բառ-
նաբայ՝ հանին զնս ՚ի սահմանացն իւրեանց։

*Եւ

Մատթ. 10. 14. Մարկ. 6. 11. Ղուկ. 9. 5.

* Եւ նոքա թօթափեալ զփոշին յոտից ՚ի վե- 51
րայ նոցա, եկին յԻկոնիոն ։ * Եւ աշակերտքն 52
լնուին խնդութեամբ և Հոգւովն սրբով։

## ԳԼ. ԺԴ.

Եւ եղև յԻկոնիոն ՚ի միասին մտանել նոցա 1
՚ի ժողովուրդ Հրէիցն և խօսել նոյնպէս.
մինչև հաւատալ Հրէից՝ և յՈւնաց բազմաց
յոյժ ։ * Բայց անհաւանն Հրէայքն յարու- 2
ցին և չարացուցին զանձինս հեթանոսացն
՚ի վերայ եղբարց ։ * Բազում ժամանակս 3
շրջէին համարձակեալք ՚ի Տ՟ն վկայութեամբ,
բանիւ շնորհաց իւրոց. և տալ նշանս և ար-
ուեստս լինել ՚ի ձեռս նոցա ։ * Եւ եղև 4
հերձուած ՚ի բազմութեան քաղաքին. ոմանք
էին ՚ի Հրէայսն, և ոմանք յառաքեալսն ։
* Իբրև եղև դիմել հեթանոսացն և Հրէից 5
իշխանօքն իւրեանց, ՚ի թշնամանել և ՚ի քար-
կոծել զնոսա, * ապա եղեալ նոցա փախեան 6
՚ի քաղաքս Լիկայոնացւոց ՚ի Լիւստրա և ՚ի
Դերբէ՝ և շուրջ զգաւառաւն, և անդ աւե-
տարանէին ։

ԳԻ
* Եւ այր մի Լիւստրացի անկար յոտից նստէր՝ 7
կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբէք չէր
գնացեալ ։ * Սա լսէր զխօսսն Պօղոսի. ո- 8
րոյ հայեցեալ ՚ի նա, և տեսեալ՝ թէ ունի
հաւատս փրկութեան, * ասէ մեծաձայն. քեզ 9
ասեմ յանուն Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի՝ յոտն կաց
՚ի վերայ ոտից քոց ուղիղ. և վաղվաղակի՝ և
գնայր ։ * Եւ ժողովուրդքն տեսեալ զոր ա- 10
րարն Պօղոս, բարձին զձայնս իւրեանց Լի-
կայոնարէն, և ասեն. աստուածք նմա-

նեալք

11 նմանք մարդկան իջին առ մեզ։ *Եւ կո-
չէին զԲառնաբաս Դիոս, եւ զՊօղոս Հերմէս,
12 քանզի նա էր առաջնորդ բանին։ *Եւ
քուրմն Դիոսի՝ որ կայր առաջի քաղաքին,
ցուլս եւ պսակս հասուցեալ 'ի դրունսն՝ հան-
13 դերձ բազմութեամբն՝ կամէր զոհել։ *Եւ
լուեալ առաքելոցն Բառնաբայ եւ Պօղոսի,
պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս
14 վազեցին յամբոխն․ աղաղակէին, *եւ ա-
սէին․ Արք՝ զի՞նչ գործէք զայդ․ մեք ձեզ
նմանօղք կարեկիցք մարդիկ եմք․ աւետարա-
նել ձեզ յայդպիսի ունայնութենէ դառնալ
յԱծ կենդանի․ ‖ Որ արար զերկինս եւ զեր- ‖ Ծննդ․
15 կիր եւ զծով եւ զամ որ 'ի նոսա։ *Որ յան- 1․ 1․ Սաղմ․
ցեալ ազգսն՝ թոյլ ետ ամ հեթանոսաց գը- 145․ 6․
16 նալ 'ի ճանապարհս իւրեանց։ *Եւ սակայն Գործ․
ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող բա- 17․ 24․
րերարութիւն առ յերկնից ձեզ անձրեւ՝ եւ
ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրով
17 եւ ուրախութեամբ զսիրտս ձեր։ *Եւ զայս ա-
սացեալ՝ հազիւ լռեցուցանէին զժողովուրդ-
սն 'ի չզոհելոյ նոցա․ այլ գնալ յիւրաքանչիւր
տեղիս։
18 *Եւ 'ի շրջելն նոցա եւ յուսուցանել՝ եկին Դ․ Դ․
հասին յԱնտիոքայ եւ յԻկոնիէ Հրեայք․ եւ 'ի
վիճել նոցա համարձակութ՝ պատրեցին զժո-
ղովուրդսն՝ 'ի բաց կալ 'ի նոցանէ, եւ ասէին՝
թէ ոչինչ ճշմարտութի ասեն, այլ զամ սու-
տեն․ եւ քարկոծեալ զՊօղոս՝ քարշեցին ար-
տաքս քան զքաղաքն, եւ համարէին զնա մե-
19 ռեալ։ *Եւ 'ի պատել զնովաւ աշակերտա-
ցըն՝ յարեաւ եմուտ 'ի քաղաքն․ եւ 'ի վաղիւ-
անդր

անդր ել Բառնաբաւ հանդերձ 'ի Դերբէ ։
* Աւետարանեալ 'ի քաղաքին յայնմիկ՝ եւ 20
աշակերտեալ զբազումս, դարձան 'ի Լիւստ-
րայ՝ եւ յԻկոնիոն՝ եւ յԱնտիոքիայ. * Հաստա- 21
տել զանձինս աշակերտելոյն՝ եւ մխիթարել
կալ հաստատուն 'ի հաւատսն. եւ թէ բա-
զում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յար-
քայութիւն ա̃յ ։ * Ձեռնադրեցին նոցա ը̃ս 22
եկեղեցւոյ՝ երիցունս. աղօթս արարեալ
հանդերձ պահօք, յանձն արարին զն̃ս տ̃ն՝
յոր հաւատացեալն էին ։ * Եւ շրջեալ ընդ 23
Պիսիդիայ՝ եկին 'ի Պամփիւլիայ ։ * Եւ խօ- 24
սեցեալ 'ի Պերգէ զբանն տ̃ն, իջին յԱտտա-
Գ Վէր․ 13․ 1․ լիայ ։ * Եւ անտի նաւարկեալ՝ գնացին 25
յԱնտիոք, ուստի էին յանձն արարեալ շնոր-
հացն ա̃յ 'ի գործն զոր կատարեցին ։ * Եւ- 26
կեալ եւ ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին
որչափ արար ա̃ծ ընդ նոսա. եւ զի եբաց հե-
թանոսաց դուռն հաւատոց ։ * Որջէին ժա- 27
մանակս ոչ սակաւ ը̃ն աշակերտսն ։

## ԳԼ․ ԺԵ․

Գ․ Գ․ Եւ ոմանք իջեալ 'ի Հրէաստանէ՝ ուսու- 1
1․ ցանէին զեղբարս. Եթէ ոչ թլփատիք ըստ
5․ 2․ օրինացն Մովսէսի՝ ոչ կարէք ապրել ։ * Եւ 2
'ի լինել ոչ սակաւ հակառակութեան եւ խնդ-
րոյ՝ Պօղոսի եւ Բառնաբայ ընդ նոսա, եդին ե-
լանել Պօղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց 'ի նո-
ցանէ՝ առ առաքեալսն եւ երիցունս յե̃մ
վասն խնդրոյն այնորիկ ։ * Նոքա յուղար- 3
կեալք յեկեղեցւոյն, շրջէին ը̃ն Փիւնիկէ․
եւ ը̃ն Սամարիայ պատմէին զդարձն հեթա-

նոս

նոցա, եւ առնէին ուրախութիւն մեծ ամ եղ-
4 բարցն։ *Եւ հասեալ յէմ ընկալեալք յե-
կեղեցւոյն եւ յառաքելոցն եւ յերիցանց՝ պատ-
5 մեցին որչափ ինչ արար ընդ նոսա ած։ *Յա-
րեան ոմանք ՚ի հերձուածոյն փարիսեցւոց
հաւատացելոցն, եւ ասեն՝ թէ պարտ է թլ-
փատել զնոսա, եւ պատուիրել պահել զօ-
6 րէնսն մովսէսի։ *Եւ ժողովեցան առա-
քեալքն եւ երիցունք տեսանել վասն բանիս
7 այսորիկ։ *Եւ յետ բազում խնդրոյ լինելոյ՝
յարեաւ պետրոս՝ եւ ասէ ցնս. Արք եղ- || Վեր.
բարք՝ դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն ա- 10. 20.
ռաջնոց ՚ի մէջ ձերում ընտրեաց ած բերա-
նով իմով լսել հեթանոսաց բանին աւետա-
8 րանի, եւ հաւատալ։ *Եւ սրտագէտն ած
վկայեաց նց, Տուեալ նց զհոգին սր. որպէս || Վեր.
9 եւ մեզ. *եւ ոչինչ ընտրութիւն արար ՚ի մէջ 10. 45.
նց եւ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նց։
10 *Արդ՝ ընդէ՞ր փորձէք զած, դնել լուծ ՚ի
վր պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն
11 մեր եւ ոչ մեք կարացաք բառնալ։ *Այլ
շնորհօքն տն յի քի հաւատամք ապրել,
12 զորօրինակ եւ նոքա։ *Լռեաց ամ ժողո-
վուրդն, եւ լսէին բառնաբայ եւ պօղոսի պատ-
մելոյն. որչափ արար ած նշանս եւ արուեստս
՚ի հեթանոսս ՚ի ձեռն նց։

13 *Եւ յետ լռելոյն նց՝ պատասխանի ետ յա- Գ. Ե
կոբոս՝ եւ ասէ. Արք եղբարք՝ լուարուք ինձ։
14 *Շմաւոն պատմեաց՝ որպէս յառաջագոյն
ած այց արար առնուլ ժողովուրդ ՚ի հեթա-
15 նոսաց՝ անուան իւրոյ։ *Եւ այսմ միաբա-
նին բանք մարգարէիցն. որպէս եւ գրեալ է։


*Յետ

Ամով. *Հետ այսորիկ դարձայց՝ և շինեցից զյար- 16
9. 11. կըն դաւթի զանկեալն, և զկործանեալն
նորա վերստին շինեցից՝ և կանգնեցից զնա.
*որպէս զի խնդրեսցեն մնացորդք մարդկան 17
զՏր. և ամ՟ հեթանոսք՝ յորս կոչեցեալ
է անուն իմ, ասէ Տր. որ առնէ զայս ամ՟
Ղեւտ. *յայտնի է 'ի յաւիտենից (ամ՟ գործ իւր։) 18
17. 13. *Վասն որոյ և ես իրաւանս համարիմ, մի 19
—14ե.։ նեղել զայնոսիկ՝ որք 'ի հեթանոսաց դառ-
նան առ ած։ *Այլ տալ թուղթ առ նս, 20
խորշել 'ի կերակրոց կռոց՝ և 'ի պոռնկութե
և 'ի մեռելոտւոյ՝ և յարենէ։ *Զի մով- 21
սէս յազգաց առաջնոց ըստ քաղաքաց զքա-
րոզիչս իւր ունի՝ 'ի ժողովսն ըստ ամ՟ շաբա-
թուց ընթերցեալ։ *Յայնժամ հաճոյ թու- 22
եցաւ առաքելոցն և երիցանցն ամ՟ եկե-
ղեցեաւն, արս ընտրեալս 'ի նոցանէ առա-
քել յանտիոք ընդ պօղոսի և ընդ բառնաբայ,
զյուդա՝ զկոչեցեալն բարսաբայ, և զշիղա՝
արս զլխաւորս. *գրեալ առ եղբարս 'ի 23
ձեռն նց զայս ինչ։ Առաքեալք և երիցունք
և եղբարք, յանտիոք և 'ի ասորիս և 'ի կիւ-
լիկիա եղբարցդ՝ որ 'ի հեթանոսացդ էք,
ողջոյն։ *Որովհետև լուաք՝ թէ ոմանք իբրև 24
'ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք, խախ-
տել զանձինս ձեր. ասեն թլփատել և պա-
հել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք։ *Հա- 25
ճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս
ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ
բառնաբայ և ընդ պօղոսի։ *արք՝ որք մատ- 26
նեցին զանձինս իւրեանց վասն անուան տն
մերոյ յսի քսի։ *Առաքեցաք զյուդա 27
և

եւ զշիղա. եւ նոցա 'ի բանից զնոյն պատմել։
28 * Զի հաճոյ թուեցաւ հոգւոյն սբյ եւ
մեզ, մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ. բայց
29 միայն 'ի կարեւորագոյս յայսցիկ * 'ի բաց
կալ, 'ի զոհելոյ կռոց՝ եւ յարենէ՝ եւ 'ի հեղ-
ձուցելոյ՝ եւ 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ
զանձինս բարւոք գործէք. ողջ լերուք։
30 * Եւ նոքա արձակեալք՝ իջին յանտիոք, եւ
ժողովեալ զժողովուրդն՝ ետուն զթուղթն։
31 * Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն 'ի վր մխի-
32 թարութեանն։ * Յուդա եւ շիղա. զի եւ նո-
քա մարգարէք էին՝ բանիւք բազմօք մխի-
33 թարեցին զեղբարս՝ եւ հաստատեցին։ * Եւ
եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խա-
34 ղաղութբ յեղբարց առ առաքեալսն։ * Եւ
հաճոյ թուեցաւ շիղայի մնալ անդէն։
35 * Պաւղոս եւ բառնաբաս շրջէին յան-
տիոք, ուսուցանել եւ աւետարանել՝ եւ այ-
լովք բազմօք՝ զբանն տն։
36 * Եւ յետ աւուրց ինչ ասէ պաւղոս ցբառնա- Դ.Զ
բաս, դարձցուք եւ շրջեսցուք զեղբարբք՝ ըն
ամ քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն տն՝
37 թէ ո՞նց ունիցին։ * Բառնաբաս կամէր ա-
ռնուլ եւ զյովհաննէս զկոչեցեալն մարկոս.
38 * բայց պաւղոս աղաչէր՝ թէ զմեկնեալն 'ի
նոցանէ 'ի պամփիւլիայ, եւ զչեկեալն ընդ
39 նա 'ի գործն, մի առնուլ ըն ինքեանս։ * Եւ
եղեւ գժտութի մինչեւ մեկնել նոցա 'ի մի-
մեանց, բառնաբայ առնուլ զմարկոս՝ նա-
40 ւել 'ի կիպրոս։ * Եւ պաւղոսի ընտրեալ ըզ-
շիղա՝ ել, յանձն արարեալ շնորհացն այ՝
41 յեղբարց անտի։ * Եւ շրջէր 'ի կողմանս
ասոր-

Ասորւոց և Կիլիկեցւոց, և հաստատէր զե-
կեղեցիսն:

## ԳԼ. ԺԶ.

Եկն եհաս ՚ի Դերբէ և ՚ի Լիւստրա. և ա- 1
հա աշակերտ մի էր անդ՝ անուն Տիմո-
թէոս, որդի կնոջ հրէի հաւատացելոյ՝ և
հօր հեթանոսի: *Որ վկայեալ էր ՚ի Լիւստ- 2
րացւոց և յԻկոնացւոց եղբարց: *Զսա կա- 3
մեցաւ Պօղոս ընդ իւր տանել. և առեալ
թլփատեաց զնա վասն հրէիցն, որ էին ՚ի տե-
ղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին
զհայր նորա՝ թէ հեթանոս էր: *Իբրև անցա- 4
նէին ընդ քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել
զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և
յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ: *Եւ եկեղեցիքն 5
հաստատէին ՚ի հաւատս, և յաւելուին ՚ի
թիւ հանապազօր:

ԳԻ. *Եւ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս 6
Գաղատացւոց, արգելեալք ՚ի Հոգւոյն Սրբոյ
խօսել զբանն յԱսիա: *Բայց եկեալ առ 7
Միւսիաւ՝ թեւակոխէին երթալ ՚ի Բիւթա-
նիա, և ոչ համարձակեցոյց նոցա Հոգին Յիսուսի:
*Եւ անցեալ ըստ Միւսիա՝ իջին ՚ի Տրովա- 8
դա: *Եւ տեսիլ երևեցաւ ՚ի գիշերի Պօ- 9
ղոսի. այր մի Մակեդոնացի կայր, աղաչէր
զնա՝ և ասէր. անցեալ ՚ի Մակեդոնիա՝ օգ-
նեա մեզ: *Եւ իբրև զտեսիլն ետես, 10
վաղվաղակի խնդրեցաք ելանել ՚ի Մակեդո-
նիա. ստուգեալ՝ թէ հրաւիրեաց զմեզ
Տէր աւետարանել նոցա: *Եւ ելեալ ՚ի Տրո- 11
վադայ՝ դէպ ուղիղ գնացաք ՚ի Սամոթրա-
կէ,

12 կէ, և 'ի վաղիւ անդր 'ի Նոր քաղաքն. * և
անտի 'ի Փիլիպպոս, որ է առաջին վիճակ՝
մակեդոնացւոց քաղաք՝ կողոնիխս. և անդ
'ի քաղաքին դադարեալ էաք աւուրս ինչ.
13 * յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քաղա-
քին առ գետափն՝ ուր համարէր աղօթս մա-
տուցանել. և նստեալ խօսէաք ընդ ժողո-
14 վեալ կանայսն. * Եւ կին մի անուն Լիդիա
ծիրանավաճառ՝ 'ի Թիւատիր քաղաքէ՝ եր-
կիւղած յԱյ՝ լուաւ. զորոյ Տր բաց եբաց
15 զսիրտն անսալ խօսիցն պօղոսի. * Եւ իբ-
րև մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղաչէր և
ասէր. եթէ համարիցիք զիս հաւատացեալ
Տն, մտեալ 'ի տուն իմ ագերուք. և բռ-
16 նադատեաց տարաւ զմեզ. * Եւ եղև մինչ
երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ
աղախին մի՝ զոր ունէր այս հարցուկ. որ
շահս բազումս տայր տերանց իւրոց մոլե-
17 լովն. * Սա զհետ եղեալ պօղոսի և մեր՝ ա-
ղաղակէր և ասէր. արքս այս՝ ծառայք Այ
բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանա-
18 պարհս փրկութե. * Եւ զայս առնէր 'ի բա-
զում աւուրս. Ձանձրացեալ պօղոս՝ դարձաւ
և ասէ ոգւոյն. պատուիրեմ քեզ յանուն Յի
Քի, ել 'ի դմանէ. և ել 'ի նմին ժամու.
19 * Իբրև տեսին տեարքն նորա՝ եթէ հատաւ
յոյս շահին նոցա, առեալ զպօղոս և զշիղա՝
20 ձգեցին 'ի հրապարակ առ իշխանսն. * Եւ
ածեալ զնա առ զօրագլուխսն՝ ասէին. արքս
այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ին-
21 քեանք հրէայք են, * և պատմեն մեզ օրէնս՝
զոր չէ արժան մեզ ընդունել, և ոչ առնել.

զի

զի Հռոմայեցիք եմք , * Եւ հաւաքեցաւ ամ- 22
բոխն ՚ի վ՛ր նոցա. և զօրագլուխքն պատառե-
Բ.Կոր. ցին զհանդերձս իւրեանց . Հրամայեցին
11. 25. գան հարկանել . * Եւ բազում վէրս եդեալ 23
Ա.Թես. ՚ի վ՛ր նոցա՝ արկին ՚ի բանտ, պատուիրեցին
2. 2. բանտապետին զգուշութ՟ պահել զնոսա ։
* Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնս 24
Եփես. ՚ի ներքին բանտն. և զոտս նոցա ամրեաց ՚ի
3. 13. կոճղս ։ * Եւ ՚ի մէջ գիշերոյն պօղոս և շի- 25
ղա կային յաղօթս՝ և օրհնէին զա՟ծ . և ունկն
դնէին նոցա կալանաւորքն ։ * Եւ եղև 26
յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև ՚ի շար-
ժել հիմանց բանտին. և բացան անդրէն
դրունքն ամենայն, և ամենեցուն կապանք
լուծան ։ * Իբրև զարթեաւ բանտապետն՝ 27
և տեսեալ բացեալ զդուրս բանտին, հանեալ
զսուսեր՝ և կամէր երթալ զինքն. կար-
ծէր փախուցեալ զկապեալսն ։ * Եւ գո- 28
չեաց ՚ի ձայն մեծ պօղոս՝ և ասէ. մի ինչ
գործեր դ՟ անձն քո չար, քանզի ամենեքին
աստ եմք ։ * Խնդրեաց լոյս՝ և դիմեաց ՚ի 29
ներքս. և դողահար լեալ անկաւ առաջի պօ-
ղոսի և շիղայի . * Եւ ածեալ զնս արտաքս՝ 30
ասէ . տեարք՝ զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի
ապրեցայց ։ * Եւ նոքա ասեն . հաւատա ՚ի 31
տր յս քս, և ապրեսցիս դու՝ և ամ՟ տուն քո ։
* Եւ խօսեցան նմա զբանն ա՟յ՝ և ամենե- 32
ցուն որ էին ՚ի տան նր ։ * Եւ առեալ զնս 33
՚ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ՚ի վիրաց
անտի . և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենե-
քեան անդէն վաղվաղակի ։ * Եւ ածեալ 34
զնս ՚ի տուն իւր, եդ առաջի նց սեղան . և

ու-

ուրախ եղև ամենայն տամբն հաւատացեալ-
35 յոյժ։ *Եւ իբրև այգ եղև՝ առաքեցին զօ-
րագլուխքն զնուիրակսն, և ասեն. արձա-
36 կեա զարսդ զայդոսիկ։ *Եւ պատմեաց
բանտապետն զբանսն՝ Պօղոսի, եթէ առա-
քեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ
37 ելէք և երթայք խաղաղութեամբ։ *Իսկ Պօ-
ղոս ասէ ցնա. զանց հարեալ զմեզ հրապա-
րակաւ՝ արս անմեղս Հռովմայեցիս արկին 'ի
բանտ, և արդ լռելեայն հանեն զմեզ. ոչ
այդպէս, այլ եկեսցեն՝ ինքեանք իսկ հան-
38 ցեն զմեզ։ *Եւ պատմեցին զօրագլխացն
նուիրակքն զբանսն. զահի հարան իբրև
լուան՝ թէ Հռովմայեցիք են. և եկեալ աղա-
39 չեցին զնա։ *Եւ իբրև հանին, աղաչէին
40 գնալ 'ի քաղաքէն։ *Եւ ելեալ 'ի բանտէն՝
մտին առ Լիդիա. և տեսեալ զեղբարսն՝
մխիթարեցին զնա, և գնացին։

## ԳԼ. ԺԷ.

1 Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապողո- ԺԷ
նիա, եկին 'ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողո-
2 վուրդ Հրէից։ *Եւ ըստ սովորութեան Պօ-
ղոս եմուտ առ նոսա, և 'ի շաբաթս երիս խօ-
3 սեցաւ ընդ նոսա 'ի գրոց։ *Բանայր՝ և դնէր
առաջի, ‖ եթէ պարտ էր Քրիստոսի չարչարիլ և ‖ Ղուկ.
յառնել 'ի մեռելոց. և թէ նա է Քրիստոս Յիսուս՝ ԻԴ. 46.
4 զոր ես պատմեմ ձեզ։ *Եւ ոմանք 'ի նո-
ցանէ հաւանեցան, և միաբանեցան Պօղոսի
և Շիղայի. բայց պաշտօնէիցն հեթանոսաց
էր բազմութիւն յոյժ, և 'ի կանանց գլխա-
5 ւորաց ոչ սակաւք։ *Եւ նախանձեցան
Հրէայքն,

հրեայքն, եւ առեալ արս ոմանս զանձինս
անօրէնս՝ ամբոխ արարեալ խռովեցին ըզ-
‖Հռովմ. քաղաքն. եւ կուտեալ առ յապարանսն ‖ յա-
16. 21. սոնի, խնդրեցին զնա ածել ՚ի հրապարակ.
*Եւ իբրեւ ոչ գտին զնա՝ քարշէին զյասոն 6
եւ զոմանս եղբարս առ քաղաքապետսն. բո-
ղոք բարձեալ՝ թէ որք զաշխարհս խռովե-
ցին՝ սոքա եւ այսր հասին. *զորս ընկալեալ 7
է յասոնի. եւ սոքա ամենեքեան հակառակ
հրամանացն կայսեր գործեն. թագաւոր
զայլ ասեն զյս. *Եւ խռովեցուցին զժո- 8
ղովուրդն եւ զքաղաքապետսն, որ լսէին
զայս. *Եւ առեալ երաշխաւորութիւն առ ՚ի 9
յասոնէ եւ յայլոցն՝ արձակեցին զնոսա.
*Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն յու- 10
ղարկեցին զպօղոս եւ զշիղայ ՚ի բերիա. որք
իբրեւ հասին անդր՝ ՚ի ժողովուրդն հրեից
գնացին. *Ոի սոքա էին ազնուականա- 11
գոյնք՝ քան որ ՚ի թեսաղոնիկէն էին. որք ըն-
կալան զբանն ա՟յ յօժարութ՟. հանապազ
քննէին զգիրս, եթէ իցէ այս այսպէս.
*Եւ բազումք ՚ի նոցանէ հաւատացին. եւ 12
՚ի յունաց կանանց զգաստից՝ եւ յարանց՝ ոչ
սակաւք. *Բայց իբրեւ գիտացին՝ որ ՚ի թե- 13
սաղոնիկէ հրեայքն էին, եթէ եւ ՚ի բերիայ
պատմեցաւ ՚ի պօղոսէ բանն ա՟յ, եկին եւ
անդր՝ շարժել եւ խռովեցուցանել զժողո-
վուրդն. *Յայնժամ վաղվաղակի զպօղոս 14
առաքեցին եղբարք գնալ մինչեւ ՚ի ծովեզր.
եւ մնացին շիղա եւ տիմոթէոս անդէն. *Եւ 15
որք տանէին զպօղոս, ածին զնա մինչեւ յա-
թէնս. եւ առեալ պատուէր ՚ի նմանէ առ

շի-

շիղա և տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսա-
ցեն առ նա. և գնացին։
16 *Իսկ յաթենս ի մնալ նոցա պօղոսի, զայրա- ԺԷ
նայր հոգի նր ի նմա. զի տեսանէր ի կռ-
17 ապաշտութիւն զքաղաքն։ *Իսկ խօսէր ի
ժողովրդեանն ընդ հրէայս և ընդ պաշտօ-
նեայսն՝ և ի հրապարակին զամ օր՝ որոց և
18 պատահէին։ *Ոմանք յեպիկուրեանցն, և
ի ստայիկեանց փիլիսոփայից հակառակէին
ընդ նմ. և ոմանք ասէին, զի՞նչ կամիցի սեր-
մնաքաղս այս խօսել. իսկ այլք, թէ օտա-
րոտի դիւց թուի պատմիչ լինել. քանզի
19 զյս և զյարութիւն աւետարանէր։ *Իսկ
առեալ զնա ածին յարիսպագոս, և ա-
սէին. կարասցուք գիտել՝ թէ զի՞նչ է նոր
20 վարդապետութիւնդ՝ որ ի քէն պատմի։ *Օ-
տարացուցիչս ինչ բերես ի լսելիս մեր. կա-
միմք գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս լինել։
21 *Օ ի աթենացիք ամենեքին՝ և եկքն օտարք
ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ
22 լսել նորագոյնս։ *Կացեալ պօղոս ի մէջ ա-
րիսպագին՝ և ասէ. արք աթենացիք, ըստ ա-
մենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ ըզ-
23 ձեզ։ *Քանզի շրջեալ և տեսեալ զպաշ-
տամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գը-
րեալ էր, անծանօթի այ. զոր դուքն յան-
ծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ։
24 *Ած՝ որ արար զաշխարհս և զամ՝ որ ի || Ծնն.
նմա, նա երկնից և երկրի է տր. ոչ ի ձե- 1. 1.
25 ռագործ տաճարս բնակէ, *և ոչ ի ձեռաց Վեր. 14. 14.
մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք. նա || Վեր.
տայ ամենայնի կեանս և շունչ՝ և զամ ինչ։ 7. 48.
*Ա

* Արար 'ի միոջէ արենէ զա̃մ ազգս մարդ- 26
կան՝ բնակել 'ի վ̃ր ա̃մ երեսաց երկրի.
հաստատեաց կարգեալ ժամանակս և սահ-
մանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զա̃ծ.
* զի թերևս զննիցեն զնա՝ և գտանիցեն. 27
նաև ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ
'ի մէնջ. * Զի նովաւ կեամք և շարժիմք 28
և եմք, որպէս և ոմանք 'ի ձերոց Ճարտարաց
ասացին, թէ նորա և ազգ իսկ եմք. * Եւ 29
արդ՝ որովհետև ազգք եմք այ̃, ոչ պարտիմք
համարել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝ կմ̃ քարի,
որ 'ի Ճարտարութէ̃ և 'ի մտաց մարդոյ քան-
դակեալ իցէ, զա̃ծականն լինել նմանող.
* Բայց զժամանակս անգիտութեան անտես 30
արարեալ այ̃, արդ զայս պատուիրէ մարդ-
կան՝ ա̃մ ումեք ապաշխարել. * Քանզի 31
‖ Մտթ. հաստատեաց օր՝ ‖ յորում պարտ է դատել
16. 27. զաշխարհս արդարութբ̃. 'ի ձեռն առն՝ ո-
Հռվ. 2. 6. րով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝
յարուցեալ զնա 'ի մեռելոց. * Իբրև լուան 32
յարութիւն մեռելոց, ոմանք ծաղր առնէին.
կէսքն ասէին՝ լուիցուք 'ի քէն վ̃ս այդորիկ
միւսանգամ. * Եւ ապա պօղոս ել գնաց 'ի 33
միջոյ նց̃. * Եւ ոմանք արք անկեալ 'ի նա, 34
հաւատացին. ընդ որս էր և դիոնեսիոս ա-
րիսպագացի, և կին մի անուն դամարիս՝
և այլք ընդ նոսա.

## ԳԼ. ԺԸ.

ԽԳ. Յետ այսորիկ մեկնեալ պօղոսի յաթենաց- 1
ւոց անտի՝ եկն 'ի կորնթոս. * և եգիտ 2
հրեայ զոմն անուն ակիւղաս՝ յազգէ պոնտա-
ցի,

ցի, այն ինչ եկեալ յԻտալիայ. և զՊրիսկի-
ղղա կին նորա, վասն հրամանին Կղօդեայ՝ որոշել
զամենայն հրեայս ՚ի Հռովմայ. և յարեցաւ ՚ի նոսա.
3 * Եւ վասն զի համարուեստ էր, եկաց առ նոսա՝
և գործէր. քանզի էին խորանակարք ար-
4 ուեստիւ. * Եւ խօսէր ՚ի ժողովրդեանն զա-
մէն շաբաթուց, և համոզէր ըզ-
5 հրեայս և զհեթանոսս. * Իբրև իջին ՚ի Մա-
կեդոնիայ՝ Շիղա և Տիմոթէոս, ստիպէր հոգ-
ւովն Պօղոս դնել վկայութիւն հրէիցն՝ թէ յի
6 է քսն. * Եւ յընդդէմ դառնալ նոցա՝ և ՚ի
հայհոյել, թօթափեաց զհանդերձս՝ և ասէ ցնո-
սա. արիւն ձեր ՚ի գլուխս ձեր, քաւեալ եմ
ես. ‖ յայսմ հետէ ՚ի հեթանոսս երթամ. ‖ Գծ.
7 * Եւ փոխեալ անտի՝ եմուտ ՚ի տուն ու- 13. 46.
րումն, որում անուն էր Տիտոս Յուստոս՝
պաշտօնեայ այ. որոյ տապարակիցն էին մերձ
8 ՚ի ժողովրդանոցն. ‖ * Կրիսպոս ժողովրդապետն ‖ Ա. Կոր.
հաւատաց ՚ի Տր ամենայն տամբ իւրով. և 1. 14.
բազմաց ՚ի Կորնթացւոցն լուեալ՝ հաւատա-
9 ցին և մկրտէին. * Եւ ասէ Տր ՚ի գիշերին
տեսլեանն ցՊօղոս. մի երկնչիր՝ այլ խօ-
10 սեաց՝ և մի լռեր. * Քանզի ես ընդ քեզ եմ,
և ոչ ոք ընդդէմ դարձցի քո՝ ՚ի չարչարել
զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում ՚ի
11 քաղաքիս յայսմիկ. * Եւ նստաւ անդ ամ-
րի մի և ամիսս վեց՝ ուսուցանել նոցա ըզ-
բանն այ.

12 * Ի Գաղղիոնու փոխանակու բդեշխին ԻԴ.
Աքայեցւոց, յարեան միաբան հրեայք ՚ի վր
13 Պօղոսի, և ածին զնա յատեան. * Եւ ասէին,
եթէ արտաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝

պաշ-

պաշտել զա̃ծ ։ *Եւ իբրեւ մերձ էր պօղոս 14
բանալ զբերան իւր, ասէ գաղլիոն ցՀրեայ-
սն. եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդա-
խութիւն չարեաց՝ ո՛վ Հրեայք, 'ի դէպ էր ինձ
անսալ ձեզ ։ *Ապա եթէ խնդիրք ինչ են 15
վասն բանի եւ անուանց եւ օրինաց ձերոց՝ տե-
սէք ձեզէն. քանզի դատաւոր այդպիսի ի-
րաց չկամիմ լինել ։ *Եւ մերժեաց զն̃ս յա- 16
տենէ անտի ։ *Եւ առեալ ամենեցուն յու- 17
նացն զսոսթենէս ժողովրդապետն՝ հարկա-
նէին առաջի ատենին. եւ ոչինչ զայնմանէ
գաղլիոնի փոյթ լինէր ։ *Բայց պօղոսի տա- 18
կաւին մնացեալ աւուրս բազումս, յեղբարց
|| Հռով. հրաժարեալ՝ նաւէր յասորիս. եւ || ընդ նմա
16. 3. պրիսկիղա եւ ակիւղա, || փոքրել զգլուխ 'ի
|| Թուոց 6. 18. կենքրեայ. քանզի ուխտաւոր էր ։ *Եւ հա- 19
Վերը. սեալ յեփեսոս՝ զնոսա եթող անդ, եւ ինքն
21. 24. մտեալ 'ի ժողովուրդն խօսէր ընդ Հրէայսն ։
*Եւ աղաչելոյն զնա՝ բազում ժամանակս 20
լինել անդ. եւ ոչ առ յանձն. *այլ հրա- 21
ժարեաց 'ի նոցանէ, եւ ասէ. դարձեալ շըր-
ջեցայց առ ձեզ ա̃յ կամօք ։ ամբարձաւ յե-
փեսեայ, *եւ իջեալ 'ի կեսարիայ՝ ել եւ ետ 22
ողջոյն եկեղեցւոյն. էջ յանտիոք ։ *Եւ ե- 23
ղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջէր կարգա-
ւ ը̃ գաղատացւոց աշխարհն եւ ը̃ փռիւգիա,
հաստատել զա̃մ աշակերտեալսն ։ *Հրեայ 24
ոմն ապողէս անուն՝ աղեքսանդրացի յազ-
գէ, այր ճարտարաբան, եկն եհաս յեփե-
սոս. զօրաւոր էր գրովք ։ *Սա էր տեղե- 25
կացեալ ճանապարհին տ̃ն, եւ եռայր հոգ-
ւով. խօսէր՝ եւ ուսուցանէր ճշմարտութի̃

զ̃ն

վասն յի. գիտէր միայն զմկրտութիւնն յով-
26 հաննու. * Սա սկսաւ համարձակել 'ի ժո-
ղովրդեանն. եւ լուեալ 'ի նմանէ Ակիւղաս
եւ Պրիսկիղայ, առին զնա առ ինքեանս, եւ
ճշմարտագոյնս պատմեցին նմ՛ զճանապարհն
27 այ. * Իբրեւ կամեցաւ նա գնալ յԱքայիա,
յորդորեալ եղբարքն՝ գրեցին առ աշակերտ-
սն ընդունել զնա. որ իբրեւ եհաս անդր՝
բազում նպաստ լինէր հաւատացելոցն 'ի
28 ձեռն շնորհացն. * Քանզի սաստկագոյնս զՀրէ-
այսն յանդիմանէր հրապարակաւ. ցու-
ցանել գրովք՝ եթէ քն է յս.

## ԳԼ. ԺԹ.

1 Իսկ եղեւ մինչդեռ Ապողոսն 'ի Կորնթոս ԻԻ
էր, Պօղոսի շրջեալ զվերինն կողմամբքն՝ եւ
իջեալ յԵփեսոս, եւ գտեալ զոմանս զաշա-
2 կերտս, * ասէ ցնոսա. Եթէ հոգի 'որ ընկա-
լարո՞ւք 'ի հաւատալն. Նոքա ասեն ցնա.
այլ եւ ոչ թէ հոգի 'որ գուցէ՝ լուեալ է մեր.
3 * Եւ ասէ, Իսկ յի՞նչ մկրտեցարուք. Նոքա
4 ասեն. 'Ի յովհաննու մկրտութիւն. * Եւ ա-
սէ Պօղոս. ‖ Յովհաննէս մկրտեաց մկրտու- ‖ Մատթ.
թի՛ւ ապաշխարութեան ամ՛ ժողովրդեանն. եւ 3. 11. Մարկ.
ասէր, զի որ գալոցն է յետ նր՝ 'ի նա հա- 1. 8.
5 ւատասցեն. այսինքն է՛ 'ի յս քս. * Եւ իբրեւ Ղուկ.
6 լուան, մկրտեցան յանուն տն յի. * Եւ 'ի 3. 16.
դնել 'ի վերայ նց Պօղոսի զձեռն, եկն հո- Յովհ.
գին 'որ 'ի վ՛ նոցա. խօսէին լեզուս՝ եւ մար- 1. 26.
7 գարէանային. * Եւ էին ամենեքեան արք Գծ. 1. 5.
8 իբրեւ երկոտասան. * Եւ մտեալ 'ի ժողո- 11. 16.
վուրդն՝ համարձակէր ամիսս երիս. խօսէր՝
եւ

և հաւանեցուցանէր վս արքայութեն Այ։
*Իբրև ոմանք խստանային՝ և ընդդէմ 9
դառնային բամբասել զՃանապարհն առա-
ջի բազմութեն, մեկնեալ ՚ի նոցանէ՝ որո-
շեաց զաշակերտսն. հանապազօր խօսէր ՚ի
դպրատանն Տիւրաննեայ ուրումն։ *Իսկ այս ե- 10
ղև զերկեամ մի, մինչև ամ բնակչացն ա-
սիացւոց լսել զբանն Տն՝ Հրէից և Հեթանո-
‖ Վեր. սաց։ *‖Իսկ զօրութիւնս ոչ սակաւս առնէր 11
2. 43. Ած ՚ի ձեռն Պօղոսի. *մինչ զի և ՚ի հիւան- 12
դըս տանել ՚ի քրտանէ նր թաշկինակս կամ
վարշամակս, և մերժել ՚ի նոցանէ ախտի-
ցըն, և այսոց չարաց ելանել։ *Յանդգնե- 13
ցան ոմանք և ՚ի շրջող Հրէիցն՝ որ երդմնե-
ցուցիչքն էին, անուանել ՚ի վր այնոցիկ՝
որ ունէին այսս չարս, զանուն Տն Յի, և
ասէին. երդմնեցուցանեմ զձեզ ՚ի Յս զոր
Պօղոս քարոզէ։ *Էին ուրումն սկևեայ 14
Հրէի քահանայապետի՝ եօթն որդիք, որ
զայս առնէին։ *Պատասխանի ետ այսն 15
չար՝ և ասէ ցնս. զՅս գիտեմ և զՊօղոս ճա-
նաչեմ, բայց դուք ո՞վ էք։ *Իսկ վազեաց 16
այրն՝ յորում էր այսն չար՝ ըմբռնեալ զեր-
կոսեան յաղթահարեաց զնս, մինչև մերկս
և վիրաւորս փախչել ՚ի տանէ անտի։ *Իսկ 17
յայտնի եղև ամ Հրէից և Հեթանոսաց՝ որ
բնակեալ էին յեփեսոս. և անկաւ երկիւղ
յամենեսեան ՚ի նոսա. և մեծանայր անուն
Տն Յի։ *Իսկ այլ բազումք ՚ի հաւատացե- 18
լոցն գային, և խոստովան լինէին՝ և պատ-
մէին զգործս իւրեանց։ *Իսկ բազումք ՚ի 19
կախարդատարացն բերեալ զգիրսն, այրէին

առա-

առաջի ամենեցուն. և համարեցան զգինս
նոցա՝ և գտանէին արծաթոյ բիւրս հինգ։
20 *Զի այսպէս բանն ա̄յ աճէր՝ և զօրանայր։
21 *Զի իբրև կատարեցաւ այս, եդ Պօղոս ՚ի ԼԱ.
մտի շրջել ընդ Մակեդոնիա և ը̄ Աքայիա՝
և գալ յե̄մ. ասէ, եթէ յետ երթալոյն
իմ անդր, պարտ է ինձ և զՀռովմ տեսա-
22 նել։ *Առաքեաց ՚ի Մակեդոնիա երկուս ՚ի
պաշտօնէիցն իւրոց զՏիմոթէոս և զԵրաս-
տոս, և ինքն մնաց ժամանակ ինչ յԱսիա։
23 *Զի եղև ՚ի ժամանակին յայնմիկ խռովու-
24 թիւն ոչ սակաւ վ̄ս ճանապարհին։ *Իսկ Դե-
մետրիոս անուն՝ արծաթագործ, գոր-
ծէր մեհեանս արծաթիս Արտեմի դից. և
25 տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ. *որ
ժողովեաց ևս զձեռագէտս արուեստին, և
ասէ. արք՝ դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայ-
26 սմ գործոյ է շահ մեզ։ *Եւ տեսանէք և
լսէք՝ եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գը-
րեթէ զա̄մ իսկ Ասիացւոց՝ Պօղոս այս հա-
ւանեցուցեալ շրջեաց բազում ժողով՝ ա-
սել, թէ ոչ են աստուածք՝ ձեռագործ։
27 *Զի ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս գալ
՚ի յանդիմանութիւն, այլ և զմեծին ա̄յ Ար-
տեմեայ զմեհեանն յոչինչ համարել. նաև
քակելոց ևս իցէ մեծութիւն նր̄, զոր ա̄մ Ա-
28 սիա՝ և տիեզերք պաշտեն։ *Եւ զայս իբրև
լուան, լի եղեն բարկութ̄բ. աղաղակէին և
29 ասէին, մեծ է Արտեմիս Եփեսացւոց։ *Եւ
լցաւ քաղաքն խռովութ̄բ. դիմեցին առ հա-
սարակ ՚ի թէատրոնն. յափշտակէին զԳայ-
իոս և զԱրիստարքոս Մակեդոնացի՝ զուղե-
կիցսն

կիցսն Պօղոսի. * Բայց Պօղոս իբրեւ կամե- 30
ցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա ա-
շակերտքն. * Ոմանք և յասիապետացն՝ որ 31
էին նմա բարեկամք, յղէին առ նա՝ և աղա-
չէին, մի տալ զանձն 'ի թատրոնն. * Այլք 32
այլ ինչ աղաղակէին. զի էր ժողովն նոցա
խառնակ. և բազումք 'ի նոցանէ ոչ գիտէին,
թէ վն՞ էր ժողովեալ իցեն. * Եւ յամբո- 33
խէն բազմունք յառաջ կալան զԱղեքսանդ-
րոս. և իբրեւ ածին զնա Հրէայքն յառաջ,
Աղեքսանդրոս շարժեաց զձեռն՝ և կամէր
պատասխանի տալ ամբոխին. * Իբրեւ գի- 34
տացին՝ եթէ այրն Հրեայ է, միաբարբառ ե-
ղեւ յամենեցունց՝ իբրեւ ժամս երկուս ա-
ղաղակել, եթէ մեծ է Արտեմիս Եփեսաց-
ւոց. * Լռեցոյց դպրապետն զամբոխն՝ և ա- 35
սէ. Արք Եփեսացիք՝ ո՞վ է 'ի մարդկանէ՝
որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենա-
զարդ՝ մեծին Արտեմեայ դիցն, և դիոպե-
տեայ. * Եւ զի այդ այդպէս է անհակառակ՝ 36
ձեզ պարտ է հանդարտել, և մի ինչ յանդգ-
նութեամբ գործել. * Ածէք զարսդ զայդոսիկ 37
այսր, ոչ մեհենակապուտս՝ և ոչ հայհոյիչս
աստուածոյ մերոյ. * Որ եթէ Դեմետրիոս 38
և որք ընդ նմա Ճարտարքդ՝ ունիցին ինչ ընդ ու-
մեք բանս, յատեանս երթիցեն, և դատա-
ւորք գոն, և ամբաստանեսցեն զմիմեանս.
* Ապա եթէ վն այլ իրիք խնդիրք իցեն՝ յօրի- 39
նաւոր ժողովն վՃարեսցին. * Քանզի և 40
մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝
առանց իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ
կարասցուք պատասխանի տալ վասն ժողո-
վոյս

վայս այսորիկ. Եւ զայս ասացեալ՝ արձա-
կեաց զժողովսն։

## ԳԼ. Ի.

1 Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց պօ- Ի Ա
ղոս զաշակերտսն, եւ մխիթարեաց. ողջոյն
2 ետ՝ եւ ել գնաց ՚ի Մակեդոնիա։ *Եւ շրջ-
ջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ եւ մխի-
թարեալ զնո բանիւք բազմօք, եկն յԵլլա-
3 դայ։ *Իբրեւ արար անդ ամիս երիս, եղե-
նմա դաւ ՚ի Հրէիցն, մինչդեռ կամէր ելա-
նել յասորիս. խորհուրդ կալաւ դառնալ
4 ընդ Մակեդոնիայ։ *Եւ երթայր ընդ նմա
մինչեւ յասիայ՝ ‖Սոսիպատրոս Պիւռեայ բերիա- ‖Հռովմ.
ցի, ‖ եւ ՚ի Թեսաղոնիկեցւոց՝ Արիստարքոս 16. 21. ‖Կողոս.
եւ Սեկունդոս՝ եւ Գայիոս Դերբեցի եւ Տիմո- 4. 10.
թէոս, եւ Ասիացիք՝ ‖Տիւքիկոս եւ Տրոփիմոս ‖Եփես.
5 *Սոքա յառաջ երթեալ մնային մեզ ՚ի Տրո- 6. 21.
6 վադայ։ *Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն
բաղարջակերաց ՚ի Փիլիպեայ՝ եւ եկաք առ-
նա ՚ի Տրովադա՝ մինչեւ յաւուրս հինգ. անդ
7 դադարեցաք աւուրս եօթն։ *Եւ յաւուրն
շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք բե-
կանել զհացն, Պօղոս խօսէր ընդ նոսա՝ զի գնա-
լոց էր ՚ի վաղիւ անդր. եւ երկայնեաց ըզ-
8 բանսն մինչեւ ՚ի մէջ գիշերոյն։ *Էին լամ-
տերք բազումք ՚ի վերնատանն, ուր էաքն
9 ժողովեալ։ *Եւ նստէր ոմն երիտասարդ՝
անուն Եւտիքոս՝ ՚ի վերայ պատուհանին, ներ-
հէր ՚ի քուն թմբրութեան՝ ՚ի խօսելն Պօղոսի
յաճախ, ընկղմեալ ՚ի քնոյ անտի՝ անկա-
յերրորդ դստիկոնէն ՚ի վայր, եւ բարձաւ մե-

ռեալ ։ *Եւ իջեալ պօղոսի անկանէր զնո- 10
վաւ . առնոյր զնա ընդ գիրկս՝ եւ ասէր . մի
խռովիք, զանզի հոգի սորա ՚ի սմին է ։ *Եւ 11
ել ելեալ զհացն՝ եւ ճաշակեաց . եւ բազում
եւս խօսեցաւ մինչեւ յառաւօտ , եւ ապա ել
գնաց ։ *Եւ ածին զպատանին կենդանի , 12
եւ մխիթարեցան ոչ սակաւ ։ *Եւ մեք մը- 13
տեալ ՚ի նաւն՝ ամբարձաք յասոնն . անտի
ակն ունէաք միւսանգամ առնուլ զպօղոս .
զի այնպէս պատուիրեալ էր՝ մինչ ինքն ըն-
ցամաքաւն երթալոց էր ։ *Եւ իբրեւ գը- 14
տեցաւ մեզ ՚ի յասոնն , առեալ զնա եկաք ՚ի
միտիլինէ ։ *Եւ անտի նաւեալ՝ ՚ի վաղիւ- 15
անդր հասաք հանդէպ քիոյ . եւ ՚ի միւս օրն
հասաք ՚ի սամոս . եւ ՚ի վաղիւ անդր եկաք
՚ի մելիտոն ։ *Զի ՚ի մտի եդեալ էր պօղո- 16
սի նաւել առ եփեսոսիւ՝ որպէս զի մի լիցի նմա
ժամանակ ինչ յամել յասիայ . քանզի փու-
թայր եթէ հնար ինչ իցէ նմա՝ զօրն պեն-
տեկոստէից երթալ յերուսաղէմ ։

ՕԿ *Եւ ՚ի մելիտոնէ յղեալ յեփեսոս՝ կոչեաց 17
զերիցունս եկեղեցւոյն ։ *Եւ իբրեւ եկին 18
առ նա , ասէ ցնոսա . դուք ձեզէն գիտէք
յօրէ յառաջնմէ՝ յորմէ եկի յասիայ . որպէս
ը̄ ձեզ զա̄մ ժամանակսն եղէ . *Ծառայել 19
տ̄ն ա̄մ խոնարհութ̄բ եւ բազում արտասուօք
եւ փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ ՚ի նենգու-
թենէ հրէից ։ *Որպէս ոչինչ զանգիտեցի 20
յօգտակարացն չպատմել ձեզ՝ եւ ուսուցա-
նել զձեզ հրապարակաւ եւ ատտունս . *տալ 21
վկայութ̄ի հրէից եւ հեթանոսաց զապաշխա-
րութիւնն՝ որ առ ա̄ծ , եւ զհաւատսն՝ որ ՚ի

տ̄ր

22 տր մեր յս քս ։ * Եւ արդ՝ ահաւասիկ ես
կապեալ հոգւով երթամ յէմ. եւ որ ինչ
23 անդ ընդ իս անցանելոց իցէ՝ չգիտեմ ։ * Բայց
զի Հոգին սր ըստ քաղաքաց վկայէ ինձ՝ եւ
ասէ, եթէ կապանք եւ նեղութիւնք մնան քեզ ։
24 * Այլ ոչ ինչ համարիմ զանձն իմ պատ-
ուական՝ որպէս զկատարել զընթացս իմ ու-
րախութբ, եւ զպաշտօնն զոր առի 'ի տնէ յսէ՝
25 վկայ լինել աւետարանի շնորհացն այ ։ * Եւ
արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, թէ ոչ եւս տե-
սանելոց էք զերեսս իմ դուք ամենեքեան,
յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն ։
26 * Վասն որոյ վկայութիւն դնեմ ձեզ յաւուր
յայսմիկ՝ զի սուրբ եմ յարենէ ամենեցուն ։
27 * Քանզի ոչ խորշեցայ 'ի պատմելոյ ձեզ
28 զամ կամս այ ։ * Զգոյշ կացէք անձանց եւ
ամ հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սր տե-
սուչ՝ հովուել զժողովուրդ տն, զոր ապրե-
29 ցոյց արեամբ իւրով ։ * Քանզի գիտեմ ես՝
եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յա-
փշտակօղք 'ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօ-
30 տին ։ * Եւ 'ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօ-
սիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւր-
31 եանց ։ * Վասն այսորիկ արթո՛ւն կացէք.
եւ յիշեցէք՝ զի զերիս ամ մի զցայգ եւ զցե-
րեկ՝ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի
32 մի իւրաքանչիւր ։ * Եւ արդ՝ յանձն առնեմ
զձեզ այ՝ եւ բանի շնորհաց նր, որ կարօղն է
շինել՝ եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սրբս
33 ամ ։ * Արծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կմ հանդեր-
34 ձից՝ ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ ։ * Դուք
ինքնին գիտէք՝ ‖ զի զպէտսն իմ եւ որոց ընդ ‖ 1. Կորն.
իսն 4. 12.

1. Թես. իսն էին՝ պաշտեցին ձեռքս այս։ * Եւ զամ- 35
2. 9. նայն ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաս-
2. Թես. տակել, և դարմանել զտկարանդս. և յիշել
3. 8. զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ասաց. Երա-
նելի է մանաւանդ տալ՝ քան առնուլ։ * Եւ 36
զայս իբրև ասաց, եդեալ ծունր ամենե-
քումբք՝ եկաց յաղօթս։ * Բազում լալիւն 37
եղև ամենեցուն. և անկեալ զպարանոցաւն
Պօղոսի՝ համբուրէին զնա։ * Մորմոքէին 38
մանաւանդ ՚ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ
ոչ ևս տեսանելոց են զերեսս նորա. և յու-
ղարկեցին զնա ՚ի նաւ անդր։

## ԳԼ. ԻԱ.

ՉԲ Եւ իբրև եղև ելանել մեզ և մեկնել ՚ի նո- 1
ցանէ, համբարձեալ գնացեալ եկաք ՚ի Կով. և
՚ի վաղիւն անդր ՚ի Հռոդոս, և անտի ՚ի Պա-
տարա։ * Եւ գտեալ նաւ մի՝ զի երթայր 2
՚ի Փիւնիկէ, և ելեալ ՚ի նա գնայաք։ * Եւ 3
յայտ եղեալ Կիպրեայ՝ թողաք զնա ՚ի ձա-
խակողմն, նաւեցաք յԱսորիս, և իջաք ՚ի
Տիւրոս. քանզի անդ էր նաւն թափելոց բե-
ռանցն։ * Եւ գտեալ զաշակերտսն՝ կա- 4
ցաք անդ աւուրս եօթն. որք ասէին ցՊօղոս
՚ի ձեռն Հոգւոյն՝ մի ելանել յԵէմ։ * Եւ 5
իբրև եղև մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ
գնայաք, յուղարկէին զմեզ ամենեցուն համ-
դերձ կանամբք և որդւովք մինչև արտաքոյ
քաղաքին. և եդեալ ծունր առ ծովեզերբն՝
կացաք յաղօթս։ * Եւ հրաժարեցաք ՚ի մի- 6
մեանց՝ և ելաք ՚ի նաւն. և նոքա դարձան
յիւրեանց տեղիս։ * Եւ մեր զնաւն աւար- 7
տեալ

թեալ 'ի տիւրոսէ՝ հասաք 'ի պտողեմայիդա․
և ողջոյն տուեալ եղբարց՝ եղաք օր մի առ
8 նոսա։ * Եւ 'ի վաղիւ անդր ելեալ անտի՝ ե-
կաք 'ի կեսարիա․ և մտեալ յապարանսն
փիլիպպոսի աւետարանչի, ‖ որ էր յեօթանց ‖ Վէ։ 6։ 5․
9 անտի, ագաք առ նմա։ * Նորա էին դըս-
10 տերք չորք՝ կոյսք մարգարէք։ * Եւ 'ի լի-
նելն մեր անդ աւուրս բազումս, էջ ոմն 'ի
հրէաստանէ մարգարէ՝ անուն ագաբոս։
11 * Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին պօ-
ղոսի՝ կապեաց զոտս և զձեռս իւր, և ասէ․
այսպէս ասէ հոգին սբ․ զայրն որոյ գօտիս
այս է՝ այսպէս կապեսցեն յեհմ հրէայք, և
12 մատնեսցեն 'ի ձեռս հեթանոսաց։ * Եւ իբ-
րև լուաք զայն՝ աղաչէաք մեք․ և որ 'ի տեղ-
13 ւոջն էին՝ չելանել նմա յեհմ։ * Յայնժամ
պատասխանի ետ պօղոս․ զի՞նչ գործէք, զի՞
լայք և ճմլեցուցանէք զսիրտ իմ․ քանզի
ես ոչ միայն կապելոյ՝ այլ և մեռանելոյ յեհմ
պատրաստ եմ վասն անուանն տն յի քի․
14 * Եւ 'ի չառնուլն նր՝ լռեցաք, ասեմք․ տն
կամք լիցին։
15 * Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ ՕԳ․
16 ելանէաք յեհմ։ * Եկին ընդ մեզ և յաշա-
կերտաց անտի կեսարացւոց, և տանէին ընդ
մեզ առ որում վանս ունելոյ էաք՝ մնասոնի
ումեմն կիպրացւոյ՝ առաջին աշակերտի։
17 * Եւ 'ի մտանելն մեր յեհմ, խնդութբ ըն-
18 կալան զմեզ եղբարքն։ * 'Ի վաղիւ անդր ե-
մուտ պօղոս ընդ մեզ առ յակովբոս․ և եկին
19 ամ երիցունքն։ * Եւ ողջոյն տուեալ նոցա՝
պատմէր մի ըստ միոջէ՝ զոր արար ած 'ի հե-
թա-

ժամանս 'ի ձեռն պաշտաման նորա։ * Եւ նոքա 20
լուեալ՝ փառաւոր առնէին զԱծ։ և ասեն
ցնա. տեսանես եղբայր՝ քանի բիւրք են հա-
ւատացելոցն հրէից, և ամենեքեան նախան-
ձաւոր օրինացն են։ * Բայց իրազեկ եղեն 21
վ՛ս քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես 'ի
մովսիսէ՝ որոց 'ի հեթանոսս ամ հրէայք են.
ասես՝ մի թլփատել զորդիս նոց, և մի ըստ կրօ-
նիցն գնալ։ * Արդ՝ զինչ լինիցի՝ ապաքէն 22
լսեն, եթէ եկեալ ես։ * Արդ զայս արա զոր 23
ասեմք քեզ. են 'ի մեզ արք չորք ուխտաւորք
յանձինս իւրեանց. * զնոսա առեալ՝ սրբեսցիս 24
Թւ. 6. 18. ընդ նոսա. և ծախեա ինչ 'ի նոսա՝ զի գերծցեն
Վեր. 18. 18. զգլուխս, և գիտասցեն ամենեքին, թէ զո-
րոց իրազեկն եղեն զքէն՝ ոչինչ է. այլ մա-
քանիս և դու պահել զօրէնս։ * Բայց վ՛ս 25
Վեր. 15. 20. և 29. հաւատացելոցն հեթանոսաց, մեք առա-
քեցաք՝ մեք ընտրեցաք, մի ինչ այնպիսի պա-
հել նոցա. բայց միայն զգուշանալ 'ի կռոց
զոհելոյ, և յարենէ, և 'ի հեղձուցելոյ, և
'ի պոռնկութենէ։ * Յայնժամ պօղոս ա- 26
ռեալ զարսն՝ 'ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ
եմուտ 'ի տաճարն. յայտ առնել զկատա-
րումն աւուրցն սրբութեան, մինչև մատուցաւ 'ի
վերայ իւրաքանչիւր ուրուք 'ի նոցանէ պա-
տարագ։

ՕԳ

* Եւ իբրև մերձ էին եօթն աւուրքն 'ի կա- 27
տարել, տեսեալ զնա 'ի տաճարին ասիացւոց
հրէիցն՝ զեղուին վրդովել զամ զամբոխն. և
արկեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին. * արք 28
իսրայելացիք՝ օգնեցէք. այս այր է՝ որ հակառակ
ժողովրդեանն և օրինաց և տեղւոյս այսորիկ

ամե-

ամենեցուն ամ՟ ուրեք ուսուցանէ . մինչև
հեթանոս ևս եմոյծ ՚ի տաճարն՝ և պղծեաց
29 զս՟ր տեղիս . * Քանզի էր յառաջագոյն տե-
սեալ ‖ զտրոփիմոս զեփեսացի ՚ի քաղաքին ը՟ ‖ Վէր .
նմա . զոր կարծէին , եթէ ՚ի տաճար մուծ- 20 . 4 .
30 եմոյծ պօղոս . * Շարժեցաւ քաղաքն ամ՟ , 2 . Տիմ .
և կուտեցաւ ժողովուրդն . և առեալ զպօ- 4 . 20 .
ղոս՝ ձգէին արտաքոյ տաճարին . և վաղվա-
31 ղակի փակեցան դրունքն . * Եւ խնդրէին զը-
նա սպանանել . եհաս գոյժ ՚ի հազարապետս
32 գնդին , եթէ խռովեալ է ամ՟ եմ՟ . * Որոյ
անդէն առեալ զօրականս և հարիւրապետս՝
դիմեաց ՚ի վ՟ր նց . և նք տեսեալ զհազարա-
պետն և զզօրականսն , դադարեցին ՚ի հար-
33 կանելոյ զպօղոս . * Յայնժամ մօտեցեալ
հազարապետն կալաւ զնա , և հրամայեաց
կապել երկուս շղթայիւք՝ և հարցանէր՝ թէ
34 ո՞ իցէ , և զի՞նչ իցէ արարեալ . * Այլք այլ
ինչ աղաղակէին զնմանէ յամբոխին . իբրև
ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին ,
35 հրամայեաց ածել զնա ՚ի բանակն . * Եւ
իբրև եհաս յաստիճանսն , գէտ եղև բառ-
նալ բերել զնա ՚ի զօրականացն՝ վ՟ս բռնու-
36 թեան ամբոխին . * Քանզի զհետ երթայր
բազմութիւն ժողովրդեանն , և աղաղակէին՝ բարձ
37 զդա . * Եւ մինչ դեռ մտանելոց էր պօղոս ՚ի
բանակն , ասէ ցհազարապետն՝ եթէ ար-
ժան իցէ ինձ խօսել ընդ քեզ . և նա ասէ .
38 յունարէն գիտես . * Ոչ ապաքէն դու իցես
եգիպտացին , որ յառաջ քան զայս աւուրս
ապստամբեցուցեր՝ և հաներ յանապատ զչորս
39 հազարս արս սիկարեանս . * Եւ ասէ պօ-
ղոս ,

ղոս, ես եմ այր Հրեայ 'ի Տարսոնէ Կիլիկեց-
ւոց. ոչ անծանօթ քաղաքի քաղաքացի. աղա-
չեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո-
վուրդդ. * Եւ 'ի հրամայելն նորա, Պաւղոս 40
կացեալ 'ի վերայ աստիճանացն՝ շարժեաց ըզ-
ձեռն ժողովրդեանն. իբրեւ բազում լռու-
թիւն լինէր, սկսաւ բարբառել Եբրայեցւոց
բարբառովն՝ եւ ասէ.

## ԳԼ. ԻԲ.

Արք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ այժմ 1
առ ձեզ պատասխանատուութեանս. * Իբ- 2
րեւ լուան՝ եթէ Եբրայեցւոց լեզուաւն բար-
բառեցաւ նոցա՝ առաւել եւս զադարեցին 'ի
լռութե. * Եւ ասէ. Ես եմ այր Հրեայ ծը- 3
նեալ 'ի Տարսոնէ Կիլիկեցւոց՝ սնեալ 'ի քա-
ղաքիս յայսմիկ առ ոտս Գամաղիելի, խրա-
տեալ ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց.
նախանձայոյզ էի ա՛յ՝ որպէս ամենեքին դուք
Ա Վեր. այսօր. * Ա Որ զայս ճանապարհ հալածեցի 4
8. 3. մինչեւ 'ի մահ, կապել եւ մատնել 'ի բանտս
արս եւ կանայս. * որպէս եւ քահանայապետդ 5
Ա Վեր. վկայէ ինձ՝ եւ ամենայն ծերակոյտդ. Ա յորոց
9. 2. եւ թուղթս առեալ առ եղբարս 'ի Դամաս-
կոս երթայի, ածել եւ անտի կապեալս յե-
րուսաղէմ, զի պատժեսցին. * Եւ եղեւ ինձ 6
'ի գնալն եւ 'ի մերձենալ 'ի Դամասկոս, ըն-
միջաւուրբն յանկարծակի յերկնից փայլա-
տակեալ լոյս սաստիկ զինեւ. * եւ անկայ յեր- 7
կիր, եւ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս. Սա-
ւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս. * Եւ ես 8
ետու պատասխանի՝ թէ ո՞վ ես տէր. եւ ասէ

ցիս,

ցիս, Ես եմ Յիսուս Նազովրեցին՝ զոր դուն հալա-
9 ծես: * Բայց որ ընդ իմն էին՝ զլոյսն տեսա-
նէին. այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր ընդ իս:
10 * Եւ ասեմ, զի՞նչ արարից Տէր: Եւ ասէ ցիս
Տէր. յարուցեալ երթիցես ՚ի Դամասկոս, և
անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի որ հրա-
11 մայեալ է քեզ առնել: * Եւ իբրև ոչ տեսանէի ՚ի
փառաց լուսոյն այնորիկ, ձեռնունէ ձգեալ
՚ի նոցանէ՝ որ ընդ իմն էին, մտի ՚ի Դամաս-
12 կոս: * Անանիա ոմն այր երկիւղած ըստ օրի-
նաց, վկայեալ յամենայն բնակչաց՝ որ ՚ի Դամաս-
13 կոս Հրէայքն էին. * Եկն եկաց առ իս՝ և ա-
14 սէ. Սաւուղ եղբայր՝ ՚ի վեր հայեաց: * Եւ
ես նոյնժամայն ՚ի վեր հայեցայ ՚ի նա. Եւ
նա ասէ ցիս. Աստուած հարցն մերոց յառաջագոյն
ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նորա, և տե-
սանել զարդարն, և լսել բարբառ ՚ի բերա-
15 նոյ նորա. * զի եղիցես վկայ նորա առ ամենայն մար-
16 դիկ որոց տեսերն և լուար: * Եւ արդ՝ զի՞
հեղգաս, արի մկրտեաց և լուա զմեղս քո ՚ի
17 կարդալ զանուն նորա: * Եւ եղև իմ ՚ի
դառնալն յԵրուսաղէմ՝ և կալ յաղօթս ՚ի տաճա-
18 րին, լինել ՚ի զարմացման. * Եւ տեսանել
զնա՝ զի ասէր ցիս. փութա՛ ել յԵրուսաղեմէ վաղ-
վաղակի. քանզի չեն ընդունելոց զքո վկայու-
19 թիւն վասն իմ: * Եւ ես ասեմ. Տէր՝ նոքեանք
իսկ գիտեն՝ ‖ զի ես էի որ ՚ի բանտս տայի, ‖ Վեր. Ը. Գ.
և գան հարկանէի ըստ ժողովրդոց զհաւա-
20 տացեալս ՚ի քեզ: * Եւ յորժամ հեղոյր ա-
րիւնն ստեփաննոսի վկայի քո, ‖ ես ինքն էի՝ ‖ Վեր. Է. Ծէ.
որ ՚ի վերայ կայի, և կամակից լինէի սպան-
ման նորա, և պահէի զհանդերձս սպանողացն
նորա:

նց ։ * Իսկ ասէ ցիս. գնա, զի ես 'ի հեթա- 21
նոսս հեռաւորս առաքեցից զքեզ ։ * Իսկ 22
ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան. ապա
բարձին զձայնս իւրեանց՝ եւ ասեն. բարձ
յերկրէ զայդպիսիդ՝ զի չէ պարտ այդպի-
սւոյդ կեալ ։ * Իսկ յաղաղակելն նց՝ եւ ընկե- 23
նուլ զհանդերձս՝ եւ զփոշին ցանել յօդս,
* հրամայեաց հազարապետն մուծանել ըզ- 24
նա 'ի բանակն. ասէր՝ գանիւ հարցանել
զնա, զի գիտասցէ վ՟ն որոյ յանցման այնպէս
աղաղակէին զնմանէ ։ * Իսկ իբրեւ պրկեցին 25
զնա փոկովք, ասէ պօղոս ցհարիւրապետն
որ 'ի վ՟յ կայր. եթէ զայր հռովմայեցի եւ
անպարտ պարտ իցէ ձեզ գան հարկանել ։
* Իբրեւ լուաւ հարիւրապետն, մատուցեալ 26
առ հազարապետն պատմեաց՝ եւ ասէ. զի՞նչ
կամիս առնել՝ քանզի այրս այս հռովմայեցի
է ։ * Իսկ մատուցեալ հազարապետն, ասէ 27
ցնա. ասա դու ցիս՝ հռովմայեցի՞ ես. եւ նա
ասէ, այո ։ * Պատասխանի ետ հազարապետն. 28
ես բազում գնոց զքաղաքացութիւնս զայս ըս-
տացայ ։ ասէ պօղոս. ես ծնեալ իսկ 'ի դը-
մին եմ ։ * Իսկ վաղվաղակի 'ի բաց կացին 'ի 29
նմանէ՝ որ հարկանելոցն էին զնա. եւ հա-
զարապետն իսկ երկեաւ, իբրեւ գիտաց ե-
թէ հռովմայեցի է. եւ զի կապեալն էր
զնա ։

ԾՕ

* Իսկ 'ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմա- 30
րիտն, թէ զի՞նչ չարախօսեին իցէ հրէիցն.
արձակեաց զնա՝ եւ հրամայեաց գալ զքա-
հանայապետսն եւ զամ՟ ատեանն. եւ իջու-
ցեալ զպօղոս կացոյց 'ի մէջ նց ։

ԳԼ.

## ԳԼ․ ԻԳ․

1 Եւ հայեցեալ պօղոսի յատեանն՝ ասէ .
արք եղբարք՝ ես ամենայն ուղիղ մտօք գնա-
2 ցեալ եմ առաջի այ մինչեւ ցայսօր ։ * Եւ
քահանայապետն անանիա հրամայեաց սպա-
սաւորացն հարկանել զբերան նորա ։
3 * Յայնժամ պօղոս ասէ ցնա . հարկանելոց
է զքեզ ած՝ որմ բռեալ . եւ դու նստիս դա-
տել զիս ըստ օրինաց , եւ առանց օրինաց հրա-
4 մայես զիս հարկանել ։ * Եւ որ շուրջն կային՝
5 ասեն . զքահանայապետն այ հայհոյես ։ * Եւ
ասէ պօղոս . ոչ գիտէի եղբարք՝ եթէ իցէ
քահանայապետ . գրեալ իսկ է՝ ‖ զիշխան ժո- ‖ Ելից․ 22․ 28․
6 ղովրդեան քո մի հայհոյեսցես ։ * Իբրեւ գի-
տաց պօղոս՝ եթէ մի կողմն սադուկեցւոց է՝
եւ միւսն փարիսեցւոց , աղաղակէր ՚ի մէջ ա-
տենին . արք եղբարք՝ ‖ ես փարիսեցի եմ , ‖ Փիլպ․
որդի փարիսեցւոյ . վս յուսոյ եւ յարութեան 3․ 5․
7 մեռելոց՝ ես աւասիկ դատիմ ։ * Եւ զայս
իբրեւ ասաց՝ եղեւ հերձուածք փարիսեցւոցն
եւ սադուկեցւոց , եւ պատառեցաւ բազմու-
8 թիւն ։ * ‖ Զի սադուկեցիքն ասեն , չիք ‖ Մտթ․
յարութի , ոչ հրեշտակ՝ եւ ոչ հոգի . բայց փա- 22․ 23․
9 րիսեցիքն խոստովանին զերկոսեան ։ * Եւ
եղեւ աղաղակ մեծ . յառն կացին ոմանք ՚ի
դպրաց անտի ՚ի կողմանէ փարիսեցւոց , հա-
կառակէին եւ ասէին . ոչինչ չարութի գտ-
տանեմք յառն յայսմիկ , բայց թէ հոգի խօ-
10 սեցաւ ՚ի դմա՝ կամ հրեշտակ ։ * Եւ ՚ի բազ-
մանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն
թէ գուցէ ձեղքեսցի պօղոս ՚ի նոցանէ , հրա-
մայեաց

հրամայեաց զօրականին իջանել յափշտակել զ-
նա ՚ի միջոյ նոցա, եւ ածել ՚ի բանակն: *Եւ 11
՚ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տր̃, եւ
ասէ. քաջալերեա՛ց պօղէ, զի ոպ̃ վկայեցեր
վասն իմ յԵմ̃, նոյնպէս պարտ է քեզ եւ ՚ի
Հռովմ վկայել:

Օ.Լ. *Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով Հրէի- 12
ցըն նզովեցին զանձինս, ոչ ուտել եւ ոչ ըմ-
պել՝ մինչեւ սպանցեն զպօղոս: *Եւ էին ա- 13
ւելի քան զքառասուն՝ որոց զայս ընդ մի-
մեանս երդմունս արարեալ էր: *Որք մա- 14
տեան առ քահանայապետսն եւ երիցունս՝ եւ
ասեն. նզովիւք նզովեցաք զանձինս՝ ոչինչ
ճաշակել մինչեւ սպանցուք զպօղոս: *Արդ 15
դուք զգացուցէք հազարապետին հանդերձ
ատենիւ, զի իջուսցէ զնա առ ձեզ, ոպ̃ թէ
կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմա-
նէ. եւ մեք յառաջ քան զմօտել նորա՝ պատ-
րաստ եմք ՚ի սպանանել զնա: *Եւ լուեալ 16
քեռորդւոյն պօղոսի զդաւաճանութիւն, եկն
եմուտ ՚ի բանակ անդր՝ պատմեաց պօղոսի:
*Եւ կոչեցեալ պօղոսի առ իւր զմի ՚ի հա- 17
րիւրապետացն՝ ասէ. զպատանիս զայս
տար առ հազարապետն, զի ունի ինչ պատ-
մել նմա: *Եւ նա առեալ զնա տարաւ առ 18
հազարապետն՝ եւ ասէ. կապեալն պօղոս կո-
չեաց զիս, եւ աղաչեաց զպատանիս զայս ա-
ծել առ քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ:
*Կալեալ զձեռանէ նորա հազարապետին՝ 19
գնաց մեկուսի, հարցանէր՝ թէ զի՞նչ ունիս
խօսել ընդ իս: *Եւ նա ասէ. հրէայք մի- 20
աբանեցին աղաչել զքեզ, զի ՚ի վաղիւ զպօ-

ղոս

զոս իջուցես յատեան, իբրև թէ կամիցին
ինչ ճշմարտագոյնս հարցանել վան նորա.
21 * արդ՝ դու մի անսայցես նոցա. քանզի դա-
րան գործեալ է նմա 'ի նոցանէ արանց աւե-
լի քան զքառասուն, որ նզովեցին զանձինս՝
ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչև սպանցեն զնա.
արդ պատրաստ են՝ և սպասեն քում հրա-
22 մանի. * Նա հազարապետն արձակեաց
զպատանին՝ պատուիրեալ մի ումեք ասել,
23 թէ զայս զգացուցեր ինձ. * Եւ կոչեաց եր-
կուս 'ի հարիւրապետացն՝ և ասէ. պատ-
րաստեցէք զօրականս երկերիւր, ոք զի եր-
թիցեն մինչև 'ի կեսարիա. և հեծեալս եօ-
թանասուն՝ և տիգաւորս երկերիւր. 'ի յե-
24 րեք ժամու գիշերոյն. * և գրաստ պատրաս-
տեսցեն՝ ոք զի իջուցեալ զպօղոս ապրեցուս-
25 ցեն առ փելիքս դատաւոր. * գրեաց թուղթ.
26 որ ունէր օրինակ զայս. * Կղօդիոս լիւսիաս
27 առ քաջ դատաւորդ փելիքս՝ ողջոյն. * Զայ-
րըս զայս կալեալ 'ի հրէից՝ և մերձ 'ի սպա-
նանել 'ի նոցանէ. հասեալ 'ի վր զօրակա-
նաւ ապրեցուցի, իմացեալ թէ հռովմայեցի
28 է. * Կամեցայ գիտել զպատճառն՝ վն որոյ ամ-
բաստանէին զդմանէ, իջուցի զդա յա-
29 տեան նց. * Զոր գտի ամբաստանեալ վս
խնդրոյ իրիք ի̃ւրեանց օրինաց. և ոչինչ ար-
ժանի մահու կամ կապանաց ունէր զնա.
30 * Իբրև ազդ եղև նենգութե յայրդ լինե-
լոյ 'ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրաման տու-
եալ և չարախօսացն խօսել զդմանէ առա-
31 ջի քո. ողջ լեր. * Եւ զօրականացն ըստ հրա-
մանի նորա առեալ զպօղոս՝ ածին գիշերայն
յան-

յանտիպատրիս ։ * Եւ ՚ի վաղիւ անդր ար- 32
ձակեալ զհեծեալսն ընդ նմա երթեալ՝ դարձան
՚ի բանակն ։ * Նոքա մտին ՚ի կեսարիա. եւ 33
տուեալ զդատաւորն զթուղթն, առաջի կա-
ցուցին նորա եւ զպօղոս ։ * Իբրեւ ընթերցաւ՝ 34
եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. եւ ուսու-
ցեալ եթէ ՚ի կիլիկեցւոց է. * Լուայց քեզ ա- 35
սէ՝ յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն. եւ
հրամայեաց յապարանս հերովդի պահել
զնա ։

## ԳԼ. ԻԴ.

ԼԿ Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն 1
անանիաս հանդերձ ծերովք ոմամբք. եւ
ճարտարախօսաւ տերտուղեաւ ոմամբ. որք
եւ զգացուցին դատաւորին վասն պօղոսի ։
* Եւ ՚ի կոչելն զնա՝ սկսաւ տերտուղոսն 2
ամբաստան լինել եւ ասել ։ Բազում խաղա-
ղութիւն գտեալ է ՚ի քէն՝ եւ բազում ուղղութիւն
ազգիս այսմիկ քով խնամով. * ամենայ- 3
նիւ եւ ամենայն ուրեք շնորհակալ եմք՝
քաջդ փելիքս՝ ամենայն գոհութեամբ ։ * Բայց զի 4
մի աւելի եւս աշխատ արարից զքեզ, աղա-
չեմ լսել մեզ կարճ ՚ի կարճոյ՝ քոյին հեզու-
թեամբդ ։ * Գտաք զայրս զայս ապա- 5
կանիչ եւ խռովիչ ամենայն հրէից՝ որք են ընդ աշխա-
րհս, եւ առաջնորդ նազովրեցւոց հերձուա-
ծոյն ։ * Որ եւ զտաճարն եւս կամեցաւ պղծ- 6
ծել. զոր եւ կալաք, եւ ըստ մերոց օրինաց դա-
տել կամէաք ։ * Եկեալ լիւսիաս հազա- 7
րապետն՝ մեծաւ բռնութեամբ ՚ի ձեռաց մերոց
եհան ։ * Հրամայեաց եւ չարախօսացն նորա 8
գալ

գալ առ քեզ. յորմէ դու իսկ քննեալ լի-
նիցիս վերստին զայսոսիկ, ամի հասու լինել՝
9 զորոց մեք ամբաստանեմք զդմանէ։ * Միա-
բանեցին և հրէայքն, ասեն՝ այդ այդպէս
10 է։ * Պատասխանի ետ պօղոս, յակնարկել
նմա դատաւորին խօսել. 'Ի բազում ամաց
լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գի-
տեմ. յօժարութե̃ վ̃ն իմոց իրաց պատաս-
11 խանի առնեմ։ * Որ կարող ես գիտել,
զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտա-
սան՝ յորմէ հետէ ելի երկիր պագանել յԵմ̃։
12 * Եւ ոչ 'ի տաճարի անդ գտին զիս ընդ ու-
մեք խօսեցեալ, և կամ ժողով արարեալ
13 բազմաց, ոչ 'ի ժողովուրդս՝ * և ոչ 'ի քա-
ղաքի. և ոչ յանդիմանել կարեն քեզ՝
14 վ̃ն որոյ այժմս չարախօսեն զինէն։ * Այլ
զայս խոստովանիմ քեզ, եթէ ըստ ճանապար-
հին՝ զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ
զհայրենի ա̃ծն. հաւատալով ամի՝ որ ինչ
15 յօրէնս և 'ի մարգարէս գրեալ է։ * Ունիմ
յոյս առ ա̃ծ. որում և դոքա իսկ ակն ունին՝
թէ յարութի̃ լինելոց է արդարոց և մեղա-
16 ւորաց։ * Յորում և ես իսկ ջանիմ, ան-
խիղճ միտս ունել առ ա̃ծ և առ մարդիկ յա-
17 մենայն ժամ։ * 'Ի բազում ամաց ողորմու-
թիւս եկի առնել յազգ իմ. և ետու պա-
18 տարագս. * Յորում գտին զիս սրբեալ 'ի ‖ Վեր.
19 տաճարին՝ ոչ բազմօք և ոչ ամբոխիւ։ * Այլ 21. 26.
ոմանք յԱսիացւոց անտի հրէայք՝ որոց պարտ
էր գալ առաջի քո՝ և ամբաստան լինել, ե-
20 թէ ունիցին ինչ զինէն. * և կամ ինքեանք
սոքա ասասցեն, զինչ գտին յիս անիրաւու-
թի՝

թէ մինչդեռ կայի յատենին. * Բայց միայն 21
վասն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղա-
Ա Գծ. կեցի մինչ կայի ՚ի մէջ նոցա. ‖ եթէ վասն յարու-
23. 6. թեան մեռելոց դատիմ ես այսօր ՚ի ձէնջ. * Եւ 22
յապաղեաց զնոսա Փելիքս, զի առաւել ստոյգ
գիտէր վասն Ճանապարհին, եւ ասէ. յորժամ
Լիւսիաս հազարապետ իջցէ այսր՝ տեղեկա-
ցայց վասն ձեր. * Հրամայեաց հարիւրա- 23
պետին պահել զնա. եւ ունել յանդորրա-
կի, եւ մի զոք յիւրոց անտի արգելուլ ՚ի պաշ-
տելոյ զնա.
* Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ 24
Դրուսիղաւ կնաւ իւրով, որ էր Հրէայ. կո-
չեաց զՊաւղոս՝ եւ լուաւ ՚ի նմանէ վասն որ ՚ի
Ա Հռով. Յիսուս Քրիստոս հաւատոյն. * ‖ Եւ ՚ի խօսելն նորա վասն 25
2. 16. արդարութեան եւ ժուժկալութեան եւ հանդեր-
ձեալ դատաստանին, զահի հարեալ Փելիքս,
ետ պատասխանի. դու առ այժմ երթ՝ եւ յոր-
ժամ ժամ լինի, կոչեցից զքեզ. * Նմանա- 26
պէսն եւ ակն ունէր՝ թէ տացի ինչ նմա ՚ի
Պաւղոսէ. վասն որոյ առէպ կոչեցեալ զնա՝ խօ-
սէր ընդ նմա. * Եւ ՚ի կատարել երկուց ամաց՝ 27
եկն փոխանակ Փելիքսի՝ Փեստոս Պորկիոս.
իբրեւ կամեցաւ շնորհս առնել Հրէիցն Փե-
լիքս, եթող զՊաւղոս կապեալ.

## ԳԼ. ԻԵ.

Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն, յետ 1
երից աւուրց ել յԵրուսաղէմ ՚ի Կեսարիայ. * Եւ 2
զգացուցին նմա քահանայապետքն եւ գլխա-
ւորք Հրէիցն զՊաւղոսէ, եւ աղաչէին խնդ- 3
րել շնորհս ՚ի նմանէ. զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ.
զա-

դարման գործեալ սպասաւորել զնա 'ի Ձմեռա-
4 պարհի ։ * Եւ փեսատես արար պատսպարանի՝
պաշտել զնա 'ի կեսարիոյ ․ Թէ ինքն խոկ է
5 հաւպ անդր երթալոց է ։ * Եւ որ 'ի ձեռք
կարօղք իցեն՝ ասէ, ընդ իս իջցեն, և եթէ
իցէ ինչ յառնն մասն՝ ամբաստան լիցին ըզ-
6 նմանէ ։ * Եւ լեալ անդ աւուրս՝ ոչ աւելի
քան զութ կամ զտասն, եկն էջ 'ի կեսարիա ․
և 'ի վաղիւ անդր նստեալ յատենի, հրա-
7 մայեաց ածել զպաւղոս ։ * Եւ իբրև եկն՝ կա-
ցին շուրջ զնովաւ՝ որ յերուսաղէմէ իջեալ էին հը-
րէայք ․ բազում և ծանր մեղս դնէին՝ զոր
8 ոչ կարէին ցուցանել ։ * Պաւղոսի ասելը պա-
տասխանի տալով, եթէ ոչ յօրէնս հրէից՝ և
ոչ 'ի տաճարն՝ և ոչ 'ի կայսր ինչ մեղուցեալ
9 եմ ։ * Բայց փեստոս կամեցեալ հրէիցն շը-
նորհս առնել՝ պատասխանի ետ պօղոսի՝ և ա-
սէ ․ կամիս յերուսաղէմ ելանել՝ և անդ վասն դոցին
10 իրաց դատել առաջի իմ ։ * Եւ ասէ պօղոս ․
յատենի կայսեր հաւեալ կամ, ուր պարտ
է ինձ դատել ․ հրէից ինչ չեմ մեղուցեալ,
11 որպէս և դու իսկ քաջ գիտես ։ * Ապա թէ
մեղուցեալ իցեմ՝ և արժանի մահու ինչ
գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ ․ իսկ
եթէ ոչինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան լի-
նին զինէն, ոչոք կարէ զիս դոցա շնորհել ․
12 'ի կայսր բողոքեմ ։ * Յայնժամ փեստոս խօ-
սեցեալ ը խորհրդականացն՝ արար պատասխանի,
'ի կայսր բողոքեցեր՝ առ կայսր երթիջիր ։
13 * Եւ իբրև անցին աւուրք ինչ՝ ագրիպպաս ար-
քայ և բերենիկէ եկին 'ի կեսարիա՝ յողջոյն Լ․ Գ․
14 փեստոսի ։ * Եւ իբրև աւուրս բազում հանէին

 անդր,

անդր, փեստոս զեկոյց արքայի զպօղոսէ՝ և
ասէ. այր մի է աստ մնացեալ կապեալ 'ի
փելիքսէ : * Վասն որոյ իբրև չոգայ յեմ̃, 15
զգացուցին ինձ քահանայապետքն և ծերա-
ւորք հրէիցն . խնդրէին յինէն առնել նմա
պատուհաս : * Որոց ետու պատասխանի, եթէ 16
չէ օրէն հռովմայեցւոց շնորհել ումեք զոք,
մինչև ամբաստանեալն յանդիման ունիցի
զդատախազսն՝ և տեղի պատասխանւոյ առ-
նուցու վասն ամբաստանութեանն : * Արդ իբրև 17
եկին այսր՝ ոչինչ յապաղեցի, այլ 'ի վաղիւ-
նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն :
* Վասն որոյ մատուցեալ ամբաստանողքն և 18
ոչ մի ինչ չնաս չարութեան 'ի մէջ բերէին՝ զո-
րոց ես կարծէի . * բայց խնդիրս ինչ՝ վասն 19
իւրեանց պաշտաման ունէին ընդ նմ̃ . և վասն
յսի ուրումն մեռելոյ, զորմէ ասէր պօղոս
թէ կենդանի է : * Իբրև յանհնարս մտի վս 20
այսպիսի խնդրոյ քննութեն, ասեմ, եթէ կամի-
ցի երթալ յեմ̃, և անդ դատել վ̃ նոցին
իրաց : * Բայց 'ի պօղոսի բողոքելն՝ զի պա- 21
հեսցի 'ի քաջի արքային յանդիմանութեն, հրա-
մայեցի պահել զնա՝ մինչև առաքել առ
կայսր : * Ագրիպպաս ցփեստոս ասէ . կա- 22
մէի և ես լսել առնն : և նա ասէ՝ վաղիւ
լուիցես :

* Իսկ 'ի վաղիւ անդր իբրև եկն ագրիպպաս 23
և բերինիկէ՝ բազում երևելի պատուով, և մը-
տին յատեանն հանդերձ հազարապետօքն և
արամբք պատուականօք քաղաքին . և հրա-
մայեալ փեստոսի՝ ածին զպօղոս : * Իսկ ասէ 24
փեստոս, արքայդ ագրիպպա՝ և ամ̃ արք՝ որք

ընդ մեզ էք․ տեսանէք զսա, վասն սորա ամ
ժողովք հրէից ամբաստան եղեն ինձ յեմ
եւ աստ․ աղաղակէին՝ թէ չէ պարտ դմա
25 կեալ։ * Բայց ես 'ի վր հասի թէ ոչինչ է
գործ արժանի մահու գործեալ․ եւ զորա
ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն,
26 խորհեցայ յղել։ * Վասն որոյ ստուգութիւն
ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ․ վն այնո–
րիկ ածի զդա առաջի ձեր՝ եւ մանաւանդ ա–
ռաջի քո արքայ ագրիպպա․ որպէս զի վերստին
27 քննեալ՝ մարթացից ինչ գրել։ * Քանզի
անպատեհ իսկ թուի ինձ՝ տալ տանել կա–
պեալ մի, եւ ոչինչ վնաս զնմանէ նշանակել։

## ԳԼ. ԻԶ.

1 Եւ ագրիպպաս ասէ ցպօղոս․ հրամայեալ
է քեզ՝ վն քո խօսել։ յայնժամ պօղոսի
2 ձգեալ զձեռն՝ առնէր պատասխանի։ * Վասն
ամ ամբաստանութէ հրէից զինէն՝ արքայ
ագրիպպա՝ համարիմ զանձն երանելի․ զի քո
3 առաջի այսօր տալոց եմ պատասխանի։ * Մա–
նաւանդ զի գիտակ ես իսկ ամենայն կրօնից
եւ խնդրոց հրէից․ վն որոյ աղաչեմ երկայնա–
4 մտութ լսել ինձ։ * Քանզի զկենաց իմոց՝
որ 'ի մանկութենէ, 'ի սկզբանէ լեալ յազգի
իմում յեմ, տեղեակ են ամենայն հրէայք։
5 * Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց հետէ,
եթէ կամիցին վկայել․ զի ըստ ճշմարտագոյն
կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսե–
6 ցի։ * Եւ արդ վն յուսոյն՝ առ հարսն եղե–
լոյ աւետեացն յայ՝ դատեալ կամ յատենի։
7 * յոր երկոտասան ազգատոհմիս մերոյ ան–

պա–

պակաս զցայգ և զցերեկ պաշտելով ակն ու-
նին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստա-
նիմ արքայ ՚ի Հրէից։ * Ը՞նդ անհաւատա 8
թուի ձեզ՝ եթէ ած զմեռեալս յարուցանէ։
* Ես խոկ ինքնին պատշաճ համարէի՝ զբազմ 9
ինչ հակառակ անուանն յսի նազովրեցւոյ
Վէ. գործել։ * Որ և արարի իսկ յԵմ. և 10
8. 3. զբազումս ՚ի սրբոցն ես բանտարգել արարի, ՚ի
քահանայապետիցն առեալ իշխանութիւն. և
զսպանելոցն նց բերէի համար։ * Եւ ընդ 11
ամ ժողովրդոցն՝ բազում անգամ պատժել
զնոսա բռնադատէի հայհոյել. առաւել ևս
մոլեալ ՚ի վր նց՝ հալածէի մինչև յարտաքին
Վէ. քաղաքսն։ * Որով գնացեալ ՚ի Դամաս- 12
9. 2. կոս՝ իշխանութեամբ և հրամանաւ քահանայա-
պետիցն, * զմիջաւուրբն ՚ի ճանապարհի տե- 13
սի՝ արքայ՝ յերկնից առաւել քան զլուսաւո-
րութիւն արեգական ծագեալ զինև լոյս,
և զնոքօք՝ որ ընդ իս երթային։ * Եւ ամե- 14
նեցուն մեր անկանել յերկիր, լուայ ձայն
որ ասէր ցիս՝ հեբրայեցւոց բարբառով.
սաւուղ սաւուղ՝ զի՞ հալածես զիս. խիստ
է քեզ ընդդէմ խթանի աքացել։ * Եւ ես 15
ասեմ, ո՞ ես Տր. և Տր ասէ. ես եմ յս՝ զոր
դու հալածես։ * Այլ արի և կաց ՚ի վերայ 16
ոտից քոց. զի վն այսորիկ երևեցայ քեզ՝ առ-
նուլ զքեզ ՚ի ձեռն պաշտօնեայ և վկայ՝ ո-
րոց տեսեր զիս, և որոց երևեցայց քեզ.
* փրկել զքեզ ՚ի ժողովրդենէդ՝ և ՚ի հե- 17
թանոսաց, յորս ես առաքեցից զքեզ. * բա- 18
նալ զաչս նց, դարձուցանել ՚ի խաւարէ ՚ի
լոյս, և յիշխանութենէ սատանայի յԱծ. ա-

նուլ

նուլ նոցա զթողութիւն մեղաց, եւ վիճակ ընդ
19 սրբս՝ հաւատովքն որ յիս ։ * Սակաւ արքայ
Ագրիպպա՝ ոչ եղէ անհաւանեցեալ երկնաւոր տես-
20 լեանն ։ * Այլ նախ որոց 'ի Դամասկոս եւ Վեր. 9. 20.
յԵրուսաղէմ էին, եւ ընդ ամ գաւառս Հրէաստանի
եւ 'ի հեթանոսս, պատմեցի զղջանալ՝ եւ դառ-
նալ յԱծ կենդանի. արժանի ապաշխարու-
21 թեան գործս գործել ։ * Վասն այսորիկ Հրէից
կալեալ զիս 'ի տաճարին, կամէին սպանա- Վեր. 21. 30.
22 նել ։ * Օգնութեան հասեալ առ յայ՝ մինչեւ
ցայսօր կացի վկայեալ փոքու եւ մեծի. ոչինչ
արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն եւ Մով-
23 սէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ. * Ե-
թէ չարչարելոց է Քս, եթէ առաջին 'ի յա-
րութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովր-
24 դեանն՝ եւ հեթանոսաց ։ * Եւ մնչ զայս պա-
տասխանի տայր, Փեստոս 'ի ձայն մեծ
ասէ. Մոլիս Պօղէ, բզմ դպրութիւնք զքեզ 'ի
25 մոլութիւն դարձուցանեն ։ * Իսկ Պօղոս ասէ,
ոչ մոլիմ՝ քաջդ Փեստոս, այլ զզգաստութե եւ
26 զճշմարտութե բանս բարբառիմ ։ * Գիտակ
իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում եւ համար-
ձակեալս խօսիմ. քանզի ծածկել 'ի սմնէ ի-
նչ 'ի սոցանէ՝ չհաւանիմ յայտնի. զի ոչ եթէ
27 յանկեան ուրեք գործեալ իցէ այս ։ * Հա-
ւատա՞ս արքայ Ագրիպպա մարգարէից. գի-
28 տեմ զի հաւատաս ։ * Եւ ասէ Ագրիպպաս
ցՊօղոս, փոքու ինչ հաւանեցուցանես զիս
29 լինել քրիստոնեայ ։ * Եւ Պօղոս ասէ. խնդ-
րէի յայ՝ եւ փոքու եւ մեծաւ՝ ոչ միայն զքեզ՝
այլ զամենեսեան որ լսեն ինձ այսօր՝ լինել
այսպիսի որպէս եւ ես եմ, բաց 'ի կապանաց
աս-

սատի ։ * Յոտն եկաց արքայն և դատաւորն 30
և բերինիկէ, և որ ը̄ նոսայն նստեալքն ։ * Եւ 31
իբրև գնացին, խօսէին ընդ միմեանս և ա-
սէին ․ թէ ոչինչ արժանի մահու կամ կա-
պանաց գործէ այրս այս ։ * Եւ ագրիպպաս 32
ցփեստոս ասէ ․ արձակել մարթ էր զայրս
զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր ։

## ԳԼ. ԻԷ.

ԻԱ Եւ երբև հրամայեցաւ մեզ նաւել յիտալիա, 1
տային զպօղոս՝ և զայլս ոմանս կապեալս
ցհարիւրապետ մի, որում անուն էր յուլիոս
‖ 2. Կոր. սեբաստեան գնդին ։ * ‖ Եւ ելեալ 'ի նաւ 2
11. 25. մի ադրամիտացի, որ երթալոց էր 'ի կող-
‖ Վեր. մանս ասիացւոց՝ գնացաք ․ ‖ էր ը̄ մեզ և ա-
19. 29. 20. 4. րիստարքոս՝ մակեդոնացի թեսաղոնիկեցի ։ * Եւ 3
Կող. 4. 10. 'ի վաղիւ անդր իջաք 'ի սիդոն ․ և մարդա-
սիրաբար ցուցեալ յուլիոսի առ պօղոս, հրա-
մայեաց առ բարեկամսն երթալ՝ և զարման
գտանել ։ * Եւ անտի ելեալ խոնարհագոյն 4
նաւեցաք 'ի կիպրոս՝ վ̄ն հողմոյն ընդդէմ
լինելոյ ։ * Յայնժամ ը̄ մէջ ծովուն կիլի- 5
կեայ և պամփիլեայ նաւեալ՝ իջաք 'ի մի-
ռայ լիկիացւոց ։ * Եւ անդ գտեալ հարիւ- 6
րապետին զնաւ մի աղեքսանդրացի՝ որ եր-
թայր յիտալիա, եմոյծ զմեզ անդր ։ * Եւ 7
'ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ
հասաք առ կնիդաւ ․ և 'ի չթողացուցանել
մեզ հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն 'ի
կրետէ առ սաղմոնեաւ ։ * Հազիւ անցեալ 8
առ նովաւ՝ եկաք 'ի տեղի ինչ՝ որ կոչէր գե-
ղեցիկ նաւահանգիստ ․ յոր հուպ էր քաղա-

քըն

9 քըն Ղասեայ ։ * Եւ իբրեւ բազում ժամանակք
անցանէին, եւ սխալ եւս լինէր նաւելոյն ։ Եւ
զի այն ինչ եւս պահոցն անցանելոյ, տայր
10 խրատ Պօղոս, * եւ ասէ ցնոսա ։ Արք՝ տեսա-
նեմ զի թշնամանօք եւ բազում վնասու՝ ոչ միայն
բեռինդ եւ նաւիդ, այլ եւ անձանց մերոց լի-
11 նելոց է նաւարկութիւնս ։ * Իսկ հարիւրա-
պետն նաւապետին եւ նաւավարին առաւել
12 անսայր՝ քան բանիցն Պօղոսի ։ * Իբրեւ դժ-
պատեհ ինն թուէր նաւահանգիստն առ
'ի ձմերել, բազումք խորհեցան գնալ ան-
տի ։ Թերեւս կարասցեն հասանել 'ի Փիւնի-
կէ՝ ձմերել 'ի նաւահանգստին Կրետացւոց,
որ հայէր ընդ հարաւակողմն եւ ընդ աշխարհն ։
13 * Եւ 'ի շնչել հարաւոյն, համարեցան ուր
դիմեալն էին հասանել ։ Եւ արկեալ՝ մօտ ան-
14 ցանէին զԿրետէիւ ։ * Եւ ոչ յետ բազում
ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ, որ
15 կոչի Եւրակիւղոն ։ * Ընդ յափշտակել նա-
ւին՝ եւ 'ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն,
16 թոյլ տուեալ երթայաք եւ գայաք ։ * 'Ի կղզի
ինչ դիմեալ՝ որ կոչէր Կղօդէս, հազիւ կա-
17 րացաք ըմբռնել զմակոյկն ։ * Զոր առեալ՝
յօգնականութիւն կապէին ընդ նաւն, երկու-
ցեալ թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին ։
Իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային եւ
18 գային ։ * Եւ 'ի սաստկագոյն վտանգացն
մերոյ՝ 'ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ
19 առնէին ։ * Եւ յերիր աւուր ընդ իւրեանց
20 ձեռն՝ զգործին նաւուն ընկեցին ։ * Իբրեւ ոչ
արեւ՝ եւ ոչ աստեղք երեւէին 'ի բազում ա-
ւուրս, եւ ձմեռն ոչ սակաւ կայր 'ի վերայ, ապա

բառ.

բառնայր ա՛մ յոյս փրկութե՛ն մերոյ. * Եւ 21
զի բազում աւուրս նօթի էին, յայնժամ
պօղոս կացեալ ՚ի մէջ նոցա՝ ասէ. պարտ էր
ձեզ ով արք՝ անսալ ինձ, և ոչ ելանել ՚ի
կրետեայ՝ և շահել զվնասս զայս՝ և զխնաս.
* Եւ արդ՝ խրատեմ զձեզ քաջալերել. զի 22
վնաս անձին՝ և ոչ միում ՚ի ձէնջ լինիցի,
բայց ՚ի նաւէդ. * Քանզի երևեցաւ ինձ 23
յայսմ գիշերի հրեշտակ այ՝ որոյ եմն եմ, և
պաշտեմ զնա. * և ասէ. մի երկնչիր պօ֊ 24
ղոս, կայսեր ես պարտ է քեզ յանդիման լի֊
նել. և ահա շնորհեալ է քեզ այ զամենե֊
սեան, որ են ընդ քեզ ՚ի նաւիդ. * Վասն այ֊ 25
սորիկ քաջալերեցարուք արք, զի հաւատամ
յայ՝ թէ այսպէս լինի՝ զորօրինակ խօսե֊
ցաւ ընդ իս. * Բայց ՚ի կղզի ինչ հասանէ 26
մեզ անկանել.

Ի. Օ.
* Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ 27
մինչդեռ ծփէաք ՚ի հադրիին անդունդս,
՚ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ
հասեալ իցեն յաշխարհ ուրեք. * Եւ ընկե֊ 28
ցեալ զգունդն՝ գտին գիրկս քսան. և սա֊
կաւ ինչ գնացեալ՝ դարձեալ ընկեցին՝ և
գտին գիրկս հնգետասան. * Զահի հա֊ 29
րեալ թէ գուցէ ՚ի խիստ ինչ տեղիս անկա֊
նիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
չորս. բղձայինն այգուն լինելոյ. * Բայց 30
նաւավարքն խնդրէին փախչել ՚ի նաւէ ան֊
տի. և իջուցեալ զկուրն ՚ի ծով անդր՝ պատ֊
ճառանօք՝ որպէս թէ առաջոյ կողմանէ խա֊
րիսխս ձգելոց իցեն. * Ասէ պօղոս ցհարիւ֊ 31
րապետն և ցզօրականսն. եթէ ոչ դոքա մնան
՚ի

32 ՚ի Նաւին՝ դուք ապրել ոչ կարէք։ * Յայն-
ժամ զօրականքն հատին զչուանս կրին՝ եւ ՚ի
33 բաց ընկեցին։ * Եւ մինչդեռ այգն կամէր
լինել, աղաչէր Պօղոս զամենեսեան առնուլ
կերակուր, ասէ. այս չորեքտասաներորդ օր
է՝ որում ակն ունիք նօթիս կատարել, եւ չէ
34 ինչ ճաշակեալ։ * Վասն որոյ աղաչեմ ըզ-
ձեզ՝ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն
ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք ՚ի ձէնջ
35 մազ մի ՚ի գլխոյ կորիցէ։ * Եւ իբրեւ ասաց
զայս, առեալ հաց՝ գոհացաւ զԱյ առաջի
36 ամենեցուն. եբեկ՝ եւ սկսաւ ուտել։ * Եւ
քաջալերեցան ամենեքին, եւ նոքա առին կե-
37 րակուր։ * Եւ էաք ամենայն հոգիք ՚ի նա-
38 ւին՝ երկերիւր եօթանասուն եւ վեց։ * Իբ-
րեւ յագեցան կերակրովն, եւ թեթեւացու-
ցին զնաւն՝ թափեալ զցորեանն ՚ի ծովն։
39 * Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանա-
չէին, բայց զծոց մի նշմարէին՝ թէ ափն ծո-
վուն իցէ. յոր խորհէին թէ հնար ինչ իցէ՝
40 զերծուցանել զնաւն։ * Եւ զխարիսխսն հա-
տեալ՝ ընկեցին ՚ի ծովն, թուլացուցին զխառ-
նելիս թեւոցն, եւ ՚ի բաց առին զառագաս-
տըն. եւ եառն հողմոյն յափն կոյս ծովուն։
41 * Անկեալ ՚ի տեղի մի երկծով՝ թիւրեցին
զնաւն. եւ առաջին կողմն նաւին խրեալ ան-
շարժ մնայր, եւ յետին կողմն քակէր ՚ի բռու-
42 նութենէ։ * Եւ զօրականացն խորհուրդ ա-
ռնէր՝ զի զկապեալսն սպանցեն, եւ մի ոք
43 լողիցէ եւ փախիցէ։ * Եւ հարիւրապետին
քանզի կամէր ապրեցուցանել զՊօղոս՝
արգել զնա ՚ի խորհրդոյն. հրամայեաց զի

որ

որ կարօղն էցեն լողել՝ անկանիցին նախ ,
և 'ի ցամաք ելանիցեն ． * և զայլսն՝ զոմն 'ի 44
տախտակս , և զոմս յայլ ինչ կարծ 'ի նաւէ
անտի ． և այսպէս եղև ամենեցուն փրծա-
նել յերկիր ։

## ԳԼ ． ԻԸ ։

Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ Մե- 1
լիտինէ էր անուն կղզւոյն ． բայց բար-
բարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասի-
րութիւն մեզ ։ * Արկանէին լուցին խարոյկ՝ և 2
ընկալան զամենեսին զմեզ վս անձրևին որ
տեղայր՝ և վասն ցրտոյն ։ * Եւ 'ի ժողովել 3
պօղոսի խաւու ինչ բազում՝ և դնել 'ի վե-
րայ խարուկին , իժ մի 'ի ջերմութենէ ելեալ՝
կալաւ զձեռանէ նորա ։ * Եւ իբրև տեսին 4
բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ
նորա , ասէին ցմիմեանս ． ասրէն սպանող
է այրս այս՝ որ թէպէտ և ապրեցաւ 'ի ծո-
վէն , իրաւունքն չտուին կեալ ։ * Եւ նորա 5
թօթափեալ զգազանն 'ի հուրն , եղև նմա
չար և ոչինչ ։ * Եւ նոքա ակն ունէին նմա 6
այտնլոյ՝ կամ անկանելոյ՝ և յանկարծակի
մեռանելոյ ։ իբրև շատ ակն կալեալ՝ և տե-
սանէին թէ ոչինչ վնաս եղև նմա՝ դարձեալ
դարձուցեալ զբանսն՝ ասէին թէ աստուած
ոմն է ։ * Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ 7
էին գիւղք գլխաւորի կղզւոյն՝ որում անուն
էր պոպղիոս ． որ առ զմեզ յերաշխի զերիս
աւուրս՝ և սիրով ընկալաւ ։ * Եւ եղև հօրն 8
պոպղեայ 'ի ջերմն և յախտ թանչից հիւան-
դանալ՝ դնել ։ առ որ մտեալ պօղոս՝ և կա-

ցեալ

9 ցեալ յաղօթս՝ եդ զձեռն եւ բժշկեաց զնա։
10 * Եւ իբրեւ այս եղեւ, այլ հիւանդքն՝ որ էին
'ի կղզւոջն՝ գային եւ բժշկէին։ * որք եւ
բազում պատուովք պատուեցին զմեզ. եւ
իբրեւ գնացաք, ետուն՝ որ ինչ պէտք էին։
11 * Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի ա- Լ. Լ.
ղեքսանդրացի՝ որ ձմեռեալ էր 'ի կղզւոջն
12 նշանաւորաւ Դիոսկուրացւոց։ * Եւ իջեալ
13 'ի Սիրակուսա՝ եղաք աւուրս երիս։ * Ան-
տի գնացեալ հասաք 'ի Հռեգիոն. եւ յետ
աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն, երկրորդայք
14 եկաք 'ի Պուտիողոս։ * Ուր եւ գտաք եղ-
բարս՝ աղաչեցաք 'ի նոցանէ լինել ա-
15 ւուրս եօթն. եւ ապա եկաք 'ի Հռոմ։ * Եւ
անտի լուեալ եղբարց զմէնջ՝ ելին ընդ ա-
ռաջ մեր մինչեւ յորդառայն Ապփեայ՝ եւ ե-
րիցն կրպակաց. զոր տեսեալ Պօղոսի՝ գո-
16 հացաւ զԱյ՝ եւ քաջալերեցաւ։ * Եւ իբրեւ
մտաք 'ի Հռոմ, հրամայեցաւ Պօղոսի լի-
նել առանձինն հանդերձ զինուորաւն՝ պահ-
17 պանաւ իւրով։ * Եւ եղեւ յետ երից ա-
ւուրց՝ կոչել նմա զհրէիցն գլխաւորս. եւ
իբրեւ եկին, ասէ ցնոսա. Ես՝ արք եղբարք
ոչինչ հակառակ գործեալ ժողովրդեանն՝
կամ կրօնիցն հայրենեաց, կապեալ յերու-
սաղէմէ՝ մատնեցայ 'ի ձեռս Հռովմայեց-
18 ւոց։ * Որք իբրեւ զննեցին զիս՝ կամեցան
արձակել, զի եւ ոչ մի ինչ վնաս մահու գ-
19 տանէին յիս։ * ‖ 'Ի հակառակել Հրէիցն, ‖ Վեր.
հարկ եղեւ բողոքել 'ի կայսր. իբր ոչ ե- իե. 11.
թէ զազգէն իմմէ ունէի ինչ չարախօսել։
20 * Վասն այսր պատճառանաց աղաչեցի ըզ-
ձեզ՝

Վեր․ 24․ 21․ ձեզ՝ ուսուցանել և խօսել․ Վասնզի վասն յու-
սոյն իսրայէլի կամ 'ի շղթայս յայսոսիկ․
* Եւ նոքա ասեն ցնա․ մեք ոչ թուղթս 21
ինչ վասն քո ընկալաք 'ի Հրէաստանէ, և
ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց՝ կամ խօ-
սեցաւ ինչ վասն քո չարութիւն։ * Բայց ա- 22
ղաչեմք 'ի քէն լսել՝ թէ զինչ խորհիցիս․
զի վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ
է մեզ, զի ամենայն ուրեք հակառակու-
թիւն կայ։ * Եւ կարգեալ նմա օր մի, ե- 23
կին 'ի վանսն առ նա բազումք․ որոց պատ-
մէր վկայութեամբ զարքայութիւն այ․ և հաւանե-
ցուցանէր զնոսա վասն յի, յօրինացն մով-
սէսի և 'ի մարգարէից՝ յառաւօտէ մինչև ցե-
րեկոյ։ * Եւ ոմանք հաւանէին բանիցն, և 24
կէսքն չհաւատային։ * Եւ անմիաբանք 25
ընդ միմեանց՝ արձակէին, յասելն պօղոսի
բան մի․ թէ բարւոք խօսեցաւ հոգին սբ 'ի
ձեռն եսայեայ մարգարէի առ հարսն մեր․
Եսայ․ 6․ 9․ * Եւ ասէ․ երթ առ ժողովուրդն, և ասա 26
Հռովմ․ ցնա․ լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և
11․ 8․ տեսանելով տեսջիք՝ և մի տեսջիք։ * Զի 27
թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ,
և ականջօք իւրեանց ծանր լուան․ և զաչս
իւրեանց կափուցին, զի մի երբեք տեսցեն
աչօք և ականջօքն լուիցեն և սրտիւք իմաս-
ցին՝ և դարձցին․ և բժշկեցից զնոսա։ * Եւ 28
արդ՝ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց ա-
ռաքեցաւ փրկութիւն այ՝ նոքին և լուիցեն։
[illegible] ( * Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս գնացին 29
'ի նմանէ հրէայքն․ որք ունէին 'ի մէջ իւ-
րեանց զբազում խնդիրս։ ) * Եւ եկաց զեր- 30
կեամ

Լ կեամ մի՝ բովանդակ իւրով վարձու. * և
ընդունէր զամենեսեան որ մտանէին առ
ԼԱ նա. * Քարոզէր զարքայութիւն այ, և ու-
սուցանէր վասն տն յի քի, ամենայն
համարձակութեամբ.



Առաքելականն թղթոց մատենագիրք։

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ ՅՍԻ
քսի , կոչեցեալ առաքեալ ,
2 || որոշեալ յաւետարանն այ . * որ || Գործ. 13. 2.
յառաջ խոստացաւ ՚ի ձեռն մարգարէից իւ-
3 րոց գրովք սրբովք , * վասն որդւոյ իւրոյ
եղելոյ ՚ի զաւակէ դաւթի ըստ մարմնոյ .
4 * սահմանելոյ որդւոյն այ զօրութեամբ ըստ հոգ-
ւոյն սրբութեան . ՚ի յարութենէ մեռելոց յսի
5 քսի տն մերոյ . * որով ընկալաք շնորհս եւ
առաքելութիւն || ՚ի հնազանդութիւն հաւատոց || 2. Կոր.
յամենայն հեթանոսս վս անուան նորա . 10. 5.
6 * յորս եւ դուք էք կոչեցեալ յսի քսի . * Առ
7 ամենեսեան որք էք ՚ի հռոմ , սիրելեաց այ
կոչեցելոց սրբոց , շնորհք ընդ ձեզ եւ խաղա-
ղութիւն յայ հօրէ մերմէ եւ ՚ի տնէ յսէ քսէ :
8 * Նախ գոհանամ զայ իմոյ ՚ի ձեռն յսի քսի
վս ձեր ամենեցուն . զի հաւատք ձեր պատ-

մեալ

մեալ են ընդ ամ աշխարհ։ * Վկայ է ինձ 9
ած, զոր պաշտեմն հոգւով իմով՝ յաւետա-
րանի որդւոյ նր, * Թէ ոչ զյիշատակ ձեր 10
առնեմ յամ ժամ յաղօթս իմ, աղաչելով
զի թերեւս երբեք յաջողեսցի ինձ կամօքն
այ գալ առ ձեզ։ * Քանզի անձկացեալ եմ 11
տեսանել զձեզ, զի փոխեցից 'ի ձեզ շնորհս
ինչ հոգեւորս՝ առ 'ի հաստատել զձեզ. * այս 12
ինքն է, մխիթարակից լինել ձեզ վասն ընդ
միմեանց իմոյ եւ ձերոց հաւատոց։ * Եւ կա- 13
միմ եթէ տգէտք իցէք եղբարք. զի բազում
Գործ. անգամ յօժարեցի գալ առ ձեզ, եւ արգե-
15. 22. լայ մինչեւ ցայժմ, զի եւ 'ի ձեզ գտից պտուղ
ինչ որպէս եւ յայլ հեթանոսս։ * Քանզի յու- 14
նաց եւ բարբարոսաց՝ իմաստնոց եւ անմտից
պարտապան եմ, * այնպէս՝ որչափ իմով 15
անձն, յօժարութիւն է ձեզ՝ որ 'ի Հռովմ էք՝
աւետարանել։ * Զի ոչ եթէ ամօթ ինչ 16
համարիմ զաւետարանն. քանզի զօրութիւն
Գործ. այ է 'ի փրկութիւն ամ հաւատացելոց. Նախ
13. 46. հրէի՝ եւ ապա հեթանոսի։ * Զի արդա- 17
րութիւն այ նովաւ յայտնի 'ի հաւատոց 'ի
Ամբ. հաւատս. որպէս եւ գրեալ է, թէ արդարն 'ի
բ. 4. հաւատոց կեցցէ։

Ը. Գ. * Քանզի յայտնելոց է բարկութիւն այ յերկ- 18
նից 'ի վերայ ամ ամպարշտութեն եւ անիրա-
ւութեն մարդկան. որք զճշմարտութիւն ա-
նիրաւութբ ունին. * վասն զի գիտութիւն 19
այ յայտնի է 'ի նս. քանզի ած իսկ յայտ-
նեաց նց։ * Զի աներեւոյթք նր 'ի սկզբա- 20
նէ աշխարհի, արարածովքս իմացեալ տե-
սանին. այսինքն է՝ մշտնջենաւորութի եւ զօ-

րու-

րութիւն և ա͞ծութիւն նր. զի մի գտանիցեն ա-
21 մենևին տալ պատասխանի։ * Զի ծանեան
զա͞ծ, և ոչ իբրև զա͞ծ փառաւորեցին՝ կամ
գոհացան. ‖ այլ նանրացան 'ի խորհուրդս ‖Եփես. 4. 18.
իւրեանց. և խաւարեցան անմտութբ սիրտք
22 նց։ * ‖ Զանձինս առ իմաստունս ունէին՝ ‖1 Կոր. 1. 20.
23 յիմարեցան։ * Եւ փոխեցին զփառս անեղ-
ծին ա͞յ 'ի նմանութիւն պատկերի եղծանելի
մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սող-
24 նոց։ * Վասն որոյ մատնեաց զնոսա ա͞ծ 'ի
ցանկութիւն սրտից նց 'ի պղծութիւն, անարգել
25 զմարմինս իւրեանց յանձինս. * որք փոխա-
նակեցին զճշմարտութիւն ա͞յ ընդ ստութիւն.
հնազանդեցան՝ և պաշտեցին զարարածս, և
ոչ զարարիչն. որ է օրհնեալ յաւիտեանս.
26 ամէն։ * Վասն այնորիկ մատնեաց զնոսա
ա͞ծ 'ի կիրս անարգութեան. զի էգք նց փո-
խանակեցին զպէտս բնականս 'ի պէտս ան-
27 բնականս։ * Նոյնպէս և արուացն թողեալ
զբնական պէտս իգութեան, բորբոքեցան ցան-
կութեամբք իւրեանց 'ի միմեանս. արուք ը͞ ա-
րուս զխայտառակութիւն գործէին, և զվարձ
փոխարինինն՝ որ պարտ էր մոլորութեան նոցա՝
28 յանձինս իւրեանց ընդունէին։ * ‖ Եւ ոչ՝ ‖Գաղատ. 5. 19.
զի ոչ ընտրեցին զա͞ծ ունել 'ի գիտութեան,
մատնեաց զնոսա ա͞ծ 'ի միտս անարգութեան՝
29 գործել զանարժանս. * Լցեալս ա͞մ անի-
րաւութբ, պոռնկութբ անզգամութբ ագա-
հութբ չարութբ, լի նախանձու, սպանու-
թբ հեռիւ՝ նենգութբ չարաբարուք, շոգ-
30 մոգք * չարախօսք ա͞ծատեացք թշնամանողք
ամբարտաւանք ամբարհաւաճք, գտիչք չա-

բեաց, զծնօղս անարգողք. * անմիտք ուխ- 31
տադրուժք անագորոյնք անձնուէրք անո-
ղորմք։ * Որք հասեալ էին յԱյ իրաւանցն 32
վր, եթէ որք զայսպիսիսն գործեն՝ արժա-
նի են մահու. և ոչ միայն որ զայն առնեն,
այլ և որ կամակիցն լինին գործելեացն։

## ԳԼ. Բ.

Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես 1
Մտթ. ով մարդ՝ որ դատիդ. զի որով դատիս
7. 2. զընկերն, զանձն քո դատապարտես, զի զնոյն
գործես՝ որով դատիսն։
Բ. Գ. * Քանզի գիտեմք, եթէ Այ դատաստանն 2
ճշմարտութ է 'ի վր այնոցիկ՝ որ զայնպիսիսն
գործեն։ * Խոկ արդ՝ խորհիցիս զայս ով 3
մարդ, որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսիսն
գործեն՝ և դու զնոյն գործես, եթէ դու
ապրելոց իցես 'ի դատաստանաց անտի Այ։
* Եթէ զմեծութբ քաղցրութե նր, և ընդ- 4
ներելոյն և զերկայնմտութեն արհամարհի-
ցես. չգիտիցես՝ զի քաղցրութիւն Այ զքեզ
յապաշխարութի ածէ։ * Այլ ըստ խստու- 5
թե քում, և ըստ անզեղջ սրտի՝ գանձես ան-
ձին քում բարկութի՝ յաւուր բարկութե և
Մտթ. յայտնութե արդար դատաւորութեն Այ։
16. 27. * Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս 6
իւրեանց. * որ համբերութբ են 'ի գործս 7
բարութե զփառս և զպատիւ և զանեղծու-
թի խնդրեն, զկեանսն յաւիտենից։ * Խոկ 8
որ 'ի հակառակութէ անտի են՝ և ապստամբք
'ի ճշմարտութենէ՝ և զհետ երթեալ զանի-
րաւութե, բարկութի և սրտմտութի * նե- 9

ղու-

ղութիւն եւ անձկութիւն 'ի վերայ ամ մարդոյ՝
որ գործէ զչար. նախ Հրէի՝ եւ ապա Հեթա-
10 նոսի։ * փառք պատիւ եւ խաղաղութիւն ամն՝ ‖ 2. Օրէ.
որ գործէ զբարի. նախ Հրէի՝ եւ ապա Հե- 10. 17.
11 թանոսի։ * ‖ Զի ոչ է աչառութիւն առա- Գործ.
ջի այ։ 10. 34.

Ի.Ե

12 * Որք միանգամ առանց օրինացն մեղան,
առանց օրինացն կորնչին. եւ որք ընդ օրի-
13 նօքն մեղան, օրինօքն եւ դատեսցին։ * ‖ Զի ‖ Մատթ.
ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ 7. 21.
14 են առաջի այ, այլ առնելիք օրինացն արդա- Յակ.
րասցին։ * Իսկ յորժամ Հեթանոսք՝ որ զօ- 1. 22.
րէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործի-
ցեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին՝ անձանց ի-
15 րեանց ինքեանք են օրէնք. * որք ցուցանեն ըզ-
գործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց՝
վկայութիւն մտաց իւրեանց, եւ յանդիմանել
զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ թէ
16 պատասխանի ինչ տալ, * յաւուրն՝ յորում դա- ‖ Գործ.
տիցի այ զգաղտնիս մարդկան՝ ըստ աւետա- 24. 25.
17 րանին իմոյ, 'ի ձեռն յի քի։ * Ապա եթէ
դու Հրեայ անուանեալ ես, եւ յեցեալ ես յօ-
18 րէնսն՝ եւ պարծիս յայ, * եւ գիտես զկամս
նորա, եւ ընտրես զլաւն, եւ խրատեալ ես
19 յօրինացն, * վստահ ես յանձն քո առաջ-
20 նորդ լինել կուրաց՝ լոյս խաւարելոց՝ * խրա-
տիչ անզգամաց՝ վարդապետ տղայոց. ունել
զկերպարանս գիտութե եւ ճշմարտութե օրի-
21 նացն։ * Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն,
զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգո-
22 ղանալ՝ գողանաս. * որ ասես չշնալ՝ շնաս.
որ գարշիս 'ի մեհենից՝ զսեղանս կողոպտես.

* որ

Եսայ. * որ օրինօքն պարծիս՝ յանցանելովդ զօրէնս 23
52. 5. զԱ՟ծ անարգես ։ * Զի անուն Ա՟յ վ՟ս ձեր 24
Եզեկ. հայհոյի ՚ի մէջ հեթանոսաց՝ որպէս և գը-
36. 20. րեալ է ։
Ր. Օ. * Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնս պահի- 25
ցես . ապա եթէ յանցաւոր օրինացն իցես ,
թլփատութիւն քո անթլփատութիւն եղև ։ * Իսկ 26
եթէ անթլփատութիւն զիրաւունս օրինացն
պահիցէ . ոչ ապաքէն անթլփատութիւն նո՟ր
՚ի թլփատութիւն համարեսցի . * և դատիցի՝ 27
որ ՚ի բնէ անթլփատութիւն՝ զօրէնսն կատա-
րելովն զքեզ , որ գրովն և թլփատութեամբ յան-
ցաւոր օրինացն իցես ։ * Զի ոչ եթէ՝ որ 28
յայտնի հրէայն է , և ոչ որ յայտնի մարմ-
Երեմ. նով թլփատութիւն . * Այլ որ ՚ի ծածուկ 29
4. 4. հրէայն է , և թլփատութիւն սրտի հոգւով և
ոչ գրով . որոյ գովութիւն ոչ ՚ի մարդկանէ է ,
այլ յԱ՟յ ։

## ԳԼ. Գ.

Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է հրէին , կամ զի՞նչ 1
օգուտ ՚ի թլփատութենէ անտի ։ * Բազում 2
ինչ ամ՟ իրօք . նախ այն իսկ՝ զի հաւատա-
րիմ եղեն պատգամքն Ա՟յ ։ * Իսկ արդ՝ եթէ 3
Բ. Տիմ. չէր հաւատացեալ ոմանց՝ միթէ անհաւա-
2. 13. տութիւն նոցա զԱ՟յ հաւատամն խափանիցէ՞ . քա՛-
Յովհ. լիցի ։ * Այլ՝ եղիցի Ա՟ծ ճշմարիտ՝ և ամ՟ 4
3. 33. մարդ սուտ . որպէս և գրեալ է . որպէս ար-
Սաղ. դար եղիցիս ՚ի բանս քո , և յաղթեսցես ՚ի
115. 11. Սաղ. 50. 6. դատել քեզ ։ * Իսկ արդ՝ եթէ ապիրատու- 5
թիւն մեր զԱ՟յ արդարութիւն յանդիմանն կացու-
ցանէ՝ զի՞նչ ասեմք . միթէ անիրաւ ի՞նչ է
Ա՟ծ՝

6 ած՝ որ ածէ զբարկութի ․ * ըստ մարդկու-
թեան ասեմ․ քաւ լիցի․ ապա թէ ոչ՝ զիարդ
7 դատի ած զաշխարհ ։ * Զի եթէ ճշմար-
տութի այ իմով ստութեամբս առաւելու ՚ի
փառս նորա, զի՞ եւս ես իբրեւ զմեղաւոր դա-
8 տիմ ։ * Եւ ոչ եթէ՝ որպէս հայհոյիցեն, եւ
որպէս ասեն զմէնջ ոմանք ասել, թէ արաս-
ցուք զչար՝ զի եկեսցէ բարի․ որոց դատաս-
9 տանքն յիրաւի են ։ * Եւ արդ՝ զի՞ իցէ ա-
ռաւել իցեմք․ ապաքէն եւ ոչ իւիք․ Քան- ‖ Գաղա. 3. 22.
զի յառաջագոյն իսկ մեղադիր եղեաք Հրէից
եւ հեթանոսաց՝ ամենեցուն ընդ մեղօք լինե-
10 լոյ ։ * Որպէս եւ գրեալ է․ ‖ Թէ ոչ ոք է ար- ‖ Սաղ. 13. 3.
11 դար՝ եւ ոչ մի․ * եւ ոչ գոյ՝ որ իմանայ, եւ ոչ ոք
12 է որ խնդրէ զած ։ * Ամենեքեան խոտորե-
ցան, ՚ի միասին անպիտանացան ։ ոչ է որ
առնէ զքաղցրութի, եւ ոչ է մինչեւ ՚ի մի ։
13 * ‖ Գերեզմանք բացեալ է կոկորդ նոցա, լեզուաւք ‖ Սաղ. 5. 11.
իւրեանց նենգաւորք եղեն ։ ‖ Թոյնք իժից ՚ի ‖ 139. 4.
14 ներքոյ շրթանց նոցա ։ * ‖ Որոց բերանք անի- ‖ 9. 29.
15 ծիւք եւ դառնութեամբ լի են ։ * ‖ Երագ են ոտք ‖ Եսայ. 59. 7.
16 նոցա հեղուլ զարիւն ։ * Բեկումն եւ թշուառ- Առակ. 1. 16.
17 ութի ՚ի ճանապարհս նոցա ․ * Եւ զճանա-
18 պարհն խաղաղութե ոչ ծանեան ։ * ‖ Ոչ է ‖ Սաղ. 35. 2.
երկիւղ այ առաջի աչաց նոցա ։
19 * Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ա- Բ. Գ.
սեն՝ այնոցիկ որ ընդ օրինօքն են ասեն․ զի ամ
բերան խցցի, եւ դատապարտ լիցի ամ աշ-
20 խարհ այ ։ * ‖ Զի ՚ի գործոց օրինաց ոչ արդա- ‖ Գաղա. 2. 16.
րասցի ամ մարմին առաջի նր․ ‖ Զի յօրինացն ‖ Գործ. 7. 7.
21 է գիտութի մեղաց ։ * Բայց արդ՝ առանց օրի-
նացն իսկ արդարութի այ յայտնեալ է՝ վ-
կայեալ

վկայեալ յօրինաց անտի՝ և 'ի մարգարէից ։
* Քանզի արդարութիւն այ 'ի հաւատոց ան- 22
տի յսի քսի յամենայն հաւատացեալս . և
ոչինչ է խտիր ։ * Քանզի ամենեքեան մե- 23
ղան . և նուազեալ են 'ի փառաց անտի այ ։
* Եւ արդարանան ձրի նորին շնորհօք 'ի 24
ձեռն փրկութե որ 'ի քս յս . * զոր յառաջն 25
եդ այ 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոց ա-
րեամբն իւր , 'ի հանդէս արդարութե նորա
վս թողութե յառաջագոյն մեղացն գործե-
լոց , * 'ի ներելն այ 'ի հանդէս արդարութե 26
նորա 'ի ժամանակի յայսմիկ . զի եղիցի նա
արդար , և արդարացուցիչ զայն՝ որ 'ի հա-
ւատոյն յսի ։ * Իսկ արդ՝ ո՞ւր են պարծանքն. 27
արգելան . յորոց օրինաց , 'ի գործո՞ց անտի.
ոչ , այլ 'ի հաւատոյն օրինաց ։ * Քանզի 28
համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝
առանց գործոց օրինացն ։ * Եթէ հրէից 29
միայն իցէ այ՝ և հեթանոսաց ոչ . այո՛ և
հեթանոսաց ։ * Զի եթէ մի է այ՝ որ ար- 30
դարացուցանէ զթլփատութիւն 'ի հաւատոց ,
ապա և զանթլփատութիւն նովին հաւատովք ։
* Արդ՝ զօրէնս խափանեմք հաւատով- 31
քս , քաւ լիցի . այլ զօրէնս հաստատեմք ։

## ԳԼ . Դ ։

ԻՍԿ արդ՝ զի՞նչ ասիցեմք զգտանելն աբրա- 1
համու նախահայրեանն մերոյ ըստ մարմնոյ ։
Ծննդ. 15. 6. * Զի եթէ աբրահամ 'ի գործոց էր ար- 2
դարացեալ՝ ունէր ունէր պարծանս՝ այլ ոչ
Գաղա. 3. 6. առ այ ։ * Իսկ զի՞նչ ասէ գիր . Հաւա- 3
Յակ. 2. 23. տաց աբրահամ այ՝ և համարեցաւ նմա

յար-

4 յարդարութիւն։ * Բայց այնմ որ գործիցէն,
ոչ համարին վարձքն ըստ շնորհաց՝ այլ ըստ
5 պարտուց։ * Իսկ այնմ որ ոչն գործիցէ՝
բայց հաւատայցէ յայն, որ արդարացուցա-
նէ զամբարշտն, համարին հաւատքն նորա
6 յարդարութիւն։ * Որպէս եւ Դաւիթ ասէ
զերանութիւն մարդոյ՝ որում Աստուած համարի ար-
7 դարութիւն առանց գործոց։ * Երանի որոց Սաղ.
թողան անօրէնութիւնք, եւ որոց ծածկեցան 31. 1.
8 մեղք իւրեանց։ * Երանեալ է այր՝ որում 31. 2.
9 ոչ համարեսցի Տէր զմեղս նորա։ * Արդ՝ երա-
նութիւնս այս 'ի վերայ թլփատութեանն է, եթէ
'ի վերայ անթլփատութեան. քանզի ասեմք՝
եթէ համարեցաւ Աբրահամու հաւատքն
10 յարդարութիւն։ * Արդ զիա՞րդ համարեցաւ.
մինչդեռ 'ի թլփատութեան էր՝ եթէ յանթլ-
փատութեան։ ոչ 'ի թլփատութեան, այլ յան-
11 թլփատութեան։ * Եւ նշանակ առ զթլփա- Ծննդ.
տութիւն, կնիք արդարութեան հաւատոցն՝ որ 17. 10.
12 յանթլփատութեանն անդ էր. * զի եղիցի նա հայր
ամենայն հաւատացելոց, որ յանթլփատութեանն ան-
տի իցեն, առ 'ի համարելոյ եւ նոցա արդարու-
թիւն. եւ հայր թլփատութեան՝ որոց ոչ 'ի թլ-
փատութենէ անտի են եթ, այլ եւ որոց երթայ-
ցեն զհետս անթլփատութեան հաւատոց հօր
մերոյ Աբրահամու։
13 * Զի ոչ եթէ օրինօքն էին աւետիքն Աբրա- Գ. Պ.
համու՝ եւ զաւակի նորա ժառանգ լինել աշ-
խարհի, այլ 'ի հաւատոյն արդարութենէ։
14 * Զի եթէ որք յօրինացն են, ժառանգ ի-
ցեն. ապա ընդունայն են հաւատքն՝ եւ խա-
15 փանեալ աւետիքն։ * Քանզի օրէնքն զբար-
կու-

կութիւն գործեն . բայց ուր ոչ են օրէնք՝ և
ոչ յանցանք են : * Վասն այնորիկ 'ի հա- 16
ւատոց անտի , զի ըստ շնորհացն իցէ . առ 'ի
լինելոյ հաստատուն աւետեացն ամ̃ զաւա-
կին . ոչ այնմ միայն՝ որ յօրինացն անտի , այլ
և այնմ որ 'ի հաւատոցն աբրահամու , որ
է հայր մեր ամենեցուն . * որպէս և գրեալ 17
Ծննդ. 17. 4. է , Թէ հայր ազգաց բազմաց արարի ըզ-
քեզ առաջի այ̃ . որում հաւատաց՝ եթէ կեն-
դանի առնէ զմեռեալս , և կոչէ զչգոյսն իբ-
րև զգոյս : * Որ յանյուսն յուսով հաւատաց 18
լինել նմա հայր ազգաց բազմաց . ըստ և ա-
Ծննդ. 15. 5. սացելումն , Թէ այնպէս եղիցի զաւակ քո :
* Եւ նա ոչ երկմտեաց 'ի հաւատոցն . թէ- 19
պէտ և հայեցաւ 'ի մարմին իւր այնուհետև
իբրև 'ի մեռեալ . քանզի հարիւրամենից
ուրեմն էր . և 'ի մեռելութիւն յարգանդին
սառայի : * Բայց յաւետեացն այ̃ ոչ երկ- 20
մտեաց անհաւատութեամբ . այլ զօրացաւ հա-
ւատովք , ետ փառս այ̃ . * և հաստատեցաւ 21
'ի միտս իւր , եթէ որ խոստացաւն՝ կարող
է առնել : * Վասն որոյ համարեցաւ նմա 22
յարդարութիւն : * Բայց՝ զի գրեցաւն , ոչ ե- 23
թէ վ̃ն նորա միայն՝ եթէ համարեցաւ նմա .
* այլ և վասն մեր՝ որոց համարելոց է . որք 24
հաւատամք յայն՝ որ յարոյցն զՅ̃ս զՏ̃ր մեր
'ի մեռելոց . * որ մատնեցաւ վ̃ն յանցանաց 25
մերոց . և յարեաւ վասն զմեզ արդարացու-
ցանելոյ :

ՎԵՐՋ

# ԳԼ. Ե.

1 Այսուհետեւ արդարացեալք ի հաւատոց
անտի, խաղաղութիւն կալցուք առ ա՟ծ ի
2 ձեռն տ՟ն մերոյ յի՟ ք՟ի. * ‖ Որով և զմու- ‖ Եփես. 2. 18.
ծանելն ընկալաք հաւատովք ի շնորհս յայ-
սոսիկ՝ յորում կամք. և պարծիմք յուսով
3 փառացն ա՟յ. * Ոչ և այսչափ միայն, այլ և
պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. ‖ Քանզի գի- ‖ Յակ. 1. 3.
տեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գոր-
4 ծեն, * համբերութիւն զհանդէս, հանդէս
5 զյոյս. * յոյս՝ ոչ երբէք ամաչեցուցանէ. զի
սէրն ա՟յ սփռեալ է ի սիրտս մեր, ի ձեռն
6 հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ. * Զի մինչդեռ
տկարքն էաք՝ ք՟ս վ՟ն մեր ի ժամանակի ‖ ի ‖ Եբր. 9. 14.
7 վ՟ն ամբարշտաց մեռաւ. * Զի վասն ար- 1. Պետ.
դարոյ հազիւ ոք մեռանիցի. այլ վասն բար- 3. 18.
ւոյ թերեւս համարձակիցի ոք մեռանել.
8 * Յայտնեաց ա՟ծ զսէրն իւր ի մեզ, զի մինչ-
9 դեռ մեղաւորքն էաք, * ք՟ս վասն մեր մե-
ռաւ. որչափ եւս առաւել յարդարանալս մե-
րում այժմիկ արեամբն նորա՝ ապրեսցուք նո-
10 վաւ ի բարկութենէ անտի. * Զի եթէ մինչ
թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ ա՟յ մահուամբ
որդւոյ նորա. որչափ եւս առաւել ի հաշտելս
11 մերում՝ ապրեսցուք կենօքն նորա. * Ոչ և
այսչափ միայն, այլ և պարծիմք եւս յա՟ծ ի
ձեռն տ՟ն մերոյ յի՟ ք՟ի. որով և զհաշտու-
թիւնս ընկալաք.
12 * Զի որպէս ի ձեռն միոյ մարդոյ մեղք յաշխարհ Գ. Օ.
մտին՝ և ի մեղաց անտի մահ. և այնպէս
յամ մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամե-
նե.

նեքին մեղան ։ * Վասն զի մինչեւ յօրէնսն 13
մեղք էին յաշխարհի. բայց մեղք ոչ համա-
րէին, ուր օրէնք ոչ իցեն ։ * Այլ թագաւո- 14
րեաց մահ յԱդամայ մինչեւ ցՄովսէս՝ եւ ի վե-
րայ չմեղուցելոցն, ի նմանութիւն յանցուածոցն
Ադամայ. որ է օրինակ հանդերձելոյն ։
* Այլ ոչ ոպ յանցանքն՝ նոյնպէս եւ շնորհքն. 15
զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան,
որչափ եւս առաւել շնորհքն այ եւ պարգեւքն՝
շնորհօք միոյն մարդոյ յի քի 'ի բազումս
առաւելաւ ։ * Եւ ոչ ոպ 'ի միոջէ յանցուցե- 16
լոյն պարգեւքս. զի դատաստանն 'ի միոջէ
յանցուածոյ անտի 'ի դատապարտութիւն.
այլ շնորհքն 'ի բազմաց յանցուածոցն յար-
դարութիւն ։ * Զի եթէ 'ի միոյն յանցանաց 17
մահ թագաւորեաց միով, որչափ եւս առա-
ւել՝ որք զառաւելութիւն շնորհաց եւ զպար-
գեաց արդարութեան առնուցուն, կենօք թա-
գաւորեսցեն 'ի ձեռն միոյն յի քի ։ * Ա- 18
պա ուրեմն՝ ոպ միոյն յանցանօք յամ մարդիկ
դատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն արդա-
րութեամբ՝ յամ մարդիկ արդարութիւն կենաց ։
* Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մար- 19
դոյ՝ մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս եւ
հնազանդութեամբ միոյն, արդարք բազումք ե-
ղիցին ։ * Բայց օրէնք 'ի ներքս անկան, զի 20
յանցանքն բազմասցին. զի ուր առաւել ե-
ղեն մեղքն, առաւել եւս յաւելան շնորհքն ։
* Զի ոպ թագաւորեցին մեղքն 'ի մահու- 21
անդ. նոյնպէս եւ շնորհքն թագաւորեսցեն
ՎԲՋ արդարութեամբ 'ի կեանսն յաւիտենից 'ի ձեռն
յի քի տն մերոյ ։

ԳԼ.

## ԳԼ․ Զ․

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք, յաճախեսցուք 'ի
2 մեղս՝ զի շնորհքն բազմասցին։ * Քա՛ւ լի-
ցի։ որք մեռաք մեղացն, զիա՞րդ տակաւին
3 'ի նմին կեցցեմք։ * Եթէ ոչ գիտէք՝ զի որ
միանգամ մկրտեցաք 'ի Քս Յս՝ ‖'ի մահ նորա
4 նր մկրտեցաք։ * ‖Թաղեցաք ընդ նմին մկր- ‖Գաղա.
տութեամբն 'ի մահ, զի որպէս յարեաւ Քս 'ի մե- 3. 27.
ռելոց փառօք Հօր. ‖նոյնպէս և մեք 'ի նո- ‖Կողոս.
5 րոգութիւն կենաց շրջեսցուք։ * Զի եթէ տըն- 2. 12.
կակից եղեաք նմանութեան մահու նր. այլ և ‖Եփես.
6 յարութեան նր լինիցիմք։ * Զայս գիտասջիք՝ 4. 23.
զի հին մարդն մեր խաչակից եղև նորա, զի 1. Պետ.
խափանեսցի մարմինն մեղացն, մի ևս ծա- 4. 2.
7 ռայել մեզ մեղացն։ * Զի որ մեռանին՝
8 արդարացեալ է 'ի մեղաց անտի։ * Իսկ ե-
թէ մեռաք ընդ Քսի, հաւատամք՝ թէ և կեց-
9 ցուք ընդ նմա։ * Գիտեմք՝ եթէ Քս յարու-
ցեալ է 'ի մեռելոց. այսուհետև ոչ մեռանի,
10 և մահ նմա ոչ ևս տիրէ։ * Զի որ մեռաւն՝
մեղացն մեռաւ միանգամ, և որ կենդանին
11 է՝ կենդանի է Այ։ * Նոյնպէս և դուք հա-
մարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և
կենդանիս Այ 'ի Քս Յս 'ի Տր մեր։
12 * Մի այսուհետև թագաւորեսցեն մեղք 'ի Գ. Ա
մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդել ցան-
13 կութեանց նորա։ * Եւ մի պատրաստէք զան-
դամս ձեր զէն անիրաւութեան մեղացն. այլ
պատրաստեսջիք զանձինս ձեր Այ՝ որպէս 'ի մե-
ռելոց 'ի կենդանիս. և զանդամս ձեր զէն
14 արդարութեան Այ։ * Զի մեղք ձեզ ոչ տի-
րեսց

րեսցեն. քանզի ոչ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնոր-
հօք։ * Իսկ արդ՝ զի՞նչ. մեղիցո՞ւք՝ զի չեմք 15
Ա Յհ. Ը. 34. ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք. քա՛ւ լիցի։ * Ո՞չ 16
Բ. Պետ. Բ. 19. գիտէք՝ թէ որում պատրաստէք զանձինս
ձեր ծառայս 'ի հնազանդութիւն, ծառայ էք՝
որում հնազանդիքն, եթէ մեղաց՝ 'ի մահ,
և եթէ 'ի հնազանդութիւն արդարութեան 'ի
կեանս։ * Այլ շնորհք այ. զի էիք ծառայք 17
մեղաց՝ հնազանդեցայք 'ի սրտէ՝ որում ա-
ւանդեցայք յաւանդ վարդապետութեան։ * Արդ՝ 18
ազատեցեալք 'ի մեղաց՝ ծառայեցէք արդա-
րութեան։ * Մարդկօրէն ասեմ վս տկարութեան 19
մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցիք
զանդամս ձեր ծառայս պղծութեան և անօրէ-
նութեան յանօրէնութիւն. նոյնպէս և այժմ պատ-
րաստեցէք զանդամս ձեր ծառայս արդա-
րութեան 'ի սրբութիւն։ * Զի մինչ ծառայքն 20
էիք մեղաց՝ ազատեալ էիք յարդարութենէ։
* Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ, 21
որովք այժմդ զամօթի հարեալ էք. զի վախ-
ճան նոցա մահ է։ * Բայց արդ ազատեցեալք 22
'ի մեղացն՝ և ծառայեալք այ՝ ունիք զպտուղ
ձեր 'ի սրբութիւն, և վախճան նոցա կեանք յա-
ւիտենից։ * Զի թոշակն մեղաց մահ է. 23
այլ շնորհքն այ կեանք յաւիտենից 'ի Քս Յս
'ի Տր մեր։

## ԳԼ. Է.

Ո՞չ եթէ ոչ գիտէք եղբարք, զի ընդ գիտունս 1
օրինաց խօսիմ. զի օրէնք տիրեն մարդոյ՝
Ա Կոր. Է. 39. որչափ ժամանակս կենդանի իցէ։ * Քանզի 2
կին առնակին 'ի կենդանի այր իւր կա-
պեալ

պնդեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռցի այրն,
3 արձակեալ է յօրինաց առնն. * Ապա ուրեմն
մինչ կենդանի է այրն, շուն կոչի՝ եթէ լինի-
ցի առն այլում. և եթէ մեռցի այրն՝ ազատ
է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի
4 առն այլում. * Այսուհետև և դուք եղ-
բարք՝ մեռայք օրինացն մարմնովն քրի, լի-
նել այլում որ ՚ի մեռելոցն յարուցեալ է, զի
5 պտղաբեր լիցուք այ. * Զի մինչ էաքն
մարմնով, կիրք մեղաց՝ որ օրինօքն էին՝ զօ-
րանային յանդամս մեր, առ ՚ի պտղաբեր
6 առնելոյ զմեզ մահու. * Բայց այժմ դա-
տարկացաք յօրինաց անտի. քանզի մեռաք
այնմիկ՝ որով ըմբռնեալն էաք, առ ՚ի ծա-
ռայել մեզ նորոգութբ հոգւոյն՝ և ոչ հնու-
7 թբ գրոյն. * Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն
մեղք իցեն. քաւ լիցի. այլ զմեղս ոչ գիտէի,
եթէ ոչ օրինօք. և զցանկութիւն ոչ ճանաչէի,
եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝ ‖ մի ցանկա- ‖ Ելից. 20. 17.
8 նայցես. * Պատճառս առեալ մեղքն պատուի- ‖ 2. Օրէ. 5. 21.
րանաւն, և գործեցին յիս զամ ցանկութի.
զի առանց օրինացն մեղքն մեռեալ էին.
9 * Այլ ես առանց օրինացն երբեմն էի կենդա-
նի, այլ իբրև հաս յիս պատուիրանն, մեղ-
10 քն կենդանացան. * և ես մեռայ, և գտ-
աւ ինձ պատուիրանն՝ որ ՚ի կեանս էր,
11 նոյն ՚ի մահ. * Զի մեղքն պատճառս ա-
ռեալ պատուիրանաւն՝ խաբեցին զիս, և նո-
վին սպանին.
12 *‖ Այսուհետև օրէնք ՚սբ են՝ և պատուի- Գ. Օ.
13 րանն ՚սբ և արդար և բարերար. * Իսկ արդ՝ ‖ 1. Տիմ.
ինձ բարին մա՞հ եղև. քաւ լիցի. այլ մեղ- 1. 8.
քն.

ղքն. զի երեւեսցին մեղքն բարեաւն գործել
ինձ զմահ. զի եղիցին յ̅յ առաւելեալն մեղքն
մեղաւոր 'ի ձեռն պատուիրանին ։ * Գի- 14
տեմք՝ զի օրէնքն հոգեւոր են. այլ ես մարմ-
նաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ ։ * Զի 15
զոր գործեմն ոչ գիտեմ, ոչ եթէ զոր կամիմն՝
զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գոր-
ծեմ ։ * Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առ- 16
նեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են ։
* Այլ արդ՝ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ 17
բնակեալ յիս մեղքն ։ * Գիտեմ զի ոչ բնա- 18
կեալ է յիս, այսինքն 'ի մարմնի իմում, բա-
րի ինչ. զի կամքն առաջի կան ինձ. և առ-
նել զբարին ոչ ։ * Զի ոչ եթէ՝ զոր կամիմ 19
զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն,
զայն գործեմ ։ * Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ 20
զայն առնեմ, ոչ եւս ես առնեմ զայն՝ այլ
բնակեալ յիս մեղքն ։ * Իսկ արդ՝ գտանեմ 21
զօրէնս այսորիկ՝ որ կամիցին առնել յիս ըզ-
բարին. և ինձ չարն առաջի կայ ։ * Հաճել 22
եմ ը̅ օրէնսն ա̅յ ը̅ն ներքին մարդոյն. * Բայց 23
տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ
հակառակ օրինաց մտաց իմոց. և գերեալ
զիս օրինացն մեղաց՝ որ են յանդամս իմ ։
* Այր մի տառապեալ եմ ես՝ ո̅վ ապրեցու- 24
ցէ զիս 'ի մարմնոյ աստի մահու ։ * Այլ շը- 25
նորհքն ա̅յ 'ի ձեռն յի̅ քի̅ տ̅ն մերոյ ։
ԻԿ Ապա ուրեմն՝ ես ինքնին մտօք իմովք ծա-
ռայեմ օրինացն ա̅յ. և մարմնով օրինացն
մեղաց ։

## ԳԼ. Ը.

1 Ո՛չ է այդպէս իցէ՝ ուրեմն դատապարտութիւն
2 է այնոցիկ՝ որ ՚ի Քս Յս են։ * Զի օրէնք հոգ-
ւոյն կենաց ՚ի Քս Յս ազատեցին զիս յօրէ-
3 նաց մեղացն եւ մահու։ * Զի որ անհնա-
րինն էր օրինացն՝ որով տկարանայր մարմնով.
|| Ած զՈրդին իւր առաքեաց ՚ի նմանութիւն || Սղ. 106.20.
մարմնոյ մեղաց՝ եւ վս մեղաց, եւ դատապար- Յովհ.
4 տեաց զմեղս ՚ի մարմնի անդ. * զի արդարու- 3. 16.
թիւն օրինացն կատարեսցի ՚ի մեզ, որք ոչ ըս
5 մարմնոյ գնայցեմք՝ այլ ըս հոգւոյն։ * Զի
որք ըս մարմնոյն՝ զմարմնոյն խորհին, եւ որք
6 ըստ հոգւոյն զհոգւոյն։ * Զի խորհուրդ
մարմնոյ՝ մահ է. եւ խորհուրդ հոգւոյն,
7 կեանք եւ խաղաղութիւն։ * Վասն զի խորհուրդ
մարմնոյ թշնամութիւն է յԱծ՝ զի օրինացն Այ
8 ոչ հնազանդի. նաեւ կարէ իսկ ոչ։ * Զի որ
մարմնոյն են, Այ հաճոյ լինել ոչ կարեն։
9 * Բայց դուք ոչ էք մարմնով այլ հոգւով,
եթէ իցէ հոգին Այ ՚ի ձեզ բնակեալ. ապա
եթէ որ զհոգի Քի ոչ ունի, նա չէ նորա։
10 * Իսկ եթէ Քս ՚ի ձեզ է՝ ապա մարմին մե-
ռեալ է վասն մեղաց. եւ հոգին կենդանի է
11 վս արդարութեան։ * Եթէ հոգի այնորիկ՝
որ յարոյց զՅս ՚ի մեռելոց, բնակեալ է ՚ի
ձեզ. ապա եւ որ յարոյց զՅս Քս ՚ի մեռելոց՝
կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր
բնակեալ հոգւովն իւրով ՚ի ձեզ։ ՎԵՐՋ
12 * Այսուհետեւ եղբարք՝ պարտապան եմք ոչ
13 մարմնոյ՝ ըստ մարմնոյ կեալ։ * Զի թէ ըս
մարմնոյ կեայք՝ մեռանելոց էք. իսկ եթէ

հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեց-
ջիք ։ * Զի որ հոգւովն Այ վարին, նոքա են 14
‖ Բ․ Տիմ․ որդիք Այ ։ * ‖ Զի ոչ առիք զհոգին ծա- 15
1․ 7․ ռայութեան միւանգամ յերկիւղ, այլ առիք
‖ Գաղ․ 4․ 5․ զհոգին ‖ որդեգրութեան․ որով աղաղակեմք
Աբբայ․ Հայր ։ * Նոյն ինքն հոգին վկայէ 16
հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Այ ։ * Եւ 17
եթէ որդիք, ապա եւ ժառանգք․ ժառանգք
‖ Ղուկ․ Այ՝ եւ ժառանգակիցք Քի․ ‖ եթէ չարչա-
24․ 26․ րանացն կցորդ լինիմք, եւ փառացն հաղորդ
լինելոց եմք ։ * Ինձ այսպէս թուի՝ եթէ ոչ 18
են արժանի չարչարանք ժամանակիս հան-
դերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ ։
* Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան 19
որդւոյն Այ սպասէ ։ * Զի ընդունայնութեան 20
արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կա-
մաւ՝ այլ վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն
յուսով ։ * զի եւ ինքեանք իսկ արարածքն ա- 21
զատեսցին ՚ի ծառայութենէ ապականութեան՝
յազատութիւն փառաց որդւոյն Այ ։ * Քան- 22
զի գիտեմք, եթէ ամ արարածք հեծեն եւ
երկնեն մինչեւ ցայժմ ։ * Եւ ոչ այսչափ 23
միայն․ այլեւ մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն
ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք՝ որ-
‖ Ղուկ․ դեգրութեան ակն կալեալ ‖ փրկութեան մարմնոյ
21․ 28․ մերոյ ։ * Զի յուսով ապրեցաք․ այլ յոյս 24
տեսանելի՝ չէ յոյս․ զի զոր տեսանէ ոք՝ զի
եւս յուսայ ։ * Ապա թէ զոր ոչն տեսանեմք 25
‖ Եփ․ յուսամք, ‖ համբերութեամբ ակն ունիմք ։
6․ 18․ * Նոյնպէս եւ հոգին ՚ի թիկունս հասանէ 26
տկարութեան մերում․ զի զոր կամքն յաղօթս՝
որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք․ այլ ինքնին
հո-

հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռմռնչս
27 * Այլ որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խոր-
հուրդ է հոգւոյն. զի ըստ այ բարեխօսէ վս
28 սրբոց. * Այլ գիտեմք՝ եթէ որոց սիրեն
զած՝ յամն գործակից լինի 'ի բարիս՝ որք
29 հրաւիրմանն կոչեցանն. * Զի զորս յառաջն
ճանաչէր յառաջագոյն և հրաւիրեաց կեր-
պարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ.
զի եղիցի նա անդրանիկ 'ի մէջ եղբարց բազ-
30 մաց. * Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց՝
զնոսին և կոչեաց. և զորս կոչեացն, զնոսին
և արդարացոյց. և զորս արդարացոյցն, ըզ-
31 նոսին և փառաւորս արար. * Իսկ արդ զի՞նչ
ասեմք առ այս. եթէ ած 'ի մեր կոյս է, ո՞վ
32 իցէ մեր հակառակ. * || Որ յիւր որդին ոչ || Եսայ.
խնայեաց՝ այլ վս մեր ամենեցուն մատնեաց 53. 6.
զնա. զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամն շնոր-
33 հիցէ մեզ. * Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի
ընտրելոց այ. ած է որ արդարացուցանէ,
34 * իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ.
Քս յս՝ որ մեռաւն մանաւանդ թէ յարու-
ցեալ իսկ է. || Եւ է ընդ աջմէ այ, որ և բա- || Մրկ.
35 րեխօս իսկ է վս մեր. * Ո՞վ մեկնեսցէ 16. 19.
զմեզ 'ի սիրոյն քի, նեղութի՞ թէ անձկու-
թի՞ թէ հալածանք՝ թէ սով թէ մերկութի՞
36 թէ վիշտք՝ թէ սուր. * որպէս և գրեալ է.
|| Վն քո մեռանիմք զօրհանապազ, համարե- || Սաղ.
37 ցաք իբրև զոչխար 'ի սպանդ. * Այլ յայսմ 43. 22.
ամենայնի, առաւել յաղթեմք նովաւ՝ որ
38 սիրեացն զմեզ. * Վստահ հաստատեալ եմ,
եթէ՝ ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակ և
ոչ իշխանութիւնք. և ոչ որկանս և ոչ հանդեր-

ձեալք և ոչ զօրութիւնք , * և ոչ բարձրութիւն 39
և ոչ խորութիւն , և ոչ այլ ինչ արարած՝ կա-
րէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ ա̃յ , որ ՚ի
քս̃ յս̃ ՚ի տ̃ր մեր ։

## ԳԼ. Թ.

ԽԴ Ճշմարտութիւն ասեմ ՚ի քս̃՝ և ոչ ստեմ , վ- 1
կայէ ինձ միտք իմ ՚ի Հոգին սր̃ . * զի տրտմու- 2
թիւն է ինձ յոյժ՝ և անպակաս ցաւք սրտի
իմոյ . * Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինք- 3
նին նզովեալ լինել ՚ի քսէ , վասն եղբարց իմոց
և ազգականաց ըս̃ մարմնոյ , * որ են Իսրա- 4
յելացիք . որոց որդեգրութիւն և փառքն և կտա-
կարանքն և օրէնսդրութիւնն և պաշտօնն և
աւետիքն , * որոց հարքն , յորոց և քս̃ ըստ 5
մարմնոյն , որ է ՚ի վերայ ամենեցուն ա̃ծ օրհ-
նեալ յաւիտեանս . ամէն ։ * Այլ ոչ եթէ 6
անկեալ իցէ բանն այ̃ . զի ոչ ամե-
նեքեան՝ որ յԻսրայէլէ են , նոքա Իսրայէլ
իցեն . * և ոչ որ զաւակն Աբրահամու են՝ 7
‖ Ծնն. ամենեքեան որդիք իցեն . ‖ այլ Իսահակաւ
21. 12. կոչեսցի քեզ զաւակ ։ * Այսինքն ոչ եթէ 8
որ որդիք մարմնոյն են , են որդիք այ̃ . այլ
‖ Գաղ. ‖ որդիք աւետեացն համարին ՚ի զաւակ ։
4. 28. * Զի աւետեաց իսկ է բանս այս , եթէ 9
‖ Ծնն. 18. 10. ‖ ՚ի ժամանակի յայսմիկ եկից՝ և եղիցի որդի
‖ Ծնն. Սառայի ։ * Եւ ոչ այնչափ միայն՝ ‖ այլ և ՚ի 10
25. 24. Հռեբեկայ ՚ի միոջէ անկողնոյ Սահակայ հօր
մերոյ ։ * Զի մինչչև ծնեալ էին , և մինչչև 11
բարի ինչ՝ կամ չար գործեալ էին . զի ըստ
ընտրութեանն առաջադրութիւն այ̃ հաստատես-
ցի . * ոչ ՚ի գործոց՝ այլ յայնմանէ որ կոչեացն՝ 12

ասա

13 ասացաւ նմա. * ‖ Եթէ երէցն կրտսերոյն ծա- ‖ Ծննդ.
ռայեսցէ. որպէս եւ գրեալ է. Եթէ ‖ զյակովբ 25. 23.
14 սիրեցի, եւ զեսաւ ատեցի: * Իսկ արդ՝ զի՞նչ ‖ Մաղ.
ասեմք. միթէ անիրաւութիւն իցէ յա՟յ. քաւ 1. 2.
15 լիցի: * Զի Մովսիսի ասէ. ‖ ողորմեցայց՝ ‖ Ելից.
որում ողորմեցայցն, եւ գթացայց՝ յորս գը- 33. 19.
16 թացայցն: * Ապա ոչ ը՟ս այնմ իցէ՝ որ կա-
միցին, եւ ոչ ը՟ս այնմ՝ որ ընթանայցէ. այլ
ըստ ա՟յ՝ որ ողորմին:
17 * Վասնզի ասէ գիր ցփարաւոն. ‖ Եթէ վասն Ի. Օ.
այսորիկ զարթուցի զքեզ, զի 'ի քեզ ցուցից ‖ Ելից.
զզօրութիւն իմ, եւ պատմեսցի անուն իմ ընդ 9. 16.
18 ամ՟ երկիր: * Ապա ուրեմն՝ ում կամի՝ ողոր-
19 մի, եւ ում կամի՝ խստանայ: * Իսկ արդ ա-
սիցես, թէ մեղ եւս զի՞ դնէ՝ զի կամաց նր՟
20 ո՞ կայ հակառակ: * Իսկ արդ՝ դու ո՞վ
ես մարդ՝ որ պատասխանի տաս ա՟յ: ‖ միթէ ‖ Իմաստ.
ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր 15. 7.
21 այդպէս արարեր զիս: * Եթէ ո՞չ ունիցի իշ- Եսայ. 45. 9.
խանութիւն բրուտն կաւոյն, 'ի նմին զանգ- Երեմ.
ուածոյ առնել անօթ՝ զոմն 'ի պատիւ եւ զոմն 18. 6.
22 յանարգանս: * Ապա եթէ կամէր ա՟ծ ցու-
ցանել զբարկութիւն, եւ յայտնի առնել զզօ-
րութիւն իւր. որ համբերեաց բազում երկայն-
մտութեամբ անօթոյն բարկութեան՝ պատրաստե-
23 լոյն 'ի կորուստ: * Զի յայտնի արասցէ ըզ-
մեծութիւն փառաց իւրոց 'ի վ՟ր անօթոյն ո-
ղորմութեան, զոր պատրաստեաց 'ի փառս:
24 * Զորս եւ կոչեաց զմեզ, ոչ միայն 'ի հրէից՝
25 այլ եւ 'ի հեթանոսաց. * որպէս եւ յովսէէ ա-
սէ: ‖ կոչեցից՝ զոր ոչ ժողովուրդն իմ, ժո- ‖ Ովսէ.
ղովուրդ իմ. եւ զանսիրեցեալն՝ սիրեցեալ, եւ 2. 23.
1. Պետ.
զո- 2. 10.

Ովսէէ. զչողորմեալն՝ ողորմեալ: *Եւ եղիցի 'ի 26
1. 10. տեղւոջ յորում ասացաւ նոցա՝ թէ ոչ ժողո-
վուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք
Այ կենդանւոյ: *Եսայի աղաղակէ վն Իէլի. 27
Եսայ. Եթէ իցէ թիւ որդւոյն Իէլի իբրեւ զաւազ
10. 22. ծովու՝ սակաւ ինչ մնացորդք մնասցեն: *Զի 28
բան մի հատանէր՝ եւ համառօտ արդարութբ.
զբանն հատանէր՝ արասցէ Տր 'ի վերայ երկրի:
Եսայ. *Եւ որպէս ասէ Եսայի. Եթէ ոչ Տր զօրու- 29
1. 9. թեան թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զսոդոմ
լինէաք՝ եւ զգոմորայ նմանէաք:
Զ Կ *Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք՝ 30
որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին
արդարութեան, այնմ արդարութեան որ 'ի հա-
ւատոց անտի: *Իսկ Իէլ երթայր զհետ 31
օրինացն արդարութեան՝ եւ յօրէնս արդարութեն
ոչ ժամանեաց: *Ընդէ՞ր. զի ոչ 'ի հաւա- 32
տոց՝ այլ իբրեւ 'ի գործոց օրինաց. քանզի
գթեցին նոքա առ վիմին գայթակղութեն.
Եսայ. *որպէս եւ գրեալ է. Ահաւասիկ դնեմ 'ի 33
28. 16. Սիոն քար գայթակղութեն եւ վէմ գլորման.
1. Պետ. 2. 7. եւ Ամ որ հաւատասցէ 'ի նա՝ մի ամաչեսցէ:

## ԳԼ. Ժ.

Եղբարք՝ իմ կամք սրտի եւ աղօթք առ Ած, 1
վն նոցա են 'ի փրկութի: *Քանզի վկայեմ 2
նց՝ թէ նախանձն Այ ունին, այլ ոչ գիտու-
թբ: *Զի տգէտ են Այ արդարութեն, եւ 3
զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդա-
րութեն Այ ոչ հնազանդեցան: *Քանզի 4
կատարած օրինացն Քս է յարդարութի Ամ
հաւատացելոց:

Ամե

5 * Մովսէս գրէ զարդարութիւն, որ յօրինաց Օ Գ.
անտի է. || Թէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ || Ղեւ.
6 նովին. * Իսկ զհաւատոյն արդարութէ այս- 18. 5.
պէս ասէ. || Մի ասիցես 'ի սրտի քում, ո՞վ ե- || Երկ.
լանիցէ յերկինս, այսինքն է՝ զՔս իջուցանել. 30. 11.
7 * կամ ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է՝ Գործ. 5. 12.
8 զՔս հանել 'ի մեռելոց. * Այլ զինչ ասէ || Օրէն.
գիր. || Մերձ է բանն 'ի բերան քո՝ և 'ի սրտի 30. 12.
քում է. այսինքն է՝ բանն հաւատոյ զոր || Օրէն. 30. 14.
9 քարոզեմք. * Զի եթէ խոստովանեսցես
բերանով քով զՏր Յս. և հաւատասցես 'ի
սրտի քում, թէ Ած յարոյց զնա 'ի մեռելոց,
10 կեցցես. * Զի սրտիւ հաւատայ յարդա-
րութիւն, և բերանով խոստովանի 'ի փրկու-
11 թիւն. * Վասնզի ասէ գիր. || Ամ՝ որ հաւա- || Եսայ.
12 տասցէ 'ի նա, մի ամաչեսցէ. * Զի ոչ գոյ 28. 16.
խտիր հրէի և հեթանոսի. քանզի նոյն Տր
է ամենեցուն, բաւական յամենեսին՝ որք
13 կարդան առ նա. * || Զի ամ՝ որ կարդաս- || Յովէլ.
14 ցէ զանուն Տն՝ կեցցէ. * Իսկ զիարդ կար- 2. 32.
դասցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիարդ Գործ. 2. 21.
հաւատասցեն՝ որում ոչ լուան. կմ զիարդ
15 լուիցեն առանց ուրուք քարոզելոյ. * կամ
զիարդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին.
որպէս և գրեալ է. || Իբրև զի գեղեցիկ են ոտք || Եսայ.
աւետարանչացն խաղաղութե և աւետարան- 52. 7. Նաւ.
16 չացն բարութե. * Այլ ոչ ամենեքեան հնա- 1. 15.
զանդ եղեն աւետարանին. Եսայի աղաղա- || Եսայ.
17 կէ. || Տր՝ ո՞ հաւատաց լսել մերում. * Ապա 53. 1.
ուրեմն՝ հաւատք 'ի լսելոյ են, և լսելք 'ի բա- Յովհ. 12. 38.
նէն Քի. ՎԵՐՋ.
18 * Այլ ասեմ, միթէ ո՞չ լուան. մանաւանդ՝

զի

‖ Սաղ. 18. 5. ‖ զի ընդ ամ երկիր ել բարբառ նց, եւ ընդ ծագս
տիեզերաց խօսք նոցա։ * Այլ ասեմ, միթէ 19
‖ Բ Օրէ. 32. 21. Իսրայէլ ոչ լուաւ. նախ Մովսէս ասէ, ‖ Ես
նախանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ,
եւ ազգաւ անմտաւ զկծեցուցից զձեզ։
* Բայց Եսայի համարձակի խօսի՝ եւ ասէ. 20
‖ Եսայ. 65. 1. ‖ Գտայ այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին. յայտ
նի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին։
‖ Եսայ. 65. 2. * Այլ առ Իսրայէլ ասէ. ‖ Զօր ամենայն ձգե 21
ցի զձեռս իմ առ ժողովուրդ անհաւան՝
եւ հակառակող։

## ԳԼ. ԺԱ.

ՕՕ. Իսկ արդ՝ ասեմ, միթէ մերժեաց ած զժո 1
ղովուրդ իւր. քաւ լիցի. քանզի եւ ես Իս
րայէլացի եմ, 'ի զաւակէ Աբրահամու յազ
գէ Բենիամինի։ * Ոչ մերժեաց ած զժողո 2
վուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ. թէ ոչ
գիտէք յԵղիա զինչ ասէ գիր. որպէս ամբաս
‖ Գ Թագ. 19. 10. տան լինի առ այ զԻէլէ։ * ‖ Տէր՝ զմարգարէսն քո 3
կոտորեցին, եւ զսեղանս քո կործանեցին. ես
մնացի միայն, եւ խնդրեն զանձն իմ։ * Այլ 4
‖ Գ Թագ. 19. 18. զինչ ասէ նմա պատասխանին ‖. Թողի ինձ ասէ՝
եօթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր
բահաղու։ * Նոյնպէս եւ յայսմ ժամանակի 5
մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն եղեն։
* Իսկ եթէ շնորհօք՝ ոչ եւս 'ի գործոց. ապա 6
թէ ոչ՝ շնորհքն՝ ոչ եւս շնորհք լինէին։ * Իսկ 7
արդ՝ զոր խնդրէրն Իէլ, այնմ ոչ եհաս.
‖ Եսայ. 6. 9. բայց ընտրութիւնն եհաս. եւ այլքն կուրացան.
* որպէս գրեալ է. ‖ Ետ նոցա ած հոգի յիմա 8
29. 10. րութեան. աչս որովք ոչ տեսանիցեն, եւ ա
կանջս՝

կանջս որովք մի լուիցեն, մինչեւ ցայսօր ժա- Գործ. 28. 26.
9 մանակի։ * Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սե- Սաղ. 68. 23.
ղանք նոցա յորոգայթ եւ ՚ի յորս եւ ՚ի գայ-
10 թագղութ՝ եւ ՚ի հատուցումն նոցին։ * Խա-
ւարեսցին աչք նոցա զի մի տեսցեն. եւ զթի-
11 կունս նոցա հանապազ կորացո։ * Իսկ արդ ա-
սեմ, միթէ վասն այնորիկ յանցեան՝ զի կոր-
ծանեսցին. քաւ լիցի. այլ նոցա յանցանօքն
փրկութիւն հեթանոսաց. զի նախանձ արկցէ
12 նոցա։ * Իսկ եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշ-
խարհի, եւ պակասութիւնն նոցա մեծութիւն հե-
թանոսաց. որչափ եւս առաւել լրութիւն նոցա։
13 * Բայց ձեզ ասեմ հեթանոսացդ՝ որչափ ժա- Լ. Կ
մանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշ-
14 պաշտօնն իմ փառաւոր առնեմ. * զի թերե-
ւս նախանձ արկից նոցա մարմնոյ իմոյ եւ
15 ապրեցուցից զոմանս ՚ի նոցանէ։ * Զի ե-
թէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է. իսկ
ընդունելութիւնն զինչ իցէ, եթէ ոչ կենդա-
16 նութիւն ՚ի մեռելոց։ * Իսկ եթէ սկիզբն սուրբ
է՝ եւ զանգուածն. եւ եթէ արմատն՝ սուրբ է, եւ
17 ոստքն։ * Իսկ եթէ յոստոց անտի ոմանք փշրե-
ցան, եւ դու որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատ-
ուաստեցար ՚ի նոսա, եւ բաժանորդ եղեր
18 արմատոյն՝ եւ պարարտութեան ձիթենւոյն, * մի
պարծիր առ ոստովքն. ապա եթէ պարծի-
ցես՝ ոչ եթէ դու զարմատն ՚ի վեր ունիս,
19 այլ արմատն զքեզ։ * Իսկ արդ՝ ասիցես,
ոստքն փշրեցան՝ զի ես պատուաստեցայց։
20 * Բարւոք է՝ անհաւատութեամբ փշրեցան, եւ
դու հաւատովք հաստատեցար. մի հպար-
21 տանար՝ այլ երկիր։ * Զի թէ ած ՚ի բնէ

ոստոցն

ոստոցն ոչ խնայեաց, գուցէ երբեք և 'ի քեզ
ոչ խնայիցէ. * Արդ՝ տես զքաղցրութիւն և 22
զսաստկութիւն այ. 'ի վ(երայ) կործանելոցն սաստ-
կութիւն, և 'ի վ(երայ) քո քաղցրութիւն այ, եթէ կաց-
ցես 'ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ՝ և դու
կոտորեսցիս. * Եւ նոքա եթէ ոչ 'ի նմին 23
անհաւատութեան կայցեն, պատուաստեսցին.
զի կարօղ է այ միւսանգամ պատուաստել
զնոսա. * Զի եթէ դու 'ի բնէ 'ի վայրենի 24
ձիթենւոյ անտի հատար՝ և յանբնէ 'ի բա-
րի ձիթենւոջն պատուաստեցար, որչափ ևս
առաւել նոքա՝ որ բնականքն իսկ են՝ պատուա-
ստեսցին յիւրեանց ձիթենւոջն.

ԻԲ *Զի ոչ կամիմ եղբարք եթէ տգէտ իցէք խոր- 25
հրդոյս այսմիկ, զի մի յանձինս ձեր իցէք
իմաստունք. զի կուրութիւն փոքր 'ի շատէ ե-
ղև իէլի. մինչև լրումն հեթանոսաց մտցէ,
* և ապա ամ իէլ կեցցէ. որպ և գրեալ է. 26
Ես. ԿԹ. 20. Եկեսցէ 'ի սիոնէ փրկիչ՝ և դարձուսցէ
զամբարշտութիւնս 'ի յակոբայ. * Եւ այս 27
նց՝ որ յինէն ուխտ, յորժամ բարձից զմեղս
նոցա. * Ըստ աւետարանին թշնամիք են վս 28
ձեր, ըստ ընտրութեանն սիրելիք վասն հարցն.
* Քանզի անզեղջ են շնորհքն՝ և կոչումն այ. 29
* Զի որպ և դուք երբեմն ապստամբ էիք 30
յայ՝ և արդ ողորմութիւն գտէք առ նոցա ա-
պստամբութեամբն. * Նոյնպէս և նոքա այժմ 31
ապստամբ եղեն առ ձերով ողորմութեամբդ. զի
և նոքա ողորմութիւն գտցեն. * Քանզի ար- 32
գել այ զամենեսին յանհաւանութիւն, զի զա-
մենեսեան ողորմեսցի. * Ով խորք մեծութեան 33
Սաղ. ՃԳ. 24. և իմաստութեան և գիտութեան այ. Որպէս զի

աւանց

առանց քննելոյ են դատաստանք նորա, և ա-
34 ռանց զննելոյ են ճանապարհք նորա։ *‖ Զի ‖Եսայ.
ո՞վ գիտաց զմիտս Տն, կամ ո՞վ խորհրդակից Խ. 13.
35 եղև նմա. *կամ ո՞վ ետ նմա փոխ, և առնու- Իմաստ.
36 ցու զփոխարէն ՚ի նմանէ։ *Զի ՚ի նմանէ՝ Թ. 13.
և նովաւ՝ և ՚ի նոյն ամ՛ն նմա փառք յաւի- 1. Կոր. Բ. 16.
տեանս. ամէն։ ՎԵՐՋ.

## ԳԼ. ԺԲ.

1 Աղաչեմ զձեզ եղբարք գթութեամբքն Այ՝
‖ պատրաստել զմարմինս ձեր պատարագ ‖Փիլիպ.
կենդանի որ՝ հաճոյ Այ զխօսուն պաշտօնդ Դ. 18.
2 ձեր. *և մի կերպարանիք կերպարանօք աշ-
խարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ՚ի նո-
րոգութիւն մտաց ձերոց, ‖ առ ՚ի քննել ձեզ ‖Եփես.
զկամս, և եթէ զինչ են կամք Այ՝ բարին և Ե. 17.
3 հաճոյն և կատարեալն։ *Զայս ասեմ շը- 1. Թեսաղ. Դ. 3.
նորհօքն Այ՝ որ տուեալ են ինձ, ամի որ է ՚ի
ձեզ. մի առաւել ինչ խորհել քան զար-
ժանն խորհելոյ. այլ խորհել ՚ի զգաստանալ
‖ իւրաքանչիւր՝ ըստ և բաժանեաց Ած չափ ‖1. Կոր.
4 հաւատոց։ *Որպէս ՚ի միում մարմնի ան- ԺԲ. 11.
դամս բազումս ունիմք. և անդամքն ամ՛ ոչ Եփես. Դ. 7.
5 զնոյն գործ ունին։ *Նոյնպէս և բազումքս
մի մարմին եմք ՚ի Քս. այլ իւրաքանչիւր մի-
6 մեանց անդամք եմք։ *Բայց ունիմք մեք
շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ
ազգս ազգս. եթէ մարգարէութիւն ըստ չա-
7 փուն հաւատոց, *եթէ պաշտօն՝ ըստ պաշ-
տաման, եթէ որ ուսուցանէն՝ ՚ի վարդա-
8 պետութեան. *եթէ որ մխիթարէն՝ ՚ի մխի-
թարութեան. որ առատն է՝ զուարթութ՛, որ վե-

րա-

րակացուն է՝ փութով, որ ողորմին՝ զուարթու-
‖Ամովս. 5. 15. թեամբ։ * Սէր առանց կեղծաւորութեան, ‖ ատել 9
‖Եփես. 4. 3. զչար, զհետ երթալ բարեաց. * ‖ Յեղբայր- 10
1. Պետ. 2. 17. սիրութե̃ առ միմեանս գթածք. 'ի պատու-
զմիմեամբք եղանել. * 'ի փոյթ՝ մի՛ վհե- 11
րոտք. հոգւով եռացեալք, Տն̃ ծառայեցէք,
* յուսով խնդացէք, նեղութե̃ համբերեցէք, 12
աղօթից առէջ կացէք, * 'ի պէտս սրբոց հա- 13
‖Եբրայ. 13. 2. ղորդեցարո̃ւք. ‖ զհիւրասիրութե̃ զհետ եր-
1. Պետ. 4. 9. թայք։ * Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհ- 14
նեցէք և մի՛ անիծանէք։ * Խնդալ ը̃ խնդա- 15
ցօղս, լալ ը̃դ լացօղս. * զնոյն միմեանց 16
խորհիջիք. մի՛ ամբարտաւանէք՝ այլ ը̃ խո-
‖Առակ. 3. 7. նարհս գիջանիցէք. ‖ մի՛ լինիք իմաստունք
յանձինս ձեր. * մի՛ ումեք չարի չար հատու- 17
‖2. Կորն. 8. 21. ցանէք. ‖ խորհեցարո̃ւք զբարիս առաջի ա̃մ
մարդկան։ * ‖ Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ը̃ 18
‖Եբրայ. 12. 14. ա̃մ մարդկան խաղաղութի կալջիք։ * Մի՛ 19
‖Մատթ. 5. 39. զանձանց վրէժխնդիրք սիրելիք, ‖ այլ տուք
տեղի բարկութե̃. քանզի գրեալ է. ‖ Իմ է
‖2. Օրին. 32. 35. վրէժխնդրութի, և ես հատուցից ասէ Տր̃։
Եբրայ. 10. 30. * ‖ Այլ եթէ քաղցեալ իցէ թշնամի քո՝ հաց 20
‖Առակ. 25. 21. տուր նմա, և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմ̃.
զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտես-
ցես 'ի գլուխ նր̃. * Մի՛ յաղթիր 'ի չարէն. 21
այլ յաղթեա՛ բարեաւն չարին։

## ԳԼ. ԺԳ.

‖1. Պետ. 2. 13. Ամենայն ‖ անձն որ ը̃ իշխանութբ̃ իցէ՝ 'ի 1
‖Իմաստ. 6. 4. հնազանդութե̃ կացցէ. ‖ քանզի ո՛չ ուստեք
է իշխանութիւն, եթէ ոչ յԱյ. և որ են,
յԱյ կարգեալ են. * Այսուհետև որ հա- 2

կա-

կառակ կայ իշխանութեանն, այ հրամանին հա-
կառակ կայ. և որք հակառակն կան, ան-
3 ձանց դատաստանս ընդունին. * Զի իշխան-
քըն ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ
չարաց. Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի,
զբարիս գործեա, և ընկալցիս գգովութի 'ի
4 նմանէ. * Զի այ պաշտօնեայ է քեզ 'ի բա-
րիս. Ապա եթէ չար գործիցես, երկիր.
զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ
մէջ. այ սպասաւոր է՝ վրէժխնդիր 'ի բար-
5 կութի, այնմ՝ որ զչարն գործիցէ. * Վասն
որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն
6 բարկութեանն, այլ և վասն խղճի. * Վասն
այնորիկ և հարկս հարկանէք, զի այ սպա-
7 սաւորք են 'ի նոյն կանխեալք. * || Արդ՝ հա- || Մատթ. 22. 21.
տուցէք իւրաքանչիւր զպարտս. որում ըզ-
հարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, ո-
րում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝
8 զպատիւն. * Եւ մի ումեք պարտապան գը-
տանիցէք, բայց զմիմեանս սիրել. զի որ
սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ, * || զՄի || Ելք. 20. 14.
9 շնայցես, և մի սպանանիցես, և մի գողա- Օրին. 5. 18.
նայցես, և մի սուտ վկայիցես, և մի ցան-
կանայցես. և եթէ այլ ինչ պատուիրան || Ղեւտ.
է՝ յայսմ բանի բովանդակի, եթէ || Սիրեսցես 19. 18. Մատթ.
10 զընկեր քո իբրև զանձն քո. * Սէր ընկերի 22. 39.
իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն սէր է. Մարկ.
11 * Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս. զի 12. 31.
արդ ժամ իսկ է մեզ 'ի քնոյ զարթնուլ. զի Գաղատ. 5. 14.
այժմ մերձ է մեզ փրկութի. քանզի յորժամ Յակ.
12 հաւատացաքն, * գիշերն մերժեցաւ՝ և տիւն 2. 8.
մերձեցաւ. 'ի բաց արասցուք այսուհետև

ըզ-

զգործս խաւարի, և զգեցցուք զզէնս լու-
սոյ։ *Իբրև 'ի տուընջեան զգաստացեալք 13
Ղուկ. 21. 34. շրջեսցուք. մի անառակութբ՝ և արբեցու-
թեամբ, և մի խառն անկողնովք՝ և պղծութբ,
Գաղատ. 5. 16. և մի նախանձու՝ և հակառակութբ. *Այլ 14
զգեցարուք զՏէր ՅՍ ՔՍ. և մարմնոյ խնամ մի
տանիք 'ի ցանկութիւն։

## ԳԼ. ԺԴ.

Զայլ զտկարացեալն 'ի հաւատս ընկալա- 1
րուք՝ մի խղճիւ երկմտութեց։ *Ոմն հա- 2
ւատայ ուտել զամ. և որ հիւանդն է, բան-
ջար կերիցէ։ *Որ ուտէն, զայն՝ որ ոչն ու- 3
տէ՝ մի անգոսնեսցէ. և որ ոչն ուտէ, զայն՝
որ ուտէն, մի դատեսցի. քանզի ԱԾ զնա
Յակ. 4. 13. ընկալաւ։ *Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ 4
ծառայ. իւրում Տն կայ՝ կամ անկանի. բայց
կացցէ՝ զի կարող է Տր հաստատել զնա։
*Ոմն պահէ օր ըստ օրէ՝ և ոմն պահէ զօրհա- 5
նապազ. իւրաքանչիւրոք զիւր միտս հաճես-
ցէ։ *Որ խորհի զօրն՝ Տն խորհի. և որ ոչն 6
խորհի զօրն, Տն չխորհի. և որ ուտէ, Տն
ուտէ, և գոհանայ զԱյ. և որ ոչն ուտէ, Տն
չուտէ, և գոհանայ զԱյ։ *Զի ոչ ոք 'ի մէնջ 7
անձամբ կեայ, և ոչ անձամբ մեռանի։ *Ե- 8
թէ կեամք՝ Տն կեամք, և եթէ մեռանիմք՝
Տն մեռանիմք. և արդ՝ եթէ կեամք և ե-
թէ մեռանիմք՝ Տն եմք։ *Քանզի 'ի նոյն 9
իսկ և ՔՍ մեռաւ և եկաց, զի մեռելոց և
կենդանեաց սա հասարակ տիրեսցէ։ *Դու 10
զի՞ դատիս զեղբայր քո. կամ ընդէ՞ր անգոս-
Բ.Կոր. 5. 10. նես զեղբայր քո։ Քանզի ամենեքին կա-

լոց

11 լոց եմք առաջի ատենին Քի։ * Զի գրեալ
է. ‖ Կենդանի եմ ես ասէ Տր. զի ինձ կրկ- ‖ Եսայ. 45. 24.
նեսցի ամ ծունր եւ ամ լեզու խոստովան լի- Փիլիպ. 2. 10.
12 ցի այ։ * Ապա ուրեմն՝ իւրաքանչիւրոք ՚ի
13 մենջ ընդ անձին համարս տացէ այ։ * Մի ա-
յսուհետեւ՝ մի զմիմեանս դատեսցուք. այլ ա-
ռաւել զայս դիք ՚ի միտ՝ չդնել գայթագղու-
14 թիւն եղբօրն։ * Զայս գիտեմ, եւ հաստա-
տեալ եմ ՚ի Քս Յս, զի ոչինչ է պիղծ նովաւ.
բայց այնմ, որ համարիցի ոք ինչ պիղծ՝ նմա
15 է պիղծ։ * Զի եթէ վասն կերակրոյ եղ-
բայրն քո տրտմի, ոչ եւս սիրով գնացեր. ‖ մի ‖ 1. Կորն. 8. 11.
կերակրովն քով զնա կորուսաներ, վա որոյ
16 Քս մեռաւ։ * Մի հայհոյեսցի բարին ձեր։
17 * Զի ոչ է արքայութիւն այ կերակուր եւ ըմ-
պելի, այլ արդարութիւն եւ խնդութիւն եւ խա-
18 ղաղութիւն ՚ի հոգին սբ։ * Զի որ յայսմ ծա-
ռայէ Քսի, հաճոյ է այ՝ եւ ընտիր մարդկան։
19 * Ապա այսուհետեւ զհետ երթիցուք զխա-
ղաղութեան, եւ զշինութեան որ առ միմեանս։
20 * Մի վա կերակրոյ քակեր զգործ այ. ‖ ամ ‖ Տիտ. 1. 15.
ինչ սբ է. այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճ-
21 միւն ուտիցէ։ * ‖ Լաւ է ոչ ուտել միս, եւ ‖ 1. Կորն. 8. 13.
ոչ ըմպել գինի. եւ ոչ՝ որով եղբայրն քո
22 գայթագղի կամ գթէ կամ տկարանայ։ * Դու-
ապաքէն հաւատս ունիս, կալ առանձինն ա-
ռաջի այ. երանի որ ոչ դատիցի զանձն, ո-
23 րով զընկերն փորձիցէ։ * Բայց որ խղճէն,
թէպէտ եւ ուտիցէ՝ դատապարտեալ է՝ զի
ոչ ըստ հաւատոց, զի ամ ինչ՝ որ ոչ ՚ի հա-
ւատոց է՝ մեղք են։ Այլ այնմ, որ կարօղն
է հաստատել զձեզ ըստ աւետարանին իմում

եւ

և ըստ քարոզութեան յսի քսի, ըստ յայտնութեան
խորհրդոյն՝ ժամանակօքն յաւիտենիցն լռեցե-
լոյ, և յայտնելոյ այժմիկ ՚ի ձեռն գրոց մար-
գարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին
այ, ՚ի հնազանդութիւն հաւատոյ, յամ հե-
թանոսս ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն այ,
՚ի ձեռն յսի քսի. որում փառք յաւիտեանս-
ամէն ։

## ԳԼ. ԺԵ.

ԻԳ. Պարտ է մեզ՝ որ կարողս եմք՝ զտկարութիւն 1
տկարացն բառնալ. և մի անձանց և եթ
հաճոյ լինել ։ * Իւրաքանչիւրոք ՚ի մէնջ 2
ընկերին հաճոյ լիցի ՚ի բարիս՝ վսն շինութեան ։
* Զի և քս ոչ եթէ անձին հաճոյ եղև, 3
Սղ. 68. 10. այլ որպէս և գրեալ է. Նախատինք նախատ-
չաց քոց անկան ՚ի վերայ իմ ։ * Զի այց որ ինչ 4
գրեցաւ՝ ՚ի մեր վարդապետութիւն գրեցաւ.
զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց. զյոյսն
ընկալցուք ։ * Այլ այ համբերութեան և 5
Ա. Կոր. 1. 10. այ մխիթարութեան, տացէ ձեզ զնոյն խորհել
ըստ միմեանս ըստ յսի քսի. * զի միաբանութեամբ ՚ի 6
մի բերան փառաւոր առնիցէք զայ, և զհ-
այր տն մերոյ յսի քսի ։ * Վսն որոյ ընկա- 7
լարուք զմիմեանս. որպէս և քս ընկալաւ զձ-
եզ ՚ի փառս այ ։ * Ասեմ, թէ քսի սպա- 8
սաւոր թլփատութեան լինել՝ վսն ճշմարտու-
թեան այ էր, առ ՚ի հաստատութեան առնելոյ զա-
ւետիս հարցն ։ * Այլ հեթանոսք վսն ողոր- 9
մութեան փառաւոր առնեն զայ, որպէս և գրեալ
Բ. Թագ. 22. 50. է. Վասն այսորիկ գոհացայց զքէն ՚ի հե-
Սղ. 17. 50. թանոսս, և անուան քում սաղմոս ասացից ։

* Եւ

10 * Իսկ դարձեալ ասէ. ուրախ լերուք հեթա-
11 նոսք ը՟ն ժողովրդեան ն՟ր։ * Իսկ դարձեալ
թէ, ‖ օրհնեցէք ամ՟ հեթանոսք զՏ՟ր, և գո- ‖ Սղմ.
12 վեցէք զնա ամ՟ ժողովուրդք։ * Իսկ դարձեալ 116. 1.
Եսայի ասէ. ‖ եղիցի արմատն Յեսսեայ. և ‖ Եսայ.
որ կանգնելոցն է՝ իշխան հեթանոսաց, ՚ի 11. 10.
13 նա հեթանոսք յուսասցեն։ * Այլ Ած յու-
սոյ՝ լի արասցէ զձեզ ամ՟ խնդութ՟բ և խաղա-
ղութ՟բ, առաւելուլ ձեզ յուսով զօրութ՟բ Հոգ-
ւոյն սրբոյ։
14 * Հաստատեալ եմ և ես ինքնին եղբարք իմ՝ ԼԴ
վ՟ն ձեր, զի և դուք լի էք բարութ՟բ, լի էք
ամ՟ գիտութ՟բ, կարօղ էք և զմիմեանս խրա-
15 տել։ * Այլ համարձակագոյնս գրեցի առ
ձեզ եղբարք իմ՝ փոքր ՚ի շատէ, իբրև յիշե-
ցուցանելով ձեզ վ՟ն շնորհացն՝ որ տուեալ
16 էն ինձ յԱյ. * լինել ինձ պաշտօնեայ յս՟ի ք՟սի
՚ի հեթանոսս. քրմակերպս առնել զաւետա-
րանն Այ, զի եղիցի պատարագն հեթանո-
սաց ընդունելի՝ սրբեալ Հոգւովն սրբով։
17 * Ունիմ այսուհետև պարծանս ՚ի ք՟ս յս՟ի առ
18 Ած։ * Ոչ ինչ իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ
գործեաց ք՟ս ինև ՚ի հնազանդութի հեթա-
19 նոսաց՝ բանիւք և արդեամբք, * զօրութ՟բ
նշանաց և արուեստից, զօրութ՟բ Հոգւոյն սրբոյ.
որ ինձ յե՟ղմէ և շուրջ՝ մինչև ՚ի կողմանս Իլիւ-
20 րիկացւոց լնուլ զաւետարանն ք՟սի։ * Այլ այ-
սպէս առաստեալ յաւետարանել, ոչ ուր
անուանեցաւ ք՟ս, զի մի իբրև յայլոց հիմանս
21 վ՟ր շինիցեմ, այլ որպ՟ս և գրեալ է, * ‖ Թէ ո- ‖ Եսայ.
րոց ոչ պատմեցաւ վ՟ն նր՝ տեսցեն, և որոց 52. 15.
22 ոչ իցէ լուեալ՝ ՚ի միտ առցեն։ ‖ * Վասն ո- ‖ Վեր.
րոյ 1. 13.

որոյ շատ խափանեցայ գալ առ ձեզ. *Բայց 23
արդ՝ ոչ եւս գոյ ինձ տեղի ՚ի կողմանս յայսո֊
սիկ. եւ անձուկ յոյժ ունիմ ՚ի բազում ամաց
գալ առ ձեզ. *Յորժամ անցանիցեմ ՚ի 24
Սպանիա, ակն ունիմ յանցանելն առ նոսա՝
տեսանել զձեզ. եւ ՚ի ձէնջ յուղարկիլ անդր,
եթէ նախ իսկ փոքր ՚ի շատէ ձեւք լցայց.
*Բայց այժմ երթամ յԵ̃էմ պաշտել զսրբսն. 25
*Քանզի հաճոյ թուեցաւ Մակեդոնացւոցն 26
եւ Աքայեցւոցն հաղորդութիւն ինչ առնել
ընդ աղքատս սրբոցն՝ որ են յԵ̃էմ. *Հա֊ 27
ճոյ թուեցաւ, քանզի եւ պարտապան իսկ
Ա. Կոր. էին նց. ‖ Զի եթէ հոգեւորացն նոցա հաղորդ֊
Թ. 11. եղեն հեթանոսք, պարտին եւ մարմնաւորա֊
ցըն կցորդ լինել նոցա. *Արդ՝ զայս կատա֊ 28
րեալ՝ եւ կնքեալ զպտուղ նոցա, անցից առ
ձեօք ՚ի Սպանիա. *Զայս գիտեմ, զի ՚ի 29
գալն առ ձեզ, լրութ̃բ օրհնութ̃ե աւետարա֊
նին քսի եկից.
Լ. Ն *Աղաչեմ զձեզ եղբարք ՚ի ձեռն տ̃ն մերոյ 30
յսի քսի եւ սիրով հոգւոյն, պատերազմակից
լինել ինձ յաղօթս վս իմ առ ած. *զի ապ֊ 31
րեցայց յապստամբացն, որ ՚ի Հրէաստանի
են. եւ պաշտօնն իմ որ յԵ̃էմ, ընդունելի լի֊
ցի սրբոցն. *զի խնդութ̃բ եկեալ առ ձեզ 32
՚ի կամս այ, հանգեայց ընդ ձեզ. *Եւ ած 33
խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսին.
ամէն.

## ԳԼ. ԺԶ.

Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, 1
որ է սպասաւոր եկեղեցւոյն Կենքրացւոց.

զի

2 * զի զնա ընկալջիք 'ի Տէր՝ արժանի սրբոց,
և վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց
և կոչեսցէ զձեզ. քանզի և նա վերակացու
3 եղև բազմաց, և ինձ իսկ զլխովին. * Ող-
ջոյն տաջիք ‖ Պրիսկեայ և Ակիւղեայ՝ գոր- ‖ Գործ. 18.2.26.
4 ծակցաց իմոց 'ի Քս Յս. * որք ընդ անձին ի-
մոյ զիւրեանց պարանոցս մատուցին. զորոց
ոչ ես միայն գոհանամ, այլ և ամենայն ե-
5 կեղեցիք հեթանոսաց. * Եւ առ տանն եկե-
ղեցւոյն նոցա. Ողջոյն տաջիք Եպենետեայ սի-
րելւոյ իմոյ՝ որ է պտուղ Ասիացւոց 'ի Քս.
6 * Ողջոյն տաջիք Մարեմայ՝ որ բազում վաս-
7 տակս վաստակեաց 'ի ձեզ. * Ողջոյն տաջիք
Անդրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց՝
և գերեկցաց, որք երևելիքն իսկ են յառա-
քելոց. որք և յառաջ իսկ քան զիս եղեն 'ի
8 Քս. * Ողջոյն տաջիք Ամպղեայ սիրելւոյ ի-
9 մոյ 'ի Տէր. * Ողջոյն տաջիք Ուրբանեայ գոր-
ծակցի իմոյ 'ի Տէր, և Ստաքեայ սիրելւոյ ի-
10 մոյ. * Ողջոյն տաջիք Ապեղեայ՝ որ ընտրելն
11 է 'ի Տէր. * Ողջոյն տաջիք նոցա, որ յԱրիստա-
բուղեայ տանէ անտի են. Ողջոյն տաջիք Հե-
րովդիոնեայ ազգականի իմոյ. Ողջոյն տաջիք
այնոցիկ՝ որք 'ի Նարկիսեայ տանէն իցեն 'ի
12 Տէր. * Ողջոյն տաջիք Տրիփոնեայ և Տրիփո-
սեայ վաստակաւորաց 'ի Տէր. Ողջոյն տաջիք
Պերսիդեայ սիրելւոյ, որ բազում վաստակս
13 վաստակեաց 'ի Տէր. * Ողջոյն տաջիք Ռու-
փեայ ընտրելոյ 'ի Տէր, և մօր նորա և իմոյ.
14 * Ողջոյն տաջիք Ասինկրիտեայ՝ Փղեգոն-
տեայ՝ Երմեայ՝ Պատրոբայ՝ Երմայ, և որ ընդ
15 նոսա եղբարք իցեն. * Ողջոյն տաջիք Փիղո-

ղոգեայ՝ յուղեայ՝ ներեայ՝ և քեռ նորա. և
ուղիմպեայ, և որ ընդ նոսա սուրբք ամենե-
քին իցեն. * Ողջոյն տայջիք միմեանց 'ի համ- 16
բոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ ամենայն
եկեղեցիք քսի.
ՕԼ. * Աղաչեմ զձեզ եղբարք՝ դիտել զայնպի- 17
սիսն, որ հերձուածս և գայթագղութիւնս
առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր
դուքն ուսայք. և խորշեցարուք 'ի նոցանէ.
* Զի այնպիսիքն տն մերում քսի ոչ ծա- 18
ռայեն, այլ իւրեանց որովայնի. և քաղցրա-
բանութբ և օրհնութբ պատրեն զսիրտս ան-
մեղաց. * Զի ձեր հնազանդութիւն առ ա- 19
մենեսեան հասեալ է. և արդ՝ 'ի ձեզ ու-
րախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստունս լի-
նել 'ի բարիս՝ և անմեղս 'ի չարիս. * Ա- 20
ած խաղաղութեան խորտակեսցէ զսատանայ
ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ. Շնորհք
‖Գործ. տն մերոյ յսի քսի ընդ ձեզ. * ‖Ողջոյն տայ 21
16. 1. ձեզ տիմոթէոս եղբայր և գործակից իմ, ‖և
‖13. 1. ղուկիոս, ‖և յասոն, ‖և սոսիպատրոս ազ-
‖17. 5. ‖20. 4. գականք իմ. * Ողջոյն տամ ձեզ՝ և ես տեր- 22
‖1 Կորն. 1. 14. տիոս, որ գծուցի զթուղթս 'ի տր. * ‖Ողջոյն 23
տայ ձեզ գայիոս ասպնջական իմ, և ամե-
‖Գործ. նայն եկեղեցւոյն. ‖Ողջոյն տայ ձեզ երաս-
19. 22. 2. Տիմ. տոս շահապ քաղաքիս, և կուարտոս եղ-
4. 20. բայր. * Շնորհք տն մերոյ յսի քսի ընդ ձեզ 24
ընդ ամենեսեան. ամէն. * Այլ այնմ, որ 25
կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարա-
նին իմում, և ըստ քարոզութեան յսի քսի,
ըստ յայտնութե խորհրդոյ այսորիկ՝ ժա-
մանակօք յաւիտենից լռեցելոյ, * և յայտ- 26
նելոյ

նելոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէակա-
նաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին Այ, 'ի
հնազանդութիւն հաւատոյ. յամենայն հե-
27 թանոսս ծանուցելոյ, * միայնոյ իմաստնոյն
Այ 'ի ձեռն Յի Քի. նմա պատիւ և փառք
յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Առ հռովմայեցիս գրեցաւ 'ի կորնթոսէ 'ի ձեռն
փիբեայ սպասաւորի.



# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ.

## ԳԼ. Ա.

ԱԹ ՊՕՂՈՍ ԿՈՉԵՑԵԱԼ 1
առաքեալ յի քի կամօքն այ,
եւ սոսթենէս եղբայր. * եկեղեց- 2
ւոյդ այ որ է 'ի կորնթոս՝ սրբելոց 'ի քս
յս, կոչեցելոց սրբոց՝ ամենեքումբք հան-
դերձ, որք կարդան զանուն տն մերոյ յի
քի յամ տեղիս նոցա՝ եւ մեր. * Շնորհք 3
ընդ ձեզ եւ խաղաղութիւն յայ հօրէ մերմէ՝
եւ 'ի տնէ յսէ քսէ. * Գոհանամ զայ իմոյ 4
յամենայն ժամ վասն ձեր՝ 'ի վերայ շնորհացն
այ՝ որ տուեալ են ձեզ 'ի քս յս. * զի յամե- 5
նայնի մեծացարուք դուք նովաւ՝ ամ բանիւ
եւ ամ գիտութ. * որպ վկայութիւն քի հաս- 6
տատեցաւ 'ի ձեզ. * զի դուք մի՛ նուազիցիք՝ 7
եւ մի՛ ինչ շնորհաց, ակնկալեալ յայտնութեան
տն մերոյ յի քի. * որ եւ հաստատեսցէ զձ- 8
ձեզ մինչեւ 'ի կատարած՝ անարատս՝ յօր տն
Ղ։ Թե․ Ե․ ձե․ մերոյ յի քի: * Հաւատարիմ է այ, ո- 9
րով կոչեցարուք 'ի հաղորդութիւն որդւոյ նր
յի քի տն մերոյ.

Ա.Օ.

10 *Աղաչեմ զձեզ եղբարք անուամբն Տն մե-
րոյ Յի Քի. ‖ զի զնոյն բան ասիցէք ամե- ‖Հռով.
նեքեան, և մի իցեն ՚ի ձեզ հերձուածք. 15. 5.
բայց լերուք հաստատեալք ՚ի նոյն միտս և ՚ի
11 նոյն հանճար։ *Ազդ եղև ինձ վն ձեր եղ-
բարք՝ ՚ի Քղուացւոց անտի, թէ հակառա-
12 կութիւնք են ՚ի ձեզ։ *Այս արդ ասեմ իսկ,
եթէ իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ ասէ. Ես Պօ-
ղոսեան եմ, և միւսն՝ եթէ Ես ‖ Ապողոսեան, ‖Գործ.
և միւսն՝ եթէ Ես Կեփայեան. և միւսն՝ եթէ 18. 24.
13 Ես Քսեան։ *Իսկ արդ՝ բաժանեալ ինչ իցէ
Քս, միթէ Պօղոս ՚ի խաչ ելեալ իցէ վասն
ձեր, կամ յանուն Պօղոսի մկրտեցարուք։
14 *Գոհանամ զԱյ իմոյ՝ զի ոչ զոք ՚ի ձէնջ
մկրտեցի՝ ‖ բայց միայն զԿրիսպոս՝ և զԳայիոս. ‖Գործ.
15 զի մի ոք ասիցէ, *թէ յիմ անուն մկրտեցա- 18. 8.
16 րուք։ *Զայլ ևսս կնքի և տանն Ստեփա- Հռով.
նեայ. և զայլ ոք ոչ գիտեմ ամենևին՝ թէ 16. 23.
17 մկրտեցի։ *Զի ոչ առաքեաց զիս Քս մկր-
տել՝ այլ աւետարանել. ‖ ոչ ճարտարութբ ‖Կոր.
բանից, զի մի ընդունայն լիցի խաչն Քի։ 2. 1. 4.
և 13.
18 *Զի բանն խաչին, կորուսելոցն յիմարութի 2. Պետ.
19 է. այլ փրկելոցս մեզ՝ ‖ զօրութիւն Այ։ *Զի 1. 16.
գրեալ է. ‖ կորուսից զիմաստութիւն իմաստ- ‖Հռով.
նոց. և զխորհուրդս խորհրդականաց ար- 1. 16.
20 համարհեցից։ *‖ Ո՞ւր իմաստունն, ուր դպ- ‖Եսայ.
պիր, ուր քննիչ աշխարհիս այսորիկ. ‖ ոչ 29. 14.
ապաքէն յիմարեցոյց Ած զիմաստութիւն աշ- ‖Եսայ. 33. 18.
21 խարհիս այսորիկ։ *Քանզի իմաստութեամբն ‖Հռով. 1. 22.
Այ ոչ ծանեաւ աշխարհս իմաստութեամբն զԱծ.
հաճեցաւ Ած յիմարութեամբ քարոզութեանն ապ-
րեցուցանել զհաւատացեալս։

*Իսկ

Ա. Կ * Նաեւ որովհետեւ Հրեայք ‖ նշան հայցեն, եւ 22
‖ Մատթ. հեթանոսք զիմաստութիւն խնդրեն. * Մեք 23
12. 39. քարոզեսցուք զխաչելեալն Քս, Հրէից գայ-
Ղուկ. թագղութիւն, եւ հեթանոսաց յիմարութիւն.
11. 29. * բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից եւ հե- 24
թանոսաց, զՔս՝ Այ զօրութիւն՝ եւ Այ իմաստու-
թիւն. * Զի յիմարն Այ իմաստնագոյն է քան 25
զմարդիկ. եւ տկարն Այ զօրագոյն է քան ըզ-
մարդիկ. * Նայեցէք եւ զձեր իսկ կոչումնդ 26
տեսէք եղբարք, զի ոչ բազում իմաստունք
ըստ մարմնոյ, եւ ոչ բազում հզօրք, եւ ոչ բա-
զում ազնուականք. * Այլ զյիմարս աշխար- 27
հիս ընտրեաց Այ՝ զի յամօթ արասցէ զիմաս-
տունս. եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Այ՝
զի յամօթ արասցէ զհզօրս. * Եւ զանտոհմս 28
աշխարհի եւ զարհամարհեալս ընտրեաց Այ՝
եւ զոչինչսն, զի զէսն իմն խափանեսցէ. * այդ 29
զի մի պարծեսցի ամ մարմին առաջի Այ.
* Զի ՚ի նմանէ դուք էք ՚ի Քս Յս. որ եղեւ 30
‖ Երեմ. մեզ իմաստութիւն յԱյ, ‖ արդարութիւն եւ սըր-
23. 5. բութիւն եւ փրկութիւն. * զի որպէս եւ գրեալ է. 31
‖ 9. 24. ‖ Որ պարծին՝ ՚ի Տր պարծեսցի.
2. Կորն.
10. 17.

## ԳԼ. Բ.

‖ Գործ. Եւ ես թէպէտ ‖ եւ եկի առ ձեզ եղբարք՝ 1
18. 1. ոչ ըստ առաւելութեան ինչ բանից իմաստու-
թեան պատմել ձեզ զվկայութիւն Այ. * Զի ոչ 2
եթէ ՚ի մտի եդի գիտել ինչ ՚ի ձեզ՝ բայց
միայն զՅս Քս՝ եւ զնոյն ՚ի խաչ ելեալ. * Եւ 3
ես տկարութեամբ եւ երկիւղիւ եւ դողմամբ բազ-
‖ Վեր. մաւ եղէ առ ձեզ. * Եւ բանն իմ եւ քարոզու- 4
1. 17. թիւն, ‖ ոչ պատիր բանիւք իմաստութեան այլ
2. Պետ.
1. 16.

որ-

5 արդեամբք հոգւոյն և զօրութեամբ. * զի հաւատք ձեր մի իցեն իմաստութեամբ մարդկան,
այլ զօրութեամբ այ. ՎԵՐՋ.
6 * Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս.
զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ, և ոչ
զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանե-
7 լեացս. * այլ խօսիմք զայ իմաստութիւնն
ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյա-
ւիտեանս սահմանեաց այ ՚ի փառս մեր.
8 * զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ
ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ ար-
9 դեօք զտէրն փառաց ՚ի խաչ հանէին. * Այլ
որպէս և գրեալ է. ‖ Զոր ակն ոչ ետես, և ունկն ‖ Եսայ.
ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, ԿԴ. 4.
պատրաստեաց այ սիրելեաց իւրոց.
10 * Այլ մեզ յայտնեաց այ հոգւովն իւրով. Ի. Գ.
11 զի հոգին զամ քննէ՝ և զխորս այ. * Ո՞վ ոք
՚ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ
հոգի մարդոյն՝ որ ՚ի նմա. Նոյնպէս և ոչ
12 զայն որ զայ՝ եթէ ոչ հոգին այ. * Այլ
մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք՝ այլ
զհոգին որ յայ. զի ծանիցուք զայն՝ որ յայն
13 շնորհեցաւ մեզ. * ‖ Զոր և խօսիմքս՝ ոչ ‖ Վէր.
եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան 1. 17.
բանից, այլ վարդապետութեամբ հոգւոյն սբ հո- Բ. 1. 4. Բ. Պետ.
14 գևորս զհոգևորաւն համեմատեմք. * Բայց 1. 16.
շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն այ՝ զի
յիմարութիւն է նմա. և ոչ կարէ գիտել՝ եթէ
15 հոգևորպէս քննիցի. * Իսկ հոգևորն քննէ ‖ Իմաստ.
16 զամ, և ինքն յումեքէ ոչ քննի. * ‖ Իսկ 9. 13.
արդ՝ ո՞վ գիտաց զմիտս տն, որ և խրատա- Եսայ.
կեսցի նմա. այլ մեք զմիտս քի ունիմք: Խ. 13.
ԳԼ. Գ. Հռով. 11. 34.

## ԳԼ. Գ.

Եւ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ընդ ձեզ 1
իբրեւ ընդ հոգեւորս՝ այլ իբրեւ ընդ մարմ-
նաւորս։ * Իբրեւ տղայոց ի Քրիստոս, կաթն ջամ- 2
բեցի ձեզ՝ եւ ոչ կերակուր, զի ոչ եւս կարէիք.
նաեւ արդ եւս ոչ կարէք. քանզի դեռ մարմ-
նաւոր էք։ * Ուր եւ արդ են եւս ի ձեզ հեռ 3
եւ նախանձ. ո՞չ ապաքէն մարմնաւոր էք՝ եւ
ըստ մարդկան գնայք։ * Յորժամ ասէ ոք ի 4
ձէնջ՝ ես Պօղոսեան եմ, եւ միւսն՝ թէ ես Ա-
պօղոսեան, ո՞չ մարդիկ էք. իսկ արդ՝ ո՞վ է
Պօղոս, կամ ո՞վ է Ապօղոս։ * Պաշտօնեայք, 5
որովք հաւատացէքն, եւ իւրաքանչիւր որպէս եւ
Տէր ետ։ * Ես տնկեցի, Ապօղոս ջուր ետ, 6
այլ Աստուած աճեցոյց։ * Այսուհետեւ՝ ոչ այն որ 7
ինչ է՝ որ տնկեացն, եւ ոչ այն՝ որ ջուրն ետ.
այլ որ աճեցոյցն Աստուած։ * Որ տնկեացն եւ որ 8
|| Սաղ. զջուրն ետ՝ մի են. բայց || իւրաքանչիւրոք
61. 13. զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց։
Մատ. * Զի Աստուծոյ գործակից եմք, Աստուծոյ՝ արդիւն էք, 9
16. 27. Աստուծոյ շինուած էք։ * Ըստ շնորհացն Աստուծոյ՝ որ տու- 10
Հռով. 2. 6. եալ են ինձ, իբրեւ իմաստուն ճարտարա-
պետ հիմն եդի. բայց այլ է՝ որ շինէն. այլ
իւրաքանչիւրոք զգոյշ լիցի՝ թէ ո՞րպէս շինիցէ։
* Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զե- 11
Պ.Ր.Զ. դեալն՝ որ է Յիսուս Քրիստոս։
* Եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ՝ 12
ոսկի արծաթ՝ ականս պատուականս՝ փայտ
խոտ եղէգն, * իւրաքանչիւր գործն յայտ- 13
նելոց է. զի օրն ընտրեսցէ, զի հրով յայտ-
նելոց է. * եւ զիւրաքանչիւր գործն զիարդ 14

եւ

15 և ինքն՝ հուրն փրկեսցի։ *Եթէ ուրուք
գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ. և
եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի,
բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ 'ի
16 հուր։ *Ո՞չ գիտէք՝ եթէ տաճար էք Այ՝ և
17 հոգի Այ բնակեալ է 'ի ձեզ։ *Եթէ որ ըզ-
տաճար Այ ապականէ, ապականեսցէ զնա
Այ. ‖ զի տաճար Այ սուրբ է, որ էք դուք։ ‖ Վեր. 6. 19.
18 *Մի ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կա- 2. Կոր. 6. 16.
մեսցի 'ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս
յայսմիկ, յիմար լիցի՝ զի եղիցի իմաստուն։
19 *Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յի-
մարութիւն է առաջի Այ. քանզի գրեալ է՝ ‖ թէ ‖ Յոբ. 5. 13.
որ ըմբռնէ զիմաստունս 'ի խորագիտութեան
20 իւրեանց։ *Եւ դարձեալ՝ թէ ‖ Տր ճա- ‖ Սաղ. 93. 11.
նաչէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդու-
21 նայն։ *Այսուհետև մի ոք պարծեսցի 'ի
22 մարդկանէ։ *Զի ամենայն ձեր է. եթէ Պօ-
ղոս, եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշ-
խարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ
կանս, եթէ հանդերձեալքն. ամենայն ձեր
23 է. *դուք Քի, Քս Այ։

## ԳԼ. Դ.

1 Այսպէս ‖ համարեսցին զմեզ մարդիկ, իբ- ‖ 2 Կոր. 6. 4.
րև զպաշտօնեայս Քի՝ և հազարապետս
2 խորհրդոցն Այ։ *Այլ՝ խնդիր է 'ի մէջ հա-
զարապետաց՝ եթէ որ հաւատարիմ գտցի։
3 *Այլ ինձ և այս անարգանք են, եթէ 'ի
ձէնջ դատեցայց՝ կամ յաւուր իւիք 'ի մարդկա-
4 նէ. նաև զանձն իմ ոչ քննեմ։ *Զի ոչինչ
գիտեմ զանձին իմոյ. այլ ոչ եթէ այսու ար-
դա

դարանամ, զի որ քննէն զիս տէր է ։ *Այ- 5
սուհետև մի յառաջ քան զժամանակն դա-
տիք. մինչև եկեսցէ տէր, որ լուսաւոր առնէ-
ցէ զգաղտնիս խաւարի, և յայտնեսցէ զխոր-
հուրդս սրտից. և ապա իւրաքանչիւր գո-
վութիւն եղիցի յայ ։ *Զայս եղբարք՝ առա- 6
կեցի յանձն իմ և յապողոս վասն ձեր. զի 'ի
մեզ ուսջիք՝ մի ինչ առաւել քան զգրեալն
խորհել. զի մի այլ քան զընկեր հպարտա-
նայցէք 'ի վերայ ընկերին ։ *Իսկ արդ ո՞վ 7
է՝ որ քննեսցէ զքեզ. զի՞նչ ունիս՝ զոր ոչ իցէ
առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև
զչառեալ ։ *Արդէն իսկ յագեալ իցէք՝ և ար- 8
դէն մեծացայք, առանց մեր թագաւորե-
ցիք. և երանի թէ թագաւորէիք՝ զի և մեք
ը̃ ձեզ թագաւորեաք ։ *Իսկ այսպէս թուի՝ 9
եթէ զմեզ զառաքեալս յետինս արար ած՝
իբրև զմահապարտս. զի տեսիլ եղեաք աշ-
խարհի, և հրեշտակաց և մարդկան ։ *Մեք 10
յիմարք վս քի, և դուք իմաստունք 'ի քս.
մեք տկարք՝ և դուք հզօրք. դուք փառաւո-
րեալք՝ և մեք անարգք ։ *Մինչև ցայսօր 11
ժամանակի՝ և քաղցեաք և ծարաւեցաք և
մերկ գնացաք և կափահարեցաք և անհան-
Գործ. գիստ եղեաք. *և վաստակեցաք ձեռօք մե- 12
20. 34. րովք. բամբասեալք զմեզ՝ օրհնեաք. հալա-
1. Թես. ծեալք՝ յանձն առնուաք. *Հայհոյեալք՝ աղա- 13
2. 9.
2. Թես. չեաք. իբրև աղբ նշաւակի եղեաք ամ
3. 8. աշխարհի. ամենեցուն փարելի լինել մինչև
ցայժմ ։ *Ոչ եթէ ամօթ ինչ առնելով ըզ- 14
ձեզ՝ գրեմ զայս, այլ իբրև զորդիս սիրելիս
խրատեմ ։ *Եթէպէտ և բիւր դաստիարակս 15
ունիք.

ունիցիք ՚ի Քս՝ այլ ոչ եթէ բազում հարս.
զի ՚ի Քս Յս աւետարանաւն ես ծնայ զձեզ:
16 *Արդ՝ աղաչեմ զձեզ նմանօղք ինձ եղիջիք՝
17 ոպ եւ ես Քի: *Վասն այնորիկ առաքեցի
առ ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրելի՝
եւ հաւատարիմ ՚ի Տր. որ յիշեցուսցէ ձեզ
զճանապարհս իմ, որ ՚ի Քս Յս. ոպ եւ ամե-
նայն ուրեք՝ յամենայն եկեղեցիս ուսուցա-
18 նեմ: *Որպէս թէ ես չգիցեմ գալոց առ ձեզ՝
19 ոմանք հպարտացան: *Այլ եկից հուպ ը̃
հուպ՝ եթէ Տր կամեսցի. եւ ՚ի միտ առից
ոչ զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն:
20 *Զի ոչ եթէ բանիւք է արքայութիւն Այ,
21 այլ զօրութբ: *Արդ՝ որպէս կամիք՝ գաւա-
զանա՞ւ եկից առ ձեզ, եթէ սիրով հոգւոյն՝
հեզութն եւ արդարութն եւ խոնարհութն:

## ԳԼ. Ե.

1 Ոնաւ եւ ամենեւին իսկ ՚ի ձեզ ընդհէ՞ր պոռն-
կութիւն, || եւ այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ || Ղեւ.
եւ ՚ի հեթանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ 18. 7.
2 ունել: *Եւ դուք հպարտացեալ էք. եւ ոչ 20. 11.
առաւել սգացարուք, զի բարձցի ՚ի միջոյ
3 ձերմէ՝ որ զգործն զայն գործեաց: *|| Զի || Կողոս.
ես թէպէտ մարմնով մեկուսի եմ, սակայն 2. 5.
հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրեւ ՚ի
մօտոյ ընտրեցի. զայն՝ որ այնպէսն գոր-
4 ծեաց. *յանուն Տն մերոյ Յսի Քսի, ժողո-
վել ձեզ ՚ի միասին՝ եւ իմով հոգւովս՝ զօրու-
5 թբն Տն մերոյ Յսի Քսի, *մատ-
նել զայնպիսին սատանայի ՚ի սատակումն
մարմնոյ. զի ոգին ապրեսցի յաւուրն Տն մե-

րոյ յսի քսի։ * Ոչ բարւոք են պարծանքդ 6
‖ Գաղա. ձեր. Ոչ գիտէք՝ եթէ փոքր մի խմոր զամ
5. 9. զանգուածն խմորէ։ * Սրբեցէք ՚ի բաց ըզ 7
հին զխմորն՝ զի եղիջիք նոր զանգուած, որպ
էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զենաւ
քս։ * Այսուհետեւ արասցուք տօնս. մի ՚ի 8
խմորն հին, եւ մի ՚ի խմորն չարութեան եւ անզգա-
մութեան. այլ յանխմորս ստուգութեան եւ ճշ-
մարտութեան։

ԻԶ. * Գրեցի ձեզ ՚ի թղթի այդր չխառնակել 9
ընդ պոռնիկս։ * Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս 10
աշխարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս եւ ընդ
յափշտակօղս՝ կամ ընդ կռապաշտս. ապա
թէ ոչ՝ պարտ էիք եւ յաշխարհէ իսկ ելանել։
‖ Բ Թե. * Բայց արդ՝ գրեցի ձեզ չխառնակել. եւ 11
3. 14. թէ որ եղբայր անուանեալ, կամ պոռնիկ իցէ
կամ կռապաշտ՝ կամ ագահ՝ կամ բամբասօղ՝
կամ արբեցօղ՝ կամ յափշտակօղ, ընդ այնպի-
սումն եւ հաց մի ուտել։ * Զի՞ կայ իմ եւ 12
զարտաքինսն դատել. ո՞չ ապաքէն զառ
զներքինսդ դատիջիք։ * Եւ զարտաքինսն ած 13
դատեսցի. բարձէք զչարն ՚ի միջոյ ձերմէ։

## ԳԼ. Զ.

Իշխէ ոք ՚ի ձէնջ եթէ իրք ինչ իցեն ընդ ըն- 1
կերի իւրում, դատել առաջի անիրաւաց՝
եւ ոչ առաջի սրբոց։ * Եթէ ո՞չ գիտէք՝ զի 2
սուրբք զաշխարհ դատին. եւ եթէ ձեօք դա-
տի աշխարհ՝ ապա ոչ էք արժանի անարգ ա-
տենից։ * Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դա- 3
տիմք, թո՛ղ թէ զերկրաւորս։ * Զերկրա- 4
ւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, զա-
նարգսն

նարգամ եկեղեցւոյ դատաւորս նստուցէք։
5 * Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ոչ գոյ
ոք իմաստուն 'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս
6 ընտրել 'ի մէջ եղբօր իւրոյ։ * Այլ եղբայր
ընդ եղբօր դատի, և զայն՝ 'ի մէջ անհաւա-
7 տից։ * Իսկ արդ՝ ամենևին իսկ վատթարու-
թիւն է 'ի ձեզ, զի դատաստանս իսկ գոն 'ի
միջի ձերում։ ‖ Ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ ‖ Մատ.
8 դուք աւանել նեղիք։ * Այլ դուք զրկէք և 5. 39.
9 նեղէք, և այդ՝ զեղբարս ես։ * Եթէ ոչ Ղուկ.
գիտէք՝ զի անիրաւք զարքայութիւն այ ոչ 6. 29.
ժառանգեն. մի խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ Հռով.
10 կռապաշտք, ոչ շունք, * ոչ իգացեալք, ոչ 17. 12.
արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ ար- 1. Թես.
բեցողք, ոչ բամբասօղք և ոչ յափշտակօղք՝ 4. 6.
11 զարքայութիւն այ ոչ ժառանգեն։ * Եւ դուք
այսպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք՝ այլ
սրբեցարուք՝ այլ արդարացարուք յանուն
տն մերոյ յսի քսի, և 'ի հոգին այ մերոյ։ Գ. Կ
12 ‖ * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամ ինչ
օգուտ է. ամ ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ‖ Վերև.
13 ես ը իշխանութե ուրուք լինիցիմ։ * Կերա- 10. 23.
կուր որովայնի, և որովայն կերակրոյ. այլ
ած զսա և զնս խափանեսցէ. բայց մարմին
ոչ պոռնկութեան՝ այլ տն, և տր մարմնոյ։
14 * Այլ ած՝ որ և զտրն յարոյց, և զձեզ յա-
15 րուսցէ զօրութբ իւրով։ * Ոչ գիտէք՝ եթէ
մարմինք ձեր անդամք են քի. արդ՝ առեալ
զանդամն քի, առնիցեմ անդամս պոռն-
16 կի՞. քաւ լիցի։ * Եթէ ոչ գիտէք՝ զի որ
մերձենայ 'ի պոռնիկ՝ մի մարմին է. ‖ եղի- ‖ Ծնն.
17 ցին, ասէ, երկոքեան 'ի մարմին մի։ * Իսկ որ 2. 24.
մեր- Մատ. 19. 5.

Եփե․ ․ մերձենայ 'ի տր՝ մի հոգի է ։ *Փախերուք 18
5․ 31․ 'ի պոռնկութենէ ։ Զամ մեղս՝ զոր և գործէ
մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է ․ իսկ որ
պոռնկէն՝ յիւր մարմինն մեղանչէ ։ *Եթէ 19
‖ Վեր․ ո՞չ գիտէք՝ զի ‖ մարմինք ձեր տաճար են հոգ-
3․ 17․ ւոյն սրբոյ՝ որ է 'ի ձեզ՝ զոր ունիք յայ ․ և չէք
2․ Կորն․
6․ 16․ անձանց տէր ։ *‖Քանզի գնոց գնեցայք ․ 20
‖ Վեր․ փառաւոր արարէք զած 'ի մարմինս ձեր և
7․ 23․ յոգիս, որ է այ ։

## ԳԼ․ Է․

Իսկ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք 1
է մարդոյ՝ 'ի կին մարդ չմերձենալ ։ *Բայց 2
վասն պոռնկութեան իւրաքանչիւրոք զիւր
կին կալցի ․ և իւրաքանչիւրոք կին զիւր այր
Ա․Պետ․ կալցի ։ *‖Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուս- 3
3․ 7․ ցէ ․ նոյնպէս և կինն՝ առն իւրում ։ *Զի 4
կին մարմնոյ իւրում ոչ իշխէ՝ այլ այրն ․
նոյնպէս և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ՝
այլ կինն ։ *Մի՛ զրկէք զմիմեանս ․ բայց 5
եթէ իցէ 'ի միաբանութենէ առ ժամանակ
մի, զի ուխտիցն պարապիցէք ․ և դարձեալ
'ի նոյն դարձջիք, զի մի փորձեսցէ զձեզ սա-
տանայ վասն անխառնութե ձերոյ ։ *Զայս 6
ասեմ ներելով և ոչ հրամանաւ տալով ։ *Քան- 7
զի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբ-
րև զիս ․ այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս
ունի յայ՝ ոմն այսպէս և ոմն այնպէս ։ *Բայց 8
ամուրեացն և այրեացն ասեմ, լաւ է նց՝ ե-
թէ կայցեն իբրև զիս ։ *Ապա թէ ոչ ունի- 9
ցին ժոյժ՝ ամուսնասցին ․ զի լաւ է ամուս-
նանալ՝ քան զջեռանուլ ։ *Իսկ կանամբեացն 10
պատ-

պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր. կնոջ յառնէ Մատ.
11 մի՛ մեկնել. Ապա եթէ մեկնեսցի, անայր 5. 32.
մնասցէ՝ կամ անդրէն ընդ առն իւրում հաշ- 19. 9.
տեսցի. և այր՝ զկին իւր մի՛ թողուլ. ՎԵՐՋ
12 Այլ այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր.
եթէ որ եղբայր կին ունիցի անհաւատ, և
նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ
13 զնա. Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝
և նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ
14 զայրն. զի սուրբ է այրն անհաւատ կը-
նաւն, և սուրբ է կինն անհաւատ արամբն.
ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ էին. բայց
15 այժմ սուրբ են. Ապա եթէ անհաւատն
մեկնեսցի, մեկնեսցի. զի ոչինչ հարկ 'ի վե-
րայ կայ եղբօրն կամ քեռն՝ յայնպիսի իրս.
քանզի 'ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած.
16 Ո՞ գիտես կին դու՝ եթէ զայրն քո ապ-
րեցուցես. կամ զի՞ գիտես այր դու՝ եթէ
17 զկին քո ապրեցուցես. Եթէ ոչ՝ իւրաքան-
չիւր ումեք որպէս և բաժանեաց Տէր, զիւրա-
քանչիւր որպէս և կոչեաց Աստուած՝ այնպէս գնաս-
ցէ. և այնպէս ընդ ամենայն եկեղեցիս պատուէր
18 տամ. Թլփատեալ որ կոչեցաւ՝ մի՛ ցան-
կասցի անթլփատութեան. յանթլփատութեան
19 որ կոչեցաւ՝ մի՛ թլփատեսցի. զի թլփա-
տութիւն ոչինչ է՝ և անթլփատութիւն ոչինչ.
այլ պահպանութիւն Աստուծոյ պատուիրանացն.
20 Իւրաքանչիւր յոր կոչումն կոչե- Եփես.
21 ցաւ՝ 'ի նմին կացցէ. Ծառա՞յ կոչեցար՝ մի՛ 4. 1.
փոյթ լիցի քեզ. այլ թէ և կարիցես ազատ
22 լինել՝ քեզ այնպէս լաւ իցէ. Զի որ 'ի Տէր
կոչեցեալ է ծառայն՝ ազատ Տեառն է. նոյնպէս
և

Ա. Կոր. 6. 20. Ա. Պետ. 1. 18.

Պ. Պ.

և որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ քի է։
*Գնոց գնեցայք՝ մի՛ լինիք ծառայք մարդ- 23
կան։ *Իւրաքանչիւրոք՝ յոր կոչումն կոչե- 24
ցաւ՝ եղբարք, 'ի նմին կացցէ առաջի այ։
*Այլ վն կուսանաց՝ հրաման ինչ 'ի տնէ 25
ոչ ունիմ. բայց խրատ տամ՝ որպէս ողորմե-
լոյ ուրուք 'ի տնէ, հաւատարիմ լինել։ *Հա- 26
մարիմ՝ թէ այնպէս լաւ իցէ. բայց վն վե-
տանգիցն որ 'ի վերայ կայ՝ բարւոք է մարդոյ՝
թէ այնպէս իցէ։ *Կապեալ ես 'ի կին, մի՛ 27
խնդրեր արձակել. արձակեալ ես 'ի կնոջէ,
մի՛ խնդրեր կին։ *Օր եթէ ամուսնանա- 28
ցես՝ ոչ մեղար. և եթէ ամուսնանայցէ կոյսն՝
ոչ մեղաւ, բայց նեղութի մարմնոյ ունիցին
այնպիսիքն. այլ ես խնայեցի 'ի ձեզ։ *Բայց 29
զայս ասեմ եղբարք՝ եթէ ժամանակս կար-
ճեալ է այսուհետև. զի որ ունիցին կանայս՝
ոպ թէ չունիցին։ *և որ լայցեն՝ ոպ թէ ոչ 30
լայցեն. և որ խնդան՝ ոպ թէ չխնդայցեն.
և որ գնեն՝ ոպ թէ չունիցին։ *և որ վա- 31
րեն զաշխարհս՝ ոպ թէ չվայելիցեն. զի անց-
ցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ։
*Այլ կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ ան- 32
կին է՝ հոգայ զտն թէ որպէս հաճոյ լիցի
տն։ *և որ կանամբի է, հոգայ զաշխար- 33
հիս՝ թէ ոպ հաճոյ լիցի կնոջ իւրում։ *Եւ 34
ահա մեկնեցան 'ի միմեանց առնականն և
կոյսն. զի կոյսն հոգայ զտն՝ զի իցէ սր հոգ-
ւով և մարմնով, և առնականն հոգայ զաշ-
խարհիս՝ թէ ոպ հաճոյ լիցի առն իւրում։
*Այլ զայս վն ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ 35
խեղդ ինչ արկանեմ ձեզ, այլ վն պարկե-

տու-

տութիւն և հպատակութիւն տ̃ն առանց զբա-
ղանաց ։

36 * Ապա թէ որ ամօթ համարեսցի վասն կուսին ԳԺ.
իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ, և այնպէս
ինչ պարտ իցէ լինել. զոր կամեսցի արաս-
37 ցէ, ոչ մեղանչէ՝ ամուսնասցին ։ * Իսկ որ հաս-
տատեալ է 'ի սրտի իւրում, և վտանգ ինչ
ոչ իցէ նմա, իշխանութիւն ունի 'ի վ̃ր կամաց
իւրոց. և զայս ընտրեաց 'ի սրտի իւրում՝
38 պահել զկոյսն իւր, բարւոք առնէ ։ * Այլ
որ ամուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առ-
նէ. և որ ոչ ամուսնացուցանէ՝ լաւ ևս առ-
39 նէ ։ * ‖Կին կապեալ է՝ ցորքան ժամանակս ‖Հռով.
կենդանի է այր ն̃ր. ապա եթէ ննջեսցէ այր Է. 2.
ն̃ր, ազատ է՝ ում կամիցի ամուսնանալ. այլ
40 միայն տերամբ ։ * Բայց երանելի ևս է՝ թէ
այնպէս կացցէ ը̃ստ իմում խրատու. ես այս-
պէս համարիմ, եթէ և յիս իցէ հոգի ա̃յ ։

## ԳԼ. Ը.

1 Այլ վասն զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ա-
մենեքին գիտութիւն ունիմք. գիտութիւն
2 հպարտացուցանէ, այլ սէր շինէ ։ * Եթէ
ոք կամիցի գիտել ինչ, չև ևս գիտաց՝ որպէս
3 արժանն էր գիտել ։ * Բայց որ սիրէ զա̃ծ,
4 նա է ծանուցեալ 'ի նմանէ ։ * Այլ վասն
կերակրոցն զոհելոց՝ գիտեմք եթէ ոչինչ իսկ
կուռք են յաշխարհի. զի չիք որ ա̃ծ բայց 'ի
5 միոյն ։ * Զի թէպէտ և իցեն անուանեալ
աստուածք՝ եթէ յերկինս և եթէ յերկրի.
որպէս և են աստուածք բազումք՝ և տեարք
6 բազումք. * այլ մեզ մի է ա̃ծ հայր՝ յորմէ


ա̃մ,

ամ, և մեք 'ի նա. և մի Տէր Յս Քս որով ամ,
ՎԵՐՋ. և մեք նովաւ:
* Այլ ոչ յամենեսին գիտութիւն է: Ոմանք 7
առ խղճի մտաց մինչև ցայժմ զկռոցն իբրև
զզոհեալ ուտեն. և խիղճ մտացն նոցա քանզի
տկար է, պղծի: * Այլ կերակուր զմեզ առ 8
Աստուծոյ ոչ կացուցանէ. ոչ եթէ չուտեմք՝
պակասիմք ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ առաւե-
լումք ինչ: * Նայեցարուք զգոյշ լերուք՝ գուցէ իշ- 9
խանութիւնդ ձեր այդ՝ գայթագղութիւն լինի-
ցի տկարաց: * Զի եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ 10
որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհենի՝
ո՞չ ապա խիղճ մտաց նոր, որ տկարութիւն ըղ-
գամծեղ է՝ անդրէն շինիցի ուտել զզոհեալսն:
Հռովմ. * Եւ կորնչիցի տկար եղբայրն 'ի քում գի- 11
14. 15. տութեան, վն որոյ քս մեռաւ: * Իսկ այսպէս 12
յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց տը-
կարացն զայրացուցեալ, 'ի Քս մեղանչէք:
Հռովմ. * Վասն որոյ՝ եթէ կերակուր գայթագ- 13
14. 21. ղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յա-
ւիտեան, զի մի զեղբայրն իմ գայթագղե-
ցուցից:

## ԳԼ. Թ.

Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առա- 1
քեալ եմ, ո՞չ ապաքէն զՏէր մեր Յս Քս ա-
չօք իմովք տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ դուք
էք 'ի Տէր: * Թէպէտ և այլոց չիցեմ առա- 2
քեալ՝ այլ գէթ ձեզ եմ. զի կնիք իմոյ առա-
քելութեանս դուք էք 'ի Տէր: * Իմ պատաս- 3
խանի՝ առ գիս հարցանիցեն՝ այս է: * Միթէ 4
ո՞չ ունիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել:
* Միթէ

5 *Մի՞թէ ոչ ունիցիմք իշխանութիւն զքորս կա-
նայս շրջեցուցանել ընդ մեզ. որպէս և այլ ա-
6 ռաքեալքն, և եղբարքն Տն, և Կեփաս։ *Ե՞-
թէ միայն ես և Բառնաբա՞ս ոչ ունիցիմք իշ-
7 խանութիւն չգործել ինչ։ *Ո՞ որ երբէք զին-
ուորիցի իւրովք թոշակօք. ո՞ որ տնկիցէ այ-
գի՝ և ՚ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ որ արածի-
ցէ խաշն՝ և ՚ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ։
8 *Մի՞թէ ըստ մարդկութե՞ան խօսիցիմ զայս.
9 կամ թէ և օրէնքն զայն ոչ ասիցեն։ *Ի
մովսէսի իսկ յօրէնսն գրեալ է. ‖ոչ կապես- ‖Օրէ.
ցես զգաւուկ եզին կալոտւոյ։ միթէ զեզա՞նց 25. 4.
10 ինչ փոյթ էր այ։ *Ո՞չ ապաքէն վս մեր ա- 1. Տիմ. 5. 18.
սէ. քանզի վս մեր գրեցաւ։ զի յուսով պար-
տի, որ սերմանէն՝ սերմանել. և որ կասուն՝
11 յուսով վայելել։ *‖Եթէ մեք ՚ի ձեզ զհո- ‖Հռով.
գևորն սերմանեցաք՝ մե՞ծ ինչ է, եթէ ՚ի 15. 27.
12 ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք։ *Եթէ
այլք ձերով իշխանութեամբդ վայելեն, ո՞չ առա-
ւել ևս մեք։ այլ ոչ ՚ի գործ ինչ արկաք զիշ-
խանութիւնս զայս. բայց ամի համբերեմք.
զի մի խափան ինչ լինիցիմք աւետարանին
13 Քի։ *‖Ո՞չ գիտէք եթէ որ ՚ի տաճարին ‖Օրէն.
գործեն, ՚ի տաճարէ անտի ուտեն. և որ 18. 1.
սեղանոյն պաշտօնեայք են, ՚ի սեղանոյ ան-
14 տի վայելեն։ *Նոյնպէս և Տր հրամանս ետ.
որոց զաւետարանն աւետարանեն, յաւետա-
15 րանէ անտի կեալ։ *Բայց ես և ոչ զմի ինչ
յայսցանէ արկի ՚ի գործ, և ոչ գրեցի զայդ՝
զի ինձ այնպէս ինչ լինիցի. լաւ է ինձ մա-
նաւանդ մեռանել, և ոչ զի զպարծանս իմ
16 որ ընդունայն համարիցի։ *Զի եթէ ա-

աւե-

ւետարանեմ, ոչինչ են ինձ պարծանք. քան֊
զի հարկ ՚ի վ՟ր կայ. բայց վայ է ինձ, եթէ
ոչ աւետարանեմ։ *Եթէ կամաւ զայն առ֊ 17
նեմ, վարձք են ինձ. եւ եթէ ակամայ՝ տըն֊
տեսութիւն յանձն է ինձ։ *Եւ արդ՝ զինչ 18
վարձք իցեն ինձ, եթէ յաւետարանելն ձրի
տաց զաւետարանն՝ զի մի՛ զեղծիցիմ ինչ իշ֊
խանութիւն իմով յաւետարանի անդ։ *Քան֊ 19
զի ազատ էի յամենայնէ՝ եւ ամենեցուն զան֊
ձըն ՚ի ծառայութիւն կացուցի. զի զբազումս
շահեցայց։ *Եղէ ընդ Հրէայս իբրեւ ըզ֊ 20
Հրէայ, զի զՀրէայս շահեցայց։ *Եղէ ը՟ 21
օրինօք իբրեւ զայնոսիկ՝ որ ը՟ օրինօքն էին.
իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ զի որ ը՟
օրինօքն իցեն՝ եւ զնոսա շահեցայց. ը՟ անօրէնս
եղէ իբրեւ զանօրէն. իբր ոչ եթէ անօրէն ինչ
էի Ա՟յ, այլ ընդ օրինօք Ք՟ի. զի շահեցայց
զանօրէնսն։ *Եղէ ը՟ տկարս իբրեւ զտկար՝ 22
զի զտկարսն շահեցայց. ը՟ ամենայնի ամե֊
նայն եղէ, զի թերեւս ապրեցուցից զոմանս։
*Զայս ա՟մ առնեմ վ՟ն աւետարանին, զի 23
հաղորդ եղէց նմա։

Դ. Կ

*Ոչ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ընթա֊ 24
նան, ընթանան ամենեքին ընթանան. բայց
մի որ առնու զյաղթութիւնն. այնպէս ընթա֊
ցարուք զի հասանիցէք։ *Ամենայն որ պա֊ 25
տերազմի՝ ա՟մի ժուժկալ լինի. նոքա զի զեղ֊
ծանելի պսակն առնուցուն՝ եւ մեք զանեղ֊
ծանելին։ *Արդ՝ ես իսկ այնպէս ընթանամ, 26
ոչ իբր յաներեւոյթս. այնպէս մրցիմ, որպէս
ոչ թէ զհողմս ինչ կոծելով. *այլ ճնշեմ 27
զմարմինս իմ եւ հնազանդեցուցանեմ. զի

գուցէ

գուցէ որ այլոց քարոզեցի՝ ես ինքնին ան-
պիտան գտանիցիմ.

## ԳԼ. Ժ.

1 Ոչ կամիմ, եթէ տգէտ իցէք եղբարք, զի || Ելք.
հարքն մեր ամենեքին || ընդ ամպովն էին. 13. 21.
2 || և ամենեքին ընդ ծովն անցին. * և ամենե- || 14. 22.
քին ՚ի մովսէս մկրտեցան յամպն և ՚ի ծովն.
3 * || և ամենեքին զնոյն հոգևոր կերակուրն
4 կերան. * || և ամենեքին զնոյն հոգևոր ըմ- || 16. 15.
պելին արբին, զի ըմպէին ՚ի հոգևոր վիմէն՝ || 17. 6.
որ երթայր զհետ նոցա. և վէմն էր ինքն Քս.
5 * այլ ոչ եթէ ընդ բազումս ՚ի նոցանէ հա-
ճեցաւ Ած. || քանզի տապաստ անկան յանա- || Թուոց.
6 պատի անդ. * Այս այն օրինակք լինէր մեզ. 26. 65.
զի մի լիցուք ցանկացողք չարեաց, || որպ || Սաղմ.
7 և նոքայն ցանկացան. * Այլ մի կռապաշտք 105. 14.
լինիք՝ որպ ոմանք ՚ի նոցանէ, որպ և գրեալ է.
|| Նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել՝ և յա- || Ելք.
8 րեան ՚ի խաղալ. * Այլ մի պոռնկեսցուք. 32. 6.
|| որպ ոմանք ՚ի նոցանէ պոռնկեցան, և ան- || Թուոց.
կան ՚ի միում աւուր քսան և չորք հազարք. 25. 1.
9 * Այլ մի փորձեսցուք զՔս. || որպ ոմանք ՚ի || 21. 5. 6.
նոցանէ փորձեցին, և յօձից անտի սատակե-
10 ցան. * || Այլ մի տրտնջեսցուք. որպ ոմանք ՚ի || 11. 1.
նոցանէ տրտնջեցին, և կորեան ՚ի սատակչէ 14. 2.
11 անտի. * Այլ այն ամ օրինակաւ անցանէր
ընդ նոսա. բայց գրեցաւ վս մերոյ խրատու,
յորս վախճանք յաւիտենից եհաս.
12 * Այսուհետև որ համարիցի հաստատուն Գ. Գ.
13 կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի. * փոր-
ձութ ՚ի ձեր վերայ ոչ է եկեալ բայց ՚ի մարդ-
կանէ.

կանէ. այլ հաւատարիմ է ա̃ծ՝ որ ոչ արկցէ
զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր.
այլ արասցէ ը̃ փորձութեանն և զելս՝ զի համ-
բերել կարասջիք: * Վասն որոյ սիրելիք իմ, 14
փախերուք 'ի կռապաշտութենէ: * Իբրև ը̃ 15
իմաստունս խօսիմ. ընտրեցէք ձեզէն՝ զոր
ասեմս: * Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ 16
ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն ք̃ի.
հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդու-
թիւն է մարմնոյն ք̃ի: * Զի մի հաց՝ մի մար- 17
մին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ
հացէ անտի վայելեմք: * Տեսէք զի̃էլն ըստ 18
մարմնոյ. ո՞չ ապաքէն՝ որ ուտեն 'ի զոհիցն՝
հաղորդ են սեղանոյն: * Իսկ արդ զինչ. ա- 19
սեմ, թէ զոհեալն իցէ՞ ինչ. և կամ թէ
կուռքն իսկ իցե՞ն ինչ: * Այլ զոր զոհենն 20
հեթանոսք, դիւաց՝ և ոչ ա̃յ զոհեն: ոչ կա-
միմ զձեզ հաղորդս դիւաց լինել. քանզի ոչ
կարէք զբաժակն տ̃ն ըմպել՝ և զբաժակն դի-
ւաց. * և ոչ կարէք 'ի սեղանոյ տ̃ն վայելել՝ 21
և 'ի սեղանոյ դիւաց: * Եթէ նախանձ ինչ 22
արկանիցեմք տ̃ն. միթէ զօրագո՞յնք իցեմք
‡ Վ̃ր. քան զնա: ‖ Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ
6. 12. ոչ ա̃մ ինչ օգուտ է. * ա̃մ ինչ ինձ մարթ է, 23
այլ ոչ ամենայն ինչ շինէ: * Մի որ զանձին 24
եւեթ խնդրիցէ՝ այլ և զընկերին: * Ամե- 25
նայն ինչ որ 'ի սպանդանոցի վաճառի, կե-
‖ Սաղ. րայք՝ և մի խտրէք վ̃ն խղճի մտաց. * Զի տ̃ն 26
23. 1. է երկիր լրիւ իւրով: * Եթէ որ կոչէ զձեզ 27
49. 12. յանհաւատից՝ և կամիցիք երթալ. զա̃մ ինչ՝
որ առաջի դնիցի, կերայք՝ և մի խտրէք վ̃ն
խղճի մտաց: * Ապա եթէ որ ասասցէ ձեզ՝ 28
թէ

թէ այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վասն նորա՝ որ
29 զուցուցին եղեւ, եւ վասն խղճի մտացն։ * Այլ
զխիղճ մտացն ասեմ ոչ զքոյն, այլ զընկե֊
րին. իսկ ընդէ՞ր իմս ազատութիւն իմ դա֊
30 տեսցի յայլոց խղճէն մտաց։ * Եթէ ես շնոր֊
հօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն ո֊
31 րոյ ես գոհանամ։ * Արդ՝ եթէ ուտիցէք՝ Կող. 3. 17.
եթէ ըմպիցէք՝ եթէ զինչ եւ առնիցէք, զամ
32 ինչ ի փառս այ արասջիք։ * Առանց գայ֊ Ա. Պետ. 2. 12.
թագղութեան գնելոյ հրէից եւ հեթանոսաց լի֊
33 նիջիք՝ եւ եկեղեցւոյն այ։ * Որպէս եւ ես ամե֊
նեւին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ
զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին։

## ԳԼ. ԺԱ.

1 Նմանօղք ինձ եղերուք, որպէս եւ ես քի։ Գ. Օ.
2 * Գովեմ զձեզ՝ զի զամ ինչ զիմ յիշէք. եւ
որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնս ու֊
3 նիցէք։ * Կամիմ զի գիտիցէք դուք. եթէ Եփես. 5. 23.
առն ամի գլուխ քս է, եւ գլուխ կնոջ այր,
4 եւ գլուխ քի այ։ * Ամենայն այր՝ յորժամ
յաղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ՝ եւ
զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ
5 զգլուխն իւր։ * Եւ ամ կին՝ յորժամ յա֊
ղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ բացա֊
գլխով՝ յամօթ առնէ զգլուխն իւր, զի այն֊
6 պէս համարի՝ թէ գերծեալ իցէ։ * Զի ե֊
թէ ոչ արագեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր.
ապա եթէ անպատեհ է կնոջ փոքրել կամ
7 գերծուլ, արագեսցի։ * Այր մարդոյ չէ
պարտ ծածկել զգլուխ իւր. զի պատկեր եւ Ծննդ. 1. 26.
փառք այ է. իսկ կին փառք առն իւրոյ է։

* Զի

Ծննդ. Զի ոչ եթէ այր 'ի կնոջէ է, այլ կին յառ-
2. 23. նէ։ Քանզի ոչ իսկ հաստատեցաւ այր վասն 9
կնոջ, այլ կին վասն առն։ Վասն այնորիկ 10
պարտի կնոջ շուք ունել գլխոյն վասն հրեշտա-
կաց։ Բայց ոչ կին առանց առն, եւ ոչ այր 11
առանց կնոջ 'ի Տր։ Զի որպէս կին յառ- 12
նէ՝ նոյնպէս եւ այր 'ի կնոջէ, բայց ամ յԱյ։
Այլ դուք ձեզէն տեսէք զիրաւն. արժա՞ն 13
է կնոջ մերկ գլխով յաղօթս կալ առաջի
Այ։ Իսկ ոչ բնութիւն իսկ ուսուցանէ ըզ- 14
ձեզ. զի այր եթէ գիսաւոր է՝ անարգանք
են նմա. բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք 15
են նմա. զի գէսք փոխանակ զգեստու տը-
ւեալ են նմա։ Ապա թէ ոք կամի հակա- 16
ռակօղ լինել, մեք չունիմք այնպիսի սովո-
ՎԵՐՋ րութիւն, եւ ոչ եկեղեցիքն Այ։
Այլ զայս պատուիրեմ, ոչ ինչ թէ գովէ- 17
ցեմ, զի ոչ 'ի լաւ անդր՝ այլ 'ի վատթարն
նկրտիք։ Նախ՝ յորժամ 'ի մի վայր ժողովի- 18
ցիք յեկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գան
'ի ձեզ. եւ սակաւ ինչ հաւատամ։ Բայց 19
եւ հերձուածք լինելոց են 'ի ձեզ. զի որ ըն-
տիրքն իցեն 'ի ձեզ՝ երեւեսցին։ Իսկ արդ՝ 'ի 20
ժողովելն ձեզ 'ի միասին՝ ոչ է տունն Տն ձեզ
տեղի հաց ուտելոյ։ Զի իւրաքանչիւրոք 21
զիւր ընթրիս յառաջանայ ուտել, եւ ոմն քաղ-
ցեալ՝ եւ ոմն արբեալ։ Միթէ տունս ոչ 22
ունիցիք ուտելոյ կամ ըմպելոյ. եթէ զեկե-
ղեցեաւն Այ արհամարհիցէք, եւ յամօթ առ-
նէք զչքաւորսն։ զինչ ասացից. գովեցից ըզ-
ձեզ. յայդմ ոչ գովեմ։ Զի ես ընկալայ 'ի 23
Տեառնէ՝ զոր եւ ձեզդ աւանդեցի, եթէ Տր Յս
'ի

24 'ի գիշերին յորում մատնէր, առ հաց. *գո-
հացաւ՝ եբեկ և ասէ. || Առէք՝ և կերայք. ||Մ—թէ 26. 26.
այս է մարմին իմ, որ վ՟ն ձեր բաշխի. զայս Մ—րկ. 14. 22.
25 արարէք առ իմոյ յիշատակի. *Նոյնպէս և Ղ—կ. 22. 17.
զբաժակն յետ ընթրեացն առ և ասէ. այս
բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ. զայս
արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ
26 իմոյ յիշատակի. *Քանիցս անգամ թէ ու-
տիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք,
զմահն տ՟ն պատմեցէք, մինչև եկեսցէ նա.
27 *|| Այսուհետև՝ որ ուտիցէ զհացս, կամ || Յ—հ. 6. 56.
ըմպիցէ զբաժակս տ՟ն անարժանութ՟բ, պար-
28 տական եղիցի մարմնոյ և արեան տ՟ն. *Փոր-
ձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ
29 անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ. *Զի
որ ուտէ և ըմպէ անարժանութ՟բ՝ դատաս-
տանս անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ
30 խտրէ զմարմինն տ՟ն. *Վ՟ն այնորիկ իսկ են
'ի ձեզ բազում հիւանդք և տկարամիտք. և
շատ եւս այն են, որ և ննջեցեալ իսկ իցեն.
31 *Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դա-
32 տապարտէաք. *Այլ եթէ դատիմք՝ 'ի տ՟նէ
խրատիմք. զի մի ընդ աշխարհի դատապար-
33 տեսցուք. *Այսուհետև եղբարք՝ յորժամ
'ի մի վայր ժողովիցիք ուտել՝ միմեանց մնա-
34 ցիք. *Ապա թէ ոք քաղցեալ իցէ՝ 'ի տան
իւրում կերիցէ. զի մի 'ի դատապարտութ՟ի
ժողովիցիք. Այլ զայլ ինչ յորժամ եկից՝
յայնժամ պատուիրեցից.

## ԳԼ. ԺԲ.

ԻԱ Իսկ վասն հոգեւորացն, եղբարք՝ ոչ կամիմ 1
եթէ տգէտ իցէք։ *Գիտէք իսկ՝ զի մինչ 2
հեթանոսքն էիք, առ կուռս անմռունչս՝
որպէս երթայիք և գայիք։ *Վասն որոյ 3
*Մրկ. ցուցանեմ ձեզ. *զի ոչ ոք հոգւով այ խօսի՝
Թ. 38. և ասիցէ թէ նզովեալ յս. և ոչ ոք կարէ
ասել՝ Տր յս, եթէ ոչ հոգւովն սրբով։
*Մեկնեալ և բաժինք շնորհաց են՝ այլ հո- 4
գի նոյն է։ *Եթէ բաժինք պաշտամանց 5
են, այլ Տր նոյն է։ *Եթէ բաժինք յաջո- 6
ղուծոց են, այլ ած նոյն է. որ յաջողէ զամ
յամենայնի։ *Բայց իւրաքանչիւր ումեք 7
տուեալ է յայտնութի հոգւոյն՝ առ իւրա-
քանչիւր օգուտ։ *Ումեմն ՚ի հոգւոյն տը- 8
ւեալ է բան իմաստութե. այլում բան գի-
տուե ըստ նմին հոգւոյ. *միւսումն հաւատք 9
նովին հոգւով. այլում շնորհք բժշկութեց
նովին հոգւով. *այլում յաջողուածք զօրու- 10
թեց. այլում մարգարէութի. այլում ընտ-
*Հռովմ. րութի հոգւոց. այլում ազգք լեզուաց. այ-
12. 6. լում թարգմանութի լեզուաց։ *Այլ զայս 11
Եփես. ամ յաջողէ մի և նոյն հոգի, և բաժանէ իւ-
4. 7. րաքանչիւր ում և կամի։
ԻԲ *Որպէս մարմին մի է, և անդամս բազումս 12
ունի. և ամ բզմ անդամք մարմնոյն՝ մի մար-
մին է. նոյնպէս և քս։ *Քանզի միով հոգ- 13
ւով մեք ամենեքին ՚ի մի մարմին մկրտեցաք.
եթէ հրեայք, եթէ հեթանոսք, եթէ ծա-
ռայք, եթէ ազատք, ամենեքին զմի հոգի
արբաք։ *Քանզի մարմին ոչ մի անդամ է, 14

այլ

15 այլ բազում։ *Եթէ ասիցէ ոտն, զի չեմ
ձեռն՝ չեմ 'ի մարմնոյ անտի, ո՞չ այնու չիցէ
16 'ի մարմնոյ անտի։ *Եւ եթէ ասիցէ ունկն,
վասն զի չեմ ակն՝ չեմ 'ի մարմնոյ անտի, ո՞չ
17 այնու չիցէ 'ի մարմնոյ անտի։ *Եթէ ամ՛
մարմինն ակն էր՝ ո՞ւր էր ունկն. եւ եթէ ամ՛
18 լսելիք էր՝ ո՞ւր էին հոտոտելիք։ *Բայց արդ՝
Ած եդ զանդամսն՝ զմի մի իւրաքանչիւր 'ի
19 նոցանէ 'ի մարմնին՝ որպէս եւ կամեցաւ։ *Ապա
թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մարմինն։
20 *Բայց արդ՝ անդամք բազում են, եւ մար-
21 մին մի։ *Ոչ կարէ ակն ասել ձեռանց, թէ
չեն իմն պիտոյ, եւ կամ դարձեալ գլուխ ոտից՝
22 թէ չէք իմն պիտոյ։ *Այլ առաւել որ թու-
ին անդամք մարմնոյն թէ տկարագոյնք ի-
23 ցեն. կարեւորք են. *Եւ որ թուին թէ ա-
նարգագոյնք իցեն մարմնոյն, այնց առաւե-
լագոյն պատիւ ածեմք. եւ անշքագոյնք մեր
24 առաւել եւս պարկեշտութիւն ունին։ *Եւ պար-
կեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Ած
խառնեաց զմարմինն, եւ նուաղին առաւել
25 եւս պատիւ ետ. *զի մի իցեն հերձուածք 'ի
մարմնի անդ, այլ զի նոյնք զմիմեանց հոգաս-
26 ցեն անդամքն։ *Եթէ վշտանայ ինչ մի ան-
դամն, վշտանան ամ՛ անդամքն ընդ նմա. եւ
եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամ՛
27 անդամքն ը՛ նմա։ *Այլ դուք մարմին քրի
էք՝ եւ անդամք յանդամոց նր։ ՎԵՐՋ.
28 *||Եւ զորս եդ Ած յեկեղեցւոջ՝ այս են. || Եփ. դ. 11.
նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս,
երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս,
ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւն՝ վարիչս,
ապա

ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց։
*Միթէ ամենեքին առաքեա՞լք իցեն. մի- 29
թէ ամենեքին մարգարէք իցեն. միթէ ա-
մենեքին վարդապետք իցեն. միթէ ամենե-
քին զօրութիւնք իցեն. *միթէ ամենեքին 30
շնորհս բժշկութեա՞ն ունիցին. միթէ ամենե-
քին ՚ի լեզո՞ւս խօսիցին. միթէ ամենեքին
թարգմանիցե՞ն։ *Բայց նախանձաւոր լե- 31
րուք շնորհացն, որ լաւն են։ Եւ ես առա-
ւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

## ԳԼ. ԺԳ.

Ր.Օ. Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ հրեշ- 1
տակաց՝ եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ
պղինձ, որ հնչէ. կամ իբրեւ ծնծղայ՝ որ
ղօղանջէ։ *Եւ եթէ ունիցիմ մարգարէու- 2
թիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ա՟մ՝ եւ զա՟մ
գիտութիւն. եւ եթէ ունիցիմ զա՟մ հաւատս՝
մինչեւ զլերինս փոփոխել, եւ սէր ոչ ունի-
ցիմ, ոչինչ եմ։ *Եւ եթէ ջամբիցեմ զա՟մ 3
ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս
իմ յայրումն, եւ սէր ոչ ունիցեմ, ոչինչ օգ-
տիմ։ *Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ. 4
սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճի, ոչ
հպարտանայ. *ոչ յանդգնի, ոչ խնդրէ 5
զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար. *ոչ խնդ- 6
այ ը՟ն անիրաւութիւն՝ այլ խնդայ ընդ ստու-
գութիւն. *ա՟մ տանէ. ա՟մ հաւատայ. ամե- 7
նեքին յուսայ. ա՟մ համբերէ։ *Սէր ոչ եր- 8
բեք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խա-
փանեսցին. եթէ լեզուք՝ լռեսցեն. եթէ գի-
տութիւն՝ խափանեսցի։ *Քանզի փոքր ՚ի շա- 9
տէ

տէ գիտեմք. եւ փոքր 'ի շատէ մարգարէա-
10 նամք։ *Այլ յորժամ եկեսցէ կատարումն,
փոքր 'ի շատէս խափանեսցի։
11 *Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ Օ. Կ
զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի. այլ
յորժամ եղէ այր՝ զտղայութիւն 'ի բաց խափա-
12 նեցի։ *Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի
օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման.
այժմ խելամուտ եմ փոքր 'ի շատէ, այլ յայն-
ժամ գիտացից՝ որպէս եւ նոյն ծանեաւ զիս։
13 *Բայց արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր, սո-
քա երեքեան. եւ մեծ քան զսոսա սէր է։

## ԳԼ. ԺԴ.

1 Զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր
լերուք հոգեւորացն առաւել՝ զի եւ դուք
2 մարգարէանայցէք։ *Զի որ խօսի 'ի լեզուս՝
ոչ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Այ. զի ոչ ոք է՝
որ լսէ, բայց հոգւով խօսի խորհուրդս։
3 *Իսկ որ մարգարէանայ, մարդկան խօսի
4 շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն։ *Որ
խօսի 'ի լեզուս՝ զանձն իւր շինէ. եւ որ մար-
5 գարէանայ՝ զեկեղեցին շինէ։ *Կամիմ զի
ամենեքին դուք 'ի լեզուս խօսիցիք՝ առաւել
զի մարգարէանայցէք. զի լաւ է՝ որ մարգա-
րէանայ քան զայն՝ որ 'ի լեզուս խօսիցի.
բայց եթէ թարգմանիցէ՝ զի եկեղեցին շի-
նութիւն առնուցու։ ՎԵՐՋ
6 *Բայց այժմ եղբարք՝ եթէ եկից առ ձեզ
'ի լեզուս խօսելով. զի՞նչ օգուտ լինիցիմ ձեզ՝
եթէ ոչ խօսիցիմ, կամ յայտնութեամբ, կամ
գիտութեամբ, կամ մարգարէութեամբ, կամ վար-
դա-

դապետութ. ։ *Նմանապէս՝ որպէս անշունչքն 7
ձայն տայցեն, եթէ փող և եթէ քնար. զի
եթէ ընտրութիւն ինչ բարբառոյն չտանիցեն,
զիա՞րդ ճանաչիցի փողոյն հարկանել՝ կամ քնա-
րին հնչել։ *Նա զի եթէ խառնաձայն ար- 8
ձակիցի փողն, ո՞վ պատրաստեսցի 'ի պատե-
րազմ։ *Նոյնպէս և դուք՝ եթէ լեզուաւք 9
ոչ նշանակիցէք զբանն՝ զիա՞րդ ճանաչիցին
խօսածն. զի լինիցիք այնուհետև իբրև ընդ
օդս խօսեցեալք։ *Զի այնչափ ազգք ձայ- 10
նից են յաշխարհի, և ոչինչ անձայն է։ *Իսկ 11
արդ՝ եթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին,
լինիցիմ այնմ, որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և
նա որ խօսիցին ընդ իս՝ դուժ։ *Նոյնպէս և 12
դուք՝ քանզի նախանձորդք էք հոգևորացն,
վասն շինութեան եկեղեցւոյն խնդրեցէք՝ զի առա-
ւել եւս իցէք։ *Վասն որոյ որ խօսին 'ի լե- 13
զուս, աղօթս արասցէ՝ զի և թարգմանիցէ։
*Եթէ կամ յաղօթս լեզուաւ՝ հոգին իմ 14
կայ յաղօթս. այլ միտք իմ անպտուղ են։
*Իսկ արդ՝ զինչ իցէ. կացից յաղօթս հոգ- 15
ւով, կացից յաղօթս և մտօք. սաղմոս ասա-
ցից հոգւով, սաղմոս ասացից և մտօք։ *Ա- 16
պա թէ ոչ՝ եթէ օրհնիցես հոգւով, որ կայ-
ցէ 'ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ 'ի
քում գոհութեան՝ զամէնն. քանզի զոր ասես՝
նա ոչ գիտէ։ *Զի դու բարւոք գոհանաս, 17
այլ ընկերն ոչ շինի։
ՕԲ *Գոհանամ զԱծոյ՝ քան զամենեցուն ձեր՝ առա- 18
ւել լեզուաւ խօսիմ։ *Այլ 'ի մէջ եկեղեց- 19
ւոյ կամիմ բանս հինգ մտօք խօսել՝ զի և զայ-
լս խրատեցից, քան բազում բանս լեզուաւ։
*Եղ

20 * Եղբա՛րք մի՛ լինիք տղայք մտօք, || այլ ՚ի չա- || Մտթ.
րեաց տղայացարո՛ւք, և մտօք կատարեա՛լ լինիք 18. 3.
21 ջի՛ք։ * Քանզի և յօրէնսն գրեա՛լ է, || եթէ յօ- || Եսայ.
տար լեզուս՝ և ՚ի շրթունս օտարոտիս խօսե- 28. 11.
ցայց ընդ ժողովրդեանս ընդ այդմիկ, սակայն և
22 ո՛չ այնպէս լուիցեն ինձ՝ ասէ Տէր։ * Ապա ուրեմն
լեզուք նշանակի վասն են՝ ո՛չ հաւատացելոց՝
այլ անհաւատից. իսկ մարգարէութի՛ւն ո՛չ ան-
23 հաւատից՝ այլ հաւատացելոց։ * Ապա եթէ
գայցէ եկեղեցին ամ՛ ՚ի մի վայր, և ամենե-
քին ՚ի լեզուս խօսիցին, և մտանիցեն անդր
տգէտք կամ անհաւատք. ո՞չ ասիցեն՝ եթէ զի՛
24 մոլիք դուք։ * Իսկ եթէ ամենեքին մարգարէա-
նայցեն, և մտանիցէ ոք անդր անհաւատ՝ կամ
տգէտ, յանդիմանի յամենեցունց, և քննի
25 յամենեցունց. և գաղտնիք սրտի նո՛ր յայտ-
նի լինին։ և ապա անկեալ ՚ի վերայ երեսաց՝
երկիր պագանիցէ այ, և խոստովան լինիցի՝
թէ արդարև ած է ՚ի ձեզ։

26 * Արդ՝ զի՞նչ իցէ եղբարք. յորժամ ՚ի ՕԳ
մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ
եթէ սաղմոս ունիցի, թէ վարդապետութի
ունիցի, եթէ յայտնութի ունիցի, թէ լե-
զուս ունիցի, եթէ թարգմանութի ունիցի,
27 ամ ՚ի շինած լինիցի։ * Եթէ ՚ի լեզուս ոք
խօսեսցի՝ երկուք, և եթէ ևս աւելի՝ երեք,
և ապա մի ըստ միոջէ. և մին թարգմանես-
28 ցէ։ * Ապա եթէ չիցէ ոք՝ որ թարգմանի-
ցէ, լռեա լիցի յեկեղեցւոջն. ը̃ա միտս իւր՝ և
29 ընդ այ խօսեսցի։ * Նոյնպէս մարգարէք երկու
կամ երեք խօսեսցին, և այլքն քննեսցեն։
30 * Ապա եթէ այլ ումեք՝ որ նստիցի՝ յայտ-
նեա

նեսցի, առաջինն լռեսցէ։ *Քանզի կարող 31
էք ամենեքին մի ըստ միոջէ մարգարէանալ.
զի ամենեքեան ուսանիցին, եւ ամենեքեան
մխիթարեսցին։ *Քանզի եւ հոգիք իսկ մար- 32
գարէից՝ մարգարէից հնազանդին։ * Զի 33
ոչ եթէ խռովութեան է Աստուած՝ այլ խաղաղութեան. որպէս
յամենայն եկեղեցիս սրբոց։ *Կանայք՝ յամենայն ե- 34
կեղեցիս լուռ լիցին. զի ոչ հրամայի նոցա խօ-
Ծն. սել՝ այլ հնազանդ լինել. որպէս եւ օրէնքն իսկ
3. 16. ասեն։ *Ապա եթէ ուսանել ինչ կամիցին, 35
՚ի տան զարս իւրեանց հարցանիցեն. քանզի
անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խօ-
սել։ *Եթէ ՚ի ձէնջ բանն Աստուծոյ ել. եւ կամ 36
առ ձեզ միայն եհաս։ *Իսկ եթէ որ հա- 37
մարիցի մարգարէ լինել՝ կամ հոգեւոր, գի-
տասցէ՝ զոր գրեցից առ ձեզ, թէ Տեառն պատ-
ուիրանք են։ *Ապա թէ որ տգիտանայցէ, 38
տգիտասցի։ *Այսուհետեւ եղբարք, նա- 39
խանձեցարուք մարգարէանալ՝ եւ զխօսելն
լեզուօք մի արգելուք։ *Այլ ամենայն ինչ 40
ՎԵՐՋ. ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի։

## ԳԼ. ԺԵ.

Գաղ. Ծանուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն 1
1. 11. իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր եւ ըն-
կալարուք, յոր եւ հաստատեալ էք. *որով 2
ապրեցայքն. որով բանիւ աւետարանեցի
ձեզ՝ թէ ունիցիք. բայց եթէ ՚ի զուր ինչ
հաւատացայք։ *Զի ես ձեզ զառաջինն ա- 3
ւանդեցի՝ զոր եւ ես ընկալայ. թէ եւ Քրիստոս մե-
Եսայ. ռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց, *եւ զի 4
53. 5. թաղեցաւ, թէ եւ յարեաւ յաւուր երրորդի՝
Յովն. 2. 3.

ըստ

5 ըստ գրոց. * եւ թէ երեւեցաւ Կեփայի, || եւ || Յով. 20. 19.
6 ապա երկոտասանիցն. * ապա երեւեցաւ ա-
ւելի եւս քան զհինգ հարիւր եղբարց միան-
գամայն. յորոց բազումք կան մինչեւ ցայժմ,
7 եւ ոմանք ննջեցին. * Իսկ ապա երեւեցաւ
Յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն.
8 * Յետոյ քան զամենեսին իբրեւ ա-
9 նդղի միոջ || երեւեցաւ եւ ինձ. * || Զի ես || Գործ. 9. 3.
իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ ար-
ժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածե- || Եփես. 3. 8.
10 ցի զեկեղեցին այ. * Բայց շնորհօքն այ եմ՝
զինչ եւ իցեմ. եւ շնորհքն նորա որ յիս՝ ընդու-
նայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա
ամենեսին վաստակեցի. եւ ոչ եթէ ես՝ այլ
11 շնորհքն այ՝ որ ընդ իս. * Բայց՝ եթէ ես եւ
եթէ նոքա այսպէս քարոզեցաք. եւ դուք
12 այսպէս հաւատացէք. * Ապա եթէ քս քա-
րոզի՝ թէ ՚ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ
ասեն ոմանք ՚ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռե-
13 լոց չիք. * Եթէ յարութիւն մեռելոց չիք, ա-
14 պա եւ քս չէ յարուցեալ. * Իսկ եթէ քս չի-
ցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն
15 մեր. ընդունայն են եւ հաւատքն ձեր. * Եւ
գտանիցիմք սուտ վկայք այ, զի վկայեցաք
զայ՝ թէ յարոյց զքս. զոր ոչն արդեօք յա-
16 րոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն. * Իսկ
եթէ մեռեալք ոչ յառնեն՝ ապա եւ քս չէ
17 յարուցեալ. * || Իսկ եթէ քս չիցէ յարու- || Հռովմ. 4. 25.
ցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. եւ տա-
18 կաւին ՚ի նմին մեղս կայցէք. * Իսկ արդ՝
19 որ ննջեցինն ՚ի քս, կորեա՞ն արդեօք. * Ե-
թէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի

քս, ողորմելի եմք քան զամ մարդիկ ։
ԾԴ *Բայց արդ՝ քս յարուցեալ է 'ի մեռելոց՝ | ա- 20
|| Կող. ռաջին պտուղ ննջեցելոց ։ *Քանզի մարդով 21
1. 18. եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց ։ *Ոպ̄ 22
Յայտ. 1. 5. ադամաւն ամենեքին մեռանին. նոյնպէս և
|| 1 Թեսղ. քսիւ ամենեքեան կենդանասցին ։ *Իւրա- 23
4. 15. քանչիւր յիւրում կարգի. նախ քս, և ապա
քսեանք 'ի գալստեան նորա ։ *Եւ ապա կատա- 24
րած. յորժամ տացէ 'ի ձեռս զթագաւորութիւն
այ՝ և հօր. յորժամ խափանեսցէ զամ իշխա-
նութիւնս և զամ պետութիւնս և զզօրութիւնս ։ *Զի 25
|| Սաղ. պարտ է նմ թագաւորել՝ | մինչև դիցէ զամ
109. 1. թշնամիս 'ի ներքոյ ոտից իւրոց ։ *Յետին 26
Եբր. 1. 13. թշնամին խափանի՝ մահ. | և զամ ինչ հնա-
|| Սաղ. զանդ արար 'ի ներքոյ ոտից նր ։ *Բայց յոր- 27
8. 8. ժամ ասիցէ. թէ հնազանդեալ է նմա ամ,
Եբր. 2. 8. յայտ է՝ թէ բաց յայնմանէ՝ որ հնազանդե-
ցոյց նմ զամ ։ *Բայց յորժամ հնազանդես- 28
ցի նմա ամ՝ յայնժամ և ինքն որդի հնազան-
դեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամ.
զի եղիցի ած ամենայն յամի ։ *Ապա թէ ոչ՝ 29
զի՞նչ գործիցեն, որ մկրտիցին վասն մեռե-
լոց, եթէ արդարև մեռեալք ոչ յառնիցեն.
ընդէ՞ր իսկ մկրտին վս նց ։ *ընդէ՞ր և 30
մեք վտանգիմք յամ ժամ, *և հանապազ մե- 31
ռանիմք ։ 'ի պարծանս ձեր եղբարք՝
զոր ունիմ 'ի քս յս 'ի տր մեր ։ *Եթէ ըս 32
|| Իմաստ. մարդոյ 'ի գազանամարտի լեալ եմ յեփե-
2. 6. սոս, զի՞նչ օգուտ էր ինձ, եթէ մեռեալք
Եսայ. ոչ յառնեն ։ | կերիցուք արբցուք՝ քանզի վա-
22. 13. 56. 12. ղիւ մեռանիմք ։ *Մի՛ խաբիք ։ ապականեն 33
զբարս քաղցունս բանք չարք ։

*Սթա-

34 *Զթափեցարո՛ւք արդարութք՝ եւ մի՛ մեղան- ԺԵ
չէք. զի զգիտութի ա՛յ ոչ ունին ոմանք. առ
35 ամօթոյ ձերոյ ասեմ։ *Այլ ասիցէ ոք.
զիա՞րդ յառնեն մեռեալք՝ կամ որո՞վ մարմ
36 նով գայցեն։ *Անմիտ դու զոր սերմանե-
սըն, ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի։
37 *Եւ զոր սերմանեսն, ոչ զմարմինն զոր
ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ.
եթէ ցորենոյ իցէ՝ եւ եթէ այլոց սերմանեաց։
38 *Եւ ա՛ծ տայ նմա մարմին՝ որգ եւ կամի. եւ
իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։
39 *Ո՛չ ամ մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ
մարմին է մարդկան, եւ այլ մարմին անասու-
նոց, այլ մարմին թռչնոց՝ եւ այլ մարմին
40 ձկանց։ *Եւ մարմինք երկնաւորք՝ եւ մար-
մինք երկրաւորք. այլ՝ այլ փառք երկնաւո-
41 րաց՝ եւ այլ փառք երկրաւորաց։ *Այլ փառք
արեգականն, եւ այլ փառք լուսնի, եւ այլ
փառք աստեղաց. եւ աստղ քան զաստղ ա-
42 ռաւել է փառօք։ *Նոյնպէս եւ յարութի
մեռելոց. սերմանի ապականութ՝ եւ յառ-
43 նէ առանց ապականութե. *սերմանի անար-
գութ՝ եւ յառնէ փառօք. սերմանի տկա-
44 րութ՝ եւ յառնէ զօրութ. *սերմանի մարմին
շնչաւոր՝ եւ յառնէ մարմին հոգեւոր. եթէ
45 գոյ մարմին շնչաւոր, գոյ եւ հոգեւոր։ *Որ-
պէս եւ գրեալ է, ‖ եղեւ մարդն առաջին ա- ‖ Ծննդ.
դամ ՚ի շունչ կենդանի. երկրորդ ադամ ՚ի 2. 7.
46 հոգի կենդանարար։ *Բայց ոչ նախ հո-
գեւորն. այլ շնչաւորն, եւ ապա հոգեւորն։
47 *Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն. իսկ
48 երկրորդ մարդն՝ տէր յերկնից։ *Որպէս հո-

ղե-

ղեղէնն, նոյնպէս և հողեղէնքս, և որ̃պ երկ-
նաւորն՝ նոյնպէս և երկնաւորքն ։ * Եւ որ- 49
պէս զգեցաք զպատկեր հողեղինին . զգեց-
ցուք և զպատկեր երկնաւորին ։

Օ. Օ. *Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ մարմին և 50
արիւն զարքայութիւնն ա̃յ ժառանգել ոչ կա-
րեն . և ոչ ապականութի զանապականութի
ժառանգէ ։ * Ահա՝ խորհուրդ մի ասեմ 51
ձեզ . ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ ամենե-
քեան նորոգեսցուք ։ * Յանկարծակի յա- 52
կան թօթափել՝ 'ի փող յետնումն . քանզի փող
հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ա-
պականութեն, և մեք նորոգեսցուք ։ * Զի 53
պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ
զանապականութի, և մահկանացուիս այս-
միկ զգենուլ զանմահութի ։ * Եւ յորժամ 54
մահկանացուս այս զգեցցի զանմահութի, և
ապականութիւնս զանապականութի, յայնժամ
|| Ովսէ. եղիցի բանն՝ որ գրեալ . || եթէ ընկլաւ մահ
13. 14. 'ի յաղթութի ։ * Ո՞ւր է մահ յաղթութի քո . 55
Եբրայ. ո՞ւր դժոխք խայթոց քո ։ * Խայթոց մահու 56
2. 14. մեղք են, և զօրութի մեղաց օրէնք ։ * || Այլ 57
|| Յ-հ. 5. 5. շնորհք ա̃յ՝ որ ետ մեզ զյաղթութի 'ի ձեռն
տ̃ն մերոյ յի̃ի ք̃ի ։

Ե. Գ. * Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաս- 58
տատուն եղերուք, անշարժ կացէք, առա-
ւել լերուք 'ի գործս տ̃ն յամ̃ ժամ . գիտա-
ջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն ա-
ռաջի տ̃ն ։

ԳԼ.

## ԳԼ. ԺԶ.

1 Այլ վս հաշուէն, որ ՚ի սուրբսն է, որպէս
պատուէր ետու եկեղեցեացն Գաղատաց-
2 ւոց. նոյնպէս և դուք առնիջիք: *Ըստ իւ-
րաքանչիւր միաշաբաթուցն իւրաքանչիւր ոք
՚ի ձէնջ առանձին իւրում գանձեսցէ՝ որ ինչ և
3 յաջողեսցի: *Զի մի՛ յորժամ գայցեմ,
յայնժամ հաւաքք լինիցին: այլ յորժամ ե-
կից՝ զոր միանգամ ընտրեսջիք թղթովք, զնո
առաքեցից տանել զշնորհսն ձեր յԵրուսա-
4 ղեմ: *Ապա թէ արժան իցէ և ինձ եր-
5 թալ՝ ընդ իս երթիցեն: *Այլ եկից առ ձեզ
յորժամ ՚ի Մակեդոնիա անցանիցեմ: քանզի
6 իբրև շրջեցայց ՚ի Մակեդոնիա, *թէ դէպ
լիցի, առ ձեզ մնացից՝ և կամ ձմերեցից. զի
և դուք յուղարկիցէք զիս՛ ուր և երթալոցն
7 եմ: *Զի ոչ կամիմ զձեզ այժմ ՚ի հարևան-
ցի տեսանել. այլ ունիմ ժամանակ ինչ առ-
8 նել առ ձեզ, եթէ Տր հրամայեսցէ: *Բայց
այժմ լինիմ յԵփեսոս մինչև ցպենտեկոստէ.
9 *զի դուռն բացեալ է ինձ մեծ և կարևոր,
10 և հակառակորդք բազում են: *Իսկ՝ եթէ ե-
կեսցէ Տիմոթէոս՝ տեսջիք զի առանց երկ-
իւղի լինիցի առ ձեզ. զի զգործ Տն գործէ՝
11 որպէս և ես. *մի ոք զնա անարգեսցէ: և յու-
ղարկեսջիք զնա խաղաղութբ՝ զի եկեսցէ առ
իս: քանզի ակն ունիմ նմա եղբարբքն հան-
դերձ:

12 *Այլ վասն Ապողոսի եղբօր՝ յոյժ աղաչեցի Ա.Զ.
զնա՝ զի եկեսցէ առ ձեզ եղբարբքն հանդերձ.
և երբ ոչ էին կամք՝ զի այժմ եկեսցէ.

այլ

այլ եկեսցէ յորժամ և պարապեսցէ։ *Հսկե- 13
ցէք՝ հաստատուն կացէք ի հաւատս, ժրա-
ցարուք զօրացարուք։ *Ամենայն ինչ ձեր 14
սիրով լինիցի։ *Աղաչեմ զձեզ եղբարք՝ գի- 15
տէք զտունն Ստեփանեայ և Փորտունատեայ՝
որ են պտուղ Աքայեցւոց. և ի պաշտօն սրբոց
կարգեցին զանձինս. *զի և դուք հնազանդ 16
լինիցիք այնպիսեաց. և ամենայն՝ որ գործա-
կից իցէ և վաստակակիցի։ *Ուրախ եղէ ի 17
գալ Ստեփանեայ և Փորտունատեայ և Ա-
քայիկոսի, զի զձեր պակասութիւն նոքա լը-
ցին. *քանզի հանգուցին զոգի իմ՝ և ըզ- 18
ձեր. արդ՝ ծանիջիք զայնպիսիսն։ *Ողջոյն 19
տան ձեզ եկեղեցիքն Ասիացւոց։ Ողջոյն շատ
տան ձեզ ի Տէր՝ Ակիւղաս, և Պրիսկիղա՝
հանդերձ առ տնին եկեղեցւովն իւրեանց։
*Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքեան։ 20
Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան։
*Ողջոյնս այս՝ իմով ձեռամբս Պօղոսի է։ *Ե- 21
թէ որ ոչ սիրէ զՏէր Յս, եղիցի նզովեալ՝ մա- 22
րանաթայ։ *Շնորհք Տն մերոյ Յսի Քսի ընդ 23
ձեզ։ *Սէր իմ ընդ ամենեսին ձեզ 24
ի Քս Յս. ամէն։

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹՆ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՓԻԼԻ-
ՊԵԱՅ, Ի ՁԵՌՆ ՍՏԵՓԱՆԵԱՅ ԵՒ ՓՈՐՏՈՒՆԱՏԵԱՅ ԵՒ
ԱՔԱՅԻԿՈՍԻ։

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ։

### ԳԼ. Ա.

1 Պօղոս առաքեալ յի քի կամօքն այ, Բ. Կ
եւ տիմոթէոս եղբայր. եկեղեցւոյ
այ՝ որ է 'ի կորնթոս՝ սրբովք ամենե-
քումբք՝ որ են յամ կողմանս աքայեցւոց։
2 *Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութին յայ հօրէ
3 մերմէ՝ եւ 'ի տեառնէ յիսէ քիսէ։ *‖ Օրհնեալ է ‖ Եփե. 1. 3.
ած եւ հայր տեն մերոյ յի քի. հայր գթու- 1. Պետ. 1. 3.
4 թեց, եւ ած ամ մխիթարութեն. *որ մխի-
թարէն զմեզ յամ նեղութիս մեր. առ 'ի
կարօղ լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ
յամ նեղութիս իցեն, մխիթարութեբն՝ որով
5 մեք մխիթարիմք յայ։ *Զի որպէս առաւելուն
չարչարանքն քի 'ի մեզ. նոյնպէս եւ 'ի ձեռն
քի առաւել լցցի եւ մխիթարութին մեր։
6 *Զի եթէ նեղիմք վս ձերոյ մխիթարութեն
եւ փրկութեն, եւ եթէ մխիթարիմք վս ձերոյ
մխիթարութեն եւ փրկութեն, որ յաջողեալն է
համբերութեբ նոյին չարչարանաց. զոր եւ
7 մեքն չարչարիմք. *Եւ յոյսն մեր հաստատուն
է վս ձեր. քանզի գիտեմք՝ եթէ ոչ կցորդ
էիք չարչարանացն՝ նոյնպէս եւ մխիթարու-
թեն։

թեն. * Վասնզի ոչ կամիմ ագէտս լինել 8
ձեզ եղբարք՝ վասն նեղութեան մերոյ եղելոյ յա-
սիա. զի առաւել քան զկար մեր ծանրա-
ցաք, մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց.
* Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ըն- 9
կալաք. զի մի յանձինս ապաստանիցեմք՝ այլ
յԱծ՝ որ յարուցանէ զմեռեալս. * որ յայն- 10
պիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ.
* քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին 11
փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն
մեր. Զի 'ի բազմադէմ շնորհացն՝ որ 'ի մեզ,
բազմօք յաճախեսցեն գոհութիւն վասն մեր.
Ի. Դ. * Վասնզի պարծանք մեր այս են. վկայութի 12
մտաց մերոց. զի սրբութբ և ստուգութբ այ,
և ոչ մարմնեղէն իմաստութբ, այլ շնորհօքն
այ շրջեցաք յաշխարհի. բայց առաւել ևս
առ ձեզ. * Վասնզի ոչ եթէ այլազգ ինչ 13
գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն՝ և
գիտակ լինիցիք. քանզի յուսամ եթէ մինչև
'ի վախճան գիտիցէք. * որպէս և խելամուտ ե- 14
ղէք մեզ փոքր 'ի շատէ. զի պարծանք ձեր
եմք, որպէս և դուք մեր յաւուրն տն մերոյ յիսի
քսի. * Եւ յայս ապաստան կամէի նախ առ 15
ձեզ գալ, զի դուք կրկին շնորհս ընդունի-
ջիք. * և 'ի ձէնջ երթալ 'ի մակեդոնիա. 16
և դարձեալ 'ի մակեդոնիայ գալ առ ձեզ.
և 'ի ձէնջ յուղարկել 'ի հրէաստան. * Արդ 17
եթէ զայս խորհեցայ՝ միթէ թեթևութբ
ինչ գնացի. և կամ զոր խորհիմն՝ ըստ մարմ-
նոյ ինչ խորհիցիմ, այլ զի եղիցի յինէն կող-
մանէ, այոն՝ այո, և ոչն՝ ոչ. * Հաւատար- 18
իմ է Աճ՝ զի բանն մեր որ առ ձեզ եղաւ՝ ոչ
է

19 է այո, եւ ոչ: *Քանզի որդին այ յս քս, որ 'ի
ձեզ մեօք քարոզեցաւ, ինեւ եւ սիղուանոսիւ
եւ տիմոթէիւ. ոչ եղեւ այո եւ ոչ. այլ այոն
20 'ի նմին եղեւ: *Զի որչափ աւետիքն այ են՝
'ի նմ այոն. վասն որոյ եւ նովին ամէնն մեօք
21 'ի փառս այ: *Այլ որ հաստատեացն զմեզ
ձեօք հանդերձ 'ի քս, եւ որ օծ զմեզ, այ է.
22 *որ եւ կնքեաց զմեզ, եւ ետ զառհաւատ-
չեայ հոգւոյն 'ի սիրտս մեր:
23 *Այլ ես վկայ զայ կոչեմ անձին իմոյ. զի Ի.Զ.
մի խնայելոյ 'ի ձեզ՝ ոչ եւս եկի 'ի կորնթոս.
զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքս՝ այլ
գործակից եմք խնդութեան ձերոյ. քանզի հա-
ւատովք հաստատեալ կայք:

## ԳԼ. Բ.

1 Բայց զայս եւեթ ընտրեցի՝ զի մի միւսան-
2 գամ տրտմութեամբ եկից առ ձեզ: *Զի ե-
թէ ես տրտմեցուցանեմ զձեզ. եւ ո՞վ է որ
ուրախ առնիցէ զիս, եթէ ոչ՝ որ տրտմեցելն
3 յինէն: *Եւ զայս զի գրեցի՝ զի մի յորժամ
գայցեմ տրտմութիւն ինչ կրիցեմ, ուստի պար-
տ էր ինձ ուրախ լինել. յուսացեալ
եմ 'ի ձեզ ամենեսին, զի իմ ուրախութիւն
4 ձեր ամենեցուն է: *Զի 'ի բազում վշտաց՝ եւ
'ի նեղութէ սրտի գրեցի առ ձեզ բազում ար-
տասուօք. ոչ զի տրտմեսջիք, այլ զի զսէրն
իմ գիտասջիք, զոր ունիմ առաւելապէս առ
5 ձեզ: *‖ Ապա եթէ որ տրտմեցոյց՝ ոչ եթէ ‖ Ա. Կորն. Ե. 1.
զիս տրտմեցոյց՝ այլ փոքր 'ի շատէ, զի մի
6 ծանրացուցից ամենեցուն ձեզ: *Շատ է այն-
պիսւոյն պատուհասն այն՝ որ 'ի բազմաց ան-
տի

տի է ։ * Այսուհետեւ նմին հակառակն՝ մա- 7
նաւանդ շնորհել ձեզ նմա՝ և մխիթարել. զի
մի յաւելորդ տրտմութեանն ընկղմեսցի այնպի-
սին ։ * Վասն որոյ աղաչեմ զձեզ հաստա- 8
տել ՚ի նա զսէրն ։ * Վասն այնորիկ իսկ և 9
գրեցի. զի զփորձ առից զձեր՝ եթէ յամենայնի հնա-
զանդ իցէք ։ * Որ եթէ ումեք շնորհիցէք՝ 10
և ես. քանզի և ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ
շնորհիցեմն՝ վասն ձեր ՚ի դէմս Քրիստոսի. * զի մի 11
զրկեսցուք ՚ի սատանայէ. քանզի չեմք ինչ ան-
տեղեակ խորհրդոցն նորա ։
Գ. Կ * Այլ իբրեւ հասի ես ՚ի Տրովադա յաւե- 12
տարանն Քրիստոսի, և դուռն բաց էր ինձ ՚ի Տէր,
* ոչ եղեւ հանգիստ հոգւոյ իմում. քանզի 13
ոչ գտի ես անդ զՏիտոս զեղբայր իմ. այլ
հրաժարեալ ՚ի նոցանէ՝ գնացի ՚ի Մակեդով-
նիա ։ * Այլ Աստուծոյ շնորհք՝ որ յամենայնի հաղթակ հար- 14
կանէ զմեզ ՚ի Քրիստոս Յիսուս, և զհոտ գիտութեան
իւրոյ յայտնի առնէ մեօք յամենայն տեղիս. * զի 15
հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած՝ ՚ի մէջ փրկե-
լոցն՝ և ՚ի մէջ կորուսելոցն. * ոմանց հոտ՝ 16
մահահուանէ ՚ի մահ, և ոմանց հոտ՝ կենդա-
նութեան ՚ի կեանս. և առ այս ո՞ բաւական իցէ ։
* Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն, որ վաճա- 17
ռականս լինէին բանին Աստուծոյ. այլ իբրեւ ՚ի հաւա-
ստութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ՝ առաջի Աստուծոյ ՚ի Քրիստոս
խօսիմք ։

## ԳԼ. Գ.

Սկսանիմք այսուհետեւ միւսանգամ զանձինս 1
ընծայեցուցանել. թէպէտ և ոչ պիտոյ ի-
ցէ մեզ, որպէս ոմանց՝ թղթոց ընծայութեան

առ

2 առ ձեզ, կամ ի ձէնջ. *Այլ թուղթք մեր
դուք էք՝ գրեալ ի սիրտս մեր, ծանուցեալ
3 եւ ընթերցեալ յամ՟ մարդկանէ. *Յայտ-
նեալք՝ զի էք թուղթք ք՟սի, պաշտեցեալ ի
մէնջ. եւ գրեալ՝ ոչ մելանաւ, այլ Հոգւովն ա՟յ
կենդանւոյ. ոչ ի տախտակս քարեղէնս,
այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս.
4 *Յոյս մի այսպիսի ունիմք ի ձեռն ք՟սի առ Գ. Գ.
5 ա՟ծ. *Ոչ եթէ անձամբ բաւական եմք
խորհել ինչ իբրեւ ի մէնջ. այլ բաւականու-
6 թիւն մեր յա՟յ է. *որ եւ բաւականս արար
զմեզ՝ պաշտօնեայս նորոց կտակարանացս՝
ոչ գրով, այլ Հոգւով. զի գիրն սպանանէ,
7 այլ Հոգին կեցուցանէ. *Ապա եթէ պաշ-
տօնն մահու գրով գրոշմեալ ի տախտակն
քարեղէնս՝ եղեւ փառօք, զի մի կարասցեն
հայել որդիքն ի՟ղի յերեսն մովսէսի՝ վասն փա-
8 ռաց երեսաց նր՟, որ խափանելոցն էր. *Որ-
չափ եւս առաւել պաշտօն Հոգւոյն եղիցի
9 փառօք. *Ապա եթէ պաշտօն դատապար-
տութեան փառօք էր, որչափ եւս առաւել պաշ-
10 տօն արդարութեան փառօք. *Քանզի ոչ եթէ
փառաւորի փառաւորեալն յայսմ մասին՝ վս՟
11 առաւելութեան փառացն. *Ապա եթէ որ խա-
փանելոցն էր՝ այն փառօք էր, որչափ եւս ա-
12 ռաւել՝ որ կալոցն է փառօք իցէ. *Իսկ արդ՝
զի ունիմք այսպիսի յոյս, բազում համար-
13 ձակութ՟բ վարեսցուք. *‖ Եւ ոչ որպէս մովսէս ‖ Ելից 34. 33.
արկանէր քող ի վ՟յ երեսաց իւրոց, վասն
չհայելոյ որդւոցն ի՟ղի ի վախճան խափանե-
14 լոցն. *Այլ կուրացան միտք նոցա. քանզի
մինչեւ ցայսօր ժամանակի՝ նոյն քող ձգեալ
կայ

կայ 'ի վ՟ր ընթերցուածոց հին կտակարա-
նացն . և ոչ վերանայ, զի ք՟րիւ խափանելոց
է ։ * Այլ մինչև ցայսօր՝ յորժամ ընթեռ- 15
նուն զՄովսէս՝ նոյն առագաստ կայ 'ի վերայ
սրտից նոցա ։ * Այլ յորժամ դարձցին առ 16
Ելց. Լ. Լդ. Տ՟ր՝ ապա վերասցի առագաստն ։ * Իսկ Տ՟ր 17
ՎԵՐՋ Հոգին է . ուր Հոգի Տ՟ն է , անդ ազատութիւն է ։
* Այլ մեք ամենեքեան բացաւ երեսօք ըզ- 18
փառսն Տ՟ն իբրև ի հայելւոջ տեսեալ՝ 'ի նոյն
պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս. որպէս
և 'ի Տ՟ն Հոգւոյ ։

## ԳԼ ։ Դ ։

Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս՝ ո՟պ 1
և գտաք զողորմութի՟ն , և ոչ ձանձրանամք ։
* այլ հրաժարեցաք 'ի գաղտնեաց ամօթոյն . 2
զի մի գնասցուք խորամանկու՟թ , և մի նեն-
գեսցուք զբանն Այ . այլ յայտնութ՟բ ճշմար-
տութե՟ն ընծայեցուսցուք զանձինս մեր առ
Ամ միտս մարդկան առաջի Այ ։ * Ապա թէ 3
իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր , 'ի մէջ
կորուսելոցն է ծածկեալ . * որոց աստուած 4
աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս ան-
հաւատիցն , զի մի ծագեսցէ 'ի նոսա լուսաւո-
րութի՟ն աւետարանի փառացն ք՟սի . որ է պատ-
կեր աներևութի՟ն Այ ։ * Զի ոչ եթէ զանձինս 5
քարոզեմք , այլ զՅ՟ս ք՟ս զՏ՟ր . և զմեզ ծա-
Ծնն. ռայս ձեզ վ՟ն ք՟սի ։ * Զի Ած որ ասաց 'ի 6
Ա. 3. խաւարէ լոյս ծագել . որ և ծագեաց իսկ 'ի
սիրտս մեր 'ի լուսաւորութի՟ն գիտութե՟ն փառացն
Այ 'ի դէմս յ՟սի ք՟սի ։ * Այսուհետև ունիմք 7
զգանձս զայս յամանս խեցեղէնս. զի առաւե-

լու-

8 լութն զօրութեն իցէ յԱյ, և ոչ ՚ի մէնջ. *Յա-
մենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք. կա-
9 րօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք. *Հալա-
ծեալք՝ այլ ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ
10 ոչ սատակեալք. *յամ ժամ զմահն յսի ՚ի
մարմինս մեր կրեսցուք՝ զի և կեանքն յսի ՚ի
11 մարմինս մեր յայտնեսցին. *Քանզի միշտ
մեք՝ որ կենդանիքս եմք, ՚ի մահ մատնիմք
վն յսի. զի և կեանքն յսի յայտնի լիցին ՚ի
12 մահկանացու մարմինս մեր. *Այսուհե-
տև մահ ՚ի մեզ զօրանայ, և կեանք ՚ի ձեզ.
13 *Արդ՝ ունիմք զնոյն հոգի հաւատոյ. ըստ
և գրեալ է. ‖ Հաւատացի՝ վն որոյ և խօսե- ‖ Սաղ.
ցայ. և մեք հաւատամք՝ վն որոյ և խօսիմք 115. 1.
14 իսկ. *Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն
զՏր, և զմեզ ընդ յսի յարուսցէ՝ և յանդի-
15 ման կացուսցէ ձեօք հանդերձ. *Քանզի ամ
ինչ վն ձեր է. զի շնորհքն յաճախեալք ՚ի
բազմաց ՚ի գոհութիւն՝ առաւելեսցին ՚ի
16 փառս Այ. *Վասն որոյ և ոչ ձանձրանամք.
այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապա-
կանի, այլ ներքին մարդն մեր նորոգի օր-
17 ըստ օրէ. *Զի առժամայն յաճախումն թե-
թև նեղութեան մերում՝ ՚ի յաւիտենականն ա-
ռաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ ՚ի
18 մեզ. *Քանզի ոչ գիտեմք զերևելիս՝ այլ
զաներևոյթս. զի երևելիքս առժամանակ
մի են, և աներևոյթքն յաւիտենականք.

## ԳԼ. Ե.

1 Քանզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տա-
ճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած

յԱյ

յոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի,
յաւիտենական յերկինս։ *Եւ ընդ այս 2
տաղտկամք. քանզի զբնակութիւն երկնից փա-
Ա Կոր. 15. 53. փագեմք զգենուլ. *Միայն թէ յորժամ 3
զգենուցումքն՝ ոչ մերկ գտանիցիմք։ *Վասն 4
զի որ եմք ի յարկաւս ընդ այսուիկ՝ տաղ-
կամք ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկա-
նալ, այլ զայն ՚ի վերայ այսր զգենուլ. զի
ընկղմեսցի մահկանացուս ՚ի կենաց անտի։
*Այլ որ յաջողէն մեզ ՚ի սոյն՝ Ած է. որ 5
ետ մեզ զառհաւատչեայ Հոգւոյն։
Գ. Օ. *Արդ՝ համարձակիմք յամ ժամ, և գի- 6
տեմք՝ եթէ որչափ յամեմք ՚ի մարմնի աստ՝
օտարանամք ՚ի Տնէ։ *Զի հաւատովք գը- 7
նամք՝ և ոչ կարծեօք։ *Այլ համարձակիմք՝ 8
և առաւել ևս հաճեալ եմք ելանել ՚ի մարմ-
նոյ աստի՝ և մտանել առ Ած։ *Վասն որոյ 9
և առատանամք. զի եթէ յամիցեմք՝ և եթէ
Հռովմ. 14. 10. ելանիցեմք՝ հաճոյ եւեթ իցեմք նմա։ *Վասն 10
զի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ ա-
ռաջի ատենին Քի. զի ընկալցի իւրաքան-
չիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յա-
ռաջ՝ եթէ բարի, և եթէ չար։ *Իսկ արդ՝ 11
զահն Տն գիտելով չափ, զմարդկան ինչ
միտս հաճեմք. սակայն առաջի Այ յայտնե-
լոց եմք. բայց ես յուսամ և ՚ի ձեր միտս
յայտնի լինել։ *Իսկ ոչ եթէ միւսանգամ 12
զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ
պատճառս տամք ձեզ պարծանաց վս մեր.
զի ունիցիք առ այնոսիկ՝ որ առ աչս պար-
ծիցեն, և ոչ սրտիւք։ *Զի եթէ առան- 13
ցաք ինչ՝ այն Այ է. և եթէ՝ զգաստանամք՝
այն

14 այն ձեր է։ * Զի սէրն քսի տագնապէ զմեզ
քննել զայս. զի եթէ մի փոխանակ ամե-
նեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան
15 մեռեալ են. * Եւ ՝ի վերայ ամենեցուն մե-
ռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի անձանց ի-
ցեն կենդանիք, այլ այնմ՝ որ ՝ի վն նոցայն
16 մեռաւ, և յարեաւ։ * Այսուհետև մեք
ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ և գի-
տէաք մարմնով զքս՝ այլ արդ ոչ ևս նոյնպէս
17 գիտեմք։ * Ապա եթէ ոք ՝ի քս նոր արա-
րած իցէ. զի հինն անց, ‖ և արդ նոր եղև ‖ Եսայ. 43. 19.
18 ամ։ * Այլ ամ ինչ յայ՝ որ հաշտեցոյց ըզ- Յայտ. 21. 5.
մեզ ընդ իւր ՝ի ձեռն քսի. և ետ մեզ ըզ- ՎԵՐՋ.
պաշտօնն հաշտութեն։
19 * Եւ քանզի ած էր՝ քսիւ զաշխարհս հաշ-
տեցուցանել ընդ իւր, և չհամարել նց զմեղս
իւրեանց, և եդ ՝ի մեզ զբանն հաշտութե։
20 * Արդ՝ վն քսի պատգամաւորեմք՝ այ և այ
բարեխօսութբ մեօք։ աղաչեմք վն քսի՝ հաշ-
21 տեցարուք ընդ այ։ * Զի զայն՝ որ ոչն գի-
տէր զմեղս, վն մեր մեղս արար. զի մեք ե-
ղիցուք նովաւ արդարութի այ։

## ԳԼ. Զ.

1 Գործակից եմք ձեր՝ և աղաչեմք. մի ընդ-
ունայն զշնորհսն աստուծոյ ընդունել ձեզ։
2 * ‖ Զի ՝ի ժամանակի ընդունելութեն՝ ասէ, ‖ Եսայ. 49. 8.
լուայ քեզ, և յաւուր փրկութեն օգնեցի քեզ։
Ահաւասիկ ժամանակ ընդունելի. ահա օր
3 փրկութե։ * ‖ Մի և մի իւիք տայցեք պատ- ‖ Կորն. 10. 32.
4 ճառս, զի մի արատեսցի պաշտօնն. * այլ
յամ ընծայեցուցեք զանձինս ձեր իբրև
ըզ-

Ա. Կոր. ‖ զպաշտօնեայս այ՝ համբերութեամբ բազմաւ 'ի
4. 1. նեղութիւնս 'ի վիշտս 'ի չարչարանս, *'ի գանս 5
'ի բանտս 'ի խռովութիւնս յաշխատութիւնս 'ի
հսկմունս 'ի պահս, *'ի սրբութեան 'ի գիտութեան 6
յերկայնմտութեան 'ի քաղցրութեան 'ի հոգի սուրբ,
'ի սէր՝ առանց կեղծաւորութեան, *'ի բանս 7
ճշմարտութեան, 'ի զօրութեան այ. մտ զինուն ար-
դարութեան որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է. *փա- 8
ռօք եւ անարգութբ, գովութբ եւ պարսաւանօք,
իբրեւ մոլարք՝ եւ ճշմարիտք. *իբրեւ անծա- 9
նօթք՝ եւ ծանուցեալք. իբրեւ մահկանա-
ցուք՝ եւ ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խը-
րատեալք՝ եւ ոչ մահապարտեալք. *իբրեւ 10
տրտմեալք, եւ հանապազ ուրախ եմք. իբ-
րեւ աղքատք՝ եւ զբազումս մեծացուցանեմք.
իբրեւ ոչինչ ունիցիմք, եւ զամ ինչ ունիմք:
*Բերանք մեր բացեալ են առ ձեզ՝ կորն- 11
թացիք. եւ սիրտք մեր ընդարձակեալք:
*Ոչինչ նեղիք 'ի մէնջ՝ բայց եթէ 'ի գութս 12
ձեր նեղիցիք. *արդ՝ զնոյն հատուցումն իբ- 13
րեւ ընդ որդեակս ունիմ. ընդարձակեցարուք
եւ դուք: *Մի լինիք լծակիցք անհաւա- 14
տից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան
ընդ անօրէնութեան. եւ կամ զի՞նչ հաւասարութիւն
է լուսոյ ընդ խաւարի. *եւ կամ զի՞նչ միաբա- 15
նութիւն է քի ընդ բելիարայ. կամ զի՞նչ բաժին
կայ հաւատացելոյն ընդ անհաւատին. *կամ 16
զի՞նչ նմանութիւն է տաճարի այ մեհենաց:
Ա. Կոր. 3. 16. ‖ Տաճարքն դուք տաճար այ կենդանւոյ էք.
6. 19. որպէս եւ ասաց այ, թէ ‖ բնակեցայց 'ի նոսա,
Ղեւտ. 26. 12. եւ գնացից 'ի նոսա. եւ եղէց նոցա այ, եւ նոքա
Եսայ. 52. 11. եղիցին իմ ժողովուրդ: * ‖ Վասն որոյ ելէք 'ի 17
միջոյ

միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ Տէր. և 'ի
18 պղծոյ մի մերձենայք. *և ես ընդունելոց ըզ-
ձեզ. ‖ և ես եղէց ձեզ 'ի Հայր, և դուք ‖ Երեմ.
եղիջիք ինձ յուստերս և 'ի դստերս, ասէ 31. 9.
Տէր ամենակալ:

## ԳԼ. Է.

1 Արդ որովհետև զայս աւետիս ունիմք սիրե-
լիք՝ սրբեսցուք զանձինս մեր յամ պղծու-
թենէ մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսըր-
2 բութիւն ահիւն այ: *Տարայք զմեզ, զի ոչ
ումեք մեղաք, և ոչ զոք եղծաք, և ոչ զոք
3 զրկեցաք: *Ոչ եթէ 'ի դատապարտութիւն
ինչ ասեմ. քանզի յառաջ իսկ ասացի, ե-
թէ 'ի սրտի մերում կայք՝ 'ի կեալ և 'ի մե-
ռանել ընդ ձեզ:
4 *Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ. Գ. Կ
բազում պարծանք են ինձ վա ձեր. լի եմ
մխիթարութք. առաւելեալ եմ ուրախութբ
5 յամ նեղութիս մեր: *Քանզի յորժամ
հասաք մեք 'ի Մակեդոնիա, և ոչ միով իւիք
հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամե
նեղեալք. քանզի արտաքոյ մարտք՝ և 'ի ներ-
6 քոյ արհաւիրք: *Այլ որ մխիթարէն ըզ-
խոնարհս, մխիթարեաց զմեզ ած 'ի գալըս-
7 տեանն Տիտոսի: *Ոչ միայն 'ի գալստեան
նր, այլև 'ի մխիթարութեանն՝ զոր մխիթարե-
ցաւ նա 'ի ձեզ, 'ի պատմել մեզ զանձուկն
ձեր՝ զողբումն ձեր՝ զնախանձն ձեր վա իմ,
8 մինչ առաւել ուրախ լինել ինձ: *Զի թէ
և տրտմեցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ,
թէպէտ և զղջացեալ էի. քանզի տեսանեմ՝

զի թուղթն այն թէ և առ ժամանակ մի
տրտմեցոյց զձեզ. * Արդ՝ ուրախ եմ, ոչ զի 9
տրտմեցայք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմեցա-
րուք. քանզի տրտմեցայք ըստ այ. զի
Յւ. Պետ. մի ինչ զրկեցիք ՚ի մէնջ. * Զի որ ըստ այ 10
ա. 19. տրտմութիւն է, ապաշխարութիւն ՚ի փրկութիւն ա-
ռանց զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի
տրտմութիւն մահ գործէ. * Արդ՝ նոյն իսկ որ 11
ըստ այ տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ գոր-
ծեաց ՚ի ձեզ, կամ աղերս կամ սաստ կամ եր-
կիւղ կամ անձուկ կամ նախանձ կամ վրէժխնդ-
րութիւն. քանզի յամի ընծայեցուցէք զանձինս
ձեր՝ սուրբ լինել յիրիդ յայդմիկ. * Ապա ու- 12
րեմն՝ թէ և գրեցի ես առ ձեզ, ոչ վասն այնո-
րիկ որ զրկեացն, և ոչ վասն այնորիկ՝ որ զրկե-
ցաւն. այլ վասն յայտնի լինելոյ փութոյն ձե-
րոյ՝ որ վասն մեր՝ առ ձեզ առաջի այ. * Վասն 13
այնորիկ մխիթարեալ եմք ՚ի վր մխիթարու-
թեն մերոյ. առաւել ևս խնդացաք ՚ի վր
խնդութեն Տիտոսի. քանզի հանգուցեալ էր
հոգի նր ՚ի ձէնջ ամենեցունց. * Զի թէ զինչ 14
և պարծեցայ առ նմա վասն ձեր՝ ոչ ամաչեցի.
այլ որպէս զամենայն ճշմարտութբ խօսե-
ցաք ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն մեր
առ Տիտոսի ճշմարիտ եղեն. * Եւ գութք 15
նորա առաւել ևս են ՚ի ձեզ. քանզի յիշե-
ցուցանէր նա զամենեցուն զձեր հնազան-
դութիւն. թէ որպէս ահիւ և դողութբ ըն-
կալարուք զնա. * Ուրախ եմ. զի 16
յամենայնի համարձակ եմ առ ձեզ.

## ԳԼ: Ը·

1 Ծանուցանեմ ձեզ եղբարք զշնորհսն այ՝ որ ԳԼ Ը
տուեալ են եկեղեցեացն մակեդոնացւոց ,
2 * զի մեծաւ հանդիսիւ նեղութեանն՝ առա-
ւելաւն խնդութն նց, եւ ծանր աղքատութն
նց առաւել եղեւ 'ի մեծութն առատութե նց .
3 * զի ըստ կարի նց վկայեմ, եւ աւելի քան ըզ-
4 կար. * Խնդրանօք բազում աղաչանօք աղա-
չէին զշնորհսն, եւ զհաղորդութիւն պաշտա-
5 մանն, որ 'ի սուրբսն՝ տալ ցմեզ : * Ո՛չ որ-
պէս ակն ունէաք, այլ եւ զանձինս եւս տուան,
6 նախ տն՝ եւ ապա մեզ կամօքն այ . * աղաչել
զտիտոս՝ զի որպ սկսաւ յառաջագոյն, նոյն-
պէս եւ կատարեսցէ 'ի ձեզ եւ զայդ եւս շնորհ
7 * Այլ որպ յամի առաւել էք հաւատովք՝ եւ
բանիւ եւ գիտութբ եւ ամ փութով, եւ որ 'ի
մէնջ 'ի ձեզ սէրն է, զի եւ յայսմ եւս շնորհի
8 առաւել լինիցիք. * Ո՛չ որպ հրամանս տալով
ասեմ. այլ վասն այլոց փութոյ, եւ զձր ձերոյ
9 սիրոյ՝ զմտերմութիւն փորձեմ : * Քանզի գի-
տէք զշնորհսն տն մերոյ յսի քսի. զի վս ձեր
աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք
10 նր աղքատութն մեծասջիք : * Եւ խրատ մի
յայսմիկ տամ. զի այս իսկ օգուտ ձեզ է. որք
ոչ միայն զառնելն՝ այլ եւ զկամելն յառաջա-
11 գոյն սկսայք 'ի հերուն հետէ : * Բայց արդ
եւ զառնելն իսկ կատարեցէք. զի որպ յօժա-
րութն 'ի կամաց է, նոյնպէս եւ առնելն ըստ
12 գոյին : * Զի եթէ յօժարութն առաջիկայ,
ըստ գոյին ընդունելի է՝ եւ ոչ եթէ ըստ չգոյին :
13 * Զի ոչ եթէ այլոց հանգիստ կամիցիմ, եւ
ձեզ

ձեզ նեղութիւն. * Այլ հաւասարութեամբ՝ յայժ- 14
մու ժամանակիս. ձեր առաւելութիւնդ ՚ի նոցա
պակասութիւն. զի եւ նոցա առաւելութիւնն եղի-
ցի ՚ի ձերում պակասութեանդ, զի եղիցի հա-
‖ Ելից. ւասարութիւն որպէս եւ գրեալ է. * ‖ Եթէ որ բա- 15
16. 18. զումն առ՝ ոչ առաւելաւ. եւ որ սակաւն՝
ոչ նուազեցաւ.

Գ. Գ. * Բայց շնորհք այ՝ որ ետ զնոյն փոյթ ընդ 16
ձեր ՚ի սիրտ տիտոսի. * զի զաղաչանսն ըն- 17
կալաւ՝ եւ փութացաւ յօժարագոյնս դիմեաց
գալ առ ձեզ. * Եւ առաքեցաք ընդ նմա զեղ- 18
բայրն՝ որոյ գովութիւն յաւետարանին անդ է
ընդ ամ եկեղեցիս. * Եւ ոչ այսչափ միայն, 19
այլ եւ ձեռնադրեալ յեկեղեցեաց անտի,
ուղեկից մեր եղեւ ՚ի շնորհս յայսմիկ՝ որ
պաշտի ՚ի մէնջ, ՚ի փառս Տն՝ եւ ՚ի մեր յօ-
ժարութիւն. * Բայց զայս խորշիմք իսկ եթէ 20
գուցէ արատ ոք ինչ դնիցէ ՚ի հաստատութեան
‖ Հռով. յայսմիկ՝ որ պաշտեցաւ ՚ի մէնջ. * ‖ Քան- 21
12. 17. զի խորհիմք զբարիս՝ ոչ միայն առաջի Տն,
այլ եւ առաջի մարդկան. * Եւ առաքեցաք 22
ընդ նոսա զեղբայրն մեր՝ զոր ընտրեցաք ՚ի բա-
զում իրս բազում անգամ փոյթ գոլ. եւ
առաւել եւս այժմ փութագոյն՝ յուսով մե-
ծաւ ՚ի ձեզ. * Բայց եթէ վն տիտոսի ինչ 23
բանք են, իմ հաւասար է՝ եւ ձեր գործա-
կից. եւ եթէ եղբարք մեր, առաքեալք ե-
կեղեցեաց՝ եւ փառք քի. * Եւ արդ՝ զհան- 24
դէս սիրոյ ձերոյ՝ եւ զմերոյ պարծանացն վն
ձեր, ՚ի դոսա ցուցջիք յանդիման ամ եկե-
ղեցեաց.

ԳԼ.

## ԳԼ. Թ.

Գ.Գ.

1 Իսկ վասն պաշտօնմանն՝ որ ՚ի սուրբսն է,
2 աւելի է ինձ և գրել առ ձեզ։ * Զի գի-
տեմ զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծե-
ցեալ եմ ՚ի մէջ Մակեդոնացւոցն, թէ Ա-
քայեցիքն ՚ի հերուն հետէ պատրաստ են.
3 և ձեր նախանձն զբազումս յորդորեաց։ * Ար-
առաքեցաք զեղբարսն՝ զի մի պարծանքն մեր
որ վասն ձեր ընդունայն լինիցին ՚ի մասինդ
յայդմիկ. այլ որպէս ասէի իսկ, պատրաստա-
4 գոյնք գտանիցիք. * զուցէ յորժամ գայ-
ցեն ընդ մեզ Մակեդոնացիքն՝ և գտանիցեն
զձեզ անպատրաստս, և ամաչեսցուք մեք.
զի մի ասասցուք՝ թէ դուք, ՚ի մասինդ յայդ-
5 միկ պարծանաց։ * Արդ՝ հարկաւոր համարե-
ցայ աղաչել զեղբարսն, զի յառաջագոյն իսկ
եկեսցեն առ ձեզ, և յառաջագոյն պատ-
րաստեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհ-
նութիւն ձեր ՚ի պատրաստի ունել. այնպէս
իբրև զօրհնութիւն, և մի իբրև զագահութիւն։
6 * Բանզի որ սերմանէ խնայելով՝ խնայելով և
հնձեսցէ. և որ սերմանէ առատութեամբ՝ առա-
7 տութեամբ և հնձեսցէ։ * Իւրաքանչիւր որպէս
և յօժարեսցի որ սրտիւ, մի առ հարկի
և տրտմութեամբ. ‖ Բանզի զտուրս զուարթա- ‖ Առակ. 22. 11.
ռատս սիրէ Աստուած։ * Իսկ կարող է Աստուած զամ
8 շնորհս առաւելուլ ՚ի ձեզ. զի յամենայնի
յամ ժամ զամ բաւականութիւն ընկալեալ՝
9 առաւելուցուք յամ գործս բարութեան, * որպէս
և գրեալ է. ‖ Սփռեաց և ետ տնանկաց. ‖ Սաղ. 111. 9.
արդարութիւն նորա մնայ յաւիտեան։

* Իսկ

Գ. Թ. * ‖ Այլ այն որ պարգեւէ սերմն սերմանա- 10
‖ Եսայ. հանաց՝ եւ հաց 'ի կերակուր, պարգեւեսցէ
55. 10. եւ բազմացուսցէ զսերմանիս ձեր, եւ աճե-
ցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ. * յամն 11
մեծացեալք ամ՛ առատութ՝ որ յորդորէն մեզ
գոհութիւն այ. * Զի պաշտօն հարկիս այ- 12
սորիկ՝ ոչ միայն առ 'ի լնուլ զպակասութիւն
սրբոց է, այլ եւ առաւելուլ բազմաց գոհութեամբ
այ. * Հանդիսիւ պաշտօնմանս այսորիկ փա- 13
ռաւորել զած 'ի վ՛ր հնազանդութեան խոստո-
վանութեան ձերոյ յաւետարանն քի. եւ առա-
տութիւն հաղորդութեան 'ի նա՝ եւ յամենեսին.
եւ նոցա աղօթք վ՛ս ձեր, քանզի անձկացեալ
են առ ձեզ վ՛ս առաւել շնորհացն այ՝ որ 'ի
ձեզ. * Այլ շնորհք այ 'ի վ՛ր անպատում 14
պարգեւացն նորա.

## ԳԼ. Ժ.

Այլ ես ինքն պօղոս աղաչեմ զձեզ հեզու- 1
թեամբ եւ հանդարտութեամբ քի, որ յանդի-
ման ձեզ՝ իբրեւ տառապեալ մի եմ 'ի միջի
ձերում. բայց 'ի հեռաստ համարձակիմ
առ ձեզ. * Աղաչեմ, զի մի 'ի մօտոյ եւ եթ 2
համարձակիցիմ վստահութ՛. կամ համարի-
ցիմ յանդգնել 'ի վ՛ր ոմանց՝ որ կարծեն ըզ-
մէնջ՝ եթէ ըստ մարմնոյ գնայցեմք. * Զի 3
թէպէտ եւ մարմնով գնամք՝ այլ ոչ եթէ ըստ
մարմնոյ զինուորիմք. * Զի զէն զինուորու- 4
թեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր
այ, առ 'ի քակելոյ զամուրս. զխորհուրդս
‖ Հռով. քակեմք, * եւ զամ բարձրութ՛ հպարտացեալ 5
1. 5. 'ի վ՛ր զգիտութեան այ. ‖ եւ գերեմք զամ միտս
'ի

6 'ի հնազանդութիւն Քի. * Եւ 'ի պատրաստի
ունիմք խնդրել զվրէժ ամենայն անհնա-
զանդութեան՝ յորժամ ձեր եւս հնազանդու-
թիւնք կատարեսցին.
7 *Ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեսջիք. Դ. Օ.
եթէ որ վստահ յանձն իցէ Քի լինել, զայս
խորհեսցի դարձեալ 'ի միտս իւր. թէ որգ
8 նոյն Քի է՝ նոյնպէս եւ մեք. * Զի թէ ա-
ռաւել եւս պարծեցայց վն իշխանութեանս մե-
րոյ՝ զոր ետ մեզ Տր 'ի շինել՝ եւ ոչ 'ի քակել
9 զձեզ, ոչինչ ամաչեցից. * Զի մի թուե-
ցայց իբրեւ ահ ինչ արկանել ձեզ թղթովքս.
10 *Ասիցէք, թուղթքս ծանունք են եւ սաս-
տիկք. բայց տեսիլ մարմնոյ տկար՝ եւ բանն
11 արհամարհեալ. * զայս խորհեսցի այնպի-
սին, զի որպիսիք եմք բանիւք թղթովք 'ի
հեռաւոր, նոյնպիսիք եւ 'ի մօտոյ արդեամբք.
12 *Քանզի ոչ իշխեմք կշռել եւ համարել
զանձինս մեր ումեք, որ զանձինս իւրեանց
ձեզ ընծայեցուցանեն. այլ անձամբ յան-
ձինս՝ զանձինս չափեն, եւ 'ի կշռել անձամբ
13 յանձինս՝ ոչ առնուն 'ի միտ. * Այլ մեք ոչ
եթէ յանչափս ինչ պարծեսցուք. || այլ ըստ || Եփե. 4. 7.
չափոյ կանոնին, զոր բաժանեաց մեզ Աձ
14 չափով՝ հասանել մինչեւ առ ձեզ. * Զի ոչ
եթէ հասու ինչ չիցեմք 'ի ձեզ, եւ ձգեցու-
ցանիցեմք զանձինս. քանզի մինչեւ առ ձեզ
15 հասաք աւետարանաւն Քի. * Ոչ ոչ յան-
չափս ինչ պարծիմք օտար վաստակօք. Բայց
յոյս մի ունիմք զաճելովն հաւատոց ձերոց՝
ապագրէն 'ի ձեզ մեծանալոյ՝ ըստ կանոնին մե-
16 րոյ յառաւելուլ. * 'Ի վեր եւս քան զձեզ ա-
ւե-

Երեմ. ւետարանել՝ ոչ օտար կանոնաւ 'ի պատրաս-
9. 23. տականս ինչ պարծել. * Ով որ պարծի՝ 17
1 Կորն. 'ի Տէր պարծեսցի.
1. 31.
ՐԿ * Ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցա- 18
նէ՝ նա է ընտրեալ. այլ զոր Տէրն ընծայե-
ցուցանէ.

## ԳԼ. ԺԱ.

Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում 1
անզգամութեանս. այլեւ անսայէք իսկ.
* Նախանձեցուցանեմ զձեզ 'ի նախանձ 2
Այ. զի խօսեցայ զձեզ առն միում, իբրեւ
զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քի.
Ծննդ. * Բայց երկնչիմ՝ գուցէ որպէս օձն խա- 3
3. 4. բեաց զեւայ խորամանկութեամբ իւրով՝ ապակա-
նեսցին միտք ձեր 'ի միամտութենէ՝ որ 'ի Քս.
* Ով եթէ որ գալոցն իցէ՝ այլ Յս քարոզե- 4
ցէ՝ զոր մեք ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար
առնուցուք՝ զոր ոչ առէք, կամ աւետարան օ-
տար զոր ոչ ընկալարուք, բարւոք անսայիք
նդ. * Բայց ես այսպէս համարիմ, թէ ոչինչ 5
իւիք պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն.
* Եւ եթէ եւ տգէտ ես իցեմ բանիւ, այլ 6
ոչ եթէ գիտութեամբ. այլ յայտնի յայտնեցաք
զանձինս ամենեւին առ ձեզ. * Իսկ եթէ 7
մեղս ինչ գործեցի՝ զի զանձն խոնարհեցու-
ցի. եւ այն՝ զի դուք բարձրասջիք. զի ձրի զա-
ւետարանն այս աւետարանեցի ձեզ. * Զայլ 8
եկեղեցիս կողոպտեցի առեալ թոշակ 'ի
ձեր սպասաւորութի. * Իսկ յորժամ եկի առ 9
ձեզ. թէպէտ եւ պակասեցայ ինչ, ոչ զոք 'ի
ձէնջ ծանրացուցի, զի զպակասութիւն իմ

լցին

ցին եղբարքն եկեալք 'ի Մակեդոնիացւոց.
և յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զան-
10 ձըն իմ պահեցի՝ և պահեցից. * Քանզի
գոյ յիս ճշմարտութիւն քի.
Զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն 'ի ԻԳ
11 կողմանս Աքայեցւոց. * Ընդէ՞ր. իբրու թէ
12 ոչ սիրիցեմ զձեզ. զայն ած գիտէ. * Զոր
առնեմն՝ և արարից. զի հատից զպատճառս
այնոցիկ՝ որ զպատճառն կամիցին. զի որով
պարծիցին, և նոքա իբրև զմեզ գտանիցին.
13 * Զի այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք
նենգաւորք, կերպարանեալ 'ի կերպարանս
14 առաքելոց քի. * Եւ չեն ինչ զարմանք.
քանզի և ինքն սատանայ կերպարանի 'ի
15 հրեշտակ լուսոյ. * Եւ ոչինչ է մեծ՝ թէ և
պաշտօնեայք նր կերպարանին իբրև պաշ-
տօնեայք արդարութե. որոց կատարածն եղի-
16 ցի ըստ գործոց իւրեանց. * Դարձեալ ասեմ.
մի ոք համարեսցի զիս անզգամ. ապա թէ
ոչ՝ գոնէ իբրև զանզգամ ընկալարուք զիս,
17 զի և ես փոքր մի ինչ պարծեցայց. * Եւ զոր
խօսիմն՝ ոչ եթէ ըստ տն խօսիմ, այլ իբրև
անզգամութբ ըստ կարգի այդց պարծանաց.
18 * Եւ քանզի բազումք պարծին ըստ մարմնոյ՝
19 և ես պարծեցայց. * Մտադիւր իմն անսայիք
20 անմտացն ձերովք իմաստութբ. * Քանզի
անսայք եթէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծա-
ռայեցուցանէ, եթէ ոք առնէ զձեր, եթէ
ոք առնու ինչ, եթէ ոք հպարտանայ, եթէ
21 ոք զձեզ յանդիման հարկանէ. * Ըստ ա-
նարգանացս ասեմ, իբրև թէ մեք տկարա-
ցաք արդեօք. յոր ինչ ոք համարձակիցի,
անզգ-

անզգամութիւն ասեմ, համարձակիմ և ես։
*Եբրայեցի՞ք իցեն, և ես. Իսրայելացի՞ք իցեն, 22
և ես. զաւակ Աբրահամու՞ իցեն, և ես.
*պաշտօնեա՞յք Քրիստոսի իցեն, յանդգնագոյնս 23
ասացից՝ թէ առաւել ես ես, եթէ վաստա-
կօք՝ առաւել, եթէ գանիւք՝ ես առաւել.
եթէ բանտիւ՝ աւելի քան զնա, եթէ մա-
հուամբք՝ բազում անգամ։ *Ի հրէից հինգ 24
‖ Օրէն. զիցս՝ ‖ քառասուն միով պակաս առի. *‖ Ե- 25
25. 3. րիցս ձաղկեցայ. ‖ միանգամ քարկոծ եղէ.
‖ Գործ. 16. 22. ‖ Երիցս նաւաբեկ եղէ. զտիւ և զգիշեր յան-
‖ 14. 18. գունդս տառապեցայ. *Ի ճանապարհս բա- 26
‖ 27. 4. զում անգամ, վիշտս 'ի գետոց, վիշտս յա-
ւազակաց, վիշտս յազգէ, վիշտս 'ի հեթա-
նոսաց, վիշտս 'ի քաղաքի, վիշտս յանապա-
տի, վիշտս 'ի ծովու, վիշտս 'ի սուտ եղբարց.
*'Ի ջանս՝ և 'ի վաստակս. 'ի տքնութիւնս բա- 27
զում անգամ, 'ի քաղց և 'ի ծարաւ. 'ի պահս
բազում անգամ. 'ի ցուրտ և 'ի մերկութեան։
*Խուռն զայլ նեղութիւնն. և զի հանապազ 28
խուժանն 'ի վերայ իմ կուտէր՝ և հոգք ա-
մենայն եկեղեցեացն։ *Ո՞ հիւանդանայ՝ և 29
ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթագղի՝ և ոչ ես
տապանամ։

Ի. Օ.

*Եթէ պարծել իմն պա՞րտ իցէ, զտկարութեան 30
պարծեցայց։ *Ա՜ծ և հայր տն մերոյ յի 31
քի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, զի
‖ Գործ. 9. 24. ոչ ստեմ։ *‖ Ի Դամասկոս ազգապետն ա- 32
րետայ արքայի պահէր զքաղաքն դամաս-
կացւոց ունել զիս. *և ընդ պատուհանն 33
վանդակաւ կախեցայ ի պարիսպն, և փա-
խեայ 'ի ձեռաց նորա։

ԳԼ.

# ԳԼ. ԺԳ.

1 Արդ՝ պարծել ինձ պարտ իցէ. այլ օգնէ
ինձ ոչ։ Բայց եկից ՚ի տեսիլս և ՚ի յայտ-
2 նութիւնս Տն։ *Գիտեմ այր մի ՚ի Քս յառաջ Գործ. Թ. 3.
քան զչորեքտասան ամ, եթէ մարմնով՝ ոչ
գիտեմ, և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ,
Ած գիտէ. յափշտակեալ զայնպիսին մինչև
3 յերրորդ երկինս։ *Եւ գիտեմ զայնպիսի
այր. եթէ մարմնով և եթէ առանց մարմ-
4 նոյ՝ ոչ գիտեմ. Ած գիտէ, *զի յափշտակե-
ցաւ ՚ի դրախտն. և լուաւ բանս անճառս,
5 զոր ոչ է պարտ մարդոյ խօսել։ *Վասն այն-
պիսւոյն պարծեցայց. այլ վս անձին իմոյ ոչ
6 պարծեցայց, բայց եթէ ՚ի տկարութիւնս։ *Զի
եթէ և կամիցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ.
քանզի զճշմարիտն ասեմ. այլ խնայեմ, գու-
ցէ ոք համարիցի ինձ յիս աւելի՝ քան զոր
7 տեսանիցէ յիս՝ կմ լուիցէ յինէն։ *Եւ զի մի
առաւելութ յայտնութեանցն հպարտացայց, տու-
աւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատանայի՝
8 կափել զիս. զի մի հպարտացայց։ *Եւ վս
այնորիկ երիցս անգամ աղաչեցի զՏր՝ զի ՚ի
9 բաց արասցէ յինէն. *Եւ ասէ ցիս. շատ են
քեզ շնորհք իմ, զի զօրութի իմ ՚ի տկարութե
կատարի։ և արդ՝ լաւ ևս լիցի ինձ պարծել ՚ի
տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութի Քի։
10 *Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, Գ. Գ.
ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալա-
ծանս, և ՚ի նեղութիւնս վս Քի. զի յորժամ
11 տկարանամ, յայնժամ զօրանամ։ *Եղէ
անզգամ, քանզի դուք ստիպեցէք զիս. զի
ինձ

ինձ պարտ էր 'ի ձէնջ վկայութիւն առնուլ՝ թէ
ոչինչ պակաս գտայ քան զլաւ առաքեալսն.
զի թէպէտ և ես ոչինչ եմ. *սակայն նշանք 12
առաքելոյ գործեցան 'ի ձեզ՝ ամ̃ համբերու-
թբ̃, նշանօք և արուեստիւք՝ և զօրութբ̃ք։
*Ըստ որում զի՞նչ իցէ, որո՛վ պակաս գտայք 13
քան զայլ եկեղեցիս. բայց եթէ այնու՝ զի
ես զձեզ ոչ ծանրացուցի. շնորհեցէ՛ք ինձ
զվնասդ զայդ։ *Ահաւասիկ այս երիցս ան- 14
գամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ. և
ձեզ բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ խնդրեմ ինչ
զձեր՝ այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք
հարց գանձել՝ այլ հարք որդւոց։ *Բայց ես 15
մտադիւրութբ̃ ծախեցից, և ծախեցայց վ̃ն
անձանց ձերոց. զի թէպէտ և յառաւել սի-
րեմ զձեզ սակաւ սիրեցայ։ *Այլ գրեթէ 16
ես ոչինչ ծանրացայ ձեզ. այլ քանզի խորա-
գէտ էի, խելօք կալայ զձեզ։ *Միթէ ո- 17
րովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագահե-
ցի 'ի ձէնջ։ *Աղաչեցի զտիտոս՝ և առա- 18
քեցի ընդ նմա զեղբայրն, միթէ ագահեա՞ց
ինչ զձեր տիտոս։ ո՞չ նովին ոգւով գնացաք.
ո՞չ նովին շաւղօք շրջեցաք։

Գ. Օ.

*Դարձեալ համարիցիք՝ եթէ յաղագս ան- 19
ձեան̃ ինչ ձեզ աղերսիցեմք։ առաջի այ̃ 'ի
քս̃ խօսիմք, զի ամենայն ինչ սիրելիք վասն
ձերոյ շինուե̃ն է։ *Այլ երկնչիմ, գուցէ ե- 20
կեալ՝ ոչ որպ̃ ես կամիմն գտանիցեմ զձեզ. և
ես գտանիցիմ ձեզ՝ որպ̃ և դուք ոչ կամիցիք։
գուցէ դարձեալ՝ հեռ, նախանձ, սրտմտութի̃ք
գրգռութի̃ք, չարախօսութի̃ք, քսութի̃ք, հպար-
տութի̃ք անկարգապահութի̃ք խռովութի̃ք։ *Գու- 21

ցէ

ցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ
առնիցէ զիս Ած իմ առ ձեզ. և սուգ առ-
նուցում ի վ͞ր բազմաց յառաջագոյն մեղու-
ցելոց՝ և ոչ ապաշխարելոց՝ ի վ͞ր պղծութեն և
պոռնկութեն և գիջութեն զոր գործեցին ։

## ԳԼ. ԺԳ.

1 Ա՛յս երիցս անգամ գամ առ ձեզ. ‖ Զի ի ‖2. Օրէ.
բերանոյ երկուց և երից վկայից հաստա- 19. 15.
2 տեսցի ամ բան. * Յառաջ ասացի և դար- Մատ.
ձեալ կանխաւ ասեմ յանդիմանն երկիցս ան- 18. 16.
գամ. և այժմ ի բացուստ գրեմ յառաջա- Յովհ.
գոյն յանցուցելոցն՝ և այլոցն ամենեցուն. 8. 17.
3 զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից. * Ե- Եբր. 10. 28.
թէ զփո՞րձ ինչ խնդրէք զՔի, որ խօսի ի̃ն
ձեզ խօսի. որ հզօրագոյն է ի ձեզ, և ոչ
4 տկարացեալ. * Զի թէպէտ և խաչեցաւ
ի մարմնի տկարութեան, այլ կենդանի է զօրու-
թեն ած. և մեք թէպէտ և տկարանայցեմք
ընդ նմա, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօ-
րութեն ած ։
5 * Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայք ի նոյն Գ. Կ
հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ոչ գի-
տէք զանձինս՝ զի Քս Յս ի ձեզ է. բայց եթէ
6 անպիտան ինչ իցէք. * Ա՛յլ ակն ունիմ թէ
7 գիտիցէք. զի մեք ոչ եմք անպիտանք. * Ա՛յլ
խնդրեմք յԱյ՝ զի մի ինչ արասցէ ձեզ չար.
ոչ զի մեք ընտիրք երեւեսցուք, այլ զի դուք
զբարիս գործիցէք՝ և մեք անպիտանք ի-
8 ցեմք. * Զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ
ճշմարտութեան. այլ վերակացու եմք ճշմար-
9 տութեան. * Ուրախ եմք՝ յորժամ մեք տկարա-
նայ-

նայցեմք՝ և դուք զօրաւոր իցէք. զայդ իսկ
և աղօթս առնեմք զձեր հաստատութիւն.
* Վասն այնորիկ զայս ՚ի հեռաստ գրեմ. 10
զի մի՛ յորժամ եկից՝ սաստկութ՟ վարեցայց՝
ըստ իշխանութեանս, զոր Տէր ետ ինձ ՚ի շինել՝
և ո՛չ ՚ի քակել։ * Այսուհետև եղբարք, 11
ո՛ղջ լերուք՝ հաստատուն կացէք՝ մխիթարե-
ցարո՛ւք՝ միաբան լերուք՝ խաղաղութ՟ արա-
րէ՛ք. և Այ՟ խաղաղութ՟ և սիրոյ՝ եղիցի ընդ
ձեզ. * Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր 12
սրբութ՟. ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն.
* Շնորհք Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի, և սէրն Ա՟յ, 13
և հաղորդութ՟ հոգւոյն ՚՟ոյ ընդ ձեզ ամենե-
սին, ամէն.

Առ կորնթացիս երկրորդ՝ գրեցաւ ՚ի փիլիպպեայ, ՚ի
ձեռն տիտոսի և ղուկայ.

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍՆ·

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ Դ. Դ.
ոչ 'ի մարդկանէ եւ ոչ 'ի ձեռն
մարդոյ, այլ 'ի ձեռն յի քի եւ
2 այ հօր՝ որ յարոյց զնա 'ի մեռելոց. * եւ որ
ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացդ
3 գաղատացւոց: * Շնորհք ընդ ձեզ եւ խա-
ղաղութիւն յայ 'ի հօրէ եւ 'ի տեառնէ
4 մերմէ յէ քէ. * որ ետ զանձն իւր վս մե-
ղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէս
5 աստի չարէ՝ ըստ կամացն այ եւ հօր մերոյ. * ո-
րում փառք յաւիտեանս յաւիտենից՝ ամէն:
6 * Զարմանամ՝ զի այդպէս վաղվաղակի փո-
փոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ 'ի շնորհ-
7 սն քի՝ յայլ աւետարան. * որ ոչ գոյ այլ
բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանի-
ցեն զձեզ, եւ կամիցին շրջել զաւետարանն
8 քի. * Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկ-
նից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր ա-
9 ւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի. * Որ-
պէս յառաջագոյնն ասացաք՝ եւ արդ դար-
ձեալ

ձեալ ասեմ, եթէ որ աւետարանեսցէ ձեզ
աւելի քան զոր առէք, նզովեալ լիցի։ *Արդ՝ 10
մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ այ. կամ
խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ
տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա քսի
ծառայ ոչ էի։

Գ. Օ. *Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, 11
Ա. Կոր. որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մար-
15. 1. դոյ. *Քանզի և ոչ ես ՚ի մարդոյ առի, և 12
Եփես. ոչ ուսայ յումեքէ. այլ ՚ի յայտնութենէ յսի
3. 3. քսի։ *Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գը- 13
Գործ. նացսն, որ երբեմն ՚ի հրէութեան անդ. զի ան-
9. 2. չափ հալածէի զեկեղեցին այ, և աւեր հար-
կանէի զնա։ *Եւ յառաջադէմ էի ՚ի հրէու- 14
թեան՝ քան զբազում հասակակիցս իմ, որ
յազգին իմում էին. առաւել նախանձա-
խնդիր էի իմոց հայրենի աւանդութեանցն։
Հռովմ. *Իսկ յորժամ հաճեցաւ ած՝ որոշեաց զիս 15
1. 1. յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց ՚ի ձեռն շը-
նորհաց իւրոց, *յայտնել զորդին իւր յիս. 16
զի աւետարանեցից զնա ՚ի հեթանոսս. ան-
դէն վաղվաղակի ոչինչ զգայացուցի մարմնոյ
և արեան. *և ոչ ելի յէմ, առ որ յառա- 17
ջագոյն քան զիս առաքեալքն էին. այլ գնա-
ցայ յԱրաբիա, և դարձեալ դարձայ ՚ի Դա-
մասկոս։ *Ապա յետ երից ամաց ելի յէմ 18
տեսանել զՊետրոս. և եղէ առ նմա աւուրս
հնգետասան։ *Զայլ ոք յառաքելոցն ան- 19
տի ոչ տեսի, բայց միայն զՅակովբոս զեղ-
բայրն տն։ *Իսկ զոր գրեմս առ ձեզ, ա- 20
հաւասիկ առաջի այ՝ զի ոչ ստեմ։ *Ապա 21
եկի ՚ի կողմանս Ասորւոց և Կիլիկեցւոց։ *Եւ 22
յան-

յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ որ 'ի
23 թլփատութե՛ն անուն էին 'ի քս . * || Բայց զի || Գործ.
լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն զմեզ 9. 21.
յայնժամ, այժմ աւետարանէ զհաւատսն՝
24 զոր երբեմն խախտէր . * և փառաւոր առ-
նէին ինև զա՛ծ .

## ԳԼ. Բ.

1 Ապա յետ ամաց չորեքտասանից միւսան- Ե Կ
գամ ելի յե՛մ ը՟դ բառնաբայ . առեալ ը՟դ
2 իս և զտիտոս . * Ելի ը՟ս յայտնութեան .
և զգացուցի նոցա զաւետարանն՝ զոր քարո-
զեմ 'ի հեթանոսս , առանձինն այնոցիկ՝ որ
կարծեցեալքն էին , գուցէ ընդ ունայն ինչ ըն-
3 թացեալ իցեմ՝ կամ ընթանայցեմ . * Այլ և
ոչ տիտոս՝ որ ը՟դ իս 'ի հեթանոսաց էր , բռ-
4 նադատեցաւ թլփատել . * այլ վ՟ն սպրդո-
ղաց սուտ եղբարցն , որք սպրդեցին տեսա-
նել զխտել զազատութի՛ն մեր՝ զոր ունիմք 'ի
5 քս յս . զի զմեզ ծառայեցուցեն . * Որոց և
ոչ առժամանակ մի անսացաք հնազանդու-
թեան . զի ճշմարտութի՛ աւետարանին հաս-
6 տատեսցի առ ձեզ . * Բայց զկարծեցելոցն ե-
թէ իցեն ինչ , որպիսի որ երբեմն էին , չէ
ինչ ինձ փոյթ . քանզի ա՛ծ || ակն մարդկան || Բ. Օրի.
ոչ առնու . զի ինձ կարծեցեալքն այնպիսի ինչ 10. 17.
7 ոչ զգացուցին . * Այլ փոխարէն հակառակն՝ Բ Մնաց.
իբրև տեսին թէ հաւատացեալ է ինձ աւե- 19. 7.
տարանն անթլփատութե՛ . որպէս պետրոսի թլ- Յօբ 34. 19.
8 փատութե՛ . * զի որ յաջողեաց պետրոսի յա- Իմաստ. 6. 8.
ռաքելութի՛ թլփատութեան , յաջողեաց և ինձ 'ի Գործ. 10. 34.
9 հեթանոսս . * իբրև գիտացին զշնորհսն որ Կող. 3. 25.

տուեալ էին ինձ, Յակովբոս՝ եւ Կեփաս՝ եւ
Յովհաննէս, որ կարծեալքն սիւնքն էին,
ձեռն ետուն հաղորդութեան ինձ եւ Բառնաբայ.
զի մեք ՚ի հեթանոսս, եւ նոքա ՚ի թլփատու-
թիւն. * բայց միայն զի զաղքատսն յիշես- 10
ցուք. զոր եւ ես փութացայ զնոյն առնել։
Ե Գ * Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք, ընդ- 11
դէմ դարձայ նմա. քանզի զոգ իբրեւ ստգտա-
նեալ իսկ էր։ * Քանզի մինչեւ եկեալ էին 12
ոմանք առ ՚ի Յակովբայ, ընդ հեթանոսս ու-
տէր միաւորիւր. իսկ իբրեւ եկին, զատանէր եւ
որոշէր զանձն, երկուցեալ յայնցանէ՝ որ ՚ի
թլփատութենէ անտի էին։ * Նոյն կեղծաւորե- 13
ցան ընդ նմա եւ այլ հրեայքն. մինչեւ Բառ-
նաբաս անգամ խոնարհեցաւ ՚ի նոցա կեղ-
ծաւորութիւն։ * Այլ իբրեւ տեսի թէ ոչ ու- 14
ղիղ գնան ՚ի ճշմարտութիւն աւետարանին,
ասեմ ցԿեփաս առաջի ամենեցուն, եթէ դու
որ հրեայդ ես՝ հեթանոսաբար՝ եւ ոչ հրեա-
բար կեաս, զիարդ ստիպես հեթանոսաց լի-
նել հրէաբար։ * Զի մեք բուն հրեայք եմք, 15
եւ ոչ ՚ի հեթանոսաց մեղաւորք։ * Զայս 16
գիտեմք՝ եթէ ոչ արդարանայ մարդ ՚ի գոր-
ծոց օրինաց, եթէ ոչ՝ ՚ի հաւատոյն յսի քսի.
եւ մեք ՚ի քս յս հաւատացաք, զի արդարա-
ցուք ՚ի հաւատոցն քսի, եւ ոչ ՚ի գործոց օրի-
‖ Հռով. նաց. ‖ զի ՚ի գործոց օրինաց ոչ արդարասցի
3. 20. ամենայն մարմին։ * Իսկ եթէ մինչ խնդրե- 17
ցեմք արդարանալ ՚ի քս, եւ գտանիցեմք մե-
ղաւորք. ապա ուրեմն՝ քս մեղաց պաշտօնեայ
եղեւ. քաւ լիցի։ * Զի եթէ զոր քակեցին՝ 18
զնոյն միւսանգամ շինիցեմ. ապա յանցաւոր
զանձն

19 զանձն իմ ես յինէն երևեցուցանեմ։ * Զի
ես օրինօք, օրինացն մեռայ, զի Այ կեցից,
20 և ը՟ն Քի ՚ի խաչ ելից։ * Այլ կենդանի եմ
այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քս։
Եւ զոր այժմս կեամ մարմնով, հաւատովք՝ Ի. Զ.
որդւոյն Այ կեամ. ‖ որ սիրեացն զիս, և մատ ‖ Յ-ե.
21 նեաց զանձն վս իմ։ * Այլ ես ոչ անարգեմ 5. 16
զշնորհսն Այ։ զի եթէ յօրինաց անտի էր ար
դարութի, ապա Քս զուր մեռաւ։

## ԳԼ. Գ.

1 Ո՜ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ արար Աւետա-
զձեզ (ոչ հնազանդել ճշմարտութեանն). ո- րա՟ն. Ի՟ք.
րոց զբեթէ առաջի աչաց Քս յս գրեցաւ ՚ի —ա—.
2 խաչ ելեալ։ * Զայս միայն կամիմ ուսանել
՚ի ձէնջ. ՚ի գործոց օրինաց զհոգին ընկա
3 լարուք՝ եթէ ՚ի լսոյ հաւատոյ։ * Այդչափ
անմիտ էք. սկսեալ հոգւով և արդ մարմ
4 նով վախճանիք։ * Այսչափ անցք անցին
5 ը՟ն ձեզ զուր՝ եթէ իցէ զուր։ * Իսկ արդ՝ որ
բաշխեաց ՚ի ձեզ զհոգին՝ և յաջողեաց ՚ի
ձեզ զզօրութիւն. ՚ի գործոց օրինաց է՞ եթէ
6 ՚ի լսոյ հաւատոյ։ * Որպէս ‖ աբրահամ հաւա ‖ Ծնն.
տաց յԱծ՝ և համարեցաւ նմա յարդարութի։ 15. 6.
7 * Գիտիցէք արդեօք. զի որք ՚ի հաւատոյ Հռով. 4. 3.
անտի են, նոքա են որդիք աբրահամու։ Յակ.
8 * Յառաջագոյն գիտէր գիր, եթէ ՚ի հա 2. 23.
ւատոյ անտի արդարացուցանէ Այ զհե
թանոսս, յառաջագոյն աւետարանեաց աբրա
համու. ‖ Թէ ՚ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք ‖ Ծնն.
9 * Այսուհետև որք ՚ի հաւատոյ անտի են 3.
օրհնին ընդ հաւատացելոյն աբրահամու։

* Զի

* Ո՛ր որ միանգամ 'ի գործոց օրինացն են, 10
‖ Բ Օրին. ընդ անիծիւք են. քանզի գրեալ է. ‖ Թէ ա-
27. 26. նիծեալ ամ մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն
գրեալսն 'ի գիրս օրինաց՝ առնել զամենայն։
* Ո՛ր օրինօքն ոչ ոք արդարանայ առաջի այ, 11
‖ Ամբ. այն յայտ իսկ է. ‖ զի արդարն՝ ասէ, 'ի հա-
2. 4. ւատոց կեցցէ։
ՎԻՐՋ * Բայց օրէնքն չեն 'ի հաւատոց, այլ ‖ որ ա- 12
‖ Ղեւտ. 18. 5. րասցէ զայն՝ կեցցէ 'ի նոսին։ * Քրիստոս գնեաց 13
Հռովմ. զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր
10. 5. անէծք. զի գրեալ է, Թէ ‖ անիծեալ ամ,
‖ Բ Օրին. 21. 23. որ կախեալ կայցէ զփայտէ. * զի 'ի հեթա- 14
նոսս օրհնութիւն աբրահամու եղիցի 'ի քս յս.
զի մեք զաւետիս հոգւոյն առցուք հա-
ւատովք։ * Ըստ մարդկութեն ասեմ, եղ- 15
‖ Եբր. բարք. ‖ ապաքէն զմարդկան հաստատեալ
9. 17. կտակ ոչոք կարէ անարգել. և ոչ այլ հրա-
մանս 'ի վր այնր տալ։ * Իսկ աբրահամու 16
խոստացան աւետիքն, և զաւակի նորա. և
ոչ ասէ՝ զաւակաց իբրև զբազմաց, այլ իբ-
րև զմիոյ, Թէ՝ և զաւակի քում, որ է քս։
* Բայց զայս ասեմ, զկտակն յառաջագոյն 17
հաստատեալ յայ 'ի քս. օրէնքն որ յետ չո-
րեքհարիւր և երեսուն ամի եղան, ոչ կա-
րեն խափանել առ 'ի խափանելոյ զաւետիսն։
* Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւն. 18
ապա ոչ ևս յաւետեացն։ բայց աբրահամու
աւետեօք շնորհեաց այ։ * Իսկ զի՞նչ իցեն 19
օրէնք։ յանցուածոց վասն յաւելան, մինչև
եկեսցէ զաւակն, որում խոստացեալն էր՝
կարգեալ հրեշտակօք 'ի ձեռն միջնորդի։
* Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց այ 20

մի

21 մի է։ *Նոյն արդ՝ օրէնքն հակառակ ինչ ի-
ցեն աւետեացն այ. քաւ լիցի։ զի եթէ տը-
ւեալ էին օրէնքն՝ որ կարօղ էին կենդանի
առնել, ապա հաստատ յօրինաց անտի էր
22 արդարութիւն։ *Այլ փակեաց գիրք զա- Հռով. 3. 9.
մենեսին ընդ մեղօք, զի աւետիքն ՚ի հաւա-
տոց անտի յի՛ի քի՛ի տայցին հաւատացելոց։
23 *Մինչև հաւատքն եկեալ էին՝ ընդ օրինօքն
փակեալ պահէաք ՚ի հանդերձեալ հաւատսն,
24 որ յայտնելոց էին ՚ի մեզ։ *Ապա օրէնքն
դաստիարակ եղեն մեզ ՚ի քս յս, զի ՚ի հա-
25 ւատոցն արդարասցուք։ *Այլ իբրև եկին
հաւատքն, ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք։
26 *Քանզի ամենեքին որդիք այ էք հաւա-
27 տովք ՚ի յս քս։ *Որք միանգամ ՚ի քս մկըր- Հռով. 6. 3.
տեցարուք, զքս զգեցեալ էք։ չիք խտիր,
28 *ոչ հրէի՝ և ոչ հեթանոսի, ոչ ծառայի՝ և
ոչ ազատի։ ոչ արուի՝ և ոչ իգի։ զի ամենե-
29 քեան դուք մի էք ՚ի քս յս։ *Ապա եթէ
դուք քսի էք, ուրեմն աբրահամու զաւակ
էք՝ ըստ աւետեացն ժառանգք։

## ԳԼ. Դ.

1 Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն ԶԿ
տղայ է՝ չէ ինչ առաւել քան զծա-
ռայն. թէպէտ և տէր իցէ ամենեցուն.
2 *այլ ընդ հազարապետօք է՝ և ընդ դաստա-
պետօք. մինչև ՚ի ժամանակակէտ հօրն։
3 *Նոյնպէս և մեք՝ մինչ տղայքն էաք՝ ընդ
տարերբք աշխարհիս ՚ի ծառայութեան կայաք։
4 *Այլ իբրև եկն լրումն ժամանակին, ա-
ռաքեաց այ զորդին իւր՝ որ եղև ՚ի կնոջէ,
և

և եղեալ ընդ օրինօք. *զի զնոսա որ ընդ օրի- 5
‖ Հռով. նօքն էին, գնեսցէ. ‖ զի մեք զորդեգրու-
8. 15. թիւն ընկալցուք. *Իսկ զի էք դուք որդիք, ա- 6
ռաքեաց Աստուած զՀոգի որդւոյն իւրոյ 'ի սիրտս
մեր՝ որ աղաղակէ աբբա՝ հայր. *Ապա- 7
հետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի՝ և
ժառանգ Այ. *Այլ յայնժամ մինչ ոչն գի- 8
տէիք զԱծ՝ ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին
'ի բնէ աստուածք. *Այլ այժմիկ ծանեայք 9
զԱծ, մանաւանդ թէ ծանուցայք իսկ յԱյ,
զիա՞րդ դառնայք միւսանգամ անդրէն 'ի տա-
րերսն՝ 'ի տկարս և յաղքատս, որոց միւսան-
գամ զանձինս ծառայեցուցանել կամիք.
*Զաւուրս խորշէք՝ և զամիսս՝ և զժամա- 10
նակս՝ և զտարիս. *Երկնչիմ 'ի ձէնջ, գու- 11
ցէ թէ 'ի զուր ինչ վաստակեցի 'ի ձեզ. *Ե- 12
ղերուք իբրև զիս, քանզի և ես իբրև զձեզ
էի. Եղբարք՝ աղաչեմ զձեզ, չէք ինչ ձեր
մեղուցեալ առ իս. *Գիտէք դուք՝ զի տը- 13
կարութեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զա-
ռաջինն. և զփորձանսն որ 'ի մարմնի իմում
էին, *ոչ անարգեցէք՝ և ոչ անգոսնեցէք. 14
այլ իբրև զհրեշտակ Այ ընկալարուք զիս՝ իբ-
րև զՔս Յս. *Ուր արդ ո՞ւր է երանութիւնն 15
ձեր. վկայեմ ձեզ՝ եթէ հնար ինչ էր՝ զաչս
ձեր հանէիք և տայիք ինձ. *Արդ՝ զի՞ թըշ- 16
նամի իմն եղէ ձեզ, զի զճշմարիտն խօսեցայ.
*Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ 'ի բա- 17
րի. և արգելուլ կամին զձեզ՝ զի նոցա նա-
խանձաւորք լինիցիք. *Բայց լաւ է նա- 18
խանձաւոր լինել 'ի բարիս յամենայն ժամ, և ոչ
միայն յորժամ 'ի ձերում միջի իցեմ.

*Որ-

19 * Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին Օ. Գ.
20 երկնեմ, մինչև նկարեսցի քս 'ի ձեզ։ * Կա-
մէի այժմ գալ առ ձեզ՝ և փոխել զբարբառ
21 իմ. զի տարակուսեալ եմ ես վս ձեր։ * Ա-
սէք ինձ իմն՝ որ ընդ օրինօքն կամիք լինել,
22 չիցէ՞ ընթերցեալ ձեր զօրէնս։ * Զի գրեալ
է՝ թէ աբրահամու երկու որդիք էին, ‖ մի ‖ Ծնն. 16. 15.
23 յաղախնոյ անտի, ‖ և մի յազատէն։ * Այլ ‖ Ծնն. 21. 2.
որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր,
24 և որ յազատէն՝ ըստ աւետեաց. * որ է ա-
ռակ օրինակի։ Զի այս ինքն են երկու կը-
տակարանք, մի 'ի լեռնէ սինեայ 'ի ծառայ-
25 ութիւն ծնեալ՝ որ է հագար։ * Քանզի հա-
գարն՝ լեառն սինայ է յարաբիա, հաւասար
է այժմ երուսաղէմի. զի ծառայէ որդւովք
26 իւրովք հանդերձ։ * Այլ վերինն երուսա-
ղէմ ազատ է՝ որ է մայր մեր ամենեցուն։
27 * Զի գրեալ է. ‖ ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ‖ Ես. 54. 1.
ծնանէիր, գոչեա և աղաղակեա՝ որ ոչ
երկնէիր. զի բազում են որդիք ամլոյն ա-
28 ռաւել քան զարամբւոյն։ * ‖ Այլ մեք եղ- ‖ Հռով. 9. 8.
բարք՝ ըստ իսահակայ աւետեացն որդիք եմք։
29 * Այլ որպէս յայնժամ, որ ըստ մարմնոյն ծը-
նեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն,
30 նոյնպէս և այժմ։ * Այլ զինչ ասէ գիր.
‖ 'ի բաց հան զաղախինդ և զորդի դորա. ‖ Ծնն. 21. 10.
զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյն՝ ընդ
31 որդւոյն ազատի։ * Վասն որոյ եղբարք՝
չեմք որդիք աղախնոյն այլ ազատին. ազա-
տութեամբն, որով քս զմեզ ազատեաց։

Գլ.

## ԳԼ. Ե.

Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի՛ միւսան- 1
գամ ընդ լծով ծառայութեան մտանէք:
Օ. Օ. * Ահաւասիկ ես Պօղոս ասեմ ձեզ. ‖ զի ե- 2
‖ Գործ. թէ թլփատիք, Քս ինչ ձեզ ոչ օգնէ: * Վկ- 3
15. 1. այեմ ամ մարդոյ` որ թլփատիցի, թէ պար-
տական է զամ օրէնսն կատարել: * Խափա- 4
նեալ էք 'ի Քէ` որ օրինօքն արդարանայք.
եւ անկեալ էք 'ի շնորհաց անտի: * Զի մեք 5
հոգւոյն` 'ի հաւատոց յուսոյն արդարութեան
ակն ունիմք: * Զի 'ի Քս Յս ոչ թլփատութիւն 6
ինչ կարող է` եւ ոչ անթլփատութիւն. այլ հա-
ւատք սիրով յաջողեալք: * Բարւոք ընթա- 7
նայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեան չհա-
նել: * Զի այն հրապոյրք` ոչ յայնմանէ 8
Ա. Կորն. են` որ կոչեացն զձեզ: * Փոքր մի խմոր զա- 9
5. 6. մենայն զանգուածն խմորէ: * Այլ ես յու- 10
սացեալ եմ 'ի ձեզ տերամբ` թէ ոչ այլազգ
ինչ խորհիցիք: եւ որ խռովեցուցանէ զձեզ`
կրեսցէ զդատաստան` ո՛ ո եւ իցէ: * Այլ ես 11
եղբարք` եթէ թլփատութիւն քարոզէի` ընդէ՞ր
տակաւին հալածիմ: ապա ուրեմն խափա-
նեալ իցէ գայթագղութիւն խաչին: * Երա- 12
նի՞ թէ մասահատ իսկ լինէին` որ զձեզն
խռովեցուցանեն: * Զի դուք յազատութիւն 13
կոչեցեալ էք` եղբարք. միայն զի ազատու-
թիւն ձեր ոչ լինիցի 'ի պատճառս մարմնոյ.
‖ Ղեւ. այլ սիրով ծառայեսջիք միմեանց: * Զի ամ 14
19. 18. օրէնք 'ի մի բան կատարին. ‖ 'ի սիրեսցես
Մատ. զընկեր քո իբրեւ զանձն քո: * Ապա եթէ 15
22. 39. զմիմեանս խածատիցէք` եւ ուտիցէք. զգոյշ
Հռով.
13. 8.

լե-

լերուք՝ զուցէ ՚ի միմեանց սատակիցիք ։ Ե․ Դ․
16 * Բայց զայս ասեմ . ‖ Հոգւով գնասջիք , և
17 զցանկութիւն մարմնոյ մի կատարէք ։ * Զի ‖ 1․ Պետ․ 2․ 11․
մարմին ցանկայ հակառակ հոգւոյ , և հոգի
հակառակ մարմնոյ . և զի սոքա միմեանց
հակառակ են . մի զոր կամիցիքն՝ զայն առ-
18 նիցէք ։ * Իսկ եթէ հոգւով վարիք , ապա
19 չէք ընդ օրինօք ։ * ‖ Զի յայտնի են գործք ‖ Հռով․ 1․ 29․
մարմնոյ . այսինքն են շնութիւն պոռնկութիւն ,
20 պղծութիւն գիջութիւն , * կռապաշտութիւն կա-
խարդութիւն , թշնամութիւն հեռ նախանձ , բար-
կութիւն , հակառակութիւնք երկպառակութիւնք
21 հերձուածք , * չարակնութիւնք սպանութիւնք ,
արբեցութիւնք անառակութիւնք , և որ ինչ սո-
ցին նման են ։ զոր յառաջագոյն իսկ ասեմ
ձեզ , որպէս կանխաւն ասէի , ‖ թէ որ զայս- ‖ 1․ Կոր․ 6․ 10․
պիսի ինչ գործեն՝ զարքայութիւն այ ոչ ժառան-
22 գեն ։ * Իսկ պտուղ հոգւոյն այս է . սէր
խնդութիւն խաղաղութիւն երկայնմտութիւն ,
23 * քաղցրութիւն բարութիւն , հաւատք , հեզութիւն
ժուժկալութիւն . զայսպիսեաց աստի օրէնքն
24 չեն հակառակ ։ * Իսկ որ քրիստոսեանքն են , ըզ-
մարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօքն և
25 ցանկութեամբք հանդերձ ։ * Եթէ կեամք հոգ-
26 ւով՝ ընդ հոգւոյն և միաբանեսցուք ։ * Եւ
մի լինիցուք սնապարծք՝ միմեանց ձայն տալոյ ,
և ՚ի միմեանս նախանձելոյ ։

## ԳԼ․ Զ․

1 Եղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի որ ՚ի Ե․ Զ․
ձէնջ յինչ և իցէ յանցանս , դուք որ հո-
գևորքդ էք՝ հաստատեսցէք զայնպիսին հոգ-
ւով

ւով հեզութեան. զգոյշ լինիցիք անձանց՝ զի մի
եւ դուք փորձիցիք: * Միմեանց բեռն բար- 2
ձէք, եւ այնպէս կատարեցէք զօրէնսն քսի:
* Զի եթէ համարիցի ոք լինել ինչ՝ եւ չիցէ, 3
զանձն իւր խաբէ: * Զգործ իւր կշռեսցէ 4
իւրաքանչիւրոք, եւ ապա անձին իւրում
միայն պարծանս տացէ, եւ մի առ ընկե-
Ա Կոր. Գ. 8. րաւն: * Զի իւրաքանչիւրոք զիւր բեռն 5
բառնալոց է: * Հաղորդեսցի աշա- 6
կերտն վարդապետին՝ յամ բարութիւնս: * Մի 7
խաբիք. ած ոչ արհամարհի: * Զի զոր ինչ 8
սերմանէ մարդ՝ զնոյն եւ հնձեսցէ. որ սեր-
մանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձ-
եսցէ զապականութիւն. եւ որ սերմանէ ի հո-
գին՝ ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յա-
Բ Թես. Գ. 13. ւիտենից: * Բայց զբարիս գործել մի ձանձ- 9
րասցուք, զի ի ժամանակի իւրում հնձես-
ցուք առանց լքանելոյ: * Արդ մինչ- 10
դեռ ժամանակս ի ձեռս է՝ գործեսցուք զբ-
արիս առ ամենեսեան, մանաւանդ առ ըն-
տանիս հաւատոյ: * Տեսէք՝ որպիսի գրով 11
գրեցի առ ձեզ իմով ձեռամբ: * Զի որ 12
միանգամ կամին բարեհաճ լինել մարմ-
նով, նոքա ստիպեն զձեզ թլփատել. միայն
զի մի զխաչին քսի զհետ երթիցեն: * Քան- 13
զի որ թլփատեալքն իսկ են, նոքա զօրէնսն
ոչ պահեն. այլ կամին՝ զի դուք թլփատի-
ՎԵՐՋ ջիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին:
* Բայց ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն 14
ի խաչն տն մերոյ յսի քսի, որով ինձ աշ-
խարհ ի խաչ ելեալ է՝ եւ ես աշխարհի:
* Զի (ի քս յս), ոչ թլփատութիւն ինչ է եւ 15
ոչ

16 ու անթլփատութիւն, այլ նոր արարած։ *Եւ
որ միաբանեալ այսմ կանոնի միաբան լինին,
խաղաղութիւն 'ի վերայ նոցա և ողորմութիւն
17 և 'ի վերայ Իսրայելին այ։ *Այսուհետև
աշխատ որ զիս մի՛ արասցէ. զի ես զխարա-
18 զանս քի 'ի մարմնի իմում կրեմ։ *Շը-
նորհք տն մերոյ յի քի ընդ ոգւոյդ ձերում
եղբարք. ամէն։

Առ գաղատացիս՝ գրեցաւ 'ի հռոմէ։



# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ.

### ԳԼ. Ա.

ԲԿ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ 1
յսի քսի կամօքն այ՝ սրբոց որ են
յեփեսոս, եւ հաւատացելոց 'ի քս
յս. * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն 2
Կող. Ա. 3. յայ հօրէ մերմէ՝ եւ 'ի տեառնէ յսէ քսէ. * Օրհ- 3
նեալ է այ եւ հայր տն մերոյ յսի քսի. որ
Ա. Պետ. Ա. 3. օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնու-
թեամբ յերկնաւորս 'ի քս. * որպէս ընտ- 4
րեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշ-
խարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս ա-
ռաջի նր սիրով. * Յառաջագոյն սահմա- 5
նեաց զմեզ յորդեգրութիւն 'ի ձեռն յսի քսի 'ի
նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւրոց, * 'ի գո- 6
վեստ փառաց շնորհաց իւրոց. որով շնոր-
հացոյց զմեզ սիրելեաւն. * Որով ունիմք 7
զփրկութիւն 'ի ձեռն արեան նր, զթողութիւն մե-
ղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց. * որ ա- 8
ռաւելաւ 'ի մեզ ամ իմաստութեամբ եւ գիտու-
թեամբ. * Ցուցեալ մեզ զխորհուրդս կամաց իւ- 9
րոց՝ ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն
եդ

10 եդ նովաւ, *Ի տնտեսութիւն լրման ժամա- ‖ Կող. 1. 20.
նակաց, բովանդակել զամ̃ ք̃սիւ, որ ինչ
11 յերկինս՝ և որ ինչ յերկրի՝ ի նմին. *Որով
և վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝
ը̃ս յառաջադրութեան ա̃յ. որ զամ̃ յաջողէ ը̃ս
12 խորհրդոց կամաց իւրոց. *լինել մեզ ի գո-
վեստ փառաց նր̃ յառաջագոյն յուսացելոցս
13 ի ք̃ս. *Որով և դուք իբրև լուարուք զ-
բանն ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան
ձերոյ, որով և հաւատացեալ կնքեցայք հոգ-
14 ւոյն սրբոյ աւետեաց. *որ է առհաւատչեայ
ժառանգութեան մերոյ, ի փրկութիւն նուա-
ճութեան, ի գովեստ փառաց նորա:
15 *Վասն այսորիկ և ես իբրև լուայ զհաւատսն Ը, Դ
ձեր՝ որ ի տր̃ յս̃, և զսէրն որ ը̃ս ամ̃ սուրբս,
16 *ոչ դադարեմ ի գոհանալոյ վս̃ ձեր՝ յիշել
17 զձեզ յաղօթս. *զի ա̃ծ տն̃ մերոյ յս̃ի ք̃սի
հայրն փառաց՝ տացէ ձեզ զհոգին իմաստու-
18 թեան և յայտնութեան գիտութեամբ իւրով. *լու-
սաւոր առնել զաչս սրտից՝ առ ի գիտելոյ
մեզ՝ զինչ է յոյս կոչմանն նորա, և զինչ մե-
ծութիւն փառաց ժառանգութեան նր̃ ի սուրբս.
19 *և զինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նր̃
ի մեզ հաւատացեալս. ‖ ըստ յաջողութեան կա- ‖ Փլպ. 3. 7.
20 րողութեան զօրութեան իւրոյ, *զոր յաջողեաց ի
ք̃ս. զի յարոյց զնա ի մեռելոց. և նստոյց
21 ը̃ աջմէ իւրմէ յերկնաւորս, *ի վեր ամ̃
իշխանութեան և պետութեան և զօրութեան և տէ-
րութեան և ամ̃ անուան անուանելոյ, ոչ միայն
յաշխարհիս յայսմիկ՝ այլ և ի հանդերձե-
22 լումն. *‖ Եւ զամ̃ ինչ հնազանդ արար ի ‖ Սղմ. 8. 8.
ներքոյ ոտից նր̃. և զնա եդ գլուխ ի վերայ

ամ̃

ամ̃ իրիք եկեղեցւոյ, * որ է մարմին նորա, 23
լրումն՝ որ զամ̃ յամենայնի լնու.

## ԳԼ. Բ.

Կող. 2. 13. Եւ դուք՝ որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր 1
եւ յանցանս, * յորս երբեմն գնայիք ըստ 2
յաւիտենի աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխա-
նին իշխանութ̃ն օդոյս այսոյ, որ այժմ ընդ-
մտեալ է յորդիսն ապստամբութ̃ն. * յորս եւ 3
մեք ամենեքեան շրջէաք երբեմն 'ի ցանկու-
թիւնս մարմնոյ մերոյ, եւ առնէաք զկամս
մարմնոյ՝ եւ զմտաց, եւ էաք արդարեւ որդիք
բարկութ̃ն իբրեւ այլքն.
Բ. Օ. * Այլ ա̃ծ որ մեծն է ողորմութ̃բ վն̃ բազում 4
սիրոյն իւրոյ՝ զոր սիրեաց զմեզ. * մինչդեռ 5
մեռեալն էաք 'ի մեղս մեր, կենդանիս ա-
րար զմեզ 'ի ք̃ս. քանզի շնորհօք ապրեցաք.
* ընդ նմին յարոյց, եւ ը̃ նմին նստոյց յերկ- 6
նաւորս 'ի ք̃ս յ̃ս. * Զի ցուցցէ 'ի յաւի- 7
տեանսն որ գալոցն են զառաւել մեծութի̃ն
շնորհացն իւրոց՝ քաղցրութ̃բ 'ի մեզ 'ի ք̃ս յ̃ս.
Զի շնորհօք ի̃ս էք փրկեալք 'ի ձեռն հա- 8
ւատոյն. եւ այս ոչ 'ի ձէնջ, այլ ա̃յ պարգեւ
է. * ոչ 'ի գործոց, զի մի ոք պարծեսցի. 9
* Զի նորա արարածք եմք՝ հաստատեալք 10
ք̃ի յ̃ի 'ի գործս բարութ̃ն, յորս յառաջա-
գոյն պատրաստեաց ա̃ծ. զի 'ի նոյնս գնաս-
ցուք. * Վասն որոյ եւ դուք յիշեսջիք՝ զի եր- 11
բեմն հեթանոսք էիք մարմնով. որ կոչեցեալքն
էն անթլփատութի̃ն յանուանեալ թլփատութ̃ն
անտի մարմնաւոր ձեռագործին. * զի էիք 'ի 12
ժամանակին յայնմիկ առանց ք̃ի, (եւ օտա-

րա-

րացեալ էիք յառաքինուԹե̃ն Իղի.) և օտարա-
գիրք յուխտից աւետեացն, և յոյս ինչ ոչ ու-
13 նէիք՝ և անաստուածք էիք յաշխարհի։ *Իսկ այժ-
միկ 'ի ձեռն յսի քսի, դուք՝ որ երբեմն հե-
ռաւորքն էիք՝ մերձաւորք եղերուք ար-
14 եամբն քսի։ *Զի նա է խաղաղուԹի մեր՝ որ
արար զերկոսեան մի. և զմիջնորմն ցանկոյն
քակեաց՝ զԹշնամուԹի 'ի մարմնի իւրում.
15 *և զօրէնս պատուիրանացն հրամանօքն
խափանեաց. զի զերկոսին հաստատեսցէ ին-
քեամբ 'ի մի նոր մարդ, և արասցէ խաղա-
16 ղուԹի. *և հաշտեցուսցէ զերկոսին միով
մարմնով ը̃ այ՝ խաչիւն իւրով, քանզի ըս-
17 պան զԹշնամուԹի յանձին իւրում։ *Եւ ե-
կեալ աւետարանեաց խաղաղուԹի ձեզ հեռա-
18 ւորաց և խաղաղուԹի մերձաւորաց. *‖զի ‖Հռով. 5. 2.
նովաւ ունիմք զմատչուԹի երկոքեան միով
19 հոգւով առ հայր։ *Ապա այսուհետև ոչ
էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք
20 սրբոց և ընտանիք այ. *շինեալք 'ի վերայ հի-
մանն առաքելոց և մարգարէից. որոյ է գլուխ
21 անկեանն քս յս. *յորում ամ շինուածն յօ-
դեալ և պատշաճեալ՝ աճէ 'ի տաճար սուրբ
22 տերամբ։ *Յորում և դուք ը̃ նմին շինիք
'ի բնակուԹի այ հոգւով։ ՎԵՐՋ

## ԳԼ. Գ.

1 Վասն այսորիկ ես պօղոս կապեալ յսի քսի
2 վասն ձեր հեԹանոսաց։ *Թէպէտ լուեալ
իցէ ձեր զտնտեսուԹիւն շնորհացն այ, որ
3 տուեալ են ինձ 'ի ձեզ։ *Զի ըստ յայտ-
նուԹեն ցուցաւ ինձ խորհուրդն. որպէս յա-
ռա

ռաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք. *առ 4
'ի կարող լինելոյ ընթեռնուլ՝ և 'ի միտ ա-
ռնուլ զիմաստութիւն զիմ 'ի խորհրդեանն Քրիստոսի.
*Որ յայլոց ազգաց ոչ ցուցաւ որդւոց մարդ- 5
կան. որպէս այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց ա-
ռաքելոց և մարգարէից՝ Հոգւովն. *լինել 6
հեթանոսաց ժառանգակիցս՝ և մարմնա-
կիցս, և հաղորդս աւետեացն 'ի Քրիստոս Յիսուս՝ ա-
ւետարանաւն, *որոյ եղէ ես սպասաւոր ըստ 7
Ա Վն. պարգևաց շնորհացն Աստուծոյ՝ որ տուաւ ինձ ‖ ըստ
1. 19. յաջողութեան զօրութեան նորա. *Ինձ, որ տրուպս 8
Ա.Կոր. եմ ամենայն սրբոց՝ տուաւ շնորհս այս, 'ի հե-
15. 9. թանոսս աւետարանել զանքննելի մեծութիւն
Քրիստոսի. *և լուսաւոր առնել զամենեսին, թէ 9
զինչ է տնտեսութիւն խորհրդոյն, որ ծած-
կեալ էր յամենայն յաւիտեանց առ Աստուած՝ որ զամենայն
ինչ արար. *զի յայտնեսցի արդ իշխանութեանց 10
և պետութեանց՝ որ յերկինս են 'ի ձեռն եկե-
ղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւն Աստուծոյ. *ըստ 11
յառաջադրութեան յաւիտենից՝ զոր արար
'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. *Որով ունիմք 12
զհամարձակութիւն և զմատչելութիւն յուսով 'ի
ձեռն հաւատոց նորա. *Վասն որոյ աղաչեմ 13
մի ձանձրանալ 'ի նեղութեան իմում, որ վասն
ձեր է. որ է փառք ձեր. *Վասն այսորիկ 14
դնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
*ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկ- 15
րի անուանի. *զի տացէ ձեզ ըստ մեծութեան 16
փառաց իւրոց, հաստատել զօրութեամբ 'ի ձեռն
Հոգւոյն իւրոյ 'ի ներքին մարդն. *բնակել 17
Քրիստոսի հաւատովք 'ի սիրտս ձեր. սիրով ար-
մատացեալք և հաստատեալք. *զի կարող 18

լի-

լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս, զինչ է լայ-
նութիւն եւ երկայնութիւն եւ բարձրութիւն եւ խո-
19 րութիւն. * Ճանաչել զգերազանցութիւն գիտու-
թեան սիրոյն Քրիստոսի. զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ։
20 * Այլ այնմ որ կարողն է առաւել քան զամենայն
ինչ առնել յաճախուրդ՝ քան զոր խնդրեմքն
եւ իմանամք, ըստ զօրութեանն՝ որ յաջողեալն
21 է 'ի մեզ։ * Նմա փառք յեկեղեցւոջ, եւ 'ի
Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յաւիտենից յաւի-
տեանս. ամէն։

## ԳԼ. Դ.

1 Արդ՝ աղաչեմ զձեզ ես՝ որ կապեալս եմ
'ի Տէր, ‖ արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչե- ‖1. Կոր.
2 ցարուք։ * Ամենայն խոնարհութեամբ եւ հե- 7. 20.
զութեամբ եւ ‖ երկայնմտութեամբ՝ անսալ միմեանց Փիլիպ.
3 սիրով. * փութալ պահել զմիաբանութիւն հոգ- 1. 27. ‖Հռով.
4 ւոյն յօդիւ խաղաղութեան։ * Մի մարմին՝ եւ 12. 16.
մի հոգի. որպէս եւ կոչեցարուք 'ի մի յոյս կոչ-
5 ման ձերոյ։ * Մի է Տէր, մի հաւատք՝ մի
6 մկրտութիւն։ * ‖ Մի Աստուած, եւ հայր ամենեցուն՝ ‖Մաղ.
որ 'ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին՝ եւ 2. 10.
7 յամենեսին 'ի մեզ։ * ‖ Այլ իւրաքանչիւր ‖Հռով.
ումեք 'ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չա- 12. 3.
8 փոյ պարգեւացն Քրիստոսի։ * Վասն որոյ եւ ասէ. 1. Կոր.
‖ Ել 'ի բարձունս՝ գերեաց զգերութիւն. եւ ետ 12. 11. 2. Կոր.
9 պարգեւս մարդկան։ * Որ ելն զինչ է, եթէ 10. 13.
10 ոչ՝ զի էջ նախ 'ի ստորինս կողմանս երկրի։ * Որ ‖ Սաղ.
էջն, նոյն է՝ եւ որ ելն 'ի վերայ քան զամենայն եր- 67. 19.
11 կինս. զի լցցէ զամենայն։ * Եւ նա ետ զոմանս
‖ առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս ‖1. Կոր.
աւետարանիչս, զոմանս հովիւս եւ վարդա- 12. 28.

պետս. * 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ 12
պաշտաման, 'ի շինուած մարմնոյն քնի.
* մինչև հասցուք ամենեքեան 'ի մի միաբա- 13
նութիւն հաւատոց և գիտութեան որդւոյն այ.
յայր կատարեալ 'ի չափ հասակի կատար-
մանն քնի. * Զի մի յայսմհետէ իցեմք տ- 14
ղայք խռովեալք և տատանեալք յամ հող-
մոց վարդապետութեան, խաբէութբ մարդ-
կան. խորամանկութբ 'ի խաբէութիւն մոլո-
րութեան: * Այլ ճշմարտեալք սիրով աճես- 15
ցուք 'ի նա զամ, որ է գլուխ քս. * ուստի 16
ամ մարմինն յօդեալ և պատշաճեալ ամ խա-
ղալեաց տարբերութ՝ ըստ ազդեցութեան՝ չափով
ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճումն մարմնոյ
գործէ՝ 'ի շինուած անձին իւրոյ սիրով: * Արդ՝ 17
զայս ասեմ, և ուխտեմ 'ի տր. մի ևս ձեզ
զնոյն օրինակ գնալ՝ որպէս և այլ հեթանոսք
‖Հռովմ. գնան՝ ‖ ունայնութբ մտաց իւրեանց. * ա- 18
1. 21. րոց խաւարեալ են միտք իւրեանց, և օտա-
րացեալ են 'ի կենաց անտի այ՝ վս ագիտու-
թեանն՝ որ է 'ի նս, վս կուրութեան սրտից իւ-
րեանց: * Որք զանձանց իւրեանց զյոյսն հա- 19
տին, և մատնեցին զանձինս գիջութեան, 'ի
գործս ամ պղծութե ագահութբ: * Այլ 20
դուք ոչ այսպէս ուսարուք զքս. * Թէպէտ 21
և լուարուք զնմանէ, և նովաւ ուսայք՝ որ
‖Կողոս. է ճշմարտութիւն յիս. * ‖ Ի բաց մերկանալ 22
3. 8. 'ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն հին՝
զապականեալն ցանկութբք խաբէութեան:
‖Հռովմ. * ‖ Այլ նորոգել հոգւովն մտաց ձերոց. * ‖ Եւ 23
6. 4.
‖Կողոս. զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ այյն հաստա- 24
3. 12. տեալ է՝ արդարութբ և սրբութբ ճշմարտու-
թեան:

25 թեն ։ * ‖ Վասն որոյ ՚ի բաց ընկեցէք զս- ‖Ա·Պետ·
տութի · ‖ խօսեցարուք զճշմարտութիւն իւրա- 2· 1·
քանչիւր ընդ ընկերի իւրում․ զի եմք մի- ‖Զաքար·
8· 16·
26 մեանց անդամք ։ * ‖ Բարկանայք՝ եւ մի մե- ‖Սաղ·
ղանչիցէք․ արեգակն ՚ի վերայ բարկութեան ձերոյ 4· 5·
27 մի մտցէ ։ * ‖ Եւ մի տայք տեղի սատանայի ։ ‖Յակ·
28 * Որ գողանայրն՝ մի եւս գողասցի, այլ մա- 4· 7·
նաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք ի-
րովք զբարիս․ զի բաւական իցէ տալ՝ ում
29 պիտոյ իցէ ։ * Ամենայն բան աղտեղ ՚ի բե-
րանոյ ձերմէ մի ելցէ․ այլ որ ինչ բարին է
՚ի շինած պիտոյից, զի տացէ շնորհս այնո-
30 ցիկ, որ լսեն ։ * Եւ մի տրտմեցուցանէք
զհոգին սբ այ, որով կնքեցարուք յաւուրն
31 փրկութեան ։ * Ամենայն դառնութիւն եւ բար-
կութիւն եւ սրտմտութիւն եւ աղաղակ՝ եւ հայհոյ-
ութիւն բարձցի ՚ի ձէնջ ամ չարութեամբն հան-
32 դերձ ։ * ‖ Եղերուք ընդ միմեանս քաղցունք՝ ‖Կողոս·
գթածք․ շնորհել միմեանց, որպէս եւ ած 3· 13·
քսիւ շնորհեաց մեզ ։

## ԳԼ․ Ե․

1 Եղերուք նմանօղք այ, իբրեւ որդիք սիրե-
2 լիք․ * ‖ Եւ գնացէք սիրով՝ ոպ եւ քս սիրեաց ‖Յով·
զմեզ, եւ մատնեաց զանձն իւր վս մեր՝ պա- 13· 34·
տարագ եւ զենումն այ ՚ի հոտ անուշից ։ 15· 12·
3 * ‖ Այլ պոռնկութիւն եւ ամ պղծութիւն, կամ ‖Կողոս·
ագահութիւն եւ անուանեսցի մի ՚ի միջի ձե- 3· 5·
4 րում, ոպ եւ վայել է սրբոց․ * Եւ զազրութիւն
կամ խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն
որ ոչ վայել է․ այլ մանաւանդ գոհութիւն ։
5 * ‖ Զայս տեղեկացեալ գիտասջիք․ թէ ‖Կոր·
ամ 6· 7·

ամ պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ է
կռապաշտ՝ ոչ ունի ժառանգութիւն յարքա-
Մատ. յութեն Քի և Այ։ * Մի որ զձեզ խաբես- 6
24. 4. ցէ բանիւք սնոտեօք. զի վս այսորիկ իսկ
Կող. գայ բարկութիւն Այ ՚ի վր որդւոցն անհաւա-
2. 8. նութեն։ * Մի այսուհետև լինիք բաժանորդք 7
2. Թես. նց։ * Զի թէպէտ և երբեմն էիք խաւար, 8
2. 3. այլ այժմ լոյս էք ՚ի Տր. իբր զորդիս լուսոյ գը-
նասջիք. * զի պտուղ լուսոյ ամ բարութի 9
է՝ և արդարութի և ճշմարտութի։ * փորձե- 10
ցէք զինչ է հաճոյ Տն. * և մի կցորդ լինիք 11
անպտղութե գործոցն խաւարի. այլ մանա-
ւանդ յանդիմանեսջիք։ * Զի որ ՚ի ծածուկ 12
ինչ գործի ՚ի նոցա՝ գայն և խօսել աղտեղի
է։ * Այլ ամ ինչ յանդիմանեալ ՚ի լուսոյ՝ 13
յայտնի լինի. զի ամ ինչ՝ որ յայտնի է՝ լոյս
է։ * Վասն որոյ և ասէ. արի որ ննջեսդ, 14
և կանգնեաց ՚ի մեռելոց, և լուսատու լի-
ցի քեզ Քս։

Թե. Կ
* Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի 15
իբրև անիմաստք, * այլ իբրև իմաստունք, 16
Կող. 4. 5. գնեցէք զժամանակս, զի աւուրքս չարութե
են։ * Վասն այսորիկ մի լինիք անմիտք, 17
Հռոմ. այլ իմացարուք զինչ կամք են Տն։ * Եւ 18
12. 2. մի արբենայք գինւով, յորում զեղխութի է.
1. Թես.
4. 3. այլ մանաւանդ լցարուք Հոգւով. * խօսել 19
՚ի միջի ձեր սաղմոսիւք, և օրհնութեամբք և
երգովք հոգևորօք. երգել և սաղմոս ասել
՚ի սիրտս ձեր Տն։ * Գոհացարուք յամե- 20
նայն ժամ ՚ի վերայ ամենայնի, յանուն Տն
մերոյ Յի Քի՝ Հօր և Այ։ * Հնազանդ լե- 21
Ծնն. րուք միմեանց երկիւղին Քի։ * Կանայք 22
3. 16.

իւ-

իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տն.
23 *‖զի այր է գլուխ կնոջ՝ որպէս եւ Քս գլուխ է ‖Կող.
24 եկեղեցւոյ. եւ նոյն է փրկիչ մարմնոյ. *Այլ 3. 18.
որպէս եկեղեցին հնազանդ լինի Քի, նոյնպէս 1. Պետ. 3. 1.
25 եւ կանայք իւրեանց արանց յամենայնի. ‖*Արք՝ ‖1. Կոր.
սիրեցէք զկանայս ձեր. որպէս եւ Քս սիրեաց զե- 11. 3.
կեղեցի, եւ զանձն իւր մատնեաց վն նորա. ‖Կող. 3. 19.
26 *զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բա-
27 նիւ. *զի կացուսցէ նոյն ինքն յանդիմանս
փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ ա-
րատ՝ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայնպի-
28 սեաց. այլ զի իցէ սուրբ եւ անարատ. *Նոյն-
պէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝
իբրեւ զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝
29 զանձն իւր սիրէ. *Ոչ ոք երբէք ատեաց
զանձն իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զը-
30 նա. որպէս եւ Քս զեկեղեցի. *զի անդամք
եմք մարմնոյ նր, 'ի մարմնոյ նր եւ յոսկերաց
31 նորա. * ‖Վասն այսորիկ թողցէ այր զհայր ‖Ծն.
եւ զմայր իւր՝, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ. 2. 24.
32 ‖եւ եղիցին երկոքին 'ի մարմին մի. * Խոր- Մտ. 19. 5.
հուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ 'ի Քս եւ Մր. 10. 7.
33 յեկեղեցի. * Այլ եւ դուք նոյնպէս մի ըստ ‖1. Կոր.
միոջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս 6. 16.
սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն. եւ կին երկնչիցի
յառնէ իւրմէ.

## ԳԼ. Զ.

1 Որդիք՝ ‖հնազանդ լերուք ծնողաց ձերոց Թ. Զ.
2 'ի Տր. զի այն է արժան. *‖Պատուեա ‖Կող.
զհայր քո եւ զմայր. որ է առաջին պատուի- 3. 20.
3 րան յաւետիւք. * զի քեզ բարի եղիցի, եւ ‖Ելք.
եր- 20. 12.

Բ. Օրէ. երկայնակեաց լինիցիս ՚ի վ՛ր երկրի։ *Հարք 4
5. 16. մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնու-
ցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տ՛ն։
Կողոս. *Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձե- 5
3. 22. րոց մարմնաւորաց, ահիւ և դողութեամբ և
Տիտ. 2. 9. միամտութեամբ սրտից ձերոց՝ որպէս և Ք՛ի։
*Մի առ աչօք ծառայել իբրև մարդա- 6
հաճոյք. այլ իբրև ծառայք Ք՛ի առնել զկա-
մս Ա՛յ. *սրտի մտօք ծառայել՝ իբրև Տ՛ն, 7
և մի իբրև մարդկան։ *Գիտասջիք՝ թէ 8
իւրաքանչիւրոք որ զինչ առնէ զբարիս, զ-
նոյն ընդունի և ՚ի Տ՛նէ՝ եթէ ծառայ և ե-
թէ ազատ։ *Եւ դուք տեարք՝ զնոյն առ- 9
Բ. Օրէ. նիջիք առ նո. ներելով առնել զսպառնա-
10. 17. լիսն. գիտասջիք թէ և նոցա և ձեր Տ՛ր գոյ
Գործ. յերկինս. և ակնառութիւն ոչ գոյ առաջի նր։
*Այսուհետև զօրացարուք Տերամբ, և 10
կարողութեամբ զօրութեան նր։ *Եւ զգեցարուք 11
զսպառազինութիւնս Ա՛յ. զի կարող լինիջիք
կալ ընդդէմ հնարից սատանայի։ *Զի ոչ 12
է մեզ պատերազմ ը՛ղ մարմնոյ և ը՛ղ արեան.
այլ ը՛ղ իշխանութիւնս, և ը՛ղ պետութիւնս, և ընդ
աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս
չարութեան որ ՚ի ներքոյ երկնից։
*Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնս 13
Ա՛յ, զի կարող լինիցիք ՚ի գիշեր հարկանել
չարին՝ յաւուրն չարում։ *Եւ իբրև զամե- 14
նայն կատարիցէք, հաստատուն կացէք. ընդ-
մէջ կալջիք զմէջս ձեր ճշմար-
տութեամբ, և զգեցեալ զզրահս արդարութեան,
*և ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւե- 15
տարանին խաղաղութեան։ *Եւ ՚ի վ՛ր ամենայ- 16
նի

նի առէք զվահանն հաւատոյ. որով կարող
լինիջիք զամ՟ նետս մուխս չարին շիջուցա_
17 նել. * ‖ Եւ առէք զսաղաւարտն փրկութե՟, ‖ Եսայ.
և զսուսեր հոգւոյն՝ որ է բանն այ՟. * ամ՟ 59. 17.
աղօթիւք և խնդրուածովք՝ աղօթս առնել_ 1. Թեսաղ. 5. 8.
18 յամենայն ժամանակի հոգւով. ‖ և ՚ի նոյն ‖ Կողոս.
տքնիջիք ամ՟ ժուժկալութը՟ և խնդրուա_ 4. 2.
19 ծովք՝ վասն ամ՟ սրբոց, * ‖ և վասն իմ. զի ‖ 2 Թեսաղ.
ինձ տացի բան ՚ի բանալ բերանոյ իմոյ, համ_ 3. 1.
արձակութը՟ ցուցանել զխորհուրդ աւետա_
20 րանին. * վս՟ որոյ պատգամաւորիմ կապա_
նօքս. զի նովին համարձակեցայց, որպէս և
21 պարտ իցէ ինձ խօսել. * Այլ զի գիտիցէք
և դուք զինէն, զինչ գործիցեմ. զամ՟ ինչ
ցուցցէ ձեզ ‖ Տիւքիկոս սիրելի եղբայր՝ և ‖ Գործ.
22 հաւատարիմ պաշտօնեայ ՚ի տր՟. * զոր ա_ 20. 4.
ռաքեցի առ ձեզ նմին իրի, զի գիտասջիք Կողոս. 4. 7.
դուք զմէնջ. և մխիթարեսցէ զսիրտս ձեր.
23 * Խաղաղութիւն ընդ եղբարս. և սէր հաւա_
տովքն հանդերձ յայ՟ ՚ի հօրէ՝ և ՚ի տնէ՟ յսէ՟
24 քսէ՟. * Շնորհք ընդ ամենեսեան որ սիրեն
զտր՟ մեր՟ յս՟ քս՟ անեղծութը՟. ամէն.

Առ Եփեսացիս՝ գրեցաւ ՚ի Հռովմէ ՚ի ձեռն
Տիւքիկոսի.

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍՆ·

## ԳԼ. Ա.

Ժ. Ն

ՊՕՂՈՍ ԵՒ ՏԻՄՈԹԷՈՍ 1
ծառայք Յի՟ Քրի՟՝ ամ՟ սրբոց՝ ՚ի Քրի՟
Յի՟, որ են ՚ի կողմանս Փիլիպպեցւոց, եպիսկոպոսակցօք եւ սարկաւագօք։
*Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱյ՟ 2
Հօրէ մերմէ՝ եւ ՚ի Տեառնէ Յի՟ Քրիէ։ *Գոհա 3
նամ զԱյ՟ իմոյ ՚ի վ՟ր ամ՟ յիշատակաց ձերոց,
*յամ՟ ժամ յամ՟ խնդրուածս իմ՝ վ՟ս ձեր 4
ամենեցուն առնել աղօթս խնդութ՟. *վասն 5
հաղորդութե՟ ձերոյ ՚ի աւետարանին, յօրէ
յառաջնմէ մինչեւ ցայժմ։ *Աստահ եմ 6
յայդ, թէ որ սկսաւ ՚ի ձեզ զգործս բարեաց՝ կատարեսցէ մինչեւ յօրն Յի՟ Քրի՟. *որ 7
պէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն
ձեր ամենեցուն. վասն ունելոյ ինձ զձեզ ՚ի
սրտի ՚ի կապանս իմում, եւ ՚ի պատասխանատուութե՟ իմում, եւ ՚ի հաստատութե՟ աւետարանին. կցորդս ինձ շնորհաց զձեզ ամենեսին լինել։ *Վկայ է ինձ Այ՟, որպէս 8
անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գթովք Յի՟

Քրի՟

9 Քսի Յսի. *Եւ զայն աղօթս առնեմ, զի
սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ՚ի գի-
10 տութեան եւ յամ խմաստութեան. *ընտրել ձեզ
զլաւն՝ զի իցէք հաստատունք եւ առանց գայ-
11 թագղութեան ՚ի յաւուրն Քսի. *լցեալ պտղովք
արդարութեան ՚ի ձեռն Յսի Քսի ՚ի փառս եւ
՚ի գովեստ Այ.
12 *Կամիմ թէ գիտիցէք եղբարք, զի որ ինչ Ժ. Գ.
վասն իմ էր, եւս քան զեւս ՚ի յառաջադիմու-
13 թիւն աւետարանին եկն. *Մինչեւ կապանաց ‖ Գործ.
իմոց յայտնի լինել ՚ի Քս յամ հրապարակիս, 16. 24.
14 եւ առ այլս ամենեսին. *եւ առ բազում եղ-
բարս ՚ի Տէր. որ վստահ են կապանօքս իմովք՝
առաւել եւս համարձակել՝ առանց երկիւղի
15 զբանն Այ խօսել. *Ոմանք առ նախանձու
եւ հակառակութեան, եւ ոմանք մտադիւրութեամբ
16 իսկ զՔս քարոզեն. *եւ ոմանք ՚ի սիրոյ,
քանզի գիտեն՝ եթէ ՚ի պատասխանատուու-
17 թիւն աւետարանին կամ. *եւ ոմանք առ հեռ-
ւութեան զՔս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քան-
զի համարին նեղութիւնս յարուցանել ՚ի վերայ
18 կապանաց իմոց. *Բայց այս զինչ է. որով
օրինակաւ եւ իցէ, եթէ պատճառանօք՝ եւ
եթէ ճշմարտութեամբ՝ Քս պատմի. եւ ընդ այս
19 խնդամ՝ այլեւ ուրախ եւս եղէց. *Զի գի-
տեմ, եթէ այս պահի ինձ ՚ի փրկութիւն ՚ի ձե-
րոց խնդրուածոց՝ եւ ՚ի պարգեւաց հոգւոյն
20 Յսի Քսի, *ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ.
զի մի ինչ յամօթ եղէց, այլ ամ համար-
ձակութեամբ որպէս եւ յամ ժամ եւ այժմ մեծա-
ցի Քս ՚ի մարմնի իմում, եթէ կենօք՝ եւ ե-
21 թէ մահու. *Զի ինձ կեանք Քս է, եւ մե-
ռա-

ռանել շահ. * Ապա եթէ կեանքս մարմ- 22
նոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է. և զինչ ընտ-
րեցից՝ զայն ոչ գիտեմ. * Նեղեալ եմ յեր- 23
կոցունց՝ ցանկալ, ելանել և ընդ Քրիստոսի լինել՝
առաւել լաւ համարիմ. * և կալ մնալ առ- 24
աւել ի մարմնի, կարևոր ևս վասն ձեր. * Եւ 25
զայս յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝ և
մնացից ամենեցուն ձեզ, ի ձեր զարգանալ
և խրախ լինել ի հաւատս. * զի պարծանք 26
ձեր առաւել լիցին ի Քրիստոս Յիսուս ինև ի միւսան-
ԳԼՐՋ գամ գալստեան իմում առ ձեզ.
Եփե. * Միայն թէ արժանի աւետարանին Քրիստոսի 27
4. 1. գնայցէք. զի եթէ գայցեմ, և տեսանիցեմ
Կողո. 1. 10. զձեզ. և եթէ հեռի իցեմ, և լուիցեմ զձէնջ.
Ա Թեսս. 2. 12. զի հաստատուն կայցէք ի մի հոգի, և միով
ոգւով նահատակիցիք ի հաւատս աւետարա-
նին. * և մի զանգիտիցէք՝ և մի իւիք ի հա- 28
կառակորդաց անտի. որ է նոցա հանդէս կորըս-
տեան, և ձերոյ փրկութեան. * Եւ այդ յԱստուծոյ է՝ 29
որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի. ոչ միայն ի նա
Ա. Պետ. հաւատալ՝ այլ և վասն նորա չարչարիլ. * զնոյն 30
4. 16. պատերազմ ունել՝ զոր յիս տեսէք՝ և այժմ
լսէք յինէն.

## ԳԼ. Բ.

Արդ՝ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ի Քրիստոս, ե- 1
թէ սփոփութիւն սիրոյ՝ եթէ հաղորդութիւն
հոգւոյ, եթէ գթութիւն և ողորմութիւն. * լցէք 2
զխնդութիւն իմ. զնոյն խորհիցիք, զնոյն
սէր յանձին ունիցիք, համաշունչք միախոր-
հուրդք. * մի ինչ ըստ գրգռութեան, և մի ինչ 3
ըստ սնապարծութեան. այլ խոնարհութեամբ զմի-

միմեանս

միմեանս լաւ համարել առաւել քան զան-
4 ձինս. *մի զանձանց եւ եթ դիտել՝ այլ ի-
5 րաքանչիւրոք զընկերին. *Զայն խորհես-
ցի իւրաքանչիւրոք 'ի ձեզ, որ եւ 'ի քս յս.
6 *որ 'ի կերպարանս այ է, ոչինչ յափշտա-
կութիւն համարեցաւ զլինելն հաւասար այ.
7 *այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծա-
ռայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ՝
8 եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ. *Խո- Եբրայ. 2. 9.
նարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մինչեւ
9 ցմահ՝ եւ մահու խաչի. *Վասն որոյ եւ այ
զնա առաւել բարձրացոյց. եւ շնորհեաց նմա
10 անուն որ 'ի վեր է քան զամ անուն. *Զի 'ի Եսայ.
յանուն յսի քի ամ ծունր կրկնեսցի՝ երկ- 45. 24.
նաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետա- Հռով. 14. 11.
11 կանաց. *եւ ամ լեզու խոստովան լիցի, թէ
տր է յս քս 'ի փառս այ հօր.
12 *Այսուհետեւ սիրելիք իմ, որպ յամ հնա- Ժ. Զ.
զանդեցարուք, մի միայն 'ի գալստեան ի-
մում, այլ առաւել եւ այժմ՝ յորժամ հե-
ռի եմ 'ի ձէնջ, ահիւ եւ դողութ զանձանց
13 փրկութի գործեցէք. *Զի այ է՝ որ յաջողէ
'ի ձեզ զկամելն եւ զառնելն վս հաճութե.
14 *Զամ ինչ գործեցէք առանց տրտնջելոյ Ա. Պետ.
15 եւ երկմտելոյ. *զի եղիջիք անբիծք եւ ա- 4. 9.
նարատք՝ որդիք այ, անմեղք 'ի մէջ կամա-
կոր եւ խեղաթիւր ազգին. յորոց մէջ ե-
16 րեւիցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի. *Բա-
նին կենաց ունել յանձինս՝ 'ի պարծանս
ինձ յաւուրն քի. զի ոչ ընդունայն ինչ ըն-
17 թացայ՝ եւ ոչ 'ի նանիր վաստակեցի. *Այլ
թէպէտ եւ նուիրիմ 'ի վերայ պատարագի եւ

պաշ-

պաշտաման հաւատոց ձերոց, խնդամ և ու-
րախակից եմ ամենեցուն ձեր. *Նոյնպէս և 18
դուք խնդացէ՛ք և ուրախակից եղերո՛ւք ինձ.
*Բայց յուսամ 'ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղ- 19
վաղակի առաքել առ ձեզ. զի և ինձ սրտի
դիւր լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ.
*Զի ոչ զոք ունիմ համաշունչ՝ եթէ ըն- 20
Ա.Կոր. տանեբար հոգայցէ վասն ձեր. *Զի ամե- 21
13. Ե. նեքին զանձանց խնդրեն, և ոչ զՅիսուսի Քրիստոսի.
*Բայց զփորձն դորա գիտէք և դուք, զի իբրև 22
որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին.
*Արդ՝ զսա ակն ունիմ առաքել՝ ոչ նոյն- 23
հետայն զանձնէ ստուգեցից. *Այլ յու- 24
սացեալ եմ 'ի Տէր՝ թէ և ես իսկ ընդ հուպ
եկից. *Բայց լաւ համարեցայ զեպափրո- 25
դիտոս զեղբայր՝ և զգործակից և զզինուո-
րակից իմ, զձեր առաքեալ, և զպաշտօնեայ
իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ. *Քան- 26
զի և ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել
զամենեսին զձեզ. և հոգայր՝ զի ձեր լուեալ
էր թէ հիւանդացաւ. *Եւ արդարև հիւանդա- 27
ցաւ մերձ 'ի մահ. այլ Աստուած ողորմեցաւ նմա.
ոչ նմա միայն, այլև ինձ՝ զի մի տրտմութիւն
'ի վերայ տրտմութեան կրիցեմ. *Արդ՝ փութա- 28
պէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսան-
գամ ուրախ լինիջիք. և ես առանց տրտմու-
թեան եղէց. *Ընկալջիք զնա 'ի Տէր ամենայն խըն- 29
դութեամբ, և զայնպիսին առ պատուականս
ունիջիք. *զի վասն գործոյ Քրիստոսի մինչև 'ի մահ 30
մերձեցաւ, գուն գործեալ ոգւոյն չափ,
զի լցցէ զձեր պակասութիւն իմոյ սպասաւո-
րութեան.

ՎԵՐՋ

Գ.Լ.

## ԳԼ. Գ.

1 Այսուհետեւ եղբարք իմ, ուրախ լերուք
'ի տէր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ
դանդաղելի է, եւ ձեզ կարի զգուշալի.
2 * Զգոյշ եղերուք 'ի շանց անտի. զգոյշ ե-
ղերուք 'ի չար մշակաց անտի. զգոյշ եղե-
3 րուք 'ի կրճատութենէ անտի. * Զի թլփա-
տութիւն մեք եմք, որ հոգւովն այ պաշտեմք,
եւ պարծիմք 'ի քս յս, եւ ոչ 'ի մարմին պան-
4 ծացեալ եմք. * Թէպէտ եւ ես իսկ զնոյն
վստահութիւն ունիմ 'ի մարմնի, եթէ ոք հա-
մարիցի այլազգ վստահ լինել 'ի մարմնի, ա-
5 ռաւել եւս ես. * Թլփատութիւն ութօրեայ.
յազգէ իսրայէլի 'ի ցեղէ բենիամենի. եբրայե-
ցի յեբրայեցւոյ. ըստ օրինացն փարիսեցի. || Գործ.
6 * ըստ նախանձայոյզն լինելոյ հալածէի զե- 23. 6.
կեղեցին. ըստ արդարութեան օրինացն լեալ անա-
7 րատ. * Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն վնաս
8 համարիմ վն քի. * Այլ եւ համարիմ իսկ
զամ վնաս՝ վն առաւել գիտութեան յի քի
տն մերոյ. վասն որոյ յամէ զրկեցայ՝ եւ հա-
9 մարիմ կղկղանս, զի զքս շահեցայց, * եւ
գտայց 'ի նմա. իբրեւ ոչ եթէ զիմ ինչ ար-
դարութիւն՝ որ յօրինաց անտի է՝ ունիցիմ,
այլ զհաւատոցն քի, որ յայ արդարութիւն
10 է. * Հաւատովք ճանաչել զնա՝ եւ զզօրութիւն
յարութեան նր՝ եւ զհաղորդութիւն չարչարանաց
11 նր, կերպարանակից լինել մահու նր. * Թէ
12 ոպ հասից 'ի մեռելոցն յարութիւն. * Ոչ ոչ
եթէ արդէն առեալ իցէ, կամ արդէն կա-
տարեալ իցեմ. զհետ մտեալ եմ թէ հա-

սից,

ւոց, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ
՚ի քսէ յսէ ։ *Եղբարք՝ ես ոչ համարիմ 13
զանձն իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ
է՝ զի զառ ՚ի յետոյսն մոռացեալ է, եւ ՚ի յա-
ռաջադէմսն նկրտեալ եմ. * ուշ եդեալ՝ ըն- 14
թանամ ՚ի կէտ կոչմանն այ ՚ի քս յս ։ *Ա- 15
սուհետեւ՝ որ միանգամ կատարեալքդ էք՝
զայս խորհեսցարուք. եւ եթէ այլ ազգ ինչ
խորհիցիք՝ սակայն եւ զայն ած ձեզ յայտ-
նեսցէ ։ *Բայց յոր ժամանեցաքս՝ զայն 16
խորհել՝ եւ սմին կանոնի միաբան լինել ։
*Նմանօղք ինձ եղիջիք եղբարք՝ եւ դիտա- 17
ջիք զայնպիսիսն, որ այնպէս գնայցեն,
Բհ—Հ. ոպ ունիքդ զմեզ ձեզ օրինակ ։ *Զի բա- 18
16. 17. զումք գնան՝ զորոց բզմ անգամ ասէի ձեզ.
բայց արդ եւ լալով իսկ ասեմ, զթշնամեաց
խաչին քսի. * որոց կատարածն կորուստ է. 19
որոց ած որովայնն իւրեանց է. եւ փառք ա-
մօթն իւրեանց, որք զերկրաւորս եւ եթ խոր-
հին ։ *Այլ մեր առաքինութիւն յերկինս է, 20
ուստի եւ փրկչին ակն ունիմք տն յսի քսի.
* որ նորոգեսցէ զմարմին խոնարհութե մե- 21
րոյ կերպարանակից լինել մարմնոյ փառաց
իւրոց, ըստ զօրութեն՝ առ ՚ի կարօղ լինելոյ
հնազանդեցուցանել ՃԷ իւրեւ զամ ։

## ԳԼ. Դ.

Այսուհետեւ եղբարք իմ սիրելիք եւ անձ- 1
կալիք, ուրախութիւն իմ եւ պսակ. այս- 2
պէս հաստատուն կացէք ՚ի տր՝ սիրելիք ։
*Զեւոդիա աղաչեմ եւ զսիւնտիքէ, աղաչեմ
զնոյն խորհել ՚ի տր ։ *Այո՛ աղաչեմ եւ զք- 3
քեզ՝

քեզ՝ մշակերիմ իմ եւ լծակից, եւ դու օգնա-
կան լինիջիր նոցա՝ որք յաւետարանին նահա-
տակեցան ընդ իս Կղեմայիւ հանդերձ՝ եւ այ-
լովք գործակցօք իմովք. որոց անուանքն
4 են ՚ի դպրութեան կենաց: *Ուրախ լերուք ՚ի
տր յամ ժամ. դարձեալ ասեմ՝ ուրախ լե-
5 րուք: *Հեզութիւն ձեր յայտնի լիցի ամե-
6 նայն մարդկան. տր մերձ է: *Մի ինչ հո-
գայք. այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուա-
ծովք, գոհութբ խնդրուածք ձեր յայտնի
7 լիցին առ ած: *Եւ խաղաղութին այ՝ որ ՚ի
վեր է քան զամ միտս, պահեսցէ զսիրտս
ձեր եւ զմիտս ՚ի քս յս:
8 *Այսուհետեւ եղբարք՝ որ ինչ ճշմարտութի Գ. Կ
է, որ ինչ պարկեշտութի, որ ինչ արդարութի՝
որ ինչ սրբութի, որ ինչ սիրով, որ ինչ համ-
բաւ բարեաց, որ ինչ քաջութբ, որ ինչ գո-
9 վութի, զայն խորհեսջիք: *Զոր ուսարուքն
եւ ընկալարուք եւ լուայք եւ տեսէք յիս, զայն
արարէք. եւ ած խաղաղութեն եղիցի ընդ ձեզ:
10 *Ուրախ եղէ ես ՚ի տր յոյժ. զի եւ դուք
զմտաւ ածիք հոգալ ինչ վս իմ, որպ եւ հո-
11 գայիքն. բայց բարբառելիք ինն է: *Ոչ եթէ
առ կարօտութեն ինչ ասեմ. զի ես ուսայ՝ ո-
12 րովք կարեմ բաւական լինել: *Գիտեմ
նուաստել, գիտեմ առաւելուլ. յամենայնի
ամենեւին խելամուտ եմ, եւ յագել՝ եւ քաղ-
13 ցնուլ. եւ առաւելուլ՝ եւ նուաստել: *Զա-
մենայնի կարող եմ այնու՝ որ զօրացոյցն զիս:
14 *Բայց բարւոք արարէք՝ զի կցորդ եղերուք
15 ինձ ՚ի նեղութեան: *Գիտէք եւ դուք փի-
լիպեցիք, զի ՚ի սկզբան աւետարանին ել-

լե

ըն ելի ես 'ի մակեդոնիայ, և ոչ մի եկեղե-
ցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և առ-
նլոյ, բայց միայն դուք. * զի և 'ի Թեսաղո- 16
նիկէ միանգամ և երկիցս զպէտս իմ ետուք
բերել. * Ոչ եթէ խնդրեմ զտուրսն, 17
այլ խնդրեմ զպտուղն, որ յաճախէ 'ի բանս
ձեր. * Ունիմ իմ ամենայն զինչ, և առաւե- 18
լեալ եմ. ընկալայ՝ և լի եմ 'ի ձեռն Եպափ-
Եփեսաց. րոդիտեայ, որ 'ի ձէնջ հոտ անուշից՝ Պա-
Ե. 2. տարագ ընդունելի՝ հաճոյ այ. * Այլ ած 19
իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւ-
րում մեծութեանն՝ փառօք 'ի քս յս. * Այլ այ 20
և Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն. * Ողջոյն տայջիք ամենայն սըր- 21
բոց՝ 'ի քս յս. * Ողջոյն տան ձեզ՝ որ ընդ իս 22
են եղբարքդ. * Ողջոյն տան ձեզ ամ սուրբքդ. 23
մանաւանդ որ 'ի տանէ կայսեր են. * Շ 24
նորհք տն յի քի ընդ ոգւոյդ ձերում. ա-
մէն.

Առ Փիլիպպեցիս՝ գրեցաւ 'ի Հռովմայ 'ի ձեռն
Եպափրոդիտեայ.

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ.

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԱՌ
յսի քի կամօքն այ, եւ տիմո-
2 թէոս եղբայր. *առ կողոսացիս
սուրբս եւ հաւատացեալս եղբարս 'ի քս.
3 *Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յայ հօրէ
մերմէ (եւ 'ի տնէ յսէ քսէ). Գոհանամք Առաւօ-
զայ եւ զհօրէ տն մերոյ յսի քի, յամենայն ւն. Դ. Ժ.
4 ժամ վասն ձեր աղօթս առնեմ. *Լուեալ —թէր.
զհաւատսն ձեր' որ 'ի քս յս տր մեր,
5 եւ զսէրն որ ընդ ամ սուրբս ունիք. *վասն
յուսոյն' որ պահի ձեզ յերկինս. զորմէ լու-
արուք բանիւն ճշմարտութեան աւետարանին,
6 *որ եհաս առ ձեզ. որպէս ընդ ամ աշխարհ
աճէ' եւ պտղաբերէ. նոյն եւ 'ի ձերում միջի.
յօրէ յորմէ լուարուք' եւ ծանեայք զշնորհսն
7 այ ճշմարտութեամբ. *նոյն եւ ուսարուք յեպափ-
րեայ սիրելւոյ ծառայակցէ մերմէ, որ է
8 հաւատարիմ վն ձեր' պաշտօնեայ քի. *որ
9 եւ պատմեաց մեզ զձեր սէրն հոգեւոր. *Վն
այնորիկ եւ մեք յօրէ յորմէ լուաք' ոչ դադա-



րեմք

ընաւք վս ձեր աղօթս առնել՝ և խնդրուածս
մատուցանել. զի լնուցուք զգիտութիւն կա-
մացն նր, ամ իմաստութբ և հոգևոր հան-
Փիլպ. 1. 27. ճարով. * Գնալ ձեզ արժանի տն յամ հա- 10
ճութեան, յամ գործս բարութեան պտղաբերք
1. Թես. 2. 12. և աճեցուցիչք գիտութեամբն այ. * ամ զօրութ 11
զօրացեալ ըստ զօրութեան փառացն նր. յամ
համբերութիւն և երկայնմտութիւն.
Ը. Գ. Ուրախութբ * գոհանալ զՏր Հօրէ՝ որ կո- 12
չեաց զձեզ ՚ի մասն վիճակի սրբոցն ՚ի լոյս.
* որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, 13
և փոխեաց զմեզ յարքայութիւն որդւոյն սի-
րոյ սիրելւոյ. * որով ունիմք զփրկութիւն ա- 14
րեամբն նր, և զթողութիւն մեղաց՝ մարմնովն
նորա. * որ է պատկեր աներևութին այ, 15
Յով. 1. 3. անդրանիկ ամ արարածոց. * Զի նովաւ 16
հաստատեցաւ ամ, որ ինչ յերկինս՝ և որ
ինչ յերկրի, որ երևին՝ և որ ոչն երևին.
եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պե-
տութիւնք, եթէ իշխանութիւնք. ամ ինչ նո-
վաւ՝ և ՚ի նոյն հաստատեցաւ. * Եւ նա է 17
յառաջ քան զամ, և ամ ինչ նովաւ եկաց
բովանդակ. * Եւ նա է գլուխ մարմնոյ ե- 18
Ա. Կոր. 15. 20. կեղեցւոյ. որ է սկիզբն. անդրանիկ ՚ի մե-
ռելոց. զի եղիցի ինքն յամի յառաջացեալ.
Եփես. 1. 5. * Զի ՚ի նմա հաճեցաւ ամ լրումն աստուա- 19
Կող. 2. 9. թեան բնակել. * և նովաւ հաշտեցուցանել 20
զամ ՚ի նոյն. առնել խաղաղութիւն արեամբ
Եփես. 1. 10. խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ և որ ինչ յեր-
կինս. * Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալն 21
էիք, և թշնամիք խորհրդովք ՚ի գործս չա-
րութեան. * այժմ առաջին հաշտեցոյց անդա- 22
մովք

մնի մարմնոյ իւրոյ ՚ի ձեռն մահուան իւրոյ,
յանդիմանել կացուցանել զձեզ սուրբս եւ ան-
23 բիծս եւ անարատս առաջի նր. * եթէ կայ-
ցէք ՚ի հաւատոյն արմատացեալք եւ հաստա-
տեալք. եւ անշարժք ՚ի յուսոյ աւետարա-
նին՝ զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամ արա-
րածս ՚ի ներքոյ երկնից. որոյ եղէ ես պօղոս
պաշտօնեայ։

ԺԴ․

24 * Եւ արդ՝ ուրախ եմ ՚ի չարչարանս իմ վն
ձեր. եւ լնում զպակասութիւն նեղութեանն քսի
՚ի մարմնի իմում վն մարմնոյ նր՝ որ է եկե-
25 ղեցի. * որոյ եղէ ես պօղոս պաշտօնեայ՝ ըս
տնտեսութեանն այ, որ տուեալ է ինձ ՚ի ձեզ
26 կատարել զբանն այ. * զխորհուրդն՝ որ
ծածկեալն էր ՚ի յաւիտենից եւ յազգաց.
27 որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց. * Որոց
կամեցաւ ած ցուցանել, թէ զինչ է մեծու-
թիւն փառաց խորհրդոյ նորա ՚ի հեթանոսս,
28 որ է քս ՚ի ձեզ՝ յոյսն փառաց. * զոր մեք
քարոզեմք. եւ խրատեմք զամ մարդ՝ եւ ու-
սուցանեմք զամ մարդ ամ հոգեւոր իմաս-
տութբ. զի կացուսցուք զամ մարդ կատա-
29 րեալ ՚ի քս յս. * յոր եւ աշխատիմ պատե-
րազմեալ ըստ յաջողութեան նր՝ որ յաջողեալ
է յիս զօրութբ։

ԳԼ․ Բ․

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնումն
ունիմ յանձին վասն ձեր՝ եւ վն լաւոդիկեց-
ւոցն, եւ որոց չեն տեսեալ զերեսս իմ մարմ-
2 նով. * Զի մխիթարեսցին սիրտք նց տեղե-
կացեալք սիրով. եւ յամ մեծութիւն լրութեան
իմաս-

իմաստութեան 'ի գիտութիւն խորհրդոյն այն հօր
'ի քս յս. * յորում ամ գանձք իմաստութեան 3
և գիտութեան ծածկեալ կան։ * Այլ զայս 4
ասեմ, զի մի ոք զձեզ զառանցուցանէ պատիր
Ա. Կորն. բանիւք։ * Զի թէպէտ և մարմնով հե- 5
Ե. Յ. ռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ
իբրև տեսանեմ զկարգն ձեր՝ և զհաստա-
տութիւն հաւատոյն ձերոյ որ 'ի քս յս։ * Արդ՝ 6
այդ ընկալարուք զքս յս զտր. նովին գնաս-
ջիք. * արմատացեալք և շինեալք 'ի նա, 7
և հաստատեալք 'ի հաւատս, որպէս ուսա-
ՎՋՐԶ րուքն՝ առաւելեալք 'ի նովին գոհութբ։
* Զգոյշ լերուք՝ մի ոք իցէ՝ որ զձեզ կողոպ- 8
տիցէ իմաստասիրութբ և սնոտի խաբէու-
թբ, որք ըստ մարդկան աւանդութեան և ըստ
Վեր. տարերց աշխարհիս՝ և ոչ ըստ քի. * Զի 9
Ա. 19. 'ի նմա բնակէ ամ լրումն աստուածութեան մարմ-
նապէս։ * Եւ էք դուք նովաւ լցեալք, որ 10
է գլուխ ամ իշխանութեան և պետութե. * ո- 11
րով թլփատեցարուք հաւատովք զանձեռա-
գործ թլփատութիւն՝ 'ի մերկանալ զանդամս
Հռով. մարմնոյ թլփատութեամբն քսի։ * Թաղեցեալք 12
Զ. 4. ընդ նմին 'ի մկրտութեան, որով և ընդ նմին յա-
րեայք հաւատովք այն ազդեցութեան, որ յա-
Եփես. րոյց զնա 'ի մեռելոց։ * Եւ զձեզ՝ որ եր- 13
Բ. 1. բեալն մեռեալ էիք 'ի մեղս և յանթլփա-
տութեան մարմնոյ ձերոյ, կենդանացոյց ընդ
նմին. շնորհեաց մեզ զամ յանցանս
մեր. * և ջնջեաց զձեռագիր մերոյ հակա- 14
ռակութեան հրամանօքն իւրովք, որ կայր
մեզ հակառակ՝ եբարձ զայն 'ի միջոյ՝ և բևե-
ռեաց ընդ խաչափայտին։ * Մերկեաց զիշ- 15
խա-

խանութիւնս և զպետութիւնս. յայտ յանդիման
խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին իւ-
16 րում ՚ի յարութեան իւրում. *Մի ոք այսու-
հետև զձեզ դատեսցի՝ ուտելով կամ ըմպե-
լով, կամ մասամբք տօնից կամ ամսամտիւք
17 կամ շաբաթուք. *որ են ստուերք հանդեր-
18 ձելոցն. այլ մարմինն քն է. *Մի ոք զձեզ Մտթ. 24. 4.
խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօ- Եփես. 5. 6.
նիւք հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զբօ-
սեալ վարել՝ տարապարտ հպարտացեալ ՚ի
19 մտաց մարմնոյ իւրոյ. *և ոչ ունիցի զգլուխն
քն, ուստի ամ մարմինն յօդիւք և խաղա-
ղեօք տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զա-
20 ճումն այ. *Եթէ մեռարուք ըն քսի ՚ի տա-
րերց աշխարհիս՝ զի՞ ևս իբրև կենդանիս
21 աստէն յաշխարհի կրօնաւորիք. *Մի մեր-
22 ձենար, մի ճաշակեր, մի հուպ լինիր. *որ
է ամենայն ինչ ՚ի պէտս ապականութեան, ըստ
պատուիրանաց և վարդապետութեան մարդ-
23 կան. *որ յիմաստութիւն ինչ համարի,
ինքնակամ կրօնիւք և խոնարհութեամբ և ան-
խայութեամբ մարմնոյ. և ոչ ՚ի պատիւ ինչ լրու-
թեան մարմնոյ.

## ԳԼ. Գ.

1 Եթէ յարերուք ընդ քսի, ապա զվերինսն
խնդրեցէք ուր քն նստի ընդ աջմէ այ.
2 *զվերինսն խորհեցարուք, մի զայս՝ որ յերկ-
3 րի աստ է. *Զի մեռարուք՝ և կեանքն
4 ձեր ծածկեալ են ընդ քսի յայ. *Յոր-
ժամ քն յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ
5 և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք. *Մեռու-
ցէք

նէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս.
Եփես. 'ի բաց ընկեցէք ‖ զպոռնկութիւն զպղծու-
5. 3. թիւն զբիծ զցանկութիւն չարեաց, եւ զագա-
հութիւն՝ որ է կռապաշտութիւն. * Վասն ո- 6
րոյ գայ բարկութիւն այ 'ի վերայ որդւոցն ան-
հնազանդութեան, * որովք եւ դուք երբեմն գը- 7
Հռով. նայիք՝ մինչ կենդանիք էիք 'ի նոսա. * ‖Արդ՝ 8
6. 4. 'ի բաց թօթափեցէք եւ դուք զայն ամենայն,
Եփես. զբարկութիւն զսրտմտութիւն զչարութիւն զհայ-
4. 22. հոյութիւն, զխեղկատակութիւն 'ի բերանոյ ձե-
Եբրա. րոյ. * Մի ստէք միմեանց. մերկացարուք 9
12. 1. զհին մարդն գործովքն իւրովք. * եւ զգե- 10
Ծննդ. ցարուք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն ‖ ըստ
1. 26. պատկերի արարչին իւրոյ. * ուր ոչ է Հրեայ՝ 11
եւ ոչ հեթանոս, թլփատութիւն՝ եւ անթլփա-
տութիւն, խուժ՝ դուժ՝ սկիւթացի՝ ծառայ՝
ազատ. այլ ամենայն եւ յամենայնի Քս.
* Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք 12
այ՝ սուրբք եւ սիրեցեալք՝ զգութ ողորմու-
թիւն զքաղցրութիւն զխոնարհութիւն զհեզու-
Եփես. թիւն զերկայնմտութի, * ‖Ներել միմեանց, 13
4. 32. շնորհել իրերաց. եթէ ուրուք զումեքէ
տրտունջ ինչ իցէ. որպէս Քս շնորհեաց
հեաց ձեզ՝ նոյնպէս եւ դուք. * Այլ 'ի վերայ 14
այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատար-
մանն. * Եւ խաղաղութիւն Քի հաստատես- 15
ցի 'ի սիրտս ձեր, յոր եւ կոչեցարուքն միով
մարմնով.

Ր.Ե Եւ գոհացօղք լինիջիք. զի բանն Քի բը- 16
նակեսցէ 'ի ձեզ առատապէս. ամենայն ի-
մաստութեամբ ուսուցանել եւ խրատել ըզ-
միմեանս. սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ եր-

գովք

գովք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել ՚ի սիրտս
17 ձեր զԱծ ։ * Եւ զամենայն զոր և առնի- 1․Կոր․
ցէք բանիւք և արդեամբք, զամենայն յա- 10․31․
նուն Տն յիսի արասջիք · գոհացեալ լինիջիք
18 զԱյ և զՀօրէ նովաւ ։ * Կանայք՝ հնազանդ Եփե․
լերուք արանց ձերոց, որպէս և վայել է ՚ի 5․ 22․
19 Տր ։ * Արք՝ սիրեցէք զկանայս ձեր, և մի 1․Պետ․ 3․ 1․
20 դառնացուցանէք զնոսա ։ * Որդիք՝ հնա- Եփե․
զանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի՝ զի 6․ 1․
21 այն է հաճոյ առաջի Տն ։ * Հարք՝ մի զայ- Եփե․
րացուցանէք զորդիս ձեր · զի մի տրտմես- 6․ 4․
22 ցին ։ * Ծառայք՝ հնազանդ լերուք տե- Տիտ․
րանց ձերոց յամենայնի · մի առ ականէ ծա- 2․ 9․
ռայութ՝ իբրև մարդահաճոյք · այլ միամ- 1․Պետ․ 2․ 18․
23 տութե՛ սրտի երկիւղել ՚ի Տնէ ։ * Զոր ինչ
առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրև Տն,
24 և ոչ իբրև մարդկան ։ * Գիտասջիք՝ զի ՚ի
Տնէ առնուցուք զհատուցումն ժառանգու-
25 թե ձերոյ · քանզի Տն Քսի ծառայէք ։ * Իսկ Հռով
ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատու- 2․ 6․ 2․ 11․
թեն · զի չիք ակնառութե՛ առաջի նր ։

## ԳԼ ։ Դ․

1 Տեարք՝ զիրաւունս և զհաւասարութի ծա-
ռայից ձերոց շնորհեցէք · գիտասջիք՝ զի և
2 ձեր Տր գոյ յերկինս ։ * Յաղօթս անհեղ Ղուկ․
3 կացէք · արթուն ՚ի նմին գոհութբ ։ * Եւ 18․ 1․
զմեզ աղաւթեցէք միանգամայն և վս մեր · զի 1․Թես․ 5․ 17․
Աճ բացցէ մեզ դուռն բանին, խօսել զխոր- Եփես․
հուրդն Քսի, վասն որոյ և կապեալս իցեմ․ 6․ 19․
4 * զի յայտնի արարից զնա որպէս արժան է
ինձ խօսել ։

* Իմաս-

Դ. Օ. * Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն, 5
զնոյ առեալ զժամանակս. * Բան ձեր 6
Ա Եփե. յամենայն ժամ լի շնորհօք Այ իբրեւ աղի-
5. 15. համեմեալ լիցի, գիտել որպէս արժան իցէ
ձեզ իւրաքանչիւրումեք տալ պատասխանի.
* Զիմս որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամե- 7
Ա Եփե. նայն Տիւքիկոս սիրելի եղբայր՝ եւ հաւա-
6. 21. տարիմ պաշտօնեայ՝ եւ ծառայակից ՚ի Տր.
* զոր առաքեցի առ ձեզ զայս իրի, զի գի- 8
տասջիք վասն մեր. եւ մխիթարեսցէ զսիրտս
Ա Փիլմ. ձեր. * Ոնեսիմաւ հանդերձ եղբարբ հա- 9
1. 10. ւատարմաւ եւ սիրելեաւ՝ որ է ՚ի ձէնջ. զա-
մենայն ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ աստ է.
Ա Գործ. * Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս գերեկից 10
20. 4. իմ, եւ Մարկոս եղբօրորդի Բառնաբայ. վասն
27. 2. որոյ առեք պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ
Փիլմ. ընկալջիք զնա. * Եւ Յիսուս՝ որ անուանեալն 11
1. 24. է Յուստոս, որք են ՚ի թլփատութենէ անտի.
զի դոքա միայն գործակից եղեն ինձ յար-
քայութեն այ, որք եւ եղեն ինձ մխիթա-
րութիւն. * Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ ՚ի 12
ձէնջ ծառայ քի յի է. յամենայն ժամ
պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայ-
ցէք կատարեալք եւ լցեալք յամենայն կամս
այ. * Վկայեմ նմա, զի բազում աշխատու- 13
թիւնս ունի վասն ձեր, եւ վասն Լաւոդիկեցւոցն,
Բ Տիմ. եւ վն այնոցիկ՝ որ յԵրապօլիսն են. * Ող- 14
4. 11. ջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ եւ սիրելի, եւ
Դեմաս. * Ողջոյն տաջիք եղբարցն՝ որ են ՚ի 15
Լաւոդիկիայ եւ Նիմփայ, եւ որ առ տանն եկե-
ղեցւոյն է նորա. * Եւ յորժամ ընթեռնու- 16
ցու առ ձեզ թուղթդ՝ արասջիք զի եւ ՚ի Լա-

ւո

ւոդիկեցւոց եկեղեցւոյն ընթերցջի. եւ զառ
'ի Լաւոդիկեցւոցն՝ զի եւ դուք ընթեռնու-
17 ցուք. * Եւ ասասջիք ցարքիպպոս. զգոյշ
լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար 'ի Տէր,
18 զի զայդ կատարեսցես. * Ողջոյն ձեռամբ
իմով Պօղոսի է. Յուշ լիցին ձեզ կապանքս
իմ. Շնորհք ընդ ձեզ. ամէն.

Առ Կողոսացիս գրեցաւ 'ի Հռովմէ 'ի ձեռն Տիւքի-
կոսի եւ Ովնեսիմայ.



## ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ.

### ԳԼ. Ա.

ԸՆ ՊՕՂՈՍ ԵՒ ՍԻՂՈՒԱՆՈՍ 1
և տիմոթէոս՝ եկեղեցւոյդ Թե-
սաղոնիկեցւոց՝ յած հայր մեր և
'ի տէր յս քս. *Շնորհք ընդ ձեզ և խա- 2
ղաղութիւն. Գոհանամք զայ յամենայն
ժամ վասն ձեր ամենեցուն՝ յիշատակ առ-
նել յաղօթս մեր անդադար. *յիշել զձեր 3
գործն հաւատոյ՝ և զվաստակ սիրոյ՝ և զհ-
համբերութիւն յուսոյ տն մերոյ յսի քսի՝ ա-
ռաջի այ և հօր մերոյ. *Գիտեմք եղբարք 4
սիրելիք յայ զընտրութիւն ձեր. *զի ա- 5
ւետարանն մեր ոչ եղև առ ձեզ միայն բա-
նիւ, այլ և զօրութեամբ՝ և հոգւովն սրբով և
լրութեամբ բազմաւ. որպէս և գիտէք իսկ՝ թէ
որպիսիք եղեաք 'ի միջի ձերում վասն ձեր.
*Եւ դուք նմանողք մեր՝ և տն, ընկա- 6
լեալ զբանն 'ի բազում նեղութեան խնդութբ
հոգւոյն սբյ. *լինել ձեզ օրինակ ամ հա- 7
ւատացելոց, որ են 'ի Մակեդոնիա և յա-
քայիա.

8 քայիա ։ * Զի ի ձէնջ հնչեաց բանն Տեառն ոչ
ոչ միայն ի Մակեդոնիա եւ յԱքայիա, այլ
յամենայն տեղիս հաւատքն ձեր՝ որ առ Աստուած են,
տարածեցան. զի այսուհետեւ ոչինչ է պիտոյ
9 մեզ եւ խօսել ինչ ։ * Զի նոքին իսկ պատ-
մեն վասն մեր, թէ որպէս եղեւ մեզ մուտ առ
ձեզ. եւ զիա՞րդ դարձայք առ Աստուած ի կռոց անտի,
10 ծառայել Աստուծոյ կենդանւոյ եւ ճշմարտի. * եւ
ակն ունել Որդւոյ նորա յերկնից, զոր յարոյց
ի մեռելոց Յիսուս՝ որ փրկելոցն է զմեզ ի բար-
կութենէ անտի՝ որ գալոցն է ։

## ԳԼ․ Բ․

1 Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն մեր ԲՆ ԳԻ
2 առ ձեզ. զի ոչ ընդունայն ինչ եղեւ. * այլ
յառաջագոյն չարչարեալք՝ եւ ‖ թշնամա- ‖ Գործ․ 16․ 23․
նեալք, որպէս եւ դուք իսկ գիտէք. ի մէջ
Փիլիպպեցւոց համարձակեցաք Աստուծով մերով
պատմել ձեզ զաւետարանն Աստուծոյ մեծաւ պա-
3 տերազմաւ ։ * Զի մխիթարութիւն մեր ոչ
ի մոլորութենէ էր՝ եւ ոչ ի պղծութենէ՝ եւ ոչ նեն-
4 գութեամբ. * այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հաւա-
տարիմ լինել աւետարանին, նոյնպէս եւ խօ-
սիմք. ոչ իբրեւ մարդկան հաճոյ լինել՝ այլ
5 Աստուծոյ որ քննէ զսիրտս մեր ։ * Զի ոչ երբէք
բանիւք ողոքանաց եղեաք առ ձեզ, որպէս եւ
դուք իսկ գիտէք. եւ ոչ ի պատճառս ագա-
6 հութեան, այլ եւ Աստուած վկայ է. * եւ ոչ խնդրեցաք
փառս ի մարդկանէ, ոչ ի ձէնջ եւ ոչ յայ-
7 լոց ։ * Կարող էաք իբրեւ զՔրիստոսի առաքեալք
ծանրանալ, այլ եղեաք հեզք ի մէջ ձե-
րում. որպէս դայեակ մի՝ որ սնուցանիցէ
մանու-

մանկունս. * Նոյնպէս եւ մեք գթայաք ՚ի 8
ձեզ. հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն
զաւետարանն Այ, այլ եւ զանձինս մեր. քան-
զի սիրելիք մեր եղերուք. * Յիշէք եղբարք՝ 9
‖ Գործ. զվաստակն մեր եւ զջանս. ‖ զի ցայգ եւ ըն-
20. 34. ցերեկ գործէաք վն չծանրանալոյ ումեք ՚ի
1 Կոր. ձէնջ. եւ քարոզէաք ձեզ զաւետարանն Այ.
4. 12. * Դուք ինքնին վկայէք՝ եւ Ած. ոպ սրբու- 10
2 Թես. թբ եւ արդարութբ եւ անբծութբ՝ ձեզ հաւա-
3. 8. տացելոցդ եղեաք. * որպէս եւ գիտէք իսկ. 11
զի զիւրաքանչիւրոք ՚ի ձէնջ՝ իբրեւ հայր զոր-
դիս՝ * մխիթարէաք եւ սփոփէաք. եւ գնէաք 12
վկայութբ գնալ ձեզ արժանապէս Այ, որ
ՎԵՐՋ կոչեաց զձեզ յիւր արքայութին եւ ՚ի փառս.
* Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱյ ան- 13
պակաս՝ զի առեալ զլուր բանին Այ առ ՚ի
մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդ-
կան, այլ ոպ ճշմարտիւ՝ զբան Այ. որ եւ յա-
ջողեալ իսկ է ՚ի ձեզ հաւատացեալսդ. * Զի 14
դուք նմանօղ եղերուք եղբարք՝ եկեղեցեա-
ցըն Այ՝ որ են ՚ի Հրէաստանի ՚ի Քս Յս. զի
զնոյն չարչարանս չարչարեցայք եւ դուք ՚ի
ձերոց ազգականաց. ոպ եւ նոքայն ՚ի Հրէից.
* որք եւ զՏրն Յս սպանին՝ եւ զմարգարէսն, 15
եւ զմեզ հալածեցին, եւ Այ չհաճոյ էին. եւ
ամն մարդկան հակառակ եղեն. * եւ արգե- 16
լուին զմեզ խօսել հեթանոսաց՝ զի ապրես-
ցին. զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամն
ժամ. քանզի հասեալ է ՚ի վերայ նոցա բար-
կութբ մինչեւ իսպառ.
ԸՕ * Այլ մեք եղբարք՝ թեպէտ եւ որբ մնացաք 17
՚ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝ եւ ոչ սրտ-
տիւ.

տիւք. առաւել ևս փութացաք տեսանել
18 զերեսս ձեր մեծաւ ցանկութբ. *Վասն այ-
սորիկ կամեցայ գալ առ ձեզ ես՝ Պօղոս՝
միանգամ և երկիցս, և խափանեաց զմեզ
19 սատանայ. *Զի՞նչ է մեր յոյս կամ
խնդութի՞ւն կամ պսակ պարծանաց մերոց. և
թէ ոչ դուք ՚ի ո՞ր՝ առաջի Տն մերոյ յսի քսի
20 ՚ի նր գալստեանն. *Զի դուք էք փառք
մեր և խնդութի՞ւն.

## ԳԼ. Գ.

1 Վասն որոյ ոչ ևս ունելով ժոյժ, զի բար-
ւոք թուեցաւ մեզ միայն մնալ յաթէնս.
2 *Եւ առաքեցաք զտիմոթէոս զեղբայր Գործ. 16. 1.
մեր և զգործակից աւետարանին՝ այ և հօրն
քսի, հաստատել զձեզ՝ և մխիթարել վասն
հաւատոյն ձերոյ. ՎԵՐՋ
3 *Զի մի տագնապեսցէք ՚ի նեղութիս յայսմ-
սիկ. քանզի դուք ինքնին իսկ գիտէք, զի ՚ի
4 սոյն կամք. *Քանզի մինչ առ ձեզն իսկ
էաք՝ յառաջագոյն ասէաք ձեզ, թէ նեղու-
թիւնք հասանելոց են ՚ի վերայ մեր. որպէս և ե-
5 ղև իսկ՝ և գիտացէք. *Վասն այնորիկ և
ես զի ոչ ևս ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել
զհաւատսն ձեր. գուցէ արդեօք փորձեաց և
զձեզ փորձիչն, և ընդունայն լինիցի ջանն
6 մեր. *Բայց արդ՝ իբրև եկն տիմոթէոս ՚ի
ձէնջ առ մեզ, և ետ մեզ զաւետիս հաւա-
տոյն ձերոյ և սիրոյ, զի ունիք ՚ի միտ զյի-
շատակս մեր բարեաց յամ ժամ. ցանկա-
ցեալ էք տեսանել զմեզ՝ որպէս և մեք զձեզ.
7 *Վասն այնորիկ մխիթարեցաք ՚ի ձեզ եղ-
բարք՝

բարք՝ 'ի վերայ ամ՟ վշտաց եւ նեղութեանց մե-
րոց՝ 'ի ձեռն հաւատոյն ձերոյ. * Զի այժմ 8
կենդանի եմք՝ եթէ դուք հաստատուն կայ-
ցէք 'ի տր՟. * Զի՞նչ կարեմք գոհութի՟ մա- 9
տուցանել այ՟ վն՟ ձեր, 'ի վերայ ամ՟ խնդու-
թեան, զոր խնդամք վասն ձեր առաջի այ՟ մե-
րոյ. * զցայգ եւ զցերեկ առաւել եւս աղա- 10
չեմք՝ տեսանել զերեսս ձեր, եւ հաստատել
զպակասութի՟ հաւատոյն ձերոյ: * Այլ 11
ինքն ած՟ եւ հայր մեր՝ եւ տր՟ մեր յս՟ քս՟՝ ուղ-
ղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ. * Եւ 12
զձեզ ինքն տր՟ բազմապատիկս եւ առաւելս
արասցէ սիրով ընդ միմեանս եւ առ ամենե-
սին որպ՟ եւ մեք 'ի ձեզ. * հաստատել զսիրտս 13
ձեր անարատս 'ի սրբութեան առաջի այ՟ եւ հօր
մերոյ 'ի գալստեանն տն՟ մերոյ յս՟ քս՟ հան-
դերձ ամ՟ սրբովք իւրովք.

## ԳԼ. Դ.

Գ. Կ Այսուհետեւ եղբարք՝ աղաչեմք զձեզ՝ եւ 1
մխիթարեմք 'ի տր՟ յս՟. զի որպ՟ ընկալարուք
'ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ՝
եւ հաճոյ լինել այ՟. որպէս եւ գնայքդ իսկ,
զի եւս քան զեւս յաւելուցուք 'ի նոյն. * Զի 2
գիտէ՞ք՝ թէ որպիսի պատուիրանս տուաք
‖ Հռով. ձեզ 'ի տր՟ յս՟. * ‖ Զի այս են կամք այ՟, 3
12. 2. սրբութի՟ ձեր. 'ի բաց կալ ձեզ 'ի պոռն-
Եփես. 5. 17. կութէ. * գիտել իւրաքանչիւրումեք 'ի ձէնջ 4
զիւր անօթ ստանալ սրբութ՟ եւ պատուով.
* մի 'ի ցասս ցանկութե՟ որպէս եւ այլ հեթա- 5
նոսք՝ որ ոչ գիտեն զած՟. * Մի զանցանել 6
եւ զրկել յիրերս յայսմիկ զեղբայր իւր. քան-

զի

զի վրէժխնդիր է տէր 'ի վ՛ր ամ՛ն այդորիկ.
որպէս յառաջագոյն ասացաք ձեզ, և եղաք
7 վկայութի՛. * Քանզի ոչ կոչեաց զմեզ ա՛ծ 'ի
8 պղծութի՛ այլ 'ի սրբութի՛. * Այսուհետև որ
անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ զա՛ծ՝ որ
9 և ետ զհոգին ս՛ր 'ի ձեզ. * Այլ վասն եղ-
բայրսիրութե՛ ոչ ինչ պիտոյ գրել առ ձեզ.
‖ զի դուք ինքնին իսկ ա՛ծուսոյցք էք առ մի- ‖ Յ-հ. 13. 34.
10 միմեանս սիրելոյ. * Քանզի և առնէք իսկ ըզ- 15. 12.
գոյն յամ՛ եղբարս որ են յամ՛ կողմանս մա- 1. Յ-հ.
կեդոնիացւոց. Աղաչեմք զձեզ եղբարք՝ ա- 3. 10.
ռաւել ևս առաւելուլ և առատանալ. հան- 4. 12.
11 դարտել, * և գործել զիւրաքանչիւր. և
գործել ձեռօք ձերովք, ո՛պ և պատուիրե-
ցաք ձեզ, զի գնայցէք պարկեշտութ՛բ առ
արտաքինսն՝ և մի ինչ կարօտեալք իցէք.
12 Ոչ կամիմ եղբարք՝ եթէ տգէտք իցէք վ՛ս
ննջեցելոցն. զի մի տրտմիցէք ո՛պ և այլքն՝
13 որոց ոչ գոյ յոյս. * Եթէ հաւատամք՝ եթէ
յ՛ս մեռաւ և յարեաւ. նոյնպէս և ա՛ծ զնն-
ջեցեալսն 'ի ձեռն յ՛ի ածցէ ընդ նմա. Վ:ԻԲ
14 * Զայս ձեզ ասեմք տ՛ն բանիւ, ‖ եթէ մեք՝ 1. Կ-ր.
որ կենդանիքս եմք մնացեալքս՝ 'ի գալստեանն 15. 23.
15 տ՛ն ոչ ժամանեմք ննջեցելոցն. * Զի ինք-
նին տ՛ր հրամանաւ, 'ի ձայն հրեշտակապե-
տի և 'ի փող ա՛յ իջանէ յերկնից. և մեռեալք
16 'ի ք՛ս յարիցեն յառաջագոյն. * Ապա և մեք
որ կենդանիքս մնացեալս իցեմք՝ նոքօք հան-
դերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ
տ՛ն յօդս. և այնպէս յամ՛ ժամ ընդ տ՛ն լի-
17 նիցիմք. * Այսուհետև մխիթարեցէք զմի-
միանս բանիւքս այսոքիւք.

ԳԼ:

## Գլ. Ե.

Գ. Գ. Այլ վասն ժամուց եւ ժամանակաց եղբարք՝ 1
‖ Բ Պետ. չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ։ * ‖ Զի դուք 2
3. 10. ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օրն տն իբ-
Յայտ. րեւ զգող գիշերի՝ այնպէս հասանէ։ * Յոր- 3
3. 3. ժամ ասիցեն թէ խաղաղութիւն եւ շինութիւն է,
16. 15. յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատա-
կումն՝ որպէս երկն յղւոյ, եւ մի ապրեսցին։
* Այլ դուք եղբարք ոչ էք ՚ի խաւարի՝ թէ 4
օրն ձեր իբրեւ զգող ՚ի վր հասանիցէ. * զի 5
ամենեքին դուք որդիք լուսոյ էք՝ եւ որդիք
տունջեան. չեմք գիշերոյ՝ չեմք խաւարի։
* Արդ մի զքնով անկանիցիմք՝ որպէս այլքն. 6
այլ արթունք եւ զուարթունք եղիցուք։
* Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն, եւ որ ար- 7
բենանն՝ գիշերի արբենան։ * Այլ մեք զի 8
‖ Եսայ. տունջեան եմք, արթունք եղիցուք, ‖ եւ ըզ-
59. 17. գեցուցուք զզրահն հաւատոյ եւ զսիրոյ, եւ
Եփես. դիցուք զսաղաւարտն յուսոյն փրկութեան. * Զի 9
6. 14. ոչ եդ զմեզ ած ՚ի բարկութիւն, այլ ՚ի փրկութիւն
Ե 17. կենդանութեան ՚ի ձեռն տն մերոյ յի քի. * որ 10
մեռաւն վասն մեր. զի եթէ արթունք իցեմք՝
եւ եթէ ննջիցեմք, նովաւ համագերձ կեց-
ցուք։ * Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս, 11
եւ շինեցէք զիրեարս՝ որպէս եւ առնէքդ իսկ։
Գ. Զ. * Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զվաս- 12
տակաւորս եւ զվերակացուս ձեր ՚ի տր, եւ
զխրատիչս ձեր։ * Եւ համարեցարուք զնո 13
արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա.
խաղաղութիւն արարէք ընդ միմեանս։ * Աղա- 14
չեմք զձեզ եղբարք՝ խրատեցէք զստահակս,

մխի-

մխիթարեցէք զկարճամիտս, պատսպարան
լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ
15 ամենեսեան: * ‖Զգոյշ լերուք՝ գուցէ ոք ‖Առակ.
չարի չար հատուցանիցէ. այլ յամ ժամ 17. 13.
զբարեաց զհետ երթայք առ միմեանս եւ առ 20. 22.
16 ամենեսեան: * Յամենայն ժամ ուրախ լե- Հռով. 12. 17.
17 րուք: * ‖Անդադար աղօթս արարէք: * Յա- 1. Պետ. 3. 9.
18 մենայնի գոհացարուք. զի այս են կամք այ ‖Ղուկ.
19 քսի յսի 'ի ձեզ: * Զհոգին մի շիջուցա- 18. 1.
20 նէք: * Զմարգարէութիւնս մի արհամարհէք: Կող. 4. 2.
21 * Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ըն-
22 կալարուք: * Յամենայն իրաց չարաց 'ի բաց
23 կացէք: * Եւ ինքն ած խաղաղութե սուրբ
արասցէ զձեզ համօրէնս. եւ բովանդակ ձեր
ոգի եւ շունչ եւ մարմին՝ անարատ 'ի գա-
24 լուստն տն մերոյ յսի քսի պահեսցի: * ‖Հա- ‖1. Կոր.
ւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ եւ արաս- 1. 9.
25 ցէ զնոյն: * Եղբարք աղօթս արարէք եւ 'ի
26 մեր վերայ: * Ողջոյն տայջիք եղբարց ամե-
27 նեցուն 'ի համբոյր սրբութե: * Երդմնեցու-
ցանեմ զձեզ 'ի տր՝ ընթեռնուլ զթուղթդ
28 առաջի ամ եղբարց սրբոց: * Շնորհք տն
մերոյ յսի քսի ընդ ձեզ. ամէն:

Առ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթն՝ գրեցաւ յԱթենայ:

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ
## ԵՐԿՐՈՐԴ.

### ԳԼ. Ա.

Դ. Կ

Պօղոս եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս՝ եկե- 1
ղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱծ Հայր
մեր եւ ՚ի Տէր Յս Քս ։ * Շնորհք ընդ ձեզ եւ 2
խաղաղութիւն յԱյ Հօրէ մերմէ, եւ ՚ի Տեառնէ
Յսէ Քսէ ։ * Գոհանալ պարտիմք զԱյ յամ 3
ժամ վասն ձեր եղբարք՝ որպէս եւ արժան
իսկ է. զի եւս քան զեւս աճէ հաւատքն ձեր,
եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ամենեցուն
ձեր առ միմեանս ։ * Որպէս եւ մեզ ձեօք 4
պարծել յեկեղեցիսն Այ՝ վասն համբերութեան
ձերոյ եւ հաւատոյ՝ յամ հալածանս ձեր եւ
՚ի նեղութիս, որում դուքն համբերէք. * յա- 5
րինակ արդար դատաստանին Այ. արժանի
լինել ձեզ արքայութեանն Այ, վն որոյ եւ զճգնու-
թիդ կրէք. * Եթէ պարտ է առաջի Այ՝ հա- 6
տուցանել նեղչացն ձերոց նեղութի. * եւ 7
ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ ՚ի յայտ-
նութեանն Տն մերոյ Յսի, յերկնից հրեշտակօք
զօրութեան իւրոյ. * ՚ի բոց հրոյ առնուլ ըղ- 8
վրէժս յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զԱծ, եւ

որ

որ ոչ հնազանդին աւետարանին Տն մերոյ
9 Յի Քի. * որք տայցեն վրէժս 'ի սատա-
կումն յաւիտենից՝ յերեսաց Տն՝ և 'ի փառաց
10 զօրութեն նր. * յորժամ գայցէ փառաւոր
լինել 'ի մէջ սրբոց իւրոց, և սքանչելի 'ի
մէջ ամենայն հաւատացելոց. զի հաւատա-
րիմ եղև վկայութին մեր 'ի վր ձեր յաւուր
11 յայնմիկ. * Վասն որոյ և աղօթս առնեմք վս ձեր
յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արա-
սցէ կոչմանն ձերում Ած մեր՝ մինչև լցցէ զա-
մենայն հաճութին բարութե, և զգործս հա-
12 ւատոցն զօրութե. * զի փառաւոր լիցի ա-
նուն Տն մերոյ Յի Քի 'ի ձեզ՝ և դուք 'ի նմ,
ըստ շնորհացն Այ մերոյ և Տն Յի Քի.

## ԳԼ. Բ.

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ վասն գալստեանն Դ. Գ.
Տն մերոյ Յի Քի, և մերոյ ժողովելոյն առ
2 նա. * մի վաղվաղակի խռովել ձեզ 'ի մտաց՝
և մի զարհուրել, մի հոգւով և մի բանիւ
և մի թղթովք՝ իբրև թէ 'ի մէնջ. որպէս
3 թէ եկեալ հասեալ իցէ օրն Տն. * Մի ոք || Եփե. 5. 6.
զձեզ խաբեսցէ՝ և մի իւիք իրօք. զի եթէ
ոչ նախ եկեսցէ ապստամբութին, և յայտ-
նեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կո-
4 րստեան, * հակառակորդն հպարտացեալ
'ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ
Ած, կամ պաշտօն. մինչև նստել նմա 'ի
տաճարին Այ, և ցուցանել զանձն թէ Ած
5 իցէ. * Ոչ յիշէք զի մինչ առ ձեզն իսկ էի՝
6 ասէի զայս. * Եւ արդ դուք խափանիչն գիտէք
զայն՝ որ ունին յայտնել նմա յիւրում ժա-

մա-

մանուկք ։ * Զի խորհուրդն անօրէնութեան 7
արդէն իսկ զօրանայ. բայց յայնժամ մինչ 'ի
միջոյ բարձցի՝ որ այժմդ ունի ։ * Եւ ապա 8
Ե սայ. յայտնեսցի անօրէնն. Զոր տ̃ր յ̃ս սպա_
ԺԱ. 4. նեսցէ հոգւով բերանոյ իւրոյ, և խափա_
նեսցէ յայտնութ̃բ գալստեանն իւրոյ ։ * Որոյ 9
գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է,
ամենայն զօրութ̃բ և նշանօք և արուեստիւք
ստովք, * և ամ̃ պատրանօք անիրաւութե̃ 10
'ի վերայ կորուսելոյն. փոխանակ զի զսէրն
Ճշմարտութե̃ ոչ ընկալան՝ զի ապրեսցին, և
վասն այնորիկ առաքեսցէ նց̃ ա̃ծ ազդեցու̃ի
մոլորութե̃ հաւատալ նց̃ ստութեն ։ * Զի 11
դատապարտեսցին ամենեքեան՝ որ ոչ հա_
ւատացին Ճշմարտութեն, այլ հաճեցան ը̃
անօրէնութիւն ։ * Այլ մեք պարտիմք գո_ 12
հանալ զն̃յ յա̃մ ժամ վ̃ս ձեր եղբարք սիրե_
ցեալք 'ի տնէ. զի ընտրեաց զձեզ ա̃ծ 'ի
սկզբանէ 'ի փրկութ̃ի սրբութ̃բ հոգւոյն՝ և
հաւատովքն Ճշմարտութե̃. * յոր և կոչեաց 13
զձեզ աւետարանաւն մերով 'ի փրկու̃ե փա_
ռացն տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի ։ * Այսուհետև 14
եղբարք հաստատո՛ւն կացէք՝ և պինդ կալա_
րուք զաւանդութիւնն՝ զոր ուսարուք, եթէ
բանիւ և եթէ թղթով մերով ։ * Այլ ինքն 15
տ̃ր մեր յ̃ս ք̃ս և ա̃ծ և հայր մեր, որ սի_
րեաց զմեզ՝ և ետ մեզ մխիթարութ̃ի յաւի_
տենից՝ և յոյս բարեաց շնորհօք, * մխիթա_ 16
րեսցէ զսիրտս ձեր՝ և հաստատեսցէ յա̃մ
բանս և 'ի գործս բարութե̃ ։

## ԳԼ: Գ·

1 Այսուհետեւ եղբարք՝ ‖ աղօթս արարէք 'ի Գ· Օ·
վերայ մեր, զի բանն Տն ընթասցի· եւ ‖ Եփե· 
փառաւոր լինիցի յամենայն տեղիս՝ որպէս եւ 6· 19·
2 առ ձեզ· * զի ապրեսցուք յանօրինաց եւ Կողո·
յանզգամաց մարդկանց· զի ոչ ամենեցուն են 4· 3·
3 հաւատք։ * Այլ հաւատարիմ է Տէր, որ եւ
հաստատեսցէ զձեզ՝ եւ պահեսցէ 'ի չարէ
4 անտի։ * Վստահ եմք 'ի ձեզ տէրամբ, թէ
զոր պատուիրեցաքն ձեզ, եւ առնէք՝ եւ առ-
5 նիցէք։ * Այլ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր 'ի
6 սէրն այ՝ եւ 'ի համբերութիւն քի։ * Պատ-
ուիրեմ ձեզ եղբարք յանուն Տն մերոյ յի
քի, խորշել ձեզ յամենայն եղբօրէ՝ որ ստա-
հակն գնայցէ· եւ ոչ ըստ աւանդութեանն՝
7 զոր ընկալարուք 'ի մէնջ։ * Զի դուք ինք-
նին գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ նմա-
նել մեզ· եւ ոչ երբեք ստահակեցաք առ
8 ձեզ· * ‖ եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք, այլ ‖ Գործ·
ջանիւ եւ վաստակով զցայգ եւ զցերեկ գոր- 20· 34·
ծեաք՝ վասն չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ։ 1· Կոր· 4· 12·
9 * Ոչ եթէ չունէաք իշխանութիւն· այլ զի զան- 1· Թես·
ձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմանօղս լինել 2· 9·
10 մեզ։ * Քանզի մինչդեռ առ ձեզն իսկ էաք՝
զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամիցի
11 գործել՝ եւ կերիցէ մի։ * Արդ՝ լսեմք զո-
մանց 'ի ձէնջ՝ թէ ստահակութեամբ գը-
նան· գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ՝
12 հետաքրքրիր շրջին։ * Այնպիսեացն պատ-
ուէր տամք՝ եւ աղաչեմք 'ի Տր յս քս, զի
հանդարտութեամբ գործեսցեն՝ եւ զիւրեանց
հաց

Գաղատ. հաց կերիցեն։ * Եւ դուք եղբարք՝ մի 13
6. 9. ձանձրանայք զբարիս գործել։ * Ապա ե- 14
թէ ոչ ոք հնազանդեսցի բանիս մերում
թղթովդ այդուիկ, դուք նշանակեսջիք ըղ-
Ա.Կորն. նա ։ եւ մի խառնակեսջիք ընդ նմա՝ զի պատ-
5. 9. կառեսցէ։ * Բայց մի իբրեւ զթշնամի հա- 15
մարիջիք՝ այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր։ 16
* Եւ ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խա-
ղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս։ 17
Տր ընդ ամենեսին ընդ ձեզ։ * Ողջոյնս իմով
ձեռամբս Պօղոսի է, որ է նշանակ։ յամենայն 18
թուղթս այսպէս գրեմ։ * Շնորհք Տն մե-
րոյ Յի Քի ընդ ամենեսին ձեզ։ ամէն։

Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ՝ գրեցաւ յԱթենայ։

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ.

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ Ա.Կ
յսի քսի՝ ըստ հրամանի փրկչին մե-
րոյ այ եւ քսի յսի յուսոյն մերոյ.
2 * տիմոթեայ որդւոյ սիրելւոյ հաւատովք.
շնորհք ողորմութիւն խաղաղութիւն յայ
3 հօրէ եւ 'ի տնէ մերմէ յսէ քսէ : * Որպէս
աղաչեցի զքեզ կալ յեփեսոս՝ մինչ երթայ-
յին 'ի մակեդոնիա. զի պատուէր տացես
4 ոմանց չլինել աստարուսմունս, * ‖ Եւ չհայ- ‖ Ա Տիմ.
ել յառասպելս եւ 'ի տոհմաբանութիւնս անչափս. Դ. 7.
որ մանաւանդ խնդիրս յուզեն, եւ ոչ զտն- Ա. Տիտ. Ա. 14.
5 տեսութիւն այ հաւատովք : * Վախճանի Տիտ.
գլուխ պատուիրանին սէր է, 'ի սրբ սրտէ՝ եւ Գ. 9.
'ի մտաց բարեաց՝ եւ յանկեղծաւոր հաւա-
6 տոց : * Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտո-
7 րեալք յունայնութիւն բանից : * Կամին լի-
նել վարդապետք օրինաց. մինչեւ ոչ իմա-
նան զինչ խօսին՝ եւ ոչ վասն որոյ պնդեալ
8 են : * ‖ Գիտեմք՝ եթէ բարւոք են օրէնք՝ ‖ Հռովմ.
9 եթէ որ զնա օրինաւոր կիրեսցէ : * Նայց զայս Է. 12.
գի-

գիտասցէ զի 'ի վ՟ր արդարոյ օրէնք ոչ կան,
այլ 'ի վ՟ր անօրինաց եւ անհնազանդից՝ ամ-
պարշտաց եւ մեղաւորաց՝ անսրբոց եւ պղ-
ծոց, զհայր եւ զմայր անարգողաց, մարդա-
պանաց, * պոռնկաց արուագիտաց՝ մարդե- 10
լուզաց ստոց ստերդմնաց. եւ եթէ այլ ինչ
իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեան.
* որ ըստ աւետարանին փառաց երանելւոյն այ 11
ՎԵՐՋ է, որում եղէ ես հաւատարիմ։
* Շնորհս ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս 12
'ի ք՟ս յս 'ի տր մեր. զի հաւատարիմ համա-
րեցաւ կարգել 'ի սպասաւորութիւն. * որ յա- 13
ռաջագոյն հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թըշ-
նամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն
յանգիտութեան եւ յանհաւատութեան գործէի։
* Այլ առաւել եղեն շնորհք տն մերոյ հա- 14
ւատովքն եւ սիրովն որ 'ի ք՟ս յս։ * Հաւա- 15
տարիմ է բանս՝ եւ ամ՟ ընդունելութեան արժա-
‖ Մատթ. 9. 13. Մրկ. 2. 17. նի է. ‖ զի ք՟ս յս եկն յաշխարհ փրկել զմե-
ղաւորս, որոց գլուխն ես եմ։ * Այլ վասն 16
այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յիս ե-
ցոյց յս ք՟ս զամ՟ երկայնմտութիւն յօրինակ
այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն 'ի նա, 'ի
կեանսն յաւիտենից։ * Այլ թագաւորին 17
յաւիտենից՝ անեղծի եւ աներեւութի, միոյն
այ՝ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։ * Զայս պատուիրան աւանդեմ 18
քեզ՝ որդեակ իմ տիմոթէոս, ըստ կանխելոց
'ի քեզ մարգարէութեանցն. զի դու զինուորի-
ցես նոքօք զգեղեցիկ զինուորութիւն. * ու- 19
նիցիս հաւատս սրբովք մտօք, զոր ոմանց
մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւաբեկեցան
'ի

20 'ի հաւատս. Յորոց մասնի են Հիմենեոս՝ եւ Ա- Բ.Տիմ.
ղեքսանդրոս, զորս մատնեցի սատանայի, 2. 17.
զի խրատեսցին չհայհոյել: 4. 14.

## ԳԼ. Բ.

1 Եւ արդ՝ աղաչեմ, նախ քան զամ առնել
աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս՝ գոհու-
2 թիւնս վս ամ մարդկան. * Մանաւանդ վս
թագաւորաց եւ ամ իշխանաց. զի խաղաղու-
թբ եւ հանդարտութբ վարեսցուք զկեանս
3 մեր, ամ ածպաշտութբ եւ սրբութբ. * Զի
այն է բարի եւ ընդունելի առաջի փրկչին մե-
4 րոյ այ. * որ զամ մարդիկ կամի զի կեցցեն՝
5 եւ 'ի գիտութի ճշմարտութե եկեսցեն. * Զի
մի է այ, եւ մի միջնորդ այ եւ մարդկան՝ մարդ
6 յս քս. * որ ետ զանձն փրկանս ընդ ամենե-
7 ցուն՝ վկայութի ժամանակաց իւրոց. * Յոր
եդայ ես քարոզ եւ առաքեալ. ճշմարիտ աս-
եմ 'ի քս՝ եւ ոչ ստեմ, եղէ վարդապետ հե-
թանոսաց հաւատովք եւ ճշմարտութբ.
8 * Կամիմ՝ զի արք կայցեն յաղօթս յամ տե- Բ.Գ.
ղիս. բառնայցեն զսր ձեռս 'ի վեր առանց
9 բարկութե եւ երկմտութե. * Նոյնպէս եւ Ա.Պետ.
կանայք 'ի զարդ խոնարհութե ակնածութբ 3. 3.
եւ զգաստութբ զարդարել զանձինս. մի 'ի
հիւս ոսկեմանս ընդելուզեալս մարգար-
10 տովք, կմ 'ի հանդերձս պաճուճեալս. * այլ
որպէս վայելէ կանանց՝ զածպաշտութի յանձն ա-
11 ռելոց գործովք բարութե. * Կին մարդ զա-
12 ծութբ ուսցի՝ ամ հնազանդութբ. * Եւ Ա.Կոր.
ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, եւ 14. 34.
ոչ ճոխանալ լինել քան զայր մարդ. այլ
'ի

‖Ծնն. 'ի լռութեան կալ: *Զի Ադամ նախ ստեղ- 13
1. 27. ծաւ՝ և ապա Եւայ: *Եւ Ադամ ոչ պատրե- 14
‖Ծնն. 3. 6. ցաւ՝ այլ կինն պատրեցաւ և յանցեաւ. *բայց 15
կեցցէ վասն որդեծնութեան՝ եթէ կացցեն 'ի հա-
ւատս և 'ի սէր և 'ի սրբութիւն պարկեշտութեամբ:

## ԳԼ. Գ.

*Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիսկո- 1
պոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցան-
‖Տիտ. 1. 7. կայ: *Պարտ է եպիսկոպոսին անարատ 2
լինել, միոյ կնոջ այր, հեզ՝ ցած՝ պարկեշտ՝
հիւրասէր՝ ուսուցիչ. *մի թմբրամոլ, մի 3
հարկանօղ, այլ հանդարտ. մի կռուօղ, մի
արծաթասէր. զի իւրում տանն լաւ բար- 4
ւոք վերակացու լինել իցէ. որդեակս ունի-
ցի, որ 'ի հնազանդութեան կայցեն ամ՟ պար-
կեշտութբ. *Ապա եթէ ոք իւրում տանն 5
վերակացու չգիտիցէ լինել, զիարդ եկեղեց-
ւոյ այ՟ խնամակալ լինիցի: *Մի նորահաւա- 6
տունկ, զի մի հպարտացեալ 'ի դատաստան
սատանայի անկանիցի: *Այլ պարտ է նմա 7
վկայութիւն բարի և յարտաքնոցն ունել. զի
մի 'ի նախատինս անկանիցի՝ և յորոգայթս
սատանայի: *Նոյնպէս և զսարկաւագունս 8
պարկեշտս. մի երկբանս, մի գինեսէրս, մի
ղօշաքաղս. *այլ ունիցին զխորհուրդ հա- 9
ւատոյն 'ի սուրբ միտս: *Նոքա նախ փորձես- 10
ցին, և ապա 'ի պաշտօնն մատիցեն, զի ա-
նարատք իցեն: *Նոյնպէս և կանայք նոցա 11
պարկեշտք. մի չարախօսք, հեզք՝ հաւատա-
րիմք յամ՟ի: *Սարկաւագք լինիցին միոյ կը- 12
նոջ արք. որք որդւոց իւրեանց բարւոք վե-

րա-

13 րակացու լեալ իցեն, և տանց իւրեանց. *զի
որ բարւոքն պաշտիցեն, աստիճան բարի ան-
ձանց իւրեանց շահին, և բազում համարձա-
կութիւն 'ի հաւատսն՝ որ 'ի Քս̃ Յս̃. Վ.Ի.Բ.Զ.
14 *Զայս գրեմ առ քեզ՝ զի ակն ունիմ 'ի մօ-
15 տոյ գալ. *Ապա թէ յամեցից՝ զի գիտաս-
ցես, թէ ո՛րպէս պարտ իցէ քեզ 'ի տան Այ̃ շըր-
ջել. որ է եկեղեցի Այ̃ կենդանւոյ, սիւն և
16 հաստատութիւն ճշմարտութե̃. *Եւ յայտնի իսկ
մեծ է խորհուրդն ածպաշտութե̃. որ երևե-
ցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնե-
ցաւ հրեշտակաց՝ քարոզեցաւ 'ի հեթանոսս՝
հաւատարիմ եղև յաշխ̃ի՝ և վերացաւ փառօք.

## ԳԼ. Դ.

1 Այլ հոգին որ յայտնապէս ասէ. թէ ‖ 'ի Ա.Զ.
ժամանակս յետինս՝ բակեսցեն ոմանք 'ի հա-
ւատոցն. և հայեսցեն յայս մոլորութեան, ‖ 2Տիմ. 3. 1.
2 և 'ի վարդապետութիւնս դիւաց, *կեղծաւո- 2. Պետ.
րու̃թբ ստախօսաց, խարանեալք իւրեանց խըղ- 3. 3.
3 ճիւն մտաց. *որ արգելուցուն յամուսնա- Յուդ.
նալոյ, և մեկնիցեն 'ի կերակրոց՝ զոր Ած̃ 1. 18.
հաստատեաց 'ի վայելել հաւատացելոց, և
որք ծանեալ իցեն 'ի ճշմարտութեն վերայ.
4 *Զի ամ̃ արարածք Այ̃՝ բարի են, և ոչ ինչ
խոտան. մանաւանդ որ գոհու̃թբ ընդու-
5 նիցին. *զի սրբի բանիւն Այ̃՝ և աղօթիւք.
6 *Զայս խրատ տուեալ եղբարց՝ բարւոք
պաշտօնեայ լինիցիս Քի̃ Յի̃, սնանիցիս բա-
նիւք հաւատոց, և բարւոք վարդապետութե̃ն՝
7 զորոյ զհետ իսկ եկեր. *‖ Այլ 'ի պիղծ բա- ‖ Պետ.
նից՝ և յառասպելաց պառաւանց հրաժարեա- 1. 4.
ջիր. 2. Տիմ.
2. 23

Տիմոթ. ջիր։ Այլ կրթեա՛ զանձն քո յածպաշտութիւն.
Ա. Դ. *զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտա֊ 8
կար է. իսկ ածպաշտութիւն առ ամ ինչ օգտա֊
կար է. եւ զաւետիս կենաց ունի՝ զարդիս եւ
զհանդերձելոցն։ *Հաւատարիմ է բանս՝ եւ 9
ամ ընդունելութեան արժանի է։ *Զի 'ի սոյն 10
իսկ վաստակեմք՝ եւ նախատինս յանձն առ֊
նումք. զի յուսացեալ եմք յած կենդանի,
որ է փրկիչ ամ մարդկան, մանաւանդ հա֊
ւատացելոց։ *Պատուէր տացիր զայդ՝ եւ ու֊ 11
սուցանիջիր. *զի մի ոք զքո մանկութիւնդ ար֊ 12
համարհիցէ։

Ը. Կ Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բա֊
նիւք՝ գնացիւք՝ սիրով՝ հաւատովք սրբութբ։
*Մինչեւ գամ ես, միտ դիր ընթերցուածոց 13
մխիթարութե վարդապետութե։ *Մի անփ֊ 14
փոյթ առներ զշնորհացդ՝ որ 'ի քեզ են, որ
տուաւ քեզ մարգարէութբ 'ի ձեռնադրութէ
երիցուն։ *Զայդ խորհեաց՝ եւ 'ի դմին կան֊ 15
խեսջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամենե֊
ցուն յայտնի լիցի։ *Զգոյշ լինիջիր անձին 16
եւ վարդապետութեանդ՝ եւ 'ի դմին յամեսջիր։
զայդ եթէ առնիցես՝ եւ զանձն ապրեցու֊
ցես, եւ զայնոսիկ՝ որ քեզն լսիցեն։

## ԳԼ. Ե.

Զծերն մի պատուհասեսցես, այլ մխիթա֊ 1
րեսջիր իբրեւ զհայր, զերիտասարդս իբրեւ
զեղբարս, *զպառաւունս իբրեւ զմարս, 2
զմանկամարդս իբրեւ զքորս՝ ամենայն սրբ֊
բութբ։ *Զայրիս պատուեա, որ ստոյգ այ֊ 3
րիքն իցեն։ *Ապա թէ ոք այրի՝ որդիս եւ 4
թո

թոռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց
տանց բարի առնել՝ և զփոխարէնս հատու-
ցանել ծնողացն. զի այն է բարի՝ և ընդու-
5 նելի առաջի այ. *Իսկ որ ճշմարտիւ այրին
իցէ. և մնացեալ յուսացեալ յած, և կան-
խեալ յաղօթս և 'ի խնդրուածս զցայգ և
6 զցերեկ. *Իսկ զեղխ այրին՝ կենդանւոյն
7 մեռեալ է. *Զայս պատուիրեա՛ զի անա-
8 րատք իցեն. *Իսկ եթէ ոք իւրոց՝ և մա-
նաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, 'ի
հաւատոցն ուրացեալ է՝ և չար ևս քան զան-
9 հաւատն է. *Այրի ը̃ այրիս անուանես-
ցի, որ չիցէ պակաս 'ի վաթսնամենից, միոյ
10 առն կին լեալ. *և 'ի գործս բարիս վկայեալ,
եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս
ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ
իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, ե-
թէ զամ̃ գործոց բարեաց զհետ երթեալ ի-
11 ցէ. *Այլ 'ի մանկամարդաց այրեացն հրա-
ժարեա՛, զի յորժամ խայտան զքսիւ՝ ամուս-
12 նանալ կամին. *իսկ զդատաստանս ընդու-
նին, զի զառաջին հաւատն արհամարհե-
13 ցին. *Միանգամայն և դատարկանձունք
ուսանին՝ շրջօղք տանէ 'ի տուն. և ոչ միայն
դատարկք, այլ և փացուք և հետաքրքիրք.
14 և խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ. *Կամիմ ըզ-
մանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնա-
նել, տանուտէրս լինել, և մի ինչ պատճառս
տալ հակառակորդին 'ի հայհոյութե̃ աղագս.
15 *Զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զհետ
16 սատանայի. *Եթէ ոք հաւատացեալ՝ այ-
րիս ունիցի՝ բաւական լիցի նմա, և մի ծան-
րաս-

րասցի եկեղեցւոյն. զի ճշմարիտ այրեացն
բաւական լինիցի։
ԲՒԲ. * Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ 17
կրկին պատուոյ արժանի եղիցին. մանա-
ւանդ որ աշխատին բանիւ և վարդապե-
Բ. Օրէ. տութեամբ։ * Քանզի ասէ գիր. Մի կապես- 18
25. 4. ցես զցռուկ եզին կալոտւոյ. և արժանի է
Ա. Կոր. 9. 9. մշակն վարձու իւրոյ։ * Զերիցուէ չարա- 19
Մատթ. 10. 10. խօսուէ մի ընդունիցիս. բայց եթէ երկուք՝
և երիւք վկայիւք։ * Իսկ որ մեղանչենն՝ ա- 20
Ղուկ. 10. 7. ռաջի ամենեցուն յանդիմանեա, զի և այլքն
երկիցեն։ * Վկայեմ դնեմ առաջի այ և 21
յիսի քսի՝ և ընտրելոց հրեշտակաց, զի զայդ
պահեսցես առանց մտահաճութե. մի ինչ առ-
նել աչառանօք։ * Ձեռս վաղվաղակի յումեք 22
մի դնիցես, և մի կցորդ լինիցիս մեղաց
օտարաց. զանձն քո սուրբ պահեսջիր։ * Մի այ- 23
սուհետև մի ջուր եւեթ ըմպիցես՝ այլ սակա-
ւիկ մի և գինի խառնեսջիր վս ստամոքսի և
ստէպ հիւանդութեց։ * Այն մարդք՝ որոց մեղ- 24
քն յայտնի են՝ և յառաջագոյն հասեալ՝ի
դատաստան, և են՝ որոց զկնի երթան։ * Այս- 25
պէս և բարի գործքն յայտնի են. և որ այլ
ազգ ես ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն։

## ԳԼ. Զ.

Որ միանգամ ը̃ լծով ծառայութեան իցեն, զիւ- 1
րաքանչիւր տեարս պատուոյ արժանի հա-
մարեսցին. զի մի անուն այ և վարդապե-
տութին հայհոյեսցի։ * Իսկ որ հաւատացեալ 2
տեարս ունիցին՝ մի արհամարհեսցեն, զի եղ-
բարք են. այլ առաւել ծառայեսցեն՝ զի հա-

ւա-

ւատացեալքն են և սիրունք. որք զբարերա-
րութեանն յանձինս ունիցին. զայս ուսուցանիջիր՝
3 և մխիթարեսջիր. * Իսկ եթէ ոք այլազգ-
ինչ ուսուցանիցէ, և ոչ մատուցէ ողջմտութեան
բանից Տն մերոյ Յի Քի, և ըստ ածպաշտութեան
4 վարդապետութեան. * այնպիսին հպարտա-
ցեալ է, և ոչինչ ոչ գիտէ. այլ տառապի ՚ի խնդ-
իրս և ՚ի բանս հակառակութեան. ուստի լինին
նախանձ հեռ հայհոյութիւն կարծիք չարեաց,
5 * խարդախութիւնք ապականելոց մտաց մարդ-
կան՝ և օտարացելոց ՚ի ճշմարտութենէ անտի,
որ շահավաճառ համարին զածպաշտութիւն.
բայց դու մերժեսջիր յայնպիսեաց.
6 * Այլ շահավաճառ մեծ ածպաշտութիւն է Ա. Օ.
7 բաւականութեամբ հանդերձ. * Զի ոչ բերաք Յոբ.
ինչ յաշխարհս՝ և ոչ տանել ինչ կարասցուք. 1. 21.
8 * Այլ ունիմք կերակուր և հանդերձս, և Ժող.
9 այնու շատասցուք. * Իսկ որք կամին մեծա- 5. 14.
նալ՝ անկանին ՚ի փորձութիւն և յորոգայթ, և ՚ի Առակ. 27. 26.
բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս.
որք ընկղմեն զմարդիկ ՚ի սատակումն և ՚ի
10 կորուստ. * Զի արմատ ամ չարեաց ար-
ծաթսիրութիւն է. որում ոմանք ցանկացեալ՝
վրիպեցան ՚ի հաւատոյն, և զանձինս արկին
11 ՚ի բազում ցաւս. * Այլ դու ով մարդ այ՝
փախիր յայնցանէ, և երթ զհետ արդարու-
թեան զածպաշտութեան զհաւատոց զսիրոյ զհամ-
12 բերութեան զհեզութեան. * Մարտիր զբարւոք
մարտն հաւատոց, և բուռն հար զկենացն
յաւիտենականաց՝ յոր կոչեցարն, և դաւա-
նեցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում
13 վկայից. * Պատուիրեմ քեզ առաջի այ՝ որ
կեն-

կենդանի առնէ զամ, և Յի Քի՝ որ վկայեաց
Մտթ. առաջի պոնտացւոյ պիղատոսի զբարւոք
27. 11. դաւանութիւն. * պահել քեզ զպատուիրանն 14
Յովհ. անբիծ՝ անարատ, մինչև ՚ի յայտնութիւն Տն
18. 33. և 37. մերոյ Յի Քի. * զոր յիւր ժամանակս ցուց- 15
Յայտ. ցէ երանելին՝ և միայն հզօր, թագաւոր
17. 14. 19. 16. թագաւորաց և Տր տերանց. * որ միայն ու- 16
նի զանմահութիւն՝ բնակեալ ՚ի լոյս անմատոյց.
Յովհ. զոր ոչ ոք ետես ՚ի մարդկանէ՝ և ոչ տեսա-
1. 18. նել կարող է. որում պատիւ և զօրութիւն յաւի-
1 Յովհ. 4. 12. տենական, ամէն: * Մեծատանց՝ որ են յայսմ 17
աշխարհի՝ պատուէր տուր՝ մի հպարտա-
Ղուկ. նալ և մի յուսալ ՚ի մեծութիւն անցաւոր, այլ
12. 15. յԱծ՝ որ տայ մեզ զամ առատապէս ՚ի վայե-
լել, * զբարիս գործել, մեծանալ գործովք 18
բարութեան, առատս սրտիւս հաղորդս լինել.
* գանձել անձանց հիմն բարի ՚ի հանդեր- 19
ձեալսն. զի բուռն հարկանիցեն զճշմարիտ
Բ. Տիմ. կենացն: * Ո՛վ տիմոթէէ՝ պահեա զա- 20
1. 14. ւանդն՝ խոտորեալ ՚ի պղծոց և ՚ի նորաձայն
բանից և ՚ի հակառակութենէ և ՚ի մոլորա-
նուն գիտութենէ. * զոր ոմանց յանձն առեալ՝ 21
վրիպեցան ՚ի հաւատոց անտի: Շնորհք ընդ
քեզ. ամէն:

Առ տիմոթէոս առաջին թուղթն գրեցաւ ՚ի լաւոդի-
կէայ, որ է մայր քաղաքաց պակատիանացւոց:

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ.

### ԳԼ. Ա.

1 Պօղոս առաքեալ յի քի կամօքն այ, Գ. Կ
ըստ աւետեաց կենացն՝ որ ՚ի քս յս.
2 * Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք ողոր-
մութիւն և խաղաղութիւն յայ հօրէ և ՚ի
3 քսէ յսէ տնէ մերմէ. * Շնորհս ունիմ այ՝
զոր պաշտեմն ՚ի նախնեաց մտօք սրբովք,
իբրև զի անպակաս ունիմ զքեն յիշատակ
4 յաղօթս իմ. զցայգ և զցերեկ * ցանկա-
ցեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զար-
5 տասուսն քո՝ զի լցայց ուրախութբ. * ըզ-
մտաւ ածեալ զանկեղծ հաւատսն՝ որ են ՚ի
քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ ՚ի հանոյ
քում Լաւոդեայ, և ՚ի մօր քում Եւնիկեայ.
6 հաստատեալ եմ՝ թէ և ՚ի քեզ է. * Վասն
որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն
այ՝ որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ.
7 * Զի ոչ ետ մեզ ած հոգի վհատութեան, Հռովմ.
8 այլ զօրութեան և սիրոյ՝ և զգաստութեան. * Մի 8. 15.
այսուհետև ամօթ համարիցիս զվկայութիւն
տն մերոյ՝ և մի զիս զկապեալ նր. այլ կցորդ
լեր չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեան
այ.

ծոյ. * Որ փրկեաց զմեզ, եւ կոչեաց ՚ի կո- 9
Ա. Տիտ. չումն սուրբ. ոչ ըստ գործոց մերոց՝ այլ ըստ իւ-
3. 5. րում յառաջադրութեան եւ շնորհաց, որ տուա-
ւեալ ՚ի մեզ ՚ի Քս Յս յառաջ քան զժամանակս յա-
ւիտենից.

Գ. Դ. * Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին 10
մերոյ Յսի Քսի. որ խափանեաց զմահ՝ եւ լու-
սաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ՚ի ձեռն
Ա. Տիմ. աւետարանին. * Յորոյ եդայ ես քարոզ եւ ա- 11
2. 7. ռաքեալ՝ եւ վարդապետ հեթանոսաց. * Վն 12
որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչինչ ա-
մօթ համարիմ. քանզի գիտեմ՝ յոր հաւատա-
ցեալն եմ. եւ հաստատեալ եմ, թէ կարող է
զաւանդն իմ պահել յօրն յայն. * Ունի- 13
ցիս օրինակ ողջմտութեան բանիցն, զորս յի-
նէն լուար՝ հաւատովք եւ սիրովն որ ՚ի Քս Յս.
Ա. Տիմ. * Զբարւոք աւանդն պահեսջիր՝ ՚ի ձեռն 14
6. 20. Հոգւոյն սրբոյ ՚ի մեզ բնակելոյ. * Զայս գի- 15
տասջիր՝ զի մերժեցան ՚ի մէնջ ամենեքեան՝
որ էին յասիա, որոց սակի են փիգեղոս եւ
Հերմոգենէս. * Տացէ Տր ողորմութիւն տանն 16
Ա. Գործ. Ոնեսիփորայ. զի բազում անգամ հանգոյց
4. 19. զիս, եւ զկապանս իմ ոչ ամօթ համարեցաւ.
* Այլ իբրեւ եկն ՚ի Հռոմ, փութապէս խնդ- 17
րեաց զիս՝ եւ եգիտ. * Տացէ նմա Տր՝ ողոր- 18
մութիւն գտանել ՚ի Տեառնէ յաւուրն յայնմիկ. եւ
որչափ ինչ սպասաւորեաց յեփեսոս սոսա կալա-
նեա, զայն դու ինքնին քաջ գիտես.

## Գլ. Բ.

Արդ դու որդեակ իմ, զօրացիր շնորհօքն՝ 1
որ ՚ի Քս Յս. * Եւ զոր լուար յինէն բա- 2
զում

զում վկայիւք՝ զայն աւանդեսցես հաւատա-
րիմ մարդկան՝ որք բաւական իցեն եւ զայլս
ուսուցանել։

3 *Վշտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր քսի Գ. Օ.
4 յսի։ *Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կենաց
աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հա-
5 ճոյ լինիցի։ *Նա եթէ մարտիկ ոք իցէ ոչ
6 պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ։ *Նա
հողագործին աշխատելոյ պարտ է նախ 'ի
7 պտղոյն վայելել։ *Իմա՛ զինչ ասեմ. տա-
8 ցէ քեզ տր իմաստութիւն յամենայնի։ *Յի-
շեա՛ զյս քս յարուցեալ 'ի մեռելոց 'ի զաւա-
9 կէ դաւթի՝ ըստ աւետարանին իմում։ *Յո-
րում չարչարիմ կապանօք չափ՝ իբրեւ զչարա-
գործ. այլ բանն այ ոչ եթէ կապեալ իցէ։
10 *Վասն այնորիկ ամի համբերեմ վս ընտ-
րելոցն, զի եւ նոքա փրկութեան հասանիցեն
որ 'ի քս յս երկնաւոր փառօքն հանդերձ։
11 *Հաւատարիմ է բանս. զի եթէ ընդ նմա
12 մեռաք՝ ընդ նմին եւ կեցցուք. *Եւ եթէ համ-
բերեմք, ընդ նմին եւ թագաւորեսցուք. ||Եւ ||Մատթ.
13 եթէ ուրանամք՝ եւ նա ուրանայ զմեզ. *||Եւ 10. 33.
եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, Մարկ. 8. 38.
14 ուրանալ զանձն իւր ոչ կարէ։ *Զայս յուշ ||Հռով. 3. 3.
արասջիր վկայութիւն եղեալ առաջի այ. մի
բանակռուել լինել յոչինչ պէտս 'ի կործա-
նումն լսողաց։

15 *Փութասջիր զանձն քո ընտիր կացուցա- Կ. Ր.
նել առաջի այ, մշակ առանց ամօթոյ. ու-
ղիղ հատանել զբանն ճշմարտութեան։
16 *Եւ 'ի պղծոց եւ 'ի մնոտի խօսից մերժե-
սջիր. զի առաւել յառաջ գայցեն յամբարշ-
տու-

տալիս. * Եւ բանք նց իբրև զքաղցկեղ ճա- 17
|| 1. Տիմ. րակ գտանիցեն. որոց սակի են || Հիմենոս՝ և
1. 20. Փիղետոս. * որք վրիպեցան ՚ի ճշմարտութենէ, 18
և ասեն՝ եթէ յարութիւն մեռելոց արդէն իսկ
եղեալ է. և կործանեն զհաւատս ոմանց։
* Բայց հաստատուն հիմն այ կայ՝ և ունի 19
* Թուոց զկնիքս զայս, || եթէ ծանեաւ տր զայնոսիկ՝
16. 5. որ իւրն են. և ՚ի բաց կացի յանիրաւութենէ
ամ՝ որ անուանէ զանուն տն։ * Բայց ՚ի տան 20
մեծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք և ար-
ծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցե-
ղէնք. են՝ որ ՚ի պատիւ են, և են որ յա-
նարգութիւն։ * Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր 21
յայնպիսեաց անտի, եղիցի անօթ պատուա-
կան՝ սրբեալ և պիտանի տն իւրում՝ յամե-
նայն գործս բարութեան պատրաստեալ։ * Բայց 22
յերիտասարդական ցանկութեանց փախիր. և
երթ զհետ արդարութեան՝ զհաւատոյ զսիրոյ
զխաղաղութիւն զսրբութիւն, ընդ այնոսիկ՝ որ կար-
|| 1. Տիմ. դան զանուն տն սուրբ սրտիւք։ * || Բայց ՚ի 23
1. 4. և 4. 7. յիմար և յանխրատ խնդրոց հրաժարեա. գի-
Տիտ. 3. 9. տասջիր թէ անտի ծնանին կռիւք։ * Բայց 24
ծառայի տն ոչ է պարտ կռուել, այլ հեզ
լինել առ ամենեսին՝ ուսուցիչ անոխակալ։
* Հանդարտութբ խրատել զհակառակօղսն. 25
թերևս տացէ նց ած ապաշխարութիւն ՚ի գի-
տութիւն ճշմարտութեան. և սթափեսցին յորո- 26
գայթից սատանայի, որսացեալք ՚ի նմանէ
՚ի նորա կամս։

## ԳԼ. Գ.

1 Զայս գիտասջիր՝ եթէ ‖ յաւուրս յետինս
2 եկեսցեն ժամանակք չարք. * զի եղիցին
մարդիկ անձնասէրք արծաթասէրք հպարտք
ամբարտաւանք հայհոյիչք՝ անհաւանք ծնո_
3 ղաց, անշնորհք անսուրբք, * աննուէրք ան_
գութք բանսարկուք անժոյժք վէրք անբա_
4 րեսէրք, * մատնիչք յանդգունք ամբարտա_
ւանք, ցանկասէրք մանաւանդ՝ քան ա͞ծա_
5 սէրք. * որ ունիցին զկերպարանս ա͞ծպաշ_
տութեան, և ՚ի զօրութենէ նորա ուրա_
6 ցեալ իցեն. և խորշեսջիր ՚ի նոցանէ: * Քան_
զի ՚ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ ՚ի տուն,
և գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք
7 վարեալս ՚ի պէսպէս ցանկութիւնս. * որ յամ͞
ժամ͞ ուսանին, և երբէք ՚ի գիտութ͞ ճշմար_
8 տութ͞ ոչ հասանեն: * Այլ ո͞պ ‖ յանէս և
յամբրէս հակառակ կացին մովսէսի. նոյն_
պէս և սոքա հակառակ կան ճշմարտութեան.
մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք ՚ի
9 հաւատս: * Այլ ո͞չ երբէք գայցեն յառաջ
՚ի լաւ անդր. քանզի անմտութիւն սոցա յայտնի
լինիցի ամենեցուն, որպէս և նոցայն իսկ
եղև:

10 * Այլ դու զհետ եկիր վարդապետութեան
իմոյ՝ առաջնորդութեան յօժարութեան հաւատոյ՝
11 երկայնմտութեան սիրոյ համբերութեան, * հալա_
ծանաց չարչարանաց. որպիսիք եղեն ինձ
յանտիոք և յիկոնիոն և ՚ի լիւստրա, որպի_
սի հալածանաց համբերի. և յամենայնէ փրկեաց
12 զիս Տէր: * Եւ ամենեքին՝ որ կամիցին ա͞ծ_

պաշտ_

‖ Ա. Տիմ. 4. 1. 2. Պետ. 3. 3.

‖ Ել. 7. 11.

պաշտութբ կեալ 'ի քս յս, 'ի հալածանս կաց-
ցեն։ *Այլ մարդիկ չարք եւ կախարդք յա- 13
ռաջ եկեսցեն 'ի չար անդր. մոլորեալք եւ
մոլորեցուցանիցեն։ *Այլ դու հաստատուն 14
կաց՝ յոր ուսարդ, եւ հաւատարիմ եղեր.
գիտես ուստի ուսար. *զի 'ի մանկութենէ 15
զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաս-
տուն առնել զքեզ 'ի փրկութիւն 'ի ձեռն հա-
ւատոյն որ 'ի քս յս։

Գ. Ը. *Ամենայն գիրք ածաշունչք եւ օգտակարք, 16
Բ. Պետ. 'ի վարդապետութի են՝ եւ յանդիմանութի եւ
1. 20. յուղղութի եւ 'ի խրատ արդարութե. *զի կա- 17
տարեալ իցէ մարդն այ յամ գործս բա-
րութե հաստատեալ։

## ԳԼ. Դ.

Զայս վկայութի դնեմ առաջի այ՝ եւ յսի 1
քսի, որ դատելոց է զկենդանիս եւ զմ-
եռեալս՝ 'ի յայտնութե իւրում եւ յարքայու-
թե. *եւ դու քարոզեա զբանն, հաս 'ի վե- 2
րայ ժամու եւ տարաժամու, յանդիմանեա
սաստեա մխիթարեա ամ երկայնմտութբ եւ
վարդապետութբ։ *Քանզի եկեսցէ ժամա- 3
նակ՝ զի ողջմտութե վարդապետութեն ոչ ան-
սայցեն. այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեց
կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըս մար-
մաջելոյ լսելեաց իւրեանց. *եւ 'ի ճշմարտու- 4
թէ անտի դարձուցանիցեն զլսելիս՝ եւ յա-
ռասպելս կործանեսցին։ *Այլ դու զուարթ 5
կաց յամի, չարչարեաց, զգործս աւետարանչի
գործեա. զպաշտօնդ քո կատարեալ կալ։
*Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժա- 6

մա

7 ժամանակ գնալոյ իմոյ հասեալ կայ. * Զբարւոք
պատերազմ պատերազմեցայ, զընթացսն
8 կատարեցի, զհաւատսն պահեցի. * Այսու-
հետև կայ մնայ ինձ արդարութեան պսակն,
զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ ար-
դարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ և ամե-
նեցուն՝ որ սիրեցին զյայտնութիւն նորա.

ՕՀ.

9 Փութասջիր գալ առ իս վաղվաղակի. * զի
Դեմաս եթող զիս՝ և սիրեաց զաշխարհս, և
10 գնաց 'ի Թեսաղոնիկէ. * Կրեսկէս՝ 'ի Գա-
11 ղատիա, Տիտոս 'ի Դաղմատիա. * Ղուկաս Կող. 4. 14.
միայն է ընդ իս. Զմարկոս առեալ՝ ընդ քեզ
ածջիր՝ զի է ինձ պիտանի 'ի սպասաւորու-
12 թիւն. * Զտիւքիկոս առաքեցի յԵփեսոս. Եփես. 6. 21.
13 * Զփիլոնն զոր թողի 'ի Տրովադայ առ Կարպո-
սի. յորժամ գայցես՝ բերջիր և զգիրսն
14 մանաւանդ զմագաղաթսն. * Աղեքսանդրոս Ա. Տիմ. 1. 20.
(դարբին) բազում չարչարանս եցոյց ինձ.
15 հատուսցէ նմա Տէր ըստ գործս նորա. * Յոր-
մէ և դու անձնապահ լինիջիր. զի շատ հա-
16 կառակ եկաց բանից մերոց. * Յառաջնում
ատենին ոչ ոք ինձ 'ի թիկունս եկաց, այլ ա-
մենեքին թողին զիս. մի համարեսցի նոցա
17 այն. * Այլ Տէր օգնեաց ինձ, և զօրացոյց
զիս, զի ինև քարոզութիւն հաստատեսցի, և
լուիցեն ամենայն հեթանոսք. և ապրեցայ ես 'ի
18 բերանոյ առիւծուն. * Փրկեսցէ զիս Տէր յա-
մենայն գործոց չարաց, և զերծուսցէ զիս
յարքայութիւն՝ որ յերկինս է. որում փառք
19 յաւիտեանս յաւիտենից. ամէն. * Ողջոյն
տուջիր Պրիսկեայ և Ակիւղեայ՝ և Անեսի- Բ. Տիմ. 1. 16.
20 փորայ տանն. * Երաստոս մնաց 'ի Կորն- Գործ. 19. 22.
թոս.

Հռով թոս. Զտրոփիմոս թողի ՚ի Միլիտոս հիւան-
16. 23. դացեալ. *Փութասջիր յառաջ քան զձմեռն 21
Գործ. գալ. Ողջոյն տան քեզ Եւբուղոս և Պուդէս
20. 4. և Լինոս և Կղօդիա՝ և եղբարք ամենեքեան.
*Տ̃ր յ̃ս ք̃ս ը̃ն հոգւոյդ քում. Շնորհք ընդ 22
քեզ. ամէն.

Առ Տիմոթէոս երկրորդ թուղթն, որ էր եփեսացւոց եկեղեցւոյն եպիսկոպոս առաջին ձեռնադրեալ. գրեցաւ ՚ի Հռովմէ՝ յորժամ երկրորդ անգամ եկաց յատեանի պօղոս առաջի Ներոնի կայսեր հռովմայ



# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԱՌ ՏԻՏՈՍ։

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ ԿԻԲ
ա՟յ եւ առաքեալ յ՟ի ք՟ի, ըստ հա-
ւատոց ընտրելոցն ա՟յ, եւ 'ի գիտու-
թիւն ճշմարտութեանն՝ որ ըստ ա՟ծպաշտու-
2 թեանն է. * յուսով կենացն յաւիտենից,
զոր խոստացաւ անսուտն ա՟ծ յառաջ քան
3 զժամանակս յաւիտենից. * բայց յայտ-
նեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քա-
րոզութ՟բ, որոյ եղէ ես հաւատարիմ՝ ըստ
4 հրամանի փրկչին մերոյ ա՟յ։ * Տիտոսի որդ-
ւոյ սիրելւոյ ըստ հասարակաց հաւատոց,
շնորհք եւ խաղաղութ՟ի յա՟յ Հօրէ՝ եւ 'ի ք՟է
5 յ՟է փրկչէ մերմէ։ * Վասն այնորիկ
իսկ թողի զքեզ 'ի Կրետէ, զի՛ որ ինչ միան-
գամ պակաս իցէ՝ ուղղեսցես, եւ կացուսցես
ը՟ս քաղաքաց երիցունս՝ ո՟պ եւ ես քեզ պատ-
6 ուիրեցի։ * Եթէ ոք անարատ իցէ, միոյ
կնոջ այր, որդեակս ունիցի հաւատացեալս՝
եւ ոչ յամբաստանութ՟ն անառակութ՟ն, կամ
7 անհնազանդս։ * Զի պարտ է եպիսկոպո- Ա. Տիմ. 3. 2.
սին

սին անարատ լինել՝ որպէս և ա՟յ տնտեսի.
մի յանդուգն, մի բարկացօղ, մի գինեմո-
նօղ, մի հարկանօղ, մի զօշաքաղ. * այլ՝ հիւ- 8
րասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ,
ժուժկալ. * վերակացու լինել հաւատա- 9
րիմ բանին վարդապետութե՟, զի կարօղ լի-
ցէ և մխիթարել ողջմտութբ՟ վարդապետու-
թեանն, և զհակառակորդսն կշտամբել.
* Քանզի բազում են անհնազանդք՝ զրախօսք 10
և մտախաբք. մանաւանդ որ 'ի թլփատութե՟
անտի են, * զորս պարտ է ընդերանել. որք 11
զտուն տունս կործանեն, և ուսուցանեն զոր
չէ արժան՝ վս զօշաքաղութե՟.
ԻԸ. * Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց իսկ մար- 12
գարէ, կրետացիք հանապազասուտ՝ չա-
րաճճիք դատարկապորտք. * Եւ սոյն է 13
վկայութիւնս այս. վասն որոյ կշտամբեսցես
զնոսա խստագոյնս, զի առողջասցին 'ի հա-
ւատս. * և մի հայեսցին 'ի հրէական առա- 14
պելս, և 'ի պատուէրս մարդկան զառածե-
|| Հռով. լոցն 'ի ճշմարտութե՟. * || Ամենայն ինչ սուրբ 15
14. 20. է սրբոց, բայց պղծոցն և անհաւատից, ոչ-
ինչ է սուրբ. այլ պղծեալ են միտք և խոր-
հուրդք նց. * Խոստովանին գիտել զա՟ծ, և 16
գործովք իւրեանց ուրանան. պիղծք և ան-
հաւանք՝ և յամենայն գործս բարեաց ան-
պիտանք.

## ԳԼ. Բ.

Այլ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջամիտ 1
վարդապետութեանց. * Ծերոց ըզ- 2
գաստս լինել, պարկեշտս՝ ցածունս, ողջա-
միտս

միտս ՚ի հաւատս ՚ի սէր ՚ի համբերութեան ՚ի
3 ժուժկալութեան. *Պառաւանց նոյնպէս ՚ի ըզ-
գաստութեան ՚ի սուրբ վայելչութեան, մի բանսար-
4 կուս՝ մի գինեմոլս, այլ բարեխրատս. * զի
զգաստացուցանիցեն զմանկամարդսն՝ այրա-
5 սէրս լինել՝ որդեսէրս, *ցածունս սուրբս
տնարարս բարեգործս, հնազանդս իւրեանց
արանց. զի մի բանն այ եւ վարդապետութիւն
6 հայհոյեսցի. * Զերիտասարդս նոյնպէս ա-
7 ղաչեսջիր՝ ցածունս լինել, * ամենեցուն
զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարու-
թեան, վարդապետութբ զանեղծութիւն ունել,
8 զսրբութիւն զպարկեշտութիւն, * զբանն ողջմտու-
թեան, անպարսաւ լինել. զի որ հակառա-
կորդն իցէ՝ յամօթ լիցի, եւ մի ինչ ունիցի
9 ասել զմէնջ չարութիւն. * ‖Զծառայից՝ իւ- ‖ Եփե.
րեանց տերանց հնազանդ լինել՝ եւ հաճոյս 6. 5.
10 յամենայնի, մի հակառակօղս, * մի հա- Կողո.
տուս. այլ զամ հաւատս ցուցանել բարու- 3. 22.
թբ, զի զվարդապետութիւն փրկչին մերոյ այ 1. Պետ.
զարդարեսցեն յամենայնի. 2. 18.
ՎԵՐՋ
11 *‖Քանզի երեւեցաւ շնորհն այ փրկիչ ամ ‖ Վար.
12 մարդկան. *որ խրատէ զմեզ՝ զի ուրասցուք 3. 4.
զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկու-
թիւնս. զգաստութբ եւ արդարութբ եւ ած-
13 պաշտութբ կեցցուք յաշխարհի. * եւ ակն
կալցուք երանելի յուսոյն՝ եւ յայտնութեան փա-
ռաց մեծին այ՝ եւ փրկչին մերոյ յի քի.
14 * որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ ըզ-
մեզ յամ անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժո-
ղովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց
15 բարեաց. * Զայդ խօսեաց՝ եւ մխիթարեա

եւ

եւ յանդիմանեա ամ՛ սաստիւ. զի մի ոք ի-
ցէ, որ զքեզ արհամարհիցէ։

## ԳԼ. Գ.

Եւ յուշ արասջիր նց, ||իշխանութեանց եւ պե- 1
||Հռով. տութեանց հնազանդ լինել՝ եւ հպատակ կալ.
13. 1. եւ ամ՛ գործոց բարութե պատրաստ գտանել.
* Մի զոք հայհոյել՝ անկռիւս լինել՝ հեզս, 2
զամ՛ ցածութի առ ամենայն մարդիկ ցուցա-
նել։ * Զի էաք երբեմն եւ մեք անմիտք ան- 3
հաւանք՝ մոլորեալք՝ ծառայեալք ցանկութեանց
եւ պէսպէս անառակութեանց. չարութի եւ
նախանձու շրջէաք, ատելեաք՝ եւ զմիմեանս
|| Պետ. ատեաք։ * ||Յորժամ քաղցրութի եւ մար- 4
2. 11. դասիրութի փրկչին մերոյ այ յայտնեցաւ,
||2.Տիմ. * ||Ոչ ՚ի գործոց արդարութե զոր արարաք 5
1. 9. մեք, այլ ըստ իւրում ողորմութեն՝ ապրեցոյց
զմեզ ՚ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդ-
դեանն, եւ նորոգութեամբ հոգւոյն սրբ.
* զոր եհեղ ՚ի մեզ առատութի, ՚ի ձեռն յսի 6
քսի փրկչին մերոյ. * զի արդարացեալք շ- 7
նորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կե-
նացն յաւիտենականաց։ * Հաւատարիմ է 8
բանս. եւ ՚ի սոյն կամիմ զքեզ հաստատուն
լինել, զի փոյթ արասցեն գործոց բարեաց
վերակացու լինել՝ հաւատացեալքն յայ, զի
||1.Տիմ. այն է բարի եւ օգտակար մարդկան։ * ||Բայց 9
1. 4. զյիմարութե խնդիրս՝ եւ զտոհմաթիւս, եւ
4. 7. զհեռ՝ եւ զօրինականս կռիւսն ՚ի բաց մեր-
2. Տիմ. 2. 23. ժեսջիր. զի անօգուտք են՝ եւ ունայնք։
* Յանէ հերձուածողէ՝ յետ միանգամ եւ 10
երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր. * գի- 11

տաս

տանջիր՝ զի թիւրեալ է այնպիսին, և մե-
ղանչէ՝ անձամբ զանձն դատապարտեալ։
12 *Յորժամ յղեցից առ քեզ զարտեմայ
կամ զտիւքիկոս, փութասջիր գալ առ իս 'ի
Նիկոպօլիս. զի անդ եդի 'ի մտի ձմերել.
13 *Զզենաս զօրինականն զպիր՝ և զապողոս՝
փութով արձակեսջիր, զի մի ինչ պակաս
14 իցէ նոցա. *Ուսցին և մերքն ևս՝ բարեաց գոր-
ծոց վերակացու լինել 'ի պէտս կարևորս. զի
15 մի անպտուղք լինիցին։ *Ողջոյն տան քեզ՝
որ ընդ իս են ամենեքին։ Ողջոյն տուր սիրե-
լեաց մերոց հաւատովք։ Շնորհք ընդ ձեզ
ամենեսին. ամէն։

Առ տիտոս կրետացւոց եկեղեցւոյն առաջին ձեռ-
նադրեալ եպիսկոպոս, գրեցաւ 'ի Նիկոպօլսէ Մակե-
դոնացւոց։

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՓԻԼԻՄՈՆ։

### ԳԼ. Ա.

ՊՕՂՈՍ ԿԱՊԵԱԼ 1
Յսի Քսի, եւ Տիմոթէոս եղբայր.
Փիլիմոնի սիրելւոյ՝ եւ գործակ-
ցի մերոյ, *եւ Ապփեայ քեռ, եւ Արքիպ- 2
պեայ զինուորակցի մերոյ՝ եւ տանն եկե-
ղեցւոյ։ *Շնորհք ընդ ձեզ եւ խաղա- 3
ղութիւն յԱյ Հօրէ մերմէ՝ եւ 'ի Տեառնէ Յսէ Քսէ։
*Գոհանամ զԱյ իմոյ՝ յամենայն ժամ յիշատակել 4
յաղօթս իմ միշտ, *իբրեւ լսեմ զքո հա- 5
ւատսն եւ զսէր, զոր ունիս առ Տէր Յս՝ եւ առ
ամենայն սուրբս։ *Զի հաղորդութիւն հաւատոյն 6
քոյ ազդու լինիցի՝ գիտութեամբ ամենայն բարութեան,
որ 'ի ձեզ է 'ի Քս Յս։ *Խնդութիւն յոյժ ըն- 7
կալայ՝ եւ մխիթարութիւն 'ի սէր սիրոյն քո. զի
գութք սրբոց քեւ հանգուցեալ են եղբայր։
*Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ 'ի Քս 8
հրամայել առ քեզ զարժանն։ *Վասն սիրոյ՝
մանաւանդ թէ աղաչեմ իսկ այսպիսիս լինել՝
որ եւ Պօղոս ծերացեալ, արդ եւ կապեալ 9
եմ Յսի Քսի։ *Աղաչեմ զքեզ վս որդւոյ ի- 10
Կողոսա. մոյ՝ զոր ծնայ 'ի կապանս իմ, Ոնեսիմոսի.
Դ. 9. *որ երբեմն անպիտան էր քեզ. բայց արդ 11
քեզ

12 քեզ եւ ինձ պիտանի. *զոր յղեցի առ քեզ.
Եւ դու զդա ընկալջիր՝ այսինքն է զիմ ա-
13 ղիսս. *Որ կամէի առ իս արգելուլ, զի ը̄
քո ունիցի ինձ սպաս 'ի կապանս աւետա-
14 րանին. *Բայց առանց քո կամաց ոչինչ կա-
մեցայ առնել, զի մի բարիքդ քո 'ի հարկէ
15 լինիցին՝ այլ կամաւ. *Եւ թերեւս վն այսո-
րիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւի-
16 տեան ունիցիս զդա. *մի եւս իբրեւ զծա-
ռայ՝ այլ 'ի վեր քան զծառայ, իբրեւ զեղբայր
սիրելի. եւ թէ ինձ այսպէս որչափ եւս առա-
17 ւել քեզ մարմնով՝ եւ տեառամբ. *Եթէ զիս
քեզ հաղորդ համարիցիս, ընկալ զդա իբրեւ
18 զիս. *Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ՝ կամ
19 պարտիցի, զայն ինձ համարեսջիր. *Ես պօ-
ղոս գրեցի իմով ձեռամբ. ես հատուցից,
զի մի ասիցեմ քեզ՝ թէ եւ դու զանձն քո ինձ
20 պարտիս. *Այո եղբայր՝ ես քո փոխանակ
21 եղեց 'ի տր̄. հանգո զաղիս իմ 'ի քս̄. *Յու-
սացեալ 'ի հնազանդութիւն քո՝ գրեցի առ քեզ.
քանզի գիտեմ թէ առաւել եւս քան զոր ա-
22 սեմդ՝ առնիցես. *Միանգամայն եւ պատ-
րաստեսջիր ինձ վանս. քանզի յուսամ եթէ
23 աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ. *Ողջոյն
տայ ձեզ եպափրաս գերեկից իմ 'ի քս̄ յս̄.
24 *եւ մարկոս, եւ արիստարքոս, եւ դեմաս, Կող.
25 եւ ղուկաս՝ գործակիցք իմ. *Շնորհք տն̄ 4. 10.
մերոյ յիսուսի ք̄ի ը̄ հոգւոյդ ձերում. ամէն.

Առ Փիլիմոն եւ առ Ապփիա տիկին Ոնեսիմայ. եւ
առ Արքիպպոս սարկաւագ Կողոսացւոց եկեղեցւոյն,
գրեցաւ 'ի Հռոմէ 'ի ձեռն Ոնեսիմայ ծառայի.

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍՆ․

## ԳԼ․ Ա․

Ն Կ ԲԱԶՈՒՄ ՄԱՍԱՄԲՔ 1
և բազում օրինակօք կանխաւ խօ-
սեցաւ ած ընդ հարսն մեր մարգա-
րէիւք․ *'ի վախճանի աւուրցս այսոցիկ խօ- 2
սեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եդ ժառանգ
ամենայնի․ որով և զյաւիտեանսն արար․
‖ Իմաստ. *‖ Որ է լոյս փառաց՝ և նկարագիր էու- 3
Է. ԻԶ. թեան նորա․ որ կրէ զամենայն բանիւ զօ-
րութեան իւրոյ․ սրբութիւն մեղաց մերոց ա-
րարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեան 'ի բար-
ձունս․ *Այնչափ առաւել եղեալ քան զհ- 4
րեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա անուան
ժառանգեաց․ *Զանզի ո՞ւմ երբէք ասաց 'ի 5
‖ Սաղմ. հրեշտակաց․ ‖ որդի իմ ես դու՝ ես այսօր
Բ. Է. ծնայ զքեզ․ և դարձեալ՝ թէ ‖ ես եղէց
‖ Բ Թագ. նմա 'ի հայր, և նա եղիցի ինձ յորդի․ *Այլ 6
Է. ԺԴ. յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն
‖ Սաղմ. յաշխարհ, ասէ․ ‖ երկիր պագցեն նմա ամ
ՂԶ. Ը. հրեշտակք իւր․ *Այլ առ հրեշտակսն ասէ․ 7
‖ Սաղմ. ‖ Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօ-
ՃԳ. Դ.

նեայս

8 նեայս իւր բոց հրոյ. * Իսկ ցՈրդին ասէ.
Աթոռ քո ա՟ծ յաւիտեանս յաւիտենից. գա- ‖ Սաղ.
ւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան 44. 7.
9 քո. * Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զա-
նօրէնութիւն. վ՟ն այսորիկ օծ զքեզ ա՟ծ ա՟ծ քո
իւղով ուրախութեան՝ առաւել քան զընկերս
10 քո. * ‖ Եւ դու տ՟ր 'ի սկզբանէ զերկիր ‖ Սաղ.
հաստատեցեր. եւ գործք ձեռաց քոց երկինք 101. 26.
11 են. * Նոքա կորնչին՝ եւ դու կաս եւ մնաս.
12 ամենեքեան իբրեւ զհանդերձ մաշեսցին, * եւ
իբրեւ զվերարկուս. գալարեսցես զն՟ս իբրեւ
զհանդերձ, եւ գալարեսցին. բայց դու նոյն
13 իսկ ես՝ եւ ամք քո ոչ պակասեն. * Յո՞ եր-
բէք ասաց 'ի հրեշտակաց. ‖ Նիստ ը՟ աջմէ ‖ Սաղ.
իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուան- 109. 1.
1. Կոր.
14 դան ոտից քոց. * Ոչ ապաքէն ամենեքեան 15. 25.
հոգիք են հարկաւորք՝ որ առաքին 'ի սպա- Վար .
սաւորութիւն վ՟ն այնոցիկ, որ ժառանգելոցն 10. 13.
են զփրկութիւն.

## ԳԼ. Բ.

1 Վասն այսորիկ պարտ է մեզ առաւել եւս Ն Պ
ունկնդիր լինել բանիցն ասացելոց՝ զի մի
2 երբեք նաւաբեկեսցուք. * Զի եթէ որ 'ի
ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստա-
տուն եղեւ, եւ ա՟մ յանցաւորութիւն եւ անհնա-
զանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհա-
3 սի. * մեք զիա՞րդ ապրեսցուք հեղգացեալք
յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ
'ի տ՟նէ. եւ 'ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ 'ի
4 մեզ հաստատեցաւ, * ‖ վկայեալ ա՟յ նշա- ‖ Մրկ.
նօք եւ արուեստիւք եւ պէսպէս զօրութ՟ք, եւ 16. 20.

մասամբք հոգւոյն սրբոյ ըստ իւրոյ կամաց։
* Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց 5
զհանդերձեալ աշխարհն, վասն որոյ մեքս
խօսիմք։ * Վկայեաց ոք ուրեք՝ եւ ասէ. 6
‖ Սաղ. 8. 5. ‖ զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կա՛մ որ-
դի մարդոյ՝ թէ այց արասցես նմա։ * Փոքր 7
մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս.
փառօք եւ պատուով պսակեցեր զնա՝ եւ կա-
‖ Մատթ. 28. 18. 1. Կորն. 15. 26. ցուցեր զնա ՚ի վ՟ր ձեռակերտաց քոց։ * ‖ Զա- 8
մենայն ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ո-
տից նր՟։ Որդ՟ ՚ի հնազանդեցուցանելն զա-
մենայն, ոչինչ եթող անհնազանդ ՚ի նմա-
նէ. բայց այժմ ոչ եւս տեսանեմք հնազան-
‖ Փիլիպ. 2. 8. դեալ նմա զամ՟ն։ * ‖ Բայց զփոքր մի խոնար- 9
հեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅս՟ վա՟ս
չարչարանաց մահուն. փառօք եւ պատուով
պսակեալ. զի շնորհօքն ա՟յ վ՟ր ամենեցուն
զմահ ճաշակեսցէ։ * Զի վայելէր իսկ նմա, 10
վասն որոյ ամ՟ եւ որով ամ՟, բազում որդիս
՚ի փառս ածել՝ եւ զառաջնորդ փրկութե՟ ն՟ց
ՎԵՐՋ չարչարանօք կատարել։
* Զի որ սրբէն եւ որ սրբին՝ ՚ի միոջէ են 11
ամենեքին, վասն որոյ ոչ ամօթ համարի եղ-
‖ Սաղ. 21. 23. բարս անուանել զնս, եւ ասէ։ * ‖ Պատմե- 12
ցից զանուն քո եղբարց իմոց. ՚ի մէջ եկե-
ղեցւոյ օրհնեցից զքեզ։ * Եւ դարձեալ՝ թէ 13
‖ Սաղ. 17. 3. ‖ Ես եղէց յուսացեալ ՚ի նա. եւ դարձեալ.
‖ Եսայ. 8. 18. ‖ Ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետ
ինձ ած՟։ * Արդ՝ որովհետեւ մանկունքն հա- 14
ղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ
‖ Ովսէ. 13. 14. 1. Կորն. 15. 54. մերձաւորութբ՟ կցորդ եղեւ նոցունց. ‖ զի
մահուամբն իւրով խափանեսցէ զայն, որ զիշ-
խան

խանութեան մահուն ունէր, այսինքն է՝ զսա-
15 տանայ. * Եւ ազատեսցէ զայնոսիկ, որ մա-
հուն երկիւղիւ հանապազ կէին վտարան-
16 դեալք ՚ի ծառայութեան։ * Քանզի ոչ երբէք
զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւա-
17 կէն աբրահամու բուռն հարկանէ։ * Ուս-
տի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց
նմանել. զի ողորմած լինիցի, եւ հաւատա-
րիմ՝ քահանայապետ յԱստուծոյ կողմանէ
անտի, առ ՚ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն։
18 * Զի որով ինքն չարչարեցաւ փորձեալ,
կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել։

## ԳԼ. Գ.

1 Ուստի եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչմանն
բաժանորդք, նայեցարուք ընդ առաքեալն
եւ ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ
2 ընդ Յս Քս. * որ հաւատարիմ է արարչին իւ-
3 րոյ՝ որպէս եւ || Մովսէս յամ ՚ի տան նր։ * Զի || Թուոց 12. 7.
առաւել եւս փառաց քան զՄովսէս արժանի
եղեւ. որչափ առաւել պատիւ ունիցի քան
4 զտունն՝ տանն առնելի։ * Զի ամ տուն
կազմի, յումեքէ կազմի. իսկ որ զամենայն
5 արար, Ած է։ * Մովսէս հաւատարիմ է
յամ տան նր իբրեւ զծառայ՝ առ ՚ի վկայու-
6 թեան բանիցն ասացելոց։ * Իսկ Քս իբրեւ
որդի ՚ի վր տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ
եմք. միայն թէ զհամարձակութիւն եւ զպար-
ծանս յուսոյն մինչեւ ՚ի վախճան հաստատուն
7 ունիցիմք։ * Վասն որոյ այսպէս ասէ Հոգին
8 Սբ. || Այսօր եթէ ձայնի նր լուիցէք, * մի || Սաղմ. 94. 8.
խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ ՚ի դառ-

նու-

նութեն յաւուրն փորձութեան յանապատի . * ուր 9
փորձեցին զիս հարքն ձեր . քննեցին զիս՝ եւ
տեսին զգործս իմ զքառասուն ամ : * վասն 10
որոյ տաղտկացայ ազգաւն այնուիկ , եւ ա-
սացի . միշտ մոլորեալ են սրտիւք . եւ նոքա
ոչ ծանեան զճանապարհս իմ : * որպէս երդ- 11
ուայ 'ի բարկութեան իմում՝ թէ մտցեն 'ի հան-
գիստ իմ :

Ւ. Օ. * Տեսէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի յու- 12
մեք 'ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապս-
տամբ լինել յայ կենդանւոյ : * Այլ մխի- 13
թարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչեւ
այսօրդ անուանի կայ . զի մի ոք խստասցի 'ի
ձէնջ խաբէութբ մեղաց : * Քանզի բաժա- 14
նորդք եղեաք քի . միայն թէ զսկիզբն հաւ-
տատութեն մինչեւ ցվախճան պինդ կալցուք :
* Յասելն , այսօր եթէ ձայնի նր լուիցէք՝ 15
մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ 'ի դառ-
նութեն : * Քանզի ոմանք լուան եւ դառ- 16
նացուցին , այլ ոչ ամենեքեան՝ որ ելեալ
էին յեգիպտոսէ 'ի ձեռն մովսէսի : * Յու- 17
մէ՞ տաղտկացաւ զքառասուն ամն . ո՞չ ապա
Թուոց քէն 'ի յանցուցելոցն . Որոց ոսկերքն ան-
14. 37. կան յանապատի անդ : * Ո՞ւմ երդուաւ չմ- 18
տանել 'ի հանգիստ իւր , եթէ ոչ անհաւա-
տիցն : * Եւ տեսանեմք՝ զի ոչ կարացին մտա- 19
նել վն անհաւատութեն :

## ԳԼ. Դ.

Երկիցուք այսուհետեւ , գուցէ 'ի թողուլ 1
աւետեացն՝ 'ի մտանելոյ 'ի հանգիստ նր՝
կարծիցի ոք 'ի ձէնջ նուազեալ : * Քանզի 2

եմք

եմք աւետարանեալք որպէս եւ նոքայն. այլ ոչ
ինչ օգնեաց լուր բանին, չմիաբանելոյն ի
3 հնազանդութե հաւատոյ. * Իսկ մեք մտա-
նեմք ի հանգիստն, որք հաւատացաքս. որպէս
եւ ասացն՝ թէ որպէս երդուայ ի բարկութե Սղ.
իմում, թէ մտցեն ի հանգիստ իմ. թէ- 94. 11.
պէտ արդիւնքն ի կազմածէ աշխարհի լեալ
4 էին. * Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եօթ-
ներորդի այսպէս. եւ հանգեաւ Աստուած յա- Ծնն.
5 ւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց. * Եւ 2. 2.
աստ դարձեալ ասէ՝ թէ մտցեն ի հանգիստ
6 իմ. * Եւ արդ քանզի արգելեալ ոմանց մը-
տանել ի նա, եւ որք յառաջագոյն աւետա-
րանեցանն էին՝ չմտին վասն անհաւատութե.
7 * դարձեալ այլ որ սահմանէ՝ զաւուրն ի դա-
ւիթ, եւ ասէ՝ յետ այնչափ ժամանակաց,
որպէս յառաջագոյնն ասաց, այսօր եթէ ձայ- Եբր.
նի նորա լուիջիք՝ մի խստացուցանէք զսիրտս 3. 7.
8 ձեր. * Զի եթէ զնա յեսու հանգուցեալ
էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այ-
9 նորիկ. * Ապա ուրեմն մնացեալ է շաբա-
10 թուն ժողովրդեանն Աստուծոյ. * Զի որ եմուտ
ի հանգիստն նորա, եւ նա հանգեաւ յիւրոց
գործոց անտի. որպէս եւ Աստուած յիւրայոցն. ՎԵՐՋ.
11 * Փութասցուք այսուհետեւ մտանել յայն
հանգիստ. զի մի ոք ըստ նմին օրինակաւ ան-
12 հաւատութե անկանիցի. * Քանզի կենդա-
նի է բանն Աստուծոյ՝ եւ ազդօղ՝ եւ հատու քան զամենայն
սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ ցորոշումն
շնչոյ եւ ոգւոյ՝ եւ յօդից՝ եւ ուղղոց. եւ քննիչ
13 է մտաց՝ եւ խորհրդոց սրտից. * Եւ չիք ա- Սղ.
րարած աներեւոյթ յերեսաց նորա. այլ ամենայն 7. 10. 33. 16.
են

ինչ մերկապարանոց կայ առաջի աչացն նորա՝
զորմէ մեր բանքս են։ * Ունիմք այսուհե- 14
տեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս,
զյս զորդին այ. պինդ կալցուք զխոստովա-
նութիւն։ * Քանզի ոչ եթէ ունիմք քահա- 15
նայապետ՝ որ ոչ իցէ կարող չարչարակից լի-
նել տկարութեանց մերոց. այլ փորձ է ամենայ-
նիւ ըստ նմանութեան առանց մեղաց։
Զ. Կ * Մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ 16
առաջի աթոռոյ շնորհացն նր. զի ընկալ-
ցուք զողորմութիւն եւ գտցուք շնորհս ՚ի դէպ
ժամանակի օգնականութեան։

## ԳԼ. Ե.

Զի ամենայն քահանայապետ ՚ի մարդկա- 1
նէ առեալ՝ վասն մարդկան կայ յածակցս
կողմն անդր. զի մատուսցէ պատարագս եւ
զոհս վն մեղաց։ * Զափով չարչարակից կա- 2
րող է լինել տգիտաց եւ մոլորելոց. քանզի եւ
ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է։ * Վասն 3
այնորիկ պարտ է որպէս վն ժողովրդեանն,
նոյնպէս եւ ընդ անձին մատուցանել պատա-
Ելք. րագս վն մեղաց։ * Եւ ոչ եթէ անձամբ 4
28. 1. որ առնու պատիւ. այլ կոչեցեալն յայ՝ ոպ
2. Մն. եւ ահարոն։ * Նոյնպէս եւ քս ոչ եթէ ան- 5
26. 18. ձին ինչ շուք եդ լինել քահանայապետ. այլ
Սաղմ. որ խօսեցաւն առ նա՝ թէ որդի իմ ես դու՝
2. 7. ես այսօր ծնայ զքեզ։ * Ոպ եւ ՚ի միւսումն 6
Սաղմ. ասէ. դու ես քահանայ յաւիտեան ըստ կար-
109. 4. գին մելքիսեդեկի։ * Որ յաւուրս մարմնոյ 7
իւրոյ՝ աղօթս եւ պաղատանս առ այն, որ կա-
րողն էր ապրեցուցանել զնա (՚ի մահուանէ),

աժ-

ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցա-
8 նէր. և լսելի լինէր առ լաւութեանն. *Թէ-
պէտ և որդի էր՝ ուսաւ ի չարչարանացն անտի
9 զհնազանդութիւն. *Եւ իբրև կատարեցաւ՝
եղև ամենայն հնազանդելոց իւրոց պատ-
10 ճառ փրկութեան յաւիտենից. *Եւ անուանե-
ցաւ յԱյ քահանայապետ յաւիտենից ըստ կար-
գին Մելքիսեդեկի.
11 *Վասն որոյ բազում են մեզ բանք, և դժ- ԶԲ
ուարապատում ի մեկնել. քանզի խօթա-
12 ցայք եղերուք լսելեօք. *Փոխանակ զի
պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժա-
մանակին. դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝
թէ զինչ են նշանագիրք սկզբան բանիցն
Այ. և եղերուք կարօտք կաթին՝ և ոչ հաս-
13 տատուն կերակրոյ. *Զի ամ որ կաթնկեր
է՝ տղայ է բանին արդարութեան, քանզի տղայ
14 է. *Այլ կատարելոցն է հաստատուն կե-
րակուր. որոց՝ վասն ի չափն հասանելոյ ճա-
շակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ և չարի.

## ԳԼ. Զ.

1 Վասն որոյ թողեալ զբանն սկզբանն Քի,
ի կատարումն եկեսցուք. մի միւսանգամ
արկանել հիմն ապաշխարութեան՝ ի մեռելո-
տի գործոց անտի, և հաւատոցն որ յԱծ,
2 *և մկրտութեանցն վարդապետութեան, և ձեռ-
նադրութեան ձեռաց, և յարութեան մեռելոց,
3 և դատաստանին յաւիտենից. *Այս արդ՝
արասցուք զայս, եթէ Ած հրամայեսցէ.
4 *Անհնար է միանգամ մկրտելոցն, Մտթ.
որ ճաշակեցին յերկնաւոր պարգևացն, և 10. 26.
հա 2. Պետ. 2. 20.

հաղորդք եղեն հոգւոյն սրբոյ, * և զգեղեցիկ 5
բանին Այ ճաշակս ճաշակեցին, և զզօրութիս
հանդերձելոյ աշխարհին, * և կործանեցին. 6
միւսանգամ նորոգել յապաշխարութիւն. և
վերստին 'ի խաչ հանել անձանց զորդին Այ,
և դարձեալ խայտառակել. * Քանզի եր- 7
կիր՝ որ ըմպիցէ զանձրեւ բազում անգամ ե-
կեալ 'ի վր նր, և ծնանիցի արդիւնս շայե-
կանս նոցա՝ վասն որոյ գործիցին, ընդունի
զօրհնութիւն յԱյ. * Իսկ որ բերէ փուշ և ըղ 8
տատասկ, անպիտան է՝ և մերձ յանէծս. և
վախճան նորա յայրումն.

ՕՕ * Բայց հաստատեալ եմք վս ձեր սիրելիք 'ի 9
լաւ անդր, և որ լին է փրկութ. զի թէպէտ
և այսպէս խօսիմք. * Ոչ եթէ անիրաւ ինչ 10
է Այծ՝ մոռանալ զգործս ձեր և զսէրն՝ զոր
ցուցէք յանուն նր. զի պաշտեցէք զսուրբսն՝
և պաշտէք. * Եւ մեք ըղձանամք՝ զի իւրա- 11
քանչիւրոք 'ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ
'ի հաստատութիւն յուսոյն՝ մինչև ցվախճան.
* զի մի հիւանդամիտք լինիցիք. Այլ նմանօղք 12
եղերուք այնոցիկ որ հաւատովքն և երկայն-
մտութեամբ ժառանգեցին զաւետիսն. * Զի 13
աբրահամու խոստացեալ զաւետիսն Այ,
քանզի յայլ ոք 'ի մեծ ոչ գոյր երդնուլ.
Ծնն. * յանձն իւր երդուաւ, և ասէ. Այո, օրհ- 14
22. 16. նելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանե-
լով բազմացուցից զքեզ. * Եւ այնպէս եր- 15
կայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն. * Ա- 16
պաքէն մարդիկ՝ որ ինչ 'ի վեր է քան զին-
քեանս՝ յայն երդնուն. և ամ հաստատու-
թե նց վճիռ աւ 'ի հաստատութիւն, երդումն
է.

17 է. *Որով առաւել եւս կամեցաւ Ա̃յ՝ ցուցա-
նել ժառանգաւորաց աւետեացն զհաստա-
տութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդ-
18 մամբ. *Զի երկու անփոփոխելի իրօքն՝ ո-
րովք անհնարին էր ստել Ա̃յ, հաստատուն
մխիթարութիւն ունիցիմք. որք ապաստան ե-
ղեաք բուռն հարկանել զհանդերձեալ յու-
19 սոյն. *զոր իբրեւ զխարիսխ հաստատուն եւ
անշարժ ունիցիմք անձանց մերոց, որ եւ մը-
20 տանիցէ 'ի ներքին կողմն վարագուրին. *ուր
կարապետն մեր յռ եմուտ վն մեր, Յ̃ս կար-
գին Մելքիսեդեկի՝ եղեւ քահանայապետ յա-
ւիտենից.

## ԳԼ. Է.

1 Քանզի այս ‖ Մելքիսեդեկ՝ թագաւոր էր ‖ Ծն. ԺԴ.
Սաղիմայ. քահանայ Ա̃յ բարձրելոյ. որ 14. 18
ել ընդ առաջ Աբրահամու, յորժամ դար-
ձեալ գայր 'ի կոտորածէ թագաւորացն՝ եւ
2 օրհնեաց զնա. *որում եւ տասանորդս յամենէ
ետ Աբրահամ. նախ թարգմանի թագաւոր
արդարութեան, ապա թագաւոր Սաղեմայ՝ որ
3 է թագաւոր խաղաղութեան. *անհայր՝ ան-
մայր՝ չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն
աւուրց եւ ոչ կատարած կենաց. նմանեալ
որդւոյ Ա̃յ՝ կայ մնայ քահանայ մշտնջենա-
4 ւոր. *Տեսէք որպիսի ոք էր սա, ո-
րում եւ Աբրահամ տասանորդս ետ յաւարէ
5 անտի՝ նահապետն. *Եւ որք յորդւոցն
Ղեւեայ զքահանայութիւն առնուն, ‖ պատուէր ‖ Թւ.
ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրի- 18. 5.
նացն. այսինքն է՝ զեղբարս իւրեանց. թէ- Յես.
պէտ 14. 4.

պէտ և ելեալ իցեն յերանացն Աբրահամու ։
* Իսկ չհամարեալն յազգս ՚ի նոցանէ՝ տա- 6
սանորդեաց զԱբրահամ. և զնա՝ որոյ զաւե-
տիսն ընկալեալ էր, օրհնեաց ։ * Զի ա- 7
ռանց ամ հակառակութե, նուաստն ՚ի լաւէ
անտի օրհնեսցի ։ * Եւ աստ մարդք մահկա- 8
նացուք տասանորդս առնուն. բայց անդ վկա-
յեցաւ՝ թէ կենդանի է ։ և որպէս բանից
կարգ է ասել. * Թէ Աբրահամու և ղեւի 9
իսկ՝ որ զտասանորդսն առնոյր, տասանոր-
դեցաւ ։ * Զի դեռ ևս յերանս հօր իւրոյ էր՝ 10
յորժամ ը առաջ եղև նմա մելքիսեդեկ ։
Ի. Կ * Իսկ արդ՝ եթէ կատարումն ՚ի ձեռն ղե- 11
տացւոց քահանայութեն էր, քանզի ժողո-
վուրդն յայն օրէնս դրեցաւ. զինչ պիտոյ էր
ըստ կարգին մելքիսեդեկի այլում քահա-
նայի յառնել, և ոչ ասել՝ թէ ըստ կարգին
ահարոնի ։ * Այլ ՚ի փոփոխել քահանայու- 12
թեն, հարկ էր և օրինացն փոփոխումն լի-
նել ։ * Զի զորմէ այսպէս ասի՝ յայլմէ ազ- 13
գէ կալաւ հաղորդութի, յորմէ ոչ ոք երբեք
եղև հաղորդ սեղանոյն ։ * Արդ յայտ իսկ 14
է, թէ յազգէ յուդայ ծագեաց տր մեր.
յորմէ ազգէ վն քահանայից մովսէս ինչ ոչ
խօսեցաւ ։ * Եւ ևս առաւել յայտ է՝ թէ 15
ըստ նմանութե մելքիսեդեկի յառնելոց է
այլ քահանայ. * որ ոչ ըս մարմնաւոր պատ- 16
ուիրանին եղև, այլ ըս զօրութե կենացն ան-
‖ Սաղ. ճթ. 4. վախճանից ։ * Քանզի վկայեցաւ, ‖ թէ դու 17
ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մել-
քիսեդեկի ։ * Արհամարհութի լինէր առա- 18
ջին պատուիրանին՝ վն նորին տկարութե և

ան-

19 անշահութեան. *քանզի ոչինչ կատարումն գոր-
ծեցին օրէնքն, եւ մուտ առաւելական յուսոյն՝
20 որով մերձենամք՝ առ ած. *Եւ այնչափ, զի
ոչ առանց երդման. զի են ոմանք՝ որ առանց
21 երդման են կացեալ քահանայք. *Բայց սա
երդմամբ 'ի ձեռն այնորիկ՝ որ ասացն 'ի նա.
Երդուաւ տր՝ եւ ոչ եւս զղջասցի, դու ես Սղմ.
22 քահանայ յաւիտեան. *Եւ այնչափ լաւա- 109. 4.
23 գոյն ուխտի եղեւ երաշխաւոր յս. *Եւ բա-
զում են կացեալ քահանայք՝ վս մահու ար-
24 գել լինելոյ 'ի մշտնջենաւորել. *Իսկ սա
վն յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ու-
25 նի զքահանայութիւն. *Ուստի եւ կենդանի
առնել համօրէն կարող է զմատուցեալս նո-
վաւ առ ած. քանզի միշտ կենդանի է լինել
բարեխօս վասն նց.

26 *Զի այսպիսի իսկ եւ վայել էր մեզ քահա- Ը.
նայապետ, որ անմեղ անարատ՝ զատեալ
'ի մեղաւորաց, եւ բարձրացեալ քան զեր-
27 կինս. *որում ոչ հանապազ հարկ է որպէս այ-
լոց քահանայապետացն, նախ վն իւրեանց Ղեւ.
մեղացն պատարագս մատուցանել՝ եւ ապա 16. 6.
վն ժողովրդեանն. իսկ սա զայն միանգա-
մայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պա-
28 տարագ. *Օրէնքն զմարդիկ կացուցանեն
քահանայապետս զգածեալս տկարութբ.
իսկ բանն երդման յետ օրինացն՝ զորդի, որ
յաւիտեան կատարեալ է.

## ԳԼ. Ը.

1 Եւ բանից գլուխ խօսիցս՝ այնպիսի ունիմք
քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մե-
ծու-

ծութեան աթոռոյն յերկինս, * սրբութեանցն 2
պաշտօնեայ՝ եւ խորանին ճշմարտութեան, զոր
Տէրն կանգնեաց՝ եւ ոչ մարդ։ * Զի ամ քա- 3
հանայապետ վս մատուցանելոյ զոհս եւ ըզ-
պատարագս կայ. ուստի հարկ է եւ նմա ու-
նել ինչ՝ զոր մատուցանիցէ։ * Զի եթէ էր 4
յերկրի, թերեւս չէր իսկ քահանայ. զի
գոյին՝ որ մատուցանեն ըստ օրինացն պատա-
րագ. * որք առակաւ եւ օրինակաւ պաշտեն 5
երկնաւորացն. որպէս եւ հրամայեցաւ Մովսէ-
սի՝ յորժամ գործելոց էր զվրանն ժամուն՝
‖ Ելից. 25. 40. Գործ. 7. 44. ‖ տեսջիր՝ ասէ. արասցես զամ ըստ օրինակին՝
որ ցուցաւ քեզ 'ի լերինն։ * Բայց արդ՝ ա- 6
ռաւելագոյն եւս պաշտաման եհաս սա, որչափ
լաւագոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ յառա-
ւել աւետեաց օրինադրեցաւ։ * Զի եթէ 7
առաջինն անարատ էր, ապա երկրորդին տե-
ղի ոչ խնդրէր։ * Նա աւանիկ բամբասէ 8
‖ Երեմ. 31. 31. զնա եւ ասէ. ‖ Ահաւասիկ աւուրք եկեսցեն՝
ասէ Տէր, եւ կատարեցից 'ի վր տանն Իղի եւ
'ի վերայ տանն Յուդայ՝ ուխտ նոր. * ոչ ըստ 9
ուխտին՝ զոր եդի ընդ հարսն նց՝ յաւուր յո-
րում առի 'ի ձեռն՝ հանել զնա յերկրէն ե-
գիպտացւոց. եւ զի նոքա ոչ կացին յուխտին
իմում, եւ ես անփոյթ արարի զնոցանէ, ա-
սէ Տէր ամենակալ։ * Այլ այս է ուխտն՝ զոր 10
եդից տանն Իղի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ
Տէր. տաց զօրէնս իմ 'ի միտս նց՝ եւ 'ի սիրտս
նց գրեցից զնա. եւ եղէց նց աւծ, եւ նոքա ե-
ղիցին իմ 'ի ժողովուրդ։ * Եւ ոչ եւս ու- 11
սուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր,
եւ իւրաքանչիւր զեղբայր իւր, եւ ասիցեն թէ
ծա-

ծանիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս 'ի
12 փոքրկանց մինչեւ 'ի մեծամեծս նոցա։ * Զի
քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա. եւ զմեղս նոցա
13 եւ զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից։ * Արդ՝
ասելովն նոր, հնացոյց զառաջինն. եւ որ հնա-
նայն եւ ծերանայ՝ մերձ է յապականութիւն։ ՎԵՐՋ.

## ԳԼ. Թ.

1 Ունէր ուրեմն եւ առաջինն իրաւունս պաշ-
տաման յայնժամ զաշխարհական սրբու-
2 թիւն։ * Զի խորանն առաջին հանդերձե- || Ելից.
ցաւ այսպէս. յորում աշտանակն եւ սեղանն 26. 1.
3 եւ հացն նուիրաց՝ որ սրբութիւն կոչէր։ * Իսկ 36. 8.
յետ երկրորդ վարագուրին խորանն՝ որ կո-
4 չէր սրբութիւն սրբութեանց. * յորում կայր բուր- || Ղեւտ.
վառն ոսկի, եւ արկղն կտակարանաց պատեալ 16. 12.
ներքոյ եւ արտաքոյ ոսկւով. յորում սափորն Թւոց.
ոսկի լի մանանայիւ, եւ գաւազանն Ահա- 16. 6.
րոնի՝ որ ծաղկեցաւ, եւ տախտակք կտակա- || 3 Թագ.
5 րանացն. * եւ 'ի վերայ նորա քերովբէքն փա- 8. 9.
ռաց՝ որ հովանի առնէին 'ի վերայ քաւութեանն. 2. Մնաց.
6 վասն որոց ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ * Իսկ 5. 10.
այս ամենայն իբրեւ այսպէս հանդերձեալ կայր,
յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քա-
7 հանայք զպաշտամունսն կատարել. * բայց
յերկրորդն || միանգամ 'ի տարւոջն քահա- || Ելից.
նայապետն. եւ զայն ոչ առանց արեան, զոր 30. 11.
մատուցանէր վասն իւր՝ եւ վասն ժողովրդեանն || Ղեւտ.
8 անգիտութեան։ * Զայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ՝ 16. 2.
մինչեւ յայտնեալ էր Ճանապարհն սրբու-
թեանցն. քանզի դեռ առաջին խորանն ունէր
9 զհաստատութիւն. * որ է առակ ժամանակին,

որ

որ առաջի կայր. յորում պատարագքն և զոհ-
քըն մատչէին, որք ոչ կարէին ըստ միտս կա-
տարել զպաշտամանն. բայց միայն կերակ-
րովք և ըմպելեօք, * և պէսպէս մկրտու- 10
թեմբք՝ մարմնոյ արդարութիւն. որ մինչև 'ի
ժամանակս ուղղութեան 'ի վե՛ր կային: * Այլ 11
քս եկեալ քահանայապետ հանդերձելոցն
բարեաց՝ մեծաւն և կատարելովն՝ և անձե-
ռագործ խորանաւ, այսինքն է՝ որ ոչ յայսց
արարածոց, * և ոչ արեամբ նոխազաց և զը- 12
ւարակաց. այլ իւրով արեամբն եմուտ
միանգամ 'ի սրբութիւն՝ յաւիտենականս գը-
Ղեւտ. տեալ զփրկութիւն: * Զի եթէ արիւն ցը- 13
16. 14. լուցն և նոխազաց՝ և մոխիր երինջոյն ցանեալ՝
զպղծեալսն սրբէր առ 'ի մարմնոյ սրբութիւն.
Ա. Պետ. * Որչափ ևս առաւել արիւնն քի, որ 'ի 14
1. 19. ձեռն հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն
Ա. Յովհ. անարատ պատարագ այ, սրբեսցէ զխիղճ
1. 7. Յայտ. մտաց ձերոց 'ի մեռելոտի գործոց անտի՝
1. 5. պաշտել զած կենդանի: * Եւ վա այսորիկ 15
նորոյ ուխտին է միջնորդ. զի յորժամ մահ
լինիցի՝ 'ի փրկութի վասն առաջնոյն ուխտին
յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն
'ի ժառանգութի յաւիտենից: * Քանզի ուր 16
կտակ է, հարկ է զմահ 'ի մէջ բերել զկտա-
Գաղա. կագրին: * Զի կտակ յետ մահու հաս- 17
3. 15. տատուն է: ապա թէ ոչ՝ զիա՞րդ իցէ հաս-
տատուն, մինչ կտակագիրն կենդանի է:
* Ուստի և ոչ առաջինն առանց արեան նո- 18
րոգէր: * Քանզի իբրև պատմեցաւ ամ 19
պատուիրանք օրինացն 'ի Մովսիսէ ժողովրը-
դեանն, առեալ զարիւն ցլուցն և նոխա-
զացն.

զացն, ջրով եւ բրդով կարմրով եւ զոպայիւ,
զկտակարանօքն իսկ եւ զամ ժողովրդեամբն
20 սրսկեաց, *եւ ասէ. ‖ այս է արիւն կտակին՝ ‖ Ել. 24. 8.
21 զոր պատուիրեաց ձեզ ած. *Եւ զխորա-
նանն եւ զամենայն կահն սպասուն նոյնպէս
22 սրսկեաց զարիւնն. *Եւ գրեթէ ամ ինչ
արեամբն սրբէր ըստ օրինացն. եւ առանց
23 հեղման արեան ոչ լինէր թողութիւն. *Արդ
հարկ էր օրինաւորացն այնպիսեօքն սրբել.
եւ բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պա-
24 տարագօք քան զայնս. *Զի ոչ եթէ 'ի ձե-
ռագործ սրբութիւնս եմուտ քս յօրինակս ճշ-
մարտութեանն. այլ 'ի բուն իսկ յերկինս, յան-
25 դիման լինել երեսացն այ վս մեր. *Ոչ զի
բզմ անգամ մատուցանիցէ զանձն պատա-
րագ՝ ոպ քահանայապետն, որ մտանէր 'ի
սրբութիւն սրբութեանցն ամի ամի արեամբն օտա-
26 րաւ. *ապա թէ ոչ պարտ էր նմա բզմ ան-
գամ չարչարել իսկզբանէ աշխարհի. բայց
արդ աւասիկ միանգամ 'ի կատարած յաւի-
տենից՝ յանարգութիւն մեղաց իւրով պատա-
27 րագաւն յայտնեալ է. *Եւ զոր օրինակ կայ
մնայ մարդկան միանգամ մեռանել՝ եւ յետ
28 այնորիկ դատաստան. *Նոյնպէս եւ քս միան- ‖ Հռով. 5. 9.
գամ մատուցեալ պատարագ առ 'ի բառնա- 1. Պետ.
լոյ զմեղս բազմաց. իսկ յերկրորդումն ա- 3. 18.
ռանց մեղաց յայտնեսցի այնոցիկ, որ ակն
ունիցին նմա հաւատովք 'ի փրկութիւն.

## ԳԼ. Ժ.

Ժ

1 Քանզի ստուեր հանդերձելոց բարեացն
ունէին օրէնքն, եւ ոչ զնոյն կերպարանս
իրացն.

իրացն. ամի ամի զնոյն պատարագս մատու-
ցանեն յանգ, որք ոչ են կարող զմատու-
ցեալսն կատարել. *ապա թէ ո՛չ դադարէին 2
'ի մատուցանելոյ, զի և ոչ մի ինչ այնուհե-
տև խիղճ մնայր ունելոյ պաշտօնէիցն միան-
գամ սրբեցելոցն. *այլ անդէն 'ի նոյն 'ի 3
յիշատակս մեղացն կային ամի ամի. *Ո՛չ ան- 4
գի ոչ կարէր արիւն նոխազացն և ցլուց բառ-
նալ զմեղս: *Վասն որոյ 'ի մտանելն իւրում 5
Սաղ. յաշխարհ՝ ասէ. ‖ զզոհս և զպատարագս
39. 7. ոչ կամեցար, բայց մարմին հաստատեցեր
ինձ. *զողջակէզս և զ̃ի վս մեղացն ոչ հա- 6
ձեցար: *Յայնժամ ասացի թէ ահաւասիկ 7
Սաղ. եկի. ‖ 'ի ձառս գրոց գրեալ է վս իմ, առ-
39. 8. նել զկամս քո ա̃ծ: *Վերագոյնն ասէ, թէ 8
զ̃ի զոհս՝ և ընծայ պատարագս՝ և զ̃ի ողջակէզս՝
և զ̃ի վս մեղացն ոչ հաձեցար, և ոչ կամե-
ցար՝ որք զ̃ի օրինացն մատչէին. *Ապա ա- 9
սէ՝ ահաւասիկ գամ առնել զկամս քո ա̃ծ.
մերժէ զառաջինն՝ զի զերկրորդն հաստա-
տեսցէ. *Որով կամօք և մեք սրբեցաք՝ 'ի 10
ձեռն պատարագի մարմնոյ յի̃ի ք̃ի միան-
գամ: *Եւ ա̃մ քահանայապետ կայ համա- 11
պազօրդ 'ի պաշտաման. և զնոյն պատարագս
մատուցանէ բազում անգամ, որք ոչ երբէք
կարող են բառնալ զմեղս. *Իսկ սա զմին 12
վս մեղաց մատոյց պատարագ. և մշտնջենա-
ւոր նստաւ զ̃ի աջմէ ա̃յ. *Եւ այսուհետև 13
Սաղ. ակն ունի՝ ‖ մինչև դիցին թշնամիք իւր 'ի
109. 2. 1. Կոր. ներքոյ ոտից իւրոց: *Զի միով պատա- 14
15. 25. րագաւ կատարեաց զսրբեալսն 'ի մշտնջե-
նաւորս: *Վկայէ մեզ և հոգին սբ՝ 15

յետ

16 յետ ասելոյն յառաջագոյն. *‖ Եթէ այս ‖ Երեմ.
է ուխտն՝ զոր եդից ը՟ հարս նց յետ աւուր- 31. 33.
ցըն այնոցիկ, ասէ Տր. տաց զօրէնս իմ ՚ի Վեր. 8. 8.
միտս նոցա, եւ ՚ի խորհուրդս նոցա գրեցից
17 զնս. *Ապա ասէ՝ թէ զմեղս նց եւ զանօ-
18 րէնութիւնս նց այլ ոչ եւս յիշեցից. *Իսկ ուր
թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն մեղաց
պատարագ. ՎԵՐՋ
19 *Արդ ունիմք այսուհետեւ եղբարք՝ համարձա-
կութիւն ՚ի մուտս սրբութեանն արեամբն յի·
20 *զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ եւ
կենդանի ՚ի ձեռն վարագուրին, այսինքն է՝
21 մարմնոյ իւրոյ. *եւ քահանայ մեծ ՚ի վերայ
22 տանն այ. *մատիցուք ճշմարիտ սրտիւք՝
լրութ՟ հաւատոց, լուացեալ զսիրտս ՚ի խղճ-
մտէ չարեաց՝ եւ մկրտեալ զմարմինս ՚ի ջուրս
23 սրբութե. *Պինդ կալցուք զխոստովանութ՟
անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոս-
24 տացաւն. *Եւ զգուշասցուք միմեանց յոր-
25 դորմանս սիրոյ եւ գործոց բարեաց. *եւ մի
թողցուք զժողովս միմեանց, որպէս եւ սովոր են
ոմանք. այլ մխիթարեսցուք, եւ այնչափ եւս
առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ.
26 *‖ Զի կամակար մեք եթէ յանցանիցեմք ‖ Վեր.
յետ ընդունելութե գիտութե ճշմարտութեն՝ 6. 4.
այսուհետեւ ոչ եւս պիտոյ է վն մեղաց պա-
27 տարագ. *այլ ահեղ ակնկալութի դատաս-
տանին, եւ նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհա-
28 կառակորդսն. *Արհամարհեալ ուրուք զօ-
րէնսն Մովսէսի, առանց ողորմութեց՝ ‖ առ ‖ 2·Օրի·
29 երկուք կմ երիւք վկայիւք մեռանէր. *Իսկ 17. 6. Մտթ.
որչափ սաստիկ պատժոյ արժանի համարի- 18. 16.

Յովհ. ցէք զայն, որ զորդին այ առ ոտն եհար. եւ
8. 17. զարիւն նորոյ ուխտին խառնակ համարե-
Բ. Կոր. ցաւ որով եւ սրբեցաւն. եւ զհոգին շնորհաց
13. 1. թշնամանեաց: *Այլ գիտեմք զայն՝ որ ա- 30
Բ. Օրէ. սացն. Իմ են վրէժխնդրութիւնք, եւ ես հա-
32. 35. տուցից՝ ասէ տր. եւ դարձեալ թէ՝ դատի տր
Հռով. զժողովուրդ իւր: *Ահ մեծ է անկանել ի 31
12. 19. ձեռս այ կենդանւոյ:

*Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս. յորս 32
լուսաւորեալք բազում ճգնանց եւ չարչարա-
նաց համբերեցէք. *մերթ ի նախատինս եւ ի 33
նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այն-
պիսեաց վաստակաւորացն լինել: *Քան- 34
զի եւ ընդ կապեալս չարչարեցարուք, եւ ըզ-
յափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկա-
լարուք. քանզի գիտէիք թէ լաւագոյն եւս
ստացուածս ունիք անձանց յերկինս՝ որ
կայուն եւ մնան: *Արդ մի մերժէք ի ձէնջ 35
զհամարձակութիւն ձեր, յորում կայ մեծաց
վարձուց հատուցումն: *Պիտոյ է ձեզ համ- 36
բերութիւն. զի զկամս այ արարեալ՝ հասջիք
աւետեացն: *Զի փոքր մի եւս քան որ- 37
չափ՝ որ գալոցն իցէ՝ եկեսցէ, եւ ոչ յամես-
Ամբակ. ցէ: *Զի արդարն իմ ի հաւատոց կեց- 38
2. 4. ցէ. եւ եթէ յերկմիտս որ իցէ, ոչ հաճեսցի
Հռով. ընդ նա անձն իմ: *Բայց մեք ոչ եթէ երկ- 39
1. 17. մտութեան եմք ի կորուստ. այլ հաւատովք
Գաղատ. 3. 11. ի փրկութիւն հոգւոց:

## ԳԼ. ԺԱ.

Զինչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց 1
իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն՝

որոց

2 որոց ոչն երեւին։ * Զի սովաւ վկայեցան ա-
3 ռաջինքն։ *‖Հաւատով իմանամք հաստա- ‖Ծննդ. 1. 3.
տեալ զյաւիտեանս բանիւն Այ, յաներեւ-
4 թից զերեւելիսս եղեալ։ *‖Հաւատով լաւ- ‖Ծննդ. 4. 4.
պատարագս հարկել քան զԿայենն մատուցա-
նէր Այ, ‖որով վկայեցաւ իսկ արդար լինել. ‖Մատթ. 23. 35.
զի 'ի վ՟ր պատարագացն եւ նմա վկայեաց Ած
յոյ. զի թէպէտ եւ մեռաւ 'ի նմին, առակս
5 տակաւին խօսի։ *‖Հաւատով Ենովք փո- ‖Ծննդ. 5. 24.
խեցաւ՝ զի մի՛ զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ու-
րեք գտանէր, քանզի փոխեաց զնա Ած. եւ
յառաջ քան զփոխելն նր՝ վկայեցաւ հաճոյ
6 լինել Այ։ *Բայց առանց հաւատոյ անհնար
է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է
այնմ որ մերձենայ առ Ած՝ թէ է Ած. եւ որ
7 խնդրեն զնա՝ լինի պարգեւատու։ *‖Հաւա- ‖Ծննդ. 6. 14.
տով առեալ հրաման Նոյ՝ վասն չեւեւ ե- 7. 1.
րեւելեացն զանգի հարեալ կազմէր զտապանն
'ի փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւն
զաշխարհ. եւ հաւատոյն արդարութեան եղե-
8 ժառանգաւոր։ *‖Հաւատով՝ որ աբրա- ‖Ծննդ. 12. 4.
համն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ելանել 'ի տե-
ղին, զոր առնլոց էր 'ի ժառանգութիւն. ել
9 գնաց՝ եւ ոչ գիտէր յո՛ երթիցէ։ *Հաւա-
տով պանդխտեցաւ յերկիրն աւետեաց իբ-
րեւ յօտարում. խորանօք բնակեաց իսահա-
կաւ եւ յակոբաւ համերձ ժառանգակցօք
10 նորին աւետեաց։ *Քանզի ակն ունէր հի-
մամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճար-
11 տարապետ եւ արարիչ Ած է։ *‖Հաւատով ‖Ծննդ. 17. 19.
եւ նոյն սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առ-
եալ զաւակին որդեծնութեան ընդունէր, եւ 'ի

տա-

տարաժամ հասակի ծնանելոյ. քանզի հաւա-
տարիմ համարեցաւ զայն՝ որ խոստացաւն։
*Վասն որոյ և ՚ի միոջէն ծնանէին. և այն՝ 12
՚ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկ-
նից բազմութ. և իբրև զաւազ առ ափն ծո-
վու առանց թուոյ։ *Ըստ հաւատոյ մեռան 13
ամենեքին սոքա, և չև ևս ընկալեալ զաւե-
տիսն, այլ ՚ի հեռաստ տեսին զնա՝ և ցն-
ծացին, և խոստովանեալ եղեն՝ եթէ օտարք և
պանդխտութիւնք են յերկրի։ *Ոյք այդ զայս- 14
պիսիսն խօսին, յայտ առնեն՝ եթէ զգաւա-
ռին խնդրեն։ *Ոչ եթէ զայն յիշէին ուս- 15
տի ելինն, գոյր ժամանակ դառնալոյ անդ-
րէն։ *Այլ աւանիկ ազնուագունին իմն ցան- 16
կացեալ են, այսինքն է՝ երկնաւորին. վասն
որոյ ոչ ամօթ համարի ած՝ կոչել նոցա ած.
Ծննդ. քանզի պատրաստեաց նց քաղաք։ *Հաւա- 17
22. 1. տովք մատոյց աբրահամ ՚ի փորձանսն իւ-
րում զիսահակ պատարագ. և զմիամօրն մա-
տուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր.
Ծննդ. *որում ասացաւն, Թէ սահակաւ կոչես- 18
21. 12. ցի քեզ զաւակ. *Եւ ՚ի մտի իւրում, թէ և 19
Հռովմ. ՚ի մեռելոց կարող է յարուցանել ած. ուս-
9. 7. տի և յառակս ընկալաւ զնա։ *Հաւատովք՝ 20
Ծննդ. վասն հանդերձելոց իրաց օրհնեաց իսահակ
27. 27. և 39. զյակոբ և զեսաւ։ *Հաւատովք յակոբ 21
Ծննդ. ՚ի մեռանել իւրում զիւրաքանչիւր յորդ-
48. 15. ւոցն յովսեփու օրհնեաց, և երկիր եպագ
Ծննդ. 47. 31. ՚ի ծայր գաւազանի իւրոյ։ *Հաւատովք 22
Ծննդ. 50. 23. յովսէփ ՚ի վախճանել իւրում յիշեաց զելս
որդւոցն իսրայէլի, և վասն ոսկերաց իւրոց
Ելից. պատուիրեաց։ *Հաւատովք՝ զմանուկն իբ- 23
2. 2.
րև

րեւ ծնաւ, թաքուցաւ ամիսս երիս 'ի հարց
իւրոց, քանզի տեսին կայտառ զմանուկն,
եւ ոչ զանգիտեցին 'ի հրամանէ թագաւո- ‖ Ելից. 1. 17.
24 րին. * Հաւատովք Մովսէս իբրեւ անձնացաւ՝ ‖ 2. 11.
ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի.
25 * լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովր-
դեանն այ, քան առ ժամանակ մի վայելել
26 'ի մեղս. * Կարեւոր համարեցաւ զնախա-
տինսն քի, քան զմեծութիւն գանձուցն Ե-
գիպտացւոց. զի հայեցեալ անդ ունէր վար-
27 ձուցն հատուցմանն. * Հաւատովք թողոյր
զերկիրն եգիպտացւոց, եւ ոչ երկնչէր 'ի ցաս-
մանէ թագաւորին. զի զաներեւոյթն իբրեւ
28 զտեսեալ համբերէր համարեցաւ. * Հա- ‖ Ելից. 12. 21.
ւատովք արար զպասեքն եւ զհեղումն ա-
րեանն. զի մի սատակիչն անդրանկացն մեր-
29 ձեսցի 'ի նա. * Հաւատովք անցին ընդ ‖ Ելից. 14. 22.
ծովն կարմիր՝ իբրեւ ընդ ցամաք երկիր. զո-
րոյ զփորձ առեալ եգիպտացւոցն՝ ընկղմե-
30 ցան. * Հաւատովք պարիսպքն երիքովի ան- ‖ Յես. 6. 20.
31 կան, շուրջ եկեալ զեօթն օր. * Հա- ‖ Յես. 2. 3.
ւատովք Ռախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ ան-
հաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն խա-
32 ղաղութեամբ. * Եւ այլ՝ զինչ եւս ասացից.
զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն
գեդէովնի բարակայ սամփսոնի յեփթայեայ՝
դաւթի եւ սամուէլի եւ այլոց մարգարէիցն.
33 * որք հաւատովք պարտեցին զթագաւորու-
թիւս. գործեցին զարդարութիւն. հասին ա-
34 ւետեաց. խցին զբերանս առիւծուց. * շի-
ջուցին զզօրութիւն հրոյ. ապրեցան 'ի բերա-
նոյ սրոյ. զօրացան 'ի տկարութենէ. եղեն զօ-

րա-

բաւուրք 'ի պատերազմի. առին զբանակս օ-
տարաց: *Ընկալան կանայք 'ի յարութենէ 35
զմեռեալս իւրեանց. կէսք կոշկոձեցան՝ եւ
ոչ եւս ընկալեալ զփրկութիւն, զի լաւագոյն
յարութեանն հասանիցեն: *Այլ կէսք զտան- 36
ջանաց եւ զծաղուց զփորձ առին, զկապանաց
եւ զբանտից: *Քարկոծեցան, սղոցեցան, 37
փորձեցան. սպանմամբ սրոյ մեռան. շրջե-
'Իբէշ/Ի. ցան (լեաշկ մաշկօք՝) եւ մորթովք այծենեօք.
այծերե- կարօտեալք, նեղեալք, չարչարեալք. *զորս 38
գէն աշ- ոչ արժէ աշխարհս. յանապատս մոլորեալք՝
կաշիք եւ 'ի լերինս՝ եւ յայրս՝ եւ 'ի փապարս երկրի
*Այլ սոքա ամենեքին վկայեալք 'ի հաւա- 39
տոյն, ոչ եւս ընկալան զաւետիսն: *Զի վա 40
մեր լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր
կատարեսցին:

## ԳԼ. ԺԲ.

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ ըզ- 1
մեօք մածեալ ունիմք զբազմութիւն վը-
'Հռով. կայից, ‖ զհպարտութիւն զամ 'ի բաց ընկե-
Ե. Կ. ցուք՝ եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ըն-
Եփես. Կ. 22. թասցուք 'ի պատերազմ՝ որ առաջի կայ
մեզ: *Հայեսցուք 'ի զօրագլուխն հաւա- 2
տոց՝ եւ 'ի կատարիչն Յս. որ փոխանակ ու-
րախութեանն՝ որ նմա առաջի կայր, յանձն ա-
ռեալ, արհամարհեալ զամօթ, նստաւ ըն
աջմէ աթոռոյն այ: *Ածէք միտս զնա, 3
որ զայսպիսի համբերութի 'ի մեղաւորաց հա-
կառակութէ անձին կրեաց. զի մի աշխատ
լինիցիք անձամբք ձերովք՝ եւ լքանիցիք:
*Ոչ եւս արեամբ չափ պատերազմեալք՝ 4
հա-

5 հակառակ կայեք մեղացն. * Եւ մոռացա-
րուք զմխիթարութիւն, որ ընդ ձեզ իբրեւ
ընդ որդեակս խօսի.

Գ.

‖ Որդեակ իմ՝ մի՛ լքանիր 'ի խրատու Տն եւ
6 մի վհատիցիս՝ յանդիմանել 'ի նմանէ. * Զի ‖ Առակ. 3. 11.
զոր սիրէ Տր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր Յայտ. 3. 19.
7 ընդունի. * 'Ի խրատու համբերեալ կայք,
իբրեւ յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Այ. որ
8 որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր. * Զի եթէ
առանց խրատու լինիցիք, որով ամենեքին
բաժանորդք եղեն. ապա խորթք իցէք՝ եւ ոչ
9 որդիք. * Զի եթէ 'ի մարմնաւոր հարցն
մերոց՝ զոր ունիմք խրատիչս՝ պատկառեմք,
ո՞րչափ եւս առաւել հնազանդեսցուք հօրն
10 հոգւոց՝ եւ կեցցուք. * Զի նոքա առ սակաւ
ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատէին.
իսկ նա վասն օգտի, առ 'ի ընդունելոյ զսրբու-
11 թիւն իւր. * Ամենայն խրատ առ ժամանակն
ոչ ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան. բայց
յետոյ պտուղ խաղաղութեան նոցա կրթե-
12 լոցն հատուցանէ արդարութեան. * Վասն ա-
րոյ զձեռս լքեալս՝ եւ զծունկս կթոտս հաս-
13 տատեցէք. * Եւ շաւիղս ուղիղս արարէք ա-
ռից ձերոց, զի մի որ կաղն իցէ՝ գլորիցի,
14 այլ մանաւանդ բժշկեսցի: * ‖ Զխաղա- ‖ Հռովմ.
ղութիւն զհետ երթայք ընդ ամենեսին՝ եւ զսր- 12. 18.
բութիւն. առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏր.
15 * Զգոյշ լերուք՝ գուցէ ոք յետնեալ գտա-
նիցի 'ի շնորհացն Այ. Մի ոք արմատ դառ-
նութեան 'ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ բա-
16 զումք պղծիցին. * Մի ոք պոռնիկ եւ պիղծ
‖ իբրեւ զԵսաւ. որ ընդ միոյ կերակրոյ զանդ- ‖ Ծնն.
րան- 25. 33.

րանկութիւն վաճառեաց։ *Գիտէք՝ զի 17
‖Ծննդ. թէպէտ ‖ և յետոյ կամեցաւ ժառանգել
25. 33. զօրհնութիւն, խոտան գտաւ. զի ապաշխա-
‖27. 38. րութեան տեղի ոչ եգիտ. թէպէտ և արտա-
սուօք խնդրեաց զնա։

Դ.

*‖Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշա- 18
փելի՝ որ հրովն վառեալ էր՝ և մէգ և մա-
‖Ելից. ռախուղ և խաւար և մրրիկ. *ուր փողն 19
19. 12. հնչէր և բարբառ պատգամացն. ուստի՝ որք
20. 21. լուանն՝ հրաժարեցին, զի մի կրկնեսցի առ
նա բանն։ *Վասնզի ոչ հանդարտէին հրա- 20
‖Ելից. մանին. ‖թէպէտ և գազան մերձենայր ՚ի
19. 13. լեառն՝ քարկոծ լինէր։ *Եւ այնպէս ահա- 21
գին էր տեսիլն, զի և Մովսէս ասէր, եթէ
զահի հարեալ եմ և դողամ *Այլ մատու- 22
ցեալ էք ՚ի Սիովն լեառն և ՚ի քաղաք ա̃յ կեն-
դանւոյ՝ յէ̃մ յերկինս, և ՚ի բիւրաւոր բա-
նակս հրեշտակաց, *և յեկեղեցիս անդրան- 23
կաց գրելոց յերկինս, և առ դատաւորն ա-
մենեցուն ա̃ծ, և յոգիս արդարոց կատարե-
լոց. *և ՚ի նորոյ կտակարանաց միջնորդն 24
յ̃ս, և ՚ի հեղումն արեան նր̃՝ որ առաւել
խօսի քան զհաբելին։

*Զգոյշ լերուք գուցէ հրաժարիցէք յայն- 25
մանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կա-
րացին զերծանել հրաժարեալք յայնմանէ՝
որ յերկրի հրամանն տայր. ո՜րչափ ևս առա-
ւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դար-
ձուցանիցեմք։ *Որոյ ձայնն զերկիր շար- 26
ժեաց յայնժամ. և այժմ խոստացեալ է՝ և
‖Անգ. ասէ. ‖միւսանգամ շարժեցից ոչ միայն զեր-
2. 7. կիր՝ այլ և զերկինս։ *Այլ միւսանգամն 27

յայտ

յայտ առնէ զշարժելոցն իբրեւ զեղելոց փո-
փոխումն, զի հաստատունն կայցեն անշարժ-
28 քն ։ *Վասն որոյ թագաւորութիւն անշարժ
ընկալեալ, ունիմք կալցուք զշնորհսն, որով
պաշտեսցուք զԱծ հաճութեամբ՝ ահիւ եւ դողութբ.
29 *Քանզի Ածն մեր հուր ծախիչ է ։ ‖ Բ. Օրէ. 4. 24.

## ԳԼ. ԺԳ.

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ ։
2 *Զօտարասիրութիւն մի մոռանայք ։ ‖ Զի այ- ‖ Հռով. 12. 13.
նու ոմանք յանգէտս ընկալան զհրեշտակս ։ 1. Պետ.
3 *Յուշ լիցին ձեզ կապեալքն՝ որպէս թէ 4. 9.
դուք ը͞ն նոսա կապեալ իցէք. եւ չարչարեալքն, ‖ Ծննդ.
4 որպէս եւ դուք իսկ մարմնաւոր էք ։ *Պատ- 18. 1.
ուական է ամուսնութիւն ամենեւին՝ եւ սուրբ 19. 2.
անկողինք. բայց զշունս եւ զպոռնիկս դատի
5 Ած ։ *Վարք անարծաթասէրք լիցին,
բաւական համարել որչափ ինչ ՚ի ձեռս իցէ.
քանզի ինքն իսկ ասաց. ‖ Ոչ թողից զքեզ՝ ‖ Յեսու.
6 եւ ոչ ընդ վայր հարից. *որպէս համարձակ 1. 5.
լիցուք ասել. ‖ Տէր է իմ օգնական, եւ ես ‖ Սաղ.
7 ոչ երկեայց, զի արասցէ ինձ մարդ ։ *Յի- 117. 6.
շեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ
զբանն Այ. հայեցեալ յելս գնացից նոցա՝
8 նմանօղք եղերուք հաւատոյն ։ *Յս քս ե-
9 րէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս ։ *Յու-
սմունս պէսպէս եւ յօտարաձայնս մի զան-
գայցէք. զի լաւ է շնորհօք հաստատել ըզ-
սիրտս՝ եւ ոչ կերակրովք. որովք ոչինչ օգ-
տեցան՝ որ այնպէսն գնացին ։ Ն
10 *Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշ-
խանութիւն ճաշակել որք պաշտեն զխորան-

Ղեւտ. խորանին։ *Զի որոց անասնոց մտանէր ա- 11
16. 27. րիւնն 'ի սրբութիւնս վասն մեղաց 'ի ձեռն քա-
հանայապետին, նոցուն մարմինքն այրէին
արտաքոյ բանակին։ *Վասն որոյ և յս՝ զի 12
սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն,
արտաքոյ դրանն չարչարեցաւ։ *Արդ՝ և 13
մեք ելցուք առ նա արտաքոյ բանակին, ու-
Միք. նելով յանձն զնախատինս նր։ *Քանզի 14
2. 10. ոչ եթէ ունիմք քաղաք՝ որ աստէն մնալոց ի-
ցէ, այլ զհանդերձեալն խնդրեմք։ *Արդ՝ 15
'ի ձեռն նր մատուսցուք պատարագ օրհնու-
թեան յամենայն ժամ այ. այսինքն է՝ զպտուղ շր-
թանց խոստովանելոց յանուն նր։ *Զբա- 16
րերարութիւն և զհաղորդութիւն մի մոռանայք,
զի ընդ այնպիսի պատարագս հաճի այ։
*Անսացիք լերուք առաջնորդաց ձերոց, և 17
հպատակ կացէք նց. զի նոքա տքնին վասն
ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց
իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն
զայն՝ և մի յոգւոց հանելով. զի այն ոչ յօ-
գուտ ձեր է։

ԿԻԲ *Աղօթս արարէք վասն մեր. զի հաւա- 18
տեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք.
յամի կամիմք բարւոք գնացս ցուցանել։
*Առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, 19
զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ։ *Այլ 20
ած խաղաղութեան՝ որ եհան 'ի մեռելոց զհո-
վիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենական
ուխտին զտր մեր յս, *հաստատեսցէ զձեզ 21
'ի գործս բարութեան առնել զկամս նր. և ա-
րասցէ 'ի մեզ զհաճոյս առաջի իւր 'ի ձեռն
յսի քի. որում փառք յաւիտեանս. ամէն։

*Ա

22 *Աղաչեմ զձեզ եղբարք՝ անսալ բանիս մխի-
թարութեան. քանզի սակաւուք գրեցի ձեզ։
23 *Այլ ճանաչէք զեղբայրն մեր զտիմոթէոս
զարձակեալն առ ձեզ. ընդ որում, եթէ վաղ-
24 վաղակի գայցէ՝ տեսից զձեզ։ *Ողջոյն տա-
ջիք ամ առաջնորդաց ձերոց, և ամ սրբոց։
Ողջոյն տան ձեզ՝ որ 'ի կողմանս Իտալիաց-
25 ւոց են։ *Շնորհք ընդ ամենեսին ձեզ.
ամէն։

Առ Եբրայեցիս՝ գրեցաւ յԻտալիոյ 'ի ձեռն Տիմոթեայ։



# ԹՈՒՂԹ

## ԿԱԹՈՒՂԻԿԷԱՅ

## ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

### ԳԼ. Ա.

ԱԲ.

ՅԱԿՈԲՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ 1
և տռն յսի քսի ծառայ. երկոտա-
սան ազգացդ որ 'ի սփիւռս էք՝
ողջոյն։ *Ամենայն ուրախու- 2
թիւն արժանի համարեսջիք եղ-
բարք, յորժամ 'ի պէսպէս փորձութիւնս 'ի
Հռմ. 5. 3. մէջ անկանիցիք։ *Գիտասջիք զի հանդէս 3
ձերոց հաւատոցն յարինեալ գործէ զհամբե-
րութիւն։ *Իսկ համբերութիւն գործ կատա- 4
րեալ ունիցի, զի իցէք ողջանդամք և կա-
տարեալք, և ոչ ինչ նուազեալք։ *Ապա 5
թէ որ 'ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստուէ,
խնդրեսցէ յԱյ, որ տայն ամն առատապէս՝ և
Մտթ. 7. 7. և 21. 22. ոչ նախատէ. և տացի նմա։ *Այլ խնդր- 6
եսցէ հաւատովք՝ և մի երկմտեսցէ. զի որ
Մրկ. 11. 24. երկմտոն է՝ նման է հողմակոծեալ և տատա-
Ղկս. 11. 19. նեալ ալեաց ծովու։ *Մի ակնկալցի մարդն 7
այն

8 այն առնուլ ինչ յԱյ․ * զի այր երկմիտ՝ ա- Յեր.
ռանց հաստատութեան է յամ ճանապարհս 14. 13.
9 իւր․ *Պարծեսցի եղբայր խոնարհն ի բարձ- 16. 25.
10 րութիւն իւր, *և որ մեծատունն իցէ ի խո-
նարհութիւն իւր․ || քանզի իբրև զծաղիկ խո- || Եսա.
11 տոյ անցցէ․ *զի ծագեաց արև հանդերձ 40. 6.
խորշակաւ՝ և ցամաքեցոյց զխոտն, և թօ- 1. Պետ.
թափեցաւ ծաղիկն նր, և վայելչու- 1. 24.
թիւն երեսաց նորա․ նոյնպէս և մեծատունն
հանդերձ շաւիղս իւրովք թառամեսցի․
12 *|| Երանեալ է այր որ համբերիցէ փորձու- || Յոբ.
թեան․ զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ 5. 17.
զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց
իւրոց․
13 *Մի ոք որ ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ ԼԱ
յԱյ փորձիմ․ զի Ած անփորձ է չարեաց․
14 փորձէ նա և ոչ զոք․ *իւրաքանչիւրոք փոր-
ձի ի յիւրոյն ցանկութենէ ձգեալ և պատ-
15 րեալ․ *Ապա այնուհետև ցանկութիւն յղա-
ցեալ՝ ծնանի զմեղս․ և մեղքն կատարեալ՝
16 ծնանին զմահ․ *Մի խաբիք եղբարք իմ
17 սիրելիք․ *զի ամ տուրք բարիք՝ և ամ պար-
գևք կատարեալք ի վերուստ են իջեալ ա-
ի Հօրէն լուսոյ․ յորում չիք փոփոխումն՝ և
18 կամ շրջելոյ ստուեր․ *Կամեցեալ ծնաւ ըզ-
մեզ բանիւ ճշմարտութեան՝ լինել մեզ պը-
19 տուղ ինչ արարածոց նր․ *Գիտասջիք
եղբարք իմ սիրելիք․ || Եղիցի ամ մարդ ա- || Առակ.
րագ առ ի լսել, և ծանր առ ի խօսել, և 17. 27.
20 ծանր առ ի բարկանալ․ *Զի բարկութիւն
21 մարդոյ զարդարութիւն Այ ոչ գործէ․ *|| Վասն 1. Պետ.
ի բաց թօթափեալ զամ աղտեղութիւն և 2. 1.

զյա-

զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունի-
ջիք զբանն ընդաբոյս. որ կարողն է կեցու-
Մատթ. ցանել զոգիս ձեր։ *Եղերուք առնողք բա- 22
7. 21. նին, եւ մի լսողք միայն՝ համարեցեալք զան-
Հռովմ. ձինս։ *Զի եթէ որ լսող միայն իցէ բանին՝ 23
2. 13. եւ ոչ առնող, նման է նա մարդոյ, որ պշու-
ցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնանիցն ՚ի
հայելւոջ. *զի հայեցաւ եւեթ զինքն՝ եւ 24
զանց արար, եւ անդէն մոռացաւ թէ որպի-
սի ոք էր։ *Իսկ որ յառեալ ՚ի կատարեալ 25
օրէնս ազատութեան հայեսցի եւ ՚ի նմին կայ-
ցէ, ոչ եղեալ նա լսող մոռացութեան՝ այլ առնե-
լի գործոյն. նա՝ յառնելն իւրում լիցի երա-
նելի։ *Եթէ որ կարծիցէ կրօնաւոր լինել՝ եւ 26
ոչ սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղեցու-
ցանիցէ զսիրտ իւր, այնպիսւոյն վայրապար
է կրօնաւորութիւնն։ *Կրօնաւորութիւն սուրբ 27
եւ անարատ՝ առ ՚ի յԱյ եւ ՚ի Հօրէ՝ այս է,
այցելու լինել որբոց եւ այրեաց ՚ի նեղութեան իւ-
րեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ։

## ԳԼ. Բ.

Բ. Օ. Եղբարք իմ, մի աչառութեամբ ունիցիք ըզ- 1
1 Ղեւ. հաւատսն Տն մերոյ Յի Քի, որ տէրն է
19. 15. փառաց։ *Եթէ մտանիցէ ՚ի ժողովուրդ- 2
2 Օրէն. ձեր այր՝ որ ունիցի մատանի ոսկի եւ հան-
1. 17. դերձս պայծառս, մտանիցէ անդր եւ աղ-
16. 19. քատ որ ՚ի հանդերձս աղտեղիս, *հայիցիք 3
Առակ. ընդ այն՝ որ ունիցի զհանդերձսն պայծառս.
24. 23. եւ ասիցէք՝ եթէ դու նիստ աստ պատուով.
եւ աղքատն ասիցէք՝ եթէ յոտն կաց դու
այդր. կամ թէ՝ եկ նիստ առ պատուանդա-
նիս

4 նիս իմում։ * Ո՞չ խտրեցէք յանձինս՝ եւ լինի-
5 ջիք դատաւորք չարեացն խորհրդոց։ * Լուա-
րո՛ւք եղբարք իմ սիրելիք, ո՞չ Աստուած
ընտրեաց զաղքատս աշխարհիս, որ են
մեծատունք հաւատովք, եւ ժառանգաւորք
արքայութեանն՝ զոր խոստացաւ սիրելեաց իւ-
6 րոց։ * Եւ դուք անարգեցէք զաղքատս։ Ո՞չ
մեծատունքն յաղթահարեն զձեզ՝ եւ նոքա
7 քարշեն զձեզ ՚ի դատաստան։ * Ո՞չ նոքա
հայհոյեն զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է
8 ՚ի վերայ ձեր։ * Ապա թէ զօրէնսն կատարե-
ջիք զարքունականս ըստ գրոյ, ‖ եթէ սի- ‖ Ղեւ.
րեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, բարւոք 19. 18. Մատթ.
9 առնէք։ * Իսկ եթէ աչառեսջիք, մեղս գոր- 22. 39.
ծէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրեւ օրինա- Մարկ.
10 զանցք։ * ‖ Որ որ զամ օրէնսն պահիցէ, եւ 12. 31.
միով իւիք ինչ գլթիցէ, եղեւ ամ օրինացն ‖ Մատթ. 5. 19.
11 պարտապան։ * Զի որ ասացն՝ թէ մի՛ ըս-
պանանիցես, ասաց թէ եւ մի՛ շնայցես. զի
եթէ սպանանիցես ոչ՝ բայց շնայցես, եղեր
12 յանցաւոր օրինացն։ * Այնպէս խօսեցա-
րո՛ւք եւ այնպէս արարէք, որպէս զի ազատութեան
13 օրինօքն իցէք դատելոց։ * Զի անողորմ
դատաստանն լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ
ողորմութիւն. քանզի բարձրագլուխ պարծի
ողորմութիւն առ դատաստանաւն։

Ը.

14 * Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ ա-
սիցէ ոք հաւատս ունել՝ եւ գործս ոչ ունիցի.
միթէ կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել
15 զնա։ * ‖ Եթէ եղբայր ոք կամ քոյր՝ իցեն ‖ Յ-Հ. 3. 17.
16 մերկ կամ կարօտեալ աւուրն կերակրոյ, * ա-
սիցէ ոք ՚ի ձէնջ ցնա. երթայք խաղաղութեամբ,

ջեռարուք և յագեցարուք. և ոչ տայցէք նո-
ցա զպէտս մարմնոյ, զի՞նչ օգուտ իցէ։
* Սոյնպէս և հաւատք եթէ գործս ոչ ունի- 17
ցին, մեռեալ են առանձինն։ * Այլ եթէ- 18
ւս ասիցէ ոք. եթէ դու հաւատս ունիս՝ և
ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո ա-
ռանց գործոց, և ես ցուցից քեզ ՚ի գործոցն
իմոց զհաւատս։ * Դու հաւատաս՝ զի մի է 19
ա՜ծ, բարւոք առնես. և դեւք հաւատան՝ և
սարսեն։ * Կամիս գիտել ո՞վ մարդ ունայն, 20
զի հաւատք առանց գործոց դատարկ են։
‖ Ծնն. * ‖ Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն ՚ի գոր- 21
22. 9. ծոց արդարացաւ՝ հանեալ ՚ի սեղան զորդին
իւր զիսահակ պատարագ։ * Տեսանես՝ զի 22
հաւատքն եղեն գործակից գործոց նո՛րա, և ՚ի
գործոց անտի հաւատքն կատարեցան։ * Եւ 23
‖ Ծնն. կատարեցաւ գիրն՝ որ ասէ. ‖ հաւատաց աբ-
15. 6. րահամ յա՜ծ, և համարեցաւ նմա յարդա-
Հռովմ. րութիւն. և կոչեցաւ բարեկամ այ։ * Տեսա- 24
4. 3. նէք՝ զի ՚ի գործոց արդարանայ մարդ՝ և ոչ
Յակ. ՚ի հաւատոց միայն։ * Սոյնպէս և ‖ Ռահաբ 25
2. 6. պոռնիկ ո՞չ ապաքէն ՚ի գործոց արդարա-
‖ Եբր. ցաւ, ընկալեալ զլրտեսսն՝ և ընդ այլ ճանա-
2. 4. պարհ արձակեաց։ * Որպէս մարմինն 26
առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս և հա-
ւատք առանց գործոց մեռեալ են։

## ԳԼ. Գ.

Ի. Կ ՄԻ ‖ բազում վարդապետք լինիք եղբարք 1
‖ Մտթ. իմ, գիտասջիք՝ զի մեծ դատաստան ըն-
23. 8. դունելոց եմք. * Քանզի բազում ինչ յան- 2
ցանեմք ամենեքեան։ * Եթէ ոք բանիւ ոչ 3
յան-

յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կա-
րօղն է սանձահարել զամենայն մարմին իւր։
3 * Ահա զի ձիոց սանձս 'ի բերան դնեմք՝ առ-
անսալոյ նց մեզ, և զամ մարմինս նց նուա-
4 ճեմք։ * Ահաւասիկ և նաւք մրրկիւ ինչ
են, և 'ի սաստիկ հողմոց վարին. և փոքր
թեւովն շրջին՝ յոր կոյս և միտք ուղղչին կա-
5 միցին։ * Այնպէս և լեզու փոքր ինչ անդամ
է՝ և մեծամեծս բարբառի. ահա և սակաւ
6 ինչ հուր զորչափ անտառս հրդեհէ։ * Եւ
լեզու հուր՝ զարդ անիրաւութե, լեզու հաս-
տատեալ է յանդամս մեր, որ զամ մարմինն
ապականէ, և վառէ հրով զանիւ ծննդեան,
7 և բորբոքեալ տոչորի 'ի գեհենի։ * Ամե-
նայն բնութի գազանաց՝ և թռչնոց և սող-
նոց և որ 'ի ծովու են, հնազանդեալ է՝ և
8 հնազանդի մարդկեղէն բնութե։ * Բայց
զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել՝
զչարն և զանկարգ՝ և լի թունաւ մահաբե-
9 րին։ * Նովաւ օրհնեմք զՏէրն և զՀայր. և
նովաւ անիծանեմք զմարդիկ՝ որ ըստ նմա-
10 նութե Այ արարան։ * 'Ի նմին բերանոյ ե-
լանեն օրհնութիք և անէծք. ոչ է պարտ
11 եղբարք իմ այսմ այսպէս լինել։ * Միթէ
աղբիւր անդստին 'ի միոյ ակնակն բղխիցէ՞
12 քաղցր և դառն։ * Միթէ մարթ ինչ իցէ
եղբարք իմ թզենւոյ ձէթ բերել, կամ որ-
թոյ թուզ, և ոչ աղտաղտին տեղւոյ ջուր
քաղցր տանել։
13 * Ով իցէ իմաստուն և հանճարեղ 'ի ձեզ, ԺԳ
ցուցցէ 'ի բարւոք գնացից զգործս իւր հե-
14 զութե իմաստութեն։ * Ապա եթէ նախանձ

և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք ՚ի
սիրտս ձեր, մի պարծիք սուտ առնել զճշ-
մարտութիւն ։ * Ո՛չ է իմաստութիւնս այս ի- 15
ջեալ ՚ի վերուստ. այլ երկրաւոր՝ շնչաւոր՝ և
դիւական ։ * Զի ուր հեռ և նախանձ, անդ 16
է անկարգութի՛ւն և ամ իրք չարք ։ * Իսկ վե- 17
րին իմաստութիւն, նախ զի սուրբ է՝ ապա
խաղաղարար, հեզ՝ դիւրահաւան՝ լի ողոր-
մութեամբ և պտղովք բարեաց. անխիղճ, ա-
ռանց կեղծաւորութեան ։ * Պտուղ արդարու- 18
թեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առ-
նեն զխաղաղութիւն ։

ԳԼ ։ Դ ։

Ուստի՞ պատերազմունք՝ և ուստի՞ կռիւք ՚ի 1
ձեզ. ո՞չ յայսցանէ ցանկութեանց ձերոց՝ որ
զօրացեալ են յանդամս ձեր ։ * Ցանկանայք՝ 2
և ոչ ունիք. սպանանէք և նախանձիք՝ և ոչ
կարէք հասանել. պատերազմիք կռուիք՝ և
ոչ ունիք. վասն զի ոչ խնդրէք ։ * Խնդրէք՝ և 3
ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի ան-
ցկէն ՚ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք ։ * Շ՚ը- 4
նացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր աշխարհիս այս-
րիկ թշնամութիւն է առ ած. զի որ որ կամիցի
‖ Ելց. սիրել զաշխարհ՝ թշնամի առնէ զանձն իւր
23. 25. այ ։ * Կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ զոր 5
1. Կոր. ասէ գիրն. ‖ Առ նախանձ ինչ՝ որում փափա-
3. 16. գէ հոգին՝ որ բնակեաց ՚ի մեզ, * տայ զա- 6
‖ Առակ. ռաւել շնորհսն ։ վասն որոյ ասէ. ‖ Ած ամ-
3. 34. բարտաւանից հակառակ կայ, այլ շնորհս
1. Պետ. խոնարհաց ։
5. 5.

ԼԿ. * Հնազանդեցարո՞ւք այսուհետև այ, և կա- 7
ցէք

ցէք հակառակ չարախօսին. և լիցի փախըս-
8 տական առ 'ի ձէնջ. *Մերձեցարուք առ
ած՝ և մերձեսցի առ ձեզ։ Սրբեցէք զձեռս
մեղաւորք, և ուղիղ արարէք զսիրտս՝ երկ-
9 միտք։ *Հառաչեցարուք՝ սգացարուք՝ և լա-
ցէք. ծաղր ձեր 'ի սուգ դարձցի, և ուրա-
10 խութիւն ձեր 'ի տրտմութիւն։ *‖Խոնարհե- ‖Ա.Պետ.
ցարուք առաջի տն՝ և բարձրացուսցէ զձեզ։ 5. 6.
11 *Մի բամբասէք զմիմեանս եղբարք. որ
բամբասէ զեղբայր՝ կամ դատի զեղբայր իւր,
զօրէնսն բամբասէ՝ և զօրէնսն դատի. իսկ
եթէ զօրէնսն դատիցիս՝ ոչ առնելի օրինացն
12 ես՝ այլ դատաւոր։ *Մի է օրէնսդիր և դա-
տաւոր՝ որ կարօղն է փրկել և կորուսանել։
13 *‖դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն։ Հաւա- ‖Հռով.
սիկ են, որ ասեն. այսօր՝ և վաղիւ երթի- 14. 4.
ցուք յայս անուն քաղաք, եղիցուք անդ տա-
14 րի մի, վաճառեսցուք՝ և շահեսցուք. *որք
15 ոչ գիտէք զվաղիւն, *որպիսի ինչ են կեանք
ձեր. զի իբրև զմրրիկ եք, որ առ սակաւ մի
երևեալ՝ և ապա ապականեալ։ փոխանակ
զի ասիցէք՝ եթէ տր կամեսցի՝ և կեցցուք,
16 արասցուք զայս ինչ կամ զայն։ *Իսկ արդ՝
պարծիք յամբարտաւանութեան ձերում. ա-
մենայն ինչ այսպիսի պարծանք չարութեան
17 են։ *Որք գիտիցէ զբարին՝ և ոչ առնիցէ,
մեղք են նմա։

## ԳԼ. Ե.

1 Արդ՝ այսուհետև մեծատունք լացէք և ՄԷ
ողբացէք 'ի վերայ թշուառութեանցն, որ գա-
2 լոց են 'ի վերայ ձեր։ *Զի մեծութիւնք ձեր
յաղին

յոյժնուլ է, և հանդերձք ձեր կերակուր ցե-
ցոյ: *Արծաթ ձեր և ոսկի ժանգահար, և 3
ժանգ նոցա լիցի ձեզ 'ի վկայութիւն, և կերիցէ
զմարմինս ձեր. իբրև զհուր գանձեցէք ա-
ւուրցն յետնոց: *Ահաւասիկ վարձք մշա- 4
կաց՝ որ գործեն զանդս ձեր առ ձեզ են.
զրկեալն 'ի ձէնջ աղաղակէ, և բողոք հնձա-
ղացն եհաս յականջս Տն զօրութեց: *Փափ- 5
կացայք 'ի վր երկրի՝ և զբօսայք. սնուցէք
զսիրտս ձեր իբրև աւուր սպանման: *Զր- 6
կեցիք սպանիք զարդարն, որ ոչ կայր ձեզ
հակառակ: *Երկայնամիտ լերուք եղբարք 7
իմ՛ մինչև 'ի գալուստ Տն. ահա մշակ եր-
կայնամտեալ սպասէ պատուական պտղոյն
երկրի, մինչև առցէ զկանուխ և զանագան:
*Երկայնամտեցէք և դուք, և հաստատե- 8
ցէք զսիրտս ձեր. զի գալուստ Տն մերձեալ
է: *Մի տրտմեցուցանէք զմիմեանս եղ- 9
բարք, զի մի դատիցիք. ահաւասիկ դատա-
ւորն առ դուրս կայ: *Օրինակ առէք եղ- 10
բարք՝ չարչարանաց և երկայնմտութե՛ ըզ-
մարգարէսն, որ խօսեցան յանուն Տն: *Ա- 11
հաւասիկ երանեմք համբերողաց. զհամբե-
րութի՛ Յոբայ լուարուք՝ և զկատարումն Տն
տեսէք. զի բազմագութ է Տր՝ և ողորմած:
ԻԵ *Յառաջ քան զամ՛ իմն եղբարք իմ, մի 12
Մտթ. երդնուցուք՝ մի յերկինս՝ մի յերկիր՝ մի յայլ
5. 34. իմն երդումն, այլ եղիցի ձեր այոն այո, և
ոչն՝ ոչ. զի մի 'ի կեղծաւորութի՛ իմն անկա-
նիցիք: *Վշտանայցէ ոք 'ի ձէնջ, յաղօթս 13
կացցէ. բերկրեսցի ոք, սաղմոս ասասցէ:
*Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցէ զե- 14

րի-

բիցունս եկեղեցւոյն՝ և արասցեն ՚ի վերայ նր
15 աղօթս, օծցեն իւղով յանուն Տն. * Եւ ա-
ղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն,
և յարուսցէ զնա Տր. և եթէ մեղս ինչ իցէ
16 գործեալ՝ թողցի նմա. * Խոստովան եղե-
րուք միմեանց զմեղս, և աղօթս արարէք ՚ի
վր միմեանց՝ ոզի բժշկեսջիք. քանզի յոյժ
զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականու-
17 թի. * Եղիա մարդ էր իբրև զմեզ չարչա-
րելի. ‖ և յաղօթս եկաց՝ և ոչ ածեաց յերկիր ‖3 Թագ.
18 զերիս ամս և զվեց ամիս. * Եւ դարձեալ 17. 1.
եկաց յաղօթս՝ և ետուն երկինք զանձրև՝ և Ղուկ. 4. 25.
19 բուսոյց երկիր զպտուղ իւր. * ‖ Եղբարք ‖ Ղևտ.
իմ, եթէ ոք ՚ի ձէնջ մոլորիցի ՚ի ճշմարտու- 19. 17.
թե ճանապարհէն՝ և դարձուսցէ ոք զնա. Մատթ. 18. 15.
20 * գիտասցէ, զի որ դարձուսցէ զմեղաւորն Ղուկ. 17. 3.
՚ի մոլորութե ճանապարհէն իւրմէ, փրկես-
ցէ զոգի իւր ՚ի մահուանէ՝ և ծածկեսցէ ըզ-
բազմութի մեղաց.

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ.

## ԳԼ. Ա.

ԲՕ. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ 1
յի՛ի ք՛ի, ընտրելոցդ նժդեհից, որ
'ի սփիւռս պոնտացւոց գաղատաց-
ւոց և կապադովկեցւոց և ասիացւոց և
բիւթանացւոց, * ըստ կանխաւ գիտութե՛ն 2
ա՛յ հօր. սրբութեամբ հոգւոյն, 'ի հնազան-
դութիւն և 'ի հեղումն արեանն յի՛ի ք՛ի.
Շնորհք ընդ ձեզ և խաղաղութի՛ բազմաս-
Բ.Կոր. ցի: * Օրհնեալ է ա՛ծ և հայր տ՛ն մերոյ 3
Ա. 3. յի՛ի ք՛ի, որ ըստ բազում ողորմութե՛ նորում
Եփես. ծնաւ զմեզ վերստին 'ի յոյսն կենդանի. 'ի
Ա. 3. ձեռն յարութե՛ն յի՛ի ք՛ի 'ի մեռելոց, * յա- 4
նեղծ և յանարատ և յանթառամ ժառան-
գութի՛ն որ պահեալ է յերկինս 'ի ձեզ. * որ 5
զօրութի՛ն ա՛յ պահեալ եք հաւատովք 'ի
պատրաստեալ փրկութի՛ն, յայտնեալ 'ի յե-
տին ժամանակի: * Որով ուրախ լինիջիք՝ որ 6
այժմ սակաւիկ մի, ըստ պատշաճի իրաց
տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութի՛: * Զի 7
հանդէս ձերոյ հաւատոյն առաւել քան զո-

կի

են կորստական պատուական է. որ հրով
փորձեալ՝ գտցէ 'ի գովութիւն և 'ի փառս, և
8 'ի պատիւ 'ի յայտնութեան յի քի. * Զոր
ոչ տեսէք՝ և սիրեցէք. Ը որ այժմ ոչ հայե-
ցեալք՝ բայց հաւատայք. և ուրախ էք ան-
9 ճառ և փառաւորեալ խնդութն. * ընկա-
լեալ զկատարումն հաւատոյն ձերոյ զոգ-
10 ւոյն փրկութի. * Վասն որոյ փրկութե խնդ-
րեցին և քննեցին մարգարէքն. որք վասն ո-
րոյ 'ի ձեզ լինելոց էին շնորհացն՝ մարգա-
11 րէանային. * քննէին յորում և յորպիսի ժա-
մանակի ցուցանէր 'ի նոսա հոգին քսի. որ նախ
զչարչարանացն քսի վկայէր՝ և յետ այնորիկ՝
12 զփառացն. * Որոց և յայտնեցաւ իսկ. զի
ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարք լի-
նէին նոքին. որք այժմ պատմեցան այնու-
քիւք, որ աւետարանեցինն ձեզ հոգւովն
սրբով, որ առաքեցաւ յերկնից. զոր ցանկային
տեսանել զանեայ ընդ աղօտ հրեշտակք.
13 * Սրով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ զուար- ՌԿ.
թացեալք բովանդակ սպասեցէք հասելոցն
14 ձեզ շնորհաց 'ի յայտնութեն յի քի, * իբ-
րև զորդիս հնազանդութե. Մի կերպարա- Հռով.
նեալք առաջին ձերովք անգիտութեան ցան- 12. 2.
15 կութեք. * այլ ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ՝ և
դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք.
16 * Վասն որոյ գրեալ է, Եթէ եղերուք սուրբ Ղևտ.
17 զի ես սուրբ եմ. * Եւ եթէ հայր կոչեցէք 11. 44.
զայն, որ Անաչառութե դատի ըստ 19. 2.
իւրաքանչիւր գործոց. ապա երկիւղիւ զզ- 20. 7.
ձերոյն պանդխտութե ժամանակս գնաս- 2 Օրէն.
18 ջիք. * Գիտասջիք, զի ոչ ապականացու ար- 10. 17.
Գործ. 10. 34.

ծա-

ծաթեղինօք՝ եւ ոսկեղինօքն փրկեցարուք 'ի
ձերոց ունայնութենէ հայրենաւանդ գնացիցն.
Ա. Կոր. * Այլ պատուական արեամբն Քի, իբրեւ 19
Զ. 20. անբիծ եւ անարատ գառին: * Որ յառաջ 20
Է. 23. ծանօթն էր՝ նախ քան զսկզբանէ աշխարհի.
Եփես. եւ երեւեցաւ 'ի վախճան ժամանակաց վասն
Ա. 4. Յովհ. ձեր. * որք նովաւ հաւատայք յԱծ՝ որ յա- 21
Ա. 7. րոյց զնա 'ի մեռելոց, եւ ետ նմա փառս. զի
Յով. Ա. 5. հաւատքն ձեր եւ յոյս իցեն յԱծ: * Զան- 22
ձինս ձեր սրբել հնազանդութեամբ ճշմարտու-
թեան, յեղբայրսիրութիւն առանց կեղծաւո-
րութեան, 'ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմի-
մեանս: * Ծնեալք վերստին ոչ յապակա- 23
նացու սերմանէ. այլ յանապականացուէն,
կենդանի եւ մշտնջենաւոր բանիւն Այ:
Եսայ. * Զի ամենայն մարմին իբրեւ զխոտ է. եւ ամ 24
40. 6. Յակ. փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն
Ա. 10. ցամաքեցաւ՝ եւ ծաղիկն թօթափեցաւ: * Իսկ 25
բանն Տն մնայ յաւիտեան. այսինքն է բանն,
որ 'ի ձեզ աւետարանեցաւ:

## ԳԼ. Բ.

Գ. Կ Ի բաց թօթափել յայսուհետեւ զամ չա- 1
Հռովմ. րութիւն՝ եւ զամ նենգութիւն եւ զկեղծաւո-
Զ. 4. րութիւն եւ զնախանձ, եւ զամ չարախօսութիւն.
Եփես. * իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս. 2
Դ. 22. Կողոս. եւ անխարդախ կաթինն փափագեցէք. զի
Գ. 8. նովաւ աճիցէք 'ի փրկութիւն: * Եթէ ճաշա- 3
Եսայ. կիցէք՝ զի քաղցր է Տր: * Առ որ մատու- 4
28. 16. ցեալ 'ի վէմն կենդանի, որ թէպէտ 'ի մարդ-
կանէ անարգեալ. այլ առ 'ի յԱյ ընտրեալ
եւ պատուական է. * եւ դուք իբրեւ զվէմս 5
կեն-

կենդանիս շինիք տաճար հոգեւոր. յանա-
րատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորն
պատարագս հաճոյս Այ, 'ի ձեռն Յի Քի.
6 *Վասնզի կայ իսկ 'ի գրի. ‖ Թէ ահաւա- ‖ Եսայ. 28. 16.
սիկ դնեմ 'ի սիոն վէմ ընտիր՝ գլուխ ան- Հռովմ.
կեան պատուական, եւ որ 'ի նա հաւատաս- 9. 33.
7 ցէ՝ մի ամաչեսցէ. *Ձեզ այսուհետեւ հա-
ւատացելոց է վէմ պատուական. իսկ ան-
հաւատից, ‖ վէմ զոր անարգեցին շինողքն, ‖ Սաղմ.
8 նա եղեւ գլուխ անկեան. *Եւ վէմ գլորման 117. 22.
եւ վէմ գայթագղութեան, որ գայթագղին Եսայ. 8. 14.
ապստամբեալք 'ի բանէն՝ յոր եւ եդանն. Մատթ.
9 *Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորու- 21. 42.
թիւն, քահանայութիւն. ազգ սուրբ, ժողո- Գործ. 4. 11.
վուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինու-
թիւնս նուիրեսջիք այնմ, որ զձեզ 'ի խաւա-
10 րէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն. *‖ Որք եր- ‖ Ովսէ.
բեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Այ. 2. 24. Հռովմ.
որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտիք. 9. 25.
11 *‖ Սիրելիք՝ աղաչեմ, իբրեւ զպանդուխտս ‖ Հռովմ.
եւ զնժդեհս 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր 13. 14. Գաղատ.
ցանկութեանցն, որ զինուորին ընդդէմ ոգ- 5. 16.
12 ւոյ. *զվարս ձեր 'ի մէջ հեթանոսաց պար-
կեշտս ցուցանել. զի որով բամբասիցեն զձ-
եզ իբրեւ զչարագործս, 'ի բարւոք գործոցն
ձերոց զիտեալ՝ փառաւոր արասցեն զԱծ յա-
ւուրն այցելութեան.

Գ. Ա.

13 *‖ Հնազանդ լերուք ամ մարդկեղէն ստեղ-
ծուածոյ վն Տն. եթէ թագաւորի՝ իբրեւ ‖ Հռովմ.
14 առաւելոյ, *եթէ դատաւորաց՝ իբրեւ 13. 1.
'ի նմանէ առաքելոց 'ի վրէժխնդրութիւն չարա-
15 գործաց՝ եւ 'ի գովութիւն բարեգործացն. *Զի

այս

այսպէս են կամք այ· բարեգործածն պապան_
ձեցուցանել զանզգամ մարդոյ զանգիտութիւն·
*Որպէս զազատս լինել՝ և մի որպէս պատրուակ 16
չարութեան ունել զազատութիւն· այլ իբրև այ ծա_
Հռոմ. 12. 10. ռայք։ *Զամենեսեան պատուեցէք· զեղբայ_ 17
րայրութիւն սիրեցէք· յայ երկերուք· զթա_
Եփես. 6. 5. գաւորս պատուեցէք։ *Ծառայք հնազանդ 18
Կողոս. 3. 22. լինել յամենայն երկիւղիւ տեարանց, ոչ միայն բա_
րերարացն և հեզոց՝ այլ և կամակորացն։ *Զի 19
Տիտ. 2. 9. այս շնորհք յայ են, եթէ բարւոք խղճ մտօք
տանիցի ոք վշտաց յանիրաւի։ *Զինչ գովութիւն 20
իցէ, եթէ յորժամ մեղանչիցէք՝
տանջիցիք, և համբերիցէք· այլ թէ բարիս
գործիցէք՝ չարչարիցիք՝ և համբերիցէք, այն
շնորհք յայ են։ *Զի 'ի դոյն իսկ կոչեցա_ 21
րուք· զի և քս վս ձեր մեռաւ, և ձեզ եթող
Եսայ. 53. 9. օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոցն նր։ *որ 22
Ա. Յովհ. 3. 5. զմեղս ոչ արար, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բե_
րան նր։ *որ բամբասեալ՝ և ոչ փոխարէն բամբ_ 23
բասէր· չարչարեալ՝ և ոչ սպառնայր սպառնա_
լիս· բայց իրաւամբք մատնէր դատաւորին։
Եսայ. 53. 4. *Որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց 24
'ի խաչափայտն· զի լիցուք զերծեալք 'ի մե_
ղաց անտի, և իցեմք արդարութեան կենակիցք·
որոյ վիրօքն բժշկեցայք։ *Զի էիք իբրև 25
զոչխարս մոլորեալս· այլ այժմ դարձարուք
առ հովիւն և տեսուչ ոգւոց ձերոց։

## ԳԼ. Գ.

Գ. Գ. Սոյնպէս և կանայք հնազանդ լինել ա_ 1
Եփես. 5. 22. ռանց իւրեանց· զի եթէ իցեն ոմանք անհա_
Կողոս. 3. 18. ւատք 'ի բանն, առանց բանի կանանց գը_
նա_

նայից, և առանց բանին իսկ շահեսցին,
2 *գիտել երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս.
3 *Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիք և Ա. Տիմ.
ոսկեհուռ ծամակալք՝ կամ պաճուճանաց ըզ- 2. 9.
4 գեստուց զարդ. *այլ ծածուկ սրտին մար-
դըն. անեղծութիւն հեզութեան և հանդար-
տութեան հոգւոյն, որ է առաջի այ բազմապա-
5 տիկ. *Քանզի այսպէս երբեմն և կանայք՝
որ յուսացեալ էին յայ՝ զարդարէին զան-
6 ձինս հնազանդեալ իւրեանց արանց. *Որ Ծնն.
և Սառայ՝ զի հնազանդ էր Աբրահամու. և 18. 12.
տէր իւր կոչէր զնա. որոյ եղերուք դուք որ-
դիք. բարեգործք էին, և ոչ կասկածէին՝ և
7 ոչ ի միոջէ ինչ երկիւղէ. *Այնպէս և արք Ա. Կոր.
իմաստութեամբ բնակեսցեն ընդ նա. իբրև ա- 7. 3.
կար անօթոյ առնիցեն պատիւ կանանց՝ իբ-
րև ժառանգակցաց շնորհացն կենաց. զի մի
8 խափան լինիցին աղօթիցն ձերոց. *Իսկ զը-
լուխ ամենայնի, զի համամիտք իցէք՝ հա-
մակարիք եղբայրասէրք՝ աղուագութեք խո-
9 նարհք. *Մի՛ չար փոխանակ չարի հատու- Առակ.
ցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. 17. 13.
այլ զարդիւն հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ Հռոմ.
կոչեցարուք՝ զի զօրհնութիւն ժառանգիցէք. 12. 17.
Ա. Թեսաղ. 5. 15.
10 *Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տեսա-
նել զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու Պ. Պ.
իւր ի չարութենէ, և զշրթունս իւր ի չխօ- Սաղմ.
11 սելոյ զնենգութիւն. *Խոտորեսցի ի չարէ, 33. 13.
և արասցէ զբարի, խնդրեսցէ զխաղաղութիւն, Եսայ.
12 և երթիցէ զհետ նր. *Զի աչք տն ի վե- 1. 16.
րայ արդարոց, և ականջք նր յաղօթս նր.
13 երեսք տն ի վերայ չարագործաց. *Իսկ ո՞

իցէ

իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բար-
Մատթ. 5. 10. ւոյն նախանձաւորք լինիցիք։ *Այլ թէ և 14
չարչարիցիք ևս յաղագս արդարութեան, երա-
նելի էք. բայց յերկիւղէ նոցա մի երկնչիցիք և
մի խռովեսջիք։ *Այլ զՏր զնոյն զՔն՝ սուրբ 15
արասջիք ՚ի սիրտս ձեր։ Պատրաստ լիջիք
տալ պատասխանի ամի որ խնդրիցէ զբանն.
որ է վս յուսոյն ձերոյ։ *Այլ հեզութբ և 16
Վեր. 2. 12. երկիւղիւ, ունիցիք բարիս խղճմտանս. զի ո-
րով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին՝ որք
բամբասեն զձեր բարւոք գնացս ՚ի Քս։ *Զի 17
լաւ է բարեգործաց, եթէ կամիցին կամք այ
Հռով. 5. 6. կամեսցին չարչարիլ՝ քան չարագործաց։ *Զի 18
Եբր. 9. 28. և Քս միանգամ վս մեղաց ՚ի վերայ ձեր մե-
ռաւ, արդարն ՚ի վՏ անարդարաց. զի զձեզ
մերձեցուսցէ առ այ. թէպէտ և մեռաւ
մարմնով, այլ կենդանի է հոգւով։ *Որով 19
և ոգւոցն՝ որ էին ՚ի բանտին, երթեալ քա-
Ծննդ. 7. 7. րոզեաց՝ *որք երբեմն ապստամբեցան, յորժամ 20
ներէր նոցա այ երկայնմտութիւն յաւուրս Նոյի.
յորս տապանն կազմէր. յորում սակաւք՝ այս
ինքն ոգիք իբրև ութ ապրեցան ՚ի ջրոյն։
*Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտ- 21
ութիւն. ոչ զմարմնոյ աղտոյ ՚ի բաց ընկեն-
լով այլ զբարւոք մտացն հարցմունս առ այ ՚ի
ձեռն յարութեան յսի քի. *որ է ընդ աջմէ 22
այ՝ երթեալ յերկինս, ՚ի հնազանդել նմա
հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց։

## ԳԼ. Դ.

Գլ. Քի չարչարելոյն մարմնով վս մեր, և դուք 1
՚ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչա-
րի

2 րն մարմնով՝ դադարէ 'ի մեղաց. * զի մի
եւս ըստ մարդկան ցանկութեանց՝ այլ ըստ կամացն
3 այ կեցցէ զայլ եւս ժամանակն. * Վասնզի
բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կա-
մացն հեթանոսաց, որք գնային գիջութեամբք՝
ցանկութեամբք գինեհարութեամբք անառակութեամբք
4 արբեցութեամբք՝ անօրէն կռապաշտութեամբք. * Ո-
րով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարելն 'ի նոյն
5 անկարգութեան զեղխութեան, եւ հայհոյեն. * Որ
տայցեն պատասխանի այնմ, որ 'ի պատրաս-
տին ունի դատել զկենդանիս եւ զմեռեալս.
6 * Զի 'ի սոյն իսկ եւ մեռելոց խոստացեալ
է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով եւ
7 կենդանի լինիցին ըստ այ հոգւով. * Ամենե-
ցուն վախճան մերձեալ է. զգաստացարուք
այսուհետեւ՝ եւ լերուք զուարթութեամբ յաղօթս.
8 * Նախ քան զամ սէր սերտ ունել ընդ մի-
միանս. || զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց.
9 * || Օտարասէրք լինել ըստ միմեանս || առանց || Առակ.
10 տրտնջելոյ. * || Իւրաքանչիւրոք ոպ եւ ընկա- 10. 12.
լաւ շնորհս ինչ՝ 'ի միմեանս զնոյն մատակա- || Հռով.
րարել, || իբրեւ զբարիոք հազարապետս պէս- 12. 13.
11 պէս շնորհացն այ. * Եթէ ոք խօսեսցի՝ իբ- || Փիլիպ.
րեւ զայ պատգամս. եթէ ոք մատակարարէ- 2. 14.
ցէ՝ իբրեւ 'ի զօրութենէ զոր շնորհէ ած. զի յամե || Հռով.
փառաւորեսցի այ 'ի ձեռն յսի քսի, որում 12. 6.
փառք եւ զօրութիւն յաւիտեանս ամէն. || Ա. Կոր.
4. 2.

Կ. Օ

12 * Սիրելիք՝ մի օտարոտի համարել զեռանդն
ինչ՝ որ 'ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ
13 օտար ինչ իրք ձեզ դիպիցին. * այլ իբրեւ հա-
ղորդեալք քսի չարչարանացն՝ ուրախ լինի-
ջիք, զի եւ 'ի յայտնութեան փառաց նորա ցնծա-
ցեալք

ցեալք բերկրեսջիք։ *Իսկ եթէ նախատի 14
ցիք եւս վ՟ն անուանն Ք՟ի, երանելի էք. զի
փառացն՝ և զօրութեան անուն է, և ա՟յ Հոգին
՚ի վ՟ր ձեր հանգուցեալ է։ *Մի՛ ոք ՚ի ձէնջ 15
չարչարեսցի իբրև զսպանող, կամ իբրև զ-
գող, կամ իբրև զչարագործ, կամ իբրև զօ-
Փիլպ. տարասերս։ *Այլ եթէ իբրև զքրիս- 16
1. 29. տոնեայ՝ մի՛ ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր
առնիցէ զա՟ծ անուամբս այսուիկ։ *Զի 17
ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին
՚ի տանէն ա՟յ. զի եթէ նախ ՚ի մէնջ. իսկ
զինչ կատարած այնոցիկ իցէ՝ որ ո՛չ հաւանե-
Առակ. ցան ա՟յ աւետարանին։ *Եւ եթէ արդարն 18
11. 31. հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն և մեղաւորն
ո՞ւր գտանիցի։ *Արդ զի որ չարչարիցին ը՟ս 19
ա՟յ կամացն, հաւատարիմ հաստչին աւան-
դեսցեն զիւրեանց ոգիս բարեգործութեամբք։

## ԳԼ. Ե.

ԳԼ. Ե. Զերիցունս այսուհետև աղաչեմ՝ իբրև 1
երիցակից՝ և վկայ չարչարանացն Ք՟ի, որ
և հանդերձեալ փառացն յայտնելոյ հա-
ղորդ. *արածեցէք՝ որ ՚ի ձեզ հօտդ է ա՟յ. 2
վերակացու լինել՝ մի՛ իբրև ակամայ՝ այլ կա-
մաւ ը՟ս ա՟յ. մի՛ զօշաքաղութ՟բ, այլ յօժարու-
թ՟բ. *մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ 3
լինել օրինակ հօտին։ *Զի յերևել հով- 4
ուապետին՝ ընդունիջիք զանթառամ փա-
ռացն պսակ։ *Նոյնպէս և երիտասարդք 5
հնազանդ լերուք ծերոց. Ամենեքեան ընդ
Առակ. միմեանս զխոնարհութի՟ն ունիցիք. Զի ա՟ծ
3. 34. ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս
խո-

6 խոնարհաց ։ *‖ Խոնարհեցարուք ընդ հզօր ‖ Յակ.
ձեռամբն այ. զի զձեզ բարձրացուսցէ 'ի 4. 10.
7 ժամանակի ։ *‖ Զամ հոգս ձեր ընկեցէք ‖ Սղմ.
'ի նա, զի նա է՝ որ հոգայ վս ձեր ։ 54. 23.
8 * Արթուն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն ձեր Պ. Կ
սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ խնդ-
9 րէ՝ թէ զո կլանիցէ ։ *Որում 'ի գլուխ հար-
կանիցիք հաստատեալք հաւատովք. գի-
տասջի՛ք զնոյն անցս չարչարանաց եղբայրու-
թե՛ ձերոյ յաշխարհի յանձինս կատարել ։
10 *Այլ Ած ամենայն շնորհաց՝ որ կոչեաց զը-
ձեզ յիւր 'ի յաւիտենական փառսն քրիս-
տոսի, որում փոքր մի եղերուք չարչարակիցք,
նա կազդուրեսցէ կարգադրեսցէ հաս-
11 տահիմն արասցէ ։ *Նմա իշխանութիւն եւ
12 փառք յաւիտեանս ամէն ։ *‖ 'Ի ձեռն սիղ- ‖ 2. Կորն.
ուանոսի հաւատարիմ եղբօր, որպէս կար- 1. 19.
ծեմ՝ փոքր 'ի շատէ գրեցի առ ձեզ մխիթա-
րել. եւ 'ի վրյ սորին վկայել. զի եւ այս ճշ-
մարիտ շնորհք այ են՝ յոր հաստատեալ կայ-
13 ցէք ։ *Ողջոյն տայ ձեզ՝ որ 'ի բաբելոնի ընտ-
րելակից եկեղեցին է. եւ մարկոս որդի իմ ։
14 *Ողջոյն տաջիք միմեանց 'ի համբոյր սըր-
բութե՛ ։ Խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսին,
որ էք 'ի քս յս. ամէն ։

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՂԻԿԵԱՅ
## ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԵՐԿՐՈՐԴ.

### ԳԼ. Ա.

Դ. Ա. Շմաւոն պետրոս ծառայ և առաքեալ 1
յի՟ քի՟, որոց հանգիտապատիւ մեզ
հաւատոց յարդարութեամբն այ՟ մե-
րոյ և փրկչին յի՟ քի՟. *Շնորհք ընդ ձեզ 2
և խաղաղութիւն բազմասցի գիտութեամբն
այ՟՝ և յի՟ քի՟ տն՟ մերոյ. *Որպէս ամե- 3
նայն ինչ մեզ՝ իւրոյ ածեղէն զօրութեան առ
'ի կենաց և յածպաշտութիւն շնորհեալ. 'ի
ձեռն գիտութեան այնորիկ, որ կոչեաց զմեզ
յիւր 'ի փառս և 'ի վայելչութիւն. *Որով 4
մեծամեծքն և պատուականք աւետիք պար-
գեւեալ են մեզ. զի նոքիմբք ածեղէն բնու-
թեան լինիցիք հաղորդակիցք, փախուցեալք
'ի ցանկութեանց աշխարհիս և յապականու-
թենէ. *Եւ ամենայն այսմիկ զտան փոյթ 'ի մէջ 5
առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարա-
րեցջիք զառաքինութիւն, և առաքինութեամբ զը-
գիտութիւն, *և գիտութեամբ զժուժկալութիւն, 6
և ժուժկալութեամբ զհամբերութիւն, և համ-
բերութեամբ զածպաշտութիւն, *և ածպաշ- 7
տութեամբ զեղբայրսիրութիւն, և եղբայրսի-

րու

8 րութին զսէր ։ * Զայսոսիկ ձեր յանձինս կա-
լեալ՝ և 'ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս և
անպտուղս զձեզ հաստատեսցեն 'ի Տն մերոյ
9 Յի Քի գիտութիւն ։ * Յորում ոչ իցեն սո-
քա մերձ, կոյր է և զաչացու. 'ի մոռացմանս
զարձուցեալ զսրբութիւն առաջնոց իւրոց
10 յանցանաց ։ * Վասն որոյ եղբարք՝ առաւել
փութացջիք՝ զի բարեացն գործովք հաստա-
տուն զձեր կոչումն, և զընտրութիւն պահէ-
ցէք ։ Զայս արարեալ՝ ոչ երբէք յանցանի-
11 ցէք. * զի այսպէս առատապէս շնորհեսցի
ձեզ մուտ 'ի յաւիտենական արքայութիւն Տն
մերոյ և փրկչին Յի Քի ։

ՊԳ

12 * Որով պատրաստեցեմ միշտ ձեզ յիշեցու-
ցանել զՏ սոյնս առաւել եւս գիտակացն և
հաստատելոցն՝ եկեալ հասեալ ճշմարտու-
13 թեան ։ * Իրաւացի իրաւունս համարիմ մինչ-
դեռ եմ 'ի մարմնի աստ՝ զարթուցանել ըզ-
14 ձեզ յիշատակօք ։ * Գիտեմ թէ վաղվաղա-
կի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս.
15 որպէս և Տր մեր Յս Քս || եցոյց ինձ ։ * Այլ || Յ·Ե· 21· 19·
փութամ ձեռպիմ միշտ զձեզ յորդորել. զի
և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք
16 զյիշատակս այսոցիկ ։ * || Իրաւացի ոչ եթէ || Ա·Կոր· 1· 17·
պաճուճեալ լինչ առասպելաց զհետ երթեալ
ցուցաք ձեր զՏն մերոյ Յի Քի զզօրութիւն
և զգալուստն. այլ մեզէն եղեալ ակնա-
17 տեսք նորա մեծութեան ։ * Իրաւացի առեալ
յԱյ և 'ի Հօրէ զփառս և զպատիւ. եկեալ
յանճառելի բարբառոյ՝ 'ի մեծ վայելչութենէ
փառաց անտի. || Եթէ դա է որդի իմ սիրե- || Մտ· 17· 5·
18 լի՝ ընդ որ ես հաճեցայ ։ * Այս զայս բարբառ Մր· 9· 6·

Ղուկ. մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա
9. 35. իսկ էաք ՚ի սուրբ լերինն։ *Եւ ունիմք հաս- 19
տատագոյն զբանն մարգարէական. որում
եթէ անսայցէք՝ բարւոք առնէք. իբրև ճրա-
գալի՝ որ տայցէ լոյս ՚ի խաւարչտին տեղ-
ւոջ, մինչև տիւն լուսաւորեսցէ, և արու-
սեակն ծագեսցէ ՚ի սիրտս ձեր։
ԴԻԴ *Բայց նախ այսմ գիտասջիք. ‖ զի ամ- 20
‖ Բ. Տիմ. մարգարէութիւն խորոց գրոց լուծանելի ոչ ու-
3. 16. նի։ *Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդ- 21
կան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ ՚ի
հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ Աստուծոյ։

## ԳԼ. Բ.

Եղեն և սուտ մարգարէք ՚ի ժողովր- 1
դեանն՝ որպէս և այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ
վարդապետք. որք սպրդել մուծանեն հերձ-
ուածս կորստեան, և զորս տէրն գնեաց զնա
ուրացեալ՝ ածեն ՚ի վերայ անձանց զարագա-
հաս կորուստ։ *Եւ բազումք անկեալ 2
երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն
որոյ ճշմարտութեան ճանապարհ հայհոյեսցի։
*Եւ ագահութեամբ մտացածին բանիւք առ- 3
նիցեն զձեզ վաճառեսցեն. որոց դատաստանն
՚ի բնէ ոչ դատարկանայց, և կորուստն նոցա
‖ Յուդ. ոչ նիրհեսցէ։ *‖ Զի եթէ ՚ի հրեշտակսն 4
4. 18. յանցուցելոց Աստուած ոչ խնայեաց, այլ խաւա-
Յուդ. րին կապանօք արկեալ ՚ի տարտարոսն՝ ետ
1. 6. պահել ՚ի դատաստան։ *Եւ ոչ ՚ի սկզբանն 5
‖ Ծննդ. աշխարհի խնայեաց. ‖ բայց զութերորդն
7. 1. զՆոյ՝ զարդարութեան քարոզ պահեաց ՚ի ջրհե-
ղեղն աշխարհի՝ ամբարշտելոյն ածեալ։

*Եւ

6 * ‖Եւ զքաղաքս սոդոմացւոցն և գոմորաց- ‖Ծնն.
ւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ, օրի- 19. 25.
նակ առ յապա ամբարշտելոցն կացուցանէր։ 2. Օրէ.
29. 23.
7 * Եւ զարդարն զՂովտ ձանձրացեալ յան-
8 կարգ գիջութեան գնացից փրկեաց. * քան-
զի ականատես և ականջալուր արդարն բը-
նակեալ ՚ի մէջ նոցա, որ զօ̄ր օրէ զիւր սուրբ
ոգին նց̄ անօրէն գնացիւքն տանջէր։
9 * Գիտէ Տ̄ր զա̄ծապաշտս փրկել ՚ի փորձու- Գ.Ա.
թենէ, և զանիրաւս պահել ՚ի տանջանս ա-
10 ւուրն դատաստանի. * մանաւանդ՝ որ զհետ
մարմնոյ պղծալից ցանկութեանց իցեն երթեալ.
արհամարհօղք տէրութեան՝ ժպիրհք յանդ-
11 գունք չզանգիտեն զփառս հայհոյել։ * Ուր
հրեշտակք զօրութբ̄ և կարողութբ̄ քան զնս
մեծամեծք չածեն զնոքօք ՚ի Տ̄նէ զհայ-
12 հոյութեան դատաստան։ * Սոքա իբրև
զանխօս անասունս ըս̄ բնածին բարուցն յեղ-
ծումն և յապականութի̄՝ որոց չեն գիտակ,
հայհոյեն յապականութե̄ իւրեանց, և ա-
13 պականեսցին՝ * տանջեալք ՚ի վարձուց անի-
րաւութե̄. որ ցանկութի̄ զաւուրն փափկութի̄
համարին. բծկանք արատաւորք՝ փափկա-
ցեալք ՚ի պատիրս իւրեանց. լեալ ձեզ խը-
14 րախճանակիցք։ * Աչս ունին հանգոյնս
պոռնկաց՝ անդադարս ՚ի մեղաց, պատրեն
զանձինս յողդողդս. որ ունին սիրտ հա-
15 րեալ զագահութե̄, մանկունք անիծից։ * Թո-
ղեալ զուղորդ ճանապարհն՝ մոլորեցան.
‖Զհետ երթեալ ճանապարհին Բաղաամու ‖Թու.
բէովրեան՝ զվարձս անիրաւութե̄ սիրեցին. 1. 11.
16 * որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն առա-

ցաւ

Թուոց. 22. 28. ցաւ զէշն անխօսուն. ‖ մարդկեղէն բարբա-
ռովն բարբառեալ՝ արգել զմարգարէին զա-
նօրէնութիւն։ * Այսոքիկն են աղբիւրք 17
անջրդիք՝ և մէգք վարեալք 'ի մրրկէ. որոց
աղջամուղջ խաւարին յաւիտեան պահեալ
կան։ * Քանզի մեծաբանս սնոտեաց բար- 18
բառեալ պատրեն գիջութիւք ցանկութիւք
մարմնոյ զայնոսիկ՝ որ սակաւիկ փախչիցին
յայնցանէ՝ որ 'ի մոլորութեան շրջիցին. * Նոցա 19
ազատութիւն խոստանան, և ինքեանք ապա-
Յովհ. 8. 34. կանութեան ծառայք են. ‖ զի որով ոք յաղ-
թիցի ոք, նորին և ծառայ է։ * Զի եթէ 20
Հռովմ. 6. 16. փախուցեալք 'ի պղծութեանց աշխարհի գի-
Եբրայ. 6. 4. տութ̃ն տ̃ն մերոյ և փրկչին յի̃ի քի̃ի. ‖ և դար-
ձեալ ընդ նոյնս շաղեալք պարտիցին՝ եղև նց
վախճանն չար քան զառաջինն։ * Զի լաւ 21
էր նց եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զար-
դարութեանն ճանապարհ. քան զի ծանեան՝
և յետս կացին 'ի սբ պատուիրանէն որ նո-
ցա աւանդեցաւ։ * Դիպեալ 'ի դէպ նց ճըշ- 22
Առակ. 26. 11. մարիտ առակին զգօնութ, ‖ եթէ շուն դառ-
նայ անդրէն 'ի փսխած իւր, և խոզ լուա-
ցեալ՝ 'ի տիղմ թաւալեալ։

## ԳԼ. Գ.

Գ. Զ. Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ գրեմ՝ 1
որով զարթուցից 'ի յիշատակ զհաստա-
տուն միտս ձեր. * յիշել զյառաջագոյն ա- 2
սացեալ պատգամս 'ի սրբոց մարգարէից և յա-
ռաքելոցն ձերոց, զպատուէրս տն և փրկչին։
Ա. Տիմ. 4. 1. * Նախ զայս գիտասջիք, ‖ զի յաւուրս 5
Բ. Տիմ. 3. 1. յետինս եկեսցեն արհամարհօղք՝ այպա-
նօղք,

նօղք, որ ըստ իւրեանց ցանկութեանց գնաս- Յուդ.
4 ցեն. * և ասիցեն՝ ո՞ւր են աւետիք գալըս- 1. 18.
տեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝
ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ ի սկզբանէ
5 արարածոց. * Այլ զայն մոռացեալ իցէ նո-
ցա՝ որ զայսն կամին. եթէ երկինք էին 'ի
սկզբանէ՝ և երկիր 'ի ջրոց, և ջուրք հաս-
6 տատեալ բանիւն այ. * վասն որոյ երբեմն
աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ.
7 * Այլ այժմ երկինք և երկիր նովին բանիւ
գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաս-
տանի՝ և կորստեան ամբարիշտ մարդկան.
8 * Այլ այս ես մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ սի-
րելիք, զի մի օր առ Տն իբրև զհազար ամ է, և
9 հազար ամ իբրև զմի օր. * Ոչ յամեցուցանէ
Տր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համա-
րին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի
ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ զամենեսեան
հասանել յապաշխարութիւն.

Գ.Լ.

10 * Այլ եկեսցէ օր Տն իբրև զգող. յորում
երկինք սաստկապաւ անցցեն, և բնութիւք Ա Թեսղ.
հրով կիզեալ լուծցին, և երկիր՝ և որ 'ի 5. 2.
11 նմա գործք գտանիցին. * Այլ 'ի լուծանել Յայտ.
այսպէս այսր ամի, ո՞րպիսի ինչ պարտ իցէ 3. 3. 16. 15.
ձեզ գտանել. այլ սուրբ և ածպաշտ կար-
12 գաւ ակն ունել, * և փութալ հասանել գալըս-
տեան աւուրն Տն. յորում երկինք հրայ-
րեալք լուծանիցին, և բնութիք հրդեհեալ
13 հալիցին. * Նորոյ երկնից՝ և նորոյ երկրի Եսայ.
ըստ աւետեացն հայեցեալ սպասեսցուք, յորս 65. 17. 66. 22.
14 արդարութիւն բնակէ. * Վասն որոյ սիրելիք՝ Յայտ.
այսոցիկ սպասեալ, փոյթ յանձին ունիջիք՝ 21. 1.
ան-

Ա Հ—Վ. անբիծք և անարատք գտանել նմա ՚ի խա-
Յ. Կ. ղաղութեան. * Եւ զՏեառն երկայնմտութիւն՝ փըր- 15
կութիւն համարիջիք. Որ օրինակ և սիրելի
եղբայրն մեր պօղոս՝ ըստ շնորհելոյ իմաստու-
թեաննմա յոյժ՝ գրեաց ձեզ. * ուր և յամ իսկ 16
թուղթսն խօսի վասն այսորիկ. յորս գտանի
ինչ ինչ դժուարիմացք, զոր անուսմունքն և
յողդողդքն կամակորեն. որպէս և զայլ-
նայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն կո-
րուստ. * Դուք այսուհետև սիրելիք՝ իբրև 17
զկանխագէտս զգուշասջիք, զի մի անառակ
մոլորութեամբ զգածեալք՝ անկանիջիք յառ-
աջեաց հաստատութենէ. * Աճեցէք շնորհօք 18
և գիտութեամբ Տն մերոյ և փրկչին յսի քսի.
Նմա փառք՝ և այժմ, և յօրն յաւիտենից.
Ամէն.

# ԹՈՒՂԹ
# ԿԱԹՈՂԻԿԵԱՅ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌԱՋԻՆ

## ԳԼ. Ա.

1 ՈՐ ԷՐՆ Ի ՍԿԶԲԱՆԷ. ԵԿ
զորմէ լուաքն՝ որում ականատեսն
իսկ եղեաք. ընդ որ հայեցաքն, եւ
ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կե-
2 նաց: *Նա կեանքն յայտնեցան, եւ տե-
սաք՝ եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւի-
տենական կենացն, որ էր առ Հօր՝ եւ երեւե-
3 ցաւ մեզ: *Զոր տեսաքն եւ լուաք՝ պատ-
մեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն
ունիցիք ը̄ մեզ. եւ մեր հաղորդութիւն իցէ
4 ը̄ Հօր՝ եւ ընդ որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի: *Եւ
զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւն կա-
5 տարեալ լիցի: *Եւ այս են աւետիքն՝ զոր
լուաք առ ՚ի նմանէ՝ եւ պատմեմք ձեզ. ‖ զի ‖ Յ. Ա. 8. 12.
Աստուած լոյս է, եւ խաւար ՚ի նմա չիք եւ ոչ մի:
6 *Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք
ը̄ նմա՝ եւ ՚ի խաւարի շրջիցեմք, ստեմք՝ եւ
7 ոչ առնեմք զճշմարտութիւն: *Իսկ եթէ ը̄
լոյս գնասցեմք՝ որպէս եւ նա լոյս է, հաղորդու-
թի

Եբր. թիւն ունիմք ընդ միմեանս. Եւ արիւն յ̃սի որդ-
9. 14. ւոյ նորա սրբէ զմեզ յամ̃ մեղաց։ * Եթէ 8
Ա. Պետ. ասասցուք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք,
1. 19. զանձինս խաբեմք. և ճշմարտութիւն 'ի մեզ
Յովհ. ոչ գոյ։ * Ապա եթէ խոստովան լինիցիմք 9
8. 46. զմեղս մեր, հաւատարիմ է նա՝ և արդար
Առակ. ա 'ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեզ
20. 9. յամ̃ անիրաւութենէ։ * Իսկ եթէ ասասցուք՝ 10
Ժողով. եթէ ոչինչ մեղաք, սուտ առնեմք զնա, և
7. 21. բան նր̃ ոչ է 'ի մեզ։

## ԳԼ. Բ.

ԻԲ. Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղի- 1
ցէք, և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարե-
խօս առ հ̃ր զյ̃ս ք̃ս զարդարն՝ և զանարատ,
* Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ 2
եթէ մերոյն միայն՝ այլ և ա̃մ աշխարհի։
* Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա, 3
եթէ զպատուիրանս նր̃ պահիցեմք։ * Որ 4
ասիցէ՝ եթէ ծանեայ զնա և զպատուիրանս
նր̃ ոչ պահիցէ, սուտ է՝ և ճշմարտութիւն 'ի
նմա ոչ գոյ։ * Իսկ որ պահիցէ զբանս նորա, 5
արդարև 'ի նմա կատարեալ է սէրն այ̃։ այս-
ուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի նմա եմք։ * Որ աս- 6
իցէ 'ի նմա բնակել, այնպէս պարտի գը-
նալ՝ որպէս և նայն գնաց։
ԻԳ. * Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գը- 7
րեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր 'ի
սկզբանէ ունէիք. և հին պատուիրանն՝ բանն
Յովհ. է զոր լուարուք։ * Դարձեալ նոր պատուի- 8
13. 34. րան գրեմ ձեզ՝ որ է ճշմարիտ 'ի նմա և 'ի
15. 12. ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմա-
րիտ

9 րիտ արդէն խոկ երեւի ։ *Որ ասէ եթէ 'ի
լոյսն իցէ՝ եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝
10 եւ 'ի խաւարի է տակաւին ։ *Որ սիրէ զեղ- ‖ Վար. 3. 14.
բայր իւր, 'ի լոյս բնակէ՝ եւ գայթագղութի
11 'ի նմա չիք ։ *Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝
'ի խաւարի է, եւ ընդ խաւար շրջի. եւ ոչ գի-
տէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս
12 նր ։ *Գրեմ ձեզ որդեակք՝ զի թողեալ են
13 ձեզ մեղքն ձեր վս անուան նր ։ *Գրեմ
ձեզ հարք՝ զի ծանեայք դուք զայն՝ որ 'ի սկզ-
բանէն է ։ Գրեմ ձեզ երիտասարդք՝ զի յաղ-
14 թեցիք դուք չարին ։ *Գրեցի ձեզ ման-
կունք՝ զի ծանեայք դուք զՀայրն ։ Գրեցի
ձեզ հարք՝ զի ծանեայք դուք զայն որ 'ի սկզ-
բանէն է ։ Գրեցի ձեզ երիտասարդք՝ զի էք
դուք հզօրացեալք՝ եւ բանն այ 'ի ձեզ բնա-
15 կէ, եւ յաղթեցէք դուք չարին ։ *Մի սիրէք
16 զաշխարհ՝ եւ մի որ ինչ յաշխարհի է ։ *Ե-
թէ որ սիրէ զաշխարհ, ոչ է 'ի նմա սէր Հօր.
զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութի
է մարմնոյ, եւ ցանկութի է աչաց, եւ ամբար-
տաւանութի աստի կենացս. որ ոչ է 'ի
17 Հօրէ՝ այլ յաշխարհէ աստի է ։ *Եւ աշ-
խարհս անցանէ՝ եւ ցանկութի նր. իսկ որ
առնէ զկամս այ՝ մնայ յաւիտեան ։
18 *Որդեակք յետին ժամանակ է, եւ որպէս լուա- Ե. Գ.
րուք՝ եթէ Նեռն գալոց է, եւ արդէն խոկ նե-
ռինք բազումք եղեալ են, որով մարթեմք
19 իմանալ՝ եթէ յետին ժամանակ է ։ *Նա 'ի
մէնջ ելին, այլ ոչ էին 'ի մէնջ. զի եթէ 'ի
մէնջ էին՝ ապա առ մեզ մնային. այլ զի յայտ-
նի լինիցին՝ եթէ ոչ էին ամենեքին նոքա 'ի
մէնջ ։

մէնջ. * Եւ դուք օծումն ունիք առ 'ի սրբ- 20
ոյն, եւ գիտէք ամենեքին. * Ոչ գրեցի ձեզ՝ 21
եթէ ոչ գիտէք զճշմարտութիւն, այլ թէ գի-
տէք զնա. եւ թէ՝ զի ամենայն սուտ ոչ է 'ի ճշ-
մարտութենէ անտի. * Իսկ ո՞ իցէ սուտ, ե- 22
թէ ոչ՝ որ ուրանայ եթէ յս չէ քս. նա իսկ
է նեռն, որ ուրանայ զհայր եւ զորդի. * Ա- 23
մենայն որ ուրանայ զորդի, եւ ոչ զհայր ըն-
դունի. իսկ որ խոստովանի զորդի, նա եւ
զհայր ընդունի. * Դուք՝ զոր լուարուքն 24
'ի սկզբանէ՝ 'ի ձեզ բնակեսցէ. զի եթէ 'ի
ձեզ բնակեսցէ՝ զոր 'ի սկզբանէն լուարուք,
եւ դուք յորդի եւ 'ի հայր բնակեսջիք. * Եւ 25
այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա
մեզ՝ զկեանս յաւիտենականս.

ԽԱ * Զայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ մոլորե- 26
ցուցանիցէ. * Եւ դուք օծութիւն՝ զոր ըն- 27
կալարուք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի ձեզ. եւ
չէ ինչ պիտոյ՝ թէ ոք զձեզ ուսուսցէ, այլ
որպէս զի նոյն օծութիւն ուսուցանիցէ զձեզ վասն
ամենայնի. եւ ճշմարիտ է՝ եւ չէ սուտ. եւ որպէս ու-
սոյց զձեզ, կայք 'ի նմա. * Եւ այժմ որ- 28
դեակք՝ կացէք 'ի նմին. զի եթէ յայտնես-
ցի, ունիցիմք համարձակութիւն, եւ մի ամա-
չեսցուք 'ի նմանէ 'ի գալստեան նորա. * Զի 29
եթէ գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմաս-
ջիք՝ եթէ ամենայն որ առնէ զարդարութիւն առ 'ի
նմանէ է ծնեալ.

## ԳԼ. Գ.

Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ հայր. 1
զի որդիք այ կոչեսցուք եւ եմք. վասն այ-

սո

սորիկ աշխարհս ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ
ծանեաւ զնա։
2 * Սիրելիք՝ այժմ որդիք այ եմք, և չև ևս է Ի. Օ.
յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք. գիտեմք՝
զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինե-
լոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ ոպ և էն։
3 * Եւ ամ որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ
4 զանձն իւր՝ ոպ և նայն սուրբ է։ * Ամենայն
որ զմեղս գործէ, նա և զանօրէնութիւն առ-
5 նէ, և ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է։ * Եւ
գիտեմք՝ զի նա յայսմ սակս յայտնեցաւ՝ զի ըզ-
6 մեղս բարձցէ, || և ՚ի նմա մեղք ոչ են։ * Ա- || Եսայ. 53. 9.
մենայն որ ՚ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղան- 1. Պետ.
չէ. և ամ որ մեղանչէ, ոչ եաես զնա՝ և ոչ 2. 22.
7 ծանեաւ զնա։ * Մանկունք՝ մի որ զձեզ
խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն, արդար
8 է՝ ոպ և նայն արդար է։ * || Եւ որ առնէ || Յովհ. 8. 44.
զմեղս՝ ՚ի սատանայէ է, զի ՚ի սկզբանէ սա-
տանայ մեղանչէ. վն այսորիկ յայտնեցաւ
որդին այ՝ զի լուծցէ զգործս սատանայի։
9 * Ամենայն որ յայ է ծնեալ՝ մեղս ոչ առ-
նէ, զի սերմն նր ՚ի նմա մնայ. և ոչ կարէ
10 մեղանչել, զի յայ է ծնեալ։ * Այսուիկ
յայտնի են ՚ի միմեանց որդիք այ՝ և որդիք
սատանայի։
Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա Ի. Լ.
11 յայ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր. * զի այս
է պատուիրանն՝ զոր լուարուք ՚ի սկզբանէ՝
12 || զի սիրեսցուք զմիմեանս։ * Ոչ ոպ || կայէնն || Յովհ. 13. 34.
՚ի չարէ անտի էր՝ և սպան զեղբայրն իւր, 15. 12.
և յոր սակս սպան զնա. զի իւր գործքն չար || Ծննդ.
13 էին, և եղբօրն բարիք։ * Եւ մի՛ լինիք զար- 4. 8.
մա

մանայք եղբարք, եթէ աշխարհ զձեզ ա-
տեայ։ *Մեք գիտեմք՝ զի փոխեցաք 'ի մահ- 14
ուանէ 'ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս.
|| Ղեւ. Իսկ որ ոչն սիրէ անդէն 'ի մահուան մնայ։
19. 17. *Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մար- 15
Վէր. դասպան է. և գիտէք՝ զի ամ մարդասպան
2. 10. ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին հաս-
|| Յվհ. տատեալ։ *|| Այսուիկ գիտացաք զսէրն 16
15. 13. (այ). զի նա զանձն իւր եդ վս մեր. և մեք
վս եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս։
|| Յկ. *|| Որ ունիցի զկեանս ինչ աշխարհիս՝ և 17
2. 15. տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և
փակիցէ զգութս իւր առ 'ի նմանէ, զիա՞րդ
սէրն այ 'ի նմա իցէ բնակեալ։

Օ.Կ *Որդեակք՝ մի բանիւ և լեզուաւ սիրես- 18
ցուք, այլ արդեամբք և ճշմարտութբ։ *Եւ 19
այսուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի ճշմ-
մարտութէ անտի իցեմք. և առաջի նր արաս-
ցուք հանգիստ սրտից մերոց։ *Զի եթէ ստգ- 20
տանիցեն զմեզ սիրտք մեր՝ այլ մծ մեծ է
քան զսիրտս մեր՝ և գիտէ զամ։ *Սիրելիք՝ 21
եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն, հա-
|| Մտթ. մարձակութիւն ունիմք առ այ. *|| Եւ զոր ինչ 22
21. 22. հայցեմք, առնումք 'ի նմանէ. զի զպատ-
ուիրանս նր պահեմք, և զհաճոյս առաջի
|| Յվհ. նր առնեմք։ *|| Եւ այս է պատուիրան նր, 23
6. 29. զի հաւատասցուք յանուն որդւոյ նորա յսի
17. 3. քսի, || և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ
|| Յվհ. մեզ պատուէր։ *Եւ որ պահէ զպատուի- 24
13. 34. րանս նր, 'ի նմա է հաստատեալ՝ և նա 'ի
15. 12. նմա. և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ 'ի
մեզ 'ի հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ։

Գ.Ւ ։

## ԳԼ. Դ.

1 Սիրելիք՝ մի՛ ամ՟ հոգւոյ հաւատայք. այլ Օ. Բ.
քննեցէք զհոգիսն՝ եթէ յայ՟ իցեն. զի
բազում սուտ մարգարէք ելեալ են յաշ-
2 խարհ։ *Այսու մեք այսուիկ ճանաչեմք զհո-
գին այ՟։ Ամենայն հոգի՝ որ խոստովանի զՅս
3 Քս մարմնով եկեալ, յայ՟ է նա. եւ *ամ՟ հո-
գի որ ոչ խոստովանի զՅս մարմնով եկեալ,
չէ նա յայ՟. եւ այս նեռինն է, զորմէ լուա-
րուք՝ եթէ գալոց է, եւ արդէն իսկ յաշխար-
4 հի է։ *Դուք յայ՟ էք որդեակք, եւ յաղթե-
ցէք նմա. զի մեծ է որ 'ի ձեզ է՝ քան զայն
5 որ յաշխարհի է։ *Նոքա յաշխարհէ են, ‖ Յովհ. 8. 47.
վասն այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ
6 լսէ նոցա։ *Մեք յայ՟ եմք, որ զած ճանաչէ՝
լսէ մեզ, եւ որ չէ յայ՟՝ ոչ լսէ մեզ. այսուիկ
ճանաչեմք զհոգին ճշմարտութեան եւ զհոգին
մոլորութեան։
7 *Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յայ՟ Օ. Գ.
է. եւ ամ՟ որ սիրէ՝ յայ՟ է ծնեալ՝ եւ ճանաչէ
8 զած։ *Այլ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զած,
9 զի ած սէր է։ *Այս զի յայտ երեւեցաւ ‖ Յովհ. 3. 16.
սէրն այ՟ 'ի մեզ, զի զորդին իւր միածին ա-
ռաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կեն-
10 դանիք։ *Այսու է սէրն. ոչ զի մեք սիրե-
ցաք զած՝ այլ զի նա սիրեաց զմեզ, եւ առա-
քեաց զորդին իւր 'ի քաւութի մեղաց մերոց։
11 *Սիրելիք՝ եթէ ած այնպէս սիրեաց զմեզ,
ապա եւ մեք պարտիմք զմիմեանս սիրել։
12 *Զած ոչ ոք երբէք չէ տեսեալ. եթէ Օ. Գ.
սիրեսցուք զմիմեանս՝ ած 'ի մեզ բնակէ, եւ ‖ Յովհ. 1. 18.

սէր

1. Տէ. սէր նորա 'ի մեզ կատարեալ է։ *Այսուիկ 13
6. 16. գիտեմք, եթէ մեք 'ի նմա բնակեալ եմք՝
և նա 'ի մեզ, զի 'ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ։
*Եւ մեք տեսաք՝ և վկայեմք զի Հայր ա- 14
ռաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի։ *Որ 15
որ խոստովանեսցի՝ եթէ Յս է Որդի ա՟յ, ա՟ծ
'ի նմա բնակէ՝ և նա յա՟ծ։ *Եւ մեք հա- 16
ւատացաք՝ և ծանեաք զսէրն ա՟յ՝ զոր ունի
առ մեզ. Ա՟ծ սէր է, և որ կայ 'ի սէրն՝ ըն-
նակեալ է յա՟ծ, և ա՟ծ 'ի ն՟մ բնակէ. *Այսու- 17
միկ կատարեալ է սէրն ն՟ր 'ի մեզ. զի հա-
մարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաստա-
նի. զի որպէս և նայն է՝ նոյնպէս և մեք եմք
յաշխարհի յայսմիկ։ *Երկիւղ ոչ գոյ 'ի 18
սէր, այլ սէրն կատարեալ 'ի բաց մերժէ
զերկիւղն. զի երկիւղ տանջանօք է. իսկ
որ երկնչին, չէ կատարեալ 'ի սէրն. *Մեք 19
սիրեսցուք զա՟ծ, վ՟ն զի նա նախ սիրեաց ըզ-
մեզ։ *Եթէ որ ասիցէ՝ եթէ սիրեմ զա՟ծ, 20
և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ
զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զա՟ծ զոր ոչն ե-
Ի Եէէ. տես՝ զիարդ կարիցէ սիրել։ *Եւ զայս պատ- 21
5. 2. ուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ սիրէ զա՟ծ՝
սիրեսցէ նա և զեղբայր իւր։

## ԳԼ. Ե.

Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յս է Ք՟ս, յա՟յ 1
ծնեալ է. և ա՟մ որ սիրէ զծնօղն, սիրէ
և զծնեալսն 'ի նմանէ։ *Այսուիկ ճանա- 2
չեմք՝ եթէ սիրեմք զորդիսն ա՟յ, յորժամ զա՟ծ
սիրեսցուք՝ և զպատուիրանս ն՟ր արասցուք։
*Քանզի այս է սէրն ա՟յ, եթէ զպատուի- 3
րանս

րանս նր պահեսցուք. և պատուիրանք նր
4 չեն ինչ ծանունք: *Զի ամ որ յայ ծնեալ
է յաղթէ աշխարհի: և այս է յաղթութիւն՝
5 որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր: *Իսկ Ա. Կոր. 15. 57.
ո՞ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի. եթէ ոչ՝ որ
6 հաւատայցէ՝ եթէ յս է որդի այ: *Սա է՝
որ եկն ջրով և հոգւով և արեամբ, յս քս.
ոչ ջրով միայն, այլև արեամբ և ջրով. և
հոգին է՝ որ վկայէ, զի հոգին իսկ է ճշմար-
7 տութիւն: (*Զի երեք են որ վկայեն յերկինս Առ[illegible]
հայր, բանն և հոգին սբ. և երեքեան մի [illegible] է
8 են: *Եւ երեք են որ վկայեն յերկրի. հո- ի յետ[illegible]
գի, ջուր, և արիւն. և երեքեան մի են:) [illegible]:
9 *Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ընդունիմք
առաւել այ վկայութիւն մեծ իցէ: Այս է
վկայութիւն այ, զի վկայեաց ՚ի վր որդւոյն
10 իւրոյ: *Որ հաւատայ յորդին այ, ունի Յով. 3. 36.
յանձին զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ
որդւոյ այ, սուտ առնէ զնա. քանզի ոչ հա-
ւատայ վկայութեանն՝ զոր վկայեաց ած ՚ի վր
11 որդւոյն իւրոյ: *Եւ այս իսկ է վկայութիւն,
զի կեանս յաւիտենականս ետ մեզ ած. և Յով. 17. 3.
12 այս են կեանք՝ որ յորդին նր են: *Որ ըն-
դունի զորդին, ընդունի և զկեանս. և որ
ոչ ընդունի զորդին այ, և ոչ զկեանս ըն-
դունի:

13 *Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ Զ. Լ.
կեանս յաւիտենականս ունիք. և զի հաւա-
14 տայցէք յանուն որդւոյն այ: *Եւ այս է
համարձակութիւն զոր ունիմք մեք առ նա,
զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ
15 մեզ: *Զի եթէ գիտիցեմք՝ եթէ լսէ հայց-

ուա

ուածոյն մերոյ․ ապա գիտեմք՝ եթէ առ-
նումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ՚ի նը-
մանէ։ * Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մե- 16
ղուցեալ մեղս՝ որ ոչ առ ՚ի մահ, խնդրես-
ցէ՝ և տացէ նմա կեանս՝ մեղուցելոցն ոչ առ
՚ի մահ։ Են մեղք՝ որ մահուչափ են, ոչ վն
այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես։ * Ամե- 17
նայն անիրաւութիւն մեղք են․ և են մեղք՝ որ
մահուչափ են։ * Գիտեմք եթէ ամ որ յԱյ 18
է ծնեալ՝ ոչ մեղանչէ․ այլ որ յԱյն է ծնեալ՝
պահէ զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ։
* Գիտեմք եթէ յԱյ եմք, և աշխարհ ամ 19
՚ի չարի կայ։ * Նա գիտեմք՝ եթէ որդին Այ 20
Ղուկ. 24. 45. եկն, ‖ և ետ մեզ միտս․ զի ծանիցուք զՃըշ-
մարիտն․ և եմք ՚ի Ճշմարտին որդւոյն յի-
սի քսի․ զի նա է Ճշմարիտ Այ՝ և կեանք յաւի-
տենականք։ * Որդեակք՝ պահեցէք զանձինս 21
՚ի կռապաշտութենէ։

# ԹՈՒՂԹ
# ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՐԿՐՈՐԴ։

1 Յերիցունէ առ ընտրեալ կիւրիա, եւ առ Լ.Կ
որդեակս իւր, զոր ես սիրեմ, ճշմարտութեամբ, եւ ոչ եթէ ես միայն, այլ
եւ ամենեքեան, որք գիտեն զճշմարտու-
2 թիւն. *վասն որոյ ճշմարտութեան՝ որ 'ի մեզ
հաստատեալ է, զի եւ ընդ մեզ իցէ. եւ գուք
3 յաւիտենից ընդ մեզ իցէք. *Շնորհք՝ ո-
ղորմութիւն խաղաղութիւն յայ 'ի հօրէ, եւ 'ի
տնէ յսէ քսէ որդւոյն հօր ճշմարտութեամբ եւ
4 սիրով եղիցին ը մեզ. *Ուրախ եղէ յոյժ,
զի գտի յորդեկացդ քոց՝ որ գնան ճշմար-
տութբ, ըստ պատուիրանին զոր առաք 'ի
5 հօրէ. *Եւ այժմ աղաչեմ զքեզ կիւրիա.
իբրեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ
քեզ, այլ զոր ի սկզբանէն ունէաք, ‖ զի սի- ‖Յովհ.
6 րեսցուք զմիմեանս. *Եւ այս է սէրն, զի 13. 34
գնասցուք ըստ պատուիրանացն նորա. եւ այս 15. 12.
է պատուիրանն, զի որ լուարուքն ի սկզբա-
7 նէ՝ ըստ նմին գնասջիք. *Զի բազում մո-
լորեցուցիչք ելին յաշխարհ. որ ոչ խոս-
տովանին զյս քս եկեալ մարմնով, նա մոլո-
րեցուցիչ է եւ նեռն.



*Զգոյշ

Ի·Ա *Զգոյշ լերուք անձանց՝ զի մի կորուսա- 8
նիցէք՝ զոր վաստակեցէքն, այլ զի առնու-
ցուք բովանդակ զվարձս: *Ամենայն որ 9
յանցանէ՝ և ոչ կայ 'ի վարդապետութեան քսի,
զԱծ ոչ ճանաչէ. որ կայ 'ի վարդապետու-
թեն, նա՝ և զՀայր և զՈրդի ընդունի: *Ե- 10
թէ որ գայցէ առ ձեզ՝ և զվարդապետութիւն
զայս ոչ ունիցի, մի ընդունիցիք զնա 'ի տուն,
և մի ողջոյն տայցէք նմա: *Զի որ ասասցէ 11
նմա ողջոյն՝ կցորդ լինի չարեաց գործոց նո-
րա: *Բազում ինչ ունէի գրել առ ձեզ՝ այլ 12
ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով գրել. զի
ակն ունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ, և բե-
րան 'ի բերան խօսել. զի ուրախութիւն մեր
իցէ կատարեալ: *Ողջոյն տան քեզ որդիք 13
քեռ քո ընտրելոյ: Շնորհք ընդ ձեզ:

# ԹՈՒՂԹ
# ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՐՐՈՐԴ։

1 Յերիցուէ առ Գայիոս սիրելի. զոր ես Լ.Գ.
2 սիրեմ ճշմարտութեամբ։ *Սիրելի՛, վասն
ամենայն խնդրոյ քոյ յաջողութեան եւ առող-
ջութեան աղօթս առնեմ. որպէս եւ իսկ յա-
3 ջողութիւն անձինդ քո։ *Յոյժ ուրախ ե-
ղէ 'ի գալ եղբարց՝ եւ լինել վկայ քոյոյ ճշ-
մարտութեանդ, որպէս գնաս դու ճշմարտու-
4 թեամբ։ *Մեծ եւս ինչ ուրախութիւն քան զայս
ո՛չ ունիմ. զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշ-
5 մարտութեամբ գնան։ *Սիրելի՛ հաւատարիմ
գործես զայդ, զոր եթէ առնիցես առ եղ-
6 բարս՝ զգոյն եւ առ օտարս. *որք վկայեցին
զքո սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց բարիս
7 արարեալ յուղարկես արժանի այ։ *Զի
վասն անուանն ելին, եւ ոչինչ յումեքէ առ-
8 նուն զհեթանոսականացն։ *Մեք այսու-
հետեւ պարտիմք ընդունել զայնպիսիսն, զի
գործակիցք լինիցուք ճշմարտութեանն։
9 *Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջա- Լ.Դ.
դէմն 'ի նոցանէ է՝ Դիոտրեփէս, ոչ ընդունի
10 զմեզ։ *Վասն այսորիկ եթէ եկից յիշեցու-
ցից զգործս նր՝ զոր առնէ, բանիւք չարեօք
շատ-

շատախօսութեամբ առնէ զմեզ աշխատ։ եւ ոչ այ-
սորիւք շատացեալ, ոչ ինքն ընդունի զեղ-
բարս, եւ զայնոսիկ որ ընդունինն, արգելու.
Նաեւ յեկեղեցւոյ եւս հանէ։ *Սիրելի՛ մի՛ լի- 11
նիցիս նմանօղ չարի՝ այլ բարւոյ. զի որ բա-
րիս առնէ՝ յայ է. եւ որ զչարիս գործէ՝
նա ոչ եւս երբէք զած։ *Զդեմետրեայ 12
վկայեալ է յամենեցունց, եւ յեկեղեցւոյն՝
եւ 'ի Ճշմարտութենէ, եւ մեք վկայեմք. եւ դու
գիտես՝ զի Ճշմարիտ է մեր վկայութիւն։ *Բա- 13
զում ինչ ունէի գրել քեզ. այլ ոչ կամիմ
թանաքիւ եւ գրչաւ գրել։ *Զի ակն ու- 14
նիմ 'ի մօտոյ իսկ տեսանել զքեզ, եւ բերան
'ի բերան խօսել։ *Խաղաղութիւն ընդ քեզ։ 15
Ողջոյն տան քեզ սիրելիք։ Ողջոյն տացիր սի-
րելեաց մերոց իւրաքանչիւր յանուանէ։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ՅՈՒԴԱՅ ԱՌԱՔԵԼՈՅ

1 ՅՈՒԴԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔԻ
քսի ծառայ, և եղբայր Յակով-
բայ. հեթանոսաց՝ որ յԱյ Հօրէ
էք սիրեցեալք, և ի Յի Քի պա-
2 հեալք և կոչեցեալք: *Ողորմութիւն ձեզ՝ և խա-
3 ղաղութիւն և սէր բազմասցի: *Սիրելիք՝ զամ-
փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ
հասարակաց փրկութեան, հարկ յանձին կալայ
գրել ձեզ և աղաչել՝ զի ջանիցիք ՚ի վր հա-
ւատոյն, որ միանգամ աւանդեցաւ սրբոց:
4 *Վասնզի սպրդեցին մտին ոմանք, որ յա-
ռաջագոյն իսկ կատարեալ էին ՚ի սոյն դա-
տաստան. ամպարիշտք, որ զԱյ մերոյ շը-
նորհսն դարձուցին յանկարգութիւն. և զմի
միայն իշխանն՝ և զՏր մեր Յս Քս ուրացեալք:
5 *Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ և
իմն՝ որ գիտէքդ զամ. զի Տր միանգամ ըզ-
ժողովուրդն փրկեաց յեգիպտոսէ. || երկ- || Թւոց.
6 րորդ անգամ զանհաւատսն կորոյս: *|| Եւ 14. 37.
զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց իշ- || 2. Պետ. 2. 4.
խանութիւն, այլ թողին զիւրեանց բնակութիւն,
՚ի դատաստանս մեծի աւուրն՝ մշտնջենաւոր || Ծննդ.
7 կապանօք պահեաց ՚ի խաւարի: *|| Որպէս 19. 24.
ու-

2. Պէտ. Սոդոմ և Գոմոր, և որ շուրջ զնոքօք քաղաքքն,
2. 6. որ զնոյն օրինակի պոռնկեցան զհետ ընկե-
րայն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյաւի-
տենականն հրոյն ընկալեալ զդատաստան։
*Ըստ նոյն օրինակի և սոքա իբրև քնով 8
զանգաղեալք՝ զմարմինս պղծեն, զտէրութիւն
Զաքար. քամահեն՝ զփառս հայհոյեն։ *Իսկ միքայէլ 9
3. 2. հրեշտակապետն՝ յորժամ բանսարկուն սատա-
նայի վիճէր, տայր պատասխանի վն մովսի-
սեան մարմնոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյութե
դատաստանին հանդուրժել. այլ ասէ, սաս-
տեսցէ 'ի քեզ տր։ *Իսկ սոքա զոր ինչ ոչն 10
իմանան՝ հայհոյեն։ և զայն ևս՝ զոր բնութբ
Ծննդ. իբրև զանխօս անասունս գիտեն, 'ի նոսին
4. 8. ապականեսցին։ *Վայ է նց. զի ըն ճանա- 11
Թուոց պարհին կայենի գնացին, և ըն մոլորութե
22. 23. բաղաամայ զեղխեցան զհետ վարձուց, և ըն
Թուոց հակառակութեն կորխայ կորեան։
16. 23.
Ա. Օ. *Սոքա են ապականեալք շաղմամբք՝ երթեալ 12
զհետ ցանկութեց իւրեանց. 'ի ներս իւրեանց
խառդախութբ, ընդ ձեզ ուրախակիցք. ան-
երկիւղ զանձինս ճարակեն. ամպք անջր-
դիք հողմակոծեալք, ծառք պտղոյարոյք
անպտուղք կրկնամեռք՝ խլեալք արմատա-
քի. *անսաստ ալիք ծովու, որ մեծս փրփրեն 13
զիւրեանց զանձանց զամօթ. աստեղք մո-
լորք, որոց մէգ խաւարին յաւիտենից պա-
հեալ է։ *Մարգարէացաւ վն սց և եօթնե- 14
Յայտ. րորդն յադամայ ենովք՝ և ասէ. Ահաւա-
1. 7. սիկ եկն տր բիւրովք սրբովք հրեշտակօք,
*առնել դատաստան ըն ամե, և յանդիմա- 15
նել զամ ամպարիշտս վն գործոց իւրեանց՝

զոր

զոր ամպարշտեցին. և վն ամ խստութեանց,
զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և ամբա-
16 րիշտք։ * Սոքա են տրտնջօղք և շոգմոգք,
երթեալք ըստ իւրեանց անձանց ցանկութեանց. և Սղ. 16. 10.
բերանք նոցա զամբարտաւանս բարբառեն.
աչառեն անձն երեսաց վն օգտի։ Ա. Ա.
17 * Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զհամբա-
ւոյ բանին զառաքելոցն Տն մերոյ Յսի Քսի. Ա. Տմ.
18 * զի ասէին ձեզ, եթէ 'ի յետին ժամանակս 4. 1.
եկեսցեն ծաղրք արհամարհօղք, երթեալք 2. Տմ.
19 ըստ իւրեանց ամպարշտութեանցն ցանկութեանց։ * Սո- 3. 1.
քա են նշաւակեալք շնչաւորք, որ զհոգին ոչ 2. Պետ.
20 ունիցին։ * Այլ դուք սիրելիք՝ եղիցուք շի- 3. 3.
նել զանձինս սրբումն հաւատոց 'ի հոգին
21 Ս. կացցուք յաղօթս, * պահել զանձինս սի-
րովն Այ. ակն ունել ողորմութեան Տն մերոյ Յսի
22 Քսի 'ի կեանսն յաւիտենականս։ * Եւ ո-
մանց դատապարտեալ լինիցիք կշտամբելով,
23 * և զոմանս ապրեցուցանիջիք՝ յափշտակել
'ի հրոյ. և ոմանց ողորմեսջիք երկիւղիւ ա-
տել, և զպատմուճանն որ 'ի մարմնոյն իցէ
24 աղտեղեալ։ * Եւ այնմ, որ կարօղն է պա-
հել զձեզ անսայթաքս և անբիծս, հաստատել
առաջի փառացն անարատս ցնծութբ.
25 * միայն Այ փրկչին մերոյ Յսի Քսի Տն մերոյ՝
փառք մեծութի զօրութի և իշխանութի յառաջ
քան զամ յաւիտեանս, և այժմ և յամ յա-
ւիտեանս։ Ամէն։

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՒ
## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ
### ԳԼ. Ա.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ 1
յի՛ քի՛, 'ի ձեռն որոյ ետ ա՛ծ
ցուցանել ծառայից իւրոց՝ որ
ինչ լինելոց է վաղվաղակի. և
նշանակեաց առաքելով 'ի ձեռն
հրեշտակի իւրոյ, առ ծառայ իւր յովհան-
նէս ։ * Որ վկայեաց զվկայութիւն բանին ա՛յ, 2
և զվկայութիւն յի՛ քի՛՝ զոր ետես. և որ էր՝ և
որ լինելոցն էր յետ այնորիկ ։ * Երանի՛ որ 3
կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէու-
թեան, և պահեսցէ զոր 'ի նմա գրեալ է. զի
ժամանակս մերձեալ է ։
* 'Ի յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ են 4
յասիա, շնորհք ը՛ն ձեզ և խաղաղութիւն յա՛յ՝
Ելից. 3. 14. յէէն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և յեօթն
զօրութեանց հոգւոցն՝ որ է առաջի աթոռոյն
իւրոյ. * և 'ի յս՛է քս՛է հաւատարիմ վկայէն, 5

որ

‖ որ է անդրանիկ 'ի մեռելոց, և իշխան ‖ Կող· 1· 18·
թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ,
և լոյծ զկապանս մեղաց մերոց ‖ արեամբն ‖ Եբր· 9· 14·
6 իւրով. *և արար զմեզ թագաւորս և քա- 1· Պետ·
հանայս այ և հօր իւրոյ. որում փառք և զօ- 1· 19·
րութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
7 տենից. ամէն: *‖ Ահաւասիկ գալոց է ընդ ‖ Եսայ·
ամպս. և տեսցեն զնա ամ ակն, և տեսցեն 3· 13·
զնա ծակողք երկրի, և որք խոցեցին զնա ա- Մատթ·
մենեքեան յերկրի, և կոծեսցին 'ի վր նր. 24· 30·
8 այո՛ ամէն: *‖ Ես եմ այբ և ես եմ քէ, ասէ Յուդ· 1· 14·
տր ած, որ էն՛ և որ է՛ և որ գալոցն է՛ ա- ‖ Եսայ· 44· 6·
9 մենակալ: *Ես յովհաննէս եղբայր ձեր և Գլ· 21· 6·
հաւասարակից նեղութեան և արքայութեան և 22· 13·
համբերութե որ 'ի քս յս. եղէ ես 'ի կղզւոջն
որ անուանեալ կոչի պատմոս վս բանին և
10 վս վկայութեն յսի քսի: *Եւ եղէ յիս հոգի
'ի կիւրակէի աւուր, և լուայ զձայն զհետ
իմ զմեծ իբրև զձայն փողոյ, որ ասէր ցիս.
Ես եմ այբ և ովբ. առաջին և վերջին.
11 *զոր տեսանես՝ գրեա՛ 'ի գիրս, և տո՛ւր տա-
նել յեօթն եկեղեցիս՝ որ յեփեսոս և 'ի զմը-
մուռնիա՝ 'ի պերգամոնն և 'ի թիւատիրա,
և 'ի սարդիկէ, և 'ի փիղադելփեա, և 'ի
12 լաւոդիկեա. *Եւ դարձայ տեսանել զձա-
յնն՝ որ խօսէր ցիս. և 'ի դառնալն իմում
13 տեսի եօթն ճրագարան ոսկի: *Եւ 'ի մէջ
եօթն ճրագարանացն նման որդւոյ մարդոյ,
զգեցեալ պատմուճան պճղնաւոր, և գօ-
տեւորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն.
14 *և գլուխ նր և հերքն իբրև զասր սպիտակ՝
և որպէս զձիւն. և աչք նորա իբր բոց հրոյ.

*Եւ

* Եւ ոտք նր նմանեալ պղնձոյ ծխելոյ ՚ի մէջ 15
հնոցի հրաշէկ. և ձայն նորա իբրև ձայն
ջուրց բազմաց. * Եւ ունէր յաջոյ ձեռինն 16
իւրում աստեղս եօթն, և ՚ի բերանոյ նորա
ելանէր սուր երկբերանեան. և երեսք նորա
իբրև զարեգակն Ճառագայթեալ երևելին.
* Եւ իբրև տեսի զնա՝ անկայ առ ոտս նորա 17
իբրև զմեռեալ. և եդ ՚ի վր իմ զաջ իւր՝ և
Եսայ. ասէ ցիս. մի երկնչիր, Ես եմ առաջին, և
41. 4. Ես եմ յետին. * և Ես եմ կենդանի՝ և Ես նոյն 18
44. 6. որ մեռայ, և եմ կենդանի այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն. և ունիմ
զփականս մահու և դժոխոց. * Գրեա՛ զոր 19
տեսանես՝ որ են, և որ յապայ՝ և որ հանդեր-
ձեալ է լինել այս. * զխորհուրդ եօթն ա- 20
տեղացդ՝ զոր տեսեր ընդ աջու իմ, և զեօթն
Ճրագարանս ոսկիս. եօթն աստեղքն հրեշ-
տակք եօթն եկեղեցեացն են, և Ճրագա-
րանքն եօթն՝ եօթն եկեղեցիքն են.

## ԳԼ. Բ.

Առ հրեշտակ եփեսացւոց եկեղեցւոյն 1
գրեա. այսպէս ասէ կալողն՝ որ ունի զաս-
տեղս եօթն յաջու ձեռին իւրում, և շրջի
՚ի մէջ եօթն աշտանակի ոսկւոյ. * Գիտեմ 2
զգործս քո և զվաստակս քո և զհամբերու-
թիւն քո. և զի ոչ բառնաս զչարս, և փոր-
ձեցեր՝ որ ասեն զինքեանս առաքեալս՝ և
ոչ են, և հերքեցեր՝ և ստեն. * Եւ համ- 3
բերեցեր և վշտացար վասն անուան իմոյ՝
և աշխատեցար. * Այլ ունիմ առ քեզ, զի 4
զսէրն քո զառաջին թողեր. * Յիշեա այժմ 5

ուստի

ուստի անկարն՝ եւ ապաշխարեա, եւ զառաջինն
գործսն քո արա. ապա թէ ոչ՝ գամ ես վաղ-
վաղակի, եւ շարժեցից զաշտանակս քո ՚ի
տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես։
6 *Այդ՝ զայս ունիս՝ զի ատեցեր զգործսն
7 Նիկողայոսի, զոր ես ատեամ։ *Որ ունի ա-
կանջս լսելոյ, լուիցէ զինչ ասէ Հոգին սր
առ եկեղեցիս. որ յաղթէն, տաց նմա ու-
տել ՚ի փայտէն կենաց՝ որ է ՚ի մէջ դրախ-
8 տին իմոյ։ *Եւ առ հրեշտակ զմիւռնացւոց
եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ առաջինն
եւ անվախճանն, որ եղեւ մեռեալ՝ եւ կենդա-
9 նացաւ։ *Գիտեմ զգործս քո՝ եւ զնեղութիւն
եւ զաղքատութիւն, այլ աղքատութիւն քո մե-
ծութիւն եղիցի. եւ զհայհոյութիւն՝ որ ասեն
զինքեանս հրեայս գոլ՝ եւ չեն ինչ, այլ ժո-
10 ղով սատանայի։ *Մի երկնչիր՝ վասն որոյ
կամիս չարչարիլ. ահա հանդերձեալ է բանսար-
կուն արկանել ՚ի ձէնջ ՚ի բանտ, զի փորձի-
ջիք, եւ ունիք նեղութիւն աւուրս տասն. լեր
հաւատարիմ մինչեւ ՚ի մահ, եւ տաց քեզ
11 զպսակն կենաց։ *Որ ունի ականջս լսելոյ՝
լուիցէ զինչ Հոգին սր ասէ առ եկեղեցիս.
որ յաղթէ, ոչ անիրաւի յերկրորդ մահուա-
12 նէն։ *Եւ առ հրեշտակն՝ որ ՚ի պերգամայ
եկեղեցին, գրեա. այսպէս ասէ՝ որ ունի
13 զսուրն երկսայրի սրեալ։ *Գիտեմ զգործս
քո՝ եւ զի բնակեալ ես ուր աթոռն է սատա-
նայի. եւ ունիս զանուն իմ, եւ ոչ ուրացար
զհաւատս իմ յաւուր յորում Անթիպաս վկ-
այն իմ հաւատարիմ եղեւ. զի վկայ է իմ
հաւատարիմ իմ հաւատացեալ՝ որ սպանաւ
՚ի

'ի մէնջ, որ կայր՝ ուր սատանայ է բնա-
կեալ։ *Այլ ունիմ առ քեզ սակաւ. զի 14
Թուոց 24. 14. 25. 2. կայ առ քեզ վարդապետութիւն Բաղաամու՝
որ ուսոյց զԲաղակ դնել գայթագղութիւն ա-
ռաջի որդւոցն Իսրայէլի, ուտել նոցա զո-
հեալ՝ և պոռնկել։ *Այսպէս և դու ու- 15
նիս զվարդապետութիւն Նիկողայեցւոց՝ զոր
ես ատեամ։ *Արդ՝ ապաշխարեա, ապա 16
թէ ոչ՝ գամ վաղվաղակի. և պատերազմե-
ցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ։ *Որ ու- 17
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ասէ
առ եկեղեցիս. որ յաղթէ՝ տաց նմա ուտել
'ի մանանայէն թաքուցելոյ, և տաց նմա ըզ-
գիրն սպիտակ. և գրեալ անուն նոր 'ի գիրն,
զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնուն։
*Եւ առ հրեշտակն որ 'ի Թիւատիր եկե- 18
ղեցւոյն՝ գրեա. այսպէս ասէ որդին Այ, որոյ
աչք իւր են իբրև զբոց հրոյ, և ոտք նորա
նմանս պղնձի ծխելոյ։ *Գիտեմ զգործս քո՝ և 19
զսէր և զհաւատ՝ և զպաշտօն քո համբերու-
թեամբ. զի բազում է վաստակ քո վերջինն
քան զառաջինն։ *Այլ ասեմ առ քեզ բա- 20
զում. զի թողեր զկինն զԵզաբէլ. որ ասէր
զինքն մարգարէ, և ուսուցանէր մոլորութ
զծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզոհեալ։
*Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել 21
զպոռնկութենէն իւրեանց՝ և ոչ ապաշխա-
րեցին։ *Ահաւասիկ ես արկանեմ զնա 'ի 22
հնոց, և զգործակիցս իւր ընդ որս շնացաւ՝ 'ի
նեղութիւնս մեծամեծս. եթէ ոչ ապաշխա-
րեսցեն 'ի գործոց իւրեանց։ *Եւ զորդիս 23
նորա սպանից մահուամբ. և ծանիցեն ամ
եկե-

եկեղեցիք՝ ∥ թէ ես եմ որ յանդիմանեմ զե- ∥ Մատ.
րիկամունս եւ զսիրտս. եւ տամ ձեզ իւրա- 7. 10. Երեմ.
24 քանչիւր ըստ գործոց իւրեանց։ *Բայց ձեզ 11. 20.
ասեմ որք ՚ի Թիւատիր էք, եւ ոչ ունիք ըզ- 17. 10.
վարդապետութիւն զայս. որ ոչ ծանեայք ըզ- 20. 12.
խորս սատանայի՝ զոր խօսին. ոչ արկից ըզ-
25 ձեզ ծանրութիւն։ *Բայց զոր ունիք, պա-
26 հեցէք՝ մինչեւ ես գամ։ *Եւ որ յաղթէ եւ
պահէ զգործս իմ մինչեւ ցվախճան, տաց
27 նմա իշխանութիւն ՚ի վերայ ազգաց։ *∥Եւ ∥ Սաղ.
հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ. 2. 9.
28 եւ իբրեւ զանօթ բրուտի փշրեսցէ զնոսա։ *Որ-
պէս եւ ես ընկալայ ՚ի Հօրէ իմմէ, եւ տաց
29 նոցա զաստղն առաւօտին։ *Որ ունի ա-
կանջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ ե-
կեղեցիս։

## ԳԼ. Գ.

1 Եւ առ Հրեշտակ սարդիացւոց եկեղեցւոյն
գրեա. այսպէս ասէ՝ որ ունի զեօթն Հոգին
այ՝ եւ զեօթն աստեղս. գիտեմ զգործս քո՝
զի անուն կենդանւոյ ունիս՝ եւ մեռեալ
2 ես։ *Եղիր արթուն՝ եւ Հաստատեա զմնա-
ցեալսն՝ զի Հանդերձեալ են մեռանել. քան-
զի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի
3 այ։ *Յիշեաց յիշեա թէ որպէս լուար,
եւ պահեա եւ ապաշխարեա. ապա թէ ոչ
զուարթնանաս՝ ∥ գամ որպէս գող. եւ ոչ գի- ∥ 1. Թես.
4 իմանայց զժամանակ իմ առ քեզ։ *Այլ ունիս 5. 2.
սակաւ մի զանուանս սարդիացւոցն, որք ոչ 2. Պետ.
ապականեցուցին զՀանդերձս իւրեանց. եւ 3. 10.
շրջին ՚ի սպիտակս՝ ընդ իմ արժանի եղեն։ Յայտ. 16. 15.
*Որ-

*Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտակս. և 5
ոչ ջնջեցից զանուն նորա 'ի գրոց կե-
նաց. և խոստովանեցայց զանուն նորա ա-
ռաջի Հօր իմոյ՝ և առաջի հրեշտակաց: *Որ 6
ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հո-
գին առ եկեղեցիս: *Եւ առ հրեշտակն 7
Փիղադելփեայ եկեղեցւոյն գրեա. այսպէս
‖ Եսայ. 22. 22. ‖ Յոբ 12. 14. ասէ Սուրբն Ճշմարիտն, ‖ որ ունի զփականս
Դաւթի. ‖ Բանայ՝ և ոչ ոք է որ փակէ, և
փակէ՝ և ոչ ոք է որ բանայ: *Գիտեմ զգործս 8
քո. ահա ետու առաջի քո դուռն բացեալ,
զոր ոչ ոք կարէ փակել. զի սակաւիկ ունիս
զօրութիւն, և պահեցեր զբանս իմ, և ոչ ու-
րացար զանուն իմ: *Ահաւասիկ ես տամ 9
քեզ զժողովրդեանն սատանայի, որք ասեն զին-
քեանս հրեայս գոլ՝ և ոչ են, այլ ստեն. ա-
ծարից զնոսա՝ զի եկեսցեն՝ և երկիր պագ-
ցեն առաջի ոտից քոց, և ծանիցեն զի ես
սիրեցի զքեզ: *Զի պահեցեր զբան համ- 10
բերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ 'ի
ժամ փորձութեան. որ հանդերձեալ է գալ
յամենայն տիեզերս փորձել զամենայն բը-
նակեալս յերկրի: *Ահա գամ վաղ- 11
վաղակի, կալ զոր ունիս՝ զի մի ոք առցէ
զպսակ քո: *Որ յաղթէ՝ արարից զնա սիւն 12
տաճարի այ իմոյ, և արտաքս այլ մի եւս ել-
ցէ. և գրեցից 'ի վերայ նորա զանուն այ ի-
մոյ, և զանուն քաղաքի այ իմոյ՝ զնորն ե-
րուսաղեմի, որ իջանելոց է յերկնից այ ի-
մոյ. և անուն իմ նոր: *Որ ունի ականջս՝ 13
լուիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիս:
*Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեց- 14

ւոյն

ւոյն գրեա. այսպէս ասէ ամէնն՝ վկայն հա-
ւատարիմ և ճշմարիտ, սկիզբն սկզբանն ա-
15 րարածոց այ: *Գիտեմ զգործս քո՝ զի ոչ
ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ
16 լինել՝ և կամ ջերմ: *Արդ դու գաղջ ես՝ և
ոչ ջերմ և ոչ ցուրտ, հանդերձեալ եմ փսխել
17 ՚ի բերանոյ իմմէ: *Զի ասես. մեծատուն
եմ՝ և մեծացայ, և ոչ ինչ կարօտ եմ. և
ոչ գիտես՝ եթէ դու ես ողորմելի և հեղգ.
18 և աղքատ՝ մերկ և կոյր: *Արդ՝ ես խրատ
հրդաւերից եղէց քեզ, առ գնել յինէն ոսկի
փորձեալ ՚ի հրոյ՝ զի մեծասցիս, և հան-
դերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի մի ե-
րևեսցի անվայելչութիւն մերկութեան քո. և
19 դիր դեղ յաչս քո՝ զի տեսցես: *Ես՝ զոր Առակ. 3. 12. Եբր. 12. 6.
սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ. նախան-
20 ձեա այժմ, և ապաշխարեա: *Ահաւասիկ
կամ ես առ դուրս և բախեմ. եթէ ոք լուի-
ցէ ձայնի իմում՝ և բանայցէ զդրունս,
մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա, և
21 նա ընդ իս: *Որ յաղթէ՝ տաց նմա նստել ընդ
իս յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի՝ և
22 նստայ յաթոռ հօր իմոյ: *Որ ունիցի ա-
կանջս՝ լուիցէ զինչ ասէ հոգին առ եկե-
ղեցիս:

## ԳԼ. Դ.

1 Յետ այսր տեսի ահա՝ և ահա դրունք
երկնից բացեալ էին, և ձայն փողոյն ա-
ռաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր.
Ել այսր՝ և ցուցից քեզ՝ զինչ լինելոց է յե-
2 տոյ ժամանակս: *Եւ ժամանեալ յիս հո-
գի,

գի, և տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս ։
*Եւ 'ի վերայ աթոռոյն նստէր նման տես- 3
լեան ականց յասպւոյ և սարդիոնի ։ *Եւ 4
ծիածանայք շուրջ զաթոռովն նմանք տես-
լեան զմրխտոյ. և շուրջ զաթոռովն աթոռք
քսան և չորք, և 'ի վերայ աթոռոյն նստէին
քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս
սպիտակս, և 'ի գլուխս իւրեանց պսակս
ոսկիս ։ *Եւ յաթոռոյ անտի ելանէին փայ- 5
լատակմունք և ձայնք և որոտմունք. և եօթն
ջամբարք հրոյ բորբոքեալք առաջի աթո-
ռոյն, որ են եօթն հոգիքն այ ։ *Եւ էր ա- 6
ռաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նման սպի-
տակութեն սառին, և 'ի մէջ աթոռոյն չորք
կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ և յետոյ ։
*Եւ էր կենդանին առաջին նման առիւ- 7
ծու, և երկրորդ կենդանին նման զուարա-
կի, և երրորդ կենդանին ունէր երեսս մար-
դոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ
թռուցելոյ ։ *Եւ չորից կենդանեացն էին 8
միոյ միոյ 'ի նոցանէ վեց թևք, շուրջանակի
և 'ի ներքոյ լի էին աչօք, ոչ հանգչէին՝ ոչ
[illegible] զտիւ և ոչ զգիշեր՝ ասելով. սբ սբ սբ տէր
ած ամենակալ՝ որ էն և էր, և որ գալոց
է ։ *Եւ յորժամ տային կենդանիքն փառս 9
և պատիւ և գոհութիւն նստելոյն 'ի վերայ
աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս յաւի-
տենից, (*անկանէին քսան և չորք երի- 10
ցունքն առաջի նստելոյն յաթոռն, և երկիր
պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւի-
տենից ։) և դնէին զպսակս իւրեանց առա-
ջի աթոռոյն ասելով, *արժանի ես տր ած 11
մեր

մեր՝ առնուլ փառս և պատիւ և զօրութիւն,
զի դու ստեղծեր զամենայն. և ՚ի կամս
քո ստեղծան՝ և կան հաստատուն։

## ԳԼ. Ե.

1 Եւ տեսի ՚ի ձեռս աջոյ՝ որ նստէր ՚ի վերայ
աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ և արտա-
2 քոյ, և կնքեալ եօթն կնքով։ *Եւ տեսի
հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի ձայն
մեծ. ո՞ է արժանի բանալ զգիրսն՝ և լու-
3 ծանել զկնիքս նր։ *Եւ ոչ ոք կարէր՝ ոչ ՚ի
յերկինս և ոչ յերկրի և ոչ ՚ի ներքոյ երկրի
4 բանալ զգիրսն, զի ոչ տեսին զնա։ *Եւ
ես լայի ուժգին՝ զի ոչ ոք գտաւ արժանի բա-
5 նալ զգիրսն և հայել ՚ի նա։ *Եւ մի յերի-
ցանցն ասէ ցիս. մի լար, ահաւասիկ յաղ-
թեաց առիւծն յազգէն յուդայ յարմատոյն
դաւթի՝ բանալ զգիրսն՝ և լուծանել զեօթն
6 կնիքսն նր։ *Եւ տեսի ՚ի մէջ աթոռոյն և
՚ի մէջ չորից կենդանեացն՝ և ՚ի մէջ երի-
ցանցն գառն կայր զենեալ, որ ունէր եօթն
եղջիւրս՝ և աչս եօթն, որ են եօթն հոգիք
7 այ որ են առաքեալ ընդ ամ երկիր։ *Եւ
եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նր՝ որ նստէր ՚ի
8 վերայ աթոռոյն։ *Եւ յորժամ առ զգիրսն,
չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն
անկանէին առաջի գառինն. և ունէին իւ-
րաքանչիւր քնար՝ և բուրվառ ոսկի լի խն-
9 կով, որ է աղօթք սրբոց։ *Եւ օրհնէին
երգս նորս և ասէին. արժանի ես առնուլ
զգիրդ՝ և բանալ զկնիքս դորա, զի զենար՝ և
գնեցեր զմեզ այ արեամբդ քով յամ ազ-

զաց եւ 'ի լեզուաց եւ 'ի ժողովրդոց հեթանո-
սաց ։ *Եւ արարեր զնոսա այ մերոյ թա- 10
գաւորս եւ քահանայս՝ թագաւորել 'ի վերայ
երկրի ։ *Եւ տեսի, եւ լուայ զձայն հրեշ- 11
տակաց բազմաց՝ որք կային շուրջ զաթո-
ռովն եւ զորիւք կենդանեացն եւ զքահա-
‡ Դանէ. նայիւքն . եւ էր թիւ նց ‡ բիւրք բիւրուց՝
է. 10. եւ հազարք հազարաց ։ *Ասէին ձայնիւ մե- 12
ծաւ . արժանի է գառնդ զենեալ առնուլ
զմեծութի եւ զիմաստութի եւ զզօրութի եւ
զպատիւ եւ զփառս եւ զօրհնութիւն ։ *Եւ 13
ամ արարածք՝ որ են յերկինս եւ յերկրի եւ 'ի
ծովու եւ որ 'ի նմա՝ լուայ զի ասէին . որ նստ-
ոյ յաթոռն՝ եւ գառինն օրհնել բարձրա-
ցեալ եւ փառաւորեալ յաւիտեանս յաւիտե-
նից ։ *Եւ չորք կենդանիքն ասէին, ամէն . 14
եւ երիցունքն անկանէին առաջի նորա եւ եր-
կիր պագանէին ։

## ԳԼ. Զ.

Եւ տեսի զի եբաց զմին 'ի կնքոցն, եւ 1
լուայ 'ի միոյ 'ի չորից կենդանեացն իբրեւ
զձայն որոտման՝ զի ասէր՝ թէ գամ ։ *Եւ 2
տեսի՝ եւ ահա ձի սպիտակ, եւ որ հեծեալն
էր 'ի նմա՝ ունէր աղեղն . եւ տուաւ նմա
պսակ, եւ ել յաղթող՝ զի յաղթեսցէ ։
*Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, 3
լուայ յերկրորդ կենդանւոյն՝ զի ասէր,
գամ ։ *Եւ ել այլ ձի կարմիր . եւ որ հե- 4
ծեալն էր 'ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ
զխաղաղութի յերկրէ, զի զմիմեանս զեն-
ցեն . եւ տուաւ նմա սուր մի մեծ ։ *Եւ 5

յոր-

յորժամ եբաց զկնիքն երրորդ՝ լուայ յեր-
րորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ գամ. և
տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր
'ի վ՜ր ն՜ր՝ ունէր կշիռս 'ի ձեռին իւրում։
6 * Եւ լուայ ձայն 'ի մէջոյ չորից կենդա-
նեացն. կապիճ մի ցորեան՝ դահեկանի միոջ,
և երեք կապիճ գարի՝ դահեկանի միոջ. և ձէթ
7 և գինի մի՛ վնասեսցես։ * Եւ յորժամ ե-
բաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն 'ի չորրորդ
8 կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ գամ։ * Եւ տե- 'ի Յն.
սի՝ և ահա ձի շլոատս, և որ նստէրն 'ի վերայ՝ —դեղ-
ունէր զմահ, և դժոխք երթային զհետ նո- նիկ՝ շլո-
րա. և տուաւ նմա իշխանութիւն չորրորդ տաս, որ
մասին աշխարհի՝ սպանանել սրով և սովով և է դալուկ
9 մահուամբ՝ և գազանօք երկրի։ * Եւ յոր- լափ։
ժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի 'ի
ներքոյ սեղանոյն զհոգիս ա՜մ մարդկան զե-
նեալ վ՜ն բանին ա՜յ՝ և վ՜ն վկայութ՜ե նորա
10 զոր ունէին։ * Աղաղակէին 'ի ձայն մեծ.
մինչև յերբ տ՜ր տ՜ր և ճշմարիտ՝ ոչ դատիս,
և խնդրես զվրէժ արեան մերոյ 'ի բնակչաց
11 երկրի։ * Եւ տուաւ ն՜ց արկանելիս սպի-
տակս, և ասացաւ ն՜ց զի հանգիցեն փոքր մի
ժամանակ, մինչև լցցին ծառայակիցք նոցա
և եղբարք ն՜ց՝ որք հանդերձեալ են կոտո-
12 րել իբրև զն՜ս։ * Եւ տեսի յորժամ եբաց
զկնիքն վեցերորդ՝ եղև շարժումն մեծ, և
արեգակն եղև սեաւ իբրև զխարազն այ-
ծեայ, և լուսինն բոլորովին եղև արիւն։
13 * Եւ աստեղք երկնից թօթափեցան 'ի յեր-
կիր, ո՜պ տերև թզենւոյ զի ուժգին շարժի-
14 ցի 'ի հողմոյ։ * Եւ երկին իբրև զմագա-

ղա.

ղաթեայ գիրս գալարեալ. եւ ամ՛ լերինք եւ
կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան ։ *Եւ 15
թագաւորք երկրի եւ իշխանք՝ հազարապետք
եւ մեծամեծք եւ զօրաւորք՝ եւ ամ՛ ծառայք
եւ ամ՛ ազատք թաքուցին զինքեանս յայրս եւ
Եսայ. 2. 19. 'ի ծերպս վիմաց ։ *Եւ ասէին լերանց՝ թէ 16
Ովսէ. 10. 8. անկերուք 'ի վ՛ր մեր, եւ ցբլուրս՝ թէ ծած-
Ղուկ. 23. 30. կեցէք զմեզ ։ *Զի եկն օր մեծ բարկութե֊ 17
նոցա. եւ ո՞վ կարէ կալ առաջի նոցա ։

## ԳԼ. Է.

Եւ յետ այսորիկ տեսի չորս հրեշտակս՝ զի 1
կային 'ի չորս անկիւնս երկրի. եւ ունէին
զչորս հողմս երկրի՝ զի մի՛ շնչեսցէ հողմ 'ի
վ՛ր երկրի, եւ մի՛ 'ի ծովու՝ եւ մի՛ 'ի ծառս ։
*Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել յարեւելից, 2
եւ ունէր զկնիք այ՛ կենդանւոյ, եւ աղաղա-
կեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝
որոց տուեալ էր իշխանութի֊ ապականել զեր-
կիր եւ զծով ։ *Եւ ասէր. մի՛ վնասէք երկ- 3
րի՝ մի՛ ծովու՝ մի՛ ծառոց, դադարեցէք մին-
չեւ կնքեսցուք զծառայս այ՛ մերոյ 'ի ճակատս
նոցա ։ *Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարիւր 4
քառասուն եւ չորք հազար կնքեալք յազգէ
որդւոցն իէլի ։ *Յազգէն յուդայ՝ երկոտա- 5
սան հազար կնքեալ ։ Յազգէն ռուբենի՝ եր-
կոտասան հազար կնքեալ ։ Յազգէն գադայ՝
երկոտասան հազար կնքեալ ։ *Յազգէն ա- 6
սերայ՝ երկոտասան հազար կնքեալ ։ Յազ-
գէն նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնք-
քեալ ։ Յազգէն մանասէի՝ երկոտասան հա-
զար կնքեալ ։ *Յազգէն շմաւոնի երկո- 7

տա

տասան հազար կնքեալ։ Յազգէն Ղեւեայ՝
երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Ի-
սաքարայ երկոտասան հազար կնքեալ։
8 *Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար
կնքեալ։ Յազգէն Յովսեփայ՝ երկոտասան
հազար կնքեալ։ Յազգէն Բենիամենի՝ եր-
9 կոտասան հազար կնքեալ։ *Եւ յետ այսո-
րիկ տեսի՝ եւ ահա ժողովուրդ բազում որոց
ոչ գոյր թիւ, յամ հեթանոսաց եւ յամ ազ-
գաց եւ յամ լեզուաց եւ յամ ժողովրդոց,
որք կային առաջի աթոռոյն եւ առաջի գա-
ռինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս սպի-
տակս, եւ արմաւենիս ՚ի ձեռս իւրեանց։
10 *Աղաղակէին ՚ի ձայն մեծ՝ եւ ասէին. փր-
կութիւն այ մերոյ՝ որ նստի ՚ի վր աթոռոյն,
11 եւ գառինն։ *Եւ ամ հրեշտակք կային
շուրջ զաթոռովն եւ զերիցամբքն եւ զչորիւք
կենդանեօքն, եւ անկանէին յերեսս առաջի
12 աթոռոյն՝ եւ երկիր պագանէին այ, *ասե-
լով. ամէն. օրհնութի եւ փառք եւ իմաստու-
թիւն եւ գոհութի եւ պատիւ եւ զօրութի եւ
շնորհք ամն այ մերոյ յաւիտեանս յաւիտե-
13 նից. ամէն։ *Եւ ասէ ցիս մի յերիցանց
անտի. սոքա որ զգեցեալ են զհանդերձս
14 սպիտակս՝ ովք են՝ եւ կամ ուստի՞ գան։ *Եւ
ասացի ցնա. տր՝ դու գիտես։ եւ ասէ ցիս.
սոքա են՝ որ գան ՚ի վշտաց մեծաց, եւ լուա-
ցին զպատմուճանս իւրեանց՝ եւ սպիտակացու-
15 ցին արեամբ գառինն։ *Վասն այնորիկ են
առաջի աթոռոյն այ եւ պաշտեն զնա զտիւ
եւ զգիշեր ՚ի տաճարի նր. եւ որ նստի ՚ի վե- Ե Եսայ.
16 րայ աթոռոյն՝ բնակեալ է ՚ի նոսա։ *Ոչ կթ. 10.

քաղ-

քաղցիցեն և ոչ ծարաւիցեն, և ոչ մի անկ-
ցէ նոցա ոչ արեգակն և ոչ տօթ. *Զի գառնն 17
՚ի մէջ աթոռոյն իցէ հովուեսցէ զնոսա,
և առաջնորդեսցէ նոցա ՚ի կենաց աղբիւր
Եսայ. 25. 8. Վերլ. 21. 4. ջրոյ կենդանւոյ. ‖ քանզի եհատ ա՛ծ զամե-
նայն արտասուս յերեսաց նոցա.

## Գլ. Ը.

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ ե-
ղև լռութիւն յերկինս՝ որպէս կէս ժամու.
2 *Եւ տեսի հրեշտակս եօթն, որ առաջի այ
3 կային. և տուաւ նոցա եօթն փողս. *Եւ
այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, և ու-
նէր բուրվառ ոսկի. և տուաւ նմա խունկ
բազում, զի մատուսցէ զաղօթս ամ սրբոց
՚ի վ՛ր ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն.
4 *Եւ ել ծուխ խնկոյն աղօթք սրբոյն ՚ի ձե-
5 ռաց հրեշտակացն առաջի այ. *Եւ էառ
հրեշտակն զխնկամանն ՚ի հրոյ սեղանոյն՝ և
արկ զնա յերկիր. և եղև որոտումն և ձայնք
6 և փայլատակումն և շարժումն մեծ. *Եւ
եօթն հրեշտակքն որ ունէին եօթն փողս՝
պատրաստեցին զինքեանս առ ՚ի հարկանել.
7 *Եւ առաջինն հրեշտակն եհար զփողն, և
եղև կարկուտ և հուր և արիւն խառնեալ՝
և անկաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի
այրեաց, և զերրորդ մասն ծառոց այրեաց,
8 և զամ դալար խոտոյ այրեաց. *Եւ երկ-
րորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն
մի մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով, և եղև
9 երրորդ մասն ծովու արիւն. *Եւ սատակե-
ցաւ երրորդ մասն զաւղակաց, և որ ունէր

շունչ

շանցն կենդանի՛ տապականեցաւ. (և երրորդ
10 մասն նաւուց ընկղմեցաւ։) *Եւ երրորդ
հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից
աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զջամբար,
և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբե-
11 րաց. *և էր անուն աստեղն դառնութիւն.
և բազումք մեռան 'ի դառնութէ ջուրցն։
12 *Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և վիրա-
ւորեր երրորդ մասն արեգական՝ և երրորդ
մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և
խաւարէր երրորդ մասն նոցա, և երրորդ
13 մասն գիշերոյ նոյնպէս։ *Եւ տեսի՝ և լուայ
ձայն հրեշտակի թռուցելոյ 'ի մէջ երկնից՝
զի ասէր 'ի ձայն մեծ, վայ վայ վայ՝ որ բը-
նակեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն
երիցն եւս փողոց, զոր կամիցին հրեշտակքն
հարկանել։

## Գլ. Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. և տե-
սի զի աստղ մի անկաւ յերկնից, և տուաւ
2 նմա բանալի գբոյն անդնդոց. *և եբանէր
ծուխ 'ի գբոյն որպ զծուխ հնոցի մեծի. և
3 խաւարեցաւ արեգակն և օդք։ *Եւ 'ի ծը-
բոյն ելանէր մարախ 'ի յերկիր. և տուաւ
նոցա իշխանութիւն իբր զխայթոցս կարճի.
4 *և ասացաւ նց՝ զի մի մեղիցեն խոտոյ երկ-
րի և մի ամ՛ ծառոց, բայց միայն մարդոց
երկրաւորաց, որ ոչ ունիցին զկնիք 'ի վ՞ ճա-
5 կատու իւրեանց։ *Եւ տուաւ նց՝ հրաման
զի մի սպանանիցեն զնս, այլ չարչարեսցեն
զնս ամիս հինգ. և չարչարանք նոցա իբրև

ըզ-

զխայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ ։
* Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մար- 6
դիկ զմահ՝ և մի գտցեն. և ցանկան մեռա-
նել՝ և փախիցէ 'ի նոցանէ մահ ։ * Եւ նմա- 7
նութիւն մարախոյն, նմանութիւն ձիոյ պատ-
րաստելոյ 'ի պատերազմ. և 'ի վերայ գլխոց
նց իբրև զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք
նց իբրև զերեսս մարդոյ. * և հերք նոցա 8
իբրև զհերս կնոջ. և ատամունք նոցա իբ-
րև զառիւծու ։ * Եւ ունէին զրահս իբրև 9
զզրահս երկաթի. և ձայն թևոց նց իբրև
զձայն կառավար ձիոց բազմաց՝ որ արշաւեն
'ի պատերազմ ։ * Եւ ունէին ագիս ըստ նմա- 10
նութեան կարճի. և խայթոց յագիս նոցա. և
ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ա-
միսս հինգ ։ * Եւ ունէին թագաւոր 'ի վր 11
իւրեանց զհրեշտակն դժոխոց. և անուն նր
եբրայեցերէն աբադդոն, որ կոչի 'ի հայ
բարբառ կորուստ ։ * Ահաւասիկ վայ մի 12
անց, և վայք երկու գալոց են ։ * Եւ վե- 13
ցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. և
լուայ ձայն 'ի չորից կենդանեացն՝ որ էին ա-
ռաջի սեղանոյն այ. * զի ասէր ցհրեշտակն 14
վեցերորդ՝ որ ունէր զփողն. լոյծ զչորս հրեշ-
տակսն զկապեալս 'ի վր գետոյն եփրատայ ։
* Եւ լուծան չորս հրեշտակքն՝ պատրաս- 15
տեալք 'ի ժամ և յօր և յամիս և 'ի տարի,
զի սպանցեն զերրորդ մասն մարդկան ։ * Եւ 16
համարք հեծելոց զօրաց նց՝ բիւրք բիւրուց՝
և հազարք հազարաց՝ լուայ զթիւ նց ։ * Եւ 17
տեսի ձիս 'ի տեսլեանն, և հեծեալս 'ի նս՝
որք ունէին զրահս հրեղէնս, և յակինթս

հրեղ-

հրեղէնս եւ ծծմբոյ. եւ գլուխք ձիոցն իբ-
րեւ զգլուխս առիւծուց. եւ ՚ի բերանոյ նո-
18 ցա հուր ելանէր եւ ծուխ եւ ծծումբ։ *Եւ
՚ի հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ
մասն մարդկան՝ ՚ի հրոյն եւ ՚ի ծխոյն եւ ՚ի
19 ծծմբոյն, որ ելանէր ՚ի բերանոյ նց։ *Զի
իշխանութիւն ՚ի բերանս է նց՝ եւ յագիս նց,
եւ ագիք նց նմանութիւն օձի. եւ ունէին գլ-
20 ուխս՝ որով սատակէին զանիրաւս։ *Եւ
այլք ՚ի մարդկանէ որ ոչ մեռան ՚ի հարուա-
ծոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին եւ ոչ դար-
ձան ՚ի գործոց ձեռաց իւրեանց, յերկրպա-
գութենէ դիւաց եւ կռոց յոսկեղինաց եւ յար-
ծաթեղինաց՝ եւ ՚ի պղնձոյ եւ ՚ի քարէ եւ ՚ի
փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ եւ ոչ լսել
21 եւ ոչ գնալ. *Եւ ոչ ապաշխարեցին ՚ի մար-
դասպանութենէ՝ եւ ՚ի դեղատուութենէ, եւ ՚ի
պոռնկութենէ եւ ՚ի գողութենէ իւրեանց։

## ԳԼ. Ժ.

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջա-
նէր յերկնից, եւ զգեցեալ էր ամպ՝ եւ ծիա-
ծան ՚ի գլուխ նորա. եւ երեսք նորա իբրեւ
2 զարեգակն, եւ ոտք նր որպս սիւն հրոյ։ *Եւ
ունէր ՚ի ձեռին իւրում գրքոյկ մի բացեալ.
եւ եդ զոտն իւր զաջ ՚ի վր ծովու, եւ զձախն
3 ՚ի վր երկրի։ *Եւ աղաղակեաց ՚ի ձայն
մեծ՝ գոչեաց իբրեւ զառիւծ. եւ յորժամ ա-
ղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտմունք յիւ-
4 րեանց ձայնս։ *Եւ յորժամ խօսեցան եօթն
որոտմունքն՝ կամէի գրել. եւ լուայ ձայն
յերկնից՝ զի ասէր, կնքեա զոր խօսեցան

եօթն

Դան. եօթն որոտմունքն՝ եւ մի գրեր. *Այս հրեշ- 5
12. 7. տակն զոր տեսի, որ եդ զոտն իւր 'ի վերայ
ծովու եւ զմիւսն 'ի ցամաքի, համբարձ ըզ-
ձեռն իւր զաջ յերկինս. *Եւ երդուաւ 'ի 6
կենդանին յաւիտենից՝ որ հաստատեաց
զերկինս՝ եւ որ 'ի նմա, եւ զերկիր եւ որ 'ի
նմա. զի ոչ եւս կայ այլ ժամանակ. *այլ յա- 7
ւուրս ձայնի եօթներորդ հրեշտակին՝ յոր-
ժամ հարցէ զփողն, կատարեսցի խոր-
հուրդն այ՝ որ աւետարանեցաւ 'ի ձեռն ծա-
ռայից իւրոց մարգարէիցն. *Այս ձայնն՝ զոր 8
լուայ յերկնից դարձեալ խօսեցաւ ընդ իս՝ եւ
ասէ. երթ առ զգրքոյկն՝ զոր ունի հրեշ-
տակն բացեալ 'ի ձեռին իւրում, եւ կայ 'ի
վ՛ր ծովու եւ ցամաքի. *Այս ես երթեալ առ 9
հրեշտակն՝ խնդրեցի 'ի նմանէ. եւ ասէ ցիս,
Եզեկ. Առ զդա՝ եւ կեր զդոյն, եւ դառնասցի յո-
3. 1. րովայն քո. այլ 'ի բերան քո է քաղցր իբրեւ
զմեղր. *Այս առի զգրքոյկն բացեալ 'ի 10
հրեշտակէն՝ եւ կերայ զնա. եւ էր 'ի բերան
իմ որպէս մեղր. եւ յորժամ կերայ, դառնացաւ
որովայն իմ. *Այս ասէ ցիս. հասանէ քեզ 11
դարձեալ մարգարէանալ 'ի ժողովուրդս՝ եւ
'ի հեթանոսս եւ 'ի լեզուս եւ 'ի թագաւորս
երկրի.

## ԳԼ. ԺԱ.

Այս տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. 1
եւ կայր հրեշտակն՝ եւ ասէր ցիս. արի եւ
չափեա զտաճարն այ եւ զսեղանն՝ եւ զեր-
կրպագուսն որ 'ի նմա. *Այս զգաւիթն որ 2
արտաքոյ տաճարին՝ թող զնա՝ եւ մի չափեր.

զի

զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն
որ կոխեսցեն ամիսս քառասուն և երկու։
3 * Եւ տաց երկուց վկայից իմոց՝ և մարգա-
րէասցեն աւուրս հազար երկերիւր և վաթ-
4 սուն զգեցեալ քուրձս։ * Սոքա են երկու
ձիթենիքն՝ և երկու ճրագք, որ կան առա-
5 ջի տն յերկրի։ * Եւ որք կամիցին վնասել
նց, հուր ելցէ ՚ի բերանոյ նոցա՝ և կերիցէ
զթշնամիս նց. և որք կամիցին մեղանչել նց՝
6 այսպէս սատակեսցին։ * Սոքա ունին իշխա-
նութիւն փակել զերկինս՝ զի մի տեղասցէ զա-
ւուրս մարգարէութեան նց. և ունին իշխա-
նութիւն ՚ի վերայ ջուրց՝ դարձուցանել զնս յա-
րիւն, և հարկանել զերկիր յամ հարուածս՝
7 քանիցս անգամ և կամիցին։ * Եւ յորժամ
կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան
իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յան-
դնդոց՝ տացէ ընդ նս պատերազմ, և յաղ-
8 թեսցէ նց և սպանցէ զնս։ * Եւ դի նոցա
անկեալ կայցէ ՚ի մէջ հրապարակաց քաղա-
քին նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ
հոգւոյն սոդոմ և եգիպտոս. ուր և տրն
9 նց խաչեցաւ։ * Եւ տեսցեն զնս ամ ցեղք
և ժողովուրդք՝ և ամ լեզուք և հեթանոսք,
զի դի նոցա անկեալ կայցէ զերիս աւուրս և
կէս. և ոչ տացեն թաղել ՚ի գերեզմանս
10 զոսկերս նց։ * Եւ որ բնակեալ են յերկրի՝
ուրախ լինին և խնդան ՚ի վերայ նց, մինչև
ընծայս և պատարագս տանել միմեանց. զի
չի սոքա երկոքին մարգարէքս չարչարեսցեն
11 զբնակիչս երկրի։ * Եւ յետ երից աւուրց
և կիսոյ՝ հոգի կենդանի յայ մտցէ ՚ի նոսա.
և

եւ յարիցէն կացցէն 'ի վ̃ր ոտից իւրեանց, եւ
ահ եւ երկիւղ մեծ անկաւ 'ի վ̃ր ամենեցուն՝
որ տեսանէին զնո։ *Եւ լուայ ձայնի մեծ՝ որ 12
ասէր ցնո. վերացիք ելէք աստ. եւ վերացան
ելին յերկինս ամպովք. եւ տեսին զնո թշնա-
միք իւրեանց։ *Եւ 'ի ժամուն յայնմիկ շար- 13
ժումն մեծ եղեւ, եւ տասներորդ մասն քա-
ղաքին ընկղմեցաւ, եւ մեռան 'ի շարժմանէն
արք եօթն հազար. եւ յետ այնորիկ ահ մեծ
եղեւ յամենեսեան, եւ փառս տային ա̃յ երկ-
նաւորի։ *Հաւասարիկ վայն երկրորդ եանց, 14
եւ վայն երրորդ գալոց է վաղվաղակի։ *Եւ 15
յորժամ եօթներորդ հրեշտակն հարկանէր
զփողն, եղեւ ձայն յերկինս՝ եւ ասէ. եղեւ
թագաւորութի̃ ամ՝ տիեզերաց տ̃ն մերոյ՝ եւ
ք̃ի իւրոյ. եւ թագաւորեսցէ 'ի վ̃ր ամի
յաւիտեանս յաւիտենից։ *Եւ քսան եւ չորս 16
երիցունքն՝ որ նստէին յաթոռս իւրեանց ա-
ռաջի ա̃յ, անկանէին 'ի վ̃ր երեսաց իւրեանց՝
եւ երկիր պագանէին ա̃ծ ա̃յ, եւ ասէին. *Գո- 17
հանամք զքէն տ̃ր ա̃ծ ամենակալ, որ էն եւ
էր՝ եւ առեր զզօրութի̃ քո մեծ, եւ թագաւորե-
ցեր։ *Եւ հեթանոսք բարկացան, եւ եկն 18
բարկութի̃ քո, եւ ժամանակ մեռելոց՝ զի դա-
տեսցին. եւ տաս վարձս ծառայից քոց մար-
գարէից, եւ սրբոց երկիւղածաց անուան քոյ՝
փոքունց եւ մեծամեծաց, եւ ապականես զա-
պականիչս երկրի։ *Եւ բացաւ տաճարն 19
ա̃յ որ յերկինս, եւ երեւեցաւ տապանակն ա̃յ՝
'ի տաճարին իւր. եւ եղեն փայլատակմունք
եւ ձայնք եւ որոտմունք եւ շարժումն, եւ կար-
կուտ մեծամեծ։

ԳԼ.

## ԳԼ. ԺԲ.

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի
արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լուսին ՚ի ներ-
քոյ ոտից նր. եւ ՚ի վերայ գլխոյ նորա պսակ
2 աստեղաց յերկոտասանից. *Եւ էր յղի.
եւ ճչէր յերկնելն, եւ բազում վշտօք մերձ էր
3 ՚ի ծնանել. *Եւ երեւեցաւ այլ նշան յեր-
կինս՝ եւ ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն,
որոյ էին գլուխք եօթն եւ եղջիւրք տասն.
4 եւ ՚ի վերայ գլխոյ նորա եօթն խոյրք. *Եւ ա-
գուռն նր քարշէր զերրորդ մասն աստեղաց
երկնից, եւ արկ զնա յերկիր. եւ վիշապն կայր
առաջի կնոջն որ հանդերձեալ էր ծնանել,
զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա
5 վիշապն. *Եւ ծնաւ կինն արու՝ որ հան-
դերձեալ է հովուել զամ հեթանոսս գաւա-
զանաւ երկաթեաւ. եւ յափշտակեցաւ որդի
6 նր առ ած, եւ առ աթոռ նորա. *Եւ կինն
փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմ պատ-
րաստեալ յայ, զի կերակրեսցի անդ աւուրս
7 հազար երկերիւր եւ վաթսուն. *Եւ եղե
պատերազմ յերկինս, միքայէլ եւ հրեշտակք
իւր կռուէին ընդ վիշապին. եւ վիշապն պա-
8 տերազմէր զօրօք իւրովք. *Եւ ոչ կարացին
կալ ընդդէմ, եւ տեղի ոչ գտաւ նոցա յեր-
9 կինս. *Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առա-
ջին, որ անուանեալ կոչի բէեղզեբուղ եւ
սատանայ, որ մոլորեցոյց զամենայն տիե-
զերս երկրի. եւ հրեշտակք նորա ընդ նմա ան-
10 կան. *Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ա-
սէր. արդ եղեւ զօրութիւն եւ փրկութիւն եւ ար-
քայու

քայութիւն այ մերոյ, և իշխանութիւն օծելոյ
նր. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց,
որ չարախօսէր զնոցանէ առաջի այ զտիւ և
զգիշեր։ *Եւ նորա յաղթեցին նմ արեամբ 11
գառինն, և բանիւ վկայութեան նորա. և ոչ
հանձնեցան ընդ վիշապին մինչև ի մահ։ *Վն 12
այսորիկ ուրախ լերուք երկինք՝ և ամ որ բը-
նակեալ էն ի նմա։ Վայ երկրի և ծովու՝ զի
անկաւ բանսարկուն առ ձեզ, որ ունի ըղ-
ցասումն բազում. և կայցէ առ սակաւ մի
ժամանակս։ *Եւ յորժամ ետես վիշապն 13
թէ անկաւ յերկիր, զհետ եղև կնոջն՝ որ
ծնաւ զմանուկն արու։ *Եւ տուաւ կնոջն 14
երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յա-
նապատ ի տեղի իւր. ուր կերակրէր անդ
ժամանակ և ժամանակս և կէս ժամանա-
կի՝ յերեսաց օձին։ *Եւ եհեղ օձն ի բերա- 15
նոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղմեսցէ
զնա։ *Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց 16
երկիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր ե-
հեղ վիշապն ի բերանոյ իւրմէ։ *Եւ ցա- 17
սեաւ վիշապն ընդ կնոջն, և գնաց պատե-
րազմել ը այլ զաւակս նորա՝ որք պահէին
զպատուիրանս այ, և ունէին զվկայութիւն
յի։ *Եւ կաց ի վերայ աւազոյ ծովու։ 18

## ԳԼ. ԺԳ.

Եւ տեսի զի ելանէր ի ծովէն գազան, և 1
ունէր գլուխս եօթն՝ և եղջիւրս տասն, և
ի վերայ եղջերաց նորա տասն խոյր, և ի
վերայ գլխոյ նր անուն հայհոյութեան։ *Եւ 2
գազանն զոր տեսի՝ նման ընձու, և ոտք նր

իբ-

իբրև զարջու, և բերան նորա որպէս զառիւծու.
Եւ ետ նմա վիշապն զզօրութիւն իւր՝ և զաթոռ իւր
3 և զիշխանութիւն մեծ: *Եւ մի 'ի գլխոց նորա
վիրաւորեալ էր 'ի մահ. և վէր մահուան նորա
ողջանայր: Եւ զարմացաւ ամենայն երկիր
ընդ գազանն, զի ետ նմա վիշապն զթագաւո-
4 րութիւն իւր: *Եւ երկիր պագին վիշապին՝
որ ետ զիշխանութիւն գազանին, և ասէին.
ով իցէ նման գազանիս. կամ ո՞վ կարիցէ
5 պատերազմել ընդ դմա: *Եւ տուաւ նմա բե-
րան խօսել զմեծամեծս, և զհայհոյութիւն.
և տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառա-
6 սուն և երկու: *Եւ եբաց զբերան իւր
հայհոյութեամբ առ Աստուած, և հայհոյեաց զանուան
նորա՝ և զխորանն նորա, և զերկնայինս խորանն:
7 *(Եւ տուաւ նմա իշխանութիւն առնել պա-
տերազմ ընդ սուրբս՝ և յաղթել նոցա.) և տուաւ
նմա իշխանութիւն 'ի վերայ ամենայն ազգաց և լեզ-
8 ուաց և ժողովրդոց: *Զի երկրպագեսցեն
նմա ամենայն որ բնակեալ են ընդ երեսս երկրի.
որոց ոչ են գրեալ անուանք նոցա 'ի դպրութիւն
կենաց Գառինն զենլոյ 'ի սկզբանէ աշխարհի:
9 *Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ: *Զի
10 են ոմանք՝ որք 'ի գերութիւն վարեսցին, և են
ոմանք՝ որ սրով մեռցին, և են ոմանք՝ որ ան-
ձամբ զանձինս սպանանեն. աստ է համբե-
11 րութիւն և հաւատ սրբոց: *Եւ տեսի այլ
գազան՝ զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս
երկու նման գառին. և խօսէր իբրև ըն-
12 վիշապն: *Եւ զիշխանութիւն զամենայն զառաջնոյ
գազանին գործէր առաջի նորա. և առնէր
զերկիր և զամենայն բնակիչս նորա՝ զի երկիր պագա-
նիցեն

նիցեն գազանին առաջնոյ՝ մինչև ողջացի
վէր մահու նորա ։ * Եւ առնէր նշանս բա- 13
զումս, և տայր հրոյ իջանել յերկնից յեր-
կիր՝ առաջի մարդկան ։ * Եւ մոլորեցուցա- 14
նէր զորս բնակեալ են յերկրի՝ նշանացն որ
տուեալ էին ՚ի ձեռս նր՝ առնել առաջի գա-
զանին ։ ասէն ցնա բնակիչք երկրի. արա՛
զպատկեր գազանին, որ ՚ի վերայ սրոյն ե-
կեաց ։ * Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի 15
տացէ հոգի պատկերի գազանին, և զի խօ-
սեսցի պատկերն. և երկիր պագցեն նմա ամ՟
բնակիչք երկրի. և որ ոչ պագցէ երկիր
պատկերի գազանին, սպանցէ զնա ։ Եւ ա-
րասցէ զամ՟՝ փոքունս և զմեծամեծս և ըզ-
մեծատունս և զազատս և զաղքատս և ըզ-
ծառայս, զի տացէ նց դրոշմ յաջու ձեռանն՝
և ՚ի վ՟ր ճակատու նց ։ * Եւ ոչ ոք կարաս- 16
ցէ գնել և վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ
գրոյն՝ և զանուն գազանին և զթիւ անուան
նր ։ * Աստ է իմաստութիւն. որ ունի միտս՝ 17
համարեսցի զթիւ գազանին ։ թիւ եղեալն
մարդոյ, և թիւ անուան նորա է այս. վեց
հարիւր վաթսուն և վեց ։

## ԳԼ. ԺԴ.

Եւ տեսի՝ և ահա գառն կայր ՚ի վ՟ր լերինն 1
սիովնի. և ընդ նմա հարիւր քառասուն
և չորս հազարք, որ ունէին զանուն նր՝ և
անուն հօր նորա գրեալ ՚ի վերայ ճակատուց
նոցա ։ * Եւ լուայ ձայն յերկնից՝ իբր զձայն 2
ջուրց բազմաց՝ և ձայն որոտման մեծի. և
լուայ իբրև զձայն քնարահարաց, զի հար-

կա-

3 կանէին զքնարս իւրեանց ։ *Եւ երգէին
զերգս նորս առաջի աթոռոյն՝ և առաջի չո-
րից կենդանեացն՝ և առաջի երիցանցն ։ և
ոչոք կարէր գիտել զերգսն նր՝ բայց միայն հա-
րիւր քառասուն և չորս հազարքն , որք ագա-
4 տեալ են յերկրէ ։ *Սոքա են՝ որք ընդ կանայս
ոչ խառնակեցան , և են կուսանք ։ սոքա զհետ
երթան գառինն՝ ուր և երթիցէ ։ սոքա ընտ-
րեցան 'ի մարդկանէ առաջի այ և գառինն ։
5 *Եւ 'ի բերան նոցա ոչ գտաւ սուտ զի ան-
6 բիծք են ։ *Եւ տեսի այլ հրեշտակ թռու-
ցեալ 'ի մէջ երկնից ։ և ունէր աւետիս յա-
ւիտենական՝ աւետարանել ամ ազգաց և
7 լեզուաց՝ որ բնակեալ են յերկրի ։ *Եւ ա-
սէր 'ի ձայն մեծ ․ երկերուք յայ՝ և տուք
փառս նմա , զի եկն ժամ դատաստանի նր ․
և երկիր պագէք || արարչին երկնի և երկրի || Սաղ․
8 և ծովու և աղբերաց ջուրց ։ *Եւ այլ հրեշ- 145 ․ 6․
տակ երկրորդ գայր զհետ նր և ասէր ․ || ան- Գործ ․
կաւ անկաւ բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ ար- 14 ․ 14․ || Եսայ․
բեցութե՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնկութե իւր- 21 ․ 9․ Երեմ ․
9 մէ որ արբեցոյց զամ հեթանոսս ։ *Եւ 51 ․ 8․
այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա՝ և 'ի Վեր ․
ձայն մեծ ասէր ․ ով որ երկրպագեաց գա- 18 ․ 2․
զանին և պատկերի նր՝ և կամ զդրոշմ նշա-
նի նր առ 'ի ճակատ իւր՝ և կամ 'ի վր աջո-
10 ձեռին իւրոյ , *այնպիսին արբցէ 'ի բաժա-
կէ ցասմանն այ՝ արկելոյ յանապակէ բար-
կութեան բաժակին ․ և տանջեսցի հրով և
11 ծծմբով առաջի այ և գառինն ։ *Եւ ծուխ
նց ելցէ յաւիտեանս յաւիտենից ․ և ոչ ու-
նին հանգիստ՝ որք երկիր պագին գազանին

'ի տուէ և 'ի գիշերի. և որք երկիր պագին
պատկերին, և առնն զդրոշմ և զանուանն նո-
րա: *Այս համբերութիւն սրբոցն աստ է. 12
այս՝ որք պահեն զպատուիրանս այ̃, և զհա-
ւատս յի̃: *Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ա- 13
սէր ցիս. գրեա, երանի մեռելոցն՝ որք 'ի
տր̃ ննջեցին. այժմիկ վաղվաղակի զայս ա-
սէ հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ
իւրեանց. բայց միայն գործք իւրեանց շր-
ջան զհետ նոցա: *Եւ տեսի և ահա ամպ 14
սպիտակ, և 'ի վերայ ամպոյն նստէր նման
որդւոյ մարդոյ, և 'ի գլուխ իւր պսակ ոս-
կի, և 'ի ձեռին իւրում ունէր գերանդի
Մտ. 13. 39. սրեալ: *Եւ այլ հրեշտակ ելանէր յերկ- 15
նից, աղաղակէր 'ի ձայն մեծ՝ և ասէր. որ
նստիդ 'ի վր̃ ամպոյդ՝ առաքեա զգերան-
դիդ քո՝ և հնձեա, զի եկն ժամանակ հն-
ձոց, և հասեալ են հունձք երկրի: *(Եւ 16
արկ՝ որ նստէր 'ի վր̃ ամպոյն՝ զգերանդին
իւր յերկիր, և հնձէր զհնձ բնակչաց երկրի)
*Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի տաճարէն՝ որ 17
յերկինս, և ունէր և սա գերանդի սրեալ:
*Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի սեղանոյն՝ որ 18
ունէր իշխանութիւն 'ի վր̃ հրոյ, և աղաղա-
կեաց 'ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէր
զգերանդին սրեալ՝ և ասէր. կթեա զող-
կոյզս այգւոյ երկրէ, զի հասեալ է խա-
ղողդ 'ի գինս: *Եւ արկ հրեշտակն զգե- 19
րանդին իւր յերկիր, և կթէր զխաղող նր̃,
և արկանէր 'ի հնձանն այ̃ 'ի մեծ: *Եւ 20
կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, և ե-
լանէր 'ի հնձանէն արիւն մինչև 'ի սանձս
ձիոյն.

մղոն. և երկայնութիւն նր հազար և վեց հա-
րիւր ասպարէզ։

## ԳԼ. ԺԵ.

1 Եւ տեսի այլ նշան (յերկինս) մեծ և
սքանչելի. հրեշտակս եւթն՝ որք ունէին
եւթն վէրս զկնի. զի նոքօք կատարեր բար-
2 կութիւն այ։ *Եւ տեսի իբր ծով ապակեղէն
խառնեալ հրով. և որք յաղթեցին գազա-
նին՝ և թուոյ անուան նր՝ և պատկերի նր՝
և դրոշմի նր, նոքա կային 'ի վր ծովուն ա-
3 պակեղինի. և ունէին զքնարս այ։ *Եւ
երգէին զերգս մովսէսի ծառայի այ, և զերգս
գառինն՝ ասելով. թէ մեծամեծ և սքան-
չելի են գործք քո՝ տր այ ամենակալ, ար-
դար՝ և ճշմարիտ են ճանապարհք քո, թա-
4 գաւոր ամ հեթանոսաց։ *‖Եւ ով ոչ ոչ ‖ Երեմ. 10. 7.
երկիցէ և փառաւորեսցէ զտր անուն քո.
զի դու միայն սր, և արժանի երկրպագե-
լոյ. զի ամ հեթանոսք եկեսցեն և երկիր
պագցեն առաջի քո տր՝ յորժամ արդարու-
5 թի քո յայտնեսցի։ *Եւ յետ այսորիկ տեսի՝
և բացաւ տաճարն խորանին վկայութե՝ որ
6 էր 'ի յերկինս։ *Եւ ելանէին եւթն հրեշ-
տակք որք ունէին եւթն հարուածս, և ըզ-
գեցեալ էին 'ի տաճարին կտաւս մաքուրս՝
և պայծառս. և գօտեորեալ էին առ բը-
7 տեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս։ *Եւ
'ի չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշ-
տակացն՝ եւթն սկաւառակս լի ցասմամբն
այ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։
8 *Եւ լցաւ տաճարն ծխով փառացն այ՝ և

զօ-

զօրութենէ նորա. եւ ոչ ոք կարէր մտանել 'ի տաճարն՝ մինչեւ կատարեսցին եօթն հարուածքն յեօթն հրեշտակացն.

## ԳԼ. ԺԶ.

Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր 1
ցեօթն հրեշտակսն, երթայք հեղէք զեօթն
սկաւառակսդ ցասմանն այ յերկիր. * Եւ 2
գնաց առաջինն հրեշտակն՝ եւ եհեղ զսկաւա-
ռակ իւր յերկիր. եւ եղեւ հարուածք չա-
րաչար 'ի վերայ մարդկան, որ ունէին զ-
դրոշմ գազանին, եւ երկիր պագին պատկե-
րի նորա. * Եւ երկրորդ հրեշտակն եհեղ 3
զսկաւառակ իւր 'ի ծով, եւ դարձան ջուրքն
յարիւն մեռելոյ. եւ ամ շունչ կենդանի որ
էր 'ի ծովու՝ սատակեցաւ. * Եւ երրորդ 4
հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի գետս՝
եւ յաղբերս ջուրց, եւ եղեւ արիւն. * Եւ 5
լուայ 'ի հրեշտակէն՝ զի ասէր. արդար է՝
որ էնն եւ է, եւ սուրբ 'ի գործս իւր՝ զի այս-
պէս դատեցաւ. * Զի զարիւն սրբոց՝ եւ 6
զարիւն մարգարէիցն հեղին ամպարիշտք.
Զի այնպիսի արիւն ետ ըմպել նց դն արժա-
ւոյն. * Եւ լուայ 'ի սեղանոյ անտի զի ա- 7
սէր. այո՛ տր ած ամենակալ, արդար եւ
ճշմարիտ են դատաստանք քո. * Եւ չոր- 8
րորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւր-
մէ 'ի վերայ արեգական. * Եւ տուաւ նմա 9
խորշակահար առնել զմարդիկ հրով. եւ տա-
պացան մարդիկ 'ի տապ մեծ, եւ հայհոյե-
ցին զած՝ որ ունի իշխանութի 'ի վերայ հար-
ուածոցս այսոցիկ. եւ ոչ ապաշխարեցին 'ի

փառս

10 փառս նմա: *Եւ հինգերորդ հրեշտակն ե-
հեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ աթոռոյ
գազանին, եւ եղեւ թագաւորութիւն նորա խա-
ւարեալ. եւ ծամէին զլեզուս իւրեանց յախ-
11 տէ ցաւոցն, *եւ հայհոյեցին զԱստուած երկնից
'ի ցաւոց իւրեանց՝ եւ յախտէ գանուածոցն,
եւ ոչ ապաշխարեցին 'ի գործոց իւրեանց:
12 *Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւա-
ռակէ իւրմէ 'ի վերայ գետոյն մեծի Եփրատայ,
եւ ցամաքեցան ջուրք նորա՝ զի պատրաստեսցի
13 ճանապարհ թագաւորի ելիցն արեւու: *Եւ
տեսի՝ զի ելանէր 'ի բերանոյ վիշապին՝ եւ 'ի
բերանոյ գազանին՝ եւ 'ի բերանոյ սուտ
մարգարէին ոգիք երեք անսուրբք իբրեւ ըզ-
14 գորտ: *Քանզի նոքա են ոգիք դիւա-
կանք, որք առնեն զնշանս եւ երթային առ
թագաւորս ամենայն երկրի՝ ժողովել զնոսա 'ի պա-
տերազմ, յօրն մեծ Աստուծոյ ամենակալի. քան-
15 զի այսպէս ասաց Տէր. *Ահա գամ իբրեւ Մատթ.
զգող, երանի որ իցեն արթունք, եւ պահես- 24. 43.
ցեն զհանդերձս իւրեանց. զի մի մերկ շըր- Ղուկ. 12. 39.
ջեսցին, եւ երեւեսցին ամօթանք իւրեանց: Վեր. 3. 3.
16 *Եւ ժողովեցին զնոսա 'ի տեղի մի, որ կոչի Ա Թես.
17 եբրայեցերէն՝ Արմագեդոն: *Եւ եօթնե- 5. 2.
րորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւր-
մէ 'ի վերայ օդոյ. եւ ել ձայն մեծ յերկնից՝ եւ
18 յաթոռոյն՝ ասելով. եղեւ: *Եւ եղեն փայ-
լատակմունք եւ ձայնք եւ որոտմունք. եւ ե-
ղեւ շարժումն մեծ՝ որպիսի չէր եղեալ իս-
կըզբանէ՝ յորմէ հետէ եղեւ մարդ 'ի վերայ երկ-
19 րի՝ այնպիսի շարժումն մեծ: *Եւ եղեւ քա-
ղաքն մեծ յերիս մասն, եւ քաղաքք ազգաց
ան-

անկան. եւ բաբելոն մեծ յիշեցաւ առաջի
այ, տալ նմա զբաժակն գինւոյ ցասման
բարկութե նր. *Եւ ամենայն կղզիք փա- 20
խեան, եւ լերինք ՚ի միջոյ բարձան. *Եւ 21
կարկուտ մեծ իբրեւ կշիռ տաղանդոյ միոյ
իջանէր յերկնից ՚ի վերայ մարդկան. եւ հայ-
հոյեցին մարդիկ զած յերկնից՝ վասն հարուա-
ծոյ կարկտին, զի մեծ էր հարուածն եւ
սաստիկ.

## ԳԼ. ԺԷ.

Եւ եկն մին յեօթն հրեշտակացն՝ որք ու- 1
նէին զեօթն սկաւառակսն. խօսեցաւ ընդ
իս՝ եւ ասէ. Եկ այսր եւ ցուցից քեզ զդատաս-
տանս մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի վր ջուրց
բազմաց. *Ընդ որում պոռնկեցան թագա- 2
ւորք երկրի՝ եւ արբեցան բնակիչք երկրի ՚ի
գինւոյ արբեցութե պոռնկութե նր. *Եւ 3
ած տարաւ զիս յանապատ հոգւովն. եւ տե-
սի կին մի՝ զի նստէր ՚ի վր կարմիր գազանի,
եւ լի էր անուամբ հայհոյութե. եւ գազանն
զոր տեսի՝ ունէր գլուխս եօթն եւ եղջիւրս
տասն. *Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս եւ 4
կարմիրս, եւ զարդարեալ ոսկւով եւ մարգա-
րտով եւ ականք պատուականօք, ունելով
բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում, եւ լի էր գար-
շելի եւ անմաքուր պոռնկութը. *Եւ ՚ի ճա- 5
կատն նր գրեալ անուն՝ խորհրդով. մեծն
բաբելոն՝ մայր պոռնկաց եւ գարշելեաց երկ-
րի. *Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ 6
սրբոց՝ եւ յարենէ ած վկայիցն. եւ զարմա-
ցայ՝ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ. *Եւ 7
ասէ

ասէ ցիս հրեշտակն. ընդէ՞ր զարմացար, ես
ասացից քեզ զխորհուրդս կնոջն, և զգազա-
նին որ բարձեալ ունի զնա. որ ունի զեօթն
8 գլուխն՝ և զտասն եղջիւր։ *Եւ գազանդ
զոր տեսեր որ էր, և չէր, և հանդերձեալ
է ելանել 'ի դժոխոց՝ և 'ի կորուստ երթալ.
և զարմասցին ամենեքեան՝ որ բնակեալ են
'ի վ՟ր երկրի. որոց ոչ էր գրեալ անուանք ն՟ց
'ի գիր կենաց իսկզբանէ աշխարհի. զոր տե-
սանէին զգազանն, զի էր՝ և չէ, և մերձ է։
9 *Աստ է իմաստութիւն՝ որ ունի միտս։ և
եօթն գլուխն՝ եօթն լերինք են, ուր կինն
նստեալ էր 'ի վ՟ր ն՟ց. և նոքին թագաւորք
են եօթն. և թագաւորք եօթն գոլով,
10 *Հինգն անկան, և մին եկաց, և միւսն ոչ
է եկեալ. և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժա-
11 մանակ ունի։ *Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՛ և
նա ութերորդ է. և է յեօթանց անտի, և 'ի
12 կորուստ երթալոց է։ *Եւ տասն եղջիւրն՝
զոր տեսեր՝ տասն թագաւորք են. որոց չե-
ւս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝
և կան իշխանք 'ի մի ժամ. և առնուն նորա
13 զիշխանութի՟ն ը՟ գազանին։ *Սոքա մի կամս
ունին, և զզօրութի՟ և զիշխանութի՟ գազա-
14 նին տան։ *Եւ ընդ գառինն պատերազ-
մին. և գառնն յաղթէ ն՟ց. ‖ զի տ՟ր է տ՟նց, և ‖ Վար.
թագաւոր թագաւորաց. և որք ընդ նմա՝ 19. 16.
կոչեցեալք են, ընտրեալք՝ և հաւատա-
15 ցեալք։ *Եւ ասաց ցիս. և զջուրսն զոր տե-
սեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են,
16 և բազմութիւնք և ազգք և լեզուք։ *Եւ
տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին, նո-
քա

քա ատեսցեն զպոռնիկն՝ և աւերեսցեն զնա, և
զմարմինս նորա կերիցեն՝ և այրեսցեն զնա հրով.
*Զի Աստուած եդ 'ի սիրտս նոցա 'ի լինել 17
նոցա մի կամս, և տալ զթագաւորութիւն գազա-
նին՝ մինչև կատարեսցին բանքն այ։ *Եւ 18
կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի
զթագաւորութիւն 'ի վերայ թագաւորութեանց երկրի

## ԳԼ. ԺԸ.

Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ ի- 1
ջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ,
և երկիր լուսաւորեցաւ 'ի փառաց նորա։ *Եւ 2
Եսայ. աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. Անկաւ
1. 9. բաբելոն մեծն, որ եղեալ էր բնակութիւն դի-
Երեմ. 51. 8. ւաց՝ և արգել ամ այսոց պղծոց, և բանտ
Վեր. պահպանութիւն ամ ոգւոց անսրբոց՝ և ատե-
14. 8. ցելոց։ *Վասն զի 'ի բարկութենէ գինւոյ 3
պոռնկութեան նորա արբին ամ ազգք և թագա-
ւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան. և վա-
ճառականք երկրի 'ի նորա զօրութենէ յորմա-
լոյ մեծացան։ *Եւ լուայ ձայն յերկնից՝ զի 4
ասէր. ելէք 'ի միջոյ դորա ժողովուրդ իմ,
զի մի հաղորդ լինիցիք մեղաց դորա, և մի ըն-
հարուածս դորա ընդունիցիք. *զի հասին 5
կցեցան մեղք դորա մինչև յերկինս. և յի-
շեաց այ զանիրաւութիւնս դորա։ *Եւ հա- 6
տուցանէք դմա ոպ և հատոյց մեզ, և ա-
ցէ դա երկպատիկ ըստ գործոց իւրոց. և ըն-
բաժակին որով խառնեաց՝ խառնեցէք դմա
կրկին։ *Եւ որչափ փառաւորեաց զինքն և 7
խաղաց, այնչափ հատուցէք դմա սուգ. զի
Եսայ. 'ի սրտի իւրում ասէր՝ թէ յամ ժամ Նստա-
47. 8.

տայց

տայց ես թագուհի՝ և այրի ոչ ես եղէց ։
8 * Վասն այնորիկ 'ի միում աւուր եկեսցեն
'ի վ̃ր դորա հարուածք՝ մահ և սուգ և սով,
և 'ի հուր այրեսցի . զի հզօր է տ̃ր ա̃ծ՝ որ
9 դատեցաւն զդա ։ * Եւ լացցեն՝ և կոծես֊
ցեն 'ի վ̃ր դորա թագաւորք երկրի, որք ը̃ն
դմա պոռնկեցան և խաղացին . և հեծես֊
ցեն՝ յորժամ տեսցեն զծուխ կիզման տան֊
10 ջանաց դորա ։ * 'Ի հեռաստանէ կացցեն վ̃ն
երկիւղի տանջանաց դորա՝ և ասասցեն .
վայ քաղաքիդ մեծի բաբելոնի . քաղաքդ
հզօր, զի 'ի միում ժամու եկին հասին դա֊
11 տաստանք քո ։ * Եւ վաճառականք երկրի
ողբասցեն և սգասցեն 'ի վ̃ր քո, զի բեռն
12 նոցա ոչ ոք գնէ ։ * Եւ շահք որ 'ի քէն՝ ոչ ես
իցէ՝ ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուա֊
կանաց՝ և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրան֊
ւոյ և ոսկեթելի և որդան, և ա̃մ փայտ
խնկոյ՝ և ա̃մ անօթ փղոսկրեայ, և ա̃մ ա֊
նօթ 'ի փայտէ պատուականէ և 'ի պղնձոյ
13 և յերկաթոյ և 'ի կճոյ, * և կինամոմոն և
ա̃մ խունկ և իւղ և կնդրուկ, և գինի և
ձէթ և նաշիհ և ցորեան, և ստացուածք
ա̃մ, արջառ և ոչխար . և երիվարաց և կա֊
ռաց՝ որ վայել է մարմնոց և ոգւոց մարդ֊
14 կան ։ * Եւ ա̃մ ցանկութ̃ի անձին քո գնաց
'ի քէն, և ա̃մ լուսափայլ վայելչութիւնք, պա֊
րարան և գէրն և աշխատանքն գնաց 'ի քէն,
15 և ոչ ես գտցես զայդ ։ * Եւ ա̃մ շահավա֊
ճառք այսոքիւք մեծացեալք՝ 'ի քէն 'ի բաց
կացցեն վ̃ն երկիւղի տանջանաց քոց լալով՝
16 և սուգ առնելով ։ * Եւ ասասցեն . վայ վայ

քաղաք մեծ. որ զգեցեալ էիր բեհեզս և ծի-
րանիս և որդան և ոսկեզօծ՝ և քարինս
պատուականս՝ և մարգարիտս. * զի 'ի 17
միում ժամու պակասեցաւ այսչափ մեծու-
թ՟իքդ. և ա՟մ նաւավար՝ և ա՟մ որ 'ի տեղիս
տեղիս նաւէն, և նաւազք և որք միանգամ
ուռկանաւ գործեն՝ 'ի հեռաստանէ կայցեն
լալով, * և աղաղակեցին՝ տեսանելով բղ- 18
ծուխ կիզմանն ն՟ր, ասելով. ո՞ նման է քա-
ղաքիս այսմիկ մեծի. * Եւ արկցեն հող 'ի 19
վերայ գլխոց իւրեանց՝ և գուժալով ձայնիւ
մեծաւ՝ լալով և սգալով ասասցեն. վայ վայ
քաղաք մեծ, որով ամենեքեան մեծա-
նային՝ որք ունէին նաւս 'ի ծովս՝ վ՟ս պատ-
ուականութ՟ե քո. զի 'ի միում ժամու ապա-
կանեալ կործանեցար. * Ուրախ լերուք 'ի 20
վ՟ր ն՟ր երկինք՝ և ս՟ր առաքեալք և մարգա-
րէք. զի դատեցաւ ա՟ծ զդատաստան ձեր 'ի
դմանէ. * Եւ առ հրեշտակն հզօր՝ քար մի 21
իբրև զերկան մեծ, և ընկէց 'ի ծով՝ ասե-
լով. այսպէս յարձակմամբ անկցի բաբելոնն
քաղաք մեծ, և այլ ոչ ևս գտցի. * Եւ ձայն 22
քնարերգաց և երաժշտականաց՝ արուես-
տականաց՝ և փողահարաց՝ և Թըմբկի, այլ
ոչ ևս լուիցի 'ի քեզ. * Եւ լոյս ճրագի և 23
ձայն երկանի՝ այլ ոչ ևս երևեսցի 'ի քեզ, և
ձայն փեսայի և ձայն հարսին այլ ոչ ևս լուի-
ցի 'ի քեզ. և ոչ վաճառականք քո՝ փառա-
ւորք և մեծամեծք երկրի, որ զուարճա-
ցեալ էին 'ի քեզ, վ՟ն զի կախարդութ՟բ գե-
ղատուուե՟ քո մոլորեցան ա՟մ ազգք. * Եւ 24
'ի քեզ ա՟մ արիւն մարգարէից և սրբոց գը-
տաւ,

տաւ, եւ ամ՟ զենելոց յերկրին կենդանեաց:

## ԳԼ. ԺԹ.

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազ-
մաց յերկինս ասելով. ալէլուիա, փրր-
կութիւն եւ փառք եւ պատիւ եւ զօրութիւն այ
2 մերում. * զի ճշմարիտ եւ արդար են դա-
տաստանք նր. զի դատեաց զպոռնիկն մեծ
՚ի պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց զվրէժ
3 արեան ծառայից իւրոց ՚ի ձեռաց նր: * Եւ
կրկին անգամ՝ օրհնեցին՝ եւ ասացին, ալէ-
լուիա. եւ ծուխ նր ելանէր յաւիտեանս յա-
4 ւիտենից: * Եւ անկան քսան եւ չորք երի-
ցունքն՝ եւ չորք կենդանիքն, եւ երկիր պագին
այ՝ որ նստէրն յաթոռ փառաց, ասելով, ա-
5 մէն՝ ալէլուիա: * Եւ ձայն յաթոռոյն ելա-
նէր՝ ասելով. օրհնեցէք զած մեր ամ՟ ծա-
ռայք նր, եւ որք երկնչիք ՚ի նմանէ՝ փոքունք
6 եւ մեծամեծք: * Եւ լուայ ձայն բազմաց
մեծի՝ իբրեւ զձայն ջուրց բազմաց, եւ իբրեւ
զձայն հզօր որոտման, ասելով դարձեալ.
ալէլուիա, վ՟ զի թագաւորեաց տր ած մեր
7 ամենակալ: * Խնդասցուք՝ ( եւ ցնծասցուք ) եւ
տացուք փառս նմա, զի եկն հարսանիք գա-
ռինն, եւ կինն հարսն նորա պատրաստեաց
8 զինքն: * Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս
պայծառս սուրբս եւ լուսափայլս. որ է բե-
9 հեզն արդարութիւն սրբոցն: * Եւ մի յերկ-
ցանցն ասէր ցիս. գրեա զայդ, || Երանելիք || Մատթ. 22. 2.
են ամենեքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս Ղուկ. 14. 16.
10 հարսանեաց գառինն: * Եւ ես անկեալ ա-
ռաջի ոտիցն նր, երկիր պագի նմա: Եւ ասէ
ցիս.

ցիս. անսամ՝ մի՛ անկանիր առաջի իմ, քան-
զի և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝
որք ունին զվկայութիւն յիսի. ած այ միայն
երկիրպագեա. քանզի հաւատարմութիւն յիսի է
տեսիլդ, և հոգի մարգարէութեանց. զի վը-
կայութիւն յիսի է հոգւոյն սրբոյ, որ ՚ի մար-
գարէսն էր. * Եւ տեսի զերկինս բացեալ, 11
և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր ՚ի
նմա՝ հաւատարիմ և ճշմարիտ, և արդա-
րութեամբ դատի՝ և պատերազմի. * Եւ աչք 12
նորա բոց հրոյ, և ՚ի վերայ գլխոյ նորա պսակս բա-
զումս. և ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք
‖ Եսայ. գիտէ՝ բայց միայն ինքն. * ‖ Եւ արկեալ 13
63. 1. զիւրեաւ հանդերձ ներկեալ արեամբ. և
կոչէր անուն նորա՝ բան այ. * Եւ զօրավարք 14
երկնից՝ և զօրք երկնից զհետ երթային նո-
րա ձիովք (սպիտակօք), զգեցեալ բեհեզս
սուրբս և սպիտակս. * Եւ ՚ի բերանոյ նորա 15
ելանէր սուր սրեալ. զի նովաւ հարցէ զազգս.
‖ Սաղ. ‖ Եւ նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկա-
2. 9. թեաւ. և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցաս-
ման բարկութեան այ ամենակալի. * Եւ ու- 16
նէր ՚ի վերայ պատմուճանի իւրոյ, և ՚ի վերայ ան-
‖ 1 Տիմ. դամոց իւրոց գիր գրեալ. ‖ Թագաւոր թա-
6. 15. գաւորաց, և տէր տերանց. * Եւ տեսի այլ 17
Վեր. հրեշտակ՝ որ կայր ՚ի վերայ արեգականն, զի
17. 14. աղաղակեաց ՚ի ձայն մեծ ամ հաւուց թռ-
չնոցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով. եկայք
ժողովեցարուք յընթրիս մեծին այ. * Եւ 18
կերիջիք զմարմինս թագաւորաց, (և զմար-
մինս հզօրաց,) և զմարմինս երիվարաց՝ և
ամ հեծելոց ՚ի նոսա, և զմարմինս ազատաց
և

19 և ծառայից՝ մեծի և փոքու: *Ապա տեսի
զգազանն՝ և զԹագաւորս երկրի՝ և զզօրս նոցա
ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ, որ
հեծեալն էր ՚ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա:
20 *Ապա ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա
սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանսն առա-
ջի նորա, և զորս մոլորեցոյց. և եւս առնուլ
զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատկե-
րի նորա. և կենդանւոյն արկին զնա ՚ի լիճ հրոյ
21 այրեցելոյ ծծմբով: *Ապա այլքն մեռան ՚ի
սրոյ հեծելոյն ՚ի վ՟ր ձիոյն. յորոյ բերանոյ
ելանէր սուրն. և ամենայն Թռչունք յագե-
ցան ՚ի մարմնոց նոցա:

## ԳԼ. Ի.

1 Ապա տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր յերկ-
նից, և ունէր զփականս դժոխոց, և շղ-
2 Թայս մեծ ՚ի ձեռին իւրում. *և ըմբռ-
նեաց զվիշապն՝ (զօձն) զառաջին, որ է բան-
սարկուն և սատանայ, և կապեաց զնա հա-
3 զար ամ, *և արկ զնա յանդունդս դժո-
խոց, և փակեաց և կնքեաց զնա՝ զի այլ մի
ևս մոլորեցուսցէ զազգս, մինչև կատարես-
ցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է
4 լուծանել նմա սակաւ մի ժամանակ: *Ապա
տեսի աԹոռս. և նստան ՚ի վ՟ր նոցա. և դա-
տաւորուԹի տուաւ նոցա, ընտրել զհոգիս չար-
չարելոցն վ՟ն վկայուԹեն յսի՝ և վ՟ն բանին
այ. և զորս ոչ երկրպագեցին գազանին, և ոչ
առին զդրոշմ նորա ՚ի Ճակատս իւրեանց՝ և
ոչ ՚ի վ՟ր աջու ձեռին իւրեանց. և կեցին՝
5 և Թագաւորեցին ընդ քսի հազար ամ: *Ապա
յետ

յետ այսորիկ 'ի մեռանելոյ ոչ ոք եկաց, մին-
չեւ 'ի կատարել հազար ամին. այս է յարու-
թիւն առաջին. *Երանի սրբոցն, որք ունին 6
բաժին 'ի յարութեանն առաջնում, 'ի վերայ սո-
ցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն. այլ
եղիցին քահանայք Այ՝ եւ Քսի նորին. եւ
թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ. *Եւ 7
յետ հազար ամին լուծցի սատանայ՝ եւ հան-
ցէ 'ի բանտէ անտի. ելցէ եւ մոլորեցուսցէ
զազգս ամ ընդ չորս կողմանս երկրի. եւ զԳոգ
եւ զՄագոգ. ածցէ 'ի ձեռն՝ ժողովել նոցա
զնոսա զօրս 'ի պատերազմ. որոց թիւ նոցա իբ-
րեւ զաւազ ծովու. *Եւ ելցեն 'ի լայնութիւն 8
երկրի, եւ պատեսցեն շուրջ զբանակս սր-
բոցն, եւ զքաղաքն սիրելոյ. *Եւ իջցէ 9
հուր յերկնից առ 'ի յԱյ՝ եւ կերիցէ զնոսա.
զզօրագլուխն նոցա՝ զսատանայ՝ որ մոլորեցոյց
զնոսա. եւ արկցէ զնա 'ի ծովն հրոյ եւ ծծմբոյ,
ուր էր գազանն՝ *եւ սուտ մարգարէն. եւ 10
չարչարեսցին զտիւ եւ զգիշեր. *Եւ տեսի 11
աթոռ սպիտակ մեծ. եւ 'ի վերայ նորա նստեալ՝
յորոյ երեսացն երկնչէին եւ փախչէին եր-
կինք եւ երկիր, եւ տեղի ոչ գտաւ նոցա. *Եւ 12
տեսի զմեռեալս մեծամեծս եւ զփոքունս,
որ կային առաջի աթոռոյն. եւ գրեանք բա-
նային. եւ այլ գիրք բացաւ կենաց, եւ դա-
տեցան մեռեալքն 'ի գրելոյն՝ ըստ գործոց իւ-
րեանց. *Եւ ետ ծով զմեռեալս իւր, եւ 13
մահ եւ դժոխք զիւրեանց մեռեալս. եւ դա-
տեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց.
*Մահ եւ դժոխք մատնեցան 'ի լիճ հրոյն. 14
(այս է մահն երկրորդ.) *Եւ որ ոչ ոք գը- 15

տաւ

տաւ 'ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ 'ի լիճ
հրոյն։

## ԳԼ. ԻԱ.

1 Եւ ‖ տեսի երկինս նոր՝ և երկիր նոր. քանզի ‖ Եսայ.
զի առաջինն երկինք և երկիր անցին. և 65. 17.
2 ծով ոչ գոյր։ *Եւ զքաղաքն սբ զնորոյն Եհմ 66. 22.
տեսի՝ զի իջանէր յայ՝ և յերկնից, զարդա- 2. Պետ.
րեալ և պատրաստեալ ոպ հարսն առն իւ- 3. 13.
3 րոյ։ *Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր.
Ահաւասիկ խորանն այ 'ի մէջ մարդկան, և
բնակեսցէ ըն նմ. և նոքա ժողովուրդ նմա.
4 և սա ած նց։ *‖ Եւ ջնջեսցէ զամ արտասուս ‖ Եսայ.
յաչաց նց. և մահ ոչ ևս գոյ, ոչ սուգ՝ և ոչ 25. 8.
աղաղակ, ոչ ցաւք՝ և ոչ աշխատանք ոչ ևս Վեր .
5 գոյ, զի առաջինն անցին։ *Եւ ասաց ցիս՝ 7. 17.
որ նստէր 'ի վերայ աթոռոյն. ‖ Ահաւասիկ ‖ Եսայ.
առնեմ զամ նոր. և ասէ ցիս, գրեա. այս 43. 19.
6 բանք ճշմարիտ և հաւատարիմք։ *Եւ ասէ 2. Կորն.
ցիս. եղե՝ ես եմ ալփա և ով, սկիզբն և կա- 5. 17.
տարած. ես ծարաւելոյն տամ յաղբերէ
7 ջրոյ կենաց ձրի։ *Որ յաղթէ, ժառանգես-
ցէ զայս ամ. և ես եղէց նց ած, և նոքա ե-
8 ղիցին ինձ որդիք։ *Եւ ծուլացն և անհա-
ւատից՝ սպանողաց և պոռնկաց՝ և կախար-
դաց և կռապաշտից՝ և գեղատաւաց, և ամ
ստոց՝ ամպարշտաց. որոց բաժինն իւրեանց
'ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով. որ է
9 մահն երկրորդ։ *Եւ եկն առ իս մի յեօթն
հրեշտակացն, որք ունէին զեօթն սկաւա-
ռակսն լցեալս եօթն վախճանաւ կատարա-
ծովք, խօսեցաւ ըն իս և ասէ. Եկ՝ ցուցից
քեզ

քեզ զհարսն և զկին գառին։ * Եւ առ- 10
տարաւ զիս 'ի լեառն մի բարձր մեծ՝ հոգ-
ւովն. և եցոյց ինձ զքաղաքն մեծ և ս՝ Եհմ.
զի իջանէր յերկնից առ 'ի յայ, և ունէր 11
զփառս այ. և էր 'ի նմա լուսաւորութիւն,
նմանեալ ականց պատուականաց՝ քար՝ յաս-
պիս սառնատեսակ և կենդանի։ * Եւ էին 12
պարիսպք նր մեծ և բարձր, և ունէր դրունս
երկոտասան. և յերկոտասան դրունսն եր-
կոտասան հրեշտակս, և անուանք իւրաքան-
չիւրոցն 'ի վր դրանցն գրեալ էին՝ ժբ երկո-
տասան ցեղիցն Իլի։ * Յարևելից կողմանէ 13
դրունք երեք, և 'ի հիւսիսոյ կողմանէ
դրունք երեք, և 'ի հարաւոյ կողմանէ
դրունք երեք, և յարևմտից կողմանէ դրունք
երեք։ * Եւ պարիսպ քաղաքին ունէր հի- 14
մունս երկոտասան, և 'ի նս երկոտասան ան-
ուանք երկոտասան առաքելոց գառինն։
* Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր եղէգն ոսկի 15
'ի ձեռին իւրում, զի չափեսցէ զքաղաքն՝ և
զդրունսն նր՝ և զպարիսպսն նր։ * Եւ էր քա- 16
ղաքն քառակուսի. և որչափ երկայնութի
նր՝ նոյնչափ և լայնութի՝ և բարձրութի՝ հա-
ւասար։ և էր չափ երկայնութե նր երկո-
տասան հազար ասպարէզս. և լայնութի նր և
բարձրութի միաչափ՝ կրկին։ * Եւ չափեաց 17
զպարիսպն նր՝ հարիւր և քառասուն և չորս
ասպարէզս. չափ մարդոյ՝ որ է հրեշտակի։
* Եւ էր շինուած պարսպաց քաղաքին յաս- 18
պիս. և քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման
սուրբ և սպիտակ ապակւոյ։ * Եւ հիմունք 19
քաղաքին յամ ականց պատուականաց. հիմն

առա-

առաջինն [illegible] ասպին յասպիս, երկրորդն շա-
փիւ[illegible]դն պղնձագոյն, չորրորդն զմու-
20 խտ * հինգերորդն եղնդնաքար, վե-
ցերորդն սարդիոն, եօթներորդն ոսկեքար,
ութերորդն բիւրեղ, իններորդն տպազիոն
տասներորդն քրիսոպրասոս, մետասաներորդն յա-
21 կինթ, երկոտասաներորդն ամեթուստ: * Եւ էին
երկոտասան դրունքն յերկոտասան մարգար-
տոց՝ մի ըստ մի: և իւրաքանչիւրոյն դրունք՝
էին մի մի գունդ՝ 'ի միոյ մի մարգարտէ.
և ընդարձակութիւն քաղաքին [illegible] ոսկի մաքուր՝
22 որպէս զապակի պայծառ: * Եւ տաճար ոչ տե-
սի 'ի նմա, քանզի Տէր Աստուած ամենակալ տաճար
23 է նորա՝ և գառնն: * Եւ քաղաքին չէին ‖ Եսայ. 60. 19.
պէտք արեգական և լուսնի, զի լուսաւորես-
ցեն զնա. քանզի փառքն Այ լուսաւորէին
24 զնա յամենայն ժամ. և ճրագ 'ի նմա գառնն: * Եւ
գնասցեն հեթանոսք 'ի լոյս նորա. և թագա-
ւորք երկրի լուսաւորեսցեն լինիցին 'ի փառաց
25 նորա: * Եւ դրունք նորա ոչ փակեսցին 'ի տուէ ‖ Եսայ.
և 'ի գիշերի, այլ բաց կայցեն հանապազորդ. 60. 11.
26 և գիշեր ոչ ևս լինիցի 'ի նմա. * այլ փառք
27 և պատիւ ազգաց: * Եւ ոչ մտցէ անդ ամ
չարահամ՝ և պիղծ և ստութիւն, բայց միայն
որ գրեալ են 'ի դպրութիւն կենաց գառինն:

## ԳԼ. ԻԲ.

1 Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ՝
սառնատեսակ, որ ելանէր յաթոռոյն Այ
2 և գառինն: * Եւ ընդ մէջ հրապարա-
կաց քաղաքին. և զեզերբ գետոյն աստի և
անտի ծառ կենաց՝ որ բերէր պտուղս երկո-
տա-

տասան. ըստ միոյ միոյ ամսոյ տա [illegible]
իւրեանց. եւ տերեւ ծառոյն
հեթանոսաց. *Եւ նզովք այլ ոչ եղիցին. 3
եւ աթոռն Այ եւ գառին նորա եղիցի ի նմա. եւ ծա-
ռայք նորա պաշտեսցեն զնա. *Եւ տեսցեն զե- 4
րեսս նորա. եւ անուն նորա գրեալ կայ ի ճակատս
*Եսայ. նոցա. *Եւ գիշեր ոչ եղիցի՝ եւ չէր ինչ պի- 5
60. 20. տոյք ճրագի եւ լուսոյ արեգականն. զի Տէր
Աձ լուսաւորէր զնոսա. եւ թագաւորեսցեն
յաւիտեանս յաւիտենից. *Եւ ասէ ցիս. 6
Այս բանք հաւատարիմ են եւ ճշմարիտ. եւ Տէր
Աձ մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ
իւր՝ ծառայից իւրոց ցուցանել՝ զոր լինե-
լոց է փութապէս. (*Ահա գամ փութա- 7
պէս.) Երանի՝ որ պահէ զբանս մարգարէու-
թեան գրոյս. *Եւ ես Յովհաննէս լուայ՝ եւ 8
տեսի զայս ամ. եւ յորժամ լուայ եւ տեսի,
անկայ՝ եւ երկիր պագի հրեշտակին՝ որ ցու-
ցանէր ինձ զայս ամ. *Եւ ասէ ցիս. մի ան- 9
կանիր առաջի իմ՝ եւ երկիր պագաներ. քան-
զի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց՝
որ պահեսցեն զբանս մարգարէութեան գրոյս
այսորիկ. այ երկիր պագ. *Եւ ասէ ցիս 10
դարձեալ. մի կնքեր զբանս մարգարէական
գրոյս այսմիկ. քանզի ժամանակս մերձ է.
*Որ ամպարշտելոցն է՝ ամպարշտեսցի, եւ 11
որ աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, եւ որ ար-
դարանալոցն է՝ արդարասցի, եւ որ սրբելոցն
Եսայ. է՝ սրբեսցի. *Ահա գամ փութապէս՝ եւ 12
41. 4. վարձք իմ ընդ իս, հատուցանել իւրաքանչիւր
44. 6. ըստ գործս իւրեանց. *Ես եմ այփայ եւ ով, 13
Վեր . 1. 8. 17. սկիզբն եւ կատարած, առաջինն եւ վերջինն.
21. 6.

*Երա-

14 *Երանելի՛ք են՝ որ պահեն զպատուիրանս
նր. Նոցա ունիցին իշխանութիւն ուտել ՚ի փայ-
տէն կենաց՝ և մտանել ը̃ դրունսն քաղաքին։
15 *Իսկ կացցեն արտաքս՝ շունք և դեղատուք
և [illegible]սպանողք և կռապաշտք, և ամենեքեան
16 որ սիրեն զստութիւն։ *Ես Յիսուս առաքեցի զ
հրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ.
ես արմատ և սեռ ՚ի Դաւթայ, և աստղ պայ-
17 ծառ առաւօտուն։ *Եւ հոգի, և փեսայն՝
որ գալոցն եմ. և որ լսէ՝ այլով թէ եկ,
և որ ծարաւի իցէ՝ եկեսցէն առ որ կամի
18 առնուլ զջուրն կենաց ձրի։ *Վկայեմ և
ես ամի՝ որ լսէ զբանս մարգարէութե̃ գրոցս
այսմիկ. թէ որ յաւելցէ ՚ի սա, յաւելցէ ած
՚ի վ̃ր նր̃ զեօթն հարուածսն՝ գրեալս ՚ի գիրս
19 յայս։ *Եւ եթէ որ պակասեցուսցէ ՚ի բա-
նից մարգարէութե̃ գրոցս այսմիկ՝ պակա-
սեցուսցէ և հատցէ ած զբաժին նր̃ ՚ի ծա-
ռոյն կենաց՝ և ՚ի քաղաքէն սրբոյ՝ որ գրեալ
20 է ՚ի գիրս յայս։ *Ասաց՝ որ վկայեացն զայս.
գամ ես վաղվաղակի. ամէն։ Եկն տէր յի
21 քս։ *Շնորհք տն̃ մերոյ յի̃ի քի̃ի ՚ի վերայ
ամ̃ սրբոց։ Ամէն։

## ՎԱԽՃԱՆ ՆՈՐՈՅ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ·

# ՑԱՆԿ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ


| | | Երես. |
|---|---|---|
| ա. | Աւետարան ըստ Մատթէի | 9. |
| բ. | Աւետարան ըստ Մարկոսի | 101. |
| գ. | Աւետարան ըստ Ղուկասու | 163. |
| դ. | Աւետարան ըստ Յովհաննու | 261. |
| ե. | Գործք առաքելոց | 339. |
| զ. | Թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիս | 431. |
| է. | Թուղթ Պօղոսի առ Կորնթ. առաջին | 468. |
| ը. | Թուղթ Պօղոսի առ Կորնթ. երկրորդ | 503. |
| թ. | Թուղթ Պօղոսի առ Գաղատացիս | 527. |
| ժ. | Թուղթ Պօղոսի առ Եփեսացիս | 540. |
| ժա. | Թուղթ Պօղոսի առ Փիլիպեցիս | 552. |
| ժբ. | Թուղթ Պօղոսի առ Կողոսացիս | 561. |
| ժգ. | Թուղթ Պօղոսի առ Թեսաղ՟. առաջին | 570. |
| ժդ. | Թուղթ Պօղոսի առ Թեսաղ՟. երկրորդ | 578. |
| ժե. | Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս առաջին | 583. |
| ժզ. | Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս երկրորդ | 593. |
| ժէ. | Թուղթ Պօղոսի առ Տիտոս | 601. |
| ժը. | Թուղթ Պօղոսի առ Փիլիմոն | 606. |
| ժթ. | Թուղթ Պօղոսի առ Եբրայեցիս | 608. |
| ի. | Թուղթ Կաթուղիկեայց Յակոբու | 630. |
| իա. | Թուղթ Կաթուղ. Պետրոսի առաջին | 646. |
| իբ. | Թուղթ Կաթուղ. Պետրոսի երկրորդ | 656. |
| իգ. | Թուղթ Կաթուղ. Յովհաննու առաջին | 663. |
| իդ. | Թուղթ Կաթուղ. Յովհաննու երկրորդ | 673. |
| իե. | Թուղթ Կաթուղ. Յովհաննու երրորդ | 673. |
| իզ. | Թուղթ Կաթուղ. Յուդայի առաքելոյ | 677. |
| իէ. | Յայտնութիւն Յովհաննու | 680. |